[illegible]

# [illegible]

[illegible]

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

О. Х. ТОПУЗЯН

# ИСТОРИЯ АРМЯНСКОЙ КОЛОНИИ В ЕГИПТЕ (1805—1952)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1978

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀ. Խ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

# ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (1805—1952)

3109

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1978

9(M)32(46 Եգիպտոս)

Աշխատությունում քննարկվում են Եգիպտոսի հայկական գաղութի պատմության հիմնական հարցերը՝ գաղութի ներքին կյանքի զարգացումը, սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը, հայ-եգիպտական հարաբերությունները, եգիպտահայ քաղաքական կազմակերպությունները և նրանց դերը Հայկական հարցում, մշակույթը՝ սերտորեն առնչված Եգիպտոսի պատմության հետ։ Օգտագործելով հայ պարբերական մամուլի օրգաններ, արխիվային փաստաթղթեր և մի շարք օտար լեզուներով գրականություն, հեղինակը վերանայում ու ճշտում է բազմաթիվ հարցեր և իր տեսակետները հիմնավորում արժանահավատ փաստերով։ Աշխատության վերջում ներկայացված է եգիպտահայ պարբերական մամուլի (1865—1952) ցուցակը։

Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է եգիպտահայ գաղութի բազմադարյան պատմության խիստ ուշագրավ մի հատվածը՝ XIX դ. սկզբներից մինչև 1952 թվականը։

Պատասխանատու խմբագիր
պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. ԴԻԼՈՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ,
պատմական գիտ. դոկտորներ՝ Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԸ և Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆԸ

Բ $\frac{10605}{703(02)—78}$ 31—76

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գաղութահայության պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է։ Անհնարին է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը շարադրել առանց ուսումնասիրելու տնտեսական, քաղաքական և մշակութային այն արժեքները, որ ստեղծվել են հայկական գաղութներում։ Այդ առումով ուրույն նշանակություն է ստանում եգիպտահայ գաղութի պատմության ուսումնասիրությունը։

Եգիպտահայ գաղութի պատմության հարցերը քննարկել են մի շարք սովետական և արտասահմանյան հեղինակներ։ Գնահատելով հանդերձ նրանց աշխատությունների արժանիքները, պետք է միաժամանակ նշել, որ դրանք ամբողջական պատկերացում չեն տալիս եգիպտահայ գաղութի մասին։

Եգիպտահայ գաղութի պատմությանը նվիրված առաջին աշխատության[1] հեղինակը՝ Ն. Մ. Աղազարը հիմնականում շարադրել է հնագույն ժամանակներից մինչև XIX դարի վերջերը Եգիպտոսում ծառայած շուրջ մեկ տասնյակ պետական և հասարակական հայ կամ ծագումով հայ գործիչների կենսագրությունը։ Այդ առնչությամբ նա անդրադարձել է նաև հայկական գաղութի տնտեսական, հասարակական և մշակութային կյանքին, սակայն փաստագրությունից այն կողմ գրեթե չի անցել։

Բազմավաստակ պատմաբան Ա. Ալպոյաճյանը բազմիցս անդրադարձել է եգիպտահայ գաղութի պատմության հարցերին[2]։ Նրա երկարամյա աշխատանքի արդյունքներն ամփոփված են «Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը» ծավալուն աշխատության մեջ, որն ընդգրկում է գաղութի պատմությունը՝ սկզբից

[1] Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, Կահիրե, 1911։

[2] Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, 1 և 2 հատորներ, Կահիրե, 1941, 1945։ Նույնի, Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրե, 1960։

մինչև մեր ժամանակները։ Ալպոյաճյանը կուտակել է բավական հարուստ նյութեր, որոնք հանված են գաղութահայ պարբերական մամուլից, տարբեր լեզուներով հրատարակություններից և եգիպտահայոց ազգային առաջնորդարանի արխիվից։ Առանձնապես արժեքավոր են նրա բերած վիճակագրական տվյալները, մի շարք հազվագյուտ փաստաթղթերի պատճենները և այլն։ Պետք է սակայն նշել, որ նրա աշխատությունում տեղ են գտել նաև լուրջ թերություններ, որոնք հիմնականում գալիս են հեղինակի ազգային-պահպանողական աշխարհայացքից։ Նա անտեսել է եգիպտահայ գաղթավայրում խմորվող սոցիալական շարժումները, ջրողել է ժողովրդի պայքարը ինչպես Ազգային սահմանադրության, այնպես էլ հայ ազատագրական շարժումների օգտին և, որ ամենագլխավորն է, եգիպտահայ գաղութի պատմության կերտողներ է դուրս բերել սոսկ պետական հայ գործիչներին, բարեգործ մեծատուններին, թեմական առաջնորդներին։

Հ. Սուֆյանի աշխատությունը[3] նվիրված է ֆաթիմյան դինաստիայի ժամանակաշրջանում հռչակված ծագումով հայ մամլյուկների և էմիրների, իսկ Հ. Նալբանդյանի հոդվածները[4] պետական հայ գործիչների և մեծատունների կյանքին ու գործունեությանը։ Գ. Մարգյանը շարադրել է ծագումով հայ միջնադարյան ականավոր պետական և զինվորական գործիչների կենսագրությունը՝ արաբական սկզբնաղբյուրների հիման վրա[5]։

1950-ական թվականներից հայկական գաղթաշխարհը ներգրավվեց սովետական պատմաբանների ուսումնասիրությունների ոլորտ։ Արդեն լույս են տեսել Ռուսաստանի հայկական գաղութների (Ղրիմ, Նոր Նախիջևան և այլն) պատմությանը նվիրված արժեքավոր մենագրություններ։ Որոշակի աշխատանք է կատարվել նաև եգիպտահայ գաղութի պատմության ուսումնասիրության բնագավառում։ Հայկական գաղութների պատմության համառոտ ուրվագիծը ներկայացնող իր երկհատոր աշխատությունում[6] Ա. Գ. Աբրահամյանն անդրադարձել է եգիպտահայ գաղութի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը։

Եգիպտահայ գաղութն ընդհանուր գծերով ներկայացված է Ա. Տ. Գասպարյանի սփյուռքահայ գաղթօջախներին նվիրված աշխատության մեջ[7]։ Հեղինակը հակիրճ կերպով քննարկում է եգիպտահայ գաղութի առաջացման ու զարգացման պատմության հետ առնչվող հարցեր, և արժեքավոր տեղեկություններ հաղորդում ժամանակակից գաղութի հասարակական կյանքի, մշակութային կազմակերպությունների, պարբերական մամուլի, դպրոցների և այլ հիմնարկների մասին։

Եգիպտահայ գաղութի միջնադարյան պատմության տարբեր հարցերին նվիրված հոդվածներ են հրատարակել Հ. Թուրշյանը[8], Ն. Միքայելյանը և ուրիշներ։

Եգիպտահայ գաղութի պատմության հարցերն այս կամ այն չափով արտացոլում են գտել Մոսկվայի և Լենինգրադի գիտահետազոտական հիմնարկների Եգիպտոսի պատմությամբ զբաղվող աշխատակիցների ուսումնասիրություններում։ Լ. Ա. Ֆրիդմանը[9], հետազոտելով Եգիպտոսում կապիտալիզմի զարգացման հարցերը, բնութագրում է նաև այն դերը, որ հայերը կատարել են եգիպտական արդյունաբերության ու առևտրի ասպարեզում։ Վ. Բ. Լուցկու[10] և ուրիշների աշխատություններում կան սակավ, բայց արժեքավոր դիտողություններ եգիպտահայ առևտրականների, վարկատուների և պետական գործիչների մասին։

Եգիպտահայ գաղութը տարիներ շարունակ զբաղեցրել է նաև մեզ։ Հրատարակել ենք հոդվածներ[11], իսկ այժմ մեր հետազոտությունների արդյունքները հանրագումարի ենք բերում առաջարկվող մենագրության մեջ։

[3] Հ. Սուֆյան, Եգիպտոսի հայ մամլյուկները և իշխանները ֆաթիմյան շրջանին, Կահիրե, 1928։

[4] Հ. Նալբանդյան, «Բադր ալ-Ջամալի» («Արև», 27 և 28 մայիսի 1931), «Շահանշահ Բադրի, Հայազգի անձնական բժիշկ Մուհամմեդ Ալի փաշայի» («Արև», 1 հոկտեմբերի 1932), «Աղա Կարապետ Գալուստ» («Արձագանքի» տարեգիրք, 1938) և այլն։

[5] Գ. Մարգյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, Կահիրե, 1947։

[6] Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Ա և Բ հատորներ, Երևան, 1964, 1967։

[7] Ա. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962։

[8] Հ. Թուրշյան, «XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից», «Արևելագիտական ժողովածու», № 2, 1964, էջ 301—317։

[9] *Л. А. Фридман*, Капиталистическое развитие Египта (1882—1939), М., 1963

[10] *В. Б. Луцкий*. Новая история Арабских стран, М., 1966.

[11] Հ. Ն. Թոփուզյան, «Հայ-եգիպտական կապեր», «Սովետական Հայաստան», 1959, № 11, էջ 39—40, նույնի, «Եգիպտահայ պարբերական մամուլի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4 (35), 285—293, նույնի, «Եգիպտահայ գաղթօջախները XIV—XVIII դդ.», «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, էջ 320—323, *О. Х. Топузян*, „Армянский торгово-ссудный капитал Египта в первой половине XIX в.“, сбор. „Арабские страны“, М., 1974, стр. 190—197 և այլն։

Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է եգիպտահայ գաղութի բազմադարյան պատմության մի հատված՝ Եգիպտոսի նոր պատմության սկզբնավորումից մինչև 1952 թվականի հուլիսի 23-ի հակաիմպերիալիստական-հակաֆեոդալական հեղափոխությունը։ Այդ ժամանակահատվածը բաժանել ենք երեք էտապի՝ 1805—1882, 1882—1917 և 1917—1952 թթ., որոնք տնտեսական կյանքի հեղաբեկման, նոր իրավաքաղաքական հարաբերությունների սաղմնավորման ու զարգացման տեսակետից կազմում են ուրույն փուլեր ինչպես Եգիպտոսի, այնպես էլ եգիպտահայ գաղութի պատմության մեջ։

Աշխատությունում քննարկվում են եգիպտահայ գաղութի պատմության հիմնական հարցերը՝ գաղութի ներքին կյանքի զարգացումը, եգիպտահայերի վարչակառավարման օրգանները, նրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը, հայ-եգիպտական հարաբերությունները, եգիպտահայ քաղաքական կազմակերպությունները և նրանց դերը Հայկական հարցում, եգիպտահայերը և Սովետական Հայաստանը, եգիպտահայ մշակույթը և այլ բազմազան հարցեր, որոնց զգալի մասը համարյա դուրս էր մնացել ուսումնասիրողների տեսադաշտից։

Աշխատությունը շարադրելիս օգտագործել ենք տարբեր լեզուներով հրատարակություններ, զգալի քանակությամբ արխիվային նյութեր, պարբերական մամուլի հաղորդումներ, ինչպես նաև մի շարք նոր հայտնաբերված վավերագրեր, որոնք հնարավորություն են տալիս լրացնել եգիպտահայ գաղութի պատմության որոշ բացերը, ստուգել ու ճշգրտել քաղաքացիության իրավունք ձեռք բերած գնահատականներ և հիմնավորել մեր եզրակացությունները։

Եգիպտահայ գաղութի պատմության վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր կան Մաշտոցի անվան Մատենադարանում, հատկապես Մ. Իզմիրլյանի, Ա. Ալպոյաճյանի, «Ջանազան հեղինակների» և այլ ֆոնդերում։ Դրանք կարևոր տեղեկություններ են պարունակում գաղութի իրավական դրության, հասարակական և մշակութային կյանքի, նրա արտաքին կապերի և այլ հարցերի մասին։

Եգիպտահայ գաղութի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի պատմության համար կարևոր են ՀՍՍՀ Կենտրոնական պետական պատմական (ԿՊՊ) արխիվի կաթողիկոսական դիվանում (ֆ. 57), էջմիածնի Սինոդի (ֆ. 56), «Գերագույն խորհուրդ հայոց էջմիածնի» և այլ ֆոնդերում պահպանվող նյութերը։ Օգտագործել ենք համարյա կուսական վիճակում գտնվող բազմաթիվ փաստաթղթեր, կապված այն ձեռնարկումների հետ, որ եգիպտահայ գաղութն առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կատարեց Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման ուղղությամբ։ Գաղութի ներքին կյանքի վերաբերյալ հարուստ տվյալներ են պարունակում թեմակալ առաջնորդների կողմից տարբեր ժամանակներում էջմիածին ուղարկված տեղեկագրերը։

Բազմաբովանդակ փաստաթղթեր պահվում են նաև ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) տարբեր ֆոնդերում։ Բ. Ազատյանի ֆոնդում կան Եգիպտոսից Կ. Պոլսի հայոց պատրիարքարան ուղարկված տեղեկագրեր, հանրագրություններ, բողոքագրեր, նամակներ և այլ վավերագրեր։ Եգիպտահայ գաղութի վերաբերյալ փաստաթղթեր կան նաև Ա. Չոպանյանի, Ա. Սաֆրաստյանի ֆոնդերում։ ԳԱԹ-ի թատերական բաժնում պահվում են մի շարք դերասանների հուշերն եգիպտահայ թատրոնի վերաբերյալ։

Աշխատությանը զգալի քանակությամբ նյութեր է տվել հայ պարբերական մամուլը՝ անցյալ դարի կեսերից Կ. Պոլսում, Զմյուռնիայում, իսկ ավելի ուշ Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ վայրերում լույս տեսած թերթերն ու հանդեսները, որոնցում քննարկված են եգիպտահայ գաղութի քաղաքական, հասարակական, մշակութային կյանքի հարցերը, տարբեր հոսանքների և ազգային կուսակցությունների քաղաքականությունը։ Սակայն պարբերական մամուլի հարուստ նյութերը հաճախ իրարամերժ և չափազանցված են, երբեմն բացահայտ սուբյեկտիվության կնիք են կրում, ուստի դրանց ճիշտ օգտագործումը պայմանավորված է համեմատական և բարեխիղճ աշխատանքով։

Մի շարք հեղինակների աշխատություններ պարունակում են նաև եգիպտահայ գաղութի վերաբերյալ ժամանակակցի վկայություններ, կամ էլ նյութեր՝ մեզ համար անմատչելի աղբյուրներից։ Երուսաղեմի ժամանակագրական պատմությանը նվիրված իր երկհատոր աշխատությունում[12] Ա. Տ. Հովհաննեսյանը, քննարկելով Երուսաղեմի պատրիարքարանի և եգիպտահայ թեմի փոխհարաբերությունների հետ առնչվող հարցեր, բաղվածքներ է բերում վանքի դիվանատան վավերագրերից, որոնք լույս են սփռում եգիպտահայ գաղութի XIX դարասկզբի պատմության վրա։

---

[12] Ա. Տ. Հովհաննեսյան, Ժամանակագրական պատմություն ս. Երուսաղէմի, հ. 2, Երուսաղէմ, 1890։

Երկար տարիներ ապրելով և գործելով Եգիպտոսում, Երվանդ Օտյանը հետաքրքրական փաստեր ու տեղեկություններ է հաղորդում 1897—1908 թթ. եգիպտահայ հասարակական կյանքը փոթորկող կուսակցական պայքարի, հանուն Ազգային սահմանադրության ժողովրդական ելույթների և դեմոկրատական մտավորականության գործունեության մասին։ Օտյանի հաղորդումները նկարագրվող իրադարձություններին ակտիվ մասնակցություն ցուցաբերած անձի վկայություններ են[13]։

Թ. եպ. Գուշակյանի[14] և Ա. Հ. Գարագաշյանի[15] աշխատությունները՝ նվիրված Եգիպտոսի հայկական եկեղեցիների և գերեզմանատների պատմությանը, փաստական հարուստ նյութեր են պարունակում եգիպտահայ գաղութի վերաբերյալ։ Առանձնապես արժեքավոր են Գուշակյանի հայտնաբերած հայերեն արձանագրությունները Սոհակ քաղաքի մերձակա ղպտական Դեյր ալ-Աբիադ վանքում։ Արժեքավոր են նաև Գարագաշյանի աշխատությունում զետեղված տարբեր վավերագրերի, հուշատախտակների ֆոտոպատճենները, եկեղեցիներին նվիրաբերված իրերի հիշատակարանները և գերեզմանատան արձանագրությունները։

Ռամկավար գործիչ Է. Բաբայանի հուշերում մի շարք նյութեր նոր լույս են սփռում Եգիպտոսի ռամկավար և դաշնակցական կազմակերպությունների 1930-ական թվականների փոխհարաբերությունների վրա։ Լինելով ռամկավար կուսակցության բանագնացներից, նա առանձնապես հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում 1936—1937 թթ. Եգիպտոսում ստեղծված ռամկավար-դաշնակ համագործակցության մասին[16]։

Աշխատության արժեքավոր նյութեր են մատակարարել մի շարք օտար լեզուներով սկզբնաղբյուրներ։ Նապոլեոն Բոնապարտի բանակին առընթեր գործող գիտնականների կողմից Եգիպտոսի համակողմանի նկարագրությանը նվիրված բազմահատորյակում[17] և Կահիրեի ֆրան-

[13] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962։

[14] Թ. եպ. Գուշակյան, Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները և պատմություն շինության ս. Գրիգոր Լուսավորիչ նորաշեն եկեղեցւո, Կահիրե, 1927։

[15] Ա. Հ. Գարագաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար, Կահիրե, 1943։

[16] Է. Բաբայան, Ինքնակենսագրություն և հուշեր, Կահիրե, 1960։

[17] „Description de l'Egypte", t. 9e (*M. Jomard*. Mémoire sur la population de l'Egypte ancienne et moderne, Paris, 1829), t. 17e (*M. F. S. Girard*, Mémoire sur l'agriculture, l'industrie, et le commerce de l'Egypte, Paris, 1824), t. 18e (*M. Jomard*, Description de la ville et de la citadelle du Caire, Paris, 1829).



սիական իշխանավորներին ներկայացված զեկուցագրերում[18] կան սուղ, բայց հավաստի տեղեկություններ XIX դարասկզբի Եգիպտոսի հայ բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, զբաղմունքի տեսակների և այլ հարցերի վերաբերյալ։

Ալ-Ջաբարտիի ժամանակագրությունը[19] կարևոր աղբյուր է եգիպտահայ գաղութի 1806—1820-ական թվականների պատմության համար։ Այնտեղ կուտակված են նյութեր եգիպտահայերի իրավական վիճակի, տնտեսական և քաղաքական կյանքի վերաբերյալ։

Օգտագործել ենք նաև Ա.-Բ. Կլոտի[20], Պ. Հ. Համոնի[21], Կրոմերի[22], Մուհամմեդ Սաբրիի[23], Ահմեդ Շաֆիկի[24] և ուրիշ բազմաթիվ օտար հեղինակների աշխատությունները, որոնք նյութեր են պարունակում եգիպտահայ գաղութի վերաբերյալ։

Այսպիսով, հենվելով արխիվային նյութերի, պարբերական մամուլի և տարբեր լեզուներով եղած աղբյուրների ու գրականության վրա, փորձել ենք շարադրել եգիպտահայ գաղութի շուրջ հարյուր հիսուն տարվա (1805—1952) պատմությունը։ Ամենևին չենք հավակնում, որ սպառիչ պատասխան ենք տվել բոլոր հարցերին։

[18] „Mémoire militaire et politique sur l'Egypte. Note remise en 1798 á M Abancourt", „Revue d'Egypte", 1896, t. II.

[19] *Ал-Джабарти*. Египет под властью Мухаммада Али (1806—1821), М., 1963.

[20] *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. I, II, Bruxelles, 1840.

[21] *P. H. Hamont*, L'Egypte sous Méhémet-Ali, t. I, II, Paris, 1843.

[22] *Cromer*, Modern Egypt, vol. I, II, London, 1908.

[23] *M. Sabry*, L'Empire égyptien sous Mohamed-Aly et la Question d'Orient (1811—1849), Paris, 1930; Նույնի L'Empire égyptien sous Ismail et l'ingérence anglo-française (1863—1879), Paris, 1933.

[24] *Ah. Chafik*, L'Egypte moderne et les influences étrangères, le Caire, 1931.

## ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

# ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 1805—1882 ԹԹ.

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

*XIX դարի առաջին կեսին եգիպտահայ գաղութը վերելք ապրեց։ Աճեց նրա թվաքանակը՝ Արևմտյան Հայաստանից, Թուրքիայից և հարևան արաբական երկրներից գաղթականներ ընդունելով, բարձրացավ նրա տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի մակարդակը։ Հայերն ակնառու դեր էին կատարում Եգիպտոսի արհեստագործության զարգացման, առևտրական կապերի ընդլայնման և ֆինանսների կազմակերպման գործում։ Հայ առևտրականները և վարկատուները (սառաֆները), բավականաչափ հարստություն կուտակելով, մղվում էին դեպի պետական-քաղաքական գործունեության ասպարեզը և, բարձր պաշտոններ գրավելով Մոհամմեդ Ալիի տարբեր դիվաններում, ներգործում էին երկրի ներքին և արտաքին քաղաքականության վրա։*

*Որոշ հեղինակներ եգիպտահայ գաղութի վերելքը համարում են Մոհամմեդ Ալիի հայերի նկատմամբ ունեցած բարյացակամ վերաբերմունքի արդյունքը։ Ա. Ալպոյաճյանի ասելով, Մոհամմեդ Ալին «միշտ սիրեց հայերը» և «քաջալերեց զանոնք», որովհետև նրանք «անշահախնդիր տարր մըն» էին, «կրնային եվրոպացիներեն ավելի օգտակարապես ծառայել» և «ծանոթ էին իսլամական բարքերուն, ինչպես նաև արևելյան լեզուներու, մանավանդ թուրքերենին, որ Մոհամմեդ Ալիի համար ալ հասկանալի էր»[1]։ Բացի այդ, Մոհամմեդ Ալին իբր երախտապարտ էր հայերին, որովհետև Կ. Պոլսում հայ «վաճառականի մը*

---

[1] Ա. Ալպոյաճյան. *ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 61—62։*

պաշտոնյան եղած էր և անկե հայրական խնամք ու հոգածություն տեսած էր», իսկ որպես «զինվոր Եգիպտոս ոտք դնելեն անմիջապես ետքը հիվանդացած էր ծանրապես և հայ բժիշկ մը զինքը փրկած էր...: Մոհամմեդ Ալին չէր մոռցած այս բժիշկը և անոր երախտապարտ զգացած էր ինքզինքը և իր երախտիքը հատուցանելու չէր վարանած, երբ առիթը ներկայացած էր»[2]: Այդ և այդ կարգի այլ մանրուքներ հազիվ թե որևէ նկատելի դեր կատարեին: Կային ավելի խոր պատճառներ:

Եգիպտահայ գաղութի վերելքը հիմնականում արդյունքն էր այն բարեփոխումների, որ առաջացան Մոհամմեդ Ալիի (1805—1849) իրականացրած վարչական և տնտեսական ռեֆորմներով:

Մինչ այդ հարցին անցնելը համառոտակի անդրադառնանք եգիպտահայ գաղութի բազմադարյան անցյալին:

## 1. ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Եգիպտոսի հայկական հնագույն գաղութի մասին պահպանված տեղեկությունները վերաբերում են այն զորամասերին, որ II—III դարերում Հայաստանը, ըստ փաստական պարտավորության, ուղարկում էր Հյուսիսային Աֆրիկա՝ ծառայության երկարատև ժամկետով: Հ. Մանանդյանի կարծիքով, Եգիպտոսի Թեբե քաղաքում հայտնաբերված հունարեն արձանագրությունը՝ «Խոսրով հայ տեսեալ զարմացայ» վերաբերում է Վաղարշ երկրորդի որդի Հայոց Խոսրով առաջին թագավորին[3]:

Բյուզանդական կայսրերը, շարունակելով հռոմեական ավանդույթը, Եգիպտոսի զորագաղութները համալրում էին Փոքր Հայքի և բուն Հայաստանի բնիկներից: Պրոկոպիոս Կեսարացին պատմում է Հուստինիանոս առաջինի հայ զորավարներ Ներսես Ներքինու, Ներսես Կամսարականի, Հովհաննես Կամսարականի, Հովհաննես Արշակունու և սրա որդիներ՝ Հովհաննես և Արտավան Արշակունիների Եգիպտոսում և Լիբիայում ծառայելու մասին: 538—539 թթ. Ներսես Կամսարականը գլխավորել է գոթերի դեմ Լիբիա ուղարկված բյուզանդական բանակի այն գունդը, որը կազմված էր «պարսից հպատակ հայերից»: 546—547 թթ.

[2] Նույն տեղում, էջ 65:

[3] Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, մաս Ա, էջ 58:



Հովհաննես և Արտավան Արշակունիների գլխավորությամբ «փոքրաթիվ հայերից բաղկացած զորամասը» կռվել է գոթերի դեմ: Պատերազմում աչքի ընկնելով, Արտավան Արշակունին նշանակվել է «ամբողջ Լիբիայի զորավար»[4]:

VII դարի կեսերից Եգիպտոսն ընկավ արաբական տիրապետության տակ: Եգիպտահայ գաղութը, որն այդ ժամանակ «արդեն մեծ թիվ» էր կազմում[5], ձեռք բերեց զարգացման նոր հնարավորություններ: Արաբ նվաճողները բարձր էին գնահատում այն ծառայությունները, որ «հունական Հայաստանից» հայերից կազմված գունդը մատուցել էր Եգիպտոսի գրավման գործում: Ըստ մի արաբական ավանդության, նորակառույց Ֆուսթաթ քաղաքի շուկան կոչվել է ալ-Վարդան՝ այդ գնդի հրամանատար Վարդան ալ-Ռումիի անունով[6]: Սակայն հետագա դարերում նվաճողները կրոնական հալածանք սկսեցին հայերի դեմ, և եգիպտահայ գաղութն աստիճանաբար թուլացավ: Սկզբնաղբյուրներում հիշատակվում են ծագումով հայ բարձրաստիճան զինվորականներ և պետական գործիչներ:

Ֆաթիմյանների դարաշրջանում (969—1171) եգիպտահայ գաղութը բուռն վերելք ապրեց: Քրիստոնյաների նկատմամբ նրանց վարած հանդուրժողական քաղաքականության և քաղաքային կյանքի զարգացման շնորհիվ հայերի հոսք սկսվեց դեպի Եգիպտոս՝ Սիրիայից և Միջագետքից: Մատթեոս Ուռհայեցին հաղորդում է. «Եւ քաղումք ժողովեցան Հայոց յԵգիպտոս իբրև երեսուն հազարաց»[7]: Նեղոսի հովտում հայտնաբերված «ՆԼ» (981) թվակիր խաչքարը[8] վկայում է, որ X դարի վերջերին Եգիպտոսում կար հայկական եկեղեցի և, հավանաբար, հայերը կազմակերպված էին որպես եկեղեցական համայնք: 1074—1075 թթ. Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, այցելելով Եգիպտոս, Ներսես Շնորհալու հորեղբայր Գրիգոր իշխանին «կաթողիկոս» (առաջնորդ) է նշա-

[4] Հ. Բարթիկյան, Պրոկոպիոս Կեսարացի, էջ 214:

[5] Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 9:

[6] Տե՛ս Զ. Մսրլյան, Ականավոր հայեր Եգիպտոսի մեջ, էջ 12:

[7] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 211: Նույն թվականն է տալիս նաև հայկական հնագույն մի հիշատակարան. «Եւ էր յայն ժամանակն (XI կամ XII դարում—Հ. Թ.) յազգէն Հայոց յԵգիպտոս ԼՌ (30.000)» (Գ. Հովսեփյանց, Հիշատակարանք, էջ 420):

[8] Թ. եպ. Գուշակյան, Եգիպտոսի Հայոց հին և արդի եկեղեցիները, էջ 10: Այդ խաչքարը պահվում է Կահիրեի Հայոց եկեղեցում:

նակեր։ 1085 թ. հայերի թվաքանակի աճելու շնորհիվ գաղութը բաժանվել է երկու առաջնորդական թեմի և ընտրվել է ևս մի «կաթողիկոս»։ Ուռհայեցին ասում է. «Յայսմ ժամանակիս եղև ազգիս Հայոց կաթուղիկոս վեց, երկու յԵգիպտոս և չորս յամենայն աշխարհս Հայոց...»[9]։

XI—XII դարերում Եգիպտոսում գործում էին ավելի քան երեսուն հայկական եկեղեցիներ ու վանքեր։ Աբու Սալիհի (ծագումով հայ) վկայությամբ XI դարի վերջերին Կահիրեի Դեյր ալ-Խանդեկ թաղի ս. Գևորգ եկեղեցին ղպտիներից անցել է հայերին, XII դարի կեսերին հայերը քանդել են Զուեյլայի ս. Անբիծ Տիրամոր եկեղեցին և նրա տեղը կառուցել մի նոր՝ ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին։ Այդ եկեղեցու կառուցումից հետո հայոց «պատրիարքը» տեղափոխվել է Զուեյլա[10]։ Կահիրեի մերձակա Դուրա քաղաքում հայերն ունեին երեք եկեղեցի՝ ս. Գևորգ, ս. Հովհաննես Մկրտիչ և ս. Գրիգոր։ Ս. Գևորգի մասին պատմիչն ասում է. «Եկեղեցին... հակոբիկ ղպտյաց ձեռքն էր, բայց ...տրվեցավ հայոց. սանք առին եկեղեցին և փլցուցին, և անոր տեղ մեծ, ընդարձակ եկեղեցի մի շինեցին՝ շատ գմբեթներով, և կոչեցին հանուն ս. Գևորգա...»[11]։ Դուրայի հարևան ալ-Բասաթին գյուղում գործում էր հայոց ս. Հակոբ եկեղեցին, Գիզեի Սաֆդ-Մայմուն գյուղում կար «եկեղեցի մի հասարակաց երեք ազգանովք», որոնցից մեկը պատկանում էր հայերին, մյուսները՝ ղպտիներին և մելքիտներին[12]։ Հայկական եկեղեցիներ կային նաև Ասյութում, Իխթիհում, Գալուսանայում, ալ-Խուսուսում և այլ վայրերում։ Շինարայում «հայոց քրիստոնեից գաղթականն մի հաստատված էր, որը յոթը եկեղեցի ունեին շատ բարեկարգ, քահանաներով ու միաբաններով»[13]։ Դրանք, ինչպես վկայում է Ուռհայեցին, գործող եկեղեցիներ էին. «... խրախճանիք որ առնէին ձեռնադրութիւնս և օծանէին եպիսկոպոսունս և տային օրհնութիւնս սուրբ միւռոնին և ի նոցանէ օրհնէին քահանայք և լինէր պատարագ և մկրտութիւն և պսակն կուսանաց»[14]։

XI դարի վերջերից հայերին է պատկանել Ասյութից դեպի հարավ, Սոհակ քաղաքի մոտ գտնվող ղպտիական Դեյր ալ-Աբիադը կամ Սպիտակ վանքը, որի ավագ խորանում հայտնաբերվել են երեք՝ երկու եղծանված և մի բավական լավ պահպանված հայերեն արձանագրություն, որտեղ ասված է[15].

Թէոդորոս
Նկարիչ եւ գրիչ
ի գաւառէն
Քեսնոյ։ Մեծ
ի կամուրջն
Շնչեոյ ի գե
ղջէ, որ կոչի Մախթլէ։
Եւ հայր իմ Քրիստափ
որ քարագործ։ Ած. նմա ողորմեսցի
եւ ձեզ և մեզ եւ այց
արասցէ ամենայն
հայուցս որք եմք
ի ծառայութեան
յԵգիպտոս ի հայ
բայեսութեանն
Տն Գրիգորի քեր որ
զւոյն Գրիգորիսի որ
Վահրամ կոչի։

Հայ վարպետները զգալի դեր են կատարել եգիպտական ճարտարապետության զարգացման գործում[16]։ Նրանք են Եգիպտոս ներմուծել թրծված աղյուսի փոխարեն քարի օգտագործումը, և նրանց ձեռակերտն է համարվում արաբական ճարտարապետության խոշորագույն կոթողներից Կահիրեի ալ-Ակմարի մզկիթի քարաշեն ճակատը։ Հայ վարպետներին է վերագրվում նաև Ջույուշի մզկիթ-դամբարանի և Կա-

---

[9] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 231։

[10] Տե՛ս Աբու-Սալիհ, Հայ պատմութիւն եկեղեցեաց, էջ 15—19։

[11] Նույն տեղում, էջ 36—37։

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 52։

[13] Նույն տեղում, էջ 54—55։

[14] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 229—230։

[15] Թ. եպ. Գուշակյան, Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները, էջ 15—17։ Այդ արձանագրություններով զբաղվել է նաև Գ. Հովսեփյանցը, տե՛ս «Կյանք և գիր», Կահիրե, 1948, էջ Գ—Դ։ Վարդան պատմիչը հավանաբար ակնարկում է ալ-Անմար և ալ-Աբիադ վանքերը, երբ նշում է, որ Վկայասերը «շինեաց վանս հայոց» Եգիպտոսում։

[16] Տե՛ս Ph. Hitti, History of the Arabs, p. 630.

3109

հիրեն հյուսիսային պարսպի երեք ամենագեղեցիկ դռների՝ Բաբ ալ-Ֆութուհի, Բաբ ալ-Նասրի և Բաբ ալ-Զավեյլայի կառուցումը[17]։

Հայերն առավել աչքի էին ընկնում Եգիպտոսի պետական և զինվորական կյանքում։ XI—XII դարերում մի շարք հայ, կամ ծագումով հայ վեզիրներ՝ Բադր ալ-Գամալին (1070—1094), ալ-Աֆդալը (1094—1121), ալ-Ջույուշին (1130—1131), Յանիսը (1132—1134), Բեհրամ ալ-Արմանին կամ Վահրամ Պահլավունին[18] (1135—1137), Թալաի բին Ռուզզիկը (1154—1161), իբն Ռուզզիկ Ադիլը (1161—1163) հռչակված էին Եգիպտոսում։ Հիշատակվում են նաև բազմաթիվ հայ, կամ ծագումով հայ նահանգապետներ ու զինվորականներ։ Վասակ Պահլավունին նշանակված է եղել Կուսի նահանգապետ և նրա անունով էլ ալ-Նասեկ է կոչվել մի քաղաք Աթֆիեհում։ Իր «Վիպասանքում» Ներսես Շնորհալին դրվատում է Վասակ և Վահրամ Պահլավունիների Եգիպտոսին մատուցած ծառայությունները։

Ակներևաբեն, Բադր ալ-Գամալին Հյուսիսային Սիրիայի կամ Միջագետքի հայ զորապետներից էր, որը կրոնափոխ լինելով ծառայության էր մտել Ֆաթիմյանների մոտ։ 1064 թ. նա նշանակվել է Դամասկոսի կայազորի, իսկ հետագայում՝ Ակկայի ծովափերքի հրամանատար։ 1073—1074 թթ. արձագանքելով ալ-Մուսթանսիր խալիֆայի օգնության կանչին» Բադր ալ-Գամալին իր «հայրենակից հայերից» կազմված գնդերով ճնշել է թուրքական, նեգրական և նուբիական էմիրների ըմբոստությունը։ Ալ-Գամալին «ի հայոց զօրականացն» կազմված գնդերով կռվել է նաև խաչակիրների դեմ և հաստատել «խաղաղութիւն տանն Մսրայ»։ Ուռհայեցին ասում է. «Եւ զարհուրեցոյց սա (թշնամին —Հ. Թ.) զամենայն տունն Մսրայ, մինչեւ յարեաւ ընդդէմ նորա ծառայն Ագիգին՝ Թագաւորին Մսրայ ... ի Հայոց ազգէն»[19]։

[17] Այդ դռները հղացել և կառուցել են եգիպտացի, հավանաբար հայ, երեք եղբայրներ։ Եգիպտահայ անվանի ճարտարապետ Կ. Պալյանը նշել է, որ այդ դռները «...կառուցողական արվեստի գլուխգործոցներ են... Մեն մի եղբայր դուռ մը շինությունը հանձն առած է։ Երեք դռները իրարմե բոլորովին տարբեր ձևով շինված են։ Նույնիսկ մանրամասնության մեջ իրարմե բոլորովին կտարբերին...։ Հոն բացահայտ կանեններ որոշակի կամարներու երեք հրաշալի տարբերակներ, խիստ հետաքրքրական կերպով կիրարկված։ Որոշ կերպով կերևա թե անոնց ճարտարապետները հմուտ հայ վարպետներ եղած են, որոնք այդ կամարները շինելու դժվարին արվեստը ժառանգած են իրենց նախահայրերեն» («Կյանք և գիրք» տարեգիրք, 1948, էջ 156)։

[18] Վահրամ Պահլավունին Գրիգոր Մագիստրոսի թոռն էր և Ներսես Շնորհալու եղբայրը։

[19] Մատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, էջ 232—233։



1250 թ. Եգիպտոսն ընկավ մամլյուկյան տիրապետության տակ։ Պատերազմելով Կիլիկիայի հայկական պետության դեմ, մամլյուկ սուլթաններն եգիպտական շուկաները լցնում էին հայ գերիներով։ 1266 թ. սուլթան Բեյբարսի զորքերն այրեցին արքայանիստ Սիսը, ավերեցին երկիրը մինչև Բարձր-Բերդ, Ադանա, վերցրին հազարավոր գերիներ, այդ թվում հայոց թագավորի որդուն՝ Լևոնին[20]։ 1274—1275 թթ. եգիպտական զորքերը, միանալով Կիլիկիայի սահմանամերձ վայրերում գտնվող թուրքական քոչվոր ցեղերի հետ, կողոպտեցին ու ավերեցին Սսից մինչև Կոռիկոս, գրավեցին Տարսոնը՝ Կիլիկիայի մայրաքաղաքը, և բնակիչներին կոտորեցին կամ գերեվարեցին։ 1292 թ. սուլթան Աշրաֆն ավերեց Հռոմկլան, բնակիչներին և հայոց կաթողիկոսին գերեվարեց Եգիպտոս։ Բազմահազար գերիներ են վերցվել նաև 1297, 1304, 1317—1322 և հետագա տարիների արշավանքների ժամանակ։ 1375 թ. Կիլիկիայի հայկական պետության կործանումից հետո Եգիպտոս գերի տարվեցին նաև Հայոց Լևոն V թագավորը և նրա ավագանին։

Եգիպտոս մեծազանգված գերիներ էին տարվում նաև Կովկասից։ Իր «Յիշատակարան աղէտից» չափածո հիշատակարանում Գրիգոր Խլաթեցին ողբում է, որ 1416 թ. թաթարները Հայաստանից և Վրաստանից գերիներ

. . . . . . . . . . . . տարին
Յաւտար երկիր վըտարեցին՝
Բաղդատ 'ւ ի Մըսըր հասուցին
'ւ ի Խորասան Պարսկացտանին,
Ոչ մին հազար կամ հինգ վեցին,
Այլ քան ըզբիւրըն էր աւելին...[21]։

Հովհաննես գրչի վկայությամբ, 1440 թ. Ջհանշահը Շամշուլդե քաղաքից, ուր բնակվում էին հայեր և վրացիներ, գերել է «աւելի քան զժՌ (10.000) հոգի» և ցրել «յամենայն կողմանս Տաճկաստանեաց՝ ի Մսր և ի Խորասան»[22]։

[20] Տե՛ս Հեթում պատմիչ. Պատմութիւն Թաթարաց, էջ 64։

[21] Լ. Ս. Խաչիկյան. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 281։

[22] Նույն տեղում, էջ 508։

Եգիպտոսի տարբեր քաղաքներում և շրջաններում բազմահազար հայ գերիները մեծ մասամբ օգտագործվում էին գյուղատնտեսության և արհեստագործության մեջ։ Ասիութ քաղաքում կային հայ ջուլհակներ, որոնց ձեռքի արտադրանքը, տարբերվելով սովորական գործվածքներից, կոչվում էր «հայկական կտավ»[23]։ Աշմունեյն քաղաքում պատրաստում էին հայկական որդան կարմիրի նման կարմիր գույնի գործվածքներ[24]։

Հայ գերիների երեխաներին համախմբում էին զինվորական ճամբարներում, դաստիարակում մուսուլմանական ոգով և ծառայության դնում բանակում։ 1290 թ. սուլթանական 10.000 մամլյուկներից 3700-ը մայրենի լեզուն և ազգային ծագումը մոռացած հայեր և չերքեզներ էին[25]։ Հայոց Լևոն V թագավորի խոստովանահայրը՝ Հովհաննես Դարդելին Կահիրեում հանդիպել է մուսուլմանություն ընդունած բազմաթիվ հայերի, որոնք ծառայում էին եգիպտական բանակում և արքունիքում։

Եգիպտահայերի վիճակը որոշ չափով բարելավվեց XIV դարի սկզբներին, երբ մամլյուկ սուլթանները սկսեցին հովանավորել հայ եկեղեցու ծոցում առաջացած հակալատինական հոսանքը։ 1311 թ. Երուսաղեմի Հայոց վանքը հռչակվեց պատրիարքություն այն բանի շնորհիվ, որ միաբանությունը բացասական վերաբերմունք էր ցուցաբերել 1307 թ. Սսում և Ադանայում գումարված հայ եկեղեցական ժողովների պրոլատինական որոշումներին։ Եգիպտահայերի վիճակն ավելի բարելավվեց 1322—1323 թթ., երբ հաշտություն կայացավ Կիլիկիայի և Եգիպտոսի միջև։ 1325 թ. Կոստանդին կաթողիկոս Դրազարկցին այցելել է Կահիրե՝ կարգավորելու հայ-եգիպտական հարաբերությունները։ «Վասն հանգստեան քրիստոնեից» Կահիրե է գնացել նաև Կիլիկիայի հայ իշխաններից Հեթում Նղրեցին։ 1469 թ. Կիլիկիայի Կարապետ կաթողիկոսը «... գնացեալ էր յԵգիպտոս առ սուլտանն Տահրն, և մեծարեալ պատուեցաւ ի նմանէ. և առեալ խիլայս մեծագինս և պարգևս մեծամեծս, որպէս օրէն է թագաւորաց տալ պարգևս մեծամեծաց՝ բառ արժանեացն»[26]։

[23] Հ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 28։

[24] Տե՛ս *Makrizi*, Description Topographique... de l'Egypte, p. 410.

[25] Տե՛ս *Makrizi*, Histoire des Sultans Mamlouks, t. I, p. 386.

[26] Լ. Ս. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 285։



Եգիպտահայերը օգտվում էին մամլյուկ սուլթանների հանդուրժողությունից։ Կահիրեի մոտ հայերի բնակավայր Գոմ ալ-Արմանում գործում էր ս. Մինաս եկեղեցին, որի ավերակները պահպանվել են մինչև XIX դարի սկզբները։ 1384 թ. իտալացի ճանապարհորդ Ֆրեսկոբալդին Կահիրեում տեսել է, որ «հայ քրիստոնյաների համար պաշտամունք» էր կատարվում ս. Մարտինոս եկեղեցում։ Հիշատակվում են մի շարք հայ եկեղեցականներ, որոնք XIV դարի սկզբներից որպես առաջնորդ կամ տեսուչ պաշտոնավարել են Կահիրեում։ Ակներևաբար, հայկական համայնքի ղեկավարներն էին Հովհ. Դարդելու հիշատակած հայ «մեծամեծներն ու պատվավորները», որոնք «ի վաղուց հետէ բնակեին ի Քահիրէ և էին սորուկք սուլթանին»[27]։ Նրանց երաշխավորությամբ սուլթանն ազատ բնակության իրավունք տվեց Լևոն V թագավորին և «հրամայեաց տալ նմա վասն ուտեստի վաճառուն դրամս արծաթոյ զօր հանապազ»[28]։ Հովհ. Դարդելին պատմում է նաև, որ երբ հայոց կաթողիկոսը «հրամայեաց քահանայիցն հայոց բնակելոց ի Քահիրէ և ի Հայաստան, սպառնալեօք բանադրանաց, զի մի այլես աղօթեսցեն ի պատարագի վասն Լևոն թագաւորի .... ամենք ի հայոց որք բնակէին ի Քահիրէ» առարկել են այդ հրամանի դեմ[29]։

Մամլյուկ սուլթանների հանդուրժողությունը նպաստում էր նաև Եգիպտոսում հայ անապատական կյանքի ծաղկմանը և գրչության օջախների ստեղծմանը։ Հայ վանականներ ապրում և գործում էին Նեգրայի, Սկիտեի և «Հայոց վանք» կոչված անապատներում, ուր XIV դարում գրվել են մի շարք հայերեն ձեռագրեր[30]։

1517 թ. Եգիպտոսն ընկավ օսմանյան ռազմաֆեոդալական բռնակալության լծի տակ։ Կառավարիչ-փաշաները կամ վալիները, սուլթանից կապալով գնելով իրենց պաշտոնը, կեղեքում և կողոպտում էին բնակչությանը։ Մամլյուկների ներքին հակամարտություններին, որպես կանոն, ուղեկցում էին քրիստոնյաների կոտորածը, թալանը, կանանց առևանգումը և այլն։ Այդ պայմաններում եգիպտահայերից շատերը գաղթել են, մի մասն էլ կրոնափոխ է դարձել հալածանքներից

[27] Յովհ. Դարդիլի, Ժամանակագրութիւն, էջ 153։

[28] Նույն տեղում։

[29] Նույն տեղում։

[30] Բացի այդ, Մանուել գրիչը գրել է մի ձեռագիր՝ «Ի քաղաքիս Մսրր կոչեցելոյ», Քաղնոս Սարկավագը մի ավետարան է նվիրաբերել իր «հոգևոր որդույն և աշակերտին ... տէր Աբրահամ գեսարուսի քահանայիս Մսրցւոց»։

խուսափելու համար։ Գրիգոր Դարանաղցին գրում է. «Մրսոր առաջին ընդալոյս, որ թուին ՌԾԴ (1605 թ.) էր, բաղում Ջուղայեցիք էին տաճկցեր..., որ խպտի երէց մի նախատեաց զմեզ վասն նոցա»[31]։

XVII դարի սկզբներին վերստին հայերի հոսք սկսվեց դեպի Եգիպտոս։ Սիմեոն Լեհացու պատմելով, 1615 թ. Կահիրեում կային ավելի քան 200 տուն հայեր՝ ամենն ճելալոց փախուցեալ։ Նրանք համախումբ ապրում էին «Հայոց թաղում», ունեին մի եկեղեցի՝ ս. Սարգիս, մի մատուռ՝ Մար Մինան կամ ս. Մինասը, որի շուրջը հայկական գերեզմանատունն էր։ Կահիրեի հռչակավոր Խան ալ-Խալիլի շուկայում գործում էին Կ. Պոլսից, Տիգրանակերտից և Հալեպից գաղթած հայ ոսկերիչներ, զինագործներ և այլ արհեստավորներ։ Ոսկերիչների «քույումճի պաշին» հայ էր՝ տիգրանակերտցի Խոջա Իբրահիմշահը[32]։ Խան ալ-Խալիլում, Հինախանում և այլ շուկաներում հայ առևտրականները զբաղվում էին տարբեր գործվածքների մեծածախ և մանրածախ առևտրով։ Կային, թեև ոչ մեծ թվով, ջուղայեցի առևտրականներ, որոնք կապեր էին պահպանում Հնդկաստանի, Արաբիայի, Եթովպիայի շուկաների հետ։ Եվրոպացի ճանապարհորդ Գեորգ Սանդիսը, որը 1610 թ. եղել է Կահիրեում, բարձր է գնահատում հայերին։ Նա ասում է. «Նրանք աշխատում են չարքաշ և ապրում պարկեշտ»[33]։

XVIII դարում եգիպտահայ գաղութն ավելի աշխուժացավ շնորհիվ միջազգային առևտրական հարաբերություններում եգիպտական քաղաքների նշանակության բարձրացման։ Արևմուտքը Հեռավոր Արևելքի հետ կապող Բենգալ—Բասրա—Հալեպ—Պոլիս ճանապարհը փոխարինվեց Սուեզ—Կարմիր ծով ճանապարհով, և Կահիրեն, Ռոզետը կամ Ռաշիդը, Դամիետը, ավելի ուշ նաև Ալեքսանդրիան դարձան միջազգային տարանցիկ առևտրի և ապրանքափոխանակության խոշոր հանգույցներ, որտեղ եվրոպացի վաճառականներն օգտվում էին «զգալի թվով» հայ, հույն, սիրիացի միջնորդ առևտրականների ծառայություններից[34]։ 1749 թ. Կահիրեի ս. Սարգիս եկեղեցին «նորակերտեալ ի հիմանէ» վերանորոգվել է դրամահատարանի սառաֆ Ալվազի կամ Վահանի

[31] Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրություն, էջ 462։

[32] Տե՛ս «Սիմէոն դպրի լեհացւոյ ուղեգրութիւն», էջ 216։

[33] G. Sandys, Relation of a Journey, vol. II, p. 122.

[34] Տե՛ս „Lettres édifiantes et curieuses...", t. 4, p. 92, և *В. Б. Луцкий*, Новая история Арабских стран, стр. 16.



«արդեամբք եւ ջանիւք... ի յօգուտ հաւատացելոց»։ 1791—1798 թթ. անգլիական կապիտալի հետ կապված զմյուռնիացի հայ առևտրականները կապալով շահագործում էին Ռոզետի մաքսատունը։

Արաբական սկզբնաղբյուրներում հիշատակվում են ծագումով հայ բազմաթիվ պետական և զինվորական գործիչներ՝ Յաղուբը կամ Հակոբը, Օսման Չելեբին, Ալի ալ-Արմանին, Սուլեյման Բարեմ Ջելլուն, Մուստաֆա Ջերբեջին, Նիկոլան կամ Նիկողայոսը և ուրիշներ, որոնք կարևոր դեր էին կատարում մամլյուքյան Եգիպտոսում։ 1771 թ. Եգիպտոսի կառավարիչ Ալի բեյը, ձգտելով Ռուսաստանի օգնությամբ թոթափել օսմանյան լուծը, երկու բանագնաց է ուղարկել իշխան Օրլովի մոտ, նրան առաջարկելով բարեկամության և զինակցության դաշինք կնքել Թուրքիայի դեմ։ Բանագնացները, որոնցից մեկը Յաղուբը կամ Հակոբն էր, հաջողությամբ են կատարել իրենց առաքելությունը, և Եգիպտոսը Ռուսաստանից ստացել է թնդանոթներ, զինամթերք և այլն։ Ալ-Ջաբարտին հաղորդում է, որ 1798 թ. ֆրանսիական նվաճողների դեմ կռվող եգիպտական զորքի հրամանատարներից ոմանք հայեր էին։ Դրանցից էր, օրինակ, «Մոալլեմ Նիկոլա հայը, Մուրադ բեյի կառուցել տված պատերազմական նավի պետը», որը գերի է ընկել ֆրանսիացիների ձեռքը և միաժամանակ բանտարկվել Միջնաբերդի բանտում[35]։ Բացի այդ, Հայաստանում և Վրաստանում ծնված բազմաթիվ հայազգի մամլյուքներ աչքի են ընկել ներխուժողների դեմ մղված մարտերում։ Հետագայում նրանցից ոմանք, ծառայության մտնելով Նապոլեոն Բոնապարտի բանակում, մեկնել են Ֆրանսիա։

Ֆրանսիական զորքի ներխուժումը խիստ բացասաբար անդրադարձավ եգիպտահայ գաղութի վրա։ Հենվելով ղպտիների վրա, ֆրանսիական նվաճողները չեղյալ հայտարարեցին հայ առևտրականների մենաշնորհները։ Մյուս կողմից մոլեռանդ մուսուլմանները, քրիստոնյաներին համարելով ներխուժողների դաշնակից, թշնամանք էին սնուցում նաև հայերի նկատմամբ, և հակաֆրանսիական շարժումների ժամանակ հարձակման թիրախ էին դառնում նաև հայաբնակ թաղերը։ 1800 թվակիր ֆրանսիական մի վավերագրում ասված է. «Հարթ Ջուեյլա թաղը հարձակման ենթարկվեց առաջինը. թալանչիներն այնտեղ դիմեցին ամենից ավելի կատաղությամբ, բայց ետ մղվեցին այն պաշտպանող հայերի կողմից, որոնցից մի քանիսը Բարձրագույն դռան զինվորներ

[35] Տե՛ս *Ал-Джабарти*, Египет в период экспедиций Бонапарта, стр. 171.

էին...»[26]։ Նվաճողների հեռանալուց հետո՝ 1801—1804 թթ.՝ մամլյուկ բեյերի ստեղծած անիշխանության քաոսում եգիպտահայ գաղութն տուժել էս հյուծվեց և ջլատվեց։ Նրան սպառնում էր վերացման վտանգը։

1805 թ. Մոհամմեդ Ալին, Եգիպտոսի կուսակալ նշանակվելով, վերջ տվեց մամլյուկ ֆեոդալների արյունահեղ հակամարտություններին։ Նրա իրականացրած վարչական և տնտեսական ռեֆորմները զգալի չափով նպաստեցին երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացմանը։

Դրանով զարգացման նոր էտապ բացվեց նաև եգիպտահայ գաղութի պատմության մեջ։

## 2. ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ։ ՀԱՅԵՐԻ ՀՈՍՔԸ ԵԳԻՊՏՈՍ

Կարլ Մարքսը բարձր գնահատելով Մոհամմեդ Ալիի ռեֆորմատորական գործունեությունը, նրան բնութագրել է որպես «հավակնոտ մարդ», որը կարողացավ հասնել այն բանին, որպեսզի «տոնական չալմային» փոխարինի «իսկական գլուխը»[1]։ Մարքսը Եգիպտոսը համարում էր օսմանյան կայսրության այն ժամանակվա «միակ կենսունակ մասը»[2]։

Մոհամմեդ Ալին իշխանության գլուխ բարձրացավ հենվելով մամլյուկյան բռնակալությունից դժգոհ ֆեոդալների մի մասի և խոշոր առևտրականների վրա, որոնք շահագրգռված էին Եգիպտոսը տեսնել կենտրոնացված ուժեղ պետություն։ Այդ նպատակին էին ուղղված նրա վարչական և տնտեսական ռեֆորմները։ Մամլյուկների վարչակառավարման ապակենտրոնացված սիստեմը վերացվեց, ստեղծվեց կենտրոնական իշխանություն՝ կառավարություն, կառավարման ֆունկցիաների պարզ բաժանմամբ՝ բազմաթիվ դիվաններ և ցամաքային ու ծովային ուժեղ բանակ։ Պետական կյանքում խաղացած դերի կարևորությամբ աչքի էին ընկնում Եվրոպական գործերի և եգիպտական վաճառականության, Քաղաքացիական գործերի, Պետական գանձի, Պատերազմական, Ծովային, Արդյունաբերության կամ գործարանների և լուսավո-

[26] „Revue d'Egypte“, 1895, t. II, p. 203.

[1] *К. Маркс и Ф. Энгельс*, Сочинения, изд. 2, т. 9, стр. 202.

[2] Նույն տեղում, էջ 210։



րության դիվանները։ Թեև Մոհամմեդ Ալին համարվում էր օսմանյան սուլթանի վասալը, սակայն Բարձրագույն դռան օրենքներն ու կարգադրությունները համարյա չէին գործում Եգիպտոսում[3]։

Մոհամմեդ Ալիի տնտեսական քաղաքականության անկյունաքարը կազմում էին պետական մոնոպոլիաները, որոնց միջոցով կառավարությունը վերահսկում և կարգավորում էր գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը և առևտուրը։

Հողատիրության իլթիզամական ձևը վերացվեց և ֆելլահները, ազատվելով մամլյուկ ֆեոդալների լծից, անմիջական կախման մեջ մտան ֆեոդալական պետությունից։ Իշխանությունները հոգում էին ոռոգման միջոցների մասին, հայթայթում սերմացու, հողամշակման գործիքները, սահմանում յուրաքանչյուր կուլտուրայի հատկացվելիք ցանքատարածությունը, ընդ որում խրախուսում էին արտահանվող կուլտուրաների արտադրությունը։ 1821—1833 թթ. ցանքատարածությունները 2 միլիոնից աճեցին 3,1 միլիոն ֆեդդանի[4]։

Առավել նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին արդյունաբերության զարգացման բնագավառում։ 1818—1829 թթ. Վերին և Ստորին Եգիպտոսում կառուցվեցին բամբակե, վուշե, մետաքսյա, բրդյա գործվածքներ արտադրող բազմաթիվ մանուֆակտուրաներ և գործարաններ, որոնց արտադրությունը ոչ միայն բավարարում էր տեղական կարիքները, այլև արտահանվում տարբեր երկրներ։ Ռաշիդի, Բուլակի, ալ-Ռոզայի, ալ-Մարսուդի մետաղագործական ձեռնարկությունները արտադրում էին զենքեր, կենցաղային օգտագործման իրեր և այլն։ Պատմելով Բուլակի ձուլարանի մասին, Մասկոն վկայում է, որ դրանից ավելի լավը չկար անգամ Անգլիայում[5]։ Բավարար արդյունքներ ձեռք բերվեցին նաև շաքարի, ապակեղենի, կաշվի, թղթի և քիմիական նյութերի արտադրության ասպարեզում։ 1829—1830 թթ. մի շարք ձեռնարկություններ արդեն աշխատում էին շոգեուժով, այն դեպքում, երբ Եվրոպայում անգամ քչերն էին օգտվում ժամանակի գիտության այդ վերջին խոսքից[6]։

[3] Տե՛ս *M. Sabry*, L'Empire égyptien sous Mohamed-Aly, p. 32.

[4] Տե՛ս *В. Б. Луцкий*, Новая история Арабских стран, стр. 50—51.

[5] *P. Maskau*, Egypt under Mohamed-Ali, p. 220.

[6] Անգլիական արդյունաբերության մեջ շոգեուժի օգտագործումը սկսվել է 1770 թ., ֆրանսիականը՝ 1820, իսկ Գերմանիայում մինչև 1845 թվականը մեքենաների շարժիչ ուժ էին մարդկային ձեռքը, կենդանիները և ջուրը։

Եգիպտական արտադրանքները բավական հաջող մրցում էին բրունում արտաքին շուկայում։ Հյուսիսային և Կենտրոնական Աֆրիկայի երկրներն էին արտահանվում բամբակյա և մետաքսյա գործվածքներ, ապակեղեն, մետաղյա իրեր և այլ ապրանքներ։ Եգիպտական գործվածքները լայն սպառում ունեին նաև Սիրիայում, Թուրքիայում, Արաբիայում, Տրիեստում և Տոսկանայում[7]։ Փոխադարձաբար, այդ շուկաներից ներմուծվում էին մեքենաներ, գործիքներ, երկաթ, անտառանյութ, հանքածուխ, դեղորայք և այլն։

Տնտեսական կյանքի զարգացումը ճանապարհ էր հարթում դեպի նոր մշակույթ, նոր գաղափարներ։ Ստեղծվեցին բարձրագույն, միջնակարգ և մասնագիտական դպրոցներ (բժշկական, տեխնիկական և զինվորական), և ուսանողներ էին ուղարկվում Եվրոպա՝ տարբեր մասնագիտությունների գծով։ 1821 թ. Բուլակում բացվեց եգիպտական առաջին տպարանը, որտեղ տպագրվում էր թուրքերեն, արաբերեն և պարսկերեն լեզվով հրատարակություններ։ Թարգմանվեցին մոտ երկու հազար անուն գրքեր, այդ թվում Նապոլեոն Բոնապարտի կոդեքսը և ֆրանսիական ռազմական կանոնադրությունը։ Թարգմանվեցին և որոշ դպրոցներում վերջին կազմվեցին բազմաթիվ դասագրքեր։ 1828 թ. Կահիրեում լույս տեսավ «Ալ-վաքայեհ ալ-Միսրիե» («Եգիպտական անցուդարձեր») լրագիրը՝ արաբերեն և թուրքերեն բաժիններով[8]։

Այսպիսով, պետական մենաշնորհները, պատվար կանգնելով օսմանյան կապիտուլյացիաների ավերիչ ներգործության դեմ, նպաստեցին Եգիպտոսի զարգացմանը։ Պատմականորեն կարճ ժամանակաշրջանում Եգիպտոսը դարձավ արտահանող երկիր, առևտրական կապեր հաստատեց Արևելքի և Արևմուտքի շուկաների հետ։

Արդյունաբերական ձեռնարկությունների և ոռոգման սիստեմների կառուցումը, մենաշնորհների կազմակերպումը, կանոնավոր բանակի, նավատորմի և պետական ապարատի ստեղծումը մասնագետների և կապիտալների սուր պահանջ էին առաջացնում։ Սակայն այդ պահանջները չէին կարող բավարարվել Եգիպտոսի ֆեոդալական միջավայրում։ «Ժողովուրդը ոչ միայն չէր օգնում ռեֆորմների անցկացմանը, այլև ամեն կերպ դեմ էր կանգնում դրան,— գրել է Կլոտը։ Եվրոպական մշա-

[7] Տե՛ս *M. F. Mengin*, Histoire sommaire de l'Egypte, p. 22.

[8] 1798—1800 թթ. ֆրանսիական նվաճողները Կահիրեում լույս են ընծայել չորս լրագիր, երկուսը՝ ֆրանսերեն, երկուսը՝ արաբերեն լեզվով։



կույթը խորթ էր ժողովրդին, որը տակավին չէր մոռացել ֆրանսիական արշավանքը»[9]։ Արևմտյան քաղաքակրթության կողմնակիցները կամ «արևմտականները» փոքրաթիվ էին, և դեռ երկար ժամանակ չէին կարող հաղթանակ հուսալ այն պայքարում, որ մղվում էր Եգիպտոսի «եվրոպականացման» համար։

Մասնագետների հարցում Մոհամմեդ Ալին հիմնականում ապավինում էր օտարերկրացիների օգնությանը։ 1830-ական թվականներին Եգիպտոսում ծառայում էին տարբեր բնագավառի շուրջ հազար եվրոպացի մասնագետներ։ Դպրոցներում դասավանդում էին ֆրանսիացի, իտալացի, անգլիացի ուսուցիչներ, բանակը մարզում էին ֆրանսիացի հրահանգիչներ, արդյունաբերական ձեռնարկությունները մեծ մասամբ ղեկավարում էին դարձյալ ֆրանսիացի մասնագետներ։ Գալով կապիտալներ հայթայթելուն, Մոհամմեդ Ալին գերադասում էր գործ ունենալ ոչ թե եվրոպական բանկիրների, այլ ռայա սառաֆների հետ։ Արդարև, եվրոպական կապիտալիստներին տրված յուրաքանչյուր կապալ կամ մենաշնորհ կարող էր մեքենայաբար կցվել օսմանյան-համապատասխան կապիտուլյացիոն պայմանագրին և միջամտության գործիք դառնալ երկրի ներքին գործերին։ 1832 թ. Սիրիա արշավելու օրերին, դրամական միջոցների հրատապ կարիք ունենալով հանդերձ, Մոհամմեդ Ալին մերժեց Ռոտշիլդի և մյուս եվրոպական բանկիրների փոխառության առաջարկը[10]։

Այդ պայմաններում ոչ միայն Ղալաթիայում, այլև հարևան արաբական երկրներում գործող հայ, հույն, հրեա խոշոր սառաֆներն ու առևտրականները հազար ու մի թելերով կապվեցին պետական մենաշնորհների հետ։ Մեծ մասամբ դամասկոսցի կամ հալեպցի հայեր էին Կահիրեում և Ալեքսանդրիայում հաստատված Այվազ, Պողոս, Ֆաթալլա, Հինդի, Յուսուֆ, Իլիաս, Սաբբաղ, Խայյաթ և այլ արաբական անուններ կրող առևտրականներն ու վարկատուները։

Ապահովելու համար առևտրավարկային կապիտալի արդյունավետ շահարկումը, Մոհամմեդ Ալին ձեռնարկեց արմատական միջոցների։ Բարեփոխվեց մաքսային սիստեմը, բարվոքվեց գետային և ծովային տրանսպորտը և, որ ամենակարևորն է, բանակից անկախ ստեղծվեցին զինված ջոկատներ, որոնք պահպանում էին կարգն ու ան-

[9] *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 142.

[10] Տե՛ս *M. Sabry*, L'Empire égyptien sous Mohamed-Aly, p. 563.

գործը[11], պարտադրում ապրանքաշրջանառության անվտանգությունը մինչև անգամ երկրի ամենահեռավոր խորշերում: Բարեկարգվեց նաև դատական գործը: Հաստատվեցին եգիպտա-եվրոպական խառն անձնակազմով դատարաններ, որոնք քննում էին օտարերկրյա և տեղական առևտրականների միջև ծագած վեճերը: 1837 թ. անգլիական պառլամենտում զեկուցելով Եգիպտոս կատարած այցելության մասին, Բաուրինգը նշել է. «Եգիպտոսում արդարությունն ավելի համարձակ և նվազ քմայքոտ է, քան մուսուլմանական շատ երկրներում»[12]:

Կահիրեում տակավին ոչ-հեռավոր անցյալում, ինչպես նշել է ֆրանսիացի ճանապարհորդ Վոլնեյը, կարելի էր ամեն քայլ հանդիպել քաղաքացիական հուզումների, հափշտակումների, խոշտանգումների և սպանությունների: Նա ասում է. «Վայ նրան, ում կասկածում են, որ փող ունի...»[13]: Այժմ դրությունը հիմնովին փոխվել էր: Հունաստանի ապստամբության օրերին, երբ Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Սիրիայում, Կիպրոսում և Արշիպելագի կղզիներում մոլեռանդների ամբոխը ջարդում էր հույներին, Եգիպտոսում նրանք «վայելում էին Մոհամմեդ Ալիի բարեխնամ պաշտպանությունը: Նրանց առևտուրն ամենաաննշան չափով անգամ չտուժեց...»: Ջարդերից փախած և Եգիպտոսում ապաստանած հույները վայելում էին նրա «վեհանձն ասպնջականությունը»[14]:

Բացի այդ, Մոհամմեդ Ալին առևտրական կապիտալի խոշոր ներկայացուցիչների առաջ բացեց իշխանության ճանապարհը: Նրա կաբինետում և տարբեր դիվաններում ծառայող խորհրդականները, թարգմանները և քարտուղարները մեծ մասամբ եվրոպացիներ, հույներ և հայեր էին: Համոնը գրել է. «Հայերը մուտք են գործել ամեն տեղ: Նրանցից շատերն ամենաբարձր պաշտոններ են զբաղեցնում փոխարքայի կաբինետում և դիվաններում»[15]: Հայերն առանձնապես կարևոր պաշտոններ էին վարում Եվրոպական գործերի և եգիպտական վաճառականության դիվանում, որն արտաքին գործերի և առևտրի բարձրագույն օրգանն էր: Այդ դիվանի հաջորդական երեք նազիրներն եղել են հայեր՝ Պողոս Յուսուֆյանը (մինչև 1844), Արթին Չրաքյանը (1844—

11 Տե՛ս *G. Hanotaux*, Histoire de la Nation Egyptienne, t. VI, p. 56.

12 Տե՛ս *J. Bowring*, Report on Egypt and Candia, p. 75.

13 *C.-F. Volney*, Voyage en Syrie et en Egypte, t. I, p. 164.

14 *M. F. Mengin*, Histoire de l'Egypte, t. II, p. 239.

15 *P. H. Hamont*, L'Egypte sous Méhémet-Ali, t. I, p. 425.



1850) և Առաքել Նուբարյանը (1850—1853): Ճնշող մեծամասնությամբ հայեր էին նաև նրա տարբեր բաժանմունքների վարիչները և արտասահմանի ներկայացուցիչները: Օտարներն այդ դիվանը դիպուկ կերպով անվանում էին «պալե արմենիեն» (հայկական պալատ): Բազմաթիվ հայ գործիչներ ընդգրկված էին նաև լուսավորության դիվանում: Ակնարկելով պետական հայ գործիչների բարձր հեղինակությունը, Համոնը նշել է. «Հայկական համայնքը ամենազոր է փոխարքայի արքունիքում»[16]:

Մոհամմեդ Ալիի ներքին քաղաքականությանը բնորոշ էր կրոնական հանդուրժողությունը[17]: Եգիպտոսի հնակառույց գեղատիպ եկեղեցիները ցայտուն վկայություն են քրիստոնյաների սոցիալ-իրավական տանելի դրության: Նրանց «արգելված էր եկեղեցու շենքը գետնի մակերևույթեն վեր բարձրացնել»[18], եկեղեցու կոչնակ հնչեցնել, ձի նստել, զենք կրել, շքեղ հագնվել, վկայություն տալ դատարանում և այլն: Ուլեմաները պարբերաբար հակաքրիստոնեական ելույթի էին մղում մոլեռանդներին և ... ամբոխը հափշտակում էր ռայաների ունեցվածքը, ծաղրուծանակի ենթարկում եվրոպացիներին[19]: Այժմ Եգիպտոսում, ինչպես նշել է Բաուրինգը, «ոչ ոքի՝ անգամ նվազագույն չափով» չէին անհանգստացնում կրոնական համոզմունքների համար[20]: 1825 թ.

16 Նույն տեղում, հ. II, էջ 280:

17 Ա. Ալպոյաճյանը փորձում է հիմնավորել այն միտքը, որ իբր Մոհամմեդ Ալին կրոնական հանդուրժողություն էր ցուցաբերում, հետևելով օսմանյան սուլթան Մահմուդի (1808—1839) օրինակին («ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը», էջ 61): Հազիվ թե ընդունելի համարվի այդ կարծիքը, քանի որ Մոհամմեդ Ալին Գյուլհանեի հաթթը-շերիֆ կոչված թանզիմաթից (1839) շատ առաջ սկսել էր ռեֆորմներ իրականացնել: Բացի այդ, բազմավաստակ պատմաբանը թյուրիմացության մեջ է ընկնում, երբ այդ կարծիքը հաստատելու համար վկայակոչում է 1856 թ. Փարիզի Մուրադյան վարժարանում իբր Մոհամմեդ Ալիի արտասանած ճառը: Ալպոյաճյանի ասելով Եգիպտոսի փոխարքան հայտարարել է. «Պետք է որ միտքերնիս չհանենք ամենքին Մեծին Մահմուտայ այն խոսքը, որ կըսէր թե մահմեդականն ու քրիստոնյան միայն մզկիթի ու եկեղեցիյա մեջը կճանչնամ. անկէ դուրս ամենքն ալ մեկ եղբայրք են»: Մոհամմեդ Ալին 1856 թ. Փարիզում չի եղել, չէր էլ կարող լինել, քանի որ 1849 թ. արդեն վախճանվել էր... Ա. Ալպոյաճյանի կողմից վկայակոչված «Բազմավէպ» համարում (1856 թ., էջ 154) հատվածներ են բերված ոչ թե Եգիպտոսի Մոհամմեդ Ալիի, այլ Թուրքիայի համանուն պետական գործչի ճառից:

18 Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 80:

19 Տե՛ս *Thédenat-Duvaut*, L'Egypte sous Mohamed Ali, vol. I, p. 83.

20 *J. Bowring*, Report on Egypt and Candia, p. 67.

Կահիրեում քրիստոնյաներին և հրեաներին թույլատրվեց աղոթատեղիներ կառուցել և ազատ պաշտամունք կատարել։ Կրոնական ազատությունն այնպիսի չափեր էր ընդունել, որ նախկինում «թուրքացյալ» ռայաները վերադառնում էին «ի հավատ Մեսիայինս»[21]։

Ռեֆորմները, խախտելով հին սովորույթները և քանդելով արմատավորված նախապաշարումներին, առաջացնում էին մոլեռանդ մուսուլմանների դժգոհությունը։ Ալ-Ջաբարտիի ժամանակագրությունում պահպանվել են բազմաթիվ վկայություններ այն փորձերի մասին, որ կատարվում էին քրիստոնյաներին նախկին վիճակին վերադարձնելու համար։ 1817 թ. իրադարձությունները ժամանակագիրը նշում է. «Մուհթասիբը[22] ուժեղացրեց ճնշումը...։ Նա մունետիկ ուղարկեց հին Կահիրե, քրիստոնյաներին՝ հայերին, հույներին, սիրիացիներին ազդարարելու, որ հագնվեն այնպես, ինչպես առաջ էին հագնվում, չհեծնեն ձի կամ ջորի, չվարձեն վարձաձիեր, ծառայության չվերցնեն մուսուլմաններին։ Բարձրաստիճան քրիստոնյաները բողոքեցին փաշային (Մուհամմեդ Ալիին—Հ. Փ.)։ Փաշան անցավ նրանց կողմը, որովհետև նրանք պետական հարկերի ատրճանավորներ են և նրա խորհրդատուները»[23]։ Սակայն այդ կարգի երևույթներն անզոր էին։ Մուհամմեդ Ալին, «օգնության հրատապ կարիք» ունենալով, բարելավում էր ոչ-մուսուլմանների վիճակը, և ավելի ու ավելի շատ օգտվում նրանց ծառայություններից[24]։

Մուհամմեդ Ալիի ռեֆորմներով ստեղծված նոր պայմանները դեպի Եգիպտոս էին ձգում ամենատարբեր երկրներից ամենատարբեր դրամունքի մարդկանց։

Հայ ժողովրդական պանդխտության երգերում Կ. Պոլսի հետ միասին հաճախ հիշատակվում է նաև Սքյանդարը կամ Ալեքսանդրիան.

Քեամբրախ Ստամբոլ, ասեր Սքեանդար,
Տարաւ իմ կարիպ, չիբէ հայ խապար...[25]։

Խույս տալով ազգային ու սոցիալական ճնշումից, ծանր հարկերից և սովից, աշխատանքի ընդունակ տարրերը հաճախ միայնակ, երբեմն ընտանիքով հայրենի բնաշխարհից չվում էին Կ. Պոլիս, Զմյուռնիա, Ալեքսանդրիա և այլ նավահանգստային քաղաքներ։

[21] «Ազգասէր», 1845, էջ 207։

[22] Բառացի նշանակում է հաշվառու։ Նրա պարտականությունն էր շուկայում հետևել ապրանքների գներին, չափ ու կշռի ճշտությանը։

[23] *Ал-Джабарти*. Египет под властью Мухаммада Али, стр. 616.

[24] Տե՛ս *Ch. Issawi*, Egypt, p. 171.

[25] Մ. Մկրտչյան, Հայ ժողովրդական պանդխտության երգեր, էջ 145։



Գաղթականները վերջնականապես կտրվում էին իրենց հայրենիքից կամ ծննդավայրից և մշտական բնակություն հաստատում Եգիպտոսում։ Պանդուխտները գաղթում էին ժամանակավորապես, կապված էին մնում հայրենիքի հետ և շնչում վերադարձի հույսով։ Կահիրեում վախճանված մի տիգրանակերտցի պանդուխտի տապանագրում ասված է.

...Ելեալ ի հայրենեաց
Եկի հասի այս քաղաք
Ի շնչել զօդ եւ շահիլ եւս
Զարդիւնս կենաց տարաբնակ։
Բարէ բախտն իմ կուրութեան
Որ չարար զիս արժանի
Կատարելով զփափագ սրտիս
Դառնալ յիմ տուն հայրենի...[26]։

Մինչև XIX դարի սկզբները պանդուխտները թվական զգալի գերակշռություն ունեին «տեղացի» հայերի կամ գաղթականների նկատմամբ։ Նրանք Եգիպտոս էին գնում «սակս վաճառականութեան կամ գործելոյ արհեստս»[27]։ 1798 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է, որ Եգիպտոսի «հայերի մեծամասնությունը» կազմում են նրանք, ովքեր մի քիչ փող աշխատելուց հետո վերադառնում են հայրենիք[28]։ Այժմ դեպի Եգիպտոս էին գնում մեծ մասամբ գաղթականներ Կ. Պոլսից, Զմյուռնիայից, Ակնից, Արաբկիրից, Եվդոկիայից, Տիգրանակերտից, Կեսարիայից, Չմշկածագից, Սեբաստիայից, Հալեպից, Դամասկոսից, Երուսաղեմից և այլ վայրերից։ 1816 թվականի իրադարձությունները ալ-Ջաբարտին նշել է. «Ինչ վերաբերում է հայ քրիստոնյաներին, ապա նրանք տներ, ապարանքներ և այգիներ են կառուցում հին Կահիրեում, որպեսզի հիմնավորվեն այնտեղ»[29]։

1828 թ. Կահիրեում կառուցվեց դպրատունը, հոգետունը, հիվանդանոցը և հյուրանոցը։ Դպրատունը կարևոր դեր էր կատարելու մատաղ սերնդի դաստիարակության գործում։ Հիվանդանոցը սպասարկում էր «աղքատ հիվանդաց ազգիս հայոց»։ Հյուրանոցը պանդոկ չէր, ինչպես կարծում են ոմանք, այլ համայնքային հավաքատեղի, որտեղ գումարվում էր ավագաժողովը։ Հոգետունը օթևան էր տալիս հարևան

[26] Ա. Հ. Կարապետյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 32։

[27] Ս. Ագոնց Կյուվեր, Աշխարհագրութիւն (Աֆրիկէ), էջ 54։

[28] Տե՛ս „Revue d'Egypte", 1896, t. I, p. 712.

[29] *Ал-Джабарти*. Египет под властью Мухаммада Али, стр. 560

երկրներից Երուսաղեմ ուխտագնացներին, երբեմն էլ հյուրընկալում Թուրքիայից, Հնդկաստանից և այլ երկրներից Եգիպտոս ժամանող հայ առևտրականներին։

1837—1839 թթ. Կահիրեում կառուցվեց ս. Աստվածածին եկեղեցին «արդեամբ լուսավորչադաւան առհասարակ ազգիս հայոց որ յԵգիպտոս...»։ 1840 թ. ապրիլի 10-ին, այսինքն ս. Աստվածածինը ավարտելուց (1839 թ. դեկտեմբերի 17) ընդամենը չորս ամիս հետո, լուսավորչական հայերը ձեռնարկեցին ս. Մինասի կառուցմանը, որն ավարտվեց 1843 թ.։ Այդ եկեղեցիները անգործության չմատնեցին ս. Սարգիսը («ի խորշս խպտի վանաց») և Հնօրյա ս. Մինասը, դրանցում էլ «կանոնավորապես եկեղեցական պաշտամունք տեղի կունենար» մինչև դարի կեսերը[30]։ Կահիրեում եկեղեցիներ կառուցեցին նաև հայ կաթոլիկները։ 1832—1833 թթ. մեծատուն Միքայել Այվազի նվիրաբերությամբ կառուցվեց նրանց առաջին աղոթատեղին՝ Տիրամայր ս. Կույսի մատուռը, և ձեռք բերվեց մի ընդարձակ կալված, որի մի մասը հատկացվեց գերեզմանատանը, մյուսը՝ քահանաների բնակելի շենքի կառուցմանը։ Սակայն այդ մատուռը չէր կարող բավարարել նոր գաղթականներով ստվարացող հայ կաթոլիկ համայնքի կարիքները։ 1837—1841 թթ. Դարբ ալ-Գինինեում կառուցվեց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ «ծախիւք ազգին հայոց ուղղափառ յԵգիպտոսի»[31]։

Այսպիսով, Մուհամմեդ Ալիի ներքին քաղաքականությունը նպաստում էր նաև եգիպտահայ գաղութի զարգացմանը։ Սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր պայմաններում աճեց եգիպտահայերի թվաքանակը, բարձրացավ նրանց դերն Եգիպտոսի տնտեսության և պետական ծառայության տարբեր բնագավառներում։ Մյուս կողմից նորեկ գաղթականներն ու պանդուխտները գաղութ էին բերում տոհմիկ բարքեր ու սովորույթներ, ընդլայնում նրա կապերը ինչպես բնաշխարհի, այնպես էլ տարբեր գաղթավայրերի հայության հետ։

* * *

Եգիպտոսի ինքնուրույնության ձգտումներին խոչընդոտում էին անգլիացիները։ Չցանկալով զրկվել փոխարքայի տնտեսական հենարան-

[30] Ա. Հ. Պարտաչյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 16։

[31] Նույն տեղում, էջ 259։ Եգիպտահայ կաթոլիկները և ավետարանականները նոր էին կազմակերպվում որպես համայնք։ Նրանց մասին կխոսվի երկրորդ բաժնում։



ները, որոնց վրա բարձրանում էր Եգիպտոսի հզորությունը»[32], բրիտանական դիվանագետներն անհաշտ պայքար էին մղում մոնոպոլիաների դեմ։ Դոդվելը գրում է. «Այդ քաղաքականությունը (ակնարկում է մոնոպոլիաները—Հ. Թ.) չէր կարող բրիտանական կառավարությանը գայթույթ չպատճառել...։ Տակավին օսմանյան կայսրության մաս կազմելով, Եգիպտոսը պարտավոր էր հարգել թուրքական կապիտուլյացիաները»[33]։ 1838 թ. անգլո-թուրքական առևտրական պայմանագիրը «ստորագրվեց ավելի շուտ փաշայի եկամուտները նվազեցնելու միջոցով նրա մոնոպոլիաները վերացնելու, քան թե բրիտանական առևտրի շահերը պաշտպանելու համար»[34]։

Անգլիական դիվանագիտությանը հաջողվեց առավելագույն չափով օգտվել եգիպտաօսմանյան զինաբախումից, որն ավարտվեց Մուհամմեդ Ալիի կապիտուլյացիայով։ 1841 թ. ընդունելով սուլթանի վերջնագիրը, Մուհամմեդ Ալին պարտավորվեց հրաժարվել բոլոր գրաված տերիտորիաներից, խիստ կրճատել բանակը, ռազմանավեր չկառուցել առանց սուլթանի հավանության, հարգել Բարձրագույն դռան և բրիտանական կառավարության միջև առկա պայմանագրերը և այլն։ Եգիպտական դիվանագետների ջանքերի արդյունքն եղավ այն, որ ժառանգական իշխանության իրավունք տրվեց Մուհամմեդ Ալիին, ինչ վերաբերում է պետական մոնոպոլիաներին, ապա հնարավոր չեղավ որևէ զիջում ձեռք բերել։

Մոնոպոլիաների վերացումից հետո անգլիական կապիտալիստները ձեռք բերեցին երկաթուղիներ, իսկ ֆրանսիացիները՝ Սուեզի ջրանցքի կառուցման կոնցեսիան։ Եգիպտոսը պարտավորվեց Սուեզի ջրանցքի ընկերությանն անվճար տրամադրել ընդարձակ հողեր, մաքսից ազատել նրա ներմուծումները և սեփական միջոցներով հայթայթել անհրաժեշտ աշխատուժի 80 տոկոսը։ 1863 թ. կոնցեսիայի պայմանների վերանայման կապակցությամբ, եգիպտական կառավարությունը պարտավորվեց 84 միլիոն ֆրանկ վնասների հատուցում տալ Սուեզի ջրանցքի ընկերությանը։ Այդ պայմաններում խդիվ Իսմայիլը (1863—1879) կնքեց առաջին փոխառությունը, որով և ծնվեց Եգիպտոսի պետական պարտքը։ Այնուհետև մեկ փոխառությանը հաջորդեց մյուսը։ Փոխա-

[32] *M. Sabry*, L'Empire égyptien sous Mohamed-Aly, p. 557.

[33] *H. Dodwelle*, The Founder of Modern Egypt, p. 220.

[34] Նույն տեղում, էջ 222։

ությունների մարումը և տոկոսների վճարումը կատարվում էր նորանոր փոխառությունների հաշվին։ Խդիվին պարտք էին տալիս եվրոպական բանկիրները, բորսայի գործակալները և սպեկուլյանտները՝ վաշխառուական տոկոսով։ Այն դեպքում, երբ Եվրոպայում հաշվառքային տոկոսը կազմում էր 3.88—4.77, խդիվը վճարում էր 7—18 տոկոս։ 1874 թ. եգիպտական պարտքը հասավ 68.000.000, 1880 թ.՝ ավելի քան 98.000.000 ֆունտ ստեռլինգի։

Եվրոպական կապիտալից Եգիպտոսի կախվածությունը օտարերկրացիների համար ստեղծեց առանձնաշնորհյալ դրություն, որն իրավաբանական հիմնավորում գտավ կապիտուլյացիաների ռեժիմում։ Նրանք ազատված էին ուղղակի հարկերից (բացի հողային հարկից) և ենթարկվում էին ոչ թե եգիպտական, այլ համապատասխան երկրի հյուպատոսի վարչական, ոստիկանական և դատական իշխանությանը։ Հյուպատոսական դատարաններն արդարությունը ծաղրող վճիռներ էին արձակում, բայց խդիվը և նրա մինիստրներն անզոր էին դրա դեմ։ Անգլիական «Պելլ-Մելլ գազետը» գրել է. «Եգիպտոսում մի ֆրանսիացի կամ մի անգլիացի կարող է կես դյուժին եգիպտացի սպանել, բայց եգիպտական կառավարությունն իրավունք չունի այդ հարցով զբաղվելու։ Գործը հանձնարարվում է անգլիական կամ ֆրանսիական հյուպատոսին ... եթե վերջինիս դուր է գալիս, որ ֆրանսիացիները կամ անգլիացիներն եգիպտացիներ սպանեն, ապա այլևս ոչինչ չի մնում անել»[35]։ Վատթարացավ նաև տնտեսական վիճակը։

Եվրոպական ապրանքների ճնշման ներքո եգիպտական արդյունաբերությունը քայքայվեց, իսկ առևտուրը, ինչպես նշել է Մ. Թադևոսյանը «տապականեալ էր ի մեջ բնիկ վաճառականաց», շատեր «ի նոցանե անկան», ուրիշներ «հնանկելոց» էին «կործանման նոցա»[36]։ Մյուս կողմից, գյուղում ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը գնալով մեծացնում էր սեփականազրկված գյուղացիների բազմությունը։ Աշխատավորները ճարահատ «օտար երկիր» էին գաղթում իրենց «կենաց պարենը դյուրությամբ և հանգստությամբ ճարելու»։ 1845 թ. «տաղքաս բնակչաց պանդխտանալը» այնպիսի ծավալ էր ընդունել, որ եգիպտական կառավարությունը փորձեց, թեև ապարդյուն, միջոցներ ձեռք առնել այն արգելելու[37]։

[35] Ըստ M. Sabry-ի, L'Empire égyptien sous Ismaïl, p. 239.

[36] «Ազգասէր», 1847, էջ 197։

[37] Տե՛ս «Արշալոյս Արարատեան», 5 հոկտեմբերի 1845։



Արտագաղթն ավելի խոշոր չափեր ընդունեց հետագա տարիներին, երբ Մոհամմեդ Ալիի հաջորդ Աբբասը (1849—1854) կաշկանդիչ միջոցներ ձեռք առավ օտարերկրացիների նկատմամբ։ Եվրոպացիներին, ներառյալ հույներին, հայերին, սիրիացիներին արգելվեց Կահիրեից և Ալեքսանդրիայից դուրս գալը, երկրի խորքերը գնալը և այլն։ Եգիպտոսից արտաքսվեցին բազմաթիվ ֆրանսիացիներ, որոնք անտեսել էին այդ կարգադրությունը[38]։ Աբբասի հարվածի տակ ընկան նաև բազմահազար բեդվինները։ Եգիպտոսից նրանց մեկնումը «զանգվածային արտագաղթի» բնույթ է ստացել. «24 ժամվա ընթացքում ավելի քան 20.000 շունչ՝ տղամարդ, կին և երեխա» գաղթել են, տանելով այն ամենը, ինչ հնարավոր էր տեղափոխել ուղտերով։ Բեդվիններից հետո Եգիպտոսից ստիպվեցին հեռանալ նաև լիբանանցի արհեստավորներն ու առևտրականները[39]։

Բացի այդ, հալածանք սկսվեց պետական այն գործիչների դեմ, որոնք, հավատարիմ մնալով Մոհամմեդ Ալիի ավանդներին, չէին հաշտվում Աբբասի քաղաքական վարքագծի հետ։ Մոհամմեդ Սաբրին նշում է, որ Արթին բեյը, Սամի փաշան և մյուս եգիպտական բարձրաստիճան գործիչները, որոնք «պայքարում էին Աբբասի բռնապետական և հետադիմական քաղաքականության դեմ», պաշտոնանկ արվեցին[40]։ 1850 թ., կարճատև արգելափակումից հետո, Արթին Չրաքյանն արտասահման անցավ՝ մի խումբ բախտակից արաբ գործիչների հետ։ Պաշտոնանկ արվեց նաև Ստեփան Դեմիրճյանը՝ Եգիպտոսի արտաքին գործերի մինիստրը (1850—1853)։ Համարյա հայեր չմնացին պալատում։ Ակնարկելով հայ գործիչներին, Սենիորը գրել է. «Ատելով իր պապի բարեկամներին, Աբբաս փաշան պաշտոնանկ արեց նրանց»[41]։

Խրախուսվելով Աբբասի քաղաքականությունից, մոլեռանդ մուսուլմանները փորձեցին քրիստոնյաներին զրկել պաշտամունքի ազատությունից, և մինչև անգամ ձեռք երկարեցին համայնքապատկան կալվածներին։ 1850 մարտի 14 թվակիր արխիվային մի վավերագրում բերված է այդ տեսակետից բնորոշ մի փաստ։ Եգիպտահայերի առաջնորդ Գաբրիել Մարաշցին Կ. Պոլսի հայոց պատրիարքին հաղորդում է,

[38] Տե՛ս *M. Sabry*, L'Empire égyptien sous Ismaïl, p. 17.

[39] Տե՛ս *Y. Artine*, Essai sur les causes..., pp. 71—72.

[40] *M. Sabry*, L'Empire égyptien sous Ismaïl, p. 23.

[41] *N. W. Senior*, Conversations and Journal, vol. I, p. 132.

որ մուսուլմանները փորձում են գրավել ազգապատկան մեծարժեք կալվածներից մեկը, որը «Հեռճենթի շերիով»[42] ավելի քան քսան տարուց ի վեր ճանաչված էր ս. Աստվածածին եկեղեցու «տնանկ աղքատաց» սեփականությունը։ Խնդրելով պատրիարքի միջնորդությունը Բարձրագույն դռան առաջ, Մարաշցին ասում է. «Հարարացիք մահմետականք խուռն բազմութեամբ գնացեալ ի դիւանն իշխանութեան աղերսագիր մատուցանեն զի իջեցուցեալ քնիչք եւ սուտ վկայք պատրաստեալ կամեն ի ձեռաց մերոց հափշտակել, ու այժմ ոչ ոք կայ իշխանաց, զի չեղեալսն պատմիցէ փոխարքային, գուցէ ու նա չի լսէ այժմ զպաղատանս մեր ըստ քերման ժամանակին... ու մեք ոչ կարեմք այժմ բազմախուռն խաժամուժ ազգին տալ պատասխանի, եւ իրաւունս մեր ի յայտ բերել...»[43]։

1860-ական թվականներից Եգիպտոսն ընկավ օսմանյան կապիտուլյացիաների ցանցի մեջ։ Դրանով խդիվական պալատում Աբբասի իշխանության տարիների քսենոֆոբիան փոխարինվեց եվրոպացիների և առհասարակ քրիստոնյաների նկատմամբ սորակայությամբ։ Վերացվեց եկեղեցիներ կառուցելու վերաբերյալ Աբբասի դրած արգելքը, արտոնություններ շնորհվեցին քրիստոնյա միսիոներական հաստատություններին և այլն։ Բարելավվեցին նաև հայկական գաղութի պայմանները։ Հայերի առաջ վերստին բացվեց պետական գործունեության ասպարեզը։ Վտարանդի դարձած եգիպտական գործիչները, այդ թվում Զրաքյանը, վերադարձան և ընդգրկվեցին բարձր պաշտոններում։ Սուդանի կառավարիչ նշանակվեց մի հայ՝ Առաքելը։ 1857 թ. երկաթուղու և տրանսպորտի վարչության պետ նշանակվեց Նուբարը՝ ապագա նշանավոր Նուբար փաշան։

Սուեզի ջրանցքի կառուցումը և միջազգային շուկայում եգիպտական բամբակի ու շաքարի պահանջարկի մեծացումը՝ կապված Ամերիկայի քաղաքացիական պատերազմի (1861—1865) հետ, տնտեսական զգալի աշխուժություն առաջացրին Եգիպտոսում։ Ընդարձակվեցին բամբակի և շաքարի պլանտացիաները, բարվոքվեցին հաղորդակցության միջոցները, ընդլայնվեց բանկերի և այլ վարկային հաստատությունների ցանցը։ Այդ բոլորը, աշխատող ձեռքերի պահանջ առաջաց-

[42] Կրոնական դատարանի կողմից տրված սեփականատիրության վկայագիր։

[43] ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 713։ Հետայսու ԳԱԹ արխիվ։



նելով, տարբեր երկրներից դեպի Եգիպտոս էին ձգում զանազան մասնագիտության տեր մարդկանց։ Վերսկսվեց նաև հայերի հոսքը դեպի Եգիպտոս, տանելով, սակայն, առավելապես սև աշխատանքի ընդունակ պանդուխտների։ Եգիպտոսի շուկաները, նավահանգիստները լցվեցին վանեցի, բաղեշցի, մշեցի, սղերդցի, սասունցի տարաբախտ գյուղացիներով, որոնք մի պատառ հացի համար լծվում էին ամենածանր, ամենասև աշխատանքի։ Նրանց մասին Րաֆֆին ասում է. «Այդ ժողովուրդն է (պանդուխտները—Հ. Փ.), որին հանդիպում ես Տաճկաստանի և Եգիպտոսի (որտեղ չկան նրանք...) բոլոր ծովեզրյա քաղաքներում, ուր նոցա գործն է չոփչիություն, թուլումբաչիություն և այլ այսպիսի ստոր պարապմունքներ»[44]։ Տիմ. Սափրիչյանը հաղորդում է, որ 1867 թ. «Սուէզի մէջ հարյուրի չափ պանդուխտ հայեր կային, որոնք ջրանցքի բացման համար աշխատելու եկած էին. անոնցմէ 65 հոգին մեռեր էին»։ Ճաղուֆայում կային «30-ի չափ հայ տկար ու աշխատութենէ հոգնած պանդուխտներ»[45]։

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի ավարտից հետո, երբ բամբակի և շաքարի պահանջարկը նվազեց, աշխատանքի հարցը խիստ դժվարացավ։ Ասպարեզ չկար մասնագիտություն չունեցողների և արաբերեն չիմացող մասնագետների համար։ Մինչև անգամ Կահիրեի հայոց առաջնորդարանը հատուկ հայտարարությամբ հրապարակեց մամուլում, թելադրելով «մերայնոց ամենեցուն, որ Եգիպտոս չգան։ Վասնզի Եգիպտոսի մեջ շահավետ պաշտոն մը գտնելու համար միայն անգլիական լեզվին տեղեկությունը բավական չէ, այլ պետք է որ մեքենական արհեստ, մանավանդ արաբերեն լեզուն գիտնան և պարկեշտություն ունենան։ Ի վերայ այսր ամենայնի դարձյալ դյուրին չէ շուտով արդյունաբեր պաշտոն մը գտնել»[46]։

Եգիպտահայ գաղութի զարգացումը վերստին ընդհատվեց Արաբիի ապստամբության հետևանքով։ Ապստամբները դատաստան էին տեսնում ոչ միայն եվրոպացիների, այլև հույների, հրեաների և հայերի հետ։ Թանթայում, Բենեսում և Քաֆր Զեյաթում սպանվեցին 11, վիրավորվեցին՝ 2 հայեր։ Այդ վայրերում «ուրիշ ազգերէ սպանելոց թիւը մինչև 250-ի» էր հասնում[47]։ Կահիրեում և Ալեքսանդրիայում «բնավ

[44] Րաֆֆի, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, 1959, էջ 196։

[45] Տ. Սափրիչյան, Երկամյա պանդխտություն ի Հայաստան, էջ 8։

[46] «Արշալույս Արարատյան», 19 փետրվարի 1866։

[47] «Մասիս», 17 օգոստոսի 1882։

մի հայու արյուն չթափեցավ, սակայն վնասն հույժ մեծ» էր։ Այդ քաղաքներում հայոց առաջնորդարանը դրամ և անձնագրեր էր բաշխում «կարոտելոց»։ Ալեքսանդրիայում նպաստ էին ստանում 50 հայեր, Կահիրեում նրանց թիվն ավելի մեծ էր[48]։ Սակայն միջոցները բավարար չէին, ինչպես երևում է տեղապահ Մարգսյանի մի նամակից, որտեղ ասված է. «Աղքատները գլխուս ժողված են. ասոնք ուտելիք կուզեն, ուսկից պիտի գտնեմ, և ոչ իսկ շաբաթ մը կերակրելու պատրաստություն չունիմ»[49]։

Այսպիսով, 1840—1850-ական թվականներին օտարերկրյա ներթափանցման հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում եգիպտահայ գաղութը զգալի չափով թուլացավ, նվազեց նրա թվաքանակը, խիստ նոսրացավ պետական հայ գործիչների փաղանգը։ 1860-ական թվականներից գաղութի պայմանները որոշ չափով բարելավվեցին, և վերստին հայերի հոսք սկսվեց դեպի Եգիպտոս, սակայն Արաբիի ապստամբությունը խանգարեց նրա զարգացմանը։

* * *

Եգիպտահայերի թվաքանակի վերաբերյալ ստույգ և ամբողջական տվյալներ չկան։ XIX դարում իսկական մարդահամարներ չեն եղել, ոչ էլ այնպիսի ցուցակագրումներ, որոնք ընդգրկեին երկսեռ հասարակության բոլոր տարիքները։ Այդ պատճառով, եգիպտահայ գաղութի պատմությանը նվիրված աշխատություններում բերվում են այնպիսի թվեր, որոնց հավաստիությունն ակներևաբեն կասկածելի է։ Ն. Մ. Աղազարմի տալով XIX դարի սկզբից մինչև 1895 թվականն եգիպտահայերի թվաքանակը «հազիվ երկու հազարի կհասներ»[50]։ Ըստ Հ. Նալբանդյանի XIX դարի առաջին կեսին «շուրջ 2000» հայեր կային Եգիպտոսում[51]։ Ա. Ալպոյաճյանը 1828, 1845—1847 և 1865 թվականներին Եգիպտոսում հաշվում է «հազիվ 200 տուն», այսինքն շուրջ 2000 հայեր[52]։ Այդ թվերն առհասարակ չեն կարող ուշադրության արժանանալ, քանի որ արվում են առանց փաստի և սկզբնաղբյուրի։

XVIII դարի վերջերին և XIX դարամուտին Կահիրեում ապրող հայերի թվաքանակի վերաբերյալ արժանահավատ վկայություն են հաղոր-

[48] Նույն տեղում։

[49] Ըստ «Արձագանքի», 1882, էջ 378։

[50] Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 75։

[51] «Արմավենի» տարեգիրք, 1928, էջ 8։

[52] Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 81, 292 և 295։



դում Ագոնցը և ֆրանսիական բանակի գիտնականներից Ժոմարը։ Ըստ Ագոնցի, այդ ժամանակաշրջանում Կահիրեում կային «յապղէս հայոց բնակք իբր 50—60 տունք», կամ 500—600 հայեր[53]։ Նա հաշվի է առել միայն գաղթական կամ «տեղացի» համարված հայերին, դուրս թողնելով «զայնոսիկ որք գնան անդ սակս վաճառականութեան եւ գործելոյ արհեստս», այսինքն պանդուխտներին, որոնք, ինչպես նշվեց, այդ տարիներին կազմում էին գաղութի մեծամասնությունը։ Ժոմարի հաղորդած տեղեկությունների համաձայն, 1798—1800 թթ. Կահիրեի երկու հարյուր հազար բնակիչներից 10.000-ը ղպտիներ էին, 5.000-ը՝ հույներ, 5.000-ը՝ սիրիացիներ և 2.000-ը՝ հայեր[54]։ (Ի տարբերություն Ագոնցի, նա պանդուխտներին կամ ժամանակավոր բնակիչներին չի առանձնացրել)։ Եթե դրան ավելացնենք նաև Ալեքսանդրիայի, Ռոզետի և Դամիետի հայերին, ապա կարող ենք ընդունել, որ XIX դարամուտին եգիպտահայ գաղութը հաշվվում էր 2.500—3.000 շունչ։

Մինչև 1840-ական թվականների եգիպտահայերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ առհասարակ չկան, այն կարելի է որոշել միայն մոտավոր չափով և ենթադրաբար, հիմք ընդունելով անուղղակի փաստեր։ Կահիրեի ս. Աստվածածին եկեղեցու կառուցման օգտին նվիրաբերությանը մասնակցել են շուրջ 325 ընտանիք։ Թեկուզ այն միակ փաստը, որ նվիրաբերության նվազագույն գումարն եղել է 20 դրուշ[55], այսինքն մի աշխատավորի 12—15 օրվա աշխատավարձ, իրավունք է տալիս պնդելու, որ զգալի թվով, գուցե և ցուցակագրվածներից ոչ պակաս թվով ընտանիքներ չեն մասնակցել նվիրատվությանը։ Ուստի, 1830—1840-ական թվականներին Կահիրեում ապրում էին հավանաբար 600—700 լուսավորչական ընտանիքներ։ Հաշվելով նաև հայ կաթոլիկներին, ինչպես և մյուս քաղաքների հայերին, հավանական է, որ գաղութը բաղկացած լինի հազար կամ հազար երկու հարյուր տնտեսությունից, այսինքն շուրջ 10.000 շնչից։

1841—1882 թթ. եգիպտահայերի թվաքանակը կրել է զգալի տատանումներ։ Արտագաղթից հետո՝ 1854 թ. ըստ արևելագետ Դյուլա-

[53] Ս. Ագոնց Դպիր, Աշխարհագրութիւն (Ափրիկէ), էջ 54։

[54] Տե՛ս *M. Jomard*, Description de l'Egypte, t. 18, pp. 330, 363—364.

[55] Տե՛ս Ա. Հ. Դարայան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 70։ Բաուրինգը հաղորդում է, որ 1830-ական թվականներին արդյունաբերության աշխատավորների օրավարձը 1—1.5 դրուշ էր։

րիեի, Եգիպտոսում մնացել էին 3000—4000 հայեր[56], 1860—1865 թվականներից նրանց թվաքանակն աստիճանաբար աճել է և 1879 թ. հասել 8000-ի[57], սակայն վերստին նվազել է վերահաս ապստամբության հետևանքով։

Մինչև XIX դարի կեսերը հայերը հիմնականում տեղաբաշխված էին Կահիրեում և Ալեքսանդրիայում։ Կահիրեում հայերի հնավուրց բնակավայրն էր ս. Մինաս կամ մար Մինա մատուռի շրջակայքը, Բաբելոնի կամ Ֆոսթաթի ավերակներից ոչ հեռու, ստորոտը «Հողաբլրոյն կոչեցեալ Գոմ էլ Էրմէն, որ բնակեալ են յառաջագոյն գերեալքն հայոց»[58]։ Մինչև 1829 թվականը, ինչպես վկայում են այդ մատռան կորստից փրկված իրերի հիշատակարանները, այնտեղ ապրում էին Հայաստանի և Թուրքիայի ամենատարբեր գավառներից եկած գաղթականներ ու պանդուխտներ[59]։ Հայեր բնակվում էին նաև Հարթ ալ-Զուեյլա, Բեյն ալ-Սուրեյն և Դարբ ալ-Գենեինե թաղերում։

Կահիրեից հետո գալիս էր Ալեքսանդրիայի հայկական գաղութը։ Ա. Գարաաշյանի ասելով Ալեքսանդրիայի հայկական գաղութը սաղմնավորվել է ֆրանսիացիների ներխուժման տարիներին[60]։ Այդ կարծիքը ճիշտ չէ։ Անգլիացի ճանապարհորդ Վ. Գ. Բրաունը հաղորդում է, որ 1792 թ. Ալեքսանդրիայում բացի մուսուլմաններից կային նաև հույներ, հայեր և հրեաներ, որոնք ունեին իրենց աղոթատեղիները։ Նա ասում է. «Հայերը նույնպես մի եկեղեցի ունեն...» և այլն[61]։ Դա նշանակում է, որ Ալեքսանդրիայի հայկական գաղութը կազմավորվել էր Բրաունի այցելությունից առնվազն մեկ կամ երկու տասնամյակ առաջ։

Ալեքսանդրիայի զարգացմանը զուգընթաց աճում էր նաև հայերի թվաքանակը։ 1830-ական թվականներին Ալեքսանդրիայի հայկական գաղութն օժտվեց նոր եկեղեցիով։ Պողոս Յուսուֆյանը հայկական համայնքին է նվիրաբերել Աբու Դարդար թաղի սեփական կալվածքը՝ հանդերձ երկհարկանի շենքով, որի մի հարկը վերածվել է եկեղեցու՝ ս. Պողոս-Պետրոս անունով, իսկ մյուսը հատկացվել է եկեղեցականների բնակությանը։

---

[56] Տե՛ս «Revue des deux Mondes», 1854, p. 228.

[57] Տե՛ս ЦГИА СССР в Ленинграде, ф. 821, оп. 138, д. 82, л. 21.

[58] Ա. Տ. Հովհաննեսյան, Ժամանակագրական պատմություն, հ. 2, էջ 506։

[59] Տե՛ս Ա. Հ. Գարաաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 24—25 և 26։

[60] Տե՛ս նույն տեղում, էջ 115։

[61] W. G. Brown, Travels in Africa, p. 7.



Փոքրաթիվ հայեր էին ապրում Ռոզետայում և Դամիետայում։

XIX դարի կեսերից հայերի շարժում է նկատվում դեպի Զագազիգ, Թանթա, Ասիութ և Ներքին այլ քաղաքներ, որոնցում, սակայն, գաղութներ ձևավորվեցին միայն դարի վերջերին։

Եգիպտահայերը չէին ապրում ինքնամփոփ, մեկուսացված համայնքի կյանքով։ Մասնակցելով Եգիպտոսի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի զարգացմանը, նրանք կերտել են ուշագրավ արժեքներ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1. ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտոսում կային հումքի մի շարք տեսակներ, որոնք կայուն հիմք էին ծառայում արհեստագործության զարգացման համար։ Նեղոսի հովիտը տալիս էր մեծ քանակությամբ բամբակ, կանեփ, վուշ, արմավ, բնական ներկանյութեր։ Կային նաև շինանյութեր, խեժ և մի շարք հանածոներ։ Բացի տեղական հումքից, Եգիպտոսում մշակվում էին տարբեր երկրներից ներմուծվող մորթիներ, կաշի, բուրդ, անտառանյութ, երկաթ, պղինձ, ազնիվ մետաղներ, թանկարժեք քարեր և այլն։

Եգիպտոսի արհեստագործության խոշորագույն կենտրոնը Կահիրեն էր։ Կահիրեում էին փոխարքայի, փաշաների, բարձրաստիճան զինվորականների, պետական պաշտոնյաների, տարբեր պետությունների հյուպատոսների ապարանքները, ինչպես և երկու հարյուր հազարից ավելի բնակիչներ, որոնք ունեին արհեստագործական արտադրանքի իրենց համապատասխան պահանջմունքները։ Արհեստավորներն աշխատում էին ոչ միայն տեղական պատվիրատուների, այլև արտահանման համար, մանավանդ, երբ եգիպտական բանակը գրավեց Արաբիան, Սուդանը, Սիրիան և այլ երկրներ։

XIX դարի առաջին կեսին Կահիրեում կային ավելի քան հարյուր հիսուն տեսակ արհեստներ[1], որոնք կարելի է բաժանել հինգ խմբի. առաջին, սննդի հետ կապված արհեստներ՝ հացագործություն, մսագործություն, որձագործություն, հրուշակագործություն և այլն։ Երկրորդ

[1] Ըստ արևելյագետ Ա. Ռայմոնդի հայտնաբերած 1801 թվականի արխիվային ցուցակի, Կահիրեում կային 177 տեսակի արհեստներ կամ արհեստ համարվող զբաղմունքներ („Arabica", 1957, Paris, IV. pp. 150–158)։ Բոուրինգը հաղորդում է, որ 1838 թ. դրանց թիվը 164 էր։



խմբի մեջ էին մտնում հագուստ և կոշկեղեն արտադրող և դրա հետ կապված արհեստները՝ կաշեգործություն, կոշկակարություն, դերձակություն, ասեղնագործություն, մուշտակագործություն և այլն։ Երրորդ խումբը կենցաղային պահանջմունքներ բավարարող և կենցաղային գործածության իրեր պատրաստող արհեստներն էին, որոնց պատկանում էին ոսկերիչները, դարբինները, պղնձագործները, փականագործները, խառատները, բրուտները, որմնադիրները, աղյուսագործները, քարակոփները, թաղիքագործները և այլն։ Չորրորդ խումբն ընդգրկում էր կառավարական, տարանցիկ և ներքին առևտրին սպասարկող արհեստներ՝ պարանագործություն, թամբագործություն և այլն։ Կային նաև մի շարք ուրիշ արհեստներ, ինչպես զինագործությունը, ապակեգործությունը, մետաքսագործությունը, ջուլհակությունը և այլն, որոնք պետական մոնոպոլիայի պայմաններում բարձրացան մանուֆակտուրային արդյունաբերության մակարդակի։

Արևելքում տարածված սովորության համաձայն, Կահիրեում արհեստանոցները տեղաբաշխված էին ըստ բնույթի։ Միատեսակ արհեստանոցները տեղադրված էին միևնույն թաղում կամ փողոցում՝ իրար մոտ, միևնույն շարքում։ Կլոտ նշել է. «Բոլոր նրանք, ովքեր միևնույն արհեստով են զբաղվում, համախմբված են քաղաքի միևնույն մասում»[2]։

Արհեստների ներսում բավական ամեն էր արտահայտված մասնագիտացումը՝ աշխատանքի բաժանումը։ Ոչ քիչ թվով արհեստների բաղկացուցիչ մասերը դարձել էին ինքնուրույն ճյուղեր։ Ատաղձագործությունը, օրինակ, բաժանված էր մի քանի ճյուղերի. դուռ և լուսամուտ պատրաստելը, տանիք կապելը, փայտե փականք սարքելը և այլն ինքնուրույն արհեստներ էին[3]։ Այդ կարգի բաժանման էին ենթարկված ոսկերչությունը, դերձակությունը, կոշկակարությունը և այլ արհեստներ։

Արտադրանքի չափի, որակի և, հետևաբար, նյութական ապահովվածության տեսակետից եգիպտահայ արհեստավորների որոշ խմբեր գտնվում էին բավական բարձր աստիճանի վրա։ Այդ մասին է վկայում այն փաստը, որ եկեղեցիներին ոսկյա անոթներ, ոսկեթել վարագույրներ և այլ թանկարժեք իրեր նվիրաբերող սառաֆների ու առև-

[2] A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 301.

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 293–294։

տորականների թվում երևում են նաև հայ արհեստավորների անունները[4]:

Եգիպտահայերը հմտացած էին ոսկերչության, դերձակության, ատաղձագործության, կոշկակարության, մուշտակագործության մեջ և մի շարք շինարարական արհեստներում: Սկզբնաղբյուրներում հիշատակվում են նաև հայ վառոդագործներ (պարուդճի), ձուլագործներ (տոքմաճի), երկաթագործներ (տեմիրճի), պղնձագործներ (ղազանճի), կաշեգործներ (դաբաղ), հացագործներ (էքմեքճի), արդուկիչներ (ութուճի) և այլ արհեստավորներ[5]:

**Ոսկերչությունը**, ներառյալ արծաթագործությունն ու ակնագործությունը, եգիպտահայերի հնագույն արհեստներից էր և զարգանում էր Կ. Պոլսի ոսկերչական հռչակավոր շուկայի հետ սերտ կապ պահպանելով: Կահիրեի հայ ոսկերիչները համախմբված էին Խան ալ-Խալիլի շուկայում: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Կահիրեի հայ «արծաթագործը», ինչպես նշել է Ազանը, մեծ մասամբ պոլսեցիներ էին: Խան ալ-Խալիլի հայ ոսկերիչների մասին ուշագրավ վկայություն ունի ֆրանսիական բանակի գիտնականներից Ժոմարը. «Ոսկերիչները, ակնագործները և գոհարավաճառներն իրենց արհեստանոցներն ունեն մի հատուկ թաղում...: Այդ աշխատավորները, որոնց արհեստը ... գործնականում պահանջում է առավել գիտելիքներ և վարպետություն, համարյա բոլորը սիրիացի քրիստոնյաներ և հայեր են»[6]: Ոսկերչության մեջ բավական խորն էր արտահայտված աշխատանքի ներքին բաժանումը: Արծաթագործությունը, ոսկերչությունից անջատվելով, դարձել էր ինքնուրույն արհեստ, իսկ ոսկերչությունը բաժանված էր երկու հիմնական մասնագիտացված ճյուղի՝ սառեքյարության և միխլայիջիության: Սառեքյարները ձուլ ոսկուն տալիս էին պահանջված ձևը, իսկ միխլայիջիները կամ ագուցողները հղկում և ագուցում էին թանկագին քարերը: Կլոտը գրում է. «Ակնագործները, որոնք մեծ թիվ են կազմում Կահիրեում, հայեր և պոլսեցիներ են: Նրանք հիանալի կերպով ագուցում են թանկագին քարերը, որ նրանց վստահում են թուրքական

[4] Տե՛ս Ա. Հ. Գարտաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 18, 20, 22 և 69—70:

[5] Տե՛ս Մատենադարան, Զանազան հեղինակների ֆոնդ, թ. 68բ, վ. 149:

[6] Տե՛ս *M. Jomard*, Description de l'Egypte, t. 18, p. 256.



մեծ իշխանները»[7]: Մոհամմեդ Ալիի արքունիքին սպասարկում էին հայ ոսկերիչներն ու գոհարավաճառները[8]:

XIX դարի կեսերին հայ ոսկերիչները տակավին համարվում էին որակավոր վարպետներ, սակայն այլևս ի վիճակի չէին եգիպտական ավագանու պահանջմունքները բավարարել, և խդիվական պալատի ոսկերչական պատվերները հանձնարարվում էին Կ. Պոլսի հայ վարպետներին[9]:

**Դերձակությունը** ոսկերչությունից հետո եգիպտահայերի ամենագլխավոր արհեստն էր: Օտար հեղինակները հայ և հույն դերձակներին տեղացի արհեստակիցներից ավելի բարձր են դասում: Կլոտն ասում է. «Կահիրեում կան բավական մեծ թվով եգիպտացի դերձակներ, որոնք պատրաստում են տեղացիների զգեստները: Կան նաև հույն և հայ դերձակներ, որոնք սպասարկում են բարձր դասի մարդկանց, մասնավորապես օսմանցիներին»[10]: Հասարակ մարդկանց համար եգիպտացի դերձակները պատրաստում էին մի քանի տեսակ պարզ և անպաճույճ զգեստներ՝ երկար և լայն շապիկ, մինչև ծնկները հասնող շալվար, բաճկոնակ և կաֆթան: Իսկ մեծատունները կրում էին բարդ ու փարթամ զգեստներ, որոնց պատրաստումը պահանջում էր առավել վարպետություն և նուրբ ճաշակ: Բացի այդ, մինչ տեղացի դերձակները միաժամանակ կարում էին թե տղամարդկանց, թե կանանց զգեստներ, հայերի և հույների մոտ դրանք կազմում էին դերձակության երկու ինքնուրույն, մասնագիտացված ճյուղեր:

**Ասեղնագործությունը**, հանդիսանալով այն ժամանակվա զգեստների արդիականության պահանջմունքներից, համարվում էր դերձակության օժանդակ ճյուղերից: Ամենալավ վարպետները հայեր և հույներ էին: «Կահիրեում և Ալեքսանդրիայում նրանք ունեին արհեստանոցներ և հռչակված էին իրենց սանթերի աշխատանքով, շքեղ ու նրբաճաշակ բանվածքներով»[11]: Ամենաճարտարները ոսկու և արծաթի թելերով նախշեր էին բանում ոչ միայն կերպասի, այլև մարոկենի և այլ տեսակի կաշիների վրա: Կլոտն ասում է. «Նրանք շատ ճարտար են մանավանդ

[7] *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 297.

[8] Տե՛ս Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութի վրա, էջ 73:

[9] Տե՛ս ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 3, գ. 86, թ. 5: Այդ փաստաթղթում հիշատակվում են խդիվական պալատի Կ. Պոլսի գործակալը, ինչպես և այն վարպետները, որոնք պատրաստում էին «Եգիպտոսի վերաբերյալ ոսկերչական գործերը»:

[10] *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 290.

[11] Նույն տեղում, էջ 289:

զգեստների վրա մետաքսյա և ոսկյա երիզների զետեղումով շնորհալի բանվածքներ և զարդեր ստեղծելու արվեստում։ Եվրոպայում քիչ վարպետներ կարող են նրանց գերազանցել...»[12]։ Չնայած ասեղնագործության մեջ մեքենայի գնալով ավելի ու ավելի լայն օգտագործմանը, հայ վարպետները պահպանել են իրենց նշանակությունը և միշտ էլ բարձր են գնահատվել նրանց **օյայի** և **սըրմայի** նրբարվեստ ասեղնագործությունները։

XIX դարի երկրորդ կեսում ասեղնագործությունը հիմնականում մնում էր հայերի ձեռքում, սակայն իշխանական պատվերները կատարում էին Կ. Պոլսից հրավիրված վարպետները։ Այսպես, 1848—1865 թթ. Սրբուհի Գալֆայանը, որը կանանց զգեստների և ասեղնագործության արհեստանոց ուներ Կ. Պոլսի հայաբնակ Խասգյուղ արվարձանում, վեց անգամ Կահիրե է հրավիրվել՝ եգիպտական իշխանուհիների հարսանիքի օժիտը պատրաստելու համար։

**Մուշտակագործությունը** քիչ տարածված արհեստներից էր։ Կահիրեում և Ալեքսանդրիայում կային տարբեր մորթիներ վերամշակող արհեստանոցներ, որոնցում ընդգրկված վարպետները, ինչպես վկայում է Կլոտը, «առհասարակ հույներ և հայեր» էին[13]։ Նրանց թիվը շատ մեծ չէր, քանի որ մուշտակ կրում էին միայն մեծ իշխանները և հոգևորականները։

**Կոշկակարությունը**, ըստ Ա. Ալպոյաճյանի, «հայերը տարածած են» Եգիպտոսում[14]։ Կահիրեում, Ալեքսանդրիայում և մյուս քաղաքներում կային զգալի թվով հայ կոշկակարներ, որոնց պատրաստած արևելյան (եմենի, փոստալ, բաբուջ և այլն) և եվրոպական (տղամարդկանց և կանանց ջիզմե, բոտին, սկարպին և այլն) կոշիկներն իրենց տոկունությամբ և վայելչությամբ չէին զիջում Եվրոպայից ներմուծված ապրանքներին։ Կահիրեի հայ կոշկակարները համախմբված էին Ջիհադիեում։

**Շինարարական արհեստները** գտնվում էին զարգացման ցածր աստիճանի վրա։ Խոսելով տեղական արհեստավորների մասին, Կլոտը նշում է. «Որմնադիրներն օգտագործում են շատ անկատար, նախնական գործիքներ..., նրանց հյուսած պատերը հաճախ ուղղահայաց չեն

12 Նույն տեղում, էջ 290։

13 Նույն տեղում, էջ 290—291։

14 **Ա. Ալպոյաճյան**, *ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը*, էջ 202։



և փլչում են...։ Շատ քիչ անգամ դռներն ու լուսամուտները ուղղանկյուն-քառանկյուն ձև ունեն և ծռված չեն մի կողմի վրա։ Նրանց կառուցումները, գրեթե, որպես կանոն, կատարվում են առանց նախօրոք պատրաստված պլանի»[15]։ Փականագործները գիտեին միայն փայտե կողպեքներ պատրաստել, անգամ Կահիրեում հազվադեպ էին օգտագործում երկաթե կողպեքներ[16]։ Այդ պատճառով, Մոհամմեդ Ալին հայ և հույն որմնադիրներ, դարբիններ, քարտաշներ, ատաղձագործներ և այլ արհեստավորներ էր հավաքագրում Թուրքիայում[17], և նրանք էին կրում արդիական բնակարաններ, գործարաններ, դպրոցներ, հիվանդանոցներ, զորանոցներ կառուցելու աշխատանքի հիմնական ծանրությունը։ Այդ է վկայում նաև Կլոտի հետևյալ հաղորդումը. «Մի քանի տարին ի վեր ճարտարապետությունը շատ փոխվեց։ Որդեգրվեց պոլսական ոճը, որը խառնածին ժանր է, առաջացած է հունական և արաբական ոճերի անճաշակ միաձուլումով։ Կառուցվեցին փայտաշեն շատ շենքեր, որոնցում կամարաձև լուսամուտները փոխարինված են ուղղանկյուն-քառանկյան խոշոր փեղկերով, իսկ արաբերեն պերճանքը՝ մակերեսների միալար հարթությամբ»[18]։

XIX դարի կեսերից զգալի փոփոխություններ առաջացան արհեստագործության մեջ։ Բազմաթիվ արհեստներ, որոնք արտադրում էին տնային տնտեսության և նորաձևության առարկաներ, զարդեղեններ, գործվածքներ, մուշտակներ և այլն, ծանր հարված ստանալով եվրոպական էժան և բարձրորակ ապրանքներից, կամ նշանակությունից զրկվեցին, կամ էլ իսպառ վերացան։ Իսկ ոսկերչությունը, դերձակությունը, կոշկակարությունը, պղնձագործությունը, որմնադրությունը, քարտաշությունը և այլ արհեստներ, որոնք բավարարում էին տեղական բնակչության կենցաղային-տնտեսական առանձնահատուկ պահանջմունքները, պահպանեցին իրենց գոյությունը։ Բացի այդ, տեղական նոր պահանջմունքների հիման վրա առաջացան նոր արհեստներ՝ հեռախոսագծերի, տարբեր ապարատների, էլեկտրազանգերի, ժամացույցների վերանորոգում, էլեկտրաշարժիչների, դինամոմեքենաների կարգավորում և այլն։

15 *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 292.

16 Տե՛ս նույն տեղում, էջ 293—294։

17 Տե՛ս *Ал-Джабарти*. Египет под властью Мухаммада Али, стр. 610.

18 *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. I, p. 254.

**Համքարությունները։** Եգիպտոսի համքարությունների մասին պահպանվել են սուղ տեղեկություններ։ Կլոտը հաղորդում է, որ միևնույն մասնագիտությամբ զբաղվողները՝ արհեստավորները, առևտրականները, անգամ երգիչները, տաղասացները, պարողները, գերասանները, լարախաղացները ունեին իրենց համքարությունները։ Առավել բազմամարդ էին հացագործների, ջուլհակների, ներկարարների, կաշեգործների, դերձակների, ոսկերիչների, ատաղձագործների, սառաֆների համքարությունները[19]։ Միևնույն զբաղմունքի տեր մարդկանց միմյանց կապողը տնտեսական, կրոնաբարոյական, վարչադատական ու հասարակական շահերի գիտակցությունը և փոխադարձ օգնության գաղափարն էր։ Համքարության անդամները մասնակցում էին միմյանց առօրյա կյանքին, դժբախտությանը և ուրախությանը։

Ներքին կյանքում որոշ ինքնուրույնություն ունենալով հանդերձ, համքարություններն ենթարկվում էին քաղաքային իշխանություններին։ Համքարության ղեկավարը, որին արաբները կոչում էին շեյխ, իսկ հայերը՝ բաշ (գլուխ կամ գլխավոր), նշանակվում էր տվյալ քաղաքի կառավարչի կողմից։ Իր հերթին շեյխը կամ բաշը նշանակում էր իր տեղակալներին՝ նակիբներին։ Շեյխի կամ բաշի և նրա նակիբների պարտականությունն էր վերահսկել համքարական կանոնների գործադրությունը, կատարել պետական հարկերի և տուրքերի բաշխումը համքարության անդամների վրա, վարպետի աստիճան տալ և այլն[20]։

Տնտեսական և իրավական առումով համքարության անդամները բաժանվում էին երկու խմբի՝ ինքնուրույն վարպետների և աշակերտների, ենթավարպետների։ Վարպետները համարվում էին համքարության լիիրավ անդամներ, աշակերտներն ու ենթավարպետները գտնվում էին նրանց իշխանության ներքո։ Վարպետներից էին նշանակվում շեյխի կամ բաշի նակիբները և նրանք առավել չափով էին օգտվում համքարության շրջանակում թույլատրված արտոնություններից։ Նրանց առաջարկով էր միայն շեյխը կամ բաշը վարպետի աստիճան տալիս ենթավարպետին։

Վարպետներն առհասարակ սահմանափակ թվով աշակերտներ էին պահում, այդ պատճառով էլ որոշ արհեստներ դարձել էին այս կամ այն ընտանիքի արտոնությունը՝ ժառանգական կարգով։ Աշակերտներին ու ենթավարպետներին չէր թույլատրվում առանց շեյխի կամ բա-

[19] Տե՛ս A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 282.

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 283։



շի հավանության վարպետ կամ արհեստանոց փոխել և այլն։ Երբ աշակերտը ձեռք էր բերում այնքան հմտություն, որ արդեն կարող էր ինքնուրույն աշխատանք կատարել, նրան շնորհվում էր ենթավարպետի աստիճան։ Ենթավարպետին վարպետի աստիճան շնորհելու արարողությունը կատարվում էր հանդիսավոր ծիսակատարությամբ[21]։

Կապիտալիստական արտադրաեղանակի ձևավորմանը զուգընթաց համքարություններն աստիճանաբար դադարում էին արտադրական միավոր լինելուց, վերածվում էին վարչաֆինանսական միավորի, որոնց ֆունկցիաները սահմանափակվում էին հարկային գործերով։ Այժմ Եգիպտոսի յուրաքանչյուր բնակիչ կարող էր ցանկացած արհեստով զբաղվել, եթե ձեռք էր բերում պատենտ՝ պաշտոնական թույլտվություն։ Օսմանյան հպատակները պատենտը ստանում էին տեղական իշխանություններից, իսկ օտարահպատակները՝ համապատասխան հյուպատոսից։ Նրանց միջև ծագած վեճերն ենթակա էին հյուպատոսական դատարանների իրավասությանը։ Վերջիններս, որպես կանոն, պաշտպանելով եվրոպացիներին և արդարացնելով մինչև անգամ նրանց հանցագործ արարքները, ծանր հարված էին հասցնում արհեստներին[22]։

Այսպիսով, քննարկվող ժամանակաշրջանում հայերը կարևոր տեղ էին գրավում Եգիպտոսի արհեստագործության մեջ։ Հայ վարպետներն առանձնապես աչքի էին ընկնում ոսկերչության, մուշտակագործության, դերձակության, ատաղձագործության և մի շարք այլ արհեստներում։ Եվրոպական ապրանքների ներխուժման պայմաններում զգալի չափով նվազեց նրանց նշանակությունը, սակայն հետագա տարիներին նրանք, հարմարվելով նոր պայմաններին, աշխույժ մասնակցություն էին բերում տարբեր արհեստների զարգացմանը։

* * *

XIX դարի առաջին կեսին եգիպտական արդյունաբերությունը, լինելով պետության մոնոպոլիան, մասնավոր նախաձեռնության ուղղակի ասպարեզ չէր։ Այդ պատճառով, հայերը արդյունաբերության տարբեր բնագավառներում հանդես էին գալիս հիմնականում որպես մասնագետներ և վարպետներ։

1818 թ. Խորոնֆիշում հաստատվեց առաջին մետաքսագործարանը, որը, սակայն, չտվեց ակնկալված արդյունքը։ Մանժենը հաղորդում է,

[21] Տե՛ս նույն տեղում։

[22] Տե՛ս J. Ninet, Le Commerce européen, pp. 11—12.

որ Թուրքիայից բերվեցին մետաքսագործ հայ վարպետներ, որոնցից պահանջվում էր՝ կազմակերպել արտադրությունը և տեղացիներին սովորեցնել «մետաքսը մշակել այնպես, ինչպես մշակում են Կոստանդնուպոլսում և Հնդկաստանում»[23]։ Հայ վարպետների առաջարկով գործարանը տեղափոխվեց Դարբ ալ-Համամից, որտեղ նպաստավոր պայմաններ կային մետաքսագործության համար։ Կլոտը վկայում է, որ արդյունքը գոհացուցիչ էր, գործարանն արտադրում էր «ընտիր գործվածքներ՝ որոշ աստիճանի նրբաճաշակ նախշերով»[24]։

Պոլսահայ վարպետների անվան հետ է կապված վարշամակի կամ յազմայի արտադրությունը։ Սկզբում յազման ներմուծվում էր Կ. Պոլսից, որտեղ «յազմաճի» կամ «թյուլպենտճի» ամենաարհեստավոր վարպետները հայեր էին։ Նրանք որոշում են, ինչպես նշում է Ա. Ալպոյաճյանը, «փոխանակ Պոլսո մեջ պատրաստված յազման» Եգիպտոս ուղարկելու, «տեղվույն վրա պատրաստել զայն»[25]։ Վարշամակի արտադրությունը պետական մոնոպոլիայի առավել շահութաբեր ճյուղերից մեկն էր, որովհետև այն ժամանակ կանայք անխտիր, քրիստոնյա թե մուսուլման, յազմա էին օգտագործում։

Հայերը որոշ դեր էին կատարում նաև մի շարք տեխնիկական կուլտուրաների մշակության բնագավառում։ Դրանցից առանձնապես պետք է հիշատակել ափիոնը, որն օգտագործվում էր տարբեր դեղատեսակներ պատրաստելու մեջ։ Մանժենի պատմելով Մոհամմեդ Ալին «Թուրքիայից բերել տվեց հայեր, որոնք վարժ էին ափիոն մշակելու մեջ»[26]։ Հայերի մշակած ափիոնի նմուշները Եվրոպայում համարվել են բարձրորակ, մինչև անգամ ավելի ընտիր, քան Թուրքիայի ափիոնը։

Մոհամմեդ Ալիի կապիտուլյացիայից հետո եգիպտական արդյունաբերությունը, չդիմանալով ներխուժող եվրոպական ապրանքների մրցակցությանը, անկում ապրեց։ 1860-ական թվականների կեսերից տեղական կապիտալիստները լրջորեն ձգտում էին Ամերիկայի քաղաքացիական պատերազմից հետո գնորդ չունենալու հետևանքով կուտակված բամբակը, վուշը և հումքի այլ տեսակները տեղում մշակել։ Այդ պայմաններում եգիպտական արդյունաբերության որոշ ճյուղեր

[23] M. F. Mengin, Histoire sommaire de l'Egypte, p. 204.
[24] A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 273.
[25] Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 202։
[26] M. F. Mengin, Histoire sommaire de l'Egypte, p. 25.



վերելք ապրեցին։ 1870-ական թվականներին Կահիրեում, Ալեքսանդրիայում, Սուեզում, Դամիետում և այլ վայրերում հիմնադրվեցին տեքստիլի, շաքարի, թղթի, կաշեգործական և այլ ձեռնարկություններ, որոնք, թեև գործում էին պետական պիտակի ներքո, սակայն իրականում պատկանում էին անգլիական ընկերություններին։ Բաժնետոմսերի մեծագույն մասը գտնվում էր խեդիվի, նրա ընտանիքի անդամների և պետական բարձրաստիճան պաշտոնյաների ձեռքում։ Կահիրեի ջրի հայթայթման ընկերության, ինչպես և սառույցի գործարանի գլխավոր ակցիոներներից էին Նուբար փաշան և նրա ընտանիքի անդամները[27]։ Նրանք շահերով կապված էին նաև տեքստիլի և թղթի գործարանների հետ։ Գործարանաշինական հանդուգն ծրագրով աչքի է ընկել Տիգրան փաշան, բայց անգլիացիները խանգարել են նրա ձեռնարկումները։ Կրոմերը գրում է. «Անցյալի փորձից պատշաճ հետևություն չանելով, նա սկսեց կառուցել մի շարք գործարաններ, որոնք նույնպես անհետ կորան բրիտանական դիվանագիտության եղջերափողի առաջին մեղմ շնչից»[28]։

1880-ական թվականներից գնալով բարձրացավ հայերի դերը եգիպտական արդյունաբերության զարգացման գործում։ Նրանք դրամական խոշոր միջոցներ ներդրեցին արդյունաբերության այն ճյուղերում, որոնց դեմ անզոր էր եվրոպական ապրանքների մրցակցությունը։ Ստեղծվեցին տեղական յուրահատուկ պահանջմունքներին համապատասխանող տարբեր տեսակի իրեր արտադրող բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց մասին կխոսվի հաջորդ բաժնում։

## 2. ԱՌԵՎՏՈՒՐԸ։ ՀԱՅ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբին եվրոպական պետություններից անբավական հայ մեծատուն-վաճառականների համար երանավետ վայրեր էին Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրները, որտեղ տակավին չէր սրվել տնտեսական մրցակցությունը։ Այդ պայմաններում հայ վաճառականական կապիտալը և նրան զուգահեռ վարկային կապիտալը բավական ամուր կռվաններ ստեղծեցին եգիպտական ասպարեզում։

[27] Տե՛ս «Նեղոս», Ալեքսանդրիա, 8 փետրվարի 1889։
[28] Cromer, Modern Egypt, vol. II, p. 225.

Պետական մոնոպոլիաների հաստատումից հետո խիստ սահմանափակվեց վաճառականական կապիտալի շրջանառության ոլորտը, ընդհակառակը, լայն հնարավորություններ ստեղծվեցին վարկային կապիտալի զարգացման համար։

Մինչև XIX դարի սկզբները ղպտի սառաֆներն էին տիրում եգիպտական շուկայում։ 1817—1818 թթ., երբ Բոսֆորի հայ սառաֆները սկսեցին գործարքի մեջ մտնել Մուհամմեդ Ալիի հետ, առևտրավարկային գործերի լծակն անցավ ոչ միայն ղպտի, այլև հայ, մասամբ էլ հույն սառաֆների ձեռքը[29]։ 1824—1826 թթ. եգիպտա-հունական պատերազմական գործողությունների հետևանքով հույն սառաֆները հեռացան ասպարեզից։ Հայ և ղպտի սառաֆների միջև գերակայության պայքարի ելքը վճռվեց 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի տարիներին, երբ քաղաքական հալածանքների հետևանքով ուժեղացավ Թուրքիայի հայ առևտրավարկային կապիտալի հոսքը դեպի Եգիպտոս 1837 թ. հասնելով իրենց հզորության բարձրակետին, հայ սառաֆները Կահիրեում հիմնեցին Եգիպտոսի առաջին բանկը։

Եգիպտոսում սառաֆները ունեին իրենց համքարությունը։ Նրա գլուխ կանգնած էր սառաֆբաշին կամ գլխավոր սառաֆը, որը նշանակվում էր փոխարքայի կամ կառավարության կողմից և համարվում էր խոշոր հեղինակություն պետական ֆինանսների ոլորտում։ Նա վերահսկում էր յուրաքանչյուր սառաֆի գործունեությունը, միջոցներ ձեռնարկում, որ պատահական կամ համքարությունից դուրս գտնվող անձինք չզբաղվեն սառաֆությամբ և, որ ամենագլխավորն է, հանդես էր գալիս որպես պետական գանձարանի վերատեսուչ, ստուգում և հաստատում գանձարան մուծված միջոցների ճշտությունը և այլն։ Միայն նրա նշանակած սառաֆներն իրավունք ունեին վարկավորելու պետական բյուջեով նախատեսված տարբեր օբյեկտները, ինչպես և զբաղվելու պետության կամ մասնավոր անձանց տոկոսով փող տալու գործով։ Թվով և կապիտալով գերակշիռ դիրք ունենալով համքարության կազմում, հայ սառաֆներն իրենց ձեռքում էին պահում գլխավոր սառաֆի պաշտոնը։ Մինչև 1827 թվականը Մուհամմեդ Ալիի սառաֆբաշին էր ակնցի Եղիազար ամիրա Պետրոսյանը, 1828—1847 թթ.՝ Ալեքսան Միսաքյանը[30]։

[29] Տե՛ս *M. le C*^te *de Forbin*, Voyage dans le Levant, p. 209.

[30] Տե՛ս «Ազգասէր», 1847, էջ 166։



Հայ սառաֆների ձեռքում էր նաև դրամահատարանի կամ զարբհանեի սառաֆբաշիի պաշտոնը, որը, ըստ սովորության, զբաղեցնում էր Մուհամմեդ Ալիի գլխավոր սառաֆի առաջին տեղակալը։ Պահպանվել են բազմաթիվ հրամանագրեր, որոնցով տարբեր ժամանակներում դրամահատելու մենաշնորհ իրավունք է տրվել զարբհանեի սառաֆբաշի Եվդոկիացի Գեորգին (1832), Հակոբին (1834), Համբարձում ամիրա Գրիգորյանին (1835—1840), Միհրանին և Կարապետին (1847) և այլոց[31]։

Եվ, վերջապես, հայ առևտրավարկային կապիտալն ամուր դիրքեր էր գրավել վաճառականության դիվանում[32], որի հաջորդական երեք նախագահները, ինչպես նշվեց, հայեր էին։ Տարբեր ժամանակներում վաճառականության դիվանի ներկայացուցչի պաշտոնով Զմյուռնիայում գործել է Առաքել Ապրոյանը, Փարիզում՝ Մկրտիչ Նուբարյանը, Ամստերդամում՝ Ապրոյանը, Տրիեստում՝ Պետրոս Յուսուֆյանը և ուրիշներ։ Նրանք վաճառում էին եգիպտական արդյունաբերության արտադրանքները, անմշակ կամ կիսամշակ հումքը և գնումներ կատարում ներքին շուկայի, գործարանների և բանակի համար[33]։ Ընդ որում նրանք բավական աշխույժ առևտուր էին կատարում։ Պատմելով Պետրոս Յուսուֆյանի մասին, «Արմաւենի» լրագիրը հաղորդում է. «Ակվարիո մեջ նա այնպիսի ճոխ համբավ մը ունէր որ օր մը վաճառականութեան գործատեղին (պորսա) չի գացած ատենը՝ այն օրը գործերը դուլ և դադար կմնային»[34]։

Այդ պաշտոններն իրենց ձեռքում պահելով, հայ սառաֆներն անարգել ներթափանցում էին ամեն տեղ, անբաժան ուղեկցում էին գյուղատնտեսությանը, արդյունաբերությանը և առևտրին։

Արտադրության մինչկապիտալիստական եղանակի պայմաններում սառաֆությունը տոկոսաբեր կապիտալի բնորոշ ձև էր։ Նրա զարգացումը զուգակցվում էր վաճառականական կապիտալի զարգացման և ամենտեսակ կապալային գործարքների բարգավաճման հետ, որոնք առաջ էին բերում որոշակի ժամկետում հատուցելի դրամական պարտավո-

[31] Տե՛ս *J. Deny*, Sommaire des Archives Turques du Caire, p. 218, 259.

[32] Նկատի ունենալով, որ այս բաժնում խոսքը գնում է առևտրի մասին, եվրոպական գործերի և եգիպտական վաճառականության դիվանի փոխարեն պայմանականորեն գործ ենք ածում վաճառականության դիվան տերմինը։

[33] Տե՛ս Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 6։

[34] «Արմաւենի», Կահիրե, 16 ապրիլ 1865։

բությունը։ Սառաֆության դասական ձևն էր շռայլող փաշաներին, խոշոր կալվածատերերին, ինչպես նաև իրենց աշխատանքի սեփական պայմանների տեր մանր արտադրողներին դրամական փոխատվությունը։ Սակայն, հարմարվելով պետական մոնոպոլիաներին, սառաֆությունը ձեռք բերեց գոյության առանձնահատուկ ձևեր, որոնք և հանդիսանում էին մաքուր վաշխառությունից նրան տարբերակող հատկանիշները։

Կապալով էր տրվում պետական հարկերի և տուրքերի հավաքման, արդյունաբերական ձեռնարկությունների ֆինանսավորման, տարբեր ապրանքների գնման ու վաճառման, ինչպես և մաքսատների և այլ օբյեկտների շահագործման մենաշնորհը։ Սառաֆները ոչ միայն տոկոսով դրամ էին տալիս ամեն կարգի կապալառուների, այլև հաճախ իրենք էին հանդես գալիս որպես կապալառու։ Սակայն այդ հանգամանքը չէր փոխում սառաֆության բնույթը։ Հարկերի հավաքումով, մաքսատան կամ տրանսպորտի շահագործմամբ զբաղվելով հանդերձ, սառաֆը միշտ էլ մնում էր միևնույն սառաֆը, քանի որ ձեռք բերված կապալը ոչ ավել, ոչ պակաս, հանդիսանում էր պետությանը տրված վարկի դրավականը, տոկոսներով միասին այն ետ ստանալու երաշխիքը։

Մուհամմեդ Ալիի իրականացրած ագրարային ռեֆորմը, նպաստելով արտադրամիջոցների մանրատմանը, սառաֆական գործարքների բեղուն ասպարեզ դարձրեց գյուղատնտեսությունը։ Համոնը հաղորդում է, որ յուրաքանչյուր նահանգի, շրջանի և գյուղի կցված էր մի սառաֆ[35]։ Օգտագործման իրավունքով հողաբաժին ձեռք բերող գյուղացիները ռենտա-հարկը վճարում էին պետությանը, ընդ որում, հին սովորույթի համաձայն, ոչ թե դրամով, այլ գյուղատնտեսական արտադրանքով։ Ռենտա-հարկի հավաքը կատարվում էր փոխարքայի գլխավոր սառաֆի կամ պետական գանձարանի վարչության կողմից նշանակված սառաֆի վերահսկողությամբ։

Հարկահան սառաֆների պարտավորությունների մեջ էր մտնում պետությանը հասուցվող բնապարտությունները դրամական ռենտայի և դրամական հարկի փոխարկելը, որը և նրանց հնարավորություն էր տալիս սպեկուլյացիայի ասպարեզ դարձնելու որպես ռենտա-հարկ հանձնված արտադրանքը։ Մթերակայան մուծված արտադրանքները տեղերում վաճառվում էին աճուրդով, որը, որպես կանոն, ձեռք էր բերում համապատասխան գյուղի, շրջանի կամ նահանգի սառաֆը։ Ապա

[35] Տե՛ս *P. H. Hamont*, L'Egypte sous Méhémet-Ali, t. I, p. 51.



մի ավելի խոշոր սառաֆ պետությունից կապալով էր վերցնում այդ արտադրանքները Կահիրեում կամ մի այլ քաղաքում վաճառելու մենաշնորհը։ Ժամանակագիր ալ-Ջաբարտին հիշատակում է այդ կարգի բազմաթիվ գործարքներ, որոնց հեղինակները, ի դեպ, մեծ մասամբ հայ սառաֆներ էին[36]։

Մինչև 1816—1818 թվականները՝ արդյունաբերության վերածումը պետական մոնոպոլիայի և մանուֆակտուրային արտադրության զարգացումը, սառաֆները յուրացնում էին մանր արտադրողների՝ արհեստավորների ստեղծած գրեթե ամբողջ հավելյալ արտադրանքը։ Թեև, պետական մոնոպոլիայի հետևանքով, արհեստավորները, մեծ մասամբ զրկվելով արտադրամիջոցներից, դարձան վարձու բանվոր փոխարքայի մանուֆակտուրաներում, սակայն սառաֆների առաջ չփակվեց ասպարեզը, նրանք շարունակեցին ապրել արտադրության «ծակոտիներում»։ Ինչպես գյուղատնտեսության մեջ, յուրաքանչյուր արդյունաբերական ձեռնարկության կից գործում էր պետական գանձարանի վարչության կողմից նշանակված սառաֆը[37], որը փոխատվության կամ ավանսի ձևով արտադրությունն ապահովում էր շրջանառու կապիտալով։ Պատահում էր նաև, որ սառաֆները կապալով էին վերցնում այս կամ այն մանուֆակտուրայի շահագործման մենաշնորհը։

Առևտրավարկային կապիտալի համար պատրաստ ենթահող էր նաև կապիտուլյացիաների դեմ պայքարի պայմաններում կատարվող առևտուրը։

Վաճառականության դիվանի հետ գործարք կատարող առևտրականները բաժանվում էին երկու խմբի։ Առաջինի մեջ մտնում էին կապիտուլյացիաներից ուղղակի կամ անուղղակի օգտվելու իրավունք ունեցող երկրների հպատակ առևտրականները։ 1836 թ. Ալեքսանդրիայում գործում էին այդ կարգի 44 (ֆրանսիական՝ 13, ավստրիական՝ 9, տոսկանական՝ 8, անգլիական՝ 7, սարդինական՝ 2, շվեդական՝ 1, դանիական՝ 1, հոլանդական՝ 1, պրուսական՝ 1, հունական՝ 1) առևտրական գործակալություններ, որոնք բաժանմունքներ ունեին Կահիրեում։ Բացի այդ, բացառությամբ Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Ավստրիայի գլխավոր հյուպատոսների, մյուս բոլոր երկրների հյուպատոսները զբաղվում էին առևտրով։ Երկրորդ խմբի մեջ մտնում էին

[36] Տե՛ս *Ал-Джабарти*, Египет под властью Мухаммада Али, стр. 493.
[37] Տե՛ս *P.* et *H.*, L'Egypte sous la domination de Méhémet-Ali, p. 161.

օսմանյան տերության հպատակ և, հետևաբար, կապիտուլյացիաներից օգտվելու իրավունք չունեցող ղպտի, հայ, հույն, արաբ, հրեա առևտրականները։ 1830-ական թվականներին Կահիրեում կային այդ կարգի 73, Դամիետում՝ 7, Ալեքսանդրիայում՝ 6 առևտրական հիմնարկներ, որոնք մասնաճյուղեր էին հաստատել Թուրքիայում, Սուդանում և այլ երկրներում։

Եգիպտահայ խոշոր առևտրականները (Ալեքսանդր Մազլյան, Ստեփան Սեդրաքյան, Քերոբե Թեքիրդաղեն, Միքայել Խաչատուրյան, Գևորգ Թափալցյան, Աբրոյանները և բազմաթիվ ուրիշներ) իրար շաղկապված առևտրական հիմնարկներ ունեին Զմյուռնիայում, Կ. Պոլսում և եգիպտական քաղաքներում։ Եվրոպացի ճանապարհորդների պատմելով, նրանց պահեստները միշտ լիքն էին և վաճառատները փայլում էին ապրանքատեսակների ճոխությամբ։ Նրանք զբաղվում էին զորքերի, մուշտակի, գոհարեղենի, ոսկեղենի, սաթի, անտառանյութի, գործվածքների և այլ ապրանքների առևտրով։ Բացի հնօրյա Խան ալխալիլից, հայ առևտրականները հանդես էին գալիս նաև նորակառույց շուկաներում։ Ալ-Ջաբարտին, նշելով, որ նրանք վաճառատները վարձում էին նախքան շինարարության ավարտվելը, ասում է. «Խանութների վարձակալության վճարը գերազանցում է ամսական երեսուն դրուշից, մինչդեռ սովորաբար... երեսուն փարա էր։ Զարմանալի է, որ այս մարդիկ (հայ և հույն առևտրականները—Հ. Թ.) ընդառաջում են... Բայց նրանք այդ բարձր վճարը նույն ձևով կհանեն գնորդների մսից և ոսկորից»[38]։

Վաճառականության դիվանը, խուսափելով գործարքի մեջ մտնել օսմանյան կապիտուլյացիաներից ուղղակի կամ անուղղակի կերպով օգտվող երկրների հպատակների հետ, պետական պահեստներում կուտակված ապրանքները վաճառում էր աճուրդով, իսկ աճուրդները, ինչպես նշել է Բրեհիեն, կրում էին ձևական բնույթ, ապրանքը հանձնում էր նրան, ում նպատակահարմար էր գտնում վաճառականության դիվանը[39]։ Վերջին հաշվով, ռայա առևտրականները և սառաֆները կատարում էին միջանկյալ օղակի կամ միջնորդի դեր՝ վաճառականության դիվանի և օտարերկրյա առևտրական գործակալությունների միջև։ Այդ է ակնարկում, անկասկած, ալ-Ջաբարտին, երբ գրում է. «Հայերը և

[38] *Ал-Джабарти.* Египет под властью Мухаммада Али, стр. 376.
[39] Տե՛ս *L. Bréhier,* L'Egypte de 1798 á 1900, p. 111.



նրանց նմանները... նրա (Մոհամմեդ Ալիի—Հ. Թ.) բաժնեկիցներն են առևտրի բոլոր բնագավառներում»[40]։

Հայ առևտրականների և սառաֆների շահախնդրության կենտրոնում էին գտնվում Ալեքսանդրիայի և Կահիրեի մաքսատները։ Սկզբում մաքսատները կապալով էին տրվում տիտղոսավոր մեծամեծներին, որոնք, ընկնելով սառաֆների ճանկը, նրանց էին թողնում կապալի փաստական շահագործումը։ Այդ տեսակետից բնութագրական է ալ-Ջաբարտիի հաղորդումը սառաֆ Կարապետի մասին։ Ի դեմս ոմն շայլ Թահեր փաշայի, կառավարելով Բուլակի մաքսատունը, Կարապետը վայելում էր լայն արտոնություններ, շրջապատված էր «ազգակից» զինված ծառաներով և մինչև անգամ պատիժներ էր սահմանում մուսուլմանների նկատմամբ[41]։ Հետագայում, սակայն, արտաքին առևտրի զարգացմանը զուգընթաց, հայ և ղպտի սառաֆները ուղղակի հանդես էին գալիս որպես մաքսատների կապալառու, ընդ որում նրանք կազմում էին մի ընկերություն, որը և ձեռնամուխ էր լինում կապալի շահագործմանը[42]։

Հայ սառաֆները կարևոր դերեր ունեին գետային տրանսպորտի բնագավառում։ Միջազգային հաղորդակցության բարվոք ճանապարհների բացակայության պայմաններում, ապրանքաշրջանառության համար խոշոր նշանակություն ունեին Նեղոսը և նրա նավարկելի ջրանցքները։ Բուլակը, որպես գետային նավահանգիստ, գլխավոր հանգույցն էր այն առևտրական կապերի, որ Կահիրեն պահպանում էր տարբեր քաղաքների հետ։ Ավելի քան երեք հազար առագաստանավերից և մակույկներից միայն ութ հարյուրն էր պետությանը, մնացածը պատկանում էր ապրանքային տրանսպորտի կապալառուներին, որոնց թվում առաջնակարգ տեղ էին գրավում սառաֆներ Գալուստը, Գրիգոր և Մկրտիչ Ռեյիսյանները։

Տարբեր ժամանակներում հայ սառաֆներին է պատկանել Կահիրեի բաղնիքների, Մաթարիայի աղահանքերի, Դամիետի ձկան շուկայի և այլ օբյեկտների կապալային շահագործման մենաշնորհը։ Համոնը դիպուկ կերպով նշել է, որ «հայերին մնում էր միայն կապալով վերցնել Նեղոսի ջուրը...»[43]։

[40] *Ал-Джабарти.* Египет под властью Мухаммада Али, стр. 595.
[41] Տե՛ս նույն տեղում, էջ 360—361։
[42] Տե՛ս *A.-B. Clot,* Aperçu général sur l'Egypte, t. II, pp. 192—193.
[43] *P. H. Hamont,* L'Egypte sous Méhémet-Ali, t. II, p. 346.

Հայ սառաֆների խոշորագույն ձեռնարկումը վարկային գործի կազմակերպումն էր բանկային հիմունքներով։ Նրանք, ինչպես նշվեց, Կահիրեում հիմնեցին Եգիպտոսի առաջին բանկը, որը սակայն երկար կյանք չունեցավ, փակվեց 1841 թ., չտոկալով ներխուժող օտարերկրյա կապիտալի ճնշմանը։

Ի դեպ, անգլիական հեղինակները փորձում են ժխտել այդ բանկի գոյությունը։ Օգտագործելով Բաուրինգի մի անորոշ հաղորդումը, արևելագետ Ա. Քրուչլին պնդում է, որ 1837 թ. Կահիրեում բանկ հիմնելու ծրագիր եղել է, բայց այն որպես ծրագիր էլ մնացել է. ուստի, Եգիպտոսի առաջին բանկը լոնդոնի կապիտալիստների 1856 թ. Կահիրեում հիմնած «Բենկ ով Իջիպտն» է[44]։ Ա. Քրուչլին սխալվում է։ Հայերի հիմնած բանկի մասին պահպանվել են սակավ, բայց հավաստի տեղեկություններ։ Այդ տարիներին Կահիրեում եղած ֆրանսիացի հեղինակ Համոնը վկայում է, որ բանկը հիմնվել է, նրա տնօրենը հայ էր և ավանդներն ընդունվում էին ամսական հարյուրին մեկ տոկոս վճարելու պայմանով։ Ավանդատիրոջը տրվում էր համապատասխան ստացական և այն ներկայացնողը կարող էր ցանկացած ժամանակ ետ վերցնել ավանդը։ Նա հաղորդում է նաև, որ բանկի կապիտալի մի մասը պատկանում էր Մոհամմեդ Ալիի ընտանիքի անդամներին և պալատական երևելի անձանց[45]։ Այդ բանկի մասին հանգամանորեն խոսվում է նաև 1841 թվակիր արխիվային մի վավերագրում, որտեղ որպես նրա կործանման գլխավոր պատճառ նշվում է պետական մենաշնորհների վերացման հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը[46]։

Բերված փաստերը ցույց են տալիս, որ եգիպտահայ առևտրավաշխառուների մոտ բավական բարձր աստիճանի էր հասել կապիտալի նախասկզբնական կուտակումը։ 1830-ական թվականներին նրանք արդեն նոր ուղի էին որոնում իրենց ձեռքում կուտակված դրամական խոշոր միջոցները ներդնելու համար։ Խոսելով վաշխառուական կապիտալի դերի մասին, Կարլ Մարքսը գրել է. «Վաշխառությունը երկու դեր է կատարում. առաջին՝ ընդհանրապես, վաճառականական կապիտալին զուգահեռ ստեղծում է ինքնակա փողային գույք. երկրորդ՝ յուրացնում է աշխա-

[44] Տե՛ս A. E. Chrouchley, „The charter of the Bank of Egypt“, տե՛ս „Bulletin de l'Institut d'Egypte“, 1938—1939, t. XXI, pp. 31—32.

[45] Տե՛ս P. H. Hamont, L'Egypte sous Méhémet-Ali, t. II, pp. 364—365.

[46] Տե՛ս R. Cattaui, Le Règne de Mohamed-Aly ..., t. III, p. 546. 1843 թ. Ալեքսանդրիայում հիմնվեց Եգիպտոսի երկրորդ բանկը, որի թիկունքում կանգնած էին հույն և հրեա սառաֆները։ Այդ բանկը նույնպես երկար չգործեց, չդիմանալով եվրոպական կապիտալի ճնշմանը։



տանքի պայմանները, այսինքն՝ աշխատանքի հին պայմանների տերերին կործանում. այս դերը կատարելով՝ նա մի հզոր լծակ է հանդիսանում արդյունաբերական կապիտալի նախադրյալներ ստեղծելու գործում»[47]։ Հայ առևտրավաշխառուական կապիտալը, կործանելով մանր արտադրությունը, նպաստում էր արտադրության մինչկապիտալիստական եղանակի քայքայմանը, կապիտալիստական արտադրաեղանակին անցնելու պրոցեսի արագացմանը։

* * *

XIX դարի կեսերից գնալով բարձրացավ Եգիպտոսի նշանակությունը միջազգային առևտրական հարաբերություններում։ 1854 թ. հեռագրական կապ հաստատվեց Կահիրեի և Ալեքսանդրիայի, իսկ 1862 թ. Եգիպտոսի և Եվրոպայի միջև, 1856—1858 թթ. ավարտվեց նախ Կահիրե—Ալեքսանդրիա, ապա՝ Կահիրե—Սուեզ երկաթուղու կառուցումը, 1870-ական թվականներին երկաթուղու ցանցը հասցվեց մինչև երկրի հեռավոր շրջանները։ Ընդարձակվեցին Ալեքսանդրիայի և Սուեզի նավահանգիստները, վերանորոգվեցին նավարկելի ջրանցքները և, վերջապես, կառուցվեց Սուեզի ջրանցքը։ Կապի և փոխադրության արդիական միջոցների շնորհիվ ուժեղացավ եգիպտական հումքի արտահանումը, եվրոպական ապրանքների ներհոսքը, զարգացավ տարանցիկ առևտուրը։

Անգլիան Եգիպտոսի հումքի գլխավոր գնորդն էր և նրա արդյունաբերական ապրանքների խոշորագույն մատակարարը։ 1848—1860 թթ. Անգլիայից ապրանք գնող երկրների շարքում Եգիպտոսը քսանվեցերորդ տեղից անցավ տասներկուերորդ տեղը, իսկ անգլիական արդյունաբերությանը հումքի տեսակներ մատակարարող երկրների շարքում տասներեքերորդից՝ վեցերորդ տեղը։ 1854—1865 թթ. դրամական արժեքով շուրջ ութ անգամ աճեց Անգլիա արտահանվող եգիպտական հումքի ծավալը[48]։ Եգիպտոսը կարևոր տեղ էր գրավում նաև Ֆրանսիայի առևտրական բալանսում։ 1847—1856 թթ. Ֆրանսիա արտահանվող եգիպտական հումքի տարեկան միջինը 13.100.000 ֆրանկից բարձրացել էր 41.900.000-ի, 1857—1866 թթ. Եգիպտոս ներմուծվող ֆրանսիական արտադրանքի տարեկան միջինը 6.400.000-ից հասել էր 28.600.000 ֆրանկի[49]։ Հետագա տարիներին անգլո-եգիպտական և ֆրանկո-եգիպտական առևտրի հարաբերակցությունը հաճախ փոխվել է, սակայն

[47] Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949, էջ 153։

[48] Տե՛ս D. S. Landes, Bankers and Pashas, p. 56.

[49] Տե՛ս M. Block, Statistique de la France, vol. II, pp. 291—292.

միշտ էլ գերակշռությունն եղել է Անգլիայի կողմը։ 1880 թ. եգիպտական արտաքին առևտրի 64 տոկոսը կատարվում էր Անգլիայի, 11 տոկոսը՝ Ֆրանսիայի հետ[50]։

Արտաքին առևտրական կապերի զարգացումը փոփոխություններ առաջացրեց եգիպտական շուկայում։ Առևտրի հին, արևելյան սովորությունները՝ բանավոր համաձայնելը, պատվո խոսքով երաշխավորելը և այլն, որոնցով դարեր շարունակ ղեկավարվել էր եգիպտական առևտուրը, փոխարինվեցին բանկային օպերացիաներով, կրկնատոմար հաշվապահությամբ, խստապահանջ ժամկետով մուրհակներով։ Նինետը նշում է, որ եգիպտական շուկայում առաջ «գործերը ուրիշ կերպ էին ընթանում... Շուկայում բանավոր խոստումը մուրհակ արժեր։ Կարիք չկար ոչ ապրանքը ստանալու հաշվեցույց, ոչ էլ պարտքը հաստատող փաստաթուղթ ստորագրելու։ Ամեն շաբաթ օր պարտքի դիմաց վճարվող գումարները արձանագրվում էին պարտամուրհակի վրա, և գործարքները վերսկսվում էին, պարտքերը մարվում էին բնական եղանակով, առանց որևէ պաշտոնական ձևականության»[51]։

Եգիպտական շուկայում առևտրի կազմակերպման եվրոպական ձևերի արմատավորումով հետին պլան մղվեցին առևտրավարկատուները՝ սառաֆները։ Արտահանող, ներմուծող և տարանցող առևտուրը վարկավորելու գործում նրանց տեղը գրավեցին անգլո-եգիպտական, ֆրանկո-եգիպտական և ուրիշ բազմաթիվ բանկեր։ Այդ պատճառով, 1870 թ. Ալեքսանդրիայում գործում էին միայն 7 սառաֆներ[52], Կահիրեում նրանք այնքան աննշան էին դարձել, որ մինչև անգամ սառաֆությունը իբրև ուրույն զբաղմունք չի էլ հիշատակվում առևտրական վիճակագրություններում։

Օգտվելով կապիտուլյացիաների ռեժիմի ընձեռած հարկային, մաքսային և այլ արտոնություններից, օտարերկրյա առևտրականները տիրապետող դիրքեր գրավեցին եգիպտական շուկայում։ Ընդհակառակն, օսմանյան հպատակները, անզոր գտնվելով հյուպատոսական դատարանների կամայականությունների դեմ, չէին կարող առանց կործանման վտանգի զբաղվել առևտրով։ Եվրոպացիները և եվրոպական հպատակ հույներն ու հրեաները, ինչպես հաղորդում է «Արմավենի» լրագիրը, «խուռն բազմությամբ Եգիպտոսի մեջ լեցվելով ամբավ հարստության»

[50] Տե՛ս „La Pensée", Paris, 1961, № 100, p. 60.
[51] *J. Ninet*, Le Commerce européen, p. 9.
[52] Տե՛ս *E. de Regny*, Statistique de l'Egypte, p. 72.



տիրացան, իսկ օսմանյան հպատակ ղպտիները, հայերը, հույները, հրեաները դուրս էին մղվում եգիպտական շուկայից[53]։

Եվ սկսվեց օտարահպատակություն ձեռք բերելու արշավ, որը լայն ծավալ ընդունեց նաև հայ առևտրականների շրջանում։ Այդ տեսակետից արժեքավոր վավերագիր է 1864 թ. Ալեքսանդրիայում կատարված լուսավորչական հայերի մարդահամարը, որի համաձայն գաղութում զգալի թիվ էին կազմում ռուսահպատակ, պարսկահպատակ, իտալահպատակ, իսպանահպատակ, ավստրիահպատակ, գերմանահպատակ հայերը[54]։ Կահիրեում էլ «շատ հայեր օտար տերության հպատակ» էին[55]։ Ճիշտ է, օտարահպատակությունը նրանց հնարավորություն էր տալիս կապիտուլյացիաներից օգտվելու և, որ ամենակարևորն է, պաշտպանվելու հյուպատոսական ոտնձգություններից, սակայն այն չէր կարող վճռական դեր կատարել եգիպտահայ վաճառականության քայքայման առաջն առնելու գործում։ 1865 թ. արդեն երբեմնի խոշոր հայ առևտրականներից քչերն էին մնացել ասպարեզում։ «Արմավենի» լրագիրը հաղորդում է. «Այս օրվա օրս Եգիպտոսի մեջ աչվընիս դարձնելու ըլլանք հայ վաճառական համրելու համար, մեկ հատ գտանք նէ երկրորդին համար բավական ժամանակ կմտածենք գտնելու։ ...Հայերը որ ամենեն հառաջ կրնային երթալ, ամենեն ետ մնացեր են»[56]։

Եգիպտահայ վաճառականության քայքայումը շարունակվեց նաև հետագա տարիներին։ Օտարերկրյա կապիտալի դեմ անհավասար պայքարը հանգեցրեց նրան, որ եգիպտահայ առևտրականները հույների և հրեաների նման դարձան «ձեռներեց միջնորդներ» եվրոպական ձեռնարկությունների և եգիպտական շուկայի միջև[57]։ Իրավացիորեն «Արձագանքը» գրում էր. «Եգիպտոսում հայք անկարող էին մրցիլ ֆրանսիացի կամ անգլիացի մեծագումար առևտրական տների հետ, և ահա թե՛ հայոց և թե հունաց մնում էր դառնալ միջնորդ եվրոպացվոց և

[53] Տե՛ս «Արմավենի», 16 ապրիլի 1865։
[54] Տե՛ս Ա. Հ. Գարագաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 124—125։ Գարագաշյանը բերում է այդ մարդահամարի ցուցակի մի էջը, որտեղ գրանցված 44 անուններից միայն 18-ը օսմանյան հպատակ են։ Արխիվային մի վավերագրում ասված է, որ Նուբար փաշան գերմանահպատակ էր (ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, p. 12, վ. 9463)։
[55] Տե՛ս «Արմավենի», 1 մայիսի 1865։
[56] «Արմավենի», 16 ապրիլի 1865։
[57] Տե՛ս *Ch. Issawi*, Egypt, p. 17.

տեղացվող մեջ»[58]։ Նրանք հիմնականում զբաղված էին ներմուծվող, մասամբ էլ արտահանվող ապրանքների առևտրով։

Արտահանվող հումքից ամենակարևորը բամբակն էր, որը, սակայն, մասնակի նշանակություն ուներ հայ միջնորդների համար։ Հույների, հրեաների, սիրիացիների համեմատությամբ, նրանց գործարքներն անչափ համեստ էին. նրանք բամբակը գնում և առաքում էին պատվիրատուի հաշվին, բավարարվելով տոկոսային միջնորդչեքով։ Այդ պատճառով, 1866—1867 թթ., երբ բամբակի գինն ընկավ, հայ միջնորդները համարյա չվնասվեցին, մինչդեռ հույն, հրեա, սիրիացի շատ առևտրականներ և վարկային հիմնարկներ սնանկացան։

Եգիպտահայ առևտրականները մեծ մասամբ զբաղվում էին եվրոպական, առավել հերթին անգլիական ապրանքների մեծածախ և մանրածախ առևտրով։ Ապրանքների մանրածախ վաճառքը կատարվում էր վաճառատանը, իսկ մեծածախը՝ խաներում, որտեղ կուտակվում էին ներմուծված ապրանքները։ Բացի գլխավոր քաղաքներից, նրանք մասնաճյուղեր կամ ենթագործակալներ ունեին հեռավոր գյուղերում և ավաններում։

Եգիպտահայ առևտրականները կարևոր դեր էին կատարում եվրոպական ապրանքները Եթովպիա ներմուծելու գործում։ 1879 թվականի արխիվային մի վավերագրում ասված է, որ Եթովպիայի «թագավորն եվրոպացի չի թողներ իր երկրին մեջ, և ասոնց (հայ առևտրականների— Հ. Թ.) վրա վստահություն ունենալով (նրանք) կարող են մեծ առևտրական տուներ բանալ» Եթովպիայում[59]։ Անգլիական և ֆրանսիական գործարանների եգիպտահայ գործակալները հաճախ էին լինում Աբիսինիայում։ Կահիրեում կային հայ առևտրականներ, որոնց «մեծ հույսը Հաբեշնն» էր միայն, և նրանցից ոմանք վայելում էին Յոհաննես թագավորի «շնորհները»[60]։

Կահիրեում, Ալեքսանդրիայում և մյուս քաղաքներում գործում էին հայ «փոքր վաճառականներ» կամ «անկախ խանութպաններ»[61], որոնք ներմուծված ապրանքները հասցնում էին սպառողների լայն զանգվածին։ Նրանք այնքան շատ էին, որ Կրոմերն առանց վարանելու գրում էր. «Եգիպտոսի հայկական համայնքը կազմված է մեծ մասամբ խանութպաններից»[62]։

Այսպիսով, պետական մոնոպոլիաների վերացման և եվրոպական ներթափանցման («առևտրի ազատություն», կապիտուլյացիաներ, բանկեր, պետական պարտքեր և այլն) հետևանքով մարեց Եգիպտոսի հայ առևտրավարկային կապիտալի հզորությունը։ Եվրոպական ապրանքներով և կապիտալներով ողողված եգիպտական շուկայում գնալով կատաղի բնույթ էր ընդունում մրցակցությունը, խիստ սահմանափակելով առևտրական արագ շրջանառություններից խոշոր շահույթներ ակնկալող հայ մեծատուն-վաճառականների ասպարեզը։ Այդ պայմաններում դրամական միջոցներ կուտակած հայ առևտրականները պետք է դառնային եվրոպական առևտրին սպասարկող միջնորդներ։

* * *

Հողատիրության ձևերում կատարվող փոփոխությունները նպաստում էին հայ կալվածատերերի երևան գալուն։ Մոհամմեդ Ալին վերացնելով իլթիզամական սիստեմը, բռնագրավեց հին ազնվականության տիրույթները, և դրանց զգալի մասը բաժանեց մասնավոր անձանց։ Ֆեոդալ-կալվածատիրական նոր դասը կազմում էին հիմնականում ալբանական, չերքեզական, քրդական, թուրքական աստիճանավորները, ինչպես նաև Մոհամմեդ Ալիի վստահությանն արժանացած առևտրականները, վարկատուները, պետական պաշտոնյաները՝ առանց ազգության և կրոնի խտրության։ Բազմաթիվ հայ մեծատուններ (Պողոս Յուսուֆյան, Կարապետ Գալուստ և ուրիշներ), օգտվելով Մոհամմեդ Ալիի շնորհներից, ձեռք բերեցին ընդարձակ կալվածներ։

Հողերը տրվում էին վարձակալական իրավունքով։ Բարձրորակ հողերի յուրաքանչյուր ֆեդդանից գանձվում էր 56—64, ցածրորակից՝ 24—32 ղրշ. կալվածահարկ[63], խոպան համարվող հողերը տրվում էին տակնիտով, այսինքն «բարելավելու, մշակելի դարձնելու և որոշ շրջանե մը հետո տուրք (կալվածահարկ—Հ. Թ.) վճարելու պայմանով»[64]։ Մանժենը գրել է. «Այսպես կոչված կալվածատերը միայն օգտագործման իրավունք ունի, չի կարող այն վաճառել, ոչ էլ վարձու տալ։ Կա-

[58] «Արձագանք», 1882, էջ 306։ 1863 թ. Մանչեստրում և Լիվերպուլում գործում էին շուրջ 30 պոլսեցի, զմյուռնացի և կեսարացի հայերի առևտրական հիմնարկներ, որոնց մի մասը կապված էր նաև եգիպտական շուկայի հետ (տե՛ս Հ. Գ. Մրմրյան, Թուրքահայոց հին վաճառականությունը, էջ 49)։

[59] ԳԱԹ արխիվ, Թ. Աղաոյանի ֆոնդ, բ. 11, վ. 89։

[60] Նույն տեղում։

[61] «Արմենիա», 17 նոյեմբերի 1884։



[62] *Cromer*, Modern Egypt, vol. II, p. 219.

[63] Տե՛ս *A.-B. Clot*, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 191։

[64] «Եգիպտահայ տարեցույց», 1926, էջ 47։

տավարությունը միայն լիակատար իրավունք ունի հողերի վրա»[65]։ Կալվածատերը զրկվում էր կալվածից, եթե հարկերը չվճարեր կամ թերանար պետական պարտավորությունների կատարման մեջ։

Պետական մենաշնորհների վերացումից հետո, ինչպես վկայում է Համոնը, օգտագործման իրավունքով հողեր զբաղեցնող հայերն ու հույները պահանջել են լիիրավ սեփականության իրավունք և, որպեսզի ուժ տան իրենց պահանջին, մերժել են մուծել վարձակալության վճարը[66]։ 1846 թ. այդ հողերն ամրացվեցին օգտագործողներին, թեև ոչ լիիրավ սեփականատիրության իրավունքով։ 1867 թ. անշարժ գույք ունենալու իրավունք ձեռք բերեցին նաև օտարերկրացիները։ Սակայն լիարժեք մասնավոր հողատիրության հարցը լուծվեց 1876—1880 թվականներին՝ մուկաբալայի օրենքով։ Այդ օրենքով վեց տարվա կալվածահարկը կանխիկ վճարող կալվածատերը համարվում էր լիիրավ սեփականատեր, կալվածը վարձով տալու, գրավ դնելու, վաճառելու և ժառանգելու իրավունքով։

Մասնավոր հողատիրության զարգացման զուգընթաց մեծանում էր նաև եգիպտահայ կալվածատերերի դասը։ Վերին և ստորին Եգիպտոսում նրանք ստեղծեցին բամբակի ընդարձակ պլանտացիաներ, որոնք բուռն զարգացում ապրեցին հետագա տասնամյակների ընթացքում։

### 3. ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ։ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Եգիպտոսի բնակչության նման՝ եգիպտահայ հասարակայնությունը բաժանված էր երկու հակադիր բևեռների՝ շահագործողների և շահագործվողների, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին մասնատված էր սոցիալական և տնտեսական տարբեր դրություն ունեցող խմբերի։ Շահագործող, արտոնյալ էին ազնվականությունը և հոգևորականությունը։ Ազնվականության հիերարխիայի սանդուղքի բարձրագույն աստիճանները տիտղոսավորված առևտրականները, վարկատուները, պետական պաշտոնյաները, բարձրաստիճան զինվորականներն էին։ Ստորակարգված էր նաև մուսուլման ու քրիստոնյա հոգևորականությունը, որը ուներ հողեր ու դատական (ամուսնական, ժառանգական և այլն) լայն իրավունքներ։ Շահագործվող, հարկատու բնակիչներ էին գյուղացիները,

[65] M. F. Mengin, Histoire sommaire de l'Egypte, p. 452.
[66] Տե՛ս P. H. Hamont, L'Egypte sous Méhémet-Ali, t. I, p. 188.



բանվորները, արհեստավորները, մանր առևտրականները, ծառայողները և այլն։

Շահագործողներն ու շահագործվողները ունեին կյանքի հակադիր պայմաններ։ Պատմելով Կահիրեի արաբ մեծատունների մասին, Կլոտն ասում է. «Հարուստ դասի մարդը... ոչ մի ակտիվություն չի ցուցաբերում, ապրում է բացարձակ անգործության մեջ»[67]։ Նրանց սպասարկում էին բազմաթիվ ծառաներ. ֆառաշը հոգում էր նրա բնակարանի կարգուսարքի մասին. սակկան ջրհորից նրա ջուրն էր բերում, տաբախը նրա ճաշն էր պատրաստում, չիբուխչին՝ նրա ծխամորճը, կահվեջին՝ նրա սուրճը, սեիսը՝ նրա ձին և այլն[68]։ Արևելյան շքեղությամբ ապրում էին նաև հայ մեծատունները։ Ալ-Ջաբարտին գրում է. «Նրանք (հայ և հույն մեծատունները—Հ. Թ.) ներկայումս պատկանում են ազնվականության բարձր դասին, նշանակվում են բարձր պաշտոններում, հագնվում են բարձրաստիճան մարդկանց նման շքեղ զգեստներ, անցուդարձ են անում ազնվացեղ ձիերով և ջորիներով, նրանց առջևից ու հետևից գնում են գերիներն ու ծառաները, որոնք գավազաններ ճոճելով ցրում են ամբոխը և ճանապարհ բացում...։ Նրանք ապրում են ամենաթանկ գներով ձեռք բերված բարձր ու գեղեցիկ տներում։ Կան այնպիսիները, որ տուն ունեն ոչ միայն քաղաքում, այլև Նեղոսի ափին...։ Կան այնպիսիներն էլ, որոնց կառուցած տներն արժեն հազարավոր քսակ (մի քսակը հինգ միավոր—Հ. Թ.) ոսկի...»[69]։

Ճանապարհորդ Ֆորբենը նշում է, որ մեծատունները «ընչաքաղցորեն» շահագործում էին աշխատավոր մարդկանց, հափշտակում նրանց «քրտինքի վաստակը»[70]։

Հարկային լծի համարյա ողջ ծանրությունը կրում էին շահագործվող բնակիչները։ Եգիպտոսում կային ավելի քան տաս տեսակ ուղղակի և բազմաթիվ անուղղակի հարկեր, որոնք ծածկում էին պետական ընդհանուր ծախսերի առնվազն կեսը։ Ըստ 1833 թվականի պետական բյուջեի տվյալների կազմված հետևյալ ցուցակը[71] կարող է պատկերացում տալ Եգիպտոսի հարկային լծի մասին.

1. Միրյե կամ կալվածահարկ . . . . . . . 112.000 հազար ղրշ.
2. Ֆիրդեհ ալ-ռաս կամ գլխահարկ . . . . 35.000 »

[67] A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. I, p. 379.
[68] Տե՛ս նույն տեղում, էջ 385։
[69] Ал-Джабарти, Египет под властью Мухаммада Али, стр. 405.
[70] M. le C^te de Forbin, Voyage dans le Levant, p. 209.
[71] Տե՛ս A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 195.



5—724

| | | |
|---|---|---|
| 3. | Խարաջ | 320 հազ. ղրշ. |
| 4. | Բեյթ ուլ-մալ | 600 » |
| 5. | Անասնահարկ | 1.000 » |
| 6. | Վերին Եգիպտոսի քաղաքներից | 192 » |
| 7. | Արմավի բերքից | 2.000 » |
| 8. | Մենզալեհ լճի ձկնորսներից | 1.000 » |
| 9. | Արմտիքից | 18.000 » |
| 10. | Մաքսատուրք և այլ տուրքեր | 12.280 » |
| 11. | Նեղոսի մակույկների, աղի, խմիչքեղենի և այլ հարկերից | 4.023 » |
| | Ընդ. | 186.915 հազ. ղրշ. |

Այդ ցուցակի տվյալներից նախ և առաջ հետևում է, որ քաղաքային դասի (առևտրականներ, արհեստավորներ և այլն) համեմատությամբ գյուղական բնակիչներն ավելի էին ծանրաբեռնված հարկերով: Ընդհանուր հարկերի 1/6-րդը միայն գանձվում էր քաղաքային բնակիչներից, մնացյալը՝ գյուղացիներից, մասամբ էլ կալվածատերերից: Գյուղացիները, թեև ստանում էին երկու, հաճախ երեք բերք, սակայն հազիվ մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյությունը: Նրանց առանձնապես ճնշում էին հարկերն ու պարհակները:

Ուշագրավ է, որ Եգիպտոսի ռայաները մյուս մուսուլմանական երկրների ռայաների չափ ճնշված չէին հարկերի բեռան տակ: Նրանցից վերցվող հիմնական հարկերն էին՝ գլխահարկը և խարաջը: Գլխահարկի ենթակա էին բոլորը՝ քաղաքացի թե գյուղացի, մուսուլման թե ռայա, 12 տարեկան հասակից: Այդ հարկը որոշվում էր ըստ հարկատուի տարեկան եկամտի 12 տոկոսի չափով և անձ-գլուխ տատանվում էր 15—500 ղրուշի միջև: Իսկ ռայաներից գանձվող խարաջը սահմանվում էր անձ-գլուխ տարեկան 8—12 ղրուշի չափով[72]: Քաղաքային բնակիչների, այդ թվում ռայաների նկատմամբ համեմատաբար թեթև հարկային քաղաքականությունը բացատրվում է առևտրական բուրժուազիայի շահերով: Նրա շահերը հիմնականում ապահովվում էին արդյունաբերական և արհեստագործական բնակչության արտադրած բարիքների առևտրով:

Այնուամենայնիվ արհեստավորների ճնշող մեծամասնությունը ապրում էր չքավոր և աղքատ: Արհեստավորի բնակարանի հարմարանքները, ինչպես վկայում է Կլոտը, կազմված էր մի խսիրից, ներքնակից և մեկ կամ երկու բարձից: Կային այնպիսիններն էլ, որոնք մինչև անգամ

[72] Տե՛ս նույն տեղում, էջ 191:



ներքնակ չունեին, քնում էին հատակին[73]: Միաժամանակ արհեստավորական որոշ խավեր ստեղծել էին կյանքի համեմատաբար տանելի պայմաններ: Հայ ոսկերիչները, դերձակները, կոշկակարները, երկաթագործները, շնորհիվ իրենց արտադրանքի քանակի և որակի գերազանցության, նյութապես ավելի ապահովված էին, քան տեղացի արհեստավորները: Կլոտը գրում է. «Հայերը ընդհանրապես բարեկեցիկ են: Երևելիները և ամենաճարպիկները սառաֆ են, շատերը՝ ոսկերիչ, դերձակ, մուշտակագործ, վաճառական, երկաթագործ: Նրանք շատ գործունյա և ձեռներեց են...»[74]:

Այդ մասին է վկայում այն փաստը, որ հայ արհեստավորները թանկարժեք իրեր էին նվիրաբերում եկեղեցիներին. օրինակ, 1818 թ. Կահիրեի ս. Սարգիս եկեղեցին մի ոսկյա սկիհ է նվեր ստացել դերձակ մահտեսի Կարապետից, ավելի ուշ, մի «արծաթյա ճաճանչ խաչ պատվանդանով»՝ մալաթիացի «Թերզի» Վարդանից և նրա ընկերներից, 1828 թ.՝ «մեկ զույգ արծաթյա ժամարարի մեջքի գոտի, Թեքիրտաղցի Թերզի» Ստեփանից, մի «վարագույր ս. ավագանին Թերզի մահտեսի Թարբեյի» կնոջից և այլն: Ոսկերիչներ Ավետիքը և Հովակիմը ս. Սարգիս եկեղեցուն նվիրաբերել են «զույգ մը արծաթյա բուրվառ ոսկեզօծ», «դեմիրճիբաշի» Մայիսը՝ «մեկ հատ արծաթյա կանթեղ երկու հարյուր և երեսուն ութ տրեմ», «դեմիրճի» Հովհաննեսը՝ «մեկ հատ արծաթյա կանթեղ երկու հարյուր վաթսուներեք տրեմ» և այլն: 1839 թ. Կահիրեի ս. Աստվածածին եկեղեցու կառուցման օգտին ի շարս մեծատունների «կոշկակար խալֆաճա Հակոբջանը» նվիրաբերել է 1.000, «Թաշչը Թագվորը»՝ 400, Ջիհաղիրի կոշկակարները՝ 2.500 ղրուշ և այլն[75]:

XIX դարի երկրորդ կեսին առևտրի «ազատության» պայմաններում ստեղծվեց ընդհանուր շահերով իրար կապված տեղական և օտարերկրյա կեղեքիչների մի նոր դասակարգ՝ կոմպրադորական բուրժուազիան, որի մագիլներով եվրոպական բանկիրները, արդյունաբերողները, առևտրականները ծծում էին աշխատավորական զանգվածների ոչ միայն հավելյալ արդյունքը, այլև կենսական արդյունքի զգալի մասը: Գյուղացիները շուրջ երեք անգամ ավելի շատ հարկեր էին վճարում.

[73] Տե՛ս A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. I, p. 382.

[74] A.-B. Clot, Aperçu général sur l'Egypte, t. II, p. 133.

[75] Ա. Հ. Գարամաճյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 18, 20, 22 և 69—70:

քան Մոհամմեդ Ալիի ժամանակ, և ենթարկվում էին բռնմնելի պատիժների հարկը չվճարելու դեպքում[76]։ Մյուս կողմից հողային նոր օրենքը, որով իրավունք տրվեց պարտքի դիմաց կալվածներն օտարելու, անընդհատ մեծացնում էր սեփականազրկված գյուղացիների զանգվածը։ Թե որքան անմխիթար էր աշխատավոր գյուղացիության դրությունը, երևում է Աբբասի (1849—1854) «երկրագործաց դասուն վիճակը լավացնելու» ուղղությամբ ձեռք առած միջոցառումներից։ Արգելվեց «... ծանր աշխատանքի տակ դնել, այսինքն ջրանցք փորելու, ծովու և գետո թումբ շինելու և ուրիշ վտանգավոր գործոց աշխատեցնել ծերունի անձինքը, որոց տարին յոթանասուննեն ավելի է, և նորահաս տղաքը, որոնք ութը տարին չեն լմնցուցած, նմանապես հղի կանայք և անոնք որ կաթնակեր երեխայք ունին»[77]։

Ծանրացավ նաև քաղաքի աշխատավորների վիճակը։ Տակավին համառորեն գործող մի քանի մանուֆակտուրաները մինչև անգամ ի վիճակի չէին բանվորների աշխատավարձը վճարել։ «Ազգասեր» հանդեսին Եգիպտոսից հղված մի հաղորդագրությունում ասված է. «(Կահիրեում) ի փողոցին Փրանկաց կոչեցեալ, տեսս զինուորս երկուս բռնի հարկանել զառնէ միոջէ, որ փախուցեալ էր ի գործարանէ բարձրագույն փոխարքային, և տանել զնա ի գործ։ Այրն պատասխանի նա սա, թէ զամիսս հինգ վաստակեցայ և զվարձ ոչ գտի, մինչ կին իմ սովամահ մեռաւ. վարձն բարձրագույն փոխարքային լիցի, բայց ես ոչ դառնամ»[78]։

Գնալով բազմանում էին ազգային իշխանության և մեծատունների նպաստով գոյություն քարշ տվող հայ աշխատավորները՝ «տնանկ աղքատները»։ 1855—1856 թթ. նրանց օգնության հարցն այնպիսի հրատապ բնույթ էր ընդունել, որ թեմակալ առաջնորդ Գաբրիել Մաքսուդյանը մինչև անգամ օգնություն է խնդրել եգիպտական իշխանություններից։ Ընդառաջելով առաջնորդի դիմումին, խդիվ Սաիդը (1854—1863) բավական ընդարձակ մի կալված է նվիրել հայկական համայնքին, որպեսզի նրա եկամուտները հատկացվեն նպաստակարոտ աղքատներին[79]։

Օգնության կարիք ունեցող եգիպտահայերի մասին խոսվում է նաև հետագա տարիների հաղորդումներում։ 1880 թվակիր արխիվային մի

———

[76] Տե՛ս *L. Bréhier*, L'Egypte de 1798 à 1900, pp. 107—108.

[77] «Արշալույս Արարատյան», 16 մարտի 1851։

[78] «Ազգասեր», 1847, էջ 197—198։

[79] Տե՛ս Ա. Հ. Դարաջյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 181։



վավերագրում՝ ազգային առաջնորդարանի դեմ բացված մի դատի կապակցությամբ, ասված է. «Ազգին բոլոր եկամուտները սեկվեստրը (կալանք) եղած է Թրիպունալի միջոցով. աղքատները շատ նեղության մեջ են իրենց հատկացյալ ամսականները չվճարվելուն համար»[80]։

Անմխիթար էր եգիպտահայ աշխատավորների նաև սոցիալական վիճակը։ Նրանք ենթարկվում էին մի կողմից պետական զանազան աստիճանավորների կամայականություններին, մյուս կողմից այն հարաբերությունների ճնշմանը, որ տիրում էր հայկական գաղութի ներքին կյանքում։ Այնտեղ թագավորում էին ամիրայական բռնություններն ու կամայականությունները։ Մյութեվելլիները և նրանց կողմից նշանակված երեսփոխանները կաշկանդում էին ժողովրդի ազատությունը, հալածում համարձակ մարդկանց[81]։ Մի խումբ եգիպտահայերի Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղված դիմումում ասված է. «Միաբանական նենգավոր դրության մը լուծին տակ կհնչվինք։ Ավելի ցավալին այն է, որ այս դրության ողջույն հակառակ արդարություն և իրավունք պահանջելու համար ձայն չի կրնար հանել (որևէ) մեկը, վասնզի աքսորանաց և թափառության սպառնալիքներ կարկառուն կախված այդպիսիների գըլխույն։ Ասկից կվախնան գրեթե խիստ շատերը, որք արդեն ուրիշներուն վրա գործադրվելուն ականատես եղած են։ Տար երկինք, որ այս դըժբախտ օրերն առանց ծանր վնասներու անցունելով դարուս մեջ աղքատ ապրողներու կարգն անցնեինք»[82]։

Ամեն բնագավառում բախվում էին եգիպտահայ հասարակության երկու բևեռների՝ շահագործողների և շահագործվողների շահերը։ Սակայն դասակարգային շահերի բարձր գիտակցությամբ տոգորված աշխատավորական առաջավոր խավերի բացակայության պայմաններում դասակարգային պայքարն էլ դրսևորվում էր թույլ կամ գաղտնի ձևերով։ Դասակարգային պայքարի արտահայտություն էին աշխատավորների ելույթները սկզբում Երուսաղեմի հայոց պատրիարքարանի, հետագայում կղերաֆեոդալական վերնախավի՝ համայնքային գործերի կառավարման մենաշնորհի դեմ։

———

[80] ԳՊԹ արխիվ, Թ. Աղաբոյանի ֆոնդ, թ. 12, վ. 5746։

[81] Տե՛ս «Միոն», 1870, էջ 174։ Բնութագրելով Ալեքսանդրիայի հայկական համայնքի երեսփոխան Թադևոս Հակոբյանին, «Միոնը» գրում էր, որ նա մարդկանց հրամայում էր այնպես, ինչպես «կհրամայեն ափրիկեցիք յուրյանց կանանց...»։

[82] «Մասիս», 21 հոկտեմբերի 1867։

* * *

Եգիպտահայ գաղութը դարեր ի վեր գտնվում էր Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի իրավասության ներքո։ Պատրիարքի կողմից նշանակված տեսուչ կամ վերիչ վարդապետները միանձնյա իշխանությամբ տնօրինում էին համայնքային գործերը, ազգապատկան կալվածները, և հաշվետու էին միայն պատրիարքարանի տնօրեն խորհրդի առաջ։ Այդ վիճակից դժգոհ էին նախ և առաջ Կ. Պոլսի հայոց պատրիարքների և ամիրաների դեմ պայքարի դպրոց անցած արհեստավորները և օրամշակ բանվորները, որոնց թվաքանակը գնալով մեծանում էր Կահիրեում։ Դժգոհ էին նաև պետական բարձր պաշտոնյաները և առևտրականները... և եգիպտահայ գաղութը պարբերաբար փոթորկվում էր բողոքի ելույթներով։ Ա. Ալպոյաճյանն այդ ելույթները բնութագրել է որպես կալվածական վեճ Երուսաղեմի պատրիարքարանի և եգիպտահայերի միջև։ Նրա ասելով «ժողովուրդը կդնդեր թե կալվածները գնված էին Եգիպտոսի ժողովուրդին դրամով հօգուտ իրենց եկեղեցիին, և ապահովության համար Երուսաղեմի վանքին անունով արձանագրըված, իսկ Երուսաղեմ կմերժեր այս տեսությունը» և այլն[83]։ Դա, իհարկե, ճիշտ չէ։ Եգիպտահայերի հակաերուսաղեմական պայքարն երբեմն ստանում էր կալվածական վեճի ձև, սակայն նրա հիմքում կային, ինչպես կնշվի, ավելի բարդ խնդիրներ։

Պայքարելով Երուսաղեմի իրավասության դեմ, եգիպտահայերը չէին ընդունում տեսուչ վարդապետների հոգևոր ծառայությունները, հրաժարվում էին Երուսաղեմ ուղարկել ազգապատկան կալվածների եկամուտները և այլն։ Հակաերուսաղեմական ելույթները ուժեղ թափ ստացան մանավանդ այն բանից հետո, երբ սուլթանական կառավարությունը դաժան հաշվեհարդար տեսավ ամիրաների դրածո Պոլսո պատրիարքի դեմ կազմակերպված ցույցի ղեկավարների հետ։ 1820 թ. օգոստոսի 18-ին Կ. Պոլսում հրապարակով մահապատժի ենթարկվեցին կեսարացի Հակոբ և Գրիգոր Սարգսյանները, առանց դատական վճռի կառափնարան առաջնորդվեցին Գելլի Բաղդասարը, Կարապետ սարկավագը և մի պատանի՝ Աղարիան, ոմանք էլ աքսորվեցին։ Շատ ցուցարարներ, հալածվելով թուրքական ոստիկանության ձեռքից, ապաստան գտան հարևան արաբական երկրներում, այդ թվում Եգիպտոսում։

1821 թ. Կահիրեում հակաերուսաղեմական ելույթներն այնպիսի սուր բնույթ էին ընդունել, որ Երուսաղեմի հայոց պատրիարքը ստիպված «յորդորական բանիւ» կոնդակ գրել «առ ժողովուրդս Եգիպտոսի եւ առաքեաց ի ձեռն Յակոբ վարդապետի, յորում պատուիրէր հայրական խրատիւ հնազանդիլ առաջնորդի իւրեանց Սահակ վարդապետի իբրեւ իւրոյ փոխանորդի եւ յանձն առնել նմա զհասոյթս եկեղեցւոյ եւ զայլ իրաւունս առաջնորդի, եւ տալ առատ նուէրս եւ զողորմութիւնս Յակոբ վարդապետին իբրեւ օգնութիւն ի նեղութեան Աթոռոյն. չպահել առ իւրեանց զպանդուխտ քահանայս, զի զրովանդակ հոգեւոր պէտս նոցին խոստանայր լնուլ յԱթոռոյն»[84]։ Այդ հորդորները ոչ մի չափով չներգործեցին ոչ աշխատավորության, ոչ էլ մեծատունների վրա։ Վերջիններս մինչև անգամ Երուսաղեմի պատրիարքին առաջարկեցին կալվածների փոխարժեքը վճարել, պայմանով, որ նրա իրավասությունից դուրս բերվեր եգիպտահայ թեմը[85]։

Չհրաժարվելով կալվածներից, Երուսաղեմի հայոց պատրիարքը ստիպված կատարեց մի շարք զիջումներ։ 1825 թ տեսչական իրավունքները վերացվեցին, Եգիպտոսը հռչակվեց առաջնորդական թեմ և, որ առավել կարևոր է, աշխարհականներն իրավունք ստացան մասնակցելու համայնքային գործերի կառավարմանը։ Թեմակալ առաջնորդ նշանակված Կիրակոս Երուսաղեմցին, հանձնելով «յԵգիպտոսի վիճակ իւր, առ ի անդրանիկ կացուցանելոյ զանձն յամենայնի ըստ օրինադրութեան Պօղոս եպիսկոպոսի... եւ կամեցողութեամբ ազգայնոց, ձեռն արկ բարեկարգ տնտեսութեամբ կառավարել զեկեղեցին, ընտրեաց զերիս անձինս յերեւելեաց քաղաքին խորհրդական եւ հոգաբարձու առաջնորդական գործոց»[86]։ Բացի այդ, նա «սահմանեաց արկղ արդեանց եւ տումար ելից եւ մտից..., զարկղն եւ զտումարն պահեաց առ իւր եւ զբանալին ետ զփոխանորդ իւր՝ մի ուրիշ երուսաղեմական վարդապետի՝ Պօղոս Արեւելցուն»[87]։ Եգիպտահայերին իրավունք տրվեց նաև կալվա-

[83] Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 255։ Եգիպտոսի ազգապատկան կալվածները «ամեն իրր 38» ներկայացնում էին զգալի հարստություն. «եթե վաճառուեին նորա վաղթի որինաց բերէ 200 քսակ դրամոց», այսինքն հազար ոսկի։ 1825—1826 թթ. Երուսաղեմի վանքը «յարգեանց կալուածոցս» ստացել էր «4.000 ոսկի ոսկի» (Ա. Տ. Հովհաննիսյան, Ժամանակագրական պատմություն ս. Երուսաղեմի, հ. 2, Երուսաղեմ, 1890, էջ 390)։

[84] Ա. Տ. Հովհաննիսյան, Ժամանակագրական պատմություն, հ. 2, էջ 371։

[85] Տե՛ս նույն տեղում, էջ 390։

[86] Նույն տեղում, էջ 404։

[87] Նույն տեղում։

ծական հկամուտներից՝ «չատարել ինչ յԵրուսաղէմ, մինչև արգեւմբք բազմացին կալուածք Աթոռոյն»[88]։

Այժմ եգիպտահայ թեմի բարձրագույն իշխանությունը կազմում էին թեմակալ առաջնորդը և եռանդամ ավագաժողովը։ Առաջնորդը նշանակվում էր Երուսաղեմի պատրիարքի կողմից և նրա պաշտոնը հաստատվում էր Բ. դռան «բերաթով»։ Առաջնորդը նշանակում էր ավագաժողովի անդամներին, որոնք եգիպտական իշխանությունների կողմից ճանաչվում էին որպես լուսավորչական համայնքի պաշտոնական ներկայացուցիչ։ Չկար որևէ կանոնադրություն, որով ճշտվեր առաջնորդի և ավագաժողովի անդամների նշանակման կարգը, որոշվեր նրանց պարտականությունները ու իրավասությունները[89]։ Ավագաժողովը հաշվետու չէր եգիպտահայերի առաջ, և նրանց մեծամասնությունը կազմող աշխատավորությունը զրկված էր գաղութի ներքին գործերը անօրինող առաջնորդարանում ձայն ունենալու իրավունքից։ Չբավարարվեցին նաև մեծատունները։

1830-ական թվականների կեսերից, երբ եգիպտական բանակը նվաճել էր Պաղեստինը և Սիրիան, եգիպտահայ մեծատունները լրջորեն ձգտում էին Կահիրեն դարձնել գրավված երկրների հայության հոգևոր և վարչական կենտրոն։ Եվ վերստին հրատապ բնույթ ընդունեց Երուսաղեմից անկախ թեմ ստեղծելու խնդիրը։ 1835 թ. Պողոս Յուսուֆյանի ճնշման ներքո Երուսաղեմի պատրիարքը ընդառաջեց եգիպտահայ մեծատունների ցանկությանը։ Կիրակոս Երուսաղեմցու փոխարեն թեմակալ առաջնորդ նշանակվեց մի երիտասարդ վարդապետ՝ Գաբրիել Մարաշցին, որը, Երուսաղեմի միաբան լինելով հանդերձ, «թելադիր լինէր ժողովրդոց եւ յորդորէր խոկ յետս կալ ի խնամոց Աթոռոյն, զրաւել զհասոյթս ի պէտս եկեղեցւոյ եւ առաջնորդարանի տեղւոյն»[90]։ Մարաշցին Երուսաղեմի հայոց պատրիարքարանից ստացած 190.000 դրուշը հատկացրեց ոչ թե «սակս նորոգելոյ զհրդեհեալ տունս», ինչպես կարգադրել էր միաբանությունը, այլ նոր կալվածներ գնելու և, պատրիարքի կամքի հակառակ, դրանք «գրեցաւ յանուն աղքատաց.

88 Նույն տեղում, էջ 415։

89 Ն. Մ. Աղայան, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 98—100։ Ըստ Ազազարյի, 1853—1854 թթ. է միայն ընդունվել առաջին եգիպտահայ կանոնադրությունը, որով ավագաժողովը լիազորվում էր դպրոցի, եկեղեցու, առաջնորդարանի, կալվածների վերաբերյալ հարցեր լուծելիս։

90 Ա. Տ. Հովհաննիսյան, Ժամանակագրական պատմություն, հ. 2, էջ 504։



կտակեալ շէրիի օրինօք անփոփոխելի եւ անվաճառելիս»[91]։ Բացի այդ, ձեռնարկելով ս. Աստվածածին եկեղեցու կառուցմանը, նա «ընդ նուէրս ժողովրդոց խառնեաց եւ զարդիւնս կալուածոց Աթոռոյն, եւ 65.000 դահեկանս ընդ այլ գոյից Սամուէլ վարդապետի վախճանելոյ»[92]։

Իհարկե, Ա. Ալպոյաճյանը սխալվում է, երբ այդ բոլորը վերագրելով սոսկ մի երիտասարդ վարդապետի նախաձեռնությանը, եզրակացնում է. «խուսափելու համար հաշվետվութենէն» Մարաշցին «կուզե Երուսաղեմի պատրիարքութեան իրավասութենէն ելլել»[93]։ Արդարև նրա թիկունքում կանգնած էին մեծատունները։ Երբ Երուսաղեմի պատրիարքը, նրան պաշտոնանկ հայտարարելով, Եգիպտոս ուղարկեց Դավիթ վարդապետ Կարնեցուն, նրանք դիմադրեցին. «Ոչ կամէին թողուլ զԳաբրիէլ եւ ընդունել զԴաւիթ. զայս ամենայն անցս իշխանաւորք տեղւոյն եւ Դաւիթ վարդապետ գրեցին Երուսաղէմ եւ ինքն ստիպեցաւ դառնալ յԵրուսաղէմ եւ զԳաբրիէլ թողուլ ի տեղ իւր»[94]։ Բացի այդ, մեծատուններին հաջողվեց Պողոս Յուսուֆյանի միջնորդությամբ Երուսաղեմի պատրիարքից ստանալ «թուղթ վկայութեան Գաբրիէլ վարդապետի», որով Մարաշցին եպիսկոպոս ձեռնադրվեց 1839 թ. Սսում։ Այնուհետև նա «վարեաց զիշխանութիւն իւր անկախ յԱթոռոյն Երուսաղէմի, կոչելով զինքն բաթրիք», այսինքն պատրիարք[95]։

Եգիպտա-թուրքական զինաբախման ելքը հողմացրիվ արեց Կահիրեն գաղութահայ կենտրոնի վերածելու հույսերը։ Եգիպտոսում սուլթանական նախկին իրավունքների վերականգնումից հետո՝ 1851 թ. եգիպտահայ թեմը դրվեց Կ. Պոլսի պատրիարքարանի իրավասության ներքո, սակայն գործնականում չճանաչվեց ամիրաների և նրանց կամակատար պատրիարքների իշխանությունը։

1861—1863 թթ. սահմանադրական պայքարի ուժեղացումը Կ. Պոլսում, ապստամբական շարժումների աշխուժացումը Զեյթունում, Արևմտյան Հայաստանում և այլ հանգամանքներ նպաստում էին արևմտահայերի ազգային-դեմոկրատական հոսանքի առանձնացմանը։ Աշխատավորական զանգվածների գլուխն անցած դեմոկրատական մտավորականությունը պայքարի ասպարեզ էր իջնում գաղութահայ

91 Նույն տեղում, էջ 505։

92 Նույն տեղում, էջ 506։

93 Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 259—260։

94 Ա. Տ. Հովհաննիսյան, Ժամանակագրական պատմություն, հ. 2, էջ 504։

95 Նույն տեղում, էջ 507։

կոմպրադորական բուրժուազիայից և նրա ուղեկից լիբերալներից անկախ, առաջ էր քաշում ոչ միայն ազգային-ազատագրական, այլև սոցիալական ազատության խնդիրներ։ Կղերաամիրայականները, ի վիճակի չլինելով միայնակ դիմագրավել դեմոկրատների գրոհը, համաձայնության եզրեր էին որոնում լիբերալների հետ։ Երկնչելով դեմոկրատական հոսանքի արմատական պահանջներից, եգիպտահայ կոմպրադորներն ընկան կղերաամիրայական հոսանքի մեջ։

* * *

Ազգային Սահմանադրությունը՝ Թուրքիայի հայկական համայնքների ներքին գործերին վերաբերող կանոնադրությունը[96], նվաճվեց շուրջ քսանամյա զոհաբեր այն պայքարի գնով, որ Կ. Պոլսի հայ արհեստավորները և բազմահազար պանդուխտները, ֆրանսիական հեղափոխության գաղափարներին հաղորդակից առաջադեմ հայ մտավորականների ղեկավարության ներքո մղեցին ամիրաների և նրանց կամակատար պատրիարքների արտոնությունների դեմ։ Ճիշտ է, նրանում չկար մի այնպիսի հոդված կամ կարգադրություն, որն «իրոք երաշխիք լիներ Թուրքական կառավարության կամայականությունների դեմ»[97], և այն չէր ներկայացնում արևմտահայ աշխատավորության հույսերն ու ակընկալությունները։ Չնայած դրան, Ազգային սահմանադրությունը ժամանակի կոնկրետ պայմաններում առաջադիմական երևույթ էր։

Ազգային սահմանադրությունը բուրժուական դեմոկրատիայի որոշ սկզբունքներ ներմուծեց ֆեոդալական Թուրքիայի հայության հասարակական-քաղաքական կյանքում։ Վերացվեցին ազգային ներքին գործերի կառավարման միջնադարից ժառանգած ձևերը, սահմանափակվեց տիրապետող և սքեմավոր բանակայինների[98] միահեծան իշխանությունը։ Պատրիարքը դարձավ ընտրովի, և պարտավոր էր «Սահմանադրության սկզբանց համեմատ վարվիլ և անոր ամեն կետերուն ճշտիվ գործադրության ուշի ուշով հսկել» (հոդվ. 8)։ Ազգային ժողովին իրավունք էր վերապահվում Սահմանադրության հակառակ գործող պատրիարքին «ամբաստանելու» և իր պաշտոնից հեռացնելու՝ Բ. դռան հավանությամբ (հոդվ. 5)։ Ազգային ընդհանուր կամ երեսփոխանական ժողովը բաղկացած էր Կ. Պոլսում և գավառներում ընտրված 120 աշխարհիկ և 20 եկեղեցական ներկայացուցիչներից։ Գործադիր իշխանությունը՝ քաղաքական և կրոնական ժողովներն ընտրվում էին գաղտնի քվեարկությամբ։ Սրանց առընթեր նշանակվում էին ուսումնական, տնտեսական, դատաստանական խորհուրդներ, կտակաց, հիվանդանոցի և այլ հոգաբարձություններ։ Ժողովական այդ համակարգի ստորին օղակները կազմում էին թաղական խորհուրդները, որոնք ընտրվում էին թաղերի բնակիչների կողմից և վերահսկում էին եկեղեցու ու դպրոցի գործերը։

Սակայն Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում աթոռ գրաված արդասավոր մեծատունները և հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչները համառորեն փորձում էին ձևական դարձնել կամ վիժեցնել Ազգային սահմանադրության սկզբունքների կենսագործումը։ Հեղափոխական դեմոկրատ Հ. Սվաճյանը դրանց էր ակնարկում, երբ գրում էր, որ ժողովուրդը «...երեսփոխան ընտրեց, անոնց տվավ ազգը կառավարելու իշխանությունը և մինչև հիմա ամենայն կերպով հնազանդեցավ անոր (Ազգային ժողովին—Հ. Թ.)։ Սակայն անոնք, ցավելով կըսենք, մեծագույն մասով խաբեցին անոր վստահությունը և ի դերև հանեցին անոր գեղեցիկ հույսերը»[99]։

Եգիպտահայ մեծատունները, որոնց թիկունքում կանգնած էին Կ. Պոլսի կղերաամիրայականները, ամեն ինչ անում էին, որպեսզի ձախողեն Ազգային սահմանադրության գործադրությունը Եգիպտոսում։ 1864 թ. նրանք կատարեցին առաջին, թեև ձևական նահանջը, գործադրելով Կ. Պոլսի պատրիարքարանի հրահանգը՝ նախընտրական մար-

---

[96] Պաշտոնական անունն է «Նիզամնամէի միլլէթի էրմենիան»՝ Հայ ազգային կանոնադրություն, բայց հայերի կողմից կոչվել է Ազգային սահմանադրություն և այդպես էլ մտել պատմության մեջ։

[97] *М. Г. Роллен-Жекмен*, Армения, армяне и трактаты, М., 1895, стр. 197

[98] Հայոց պատրիարքները իրավունք ունեին դատել, պատժել, նույնիսկ աքսորել հայկական համայնքի այն անդամներին, որոնք անհնազանդ էին դրսևորում կամ մեղանչում էին կրոնական ավանդույթների դեմ։ Այդ կապակցությամբ հետաքրքրական է անվանի հրապարակախոս Կ. Ութուճյանի հետևյալ վկայությունը. «Պատրիարքարանին անունը ահարկու էր այն ժամանակ։ ...Երբ բարապան մը մեկուն ներկայանար և «հրամմէ, վերի հայր սուրբը քեզ կուզէ» ըսէր, մարդուն թուքը կցամքէր բերնին մէջ և ոտքով ձեռքով դողալ կսկսէր։ Ընդդիմանալ կարելի չէր։ Բարապանք վերարկուին տակ շղթա մը ունէր, զոր ընդդիմացողին վիզը կանցունէր բռնությամբ և այնպես կքաշէր կտանէր գամփռ տանելու պես, և ոչ ոք կարող էր ձեռքէն առնուլ։ Վերին հայր սուրբին հետ մանավանդ կատակ կարելի չէր։ Առանց երկար հառաջաբանի, կապակցունէր պատուհանի խայտառակով և լսողաց վերարկուով պարանը կամ ազատ և 25—30 գավազանի հարվածներով կծեծարկէր» (Ըստ Ս. Շահնազարի. տե՛ս «Պայքար», 1957, էջ 30)։

[99] «Մեղու», 1865, № 255, էջ 1։

դահամար անցկացնելու վերաբերյալ։ Մարդահամարը կատարվեց, սակայն ընտրությունները տեղի չունեցան։ Նրանց պատվերով, փոխառաջնորդ Մկրտիչ եպ. Քեֆսիզյանը «12 հոդվածներով կանոնագիր մը» կազմեց... Ազգային սահմանադրությունը տեղական պայմաններին պատշաճեցնելու նշանաբանի ներքո։ Ըստ այդ կանոնագրի, Կահիրեի հայկական համայնքը պետք է ունենար Նուբար փաշայի կողմից նշանակված թաղական խորհուրդ, և թաղական խորհրդի կողմից նշանակված հոգաբարձություն և այլն։ Սակայն բողոքի ելույթների հետևանքով, Կ. Պոլսի Ազգային ժողովը լուծարքի ենթարկեց նմանօրինակ ձևով կազմված թաղական խորհուրդը և պահանջեց գործադրել Ազգային սահմանադրությունը։ Նոր սողանցք գտնվեց. թաղականների մի նոր ցուցակ կազմվեց և փորձ արվեց այն հաստատել ժողովրդի քվեներով։ Դա էլ չտվեց ակնկալված արդյունքը։ «Արմավենի» լրագիրը հաղորդում է, որ «շատեր... թաղական խորհրդո քվեարկության մասնակցիլ չուզեցին, և հազիվ թե հիսուն հոգվո չափ, ան ալ հրավերով թախանձելով, հանեցան նոր ընտրության համար քվե տալ»[100]։ Ազգային ժողովը չհաստատեց նաև այդ ընտրությունը։ 1865 թ. ապրիլին Քեֆսիզյանը և նրա համախոհները կազմեցին «ընտրողական ժողով», որը Սահմանադրության «սկզբանց համեմատ» պետք է նախապատրաստեր «վիճակիս ընդհանուր ժողովո կազմության քվեարկությունը»[101]։

Այդ ընտրությունը սակայն տեղի չունեցավ... որովհետև բողոքի ելույթներ սկսվեցին այն բանից հետո, երբ բացահայտվեց, որ Քեֆսիզյանը, կաշառք վերցնելով, փորձել է Կարապետ Գալուստի կտակը գործադրել որոշ մարդկանց ձեռնտու ձևով։ Նրա պատարագի կամ քարոզած ժամանակ եկեղեցում լսվում էին «արժանի չէ», «թող հրաժարի» և այդ կարգի այլ բացականչություններ։ Մթնոլորտն ավելի շիկացավ, երբ Քեֆսիզյանի պահանջով եգիպտական ոստիկանությունը կալանքի վերցրեց մի շարք «խռովարարներու» և, ինչպես նշել է Սավալանյանցը, պատահեց անխուսափելին, նրան գանակոծեցին այն կանայք, որոնց «ամուսինները կառավարության մատնած և բանտարկել տված էր»[102]։ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը Ներսես Վարժապետյանին որպես «այցելու-քննիչ» գործուղեց Կահիրե «հայ ժողովրդյան մեկ մասին և... Մկրտիչ սրբազանին մեջ պատահած դժտությունները» վերացնելու

100 «Արմավենի», 1 մայիսի 1865։

101 Նույն տեղում։

102 Տե՛ս Տ. Սավալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, հ. 2, էջ 1087։



համար[103]։ Նրա առաքելությունը հաջողությամբ չպսակվեց, և մեծատունները Քեֆսիզյանին ստիպեցին հեռանալ Եգիպտոսից։ Վարկաբեկված լինելով, նա չէր կարող այլևս ծառայել նրանց հակասահմանադրական պայքարին։

Եգիպտահայ հասարակական կյանքն առավել ևս խճճվեց, համարյա քաոսային վիճակ ընդունեց, երբ (1869) որպես թեմակալ առաջնորդ եգիպտահայերի վզին փաթաթվեց մի տխրահռչակ եկեղեցական՝ Մեսրոպ եպ. Սուքիասյանը։ Կ. Պոլսի հայոց պատրիարքը չընդունեց նրա ընտրությունը, որը կատարվել էր անտեսելով Ազգային սահմանադրությունը։ Սակայն եգիպտահայ գաղութի մյութեվելլի Նուբար փաշայի ջանքերով այն արժանացավ Գևորգ Դ կաթողիկոսի և Խրիմի հավանությանը[104]։

Կատարելով եգիպտահայ մեծատունների ցանկությունը, Մեսրոպը մի կողմ դրեց Ազգային սահմանադրությունը, և նշանակեց երկու թաղական խորհուրդ, մեկը՝ Կահիրեում, մյուսը՝ Ալեքսանդրիայում։ Ավագաժողովից համարյա չտարբերվող այդ խորհուրդները չարժանացան ժողովրդի հավանությանը։ Կ. Պոլիս տեղացող բողոքագրերը ուշադրություն չգրավեցին մինչև այն ժամանակ, երբ աղմուկ բարձրացավ Մեսրոպի և նրա հովանավորների մի նոր գայթակղության շուրջը. ոմն Փարիս Ալեքսանյանի մահից հետո հայտնաբերվեց երկու կտակ, մեկը թեմական իշխանության, մյուսը՝ Երուսաղեմի Հայոց վանքի օգտին։ Մի կողմից Մեսրոպը և նրա հովանավորները, մյուս կողմից Երուսա-

103 «Արշալույս Արարատյան», 11 դեկտեմբերի 1865։ Քեֆսիզյանի հեռանալուց հետո Կ. Պոլսի պատրիարքին է ուղարկվել 318 ստորագրությամբ մի հանրագրություն, որտեղ ասված է. «Պրծանք... և կխնդրենք ու կպաղատինք որ հանուն է-ին (աստծու—Հ. Թ.) շնորհ ընե ձեր բարձր սրբազնությունը և գթա տնազուրկ ազգայինքը... ու մերժե նորա (Քեֆսիզյանի—Հ. Թ.) կրկին վերադարձը, և արգիլե անոր ոտքը եգիպտական հողին վրա դնել տալեն ի խաղաղություն ժողովրդյան» («Արշալույս Արարատյան», 22 մայիսի 1867)։ Բացի այդ, եգիպտահայ մեծատունները հայտարարեցին. «Եգիպտահայք վեց ամիսե ի վեր զՄկրտիչ եպիսկոպոս իբրև փոխ-առաջնորդ չեն ճանչնար, հետևաբար ի սպառ մերժված է նա իր այս պաշտոնեն» («Արշալույս Արարատյան», 27 մայիսի 1867)։

104 Նուբար փաշայի միջնորդությամբ խեդիվից ստացվել է մի թեզքիր, որտեղ Մեսրոպ եպ. Սուքիասյանը, փոխանակ մուրախխասի (առաջնորդի) հռչակվում է «բաթրիք»՝ պատրիարք։ Գևորգ Դ կաթողիկոսը, ընդառաջելով եգիպտահայ մեծատունների խնդրանքին, հատուկ կոնդակով հաստատել է Մեսրոպի ընտրությունը և նրան շնորհել արքության աստիճան։

ղեմի միաբանությունը փորձեցին տեր կանգնել կտակին։ Սուքիասյան-Հակոբյան խմբակի մարդիկ Երուսաղեմի վանքի ներկայացուցիչ Աստվածատուր վարդապետին «բռնի ստորագրել և կնքել» տվին արաբերեն մի գրություն, որը և հիմք դարձավ դատական գործ հարուցելու Երուսաղեմի միաբանության դեմ։ Վեճը քննարկվեց Կ. Պոլսում։ Ազգային վարչությունը, իրեն վերապահելով Ակերմանյանի կտակի հարցում վերջին խոսքը, պահանջում էր կարճել Երուսաղեմի միաբանության դեմ բացված դատը և, որ առավել կարևոր է, հրահանգում էր լուծել նշանակովի թաղական խորհուրդները, գործադրել Ազգային սահմանադրությունը։

1872 թ. վերջերին հրապարակվեց «Սահմանադրական հրահանգը», որով Ազգային սահմանադրությունը համարժեքցվում էր գավառներում տիրող իրականությանը։ Յուրաքանչյուր առաջնորդական թեմի օրենսդիր իշխանությունը կամ գավառական ընդհանուր ժողովը կարող էր ըստ տեղի և պայմանների ունենալ 21-ից մինչև 70 անդամ՝ ընտրված ժողովրդի քվեով։ Գործադիր իշխանությունը կազմում էին կրոնական և քաղաքական ժողովները, որոնք ընտրվում էին գավառական ընդհանուր ժողովում։ Օրենսդիր և գործադիր իշխանության նախագահը թեմակալ առաջնորդն էր, որն ընտրվում էր գավառական ժողովում, և կարող էր հեռացվել պաշտոնից։ Սահմանադրության ժողովրդական համակարգից պահպանված էին նաև ուսումնական, տնտեսական և թաղական խորհուրդները։ Կ. Պոլսի ազգային վարչության իրավունքն էր վերապահվում միջամտելու այն թեմի գործերին, որտեղ առաջնորդը կամ գավառական ժողովը «սահմանյալ օրինաց և հրահանգաց հակառակ ընթացքի մեջ կգտնվեին»[105]։

Եգիպտահայ մեծատունները նախ երկար ժամանակ բարձիթողի արեցին Սահմանադրական հրահանգը, իսկ հետո համոզվելով, որ Կ. Պոլսում և Կահիրեում վարկաբեկված Մեսրոպը չի կարող որևէ դեր կատարել այն տապալելու գործում, փորձեցին ազատվել նրանից։ Սակայն Մեսրոպն ամուր կառչեց առաջնորդական աթոռից, օգտագործելով դրամական ինչ-որ «սուտ պահանջ»։ Նրան հաջողվեց նախ այդ պահանջը «իբրև ազգային պարտք արձանագրել» տալ և քահանաներից մեկի ստորագրությամբ «մուրհակ մը» առանալ[106], իսկ հետագայում այն փոխանցեց երկու օտարահպատակ առևտրականների՝ ամն Յուսուֆ Գյուզելի և Մեհմեդ Հայրաթիի անվան։ Սրանք էլ դիմեցին դատարան, որը և վճռեց «պարտավորել զեկեղեցին Կահիրեի վճարելու» նրանց պահանջած գումարը, և կալանք դրվեց ազգապատկան կալվածների եկամուտների վրա[107]։

105 «Օրենք և կանոնք ազգային առաջնորդարանի հայոց Եգիպտոսի», Կահիրե, 1930, էջ 192։

106 «Արևելյան մամուլ», 1879, էջ 352։



Իր դիրքերն այդպես ամրապնդելուց հետո 1879 թ. սկզբներին Մեսրոպը գործադրեց Սահմանադրական հրահանգը։ Սակայն նրա հաշիվները ճիշտ դուրս չեկան, Նուբարի գավառական ժողովի հենց առաջին նիստում քննարկվեց «Մեսրոպի խնդիրը», և պահանջվեց նրա հրաժարականը։ Նա դիմեց ոստիկանությանը, որը և կնքեց խորհրդատունն ու դիվանատունը և զինված պահակներ դրեց եկեղեցու շուրջը[108]։ Այդ բանից հետո գավառական ժողովը, վերստին գումարվելով, նրան «պաշտոնանկ» հայտարարեց, և Կ. Պոլսի հայոց պատրիարքին հեռագրեց, որ «արյունահեղ կռիվներ պիտի ծագին», եթե նրան չհեռացնեն Եգիպտոսից։ Քննիչի պաշտոնով Կահիրե ուղարկված Հովհաննես Ք. Մկրյանի միջնորդությամբ եգիպտական իշխանությունները հավանություն տվեցին վեճը լուծել ազգային շրջանակներում։ Նրա քննությամբ մի անգամ ևս հաստատվեց, որ Մեսրոպը զբաղվել էր «գողությամբ և խարդախ հաշիվներով»[109]։ Ոստիկանությունը Մեսրոպին բռնի ուղարկեց Կ. Պոլիս։

Այդ շահամոլ և արատավոր եկեղեցականն իրենից հետո թողեց ավերակներ. «Սահմանադրական վարչությունը կազմալուծյալ, Աղեքսանդրիո թեմը Կահիրեեն վտարանդյալ և ինքնուրույն դիրք մ'առած, ժողովուրդն երկպառակ և ազգային գործերն անիշխանական վիճակի մատնված, առաջնորդարանն... ի նյութական վեղծմանց շնորհիվ մեծաքանակ պարտուց ներքև և դրամական նեղության մեջ, ազգային հասույթները... դատարանաց կողմէ գրավմանց ենթարկյալ, եկեղեցի, վարժարան և ամեն ինչ անխնամ և լքյալ...»[110]։ Ողբալի էր նաև ազգապատկան կալվածների վիճակը, մնացել էին միայն մի ագարակ և երկու տուն, այն էլ համարյա անեկամուտ, քարուքանդ[111]։

Այսպիսով, եգիպտահայ գաղութի ներքին կյանքն ալեկոծվում էր բավական բուռն պայքարներով։ Մինչև Ազգային սահմանադրության

107 «Մասիս», 27 սեպտեմբերի 1883։

108 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1879, էջ 349—350։

109 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 11, վ. 90։

110 «Մասիս», 18 մայիսի 1881։

111 Տե՛ս «Մասիս», 19 հոկտեմբերի 1883։ Ազգային վարչության քննիչի պաշտոնով

հռչակումը, եգիպտահայերը պայքարում էին Նուբարյանի հայոց պատրիարքարանի թեմակալության դեմ։ Ըստ էության, այդ պայքարը մղվում էր հոգևորականության՝ համայնքային գործերը վարելու մենաշնորհի դեմ, ժողովրդի ներկայացուցիչների մասնակցությամբ համայնքային վարչակառավարման օրգաններ ստեղծելու օգտին։ Հետագայում եգիպտահայ աշխատավորները պայքարում էին մեծատունների ավագաժողովի, որոնց համարյա չտարբերվող թաղական խորհուրդների և բարձրաստիճան հոգևորականության այն ներկայացուցիչների դեմ, որոնք խանգարում էին Ազգային սահմանադրության սկզբունքների կենսագործմանը։ Որոշ իմաստով, եգիպտահայ աշխատավորների սահմանադրական պայքարն արձագանքն էր այն շարժումների, որ Կ. Պոլսի էսնաֆություններն այդ նույն ժամանակ զարգացնում էին ամիրաների և նրանց գրածո պատրիարքների դեմ։

## 4. ԵԳԻՊՏՈՍԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Եգիպտոսի ինքնուրույնության պայքարին հայերի մասնակցության վերաբերյալ պահպանվել են խիստ սակավ և հաճախ ընդհանուր բնույթի նյութեր, որոնք, այնուամենայնիվ, կարող են որոշ պատկերացում տալ այդ պայքարում եգիպտահայ հասարակության որոշ խավերի հանդես բերած դիրքի և խաղացած դերի մասին։

Հայտնի է, որ XIX դարի սկզբներից Եգիպտոսում զնալով ուժեղացավ ազատագրական պայքարը օսմանյան տիրապետության դեմ։ Վենետիկի Մխիթարյան հայրերի պատմաբան Ամբր. Գալֆայանի համար այդ պայքարի գլուխ կանգնած Մոհամմեդ Ալին և նրա գործակիցները ոչ թե բռնապետության դեմ պայքարող ըմբոստ գործիչներ էին, այլ խռովարարներ։ Նա ասում է. «Ապստամբության և ավարի սիրույն համար ամեն կողմեն փունդ-փունդ (...) գնացին Ալիին քովը ժողովվեցան, ու (նա) անոնցմով սկսավ մեկ կողմանե թագավորական զորաց դեմ կենալ, մեկ կողմանե ալ հույները ապստամբության գրգռել...»[112]։

լինելով Եգիպտոսում, Սանիան Ասլանյանը գրում էր. «Աչմոն Գրեյսի հողը (ագարակային) իրր հարյուր արտավար ծախու առնվեր է 1.400 ոսկվո, այսօր ... միայն ութ արտավար մնացած է։ Օթել դն Նիլ փողոցի տունը բավական հինցած է և այսօր տարեկան 5400 ղրուշ միայն վարձք կբերե։ Իսկ Բեյն ալ-Սուրեյնի տունը, հանդերձ յուր ներքնի սրճարանով, քայքայյալ հիմնահատակ եղած է» (Նույն տեղում)։

[112] Ա. Գալֆայան, Համառոտություն ժամանակակից պատմության, էջ 192 և 197։



Մոհամմեդ Ալիի գործունեությանը դրական գնահատական է տալիս առաջադեմ հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը։ Նա գրել է. «Յորժամ Եգիպտոսի ներկայէս (1845 թ.) կացությունն համեմատենք էն ժամանակի հետ որ սա (Մոհամմեդ Ալին—Հ. Թ.) նոր ձեռք առավ, մեծ զանազանություն կգտանեմք ընդ առ հասարակաց օգուտ և անդորրություն։ ...Եթե միայն երեք անձինք յուրայնս սրտցավ ունէր, Եգիպտոս շատ առավել կծաղկէր»[113]։ Մ. Թաղիադյանն արտահայտում էր հայ առևտրական այն խավերի տրամադրությունը, որոնց ականավոր ներկայացուցիչները Մոհամմեդ Ալիի հետ միասին պայքարում էին օսմանյան տիրապետության դեմ։

Հայ առևտրավարկային կապիտալի ներկայացուցիչները, բարձր պաշտոններ զբաղեցնելով Մոհամմեդ Ալիի դիվաններում, զգալի դեր էին կատարում Անգլիայի նվաճողական պլանների ձախողման և Մոհամմեդ Ալիի իշխանության ամրապնդման գործում։ Նրանց քաղաքական կողմնորոշումը պայմանավորված էր եվրոպական վաճառականների մրցակցությանը դիմագրավելու, տեղական շուկայում եգիպտական առևտրականների գերիշխանություն հաստատելու ձգտումով։ Այդ գործիչների մասին հետաքրքիր վկայություն ունի Եգիպտոսի բրիտանական գլխավոր հյուպատոս Կրոմերը։ Նա ասում է. «Ղպտիները մեծ մասամբ ստորադաս պաշտոններ են վարել եգիպտական վարչության մեջ։ Սիրիացիներին, հակառակ նրանց ճարպկությանը, երբեք չի հաջողվել երկրորդական, թեև կարևոր, պաշտոններից այն կողմ անցնել։ Իսկ հայերը հասել են կառավարական ամենաբարձր դիրքերի և նրանց մեծ վճռական ազդեցություն են ունեցել Եգիպտոսի պետական գործերի վրա»[114]։

Եգիպտոսի պետական խոշորագույն գործիչներից էր Պողոս Յուսուֆյանը՝ Զմյուռնիայի Ապրոյան առևտրական հիմնարկի Եգիպտոսի նախկին ներկայացուցիչը[115]։ Յուսուֆյանը ծառայել է նախ Մոհամմեդ

[113] «Ազգասեր», 1845, էջ 107։

[114] *Cromer*, Modern Egypt, vol. II, p. 219–220.

[115] Պողոս Յուսուֆյանը (1768—1844) ծնվել է Զմյուռնիայում, դաստիարակվել է հայտնի առևտրական Ապրոյանի ընտանիքում, սովորել է բազմաթիվ լեզուներ (թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն, անգլերեն և ֆրանսերեն) և, ընդգրկվելով Ապրոյանների առևտրական ցանցում, 1791—1798 թթ. ձեռնամուխ է եղել Ռաշիդի, իսկ հետագայում և Ալեքսանդրիայի մաքսատան կապալով շահագործմանը։ Նա գործուն

Ալիի կաբինետում որպես թարգման և խորհրդական, ապա նշանակվել է նվիրոպական գործերի և եգիպտական վաճառականության դիվանի նադիր։ Ըստ անգլիական պատմաբան Պատոնի, Մոհամմեդ Ալին ասել է. «Այսնքամս համարյա միշտ մենակ եմ եղել, բացի Պողոս բեյից, ուրիշ ոչ ոք չեմ ունեցել ինձ փոխարինելու համար»[116]։ Ն. Մ. Աղազարմի ասելով, Մոհամմեդ Ալին, երբ «Սուդան կճամբորդեր շատ մը հրամաններ ստորագրած և պարապ վիճակի մեջ հանձնած է Պողոս պեյին, իհարկեն, ուզածին պես գործածելու համար զանոնք. վստահության ասկե ավելի փայլուն և ավելի պերճախոս ապացույց մը երևակայել կարելի չէ»[117]։

Յուսուֆյանի նախաձեռնության արդյունք են համարվում եգիպտական նոր պետության կազմավորման հետ կապված շատ ծրագրերի հղացումն ու իրագործումը։ Դրանցից են հատկապես պետական մոնոպոլիաները, որոնք հանդիսացան Եգիպտոսի ինքնուրույնության գրավականը։ Բարձր գնահատելով նրա պետական-քաղաքական գործունեությունը, եգիպտական «Լա Բուրս էժիպսիեն» թերթը գրել է, որ առանց Պողոս Յուսուֆյանի «անկարելի է ըմբռնել» Մոհամմեդ Ալիի գործը, «իրականին մեջ, Պողոս բեյը իր ձեռք առած էր երկրի արտաքին, ներքին, ելմտական, առևտրական և մինչև անգամ զինվորական բոլոր գործերը, ինչ որ կկատարվեր տերության ընդարձակածավալ սահմաններուն մեջ՝ Ասուանեն մինչև Կրետե, մինչև Տավրոս կնիքը կկրեր իր վճիռներուն»[118]։

Մոհամմեդ Ալիի կապիտուլյացիայից հետո հայրենասեր գործիչները բոլոր հնարավոր միջոցներով պայքարում էին Եգիպտոսը հեռու պահել կապիտուլյացիաների ցանցից։ Այդ պայքարում ակնառու դեր էր կատարում եգիպտահայ առևտրավարկային կապիտալի մի ուրիշ ներկայացուցիչ՝ Արթին Չրաքյանը[119]։

---

մասնակցություն է բերել եգիպտահայ գաղութի գործերին, զբաղվել Երուսաղեմի պատրիարքարանի հարցերով, դրամական օգնություն տվել հայկական մշակույթի օջախներին՝ Զմյուռնիայի հրատարակչությանը, Վենետիկի Մխիթարյան միաբանությանը և այլն։ Նրա նվիրաբերության արդյունքն են Ալեքսանդրիայի հայկական դպրոցն ու եկեղեցին («Բազմավեպ», 1844, էջ 95)։

116 A. A Paton, History of Egyptian Revolution, vol. II, p. 83.

117 Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 26։

118 Ըստ «Արաքսի», 25 փետրվարի 1933։

119 Արթին Չրաքյանը (1800—1859) ծնվել է Կոստանդնուպոլսում։ 1814 թ. հակաթոլիկական հալածանքներից փախչելով, Չրաքյան ընտանիքը տեղափոխվել է Կա-



1830-ական թվականներից ընդգրկվելով պետական ապարատում, Չրաքյանը նախ աշխատել է լուսավորության դիվանում, ապա՝ Մոհամմեդ Ալիի կաբինետում, դրսևորելով պետական գործչի փայլուն ընդունակություններ։ 1841 թ. նա գլխավորել է եգիպտական պատվիրակությունը՝ Լոնդոնի կոնֆերանսում, 1844 թ. նշանակվել է նվիրոպական գործերի և եգիպտական վաճառականության նադիր։ Մ. Թաղիադյանը նրան անվանում է «նախարար գործոց օտարազգյաց և վաճառականության երկրին և գրեթե միակ կառավար գործոց դրանն»[120]։ Այդ պաշտոնում Չրաքյանը հարկադրված էր հաճախ բախվել նվիրոպական, առանձնապես անգլիական հյուպատոսների հետ, որոնք փորձում էին Եգիպտոսում գործել այնպես, ինչպես սեփական գաղթավայրում։

Անգլիան համարելով Եգիպտոսի ինքնուրույնության թշնամի, Չրաքյանը սնուցում էր բացահայտ հակաբրիտանական տրամադրություններ։ Պատոնը նշել է. «Արթին բեյը ատում էր անգլիացիներին»[121], Չրաքյանը սահմանափակեց կամ հետ վերցրեց նախկինում նրանց տրված մի շարք առանձնաշնորհումներ։ 1846—1847 թթ. նրա ջանքերով «Պեն էնդ օրիենտալ» ընկերությունը, որի ձեռքում էր տարանցիկ առևտրի ցամաքային և գետային տրանսպորտի միջոցները, ենթարկվեց եգիպտական կառավարության տրանզիտի վարչությանը։ Մեծ դժվարություններ հաղթահարելով, նա բարեկարգեց և անգլիական հյուպատոսների ոտնձգություններից պաշտպանեց մաքսային և փոստ-հեռագրական վարչությունները, առևտրական դատարանները, Սեննարի բամբակի պլանտացիաները և այլն։

Անգլիացիները ուղղակի հալածում էին Չրաքյանին և նույնիսկ նրա մերձավորներին[122]։ Սակայն նրան տապալելու փորձերն արդյունք չտվին

---

հիրե։ Չրաքյանը, թեև դաստիարակված էր օտար միջավայրում, սակայն շնորհիվ գավառացի (սեբաստացի) ծնողների, նրա ընտանիքում տիրում էր հայկական մթնոլորտ (Տե՛ս «Արշալույս Արարատյան», 30 մարտի 1851)։

120 «Ազգասեր», 1847, էջ 166։

121 A. A. Paton, History of Egyptian Revolution, vol. II, p. 232.

122 Մ. Թաղիադյանն արձանագրել է այդ տեսակետից բնորոշ մի իրադարձություն՝ կապված Չրաքյանի մերձավոր եգիպտահայ անվանի բժիշկ Բեդանի հետ. 1847 թ. բժիշկ Բեդանը ուղևորվում է Լոնդոն, գլխավորելով Անգլիայի թագուհուն նվերներ տանող եգիպտական պատվիրակությունը։ Այդ առթիվ, երբ հարց է ծագում նրան ասպետության աստիճանով պարգևատրելու մասին, անգլիական մամուլը աղմուկ է բարձրացնում, ընդգծելով, որ Չրաքյանի ազգականին ասպետության աստիճան տալ՝ նշանակում է հասարակացնել «պատիվն Անգլիականը» և ձախողվում է Բեդանի պարգևատրությունը («Ազգասեր», 1847, էջ 205)։

այնքան ժամանակ, քանի դեռ կենդանի էր Մոհամմեդ Ալին։ 1850 թ. Զոհրաբյանը, ինչպես նշվեց, պաշտոնանկ արվեց և կարճատև արգելափակումից հետո, բախտակից արաբ գործիչների հետ միասին արտասահման անցնելով, պայքար սկսեց Աբբասի (1849—1854) «բռնապետական և հետադիմական քաղաքականության դեմ»[123]։ 1854 թ., երբ վտարանդի գործիչներին հնարավորություն տրվեց Եգիպտոս վերադառնալու, Զոհրաբյանը նշանակվեց խդիվի խորհրդական, սակայն այդ պաշտոնում երկար չմնաց, որովհետև հակադրվում էր Սաիդի՝ օտարերկրյա կապիտալիստներին կոնցեսիաներ տալու քաղաքականությանը։

XIX դարի երկրորդ կեսին Եգիպտոսի առևտրական բուրժուազիայի քաղաքական կողմնորոշման մեջ առաջացան ուշագրավ տեղաշարժեր, կապված եվրոպական կապիտալի ներթափանցման հետ։ Կենսական շահերի հազար ու մի թելերով կապվելով հիմնականում ֆրանսիական և անգլիական կապիտալի հետ, եգիպտական բուրժուազիայի ազդեցիկ խավերը հանդես էին գալիս եվրոպացիների հետ տնտեսական և քաղաքական համագործակցության օգտին։ Այժմ բուրժուազիայի շահերին անհամապատասխան էր Մոհամմեդ Ալիի քաղաքական ավանդույթներին հավատարիմ մնացած պետական գործիչների հակաքրիստոնեական կողմնորոշումը։ Այդ պայմաններում, ինչպես նշվեց, տապալվեց արտաքին գործերի մինիստր Դեմիրճյանը[124], իսկ ճկուն դիվանագետ Նուբար փաշա Նուբարյանը[125], վարելով եվրոպական կապիտալի հետ համագործակցելու քաղաքականություն, հասավ պետական-քաղաքական բարձր դիրքերի։

---

123 *M. Sabry*, L'Empire égyptien sous Ismaïl, p. 23.

124 Ստեփան Դեմիրճյանը ծնվել է հավանաբար 1802 թ.։ 1844—1848 թթ. եղել է վարիչ եգիպտական դպրոցին հաստատյալ ի Փարիզ քաղաքի, նաև նորին խորհրդական փաշային («Ազգասէր», 1847, էջ 166)։ 1850—1853 և 1855—1857 թթ. եղել է արտաքին գործերի մինիստր։ Վախճանվել է հավանաբար 1860 թ.։

125 Նուբար Փաշան (1825—1899) ծնվել է Զմյուռնիայում, նախնական կրթությունն ստացել է տեղի հայկական դպրոցում։ Դեռ պատանի հասակում տեղափոխվել է Ալեքսանդրիա, 1844—1849 թթ. սովորել է Փարիզում։ Բարձրանալով պետական պաշտոնների սանդուղքով, նա չի հեռացել հայ ժողովրդից։ Ըստ Ա. Ալպոյաճյանի, նա մի առիթով ասել է. «Կյանքս նվիրեցի Եգիպտոսին, որովհետև բախտը իմ առաջ այդ գործը հանեց, հրապուրվեցա անկից և կապվեցա։ Բայց օտար երկրի մեջ այդ գործունեությունս երբեք ինձի չմոռցուց, որ հայ մըն եմ...» («ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը», էջ 94)։ Արդարև, Նուբարը միջոցներ է տրամադրել եվրոպայում ուսանող հայ երիտասարդների, Կ. Պոլսի Շահնազարյան-Նուբարյան միջնակարգ դպրոցին, ֆինանսավորել է մի շարք հայ պատմիչների գործերի ֆրանսերեն թարգմանությունը, Երիմյան կաթողիկոսի խնդրանքով զբաղվել է Հայկական հարցով և եղել է եգիպտահայ գաղութի մեկենասը։



Մինչև 1865 թվականը Նուբարը վարել է բազմաթիվ պաշտոններ, որոնցից կարևորագույնը երկաթուղու վարչության պետի պաշտոնն էր։ Այնուհետև նա Եգիպտոսի արտաքին գործերի մինիստր է նշանակվել չորս անգամ (1866—1874, 1875—1876, 1878—1879 և 1884—1888 թթ.), պրեմիեր-մինիստր՝ երեք անգամ (1878—1879, 1884—1889 և 1894—1895 թթ.)։ Ելնելով եգիպտական բուրժուազիայի շահերից, Նուբարն օգտակար էր համարում եգիպտացիների և եվրոպացիների համագործակցությունը, սակայն, ինչպես նկատել է Սաբրին, եվրոպացիներին «ոչինչ չէր զիջում իր իշխանությունից, նրանց պահում էր իր հանճարեղ ղեկավարության ներքո»[126]։ Նա պահանջում էր երկրի օրենքները կիրառել նաև անգլիական պաշտոնյաների նկատմամբ, և «ընդվզում էր, երբ նրանք փորձում էին սահմանն անցնել...»[127]։ Որպես պրեմիեր-մինիստր, նա հաճախ է բախվել երկրագործության մինիստրի «խորհրդական» Սկոտ Մոնկրիֆի հետ, որը չարաշահում էր իր պաշտոնը, անտեսում գործող օրենքները[128]։ Նա հաճախ ընդհարվել է ֆինանսների մինիստրի «խորհրդական» Էդգար Վինսենտի հետ։ Չտոկալով նրա ճնշմանը, ներքին գործերի մինիստրի «խորհրդական» Կլիֆորդ Լլոյդն ի վերջո «պաշտոնանկ եղավ...»[129]։ Նուբար փաշան բախվել է նաև գլխավոր հյուպատոս Կրոմերի հետ։ Վերջինս գրել է. «Նուբարը, եթե մի քիչ խոհեմություն ցուցաբերեր, կարող էր մինչև վերջն էլ պրեմիեր-մինիստր մնալ, և ցավալի է, որ նա այդպես չվարվեց, որովհետև տաղանդով անչափ բարձր էր իր մրցակիցներից»[130]։

Եգիպտական բուրժուազիայի շահերից էր բխում Նուբարի իրականացրած դատական ռեֆորմը, որը, շոշափելով կապիտուլյացիաներից օգտվող պետությունների շահերը, չտեսնված աղմուկ բարձրացրեց Եվրոպայում։ Սակայն 9-ամյա (1867—1876 թթ.) համառ պայքարով նրան հաջողվեց ստեղծել քաղաքացիական, առևտրական, քրեական եգիպտական կոդեքս, և հյուպատոսական դատարանները փոխարինել միջազգային կամ խառն դատարաններով, որոնց անձնակազմը բաղ-

---

126 *M. Sabry*, L'Empire égyptien sous Ismaïl, p. 46.

127 *A. Chafik*, L'Egypte moderne, p. 155.

128 Տե՛ս նույն տեղում։

129 «Բյուզանդիոն», 12 հունվարի 1899։

130 *Cromer*, Modern Egypt, vol. II, p. 340.

կացած էր եգիպտացիներից և եվրոպացիներից։ Նախագահ ատյանը կազմված էր չորս եվրոպացի և երեք եգիպտացի դատավորներից, վճռում էր եգիպտացիների և եվրոպացիների միջև ծագած քաղաքացիական, առևտրական և կալվածական վեճերը։ Տուժող կողմի պահանջով նախագահ ատյանի վճիռը կարող էր վերաքննության ենթարկվել վերաքննիչ ատյանում, որի արձակած վճիռները համարվում էին վերջնական։ Ոճրագատ ատյանը կազմված էր երկու եվրոպացի և մեկ եգիպտացի դատավորից, ինչպես և 12 երդվյալներից։ Այդ ատյանը վճռահատում էր քրեական այն հանցագործությունները, որոնք միաժամանակ առնչվում էին եգիպտացիների և եվրոպացիների հետ։ Ժամանակի պատմական պայմաններում խառը կամ միջազգային դատարանների ստեղծումն առաջադիմական քայլ էր, դրանք որոշ չափով սանձահարեցին եվրոպական կեղեքիչներին։

Նուբարը սակայն չկարողացավ ճիշտ գնահատել 1870-ական թվականներին Եգիպտոսում կատարվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերը և, պատշաճ հետևություններ չհանելով Արաբիի ապստամբությունից, կառչած մնաց եվրոպացիների հետ համագործակցելու քաղաքականությանը, որն այլևս չէր համապատասխանում կազմավորվող ազգային բուրժուազիայի շահերին, և որի դեմ էին հանդես գալիս անկախության պայքարի ելած ժողովրդական զանգվածները։ Այդ ուղին պետք է հանգեցներ նրա անկմանը։ Եվ, իրոք, 1895 թ. Նուբարը հեռացավ պետական-քաղաքական գործունեության ասպարեզից[131]։

Նուբարի գործունեությունը բարձր է գնահատվել ինչպես Եգիպտոսում[132], այնպես էլ Եվրոպայում, սակայն եղել են անլուրջ գրիչներ,

[131] Նուբարի հետ միասին ասպարեզից հեռացավ նաև նրա քաղաքական վարքագծի հետևորդ Տիգրան դ'Աբրո Բաղրատունին (1846—1904)։

[132] «Արև», 21 հուլիսի 1931։ Պետական հայ գործիչների նկատմամբ հարգանքի և երախտագիտության արտահայտություն պետք է համարել այն, որ Եգիպտոսի տարբեր քաղաքներում բազմաթիվ փողոցներ կոչվել են նրանց անունով։ Կահիրեում ութ փողոց կրում էին ծագումով հայ միջնադարյան գործիչների անունը։ Դրանք են՝ Շարա ալ-Աֆդալ (երկու փողոց), Աֆեդ Բեհրամ (Վահրամ Պահլավունի), Հարթ Բիր-ջեք ալ-Հակեր, Աֆեդ Լուլու, Շարա Թաար ալ-Լուլու, Հարթ Մրադ բեյ, Շարա Մրադ բեյ։ Երկու փողոց կոչվում էին Պողոս Յուսուֆյանի անունով, Շարա Պողոս, Հարթ Պողոս, մեկ փողոց Արթին Չրաքյանի՝ Հարթ Արթին բեյ, մեկ փողոց Նուբար փաշայի՝ Շարա Նուբար, մեկ փողոց Տիգրան Բաղրատունու՝ Շարա Տիգրան փաշա, մեկ փողոց Մոհամմեդ Ալիի սառաֆբաշի Ալեքսան Միսաքյանի՝ Շարա Ալեքսան, մեկ փողոց էլ՝ Հարթ ալ-Արման (Հայոց փողոց) և այլն։ Հայ գործիչների անունով կոչվող փողոցներ կային նաև Ալեքսանդրիայում և մյուս քաղաքներում։



որոնք նրան համարել են Անգլիայի գործակալը։ Այդ անհիմն կարծիքը, դժբախտաբար, մուտք է գործել նաև սովետական պատմագրության մեջ։

Այսպիսով, պետական հայ գործիչները եգիպտական կազմավորվող բուրժուազիայի շահերի համապատասխան դեր էին կատարում Եգիպտոսի ինքնուրույնության պայքարում։ XIX դարի առաջին կեսին նրանց քաղաքական կողմնորոշումը հակաբրիտանական էր։ Պողոս Յուսուֆյանը, Արթին Չրաքյանը և մյուս գործիչները, պաշտպանելով պետական մոնոպոլիաները, օբյեկտիվորեն խթանում էին Եգիպտոսի ինքնուրույնության ձգտումները։ Նուբար փաշայի վարած եվրոպական կապիտալի հետ համագործակցելու քաղաքականությունը բխում էր օսմանյան կապիտուլյացիաներից ազատագրվել ձգտող եգիպտական բուրժուազիայի շահերից, սակայն բրիտանական տիրապետության հաստատումից հետո այդ քաղաքականությունը չէր կարող ծառայել Եգիպտոսի ինքնուրույնության պայքարին։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՄՇԱԿՈՒՅԹԸ

Քննարկվող ժամանակաշրջանում եգիպտահայ մշակույթը բարձրացավ գաղութի սոցիալ-տնտեսական զարգացման համապատասխան մակարդակի վրա։ Եգիպտահայերը ստեղծեցին դպրոցներ և պարբերական մամուլ, նպաստեցին եգիպտական մշակույթի զարգացմանը, կերտեցին ճարտարապետական հուշարձաններ, կազմեցին հին ձեռագրերի հավաքածու, փորձեցին տպարան հիմնել, օգնության ձեռք մեկնեցին տարբեր երկրների հայկական մշակութային հիմնարկների և այլն։

Եգիպտահայերը համեմատաբար խոշոր առաջընթաց քայլ կատարեցին մատաղ սերնդի ուսման և դաստիարակության բնագավառում։

Ըստ ոմանց, ֆրանսիական գրավման տարիներին (1798—1801) Հարթ ալ-Զուեյլայի հայոց եկեղեցուն կից գոյություն է ունեցել «դպրատուն մը, ուր քահանան և տիրացուն տարրական կրթության հոգը վերցուցած էին»[1]։ Այդ դպրատան մասին ոչ մի հիշատակություն չկա մեզ հայտնի աղբյուրներում։ Եգիպտահայ դպրոցական կյանքի սկզբնավորման վերաբերյալ առաջին հստակ տեղեկությունը հաղորդում է մի հիշատակարան, որտեղ ասված է. «Ի վայելումն ազգիս հայոց շինեցաւ դպրատունս ... ի յիշատակ հոգւոյ ակնցի սարաֆ Մ.Հ.-ի Եղիազար բարեհամբաւ ամիրային եւ ծնողաց եւ համայն կենդանեաց իւրոց, յամի տեառն 1828 եւ հայոց ՌՄՀԷ-ին»[2]։

Այդ դպրատունը հաստատված էր Հարթ ալ-Զուեյլայի ս. Աստվածածին եկեղեցուն կից, և առաջին «մասնավոր դպրոցն» էր Կահիրեում[3]։ Լուսավորության գործի պետականացման պայմաններում նրա

[1] «Արմավենի» տարեգիրք, 1937—1938, էջ 9։

[2] «Եգիպտահայ տարեցույց», 1925, էջ 60։

[3] Տե՛ս J. Heyworth-Dunne, An Introduction to the History..., p. 271.



հիմնադրությունը թույլատրվել էր բացառության կարգով, «շնորհիվ այն ազդեցիկ դիրքի, որ եգիպտահայ համայնքը ուներ եգիպտական արքունիքում»[4]։

Եղիազարյան դպրատունը տարրական դպրոց էր, հավանաբար երկու կամ երեք կարգով։ Հիմնական առարկան կրոնն էր, դասավանդվում էին նաև թվաբանություն, հայերեն և արաբերեն։ Դպրատանը դասավանդում էին գրագետ քահանաները և Կ. Պոլսից ու Զմյուռնիայից հրավիրված դասատուները։ Վերջիններից աչքի ընկնող դեմքեր էին՝ Ցեղիկյա Թովմաս պատվելի Մելիքշահյանը, Պետրոս Թաղիկյանը և ուրիշներ։ Դպրատան ծախսերը՝ դասատուների աշխատավարձ, աշակերտների համազգեստ, նախաճաշ և այլն ծածկվում էին ազգապատկան կալվածների եկամուտներից։

1854 թ. Եղիազարյան դպրատանը փոխարինեց Մովսես Խորենացու անվան արական դպրոցը, կառուցված Կահիրեի Բուլակ թաղում (Դարբ ալ-Գինինե)՝ եգիպտահայ մեծատուն Կարապետ Գալուստի միջոցներով։ Այդ տարվա սեպտեմբերի 15-ին «շքեղ հանդեսով մը նորակառույց երկսեռ վարժարանը կբացվի և հին (Եղիազարյան—Հ. Թ.) դպրատան աշակերտները կփոխադրվին հոն»[5]։ 1858 թ. Կարապետ Գալուստ Խորենյան դպրոցին կտակել է իր պատկառելի հարստության մի մասը[6], սակայն նրա ժառանգորդների հարուցած դատական գործի

[4] Նույն տեղում։

[5] Մ. Պետրոսյան, «Հարյուրամյակ մը. Ազգ. կրթությունը Կահիրեի մեջ», «Արմավենի» տարեգիրք, 1938, էջ 13—14։

[6] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1926, էջ 47—48։ Կտակի բնագիրն եղել է հայատառ թուրքերեն՝ գրված Կարապետ Գալուստի ձեռքով։ Ն. Մ. Ազգայարմը յույս է ընծայել նրա հայերեն թարգմանությունը, որից և մենք օգտվում ենք։ Կտակում ասված է, «Կահիրեի մեջ իմ հաստատած վարժարանիս տված եմ Ճեյզայի (Վերին Եգիպտոսի Ասյութ նահանգում—Հ. Թ.) 400 արտավար (կամ ֆեդդան, յուրաքանչյուրը 4.200 քմ—Հ. Թ.) տարածությամբ ագարակս իր կազմածներով ու հարակից տունով։ Տված եմ վարժարանին և ուսուցիչներուն ծախքը հոգալու համար։ Ագարակին թափուն (ագագրման իրավունքի փաստաթուղթը—Հ. Թ.) ալ նույն վարժարանին անունին դարձնելու էի նաև հիշյալ վարժարանին տված եմ Շեյխաբդանի (Վերին Եգիպտոսի Գիրգե նահանգում—Հ. Թ.) մեջ հեռքեթով (կալվածագրով—Հ. Թ.) ունեցած 340 արտավարեն ավելի տարածությամբ խարաջի (տասանորդի ենթակա կալված—Հ. Թ.) ագարակս 6.000-են ավելի արմավենիներով։ Տված եմ նաև Էլ-Աղիրին գյուղի (Գիզեի նահանգում—Հ. Թ.) 60 արտավարնոց ագարակս» (Նույն տեղում, էջ 49)։ Բացի այդ, Կարապետ Գալուստը կտակել էր տարեկան 10.000 ղրուշ ալ վարժարանի աշակերտներուն զգեստի համար»

հետևանքով կտակի կատարումը ձգձգվել է մինչև 1887 թվականը, այսինքն դատի բարեհաջող վախճանը, և դպրոցը եղել է նեղ վիճակում։ Բավական է նշել, որ 1879 թ. Խորենյան դպրոցն ավելի քան վեց ամիս փակ է մնացել միջոցներ չունենալու պատճառով։

Ալեքսանդրիայի Արամյան դպրոցի հիմնադրության ստույգ թվականը հայտնի չէ, հավանաբար հաստատվել է 1840-ական թվականներին։ Մինչև 1851 թվականի կեսերն Արամյան դպրոցը «երեսի վրա մնացած» է եղել, գործել է անկանոն՝ «օրինավոր վարժապետի մը չըլլալուն» պատճառով։ Անձամբ զբաղվելով դպրոցի բարեկարգությամբ, Գաբրիել Մարաշլին Զմյուռնիայի Մեսրոպյան դպրոցի նախկին սաներից Ղուկաս Մամուրյանին նշանակել է վարժապետ, իսկ ոմն Ղազարոս Գասպարյանի՝ հոգաբարձու, և կատարել որոշ «հարկավոր նորոգություններ»[7]։ 1867 թ. Արամյան դպրոցը Մեյդանի ազգապատկան շենքից տեղափոխվել է նոր շենք և, գուցե, այդ առթիվ էլ վերանվանվել Պողոս-բեյյան վարժարան՝ Պողոս Յուսուֆյանի անունով։ Դպրոցական նոր շենքը ուներ լուսավոր դասարաններ և մի սրահ, որն օգտագործվում էր դպրոցական միջոցառումների համար։ 1873 թվականի արխիվային մի վավերագրում Պողոս-բեյյան վարժարանը համարվում է «հոյակապ դպրոց»[8]։

Խորենյան դպրոցն երկսեռ դպրոց էր, իսկ Արամյան կամ Պողոս-բեյյան դպրոցը մինչև 1866 թվականը ուներ միայն արական բաժին։ Այդ դպրոցներում ձրի էր ոչ միայն ուսումը. աշակերտներին անվճար տրվում էին դասագրքեր, գրենական պիտույքներ, համազգեստ, ինչպես և օրական մի անգամ՝ ճաշ։ Չնայած այդ պայմաններին, Խորենյան և Պողոս-բեյյան դպրոցներում ընդգրկված էին դպրոցական հասակի երեխաների չնչին տոկոսը։ 1852 թ. Պողոս-բեյյան դպրոցում սովորում էին 18[9], 1867 թ.՝ 32[10] երեխաներ, 1865 թ. Խորենյան դպրոցում սովորողների թիվը 15-ից բարձրացել էր 67-ի[11]։

---

Ալեքսանդրիայի դպրոցին նա կտակել է Մահմուդիեի ջրանցքի «եզերքը գտնված պարտիզավոր երկու տուները», որպեսզի դրանց վարձերից գոյացած գումարով «պզտիկ վարժարան մը շինվի Աղեքսանդրիո մեջ» (նույն տեղում)։

7 «Արշալույս Արարատյան», 18 հունվարի 1852։

8 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 1139։

9 Տե՛ս «Արշալույս Արարատյան», 18 հունվարի 1852։

10 Տե՛ս «Արշալույս Արարատյան», 2 սեպտեմբերի 1867։

11 Տե՛ս «Արմավենի», 16 ապրիլի 1865։



«Արմավենի» լրագիրը հաղորդում է, որ Խորենյան դպրոցում դասավանդում էին «հայերեն, քերականություն, հայոց պատմություն, կրոնագիտություն, թվաբանություն, գաղղիերեն հասարակ ընթերցումն և գիր, հայերեն և գաղղիերեն վայելչագրություն, արաբերեն հասարակ ընթերցումն և գիր» և այլն[12]։ Պողոս-բեյյան դպրոցում դասավանդվող առարկաների մասին պատկերացում է տալիս հետևյալ ծրագիրը.

«Հայերեն.—քերականություն աշխարհաբար, ընդարձակ վարժություններ քերականականք, համանիշ ու հականակ բառեր (գործածությամբ)։ Երջաբերություններ, շարագրություններ (այլ և այլ կարգի), վարժություններ բարդ և ածանց բառից, ուղղագրություն, ուսումն ի բերան։

Գաղղիերեն.—ընթերցանություն, համառոտ քերականություն (հանգերձ վարժությամբ), թարգմանություն գաղղիերենն ի հայ, ուղղագրություն, ուսումն ի բերան։

Արաբերեն.—ընթերցանություն, թարգմանություն, ուղղագրություն։

Կրոնագիտություն.—սրբազան պատմություն։

Պատմություն հայոց։

Ուսողություն.—գործնական թվագիտություն ցավարա։

Աշխարհագրություն.—բնական աշխարհագրություն, Հայաստան (ընդարձակ), Եվրոպա (համառոտ)։

Իրագիտություն.—ընդարձակորեն փոքր փորձերով։

Ձայնական երաժշտություն.—եկեղեցական և ազգային երգեր։

Գրավարժություն.—հայերեն, գաղղիերեն, արաբերեն։

Գեղագրություն և գծագրություն՝ փափաքողաց»[13]։

Ինչպես երևում է, առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում լեզուների ուսուցմանը։ Առաջնահերթ էր մայրենի լեզուն։ Առաջին անգամ դպրոց ընդունված երեխաների հետ միայն հայերեն լեզու էին պարապում։ Պողոս-բեյյան դպրոցի վերաբերյալ մի հաղորդման ասված է. «Գոնե վեց ամիս պետք է միայն անոնց հայերեն խոսել սովորեցնելու, ինչու, որ ըստ սովորության քաղաքիս, արաբերենը տղոց գրեթե մայրենի լեզուն եղած էր»[14]։ Մայրենի լեզվից հետո ֆրանսերենին տրված կարևորությունը բացատրվում է նրանով, որ այդ լեզուն առաջնակարգ դեր էր խաղում առօրյա կյանքում։ Ուշագրավ է նաև

---

12 «Արմավենի», 1 ապրիլի 1865։

13 «Արմենիա», 30 մարտի 1887։

14 «Արշալույս Արարատյան», 2 սեպտեմբերի 1867։

այն, որ արաբերեն լեզուն, որի ուսուցումը միաժամանակ ավելորդ էր նկատվել և փոխարինվել «աճկերենով», վերստին մուտք էր գործել հայկական դպրոցները։

Խորենյան և Պողոս-բեյյան դպրոցները գտնվում էին Թեմական առաջնորդի, մյութևելլիի և վերջինիս կողմից նշանակված հոգաբարձուների վերահսկողության տակ, սակայն, ընդունված սովորության համաձայն, հասարակության յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ անձամբ ստուգելու ուսումնական աշխատանքի վիճակը, դաս լսելու և այլն։ Բացի այդ, ամեն տարվա վերջում հատուկ օր էր նշանակվում «հարցաքննության», այսինքն ուսման տարբեր բնագավառներում ձեռք բերված արդյունքների հրապարակային ստուգման համար։ Աշակերտների «հարցաքննությունը» կատարվում էր հանդիսավորությամբ՝ «հայկազուն երեխյաց և օտարականաց» ներկայությամբ։ Բացի բանավոր հարց-պատասխաններից, ցուցադրության էին դրվում «աշակերտաց հայերեն և գաղղիերեն գրվածքները», և ուրիշ աշխատությանց փորձերը»։ «Հարցաքննությունն» ավարտվում էր հոգաբարձուի կամ դպրոցի տնօրենի տարեկան տեղեկագրի ընթերցումով[15]։

Եգիպտահայ կրթական գործը չէր սահմանափակվում Խորենյան և Պողոս-բեյյան դպրոցներով։ Բազմաթիվ հայ երեխաներ սովորում էին Կահիրեի և Ալեքսանդրիայի օտար դպրոցներում։ Մ. Փորթուգալյանը նշում է, որ հայկական դպրոցներում «միայն աղքատիկ ծնողներու զավակներ կուսնեն, մյուսները, կամ սին հույսերով և կամ ազգային վարժարանի վիճակեն հուսահատելով, ֆրերի, միսիոների վարժոցները ղրկված են»[16]։ Որոշ թվով հայ պատանիներ էլ մասնագիտական կրթություն էին ստանում Եվրոպայում։

1809—1863 թթ. Եվրոպայում պետական միջոցներով կրթություն են ստացել ավելի քան 500 եգիպտացիներ։ Մինչև 1833 թվականն ամեն տարի, իսկ հետագայում պարբերաբար ուսանողներ են ուղարկվել Ֆրանսիա, Ավստրիա, Անգլիա ամենատարբեր մասնագիտությունների գծով։ Այդ ուսանողների թվում եղել են բազմաթիվ հայեր։ 1826—1831 թթ. Եվրոպայում ուսանել են Արթին Չրաքյանը, Խոսրով Չրաքյանը, Ստեփան Դեմիրճյանը, Յուսուֆ ալ-Արմանին, 1828—1835 թթ.՝ Հովսեփ Հեկեկյանը, 1844—1849 թթ.՝ Նուբար Նուբարյանը, 1844—1856 թթ.՝



Ստեփան Խաչատուրյանը, Արթին Խաչատուրյանը, 1845—1863 թթ.՝ Մարկոսյան եղբայրները։ Օսմաներեն-արաբերեն ցուցակներում անընթեռնելի են մնում 113 անուններ[17], որոնցում հավանաբար կան ոչ քիչ թվով հայեր։

Եվրոպայից վերադարձող ուսանողները զգալի ավանդ մուծեցին նոր, աշխարհիկ դպրոցների ստեղծման գործում։ Լուսավորության գերագույն խորհուրդը (Մաջլիս շուրա-լ-մադարիս), որի կազմում ընդգրկված էին Մուխթարը, Արթին Չրաքյանը, Ստեփան Դեմիրճյանը և մի ֆրանսիացի՝ Լյուբբերտը[18], հաստատեց բազմաթիվ դպրոցներ։ Ստորին Եգիպտոսում գործում էին 40, Վերին Եգիպտոսում՝ 26 սկզբնական կրթության դպրոցներ, որոնցում սովորում էին 5,500 աշակերտներ։ Կահիրեում և Ալեքսանդրիայում գործում էին երկու նախապատրաստական դպրոցներ, որոնք ուսանողներ էին պատրաստում մասնագիտական դպրոցների համար։ Բոլոր սովորողները թոշակ էին ստանում։ Բացի այդ, պետությունը հոգում էր սովորողների ուսման, բնակարանի և սննդի ծախսերը։ Յակուբ Արթինը նշում է, որ այդ դպրոցներում կիրառվում էր ուսուցման ֆրանսիական մեթոդը, իսկ դասավանդումները կատարվում էին թուրքերեն լեզվով, որը սակայն աստիճանաբար տեղը զիջում էր արաբերեն լեզվին[19]։

Մասնագիտական դպրոցներից մի քանիսի ստեղծումն ու զարգացումը կապված է հայերի անվան հետ։ 1. Կահիրեի Երկրաչափական հիմնարկը՝ Դար ալ-հանդասան վերակազմվեց Արթին Չրաքյանի և Հովսեփ Հեկեկյանի ջանքերով։ Նրա ուսումնական ծրագիրը կազմվեց Փարիզի էկոլ պոլիտեխնիկի ծրագրի հետևողությամբ, և վերանվանվեց Մադրասաթ ալ-հանդասա, այսինքն երկրաչափական դպրոց[20]։ 2. Արթին Չրաքյանի և Ստեփան Դեմիրճյանի նախաձեռնությամբ հիմնադրվեց Կահիրեի Մադրասաթ ալ-Թասլիմ ալ-իդարատ ալ-մուլկիյան, այսինքն Վարչարարության և թարգմանչության դպրոցը[21]։ 3. Կահիրեի Արհեստից դպրոցի՝ Մադրասաթ ալ-սինաահի տնօրենն էր Հովսեփ Հեկեկյանը։

---

[15] «Մասիս», 24 դեկտեմբերի 1852 և «Արմավենի», 1 մարտի 1865։
[16] «Արմենիա», 28 նոյեմբերի 1894։
[17] J. Heywarth-Dune, An introduction to the History... p. 282.
[18] Նույն տեղում, էջ 192—193։
[19] Y. Artine, L'Instruction publique en Egyte p. 76.
[20] J. Heywarth-Dune, An introduction to the History..., p. 147.
[21] Նույն տեղում, էջ 149։

Հեյվորթ-Դանը նշել է, որ այդ դպրոցը «վերելք ապրեց Հեկեկյանի օրով»[22]։ Հեկեկյանը կարևոր դեր է կատարել նաև Արմենտից դպրոցի՝ Մադրասաթ ալ-ամալիյաթի ստեղծման գործում[23]։ Հ. 1834 թ. Նարուշայի և Շուբրայի գյուղատնտեսական դպրոցի տնօրեն է նշանակվել Յուսուֆ ալ-Արմանին, գրավելով ֆրանսիացի գյուղատնտես Գրանդժանի տեղը, որի դեմ դժգոհություններ էին առաջացել «դպրոցի վատ ղեկավարման պատճառով»[24]։ 1834—1836 թթ. Յուսուֆ Քյաչեֆ անունով մի հայ ղեկավարել է Կահիրեի մետաղագործական դպրոցը։ Մի ուրիշը, Փարիզում սովորելուց հետո, լեզվի դասախոս էր դարձել Կահիրեում[25]։ Անկասկած կան տակավին ուրիշներ, որոնք սակայն մնում են անհայտության մեջ։

Եվրոպայում կրթություն ստացած սերնդի լավագույն ներկայացուցիչները հանդիսացան նաև եգիպտական նոր գրականության հիմնադիրները։ Տիրապետելով մի շարք լեզուների, Աբթին Չրաքյանը և նրա ընկերները ֆրանսերենից թարգմանեցին մասնագիտական գրքեր, դասագրքեր, ինչպես և համաշխարհային գրականության դասական երկեր։ Մոհամմեդ Ալիի հատուկ պատվերով Չրաքյանը թարգմանել է Մաքիավելլի «Իշխանը»։ 1828 թ. պոլսահայ հրատարակիչ Ալթուն Պողոսը կարևոր դեր է կատարել «Ալ-վակայա ալ-Միսրիե» լրագրի ստեղծման գործում։

Քննարկվող ժամանակաշրջանում սկզբնավորվեց եգիպտահայ պարբերական մամուլը։ 1865 թ. մարտի 16-ին Կահիրեում լույս տեսավ «ազգային, քաղաքական և բանասիրական» կիսամսյա «Արմավենի» լրագրի առաջին համարը։ Նրա խմբագիրն էր Աբրահամ Մուրատյանը, հրապարակախոսական փորձ ունեցող մի անձնավորություն, որը 1852—1853 թթ. Նիկոմիդիայում լույս էր ընծայել «Հայրենասեր», 1860—1863 թթ. Փարիզում՝ «Փարիզ» լրագրերը։ «Արմավենիի» արտոնատերն էր Խորենյան դպրոցի հոգաբարձության ատենապետ Հովսեփ Մանուկյանը, որի թիկունքում կանգնած էր Եգիպտոսի առաջնորդական տեղապահ Մկրտիչ եպ. Քեֆսիզյանը։ Կղերաամիրայական հոսանքի ձայնափող «Երևակի» և «Արշալույս Արարատյանի» նման, «Արմավենի» լրագրի ուղղությունը բնորոշ էր թուրքասիրական կամ օսմանյան կողմնորոշումը։ Աբրահամ Մուրատյանը կոչ էր անում «վայելել... այն ամեն առանձնաշնորհությունները, որ օսմանյան բարեխնամ և արդարագութ կառավարությունը ամենայն մարդասիրությամբ հաճեր է պարգևել մեզի»[26]։ Մուրատյանի գաղափարական կրնակիցները փառք էին տալիս, որ «երկինք զմեզ ասանկ արդարագութ, մարդասեր տերության մը հովանավորության ներքև դրեր է, որ մինչ ոչ թե իրր իշխող, այլ հայրաբար խնամեր է, և կխնամե զմեզ. երբեք դժգոհելու, երբեք տրտնջալու տեղիք մը չունինք ամենևին...»[27]։

«Արմավենի» լրագիրը հետևողականորեն ձգտում էր ամրապնդել լուսավորչական եկեղեցու և նրա հովանավորների՝ երբեմնի հզոր մեծատունների խախտված հեղինակությունը։ Մուրատյանի գրչին պատկանող մի առաջնորդարանում ասված է. «Ամեն մարդ պարտավորություն ունի նախ Աստուծո, ապա անձին և ապա ազգության։ Հայտնի է, որ մեր ամենուն ստեղծողը, նախախնամողը և վարձատրողը Աստված է, ուրեմն պետք է, որ մինչ հլու և հպատակ ըլլանք...»[28]։ «Արմավենիի» գրիչները գերադասում էին հանդես գալ «ազգային միաբանության» ջատագովի միանգամայն չեզոք դերում, սակայն իրականում ամենևին էլ չեզոք չէին։ Նրանք սահմանադրական պայքարը համարում էին պայքար հանուն «նորաձև լկտի ազատության մը, որ ոսկեղեն դարու քաղաքականության դիմակով ուրվականի մը պես կթափառի չորս կողմերնիս...»։ Վերջում, այդ տողերը ստորագրող Ներշապուհը հարց է տալիս. «Մի՞թե հայը ծներ է միշտ անմիաբանության ալիքներուն զոհ ըլլալու համար»[29]։ Այդ «ազգային միաբանության» քարոզների նպատակն էր հասարակական ասպարեզից վտարել արմատական և դեմոկրատական հովերով տարված այն գործիչներին, որոնք պայքարում էին կղերաամիրայական հոսանքի դեմ։

Եգիպտահայ անդրանիկ պարբերականը կարճատև կյանք է ունեցել, դադարել է 1865 թ. մայիսին, երբ իրենց բարձրակետին էին հասել հակաքեֆսիզյանական ելույթները[30]։

---

22 Նույն տեղում, էջ 159։

23 Նույն տեղում, էջ 207։

24 Նույն տեղում, էջ 151։

25 R. F. Burton, Of a Pilgrimage to El-Medineh, t. I, p. 123.

26 «Արմավենի», 1 մայիսի 1865։

27 «Արմավենի», 16 ապրիլի 1865։

28 «Արմավենի», 16 մարտի 1865։

29 «Արմավենի», 16 ապրիլի 1865։

30 Տե՛ս նաև աշխատության վերջում զետեղված եգիպտահայ պարբերական (1865—1952) մամուլի ցուցակը։

Եգիպտահայության շրջանում տարածված էին «Բազմավեպ», «Արշալույս Արարատյան», «Մասիս», «Արևելք», «Ավրորա», «Արևելյան մամուլ», «Արմենիա» և այլ լրագրեր ու հանդեսներ։ «Արմենիա» լրագիրը Կահիրեում ուներ 45, Ալեքսանդրիայում՝ 28, Մինեայում՝ 2, Թանթայում, Հեհիայում, Սուակինում՝ 1-ական բաժանորդ։ Բավական տարածված էին նաև Կ. Պոլսի հայատառ թուրքերեն «Մանզումեի էֆքյար» և «Ճերիտեի շարգիե» լրագրերը։

Այս ժամանակաշրջանում Եգիպտոսում հիմնադրվել է երկու տպարան, որոնք սակայն չեն գոյատևել։ 1832 թ. երուսաղեմական Զաքարիան «ակնցի մահտեսի Ալեքսան Եղիազարյանի ծախքով կդնե վիմագրական մամուլ մը, ու ատով առաջին անգամ Եգիպտոսի մեջ կհրատարակե վիմատիպ հայտարարություն մը, որ կպանծացնե երկու հարազատներուն՝ Պետրոսի (Յուսուֆյան) և Ալեքսանի երախտիքը»[31]։ Սակայն այդ տպարանը ուրիշ ոչինչ չի տպագրում և ի վերջո ուղարկվում է Երուսաղեմի հայոց վանքը։ Երկրորդը՝ «Արմավենու» տպարանը, որ հիմնադրվել էր Աբրահամ Մուրատյանի նախաձեռնությամբ, փակվեց լրագրի հրատարակության դադարելու հետ միասին։

Եգիպտահայերն արձագանքում էին համահայկական ձեռնարկումներին, համազգային տոներին ու տարեդարձերին, օգնության ձեռք էին մեկնում տարբեր երկրներում գործող հայկական մշակույթի օջախներին։ 1826 թ. Պողոս Յուսուֆյանի միջոցներով հրատարակվել է Ֆենելոնի «Արկածք Թելեմաքայ» վիպասանության հայերեն թարգմանությունը, որը կատարել էր Վենետիկի Մխիթարյան վարդապետներից Զախջախյանը[32]։ 1860-ական թվականներին Նուբար փաշայի պատվերով ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան ֆրանսերեն թարգմանեց և հրատարակեց հայ մատենագրական ժառանգության մի շարք գանձեր, նպաստելով Եվրոպայում հայագիտության զարգացմանը[33]։ Հիմնականում Նուբարի տրամադրած միջոցներով Կ. Պոլսում հաստատվեց Շահնազարյան-Նուբարյան դպրոցը, որտեղ անվճար կրթություն էին ստանում ուսումնատենչ պատանիներ՝ Կիլիկիայից և ներքին գավառներից[34]։

[31] «Սիոն», 1933, էջ 338։

[32] Տե՛ս Ղ. Ինճիճյան, Դարապատում, հ. 7, էջ 340։

[33] Տե՛ս «Արևելյան մամուլ», 1899, էջ 248։

[34] Տե՛ս «Բյուզանդիոն», 15 հունվարի 1899. Շահնազարյան-Նուբարյան դպրոցի հաստատման համար ծախսվել է 5.000 ոսկի, որից 4.000-ը տրամադրել է Նուբարը։



Հարուստ չի եղել եգիպտահայ երաժշտական կյանքը։ Հիշատակվում են արևելյան երաժշտության մի շարք պոլսահայ վարպետներ, որոնք ապրել և ստեղծագործել են փոխարքայի պալատում։ Դրանցից առաջինը Պապա Համբարձում Լիմոնջյանն է, որին բարձր է գնահատել Մոհամմեդ Ալին։ Եգիպտոսում գնահատված երաժիշտներ էին տամբուրի Ալեքսանը, սրնգահար Նեյզան Զենոբը, Աստիկ Համամճյանը և Պապա Գրիգոր Բեկարյանը։

Հիշատակության արժանի է նաև եգիպտահայերի ստեղծած մատենադարանը և գանձատունը։ Մատենադարանում, որը հաստատված էր Բեյն ալ-Սուրեյնի ազգային առաջնորդարանին կից, պահպանվում էին ձեռագրեր, կոնդակներ և պատմագիտական արժեք ներկայացնող նյութեր։ Բացի բազմաթիվ ավետարաններից, սաղմոսարաններից և այդ կարգի այլ ձեռագրերից, այնտեղ կային մի շարք մեծարժեք մատյաններ, որպիսիք են Գրիգոր Տաթևացու քարոզների, ճառերի և ողբերի մի հարուստ ժողովածու՝ բնագրի մանրանկարներով, հայ եկեղեցական կանոնների մի ժողովածու, մի գիտական ձեռնարկ՝ նվիրված միջնադարյան երկրաչափական և աստղաբաշխական գործիքների նկարագրությանը և այլն։ Մատենադարանում պահվում էին նաև հնդկահայ գեներալ Հակոբ Պետրոսոֆի մինչև այժմ անհայտ արխիվից հանված նյութեր հնդկահայ գաղութի պատմության վերաբերյալ։ Գանձատանը ցուցադրված էին տարբեր ժամանակներում մեծատուների կողմից հայկական եկեղեցիներին նվիրաբերված ոսկերչական հազվագյուտ նմուշներ՝ ոսկյա և արծաթյա անոթներ, թագեր, սկիհներ, խաչեր, գավազաններ, գոտիներ, ինչպես և վարագույրներ, գորգեր, հանդերձանք, նյութական մշակույթի այլ արժեքներ։

## ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

# ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 1882—1917 ԹԹ.

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ: ԳԱՂՈՒԹԻ ՍՏՎԱՐԱՑՈՒՄԸ

XIX դարի վերջերին եվրոպական կապիտալիզմը թևակոխեց իմպերիալիստական ստադիան։ Խոշոր չափեր ընդունեց օտարերկրյա կապիտալի արտահանումը դեպի գաղութային և կախյալ երկրներ, կատարվեց վաճառահանման շուկաների և հումքի աղբյուրների բաժանում՝ իմպերիալիստական պետությունների միջև։ 1883—1897 թթ. Եգիպտոս արտահանվող օտարերկրյա կապիտալի ծավալը կազմում էր 6.6, 1897—1907 թթ.՝ 73.5, 1914 թ.՝ 210 միլիոն եգիպտական ֆունտ, որի հիմնական մասը պատկանում էր բրիտանական, մնացյալը՝ ֆրանսիական, բելգիական, գերմանական և այլ բանկերի։ Վ. Ի. Լենինը գրել է. «Կապիտալի արտահանումն ազդեցություն է գործում կապիտալիզմի զարգացման վրա այն երկրներում, ուր նա ուղղվում է՝ չափազանց արագացնելով այդ զարգացումը»[1]։

Եգիպտոսը դիտելով որպես հումքի աղբյուր և վաճառահանման շուկա, բրիտանական գաղութարարները ձեռնամուխ եղան ոռոգման միջոցների արդիականացման, երկաթուղային ցանցի ընդլայնման, նավահանգիստների վերակառուցման, պետական ֆինանսների կարգավորման և այլն։ 1886 թ. պետական բյուջեն հավասարակշռվեց դրամական ռեֆորմի, ուղղակի և անուղղակի հարկերի բարձրացման և տարբեր բնագավառների հատկացումների կրճատման միջոցով։ 1898 թ. Կահիրեում հիմնադրվեց «Եգիպտոսի պետական բանկը», որը թեև պատկանում էր բրիտանական մասնավոր կապիտալին, սակայն կատարում էր պետա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 321։



կան բանկի ֆունկցիաներ։ Գյուղատնտեսության զարգացումն արտահայտվեց բամբակի մոնոկուլտուրայի ստեղծման մեջ։ Եգիպտոսն ապահովում էր անգլիական տեքստիլ արդյունաբերությանն անհրաժեշտ բամբակի 1/3-ը։ Տարբեր քաղաքներում հաստատվեցին լեռնարդյունաբերության, տեքստիլի, սննդարդյունաբերության, ծխախոտագործության, բամբակազտման և այլ ձեռնարկություններ, որոնք զինված էին ժամանակակից տեխնիկայով։ Աշխուժացավ նաև ներքին և արտաքին առևտուրը։

Եգիպտահայերը զգալի մասնակցություն էին բերում գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի զարգացմանը։ Նրանք ստեղծեցին բամբակի ընդարձակ պլանտացիաներ, ծխախոտագործության, մետաղագործության, կենցաղային իրերի արտադրության արդիական գործարաններ ու մանուֆակտուրաներ, և առևտրական կապեր էին պահպանում տարբեր երկրների հետ։

### 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտոսում ծխախոտագործության զարգացումը Թուրքական կառավարության տնտեսական քաղաքականության հետևանքն էր։ Հայտնի է, որ ռուս-թուրքական պատերազմից հետո սնանկ հայտարարված Թուրքիայի պարտքերը մարելու համար նրա պարտատերերը ստեղծեցին «Օսմանյան պետական պարտքի վարչությունը», որը և ստանձնեց խմիչքեղենի ակցիզը, մետաքսի տասանորդը, ձկնորսության, աղի, ծխախոտի մենաշնորհը և այլն։ 1882 թվականից ծխախոտագործությունը դարձավ ֆրանսիական ՌԵԺԻ-ի մոնոպոլիան։ Ասպարեզից դուրս մղվող հայ, հույն, հրեա ծխախոտագործներից «շատերը հաստատվեցին Եգիպտոսում։ Նրանց երկարամյա փորձի և վարպետության շնորհիվ արմատավորվեց և արագորեն ծաղկեց սիգարետի արդյունաբերությունը»։ Եգիպտոսի տարբեր քաղաքներում կազմակերպվեցին հույների, հրեաների և հայերի (Մաթոսյան, Մելքոնյան, Կամսարական, Իփեկյան և այլք) ծխախոտագործական ձեռնարկություններ, որոնք, զինվելով ժամանակի տեխնիկայի նվաճումներով, դարձան հսկաներ, և նրանց արտադրած «սիգարետների հռչակն աստիճանաբար հասավ աշխարհի չորս ծագերը...»[2]։

[2] „Livre d'Or de la Fédération Egyptienne...", p. 201—202.

Ծխախոտագործությունը, զբաղեցրած բանվորական ուժի քանակով և արտադրամասերի տեխնիկական սարքավորվածությամբ, գերազանցում էր տեքստիլ արդյունաբերությանը, և խոշորագույնը համարվող սննդարդյունաբերությունից հետո գրավում էր առաջին տեղը։ 1913—1914 թթ. եգիպտական ծխախոտագործության մեջ ընդգրկված էին 14—15000 բանվորներ և ծառայողներ, որոնցից շուրջ 10.000-ը, ինչպես նշել է Ա. Գարամանյանը, զբաղված էին հայերին պատկանող ձեռնարկություններում[3]։ Բանվորները ճնշող մեծամասնությամբ ֆելլահներ էին, իսկ ծառայողները (դիրեկտորները, մասնագետները, հարմանջի վարպետները, վարիչները, հաշվապահները, գրասենյակի աշխատողները) գրեթե բոլորն էլ՝ հայեր։ Հայ մասնագետներ ընդգրկված էին նաև հույն և հրեա արդյունաբերողների գործարաններում։ Օրինակ, հայեր էին Ջանաքլիսի Ալեքսանդրիայի գործարանի տնօրենը (Արամ Ծերհատյան) և պատասխանատու աշխատողներից շատերը։

Ձեռնարկությունները կազմակերպված էին եվրոպական գործարանների օրինակով։ Ծխախոտը մանրելը, գլանելը, տուփեր պատրաստելը և այլ աշխատանքներ կատարվում էին մասնագիտացված արտադրամասերում։ Սիգարետի տուփեր պատրաստող արտադրամասը համարյա մի ուրույն գործարան էր, որն ուներ ներքին տարբեր բաժանումներ՝ թուղթ և ստվարաթուղթ ձևելու, սև և գունավոր տպագրության համար և այլն։ Արտադրության ամենապարզ պրոցեսը տարբեր որակի ծխախոտների միախառնումով նոր որակ ստանալն էր, որը, որպես կանոն, գլխավորում էին գործին հմուտ և փորձված հարմանջի վարպետները։ Թուրքական, հունական և այլ ծխախոտների միախառնումով, կամ էլ արտադրության որոշ պրոցեսներում մեքենայի աշխատանքը ձեռքի աշխատանքով փոխարինելով, նրանք ստանում էին դուրեկան համ և բույր ունեցող բարձրորակ սիգարետներ։

Աշխատանքի ըստ նեղ մասնագիտության բաժանումը և արտադրության պրոցեսների զգալի մեքենայացումը նպաստում էին արտադրանքի քանակի ավելացմանը և որակի ազնվացմանը։ Ա. Գարամանյանը գրել է. «Հայերը... շնորհիվ ծխախոտի տեսակները հետզհետե ազնվացնելու իրենց ջանքերուն, կրցած են աստիճանաբար տեղական սպառման ամենամեծ մասը նվաճել...»[4]։ 1895—1896 թթ. եգիպտական

[3] Տե՛ս Ա. Գարամանյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական, տնտեսական և առևտրական ասպարեզներուն մեջ», «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 186։

[4] Նույն տեղում, էջ 179։



սիգարետի «հարյուրին իննսուն» տոկոսը թողարկում էին հայերը[5]։ 1913—1914 թթ. հայ արդյունաբերողներին էր բաժին ընկնում Եգիպտոսում սպառվող ծխախոտի ընդհանուր քանակության «հարյուրի գրեթե յոթանասուն» տոկոսը[6]։ Միայն Մաթոսյան ձեռնարկությունները բավարարում էին ընդհանուր պահանջարկի (օրական 30—35.000 կգ) «գրեթե կեսը» (15.000 կգ)[7]։ Դրանց արտադրության ծավալն է՛լ ավելի մեծացավ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ընկերությունը կապալով վերցրեց Եգիպտոսում և Սուդանում գտնվող անգլիական զորքերին ծխախոտ մատակարարելու մենաշնորհը։

Մաթոսյան անվան ընկերությունը եգիպտական սիգարետի խոշորագույն արդյունաբերություններից մեկն էր։ Նրա հիմնադիրները, Նիկոմեդիացի ծխախոտի առևտրականներ Հովհաննես և Կարապետ Մաթոսյանները, 1881—1882 թթ. հաստատվելով Եգիպտոսում, իրարից անկախ ձեռնարկում են սիգարետի արտադրություն։ Հովհաննես Մաթոսյանն Ալեքսանդրիայում հիմնում է «Մաթոսյան ծխախոտի տունը», որը, չնայած պիտակին, մի համեստ արհեստանոց էր։ Ա. Ալպոյաճյանի պատմելով այն պարզապես «խանութ մըն էր»՝ ծխախոտի մշակման ամենանախնական գործիքով՝ երկու հավանով, և օրական մշակում էր ընդամենը մի քանի կիլոգրամ ծխախոտ[8]։ Այդպիսին էր նաև նրա կրտսեր եղբոր՝ Կարապետ Մաթոսյանի 1886 թ. Կահիրեում կազմակերպած «գործարանը», թեև կոչվում էր բավական ծանրակշիռ անունով՝ «Կ. Մաթոսյան և ընկերություն»։ 1896 թ. Հովհաննես և Կարապետ Մաթոսյանները միավորվելով ստեղծում են «Հ. և Կ. Մաթոսյան և ընկերություն ծխախոտի տունը», որը և 1898 թ. վերանվանվում է «Մաթոսյան անվան ընկերություն»։ 1900 թ. ընկերության կապիտալը կազմում էր 100.000, իսկ 1901—1902 թթ.՝ 150.000 եգիպտական ոսկի[9]։ Նրա ակցիաները (սկզբում 10.000, ապա՝ 15.000) «տարամերժորեն» բաժանված էին Մաթոսյան ընտանիքի անդամների միջև։ Ընկերությունը ուներ չորս խոշոր գործարաններ, առաջինը՝ Գիզեում, երկրորդը՝ Ալեքսանդրիայում, երրորդը՝ Թանթայում և չորրորդը, որը կոչվում էր «Գևորգ Սարգսյան և ընկ.»՝ Աբութեում։ Ընկերության վարչական մո-

[5] Տե՛ս «Ճերիդեի Շարգիե», 3 ապրիլի 1896։

[6] Ա. Գարամանյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 179։

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 181։

[8] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, էջ 1685։

[9] Տե՛ս Ա. Գարամանյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 180։

ղովի անդամներն էին Հ. և Կ. Մաթոսյանները, Տիրան Փիլիպոսյանը, Բյուզանդ Մասրաֆը, Պոլ Հակոբյանը, Անտոն Զամարյանը և Հովհաննես Գատիֆյանը, բոլորն էլ Մաթոսյան ընտանիքի ազգականներ։ Եգիպտական կառավարությունը, բարձր գնահատելով Մաթոսյան անանուն ընկերության ծառայությունները ծխախոտագործության զարգացման ասպարեզում, նրա հիմնադիր Հովհաննես Մաթոսյանին[10] շնորհել է բեյության աստիճան և պարգևատրել Նեղոսի առաջին և երկրորդ կարգի շքանշաններով։

Գ. և Կ. Մելքոնյան ծխախոտի տունը հիմնադրվել է 1882 թ. Զագազիգում, ապա տեղափոխվել է Ալեքսանդրիա։ Անհնահամեստ միջոցներով սկզբնավորված այս ձեռնարկությունը գնալով բարգավաճել էր. 1888 թ. Ֆայումում շարք է մտել նրանց երկրորդ, 1900 թ. Կահիրեում՝ երրորդ գործարանը։ Հետագայում Կահիրեում կառուցվել է գործարանային սեփական շենք և այնտեղ են տեղափոխվել Ալեքսանդրիայի և Ֆայումի ձեռնարկությունները։ Մելքոնյան ծխախոտի տունը ներկայացուցիչներ ուներ Եգիպտոսի և Սուդանի համարյա բոլոր քաղաքներում, ինչպես և կապեր էր պահպանում Եվրոպայի և Հեռավոր Արևելքի տարբեր երկրների հետ։ Նրա մակնիշը կրող սիգարետները, առանձնապես «Մագենը», լայն սպառում ունեին[11]։

Ա. և Տ. Կամսարական ծխախոտագործական ձեռնարկությունը հաստատվել է 1895 թ. Զագազիգում։ Հիմնադիրներն էին երևանցի Խաչատուր Կամսարականի որդիներ Արմենակ և Տիգրան[12] Կամսարականները, որոնք Կ. Պոլսում մեծ հմտություն էին ձեռք բերել ծխախոտագործության բնագավառում։ Սկզբում նրանք գործել են արդյունաբերող Մ. Սարգսյանի հետ, ստեղծելով «Կամսարական եղբայր և Սարգսյան ընկերությունը», որը 1897 թ. լուծարքի է ենթարկվել, և ձեռնարկությունը, դառնալով Կամսարականների սեփականությունը, վերանվանվել է «Կամսարական եղբայրք»։ 1919 թ., Տիգրան Կամսարականի ասպարեզից քաշվելուց հետո, ձեռնարկությունն ամբողջովին անցնում է Արմենակ Կամսարականի տնօրինությանը[13]։ Նրանց արտադրած սիգարետները, հատկապես «Արմենիզմե» մակնիշով, բարձր էր գնահատված Եգիպտոսում և Սուդանում։

Ն. և Ա. Հեքերյան ձեռնարկությունը կազմակերպվել է 1896 թ. Կահիրեում։ Համեստ, արհեստանոցային պայմաններից այն դարձել է արդիական մեքենաներով կահավորված խոշոր գործարան, որի թողարկած սիգարետների և սիգարների պահանջարկը բավական մեծ էր Սուդանում, Եվրոպայի տարբեր երկրներում և Հյուսիսային Ամերիկայում[14]։ 1909 թ. հետո եգիպտական ծխախոտագործության վերաբերյալ հաղորդումներում Հեքերյան ձեռնարկությունը չի հիշատակվում։

Գ. Իփեկյան ծխախոտի տունը հիմնադրվել է 1889 թ. Ալեքսանդրիայում և մինչև 1895 թ. զբաղվել է թուրքական ծխախոտի մեծածախ առևտրով։ Նրա հիմնադիր Նուրիջան Իփեկյանի որդին՝ Գևորգ Իփեկյանը, ստանձնելով Ալեքսանդրիայի մասնաճյուղի գործերը, զբաղվում է նաև սիգարետի առևտրով, իսկ 1902 թ. անցնում է սիգարետի արտադրության։ Կարճ ժամանակաշրջանում Իփեկյան ձեռնարկությունն առաջնակարգ տեղ է գրավում եգիպտական ծխախոտագործության ասպարեզում[15]։ Բարձր են գնահատվել նրա «Սամսոն մագենս» մակնիշով սիգարետները։

Մեզ հայտնի աղբյուրներում տեղեկություններ չկան Սանոսյան, Փեմբեճյան, Տուտյան-Ասլան և մի շարք այլ ծխախոտագործական ձեռնարկությունների մասին։ Դրանք, հավանաբար, երկարատև կյանք չեն ունեցել, հաստատվել են 1880-ական թվականներին և 1896 թվականից հետո այլևս չեն հիշատակվում[16]։

Այսպիսով, Թուրքիայից արտագաղթող հիմնականում հայ և հույն վարպետների նախաձեռնությամբ Եգիպտոսում սկզբնավորվեց և զար-

[10] Հովհաննես Մաթոսյանը կատարել է բազմաթիվ բարեգործություններ. դրամական օգնություն է տվել Զմմառի հայ կաթոլիկ վանքին, եգիպտահայ կաթոլիկ համայնքին և այլն։ 1924—1927 թթ. նրա տրամադրած միջոցներով պատսպարվել են 50 հայ որբուհիներ։ Վախճանվել է 1927 թ. Կահիրեում։

[11] Տե՛ս Ա. Դարամաճյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 182։ Մելքոնյանները զգալի միջոցներ են տրամադրել մշակութային նպատակների համար։ Նրանց նվիրաբերությամբ կառուցվել են Ալեքսանդրիայի հայկական մանկապարտեզը և Կիպրոսի Մելքոնյան միջնակարգ դպրոցի շենքերը։

[12] Արևմտահայ անվանի գրող Տիգրան Կամսարականն է, «Վարժապետին աղջիկը» հայտնի վիպակի հեղինակը։



[13] Տե՛ս Վ. Զարզարյան, Հիշատակարան տարեգիրք, էջ 69։

[14] Տե՛ս „Twentieth Century impression of Egypt", 1909, p. 495.

[15] Տե՛ս Ա. Դարամաճյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 185։ Ի դեպ, եգիպտահայ արդյունաբերողները խոշոր դեր էին կատարում նաև հարևան երկրների ծխախոտագործության մեջ։ 1909—1910 թթ. եգիպտահայ Մ. Գևորգոֆը, ձեռք բերելով Եթովպիայի ծխախոտագործության մենաշնորհը, ձեռնարկություններ էր հաստատել Ադիս-Աբեբայում, Հարարում և Դիրեդավայում։

[16] Տե՛ս «Ճերիդե Շարգիե», 3 ապրիլի 1896։

գացման բավական բարձր աստիճանի հասած ծխախոտագործությունը։ Ստեղծվեցին արդիական տեխնիկայով զինված բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց արտադրանքը ոչ միայն բավարարում էր ներքին շուկայի կարիքները, այլև արտահանվում էր տարբեր երկրներ։ Արտադրության որակով ու ծավալով և զբաղեցրած բանվորական ուժի քանակով հայ կապիտալիստներին պատկանող ձեռնարկությունները գրավում էին առաջին տեղը։

Եգիպտահայ արդյունաբերողները բավական կարևոր դեր էին կատարում մետաղագործության բնագավառում։ Երվանդ Օտյանը գրել է. «Բավական թվով ձուլարաններ կան թե Աղեքսանդրիա և թե Կահիրեի մեջ, ամենքն ալ հայ արհեստավորներու պատկանող»[17]։ Դրանց մի խումբը արտադրում էր շինարարության մեջ օգտագործվող երկաթյա և պղնձյա իրեր՝ ծորակ, ծխնի, բանալի, բռնակ, ջրատար խողովակներ, ինչպես նաև երկաթյա դռներ, ցանկապատեր, հյուրանոցների կամ հասարակական շենքերի պատվող դռներ և այլն։ Այդ կարգի իրեր էին պատրաստում Բաղճյանի, Մ. Մաճարյանի և Ա. Կոկանյանի ձուլարանները։ Ձուլարանների մի ուրիշ խումբ էլ մասնագիտացած էր գյուղատնտեսական մեքենաների, կառքերի, գազով և նավթով գործող շարժիչների, ջրհան պոմպերի վերանորոգման և դրանց առանձին մասերի արտադրության մեջ։ Բավական կարևոր ձեռնարկություն էր Հակոբ Հակոբյանի ձուլարանը, որը կատարում էր գյուղատնտեսական «գործիքներու շինություն և նորոգություն», բացում էր արտեզյան ջրհորներ։ Հակոբյանը հնարել և պատենտավորել էր «արտեզյան հորեր փորելու դրություն մը», որն արժանացել էր պետական խրախուսանքի[18]։

Մի շարք մանուֆակտուրաներ արտադրում էին կենցաղային գործածության իրեր՝ յաղմա, զարդաշղարշ, մանուսա և այլն։ Ա. Գարամանյանը նշում է, որ մինչև «հայկական մեծ ջարդը», այսինքն 1896—1897 թթ. յաղման «գրեթե ամբողջությամբ» ներմուծվում էր Կ. Պոլսից, իսկ այժմ «10-է ավելի գործարաններ» կային Կահիրեում և Աղեքսանդրիայում[19]։ Յաղմայի մի տարբերակն էր արծաթաղօծ թելերով բանված զարդաշղարշը։ Ասիութում գործում էին զարդաշղարշ և մանուսա արտադրող մի շարք մանուֆակտուրաներ, որոնք, սակայն, չունենալով

[17] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 478։

[18] Ա. Գարամանյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 227։

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 222։



եվրոպական համասեռ ապրանքների մրցակցությանը, փակվեցին։ 1913 թ. մնացել էր դրանից միայն մեկը՝ «Գ. Իշխանյան և որդիք գործարանը»[20]։ Զարդաշղարշները սպառվում էին ոչ միայն տեղում, այլև արտահանվում էին Եվրոպա և Ամերիկա[21]։

Այդ մանուֆակտուրաների արտադրանքները հաճախ հաջող քննություն էին բռնում։ Ըստ Երվանդ Օտյանի, մինչև 1900 թվականը, օրինակ, մետաղյա իրերը «ամենն ալ» ներմուծվում էին Եվրոպայից, հետագայում տեղական արտադրանքը քանակով այնքան շատ էր, որակով այնքան բարձր, որ գրավել էր համապատասխան «եվրոպական ապրանքի տեղը»[22]։

Տվյալներ չեն պահպանվել մանուֆակտուրաներում զբաղված բանվորական ուժի և նրանց կապիտալների ծավալի վերաբերյալ։ 1896 թվականի արխիվային մի վավերագրում ասված է, որ ոմն եգիպտահայ արհեստագործական կապալառու Տիգրանը ֆրանսիական հյուպատոսից ստացել է մի պատվեր, որը «2.000 ոսկիե մինչ 2.500 ոսկիի գործ» էր, և որի վրա աշխատել են 150—200 բանվոր[23]։ Այդ հաղորդումից կարելի է մակաբերել, որ եղել են բազմամարդ և շրջանառության բավական մեծ կապիտալ ունեցող մանուֆակտուրաներ։

XX դարասկզբում ուժեղացան նաև հայ արհեստավորների դիրքերը, բարձրացավ նրանց վարկն ու հեղինակությունը։ «Ազատ բեմ» լրագիրը գրում էր. «Հայ արհեստավորին կպարտինք այն պատվաբեր ժողովրդականությունը, զոր ձեռք անցուցինք վերջերս»[24]։

Առանձնապես մեծ հաջողությունների էին հասել ոսկերիչները։ Սատեքյարությունը և մխլաչիչիությունը դարձել էին համարյա ինքնուրույն արհեստներ՝ համապատասխան վարպետներով և ուրույն գործիքներով։ Սատեքյարները ձուլելու, կռելու, դրվագելու, դրոշմելու և հյուսելու եղանակով պատրաստում էին ոսկյա զարդեր՝ վզնոց, ապարանջան, մատանի, օղ և այլն։ Նրանք լայնորեն կիրառում էին ոսկեջրելու կամ ոսկեզօծելու եղանակը, ինչպես նաև մի յուրօրինակ տեխնիկա՝ ոչ-մետաղյա իրերը (փայտ, ոսկոր, կաշի, ապակի) կրակի կամ կպչող նյութերի օգնությամբ ոսկեպատելու համար։ Սատեքյար վար-

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 229։

[21] Նույն տեղում։

[22] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 477։

[23] ՊԱԹ արխիվ, Թ. Աղաւոյանի ֆոնդ, թ. 12, վ. 4977։

[24] «Ազատ բեմ», 16 հունվարի 1907։

պետներից յուրաքանչյուրը մասնագիտացած էր ոսկին մշակելու եղանակներից մեկի կամ երկուսի մեջ։ Ոսկերիչ Խնդամյանը մատանիների և օղերի հռչակված վարպետ էր։ Վահան Մաճկյանը պատրաստում էր գավազանի արծաթյա և ոսկյա նրբաճաշակ բռնակներ[25]։ Հայտնի վարպետներ էին նաև Գ. Երկանյանը և Կ. Արիֆյանը։

Մինայիչությունը բաժանված էր երկու մասնագիտական ճյուղերի՝ ոսկու և թանկագին քարերի վրա խաղիչի օգնությամբ փորագրելը և թանկագին քարերի ագուցելը կամ ընդելուզելը ձուլածո, կռածո և այլ տեխնիկայով պատրաստված ոսկյա կամ արծաթե իրերի վրա։ Դա մեծ վարպետություն և նուրբ ճաշակ պահանջող աշխատանք էր, որի հայտնի մասնագետները պոլսեցիներ էին[26]։ Ճանաչված վարպետներ էին Պ. Գևորգյանը, Զ. Քերեզչյանը և, մանավանդ, Մ. Պենտերյանը, որի «թանկագին քարերու վրա փորագրությունները միշտ գմայլանք» էին պատճառում դիտողներին[27]։ Տեխնիկական բազմազան եղանակների կիրառումը, աշխատանքի բաժանման խորացումը վկայում են եգիպտահայ ոսկերչության զարգացման բարձր աստիճանի մասին։

Բավական զարգացած էր նաև փայտի, քարի և տարբեր մետաղների վրա փորագրության արհեստ-արվեստը։ Փայտի փորագրիչները պատրաստում էին սկահակ-հուշարձաններ, կահույք, տնային գործածության իրեր, ցուցադրական առարկաներ և այլն։ Քարի փորագրությունը կամ վիմագրությունը գլխավորապես սպասարկում էր գունավոր տպագրությանը։ Բավական բարդ էր մետաղների՝ ոսկու, արծաթի, ցինկի և պողպատի վրա փորագրելը։ Առաջին երկուսը մտնում էին ոսկերչության մեջ։ Պողպատի փորագրիչները պատրաստում էին նուրբ կաղապարներ, ցուցանակներ, կենցաղային իրեր և այլն, ցինկի փորագրիչները կամ ցինկոգրաֆներն աշխատում էին հրատարակչությունների համար։ Հռչակված փորագրիչ վարպետներ էին Ա. Յենտյանը, Ե. Գարագաշյանը, Ս. Զալըկյանը, Կ. Առաքելյանը և Բ. Մինասյանը։

Եգիպտական կենցաղում նոր էր մուտք գործել լուսանկարչությունը։ Նրա ակնառու վարպետների մեջ կային նաև բազմաթիվ հայեր, որոնք բարձր էին գնահատված Կահիրեում, Ալեքսանդրիայում, Թանթայում, Լյուքսորում և այլ քաղաքներում[28]։ Հմուտ լուսանկարիչներ էին Լեբեճյանը, Ուզունյանը, Սերեֆյանը, Ալպյանը, Մելիքը և ուրիշներ։ Լեբեճյանին է վիճակվել Փարիզի և Չիկագոյի միջազգային ցուցահանդեսներում եգիպտական լուսանկարչությունը ներկայացնելու պատիվը[29]։

Կահիրեում, Ալեքսանդրիայում և մյուս քաղաքներում գործում էին մեծ թվով հայ դերձակներ, շապկագործներ, կոշկակարներ, ինչպես և էլեկտրական սարքեր, շարժիչներ, զանգեր վերանորոգող արհեստավորներ։ Նրանք հոգում էին բնակչության ամենօրյա կարիքները և նպաստում Եգիպտոսի արաբ աշխատավորության շրջանում տարբեր արհեստների ծավալմանը։ Երվանդ Օտյանը նշել է. «(Արաբները) հայերու քով աշակերտելով սորված են արհեստ և ունին այժմ խանութ (արհեստանոցի—Հ. Թ.) տեր եղած են»[30]։

Այսպիսով, եգիպտահայերը բավական կարևոր դեր էին կատարում ծխախոտագործության, մետաղագործության, տեքստիլ արդյունաբերության և մի շարք արհեստների զարգացման գործում։ Հայ ոսկերիչները, փորագրիչները, լուսանկարիչները աչքի էին ընկնում վարպետությամբ և ճաշակով։

## 2. ԱՌԵՎՏՈՒՐԸ

Անգլիական տիրապետության հաստատումից հետո Եգիպտոսի ներքին և արտաքին առևտուրը զգալի չափով աշխուժացավ։ Ավելացավ ապրանքաշրջանառության ծավալը, արտահանվող և ներմուծվող ապրանքատեսակների կազմը, բարեփոխվեցին երկաթուղային, ջրային և այլ տրանսպորտի պայմանները, ընդլայնվեց բանկերի և մյուս վարկային հիմնարկների ցանցը, արմատավորվեցին առևտրի եվրոպական, հիմնականում անգլիական ձևերը, ստեղծվեցին առևտրական ընկերություններ, բացվեցին հանրախանութներ, մեծացավ ինչպես եվրոպական, այնպես էլ «ոչ-ազգային» տարր համարվող հույն, հրեա, հայ առևտրականների թիվը։ Լ. Ա. Ֆրիդմանը իրավացիորեն գրել է. «Բնակչության հենց այդ խավերն էին առավելապես զբաղվում առևտրով, ֆինանսական գործարքներով...։ Նրանց միջավայրում էին հիմնականում ձևավորվում կոմպրադորների հոծ կադրերը, իսկ իրենք, եգիպ-

[25] Տե՛ս Ա. Գարամանյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 256։

[26] Տե՛ս նույն տեղում, էջ 254։

[27] Նույն տեղում։

[28] Տե՛ս նույն տեղում, էջ 255։

[29] Տե՛ս Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 476։

[30] Նույն տեղում, էջ 478։

տացիները, դուրս էին մղված այդ շահավետ գործունեության ասպարեզից...»[31]։

Մինչև 1890-ական թվականները հայ առևտրականները զիջում էին այսպես կոչված «ոչ-ազգային» կապիտալի մյուս ներկայացուցիչներին։ 1882 թ. «Արձագանքը» գրում էր. «Այժմ Աղեքսանդրիայի մեջ հայոց (առևտրական) տների թիվը հասնում է 70—80-ի, որոնք մեծ մասամբ զմյուռնացի են»[32]։ 1886 թ. Կահիրեում նրանց թիվը հասնում էր 250-ի[33]։ Հավանական է, որ այդ տարիներին Եգիպտոսում կային 350—400 հայ առևտրականներ, որոնք կամ ուղղակի եվրոպական գործարանների գործակալներ էին, կամ էլ դրանց Թուրքիայի գործակալների ներկայացուցիչները։ Հայկական մամուլը դժգոհում էր, որ «հույները տիրապետած են առևտրական հրապարակին։ Հրեաները հրաշքի պես բաներ կգործեն...», իսկ հայը «ետ մնացեր է հույնեն, հրեայեն և եվրոպացիեն..., իր խանութն առաջվա պես հետ ընկած հին անկյունն է, վրան հաճախ անուն չկա, պատերը մրոտ ու փոշոտ են...»[34]։ 1896 թվականի արխիվային մի վավերագրում ասված է, որ Կահիրեում հայկական երկու ունիվերսալ խանութներ՝ «Բազար դը Կոստանդինոպոլը» և մեկ ուրիշը սնանկացել են «հրեից հետ մրցման չդիմանալով»։ Միայն առաջին խանութի վնասն անցնում էր 10.000 եգիպտական ֆունտից[35]։

Բայց հետագա տարիներին իրավիճակը փոխվեց, եգիպտահայ առևտրականները սկսեցին «հաջող կերպով մրցել» հույն և հրեա առևտրականների հետ։ Դրան նպաստում էր նախ և առաջ այն, որ համիդյան ջարդերի հետևանքով ստեղծված անվստահությունը Թուրքիայի հայերին մղում էր իրենց կապիտալների զգալի մասն արտահանել այլ երկրներ, այդ թվում և Եգիպտոս։ 1890—1900-ական թվականներին Կահիրեի խոշորագույն բազարներից ալ-Համզավիում վաճառատներ և պահեստներ հաստատեցին «Գևորգ Թոփալյան», «Կ. Քեշյան», «Գաբրճյան եղբայրք», «Ստեփան Իփլիկճյան», «Գևորգ Մուրատյան», «Սարգիս Մանուկյան և որդիք» և ուրիշ պոլսահայ ու զմյուռնահայ խոշոր առևտրական հիմնարկներ, որոնք ստիպված էին բավական դժվա-

[31] Л. А. Фридман. Капиталистическое развитие Египта, стр. 281.

[32] «Արձագանք», 1882, էջ 306։

[33] Տե՛ս «Արմենիա», 16 հունվարի 1886։

[34] «Բյուզանդիոն», 30 հոկտեմբերի 1898։

[35] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 9451։



րին պայքար մղել իրենց գոյության պահպանման համար։ Եգիպտական շուկան վերածվել էր «գերազանցապես մրցման» ասպարեզի, որտեղ այլևս հնարավոր չէր միայնակ հանդես գալ կամ սահմանափակ կապիտալով տոկալ եվրոպական անանուն ընկերությունների մրցակցությանը։ Գոյության պայքարն եգիպտահայ առևտրականներին ստիպում էր միավորել կապիտալները՝ ընկերություններ կազմելու միջոցով։ 1907 թ. տնտեսական ճգնաժամից հետո, երբ հրամայական դարձավ խոշոր կապիտալների անհրաժեշտությունը, ստեղծվեցին հայ-եգիպտական, հայ-եվրոպական առևտրական ընկերություններ։ Հայ-եգիպտական համագործակցություններ էին «Սագեն և ընկ-ը», «Եգիպտական գարեջրագործների անանուն ընկերությունը» և ուրիշներ։ Ավելի հզոր էին հայ և եվրոպական կապիտալիստների միավորումով ստեղծված «Եգիպտոսի առևտրական ձեռնարկումների անանուն ընկերությունը» (Վ. Խորասանճյան), «Յորկշայր ինշուրընս կոմպանին» (Ա. Ֆենոյան) և ուրիշներ։ Այսպիսով, եգիպտահայ առևտրականներն ապահովեցին «իրենց բաժինը Եգիպտոսի հրապարակի վրա»[36]։

Ինչպես նախկինում, Անգլիան մնում էր Եգիպտոսի խոշորագույն հայթայթիչը և հումքի գնորդը։ Նրանից հետո գալիս էին Ֆրանսիան, Թուրքիան, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Գերմանիան, Բելգիան, Ճապոնիան, Ռումինիան։ Եգիպտոսը ներմուծում էր երկաթ, հանքածուխ, նավթ, անտառանյութ, ծխախոտ, մեքենաներ, կահույք, ալյուր, ըմպելիքներ և բազմատեսակ արդյունաբերական ապրանքներ, արտահանում էր բամբակ, սիգարետ, բրինձ, սոխ, ջայլամի փետուր, փղոսկր և այլն։

Եգիպտոսի համար առանձնահատուկ նշանակություն ուներ բամբակի արտահանումը։ Ընդարձակվեցին բամբակի պլանտացիաները, կրկնապատկվեց արտահանվող բամբակի ծավալը՝ կապված միջազգային շուկայում պահանջարկի ավելացման հետ։ Բամբակի արտահանումը հիմնականում կատարում էին անգլիական, ֆրանսիական, գերմանական բանկերը։ Դրանց գործակալները, որոնք մեծ մասամբ հույն և հրեա առևտրականներ էին, շրջում էին բամբակաշատ շրջանները և բերքը գնում ուղղակի գյուղացիներից։ Մինչև անգամ հետին գյուղերում բույն դրած հույն սրճարանատերերը, գինեվաճառները և հրեա փերեզակները զբաղվում էին «բամբակի վաճառականությամբ»[37]։

[36] Ա. Գարամանյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 224։

[37] «Բյուզանդիոն», 30 հոկտեմբերի 1898։

Հայ առևտրականները համարյա դեր չունեին բամբակի արտահանման գործում։

Եգիպտոսն արտահանում էր տեղական արդյունաբերության հազվագյուտ արտադրանքներ։ Դրանցից գլխավորը սիգարետն էր։ Եգիպտահայ արդյունաբերողներից շատերը, թեև վաճառման կետեր ու ներկայացուցիչներ ունեին արտասահմանում, սակայն նրանց արտադրանքի սպառման հիմնական շուկան Եգիպտոսն էր և Սուդանը։ Մաթոսյան և Մելքոնյան գործարանները սիգարետ էին արտահանում Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Ճապոնիա, Սիամ և ուրիշ երկրներ, բայց նրանց «արտածումը բաղդատաբար շատ քիչ» էր[38]։ 1910 թ., երբ եգիպտական սիգարետների առաջ մաքսային արգելքներ դրվեցին Եվրոպայի մի շարք երկրներում, նրանք առհասարակ հրաժարվեցին արտահանման այդ ճյուղից։ Էլ-Գրիտլին նշում է. «Եվրոպական շուկայում եգիպտական սիգարետների սպառումը անկում կրեց, երբ մաքսային արգելքներ դրվեցին Գերմանիայում և Ֆրանսիայում»[39]։

Եգիպտահայ առևտրականներն արտահանում էին նաև մի շարք երկրորդական նշանակության ապրանքներ։ Դրանցից որոշ հետաքրքրություն էր ներկայացնում ջայլամի փետուրի և զարդաշղարշների արտահանումը։ Հայկ Էբիգլերի ջայլամաբուծարանը գտնվում էր Մաթարիայում, նրա արտադրանքը՝ ջայլամի փետուրներն արտահանվում էին գլխավորապես Անգլիա և Ֆրանսիա։ Վաճառական-արդյունաբերող Գ. Զաքքեյանը Եվրոպա և Ամերիկա էր արտահանում մեծ քանակությամբ եգիպտական զարդաշղարշներ։ Կային նաև մի շարք հանձնակատար առևտրականներ կամ կոմիսիոններներ, որոնք միջնորդի դեր էին կատարում արտասահմանյան գնորդի և տեղական վաճառողի միջև։

Եգիպտահայ առևտրականները հիմնականում զբաղված էին ներմուծվող ապրանքների առևտրով։ 1913 թ. Եգիպտոսի ընդհանուր ներմուծումները դրամական արժեքով կազմում էին 25.200 հազար եգիպտական ֆունտ, որից 4—5 միլիոնը, ինչպես նշել է Ա. Գարամանճյանը, բաժին էր ընկնում հայ առևտրականներին[40]։ Կահիրեում, Ալեքսանդրիայում և մյուս քաղաքներում գործում էին հայապատկան մի քանի հարյուր ներմուծող հիմնարկներ, որոնցից 74-ը եվրոպական գործարանների պաշտոնական ներկայացուցիչներ էին։ Երկրորդ կամ երրորդ

[38] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 477։

[39] *El-Gritly*, The Structure of Modern Industry..., p. 509.

[40] Տե՛ս Ա. Գարամանճյան, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 222։



կարգի առևտրական հիմնարկները սպասարկում էին Եգիպտոսում պաշտոնական ներկայացուցիչ չունեցող գործարաններին և ներմուծումներ էին կատարում պայմանագրային կարգով։

Բերվող աղյուսակը[41], պակասավոր լինելով հանդերձ, կարող է որոշ պատկերացում տալ եգիպտահայ առևտրականների ներմուծած ապրանքատեսակների և նրանց արտասահմանյան կապերի մասին։

| Ներմուծվող ապրանքի տեսակը | Ներմուծող հիմնարկներ | Արտահանող երկրներ |
|---|---|---|
| 1. Նավթ | 1 | Ռուսաստան (Բաքու) |
| 2. Հանքածուխ | 1 | Անգլիա, Բելգիա, ԱՄՆ |
| 3. Երկաթ և ցեմենտ | 2 | Բելգիա |
| 4. Երկաթեղեն և մեքենա | 5 | Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ |
| 5. Քիմիական պարարտանյութ | 1 | Բելգիա |
| 6. Ծխախոտ | 6 | Թուրքիա, Բուլղարիա, Հունաստան |
| 7. Կաշի | 6 | Ֆրանսիա, Իտալիա |
| 8. Բրդյա և բամբակյա տարբեր գործվածքներ | 12 | Անգլիա |
| 9. Տարբեր կերպասներ | 9 | Թուրքիա |
| 10. Կոշիկ | 2 | Անգլիա, ԱՄՆ |
| 11. Արդուզարդի իրեր | 5 | Անգլիա, Գերմանիա, Իտալիա, Թուրքիա, Ճապոնիա |
| 12. Կահույք և տնային գործածության իրեր | 4 | Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա |
| 13. Լուսանկարչական մեքենաներ և սարքեր | 3 | Անգլիա, Ֆրանսիա |
| 14. Թուղթ և գրենական պիտույքներ | 1 | Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա |
| 15. Ալյուր | 2 | Ռուսաստան, Կանադա, Ռումինիա, |
| 16. Չորացրած պտուղ | 2 | Թուրքիա, Հունաստան, Իտալիա |
| 17. Թանկագին քարեր | 8 | Անգլիա, Ֆրանսիա, Ճապոնիա |
| 18. Հյություններ | 3 | Տարբեր երկրներ |
| 19. Պարան | 1 | Իտալիա |

Եգիպտահայ առևտրականները ներմուծում էին ամենատարբեր տեսակի ապրանքներ՝ սննդամթերքներ, բրդյա, բամբակյա, մետաքսյա գործվածքներ, շինանյութեր, մեքենաներ, հեծանիվներ, էլեկտրական սարքեր, հեռախոսային և լուսանկարչական ապարատներ, գրամաֆոններ, ձայնապնակներ, թուղթ, կուլտ-կենցաղային ապրանքներ, արդու-

[41] Ըստ Գարամանճյանի տվյալների, «Հայ տարրը Եգիպտոսի պետական...», էջ 225—229։

ղարդի իրեր և այլն։ Նրանց ներմուծումների նմարում առանձնապես ծանր էին կշռում նավթն ու ծխախոտը։

Եգիպտական նավթը, լինելով ցածրորակ, աննշան չափով էր օգտագործվում, ուստի անհրաժեշտ ամբողջ նավթը ներմուծվում էր Ամերիկայից, Ռումինիայից և Կովկասից։ Բաքվի նավթը, որի վաճառքով զբաղվում էր Ա. Ի. Մանթաշովի առևտրական ընկերության Եգիպտոսի մասնաճյուղը, բավական լայն սպառում ուներ և, ինչպես նշել է Գաբամաճյանը, Եգիպտոսի «գազյուղի հրապարակին շատ կարևոր բաժին մը» պատկանում էր այդ ընկերությանը[42]։ Նրա կենտրոնը գտնվում էր Ալեքսանդրիայում, ուր մթերվում էր նավթը և ուղարկվում երկրի տարբեր մասերը։ Ընդհանուր ներկայացուցիչն էր Հովհ. Մուրաֆյանը։ Համարյա բոլոր քաղաքներում և գյուղերում գործող նրա մասնաճյուղերի աշխատողները մեծ մասամբ հայեր էին։

Ծխախոտի ներմուծման և տեղում սպառման ասպարեզը հիմնականում գտնվում էր հայ և հույն արդյունաբերողների ձեռքում։ Նրանք մնայուն գործակալներ ունեին ծխախոտ արտահանվող տարբեր երկրներում։ Հաղորդումները վկայում են, որ հայերը գերազանցում էին հույներին և «առաջին տեղը բռնած» էին ծխախոտի առևտրում[43]։ Թեմբեքիի ներմուծման և տեղում սպառման մենաշնորհը պատկանում էր մի հալեպցի հայի՝ Խալիլ Խայյաթին։ Ծխախոտը և սիգարետը լայն սպառողներին հասցնելու գործով զբաղված էին մանր խանութպանները կամ հատկապես այդ նպատակով ստեղծված կրպակները, որոնց զգալի մասը պատկանում էր հայերի[44]։

Եգիպտահայ որոշ առևտրականներ զբաղված էին Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի արհեստագործական արտադրանքների վաճառքով։ 1889 թվակիր արխիվային մի վավերագրում դրանցից մեկի՝ ոմն Սարոյանի մասին ասված է. «Յուր ունեցած վաճառականությունը Եգիպտոսի վրա չէ, այլ Վանի. եղբայրը Վանեն հոս (Կահիրե—Հ. Թ.) կղրկե և ինքն կվաճառե ամենայն ճարտարությամբ. ապրանքներն են Վանի պատվական բրդեղեն խումաշներ հագուստի համար և այլ այլ տեսակի ընտիր գորգեր և անթիկաներ, որմե մեծ քանակությամբ կգտնվի այժմ քաղաքիս յուր վաճառանոցն...»[45]։ Տարբեր ապրանքներ

[42] Նույն տեղում, էջ 223։

[43] Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 72։

[44] Տե՛ս Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 476։

[45] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 5486։



էին ներմուծվում Արաբկիրից, Եվդոկիայից, Կեսարիայից և այլ վայրերից։

Հայերն ակնառու դեր էին կատարում նաև արդյունաբերական ու արհեստագործական արտադրանքի, սննդամթերքի, շինանյութի և կուլտուր-կենցաղային ապրանքների մանրածախ առևտրում։ Այդ կարգի բազմաթիվ խանութներից հայտնի էին Ա. Փափազյանի թղթի տեսակների, գրենական պիտույքների, Օ. Տիրատուրի, Կ. Լեբեճյանի լուսանկարչական ապարատների, Ն. Յակուբյանի, Լ. Ստեփանյանի, Սելվաջյան-Գազանջյանի եվրոպական կահույքի, խոհանոցային իրերի, Տեր-Ստեփանյան եղբայրների կոշիկի, Ֆ. Փափազյանի գրամաֆոնի, ձայնապնակների, ժամացույցների խանութները և այլն։ Ուշագրավ է, որ այդ ապրանքների համար բավական լայն ռեկլամ էր արվում թե՛ հայկական, թե՛ արաբական և թե օտար մամուլում։

Եգիպտոսի ներքին առևտրում իրենց յուրահատուկ տեղն ունեին հյուրանոցները, պանդոկները, ճաշարանները, սրճարանները, բարերը և այլն, ուր վաճառվում էին սպիրտային կամ ոչ սպիրտային խմիչքներ։ Այդ ասպարեզում հայերը, զիջելով հանդերձ հույներին, ցուցաբերում էին որոշ աշխուժություն։ Կահիրեում գործում էին հայերի պատկանող «Կաֆե դը լա Պե» (Երվանդ և Սամիկ Հաճյան), «Կաֆե դ՚Օրիան» (Եղիա Շահրազյան) սրճարանները, մի գինետուն՝ «Կրիստալ բար» (Միսաք Միսաքյան) և մի քանի պանդոկներ ու ճաշարաններ։

Այսպիսով, բրիտանական տիրապետության հաստատումից հետո եգիպտահայ առևտրականները ծավալուն կապեր ստեղծեցին Եվրոպայի զանազան երկրների, առաջին հերթին Անգլիայի արդյունաբերական ձեռնարկությունների հետ։ Նրանք եվրոպական ապրանքների վաճառք էին կազմակերպում ոչ միայն Եգիպտոսում, այլև որոշ հարևան երկրներում։ Միջնորդի այդ դերը նրանց հնարավորություն էր տալիս կուտակելու դրամական մեծ միջոցներ։

* * *

Օտարերկրյա կապիտալիստները, առաջնահերթ նշանակություն տալով հումքի թե՛ հայտնաբերված և թե հնարավոր աղբյուրներին, ձեռք էին բերում ընդարձակ հողատարածություններ։ 1913—1914 թթ. մշակելի հողերի 13 տոկոսը կազմում էր օտարերկրացիների սեփականությունը։ Բացի այդ, նրանք տարբեր միջոցներով (հիպոտեկային բանկեր, ընկերություններ և այլն) վերահսկողություն էին հաստատել եգիպտացիներին պատկանող հողերի 27 տոկոսի վրա։

Մեծացավ նաև եգիպտահայ կալվածատերերի դասը։ Այդ մասին է վկայում Եգիպտոսի տարբեր նահանգների հայանուն էզբեների կամ գյուղերի ներքո բերվող թեկուզ ոչ լրիվ ցուցակը[46]։

| Նահանգներ | Նահանգային շրջաններում | Հայանուն գյուղեր կամ էզբեներ |
|---|---|---|
| Բեհերա | 1. Քաֆր ադ-Դավվար | Ալ-Աբիր Նուբար փաշա, Արթին, Պողոս փաշա Նուբար ալ-Դեսիտ, Պողոս փաշա Նուբար ալ-Քաբիրա, Պողոս Կարապետ, Նուբար փաշա ալ-Ցեգիա և ալ-Նուբարիե |
| | 2. Աբու Հոմմոս | Աբու Զեյդա Դեմիրճյան, Պողոս փաշա Նուբար, Պողոս Սաֆարյան ալ-Նուշշիա, Նուբար փաշա, Անթուան Աշըքյան, էզբեթ Սաֆարյան և Պողոս Սաֆարյան Քարեմ |
| | 3. Շուբրախիթ | Յագուբ փաշա Արթին, էզբեթ Յագուբ բեյ և Արմենիա |
| | 4. Դամանհուր | Բաթրիքիանաթ ալ-Արման ալ-Բահրի և Բաթրիքիանաթ ալ-Արման ալ-Քիբլի |
| Ղարբիե | 1. Բեկլաս | Պողոս փաշա Նուբար և Խալիլ փաշա Խայյաթ |
| | 2. Շրբին | Ալ-Արման |
| | 3. Քաֆր ալ-Կայյաթ | Պողոս բեյ Ղալի |
| | 4. Մահալլա ալ-Քուբրա | Պողոս բեյ Ղալի |
| | 5. Թանթա | Պողոս բեյ Նուբար |
| Շարկիե | 1. Բիլբեյս | Բաղր ալ-Դամալ և Պողոս Կարապետ |
| | 2. Զագազիգ | Բաթրիքիանաթ ալ-Արման |
| | 3. Հեհիա | Գարգուր Գեորգ |
| | 4. Մինեթ ալ-Կամհ | Յագուբ Յուսուֆ |
| Մինիա | 1. Մաղաղա | Պողոս բեյ Ղալի |
| | 2. Սամալութ | Սարգիս Օհանյան |
| | 3. Բենի Մազար | Նուբար փաշա |
| Դակահլիե | 1. Սինբելավին | Պողոս Կարապետ |
| | 2. Միթ Ղամր | Պողոս Կարապետ |
| | 3. Ֆարեսքուր | Պողոս փաշա Նուբար |
| Մենուֆիե | 1. Շիբին ալ-Կոմ | Պողոս Կարապետ |
| | 2. Աշմուն | Խալիլ փաշա Խայյաթ |
| | 3. Թալա | Նուբար փաշա |
| Ղալուբիե | 1. Ֆակուսում | Առաքել բեյ Նուբար |
| | 2. Հավա | Նուբար փաշա |
| Բենի Սուեֆ | 1. Բիբա | էզբեթ Պողոս |
| Ֆայում | 1. Ալ-Շարկիե | Պողոս բեյ |

[46] Ըստ «Արևի» (17 օգոստոսի 1931) տվյալների։



Եգիպտոսի խոշորագույն կալվածատերերից էր Նուբար փաշան։ Ըստ Բյուզանդ Քեչյանի, նա լավ գիտեր թե ինչ անհագին տարածություններ օր մը ոսկի հանքի նման շահավետ պիտի ըլլային միայն ոռոգման շնորհիվ։ Ուստի մեկ կողմէ աժան հող գնելով կամ նախորդ խդիվներէն իր նվեր առածները մշակել տալով, մյուս կողմէ Նեղոսի ջրանցքներ բանալ տալով, անհագին տարածություններ արժեցուց...»[47]։ Նուբարյան գերդաստանի հողերը հատկացված էին բամբակի մշակությանը։ Միայն Թամիեի պլանտացիաները 12.000 ֆեդդան տարածություն էր, որտեղ աշխատում էին ավելի քան 1000 ֆելլահներ և որոշ թվով հայեր[48]։ Հողամշակման գործիքները բավական կատարելագործված էին, դրանցից մի քանիսը նույնիսկ գործում էին էլեկտրականությամբ։ Այցելուները դրվատանքով էին պատմում Պողոս Նուբարի հնարած էլեկտրական արորի մասին[49]։ Ֆայումի երկաթուղին հատկապես երկարաձգված էր մինչև Թամիե՝ հայ կալվածատիրոջ բամբակի բերքը տեղափոխելու համար[50]։

Խոշոր կալվածատեր էր նաև լուսավորչական եկեղեցին։ Կահիրեի ազգային առաջնորդարանը Մինեայում ուներ 1000, Դեկկայում՝ 400, Շեյխեթմանում՝ 340, Աշմուն Կրեյսում՝ 100, ալ-Աղիզիեում՝ 60, ընդամենը 1900 ֆեդդան հողատարածություն։ Ալեքսանդրիայի ազգային առաջնորդարանին էին պատկանում երեք բավական ընդարձակ հողակտորներ։ Այդ կալվածները գոյացել էին մեծ մասամբ մեծատունների և պետության նվերներից, երբեմն էլ գնելով։ Եկեղեցապատկան-ազգապատկան կալվածները գրանցվում էին «շերիի օրենքով» եկեղեցու աղքատների, երբեմն էլ մասնավոր անձանց անվամբ։ Վերջին դեպքում տվյալ անձը հատուկ գրությամբ հաստատում էր իր անվան գրանցված կալվածների ազգապատկան լինելը։ Ազգային իշխանությունները հողային տնտեսություն չէին վարում, հետևաբար ազգապատկան կալվածների շահագործումը տալիս էին կապալով։ Կապալի ժամկետը սովորաբար մի տարի էր, ուստի յուրաքանչյուր տարեգլխի վերահաստատվում կամ նորոգվում էին կապալի պայմանները, նախօրոք համապատասխան հայտարարություն տալով մամուլում։

[47] «Բյուզանդիոն», 7 հունվարի 1899։

[48] Տե՛ս «Մուրճ», 1907, № 1, էջ 60։

[49] Տե՛ս նույն տեղում, էջ 60—61։

[50] Տե՛ս նույն տեղում։

Կարապետ Գալուստի ժառանգորդները տիրում էին ավելի քան 1000 ֆեդդան հողերի վերին Եգիպտոսի Դեյկա, Շեյխեթման և ալ-Աղիզիե գյուղերում, ինչպես նաև՝ բազմաթիվ հողակտորների Կահիրեում։ Աբրահամ Բարթողի սեփականությունն էին Դեսունես և Ղարե գյուղերը՝ Նեղոսի ափին, Մահմուդիեի ջրանցքի վրա։ Մյուս հայ կալվածատերերի հողատարածությունների վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել մեզ հայտնի աղբյուրներում։

1907 թ. տնտեսական ճգնաժամը ցնցեց հայ կալվածատերերի դիրքերը։ Բամբակի գների աճը բարձրացրեց նաև հողի գինը և, ինչպես նշել է Կրեսատին, կալվածատերերը մեկ օրում երկու անգամ ավելի հարստացան, քան առաջ[51]։ Սակայն դա պատրանք էր։ Գնորդների մեծագույն մասը հողը ձեռք էր բերում ավելի թանկ վերավաճառելու նպատակով։ Կալվածներն անցնում էին ձեռքից-ձեռք..., և նրանց գները բարձրանում էին «աներևակայելի» չափով[52]։ Այսպես շարունակվել չէր կարող։ Բամբակի պահանջարկը պակասելու հետ բանկերը դադարեցրին վարկերը, և հողի գները սկսեցին անկում ապրել, սնանկացան շատ վաշխառուներ, առևտրականներ, կալվածատերեր։ Նոսրացան նաև հայ կալվածատերերի շարքերը։ Ճգնաժամից հետո հայ խոշոր կալվածատերերից մնացին Պողոս Նուբարը, Պետրոս Կարապետյանը, Յակուբ Արթինը, Մ. Անդրանիկյանը, Երվանդ Աղաթոնը, Հակոբ Բարթողը, Աշըքյանը, Մեսթեմեճյանը, Գ. Տարագճյանը և մի քանի ուրիշներ։

* * *

Բրիտանական գաղութարարները, հետևելով լորդ Դաֆֆերինի զեկուցագրին, «մաքրողական» քաղաքականություն կիրառեցին այնպիսի «ազգություններ սերնդոց, ինչպես են հայք, հույնք, սիրիացիք և հրեայք»։ Նա թելադրում էր «հասարակային պաշտոններեն դուրս մերժել Նուբարի, Օհաքի և Տիգրանի պես մարդիկ, ինչպես նաև Շերիֆ փաշա և ընկերները»[53]։ Այսպես էլ եղավ։ 1894—1895 թթ. Նուբար և Տիգրան փաշաները ստիպվեցին քաշվել պետական ծառայությունից։ 1898 թ. Պողոս փաշան՝ «երկաթուղային վարչական ժողովի եգիպտական անդամն... յուր պաշտոնեն հրաժարականն մատույց», բողոքելով երկաթուղիներն անգլիացիներին վաճառելու դեմ[54]։ 1906 թ. Յակուբ Արթին

51 Տե՛ս *Cressaty*, L'Egypte d'aujourd'hui, p. 93.
52 Տե՛ս նույն տեղում, էջ 94։
53 Լոա «Մասիս», 27 ապրիլի 1883։
54 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 9466։



փաշան հրաժարվեց լուսավորության մինիստրության պետական գեր-քարտուղարի պաշտոնից[55]։ Այժմ հայերը զբաղեցնում էին երկրորդական, հաճախ անկարևոր պաշտոններ։

**Տիգրան դ'Աբրո Բագրատունին** *(1846—1904)* ծնվել է Կահիրեում, սկզբնական, միջնակարգ և բարձրագույն կրթությունը ստացել է Եվրոպայի տարբեր երկրներում։ 1868 թ. նա աշխատանքի է անցել արտաքին գործերի մինիստրությունում, 1891—1894 թթ. նշանակվել է արտաքին գործերի մինիստր։ Բնութագրելով նրա քաղաքական հայացքները, Կրոմերը գրել է. «Նա բնավ սովորական իմաստով անգլիատյաց չէր, բայց հակադրվում էր Եգիպտոսում Անգլիայի վարած քաղաքականության գլխավոր գծերին»[56]։ «Նա հավանաբար անկեղծորեն մտածում էր, որ եգիպտացիները ... կարող են Եգիպտոսը կառավարել առանց անգլիացիների զգալի օգնության և, անկասկած, առանց բրիտանական զորքերի ներկայության»[57]։

**Յակուբ Արթին Չրաքյանը** *(1842—1919)* ծնվել է Կահիրեում։ Սկզբնական կրթությունը ստացել է Կ. Պոլսում, միջնակարգը և բարձրագույնը՝ Փարիզում։ 1881 թ. ընտրվել է Եգիպտոսի գիտությունների ակադեմիայի անդամ, հետագայում մի քանի անգամ եղել է նրա նախագահ։ 1884—1906 թթ. վարել է լուսավորության մինիստրության պետական գեր-քարտուղարի պաշտոնը և, ինչպես նշում է Կրոմերը, «հիանալի գործ» է կատարել եգիպտական դպրոցների ուսումնադաստիարակչական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ[58]։ Նա զգալի ավանդ է մուծել նաև եգիպտագիտության զարգացման գործում։ 1886 թ. գլխավորել է եգիպտական պատվիրակությունը՝ Արևելագետների 8-րդ համագումարում (Վիեննայում)[59]։ Հեղինակ է բազմաթիվ գիտական աշխատությունների, որոնցից առանձնապես ուշագրավ են «Հողային սեփականությունը Եգիպտոսում», «Հանրային կրթությունը Եգիպտոսում», «Եգիպտական բանահյուսությունը», «Անգլիան Սուդանում» և այլն։ Նա ֆրանսերեն է թարգմանել մի շարք հայատառ թուրքերեն ձեռագրեր։ Բարձր գնահատելով Յակուբ Արթինի ծառայություն-

55 Տե՛ս «Ազատ բեմ», 7 նոյեմբերի 1906։
56 *Cromer*, Modern Egypt, vol. II, p. 222.
57 Նույն տեղում, էջ 223։
58 Տե՛ս նույն տեղում, էջ 221։
59 Տե՛ս «Բազմավէպ», 1919, էջ 57։

ներն եգիպտական մշակույթի զարգացման գործում, 1926 թ. եգիպտական կառավարությունը Արվեստի պետական թանգարանում կազմակերպեց Զորայանի անվան ցուցասրահ, որտեղ և տեղափոխվեցին նրա գրադարան-թանգարանի բազմահարուստ հավաքածուները:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին պետական տարբեր հիմնարկներում ծառայում էին բավական թվով հայ մասնագետներ (ինժեներներ, բժիշկներ, դատավորներ, դասախոսներ, տեխնիկներ, լուսանկարիչներ, ցինկոգրաֆիստներ և այլն) և գրասենյակային աշխատողներ (դիրեկտոր, վարիչ, տեղակալ, քարտուղար, թարգման և այլն): Եգիպտոսի ներքին, արտաքին, պատերազմական, հանրօգուտ շինության և լուսավորության մինիստրություններում ծառայում էին 21, միջազգային կամ խառն դատարաններում՝ 3, երկաթուղային և կապի վարչություններում՝ 43 հայեր[60]: Անհամեմատ մեծ թիվ էին կազմում պետական հիմնարկներում զբաղված հայ արհեստավորներն ու սևագործ բանվորները: Այդ կարգի շուրջ 200 աշխատողներ կային Ալեքսանդրիայի տրամվայի ընկերության տեղամասերում[61]:

Այսպիսով, բրիտանական տիրապետության հաստատումից հետո խոշոր չափեր ընդունեց կապիտալի արտահանումը Եգիպտոս, որը և առաջ բերեց գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի զարգացումը: Բանկերը, խոշորագույն առևտրական ընկերությունները, բամբակի պլանտացիաները, տեխնիկապես լավ զինված արդյունաբերական ձեռնարկությունները, երկաթուղիները, հանքերը պատկանում էին հիմնականում օտարերկրյա կապիտալին: Ազգային և այսպես կոչված «ոչ-ազգային» կապիտալը գտնվում էր օտարերկրյա բանկերից կախման մեջ: Բրիտանական առևտրի առավել հուսալի գործակալները հրեաներ, հույներ, հայեր և սիրիացիներ էին:

Օգտվելով «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների ծառայություններից, բրիտանական գաղութարարները վարում էին ոչ-մուսուլմանական ազգային փոքրամասնությունները հովանավորելու քաղաքականություն: Դրանով է բացատրվում այն, որ Եգիպտոսի դռները լայն բացվեցին Թուրքիայում պարբերաբար կրկնվող կոտորածներից փախչող հայ գաղթականների առաջ:

[60] «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 230—233:

[61] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 386:



### 3. ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՍՔԸ ԵԳԻՊՏՈՍ

Դեպի Եգիպտոս հայերի հոսքը վերսկսվեց 1880-ական թվականներին և որոշ ընդհատումներով շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները: Փախչելով ծանր հարկերից, սովից ու կոտորածներից, հայ ժողովրդի աշխատավոր զանգվածները հոսում էին Կ. Պոլիս, Զմյուռնիա, այստեղից էլ գաղթում մոտիկ ու հեռավոր երկրներ: 1896 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է, որ Կ. Պոլսից մեկնող «մեն մի շոգենավ հարյուրավոր գաղթականներ» էր տանում Եգիպտոս[62]:

Բազմահազար գաղթականներ ապաստանել էին Եգիպտոսի հայկական եկեղեցիներում, դպրոցներում և դրանց շրջակայքում՝ «վրաններու և տաղավարներու ներքև»[63]: Երվանդ Օտյանը գրում է, որ Ալեքսանդրիայի դպրոցը, Պողոս-Պետրոս եկեղեցու պարտեզը «կատարյալ տոնավաճառի» էին վերածվել, այնտեղ գործում էին «սրճարաններ, հացարաններ, սափրիչի, նպարավաճառի, ծխախոտավաճառի խանութներ և այլն»[64]: Նույնպիսի դրություն էր նաև Կահիրեում:

Սկզբում գաղթականների կարիքները հոգում էր ազգային առաջնորդարանը՝ ազգապատկան կալվածների եկամուտներից, հետագայում օգնության հասան նաև մեծատունները: «Լը Տան» ֆրանսիական թերթի Կահիրեի թղթակիցը գրում էր. «Այնչափ շատ եկած են և, մանավանդ, այնչափ շատ չքավորներ կան, որ ամբողջ ժողովուրդը զբաղված է անոնց օգնելով: Եվրոպացի բոլոր գաղութականություններու երևելիներեն մի մասնաժողով կազմված է, հանգանակության համար թուղթեր կպատրաստեն...»[65]: Նպաստամատույց հանձնաժողովի «գործադիր մարմինը», որը բաղկացած էր «10 հայ երևելիներե», կարգավորում էր նպաստի բաշխումը և ջանքեր գործադրում «մարդու համեմատ... գործ գտնելու» ուղղությամբ[65ա]:

Մինչև 1896 թ. վերջերը նպաստամատույց հանձնաժողովի միջոցները բավական լայն էին: Գաղթականներին տրվում էր դրամական նպաստ, ինչպես նաև օրական երկու անգամ ճաշ, յուրաքանչյուր ան-

[62] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 9408:

[63] Նույն տեղում, վ. 9407:

[64] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 110:

[65] Ըստ «Արմենիայի», 28 դեկտեմբերի 1896:

[65ա] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 4989:

ճաշը երկու տեսակ կերակուր, ...ըլլալով մսեղեն, իսկ չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահքի»[66]։ Բացի այդ, Նպաստամատույցը նշանակել էր հատուկ բժիշկ և դեղատուն, որոնք անվճար խնամում էին հիվանդներին, հայթայթում նրանց անհրաժեշտ դեղորայքը[67]։ «Խնամակալուհի տիկինները», այսինքն մեծատուն կանայք պարբերաբար այցելում էին գաղթականներին և զգեստ, կոշիկ, հանդերձանք բաշխում կարիքավորներին։ 1897 թ. սկզբներից սակայն Նպաստամատույցի միջոցները զգալի չափով նվազեցին։ Այժմ գաղթականներին տրվում էր «24 ժամը մեկ անգամ մեկ պնակ ապուր և 100 գրամի չափ հաց...»[68]։ 1897 թ. հուլիսի 1 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Ալեքսանդրիա գաղթականաց հացն իսկ կտրած են, իսկ անդս (Կահիրեում— Հ. Թ.) ազդարարած են, որ պետք է գաղթականք օր առաջ աշխատին եկեղեցվո բակեն հեռանալ և իրենց գլխուն ճարն նայիլ. Հանձնաժողովս նյութական միջոցներն վերջացած լինելով, ստիպված է ի մոտո ամեն նպաստ դադրեցնելու»[69]։ Այդպես էլ եղավ, միաժամանակ ամսային ցամաք հացը տրվեց, հետո այն էլ դադարեցվեց, խորացնելով տարաբախտ բեկորների թշվառությունը[70]։

1897 թ. կեսերից, երբ որոշ չափով վերահաստատվել էր անդորրը Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում, գաղթականները սկսեցին վերադառնալ։ Սակայն նրանց վերադարձը դժվարացնող բավական լուրջ պատճառ էր ճանապարհածախսը։ Ընդառաջելով ազգային իշխանության դիմումին, եգիպտական կառավարությունը Խեդիվիալ շոգենավային ընկերությանը հանձնարարեց «ձրիաբար փոխադրել զանոնք»։ Դրանից հետո գաղթականների «մեկնումը դարձ մը ստացավ»[71]։

Սուլթան Աբդուլ Համիդի դեմ անհաջող մահափորձից հետո՝ 1905 թ. հուլիսին, հայերի նոր հոսք սկսվեց դեպի Եգիպտոս, և վերստին օրակարգի հարց դարձավ գաղթականների օգնության գործը, որը կազմակերպվեց միութենական հիմունքներով։ Կահիրեի Աղքատախնամը դրամական նպաստ է տվել 379, սնունդ՝ 342, հիվանդանոցի ծախք՝ 32 գաղթականի, ծախսելով ավելի քան 110 հազար ղրուշ[72]։ Նորակազմ Հայ

[66] Նույն տեղում, ք. 12, վ. 4991։
[67] Նույն տեղում, ք. 12, վ. 9420։
[68] «Արմենիա», 13 փետրվարի 1897։
[69] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, ք. 12, վ. 9419։
[70] Տե՛ս նույն տեղում, վ. 9420։
[71] «Բյուզանդիոն», 21 մայիսի 1897։
[72] Տե՛ս «Լուսաբեր», 15 ապրիլի 1905։



բարեգործական ընդհանուր միությունն ավելի քան 400 հազար ղրուշ է ծախսել գաղթականների կարիքների համար[73]։ Գաղթականներին օգնում էին նաև մյուս բարեգործական ընկերությունները։

Օսմանյան սահմանադրության և երիտթուրքական հեղափոխության տարիներին, վերադարձի լայն շարժում սկսվեց Եգիպտոսի հայ գաղթականության մեջ։ Երվանդ Օտյանը գրում է. «Ամենքը կանձապարին ժամ առաջ երթալ տեսնել իրենց ծննդավայրը և սիրելիները...։ Նույնիսկ շատեր, որոնք իրենց գործն ու ապրուստը ապահոված էին..., կփութային վերադառնալ...։ Ժեռն Թուրք քոմիթեն, նկատելով, որ շատերը նյութական միջոցներ չունին..., ռումանական նավ մը վարձեց ձրիաբար ճամբորդ փոխադրելու համար»[74]։ Եգիպտոսից Կ. Պոլիս մեկնող «ամեն շոգենավ մեկ քանի հարյուր հայ կտաներ հետը, այնպես որ հայերը զգալի կերպով կպակսեին...»[75]։

Սակայն այդ խանդավառ ու փութկոտ վերադարձը չշարունակվեց, որովհետև ռեակցիան նորից գլուխ բարձրացրեց Թուրքիայում։ Նախ մասնակի, ապա զանգվածային հալածանք սկսվեց մինչև անգամ Կ. Պոլսում։ Փաստերը ցույց տվեցին, որ ազատության և հավասարության դրոշի ներքո երիտթուրքերը շարունակում էին սուլթան Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականությունը։ Եգիպտոսից գրված 1909 թվակիր մի նամակում կարդում ենք. «Ամենքս ալ կամաց-կամաց տեղերնիս պիտի դառնայինք, բայց Ադանան իբրև ուրվական մը պատնեշ կկանգնի մեր դեմը։ Դեռ համբերելու է»[76]։

Կիլիկիայի հայերի կոտորածը գաղթականության նոր խումբ ստեղծեց։ Ադանայի, Չորք-Մարզվանի և Ռաղեսի շրջանակի մեջ գտնըվող ուրիշ քաղաքներու... դժբախտ ազգայինները, ամեն բանի կարոտ վիճակի մեջ սկսան գունդագունդ դիմել Եգիպտոս»[77]։ Գաղթականների հոսքն այնպիսի ծավալ էր ընդունել, որ գաղութն այլևս ի վիճակի չէր նրանց պատսպարելու։ Այդ պատճառով, ազգային առաջնորդարանը պաշտոնապես հայտարարում էր «Կիլիկիո ... ազգայիններուն, որ զգուշանան Եգիպտոս գաղթելե, և եթե գաղթեն հույս չունեն առաջնորդարանի և ժողովուրդին վրա..., որովհետև երկու քաղաքաց ազգային

[73] Տե՛ս «Լուսաբեր», 8 հունվարի 1906։
[74] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 457—458։
[75] Նույն տեղում, էջ 461։
[76] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, ք. 12, վ. 2832։
[77] «Բյուզանդիոն», 10 օգոստոսի 1909։

սնուցիչներն անձկության մատնված են և մինչև իսկ պարտքի տակ կգտնվին...։ Եգիպտոս ապաստանողներուն նպաստ սահմանափակելու և քիչ օրեն բոլորովին կտրելու հարկն հրամայողական դարձած է և այնպես ալ որոշված է վերջնապես»[78]։ Սակայն այդ զգուշացման հակառակ, հայերի հոսքը շարունակվեց։ Ճիշտ վեց ամիս հետո, նշելով, որ «դեռ շատեր զանազան կողմերեն կուգան Եգիպտոս», ազգային առաջնորդարանը նորից ընդգծում էր՝ «զգուշանալ Եգիպտոս գալէ...»[79]։

1915 թ. սեպտեմբերի 15-ին երկու ֆրանսիական («Գիշեն» և «Ժաննա դ'Արկ») և մի անգլիական ռազմանավ Սվեդիայից Պորտ Սաիդ տեղափոխեցին 4058 հայեր, այդ թվում 1563 երեխա՝ մինչև 14 տարեկան, 2495 տղամարդ և կանայք։ Չենթարկվելով տեղահանության հրամանին և որոշելով մինչև վերջ կռվել, նրանք հուլիսի կեսերին բարձրացել էին Մուսա լեռ և մինչև սեպտեմբերի 19-ը՝ թուրքական ծովափի բլոկադային մասնակցող այդ ռազմանավերի հայտնվելը, մարտնչել էին 3000 թուրքական կանոնավոր զորքի և ավելի քան 4000 զինված բաշիբոզուկների դեմ։ Պորտ Սաիդից ոչ հեռու, Կանալում հաստատվեց նրանց վրանաքաղաքը, որտեղ գործում էին դպրոց, եկեղեցի, ակումբ, գրադարան, միություններ, հիվանդանոց, արհեստանոցներ, խանութներ, սրճարաններ և այլն։ Եգիպտահայերը սիրով ընդունեցին նրանց և կազմակերպեցին բազմակողմանի օգնություն։ Գաղթականներին սնունդ, հանդերձանք, բժշկական օգնություն և դրամական միջոցներ էին տրամադրում հիմնականում Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Հայ կարմիր խաչը և ազգային իշխանությունները։ Պատերազմի ավարտին վրանաքաղաքը վերացվեց, նրա բնակիչների ճնշող մեծամասնությունը վերադարձավ հայրենական Սվեդիա, մյուսները մշտական բնակություն հաստատեցին Եգիպտոսի տարբեր քաղաքներում։

Հայրենի բնաշխարհից նոր պոկված գաղթականների ու պանդուխտների հոսքը նպաստում էր «տեղացի» հայերի ազգային հատկանիշների վերականգնմանը։ Մ. Փորթուգալյանը գրել է. «Դյուրավ կորոշվին հայերի տեղացին և նորեկը։ Տեղացի հայերը, որոնցմե շատերը գրեթե ֆելլահացած են, միայն եկեղեցիի ծեսովը կապված են հայ ազգին հետ. ուրիշ ամեն բանով՝ լեզվով, սովորություններով, զգացումով արաբացած են»[80]։ Իսկ «նորեկները կբաղկանան պանդուխտների, որոնք

[78] Նույն տեղում։

[79] «Բյուզանդիոն», 6 հունվարի 1910։

[80] «Արմենիա», 24 նոյեմբերի 1894։



4—5 տարի մնալով կվերադառնան, և գաղթականներն, որոնք նոր եկած հաստատված են»։ Վերջիններս, հայրենիքի հետ «կապը խզած չլինելով», կազմում էին եգիպտահայության «զգայուն մասը», նրանցում մշտապես «վառ» էր «ազգային կենդանություն և հանրային գործունեության սերը»[81]։ Վերջում նա եզրակացնում է. «Եթե Թուրքիայեն անդադար հոսող նոր գաղթականներ չլինեին, վաղուց Եգիպտոսի մեջ հայությունը ոչնչացած պիտի լիներ»[82]։

Այսպիսով, 1882—1917 թթ. եգիպտահայ գաղութը ստվարացավ նախ մասնակի, ապա զանգվածային գաղթականներ ընդունելով Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի տարբեր շրջաններից։

Մինչև 1907 թվականը, երբ անցկացվեց քիչ թե շատ կազմակերպված առաջին պետական մարդահամարը, եգիպտահայերի թվաքանակի վերաբերյալ կան ներքին, ծխական հաշվառման սոսկ մոտավոր տվյալներ։ Եգիպտահայերի թվաքանակի վերաբերյալ «Լուսաբեր» լրագիրը գրում է. «Ոմանք մինչև 10.000 հոգի կըսեն, ուրիշներ ավելի մեծ թիվ մը կուտան»[83]։ Այդ հաղորդումը թվում է իրականության մոտ, քանի որ համապատասխանում է 1907 թվականի մարդահամարի (ուղղված) տվյալներին[84]։ 1910 թ. եգիպտահայ գաղութը հաշվվում էր 12000[85], 1913 թ.՝ 15000[86], 1917 թվականի պետական մարդահամարի տվյալներով ավելի քան 17000 շունչ[87]։

[81] «Արմենիա», 28 նոյեմբերի 1894։

[82] «Արմենիա», 4 դեկտեմբերի 1894։ Կահիրեի «Լուսաբեր» լրագիրը, գույները խտացնելով, «տեղացի» համարվածների մասին ասում է. «Արաբներ են անոնք ավելի, քան հայեր» («Լուսաբեր», 2 փետրվարի 1905)։ Ըստ որում նրանց միջև, ինչպես նշել է Ա. Ալպոյաճյանը, «խոշոր անջրպետ մը կար, անոնք իրարու անհաղորդ էին» (Փառքամ Պատրիարք Դուրյան, էջ 248)։ Մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները շարունակվում էր եգիպտահայերի բաժանվածությունը՝ «տեղացիների» և «նորեկների»։

[83] «Լուսաբեր», 19 մայիսի 1906։

[84] Ինչպես այդ, այնպես էլ հետագա մարդահամարներից տարբեր պատճառներով դուրս են մնացել զգալի թվով հայեր։ Ուստի իրականությանը մոտենալու համար, ինչպես նշված է արխիվային մի վավերագրում, մարդահամարի տվյալները պետք է ուղղել 1/3-ի համեմատական հավելումով» (ՀՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, Ֆոնդ Գերագույն հոգևոր խորհուրդ էջմիածնի, Եգիպտահայ թեմ, Տեղեկագիր, 1924, էջ 5։ Այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԳՀԽէ, եթ. Տեղեկագիր)։

[85] Տե՛ս Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 76։

[86] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 220։

[87] Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԳՀԽէ, եթ. Տեղեկագիր, 1924, էջ 5—6։

Բացի Կահիրեից և Ալեքսանդրիայից հայերը տեղաբաշխված էին նաև բազմաթիվ գավառային քաղաքներում և գյուղական վայրերում։ Եղիշե Թորոսյանը նշել է. «Այսօր (1906 թ.) Կահիրեի մեջ չկա թաղ մը, ինչպես որ ամբողջ երկրին մեջ չկա քաղաք մը կամ գյուղ մը, ուր հայեր չգտնվին»[88]։ Ըստ 1907 և 1917 թվականների պետական մարդահամարի տվյալների[89] կազմված աղյուսակը կարող է ընդհանուր պատկերացում տալ եգիպտահայերի տեղաբաշխման մասին։ Պաշտոնական տվյալների կողքին տրվում են ուղղված թվերը։

| Հայաբնակ վայրեր | Ըստ 1907 թ. մարդահամարի | | Ըստ 1917 թ. մարդահամարի | |
|---|---|---|---|---|
| | պաշտոնական տվյալներ | ուղղված թվեր | պաշտոնական տվյալներ | ուղղված թվեր |
| Կահիրե | 4205 | 5607 | 5409 | 7212 |
| Ալեքսանդրիա | 2866 | 3821 | 3369 | 4492 |
| Կանալ (շրջանը) | — | — | 3223 | 4297 |
| Թանթա | — | — | 184 | 245 |
| Շարկիե | 134 | 179 | 159 | 212 |
| Ղարբիե | 122 | 163 | — | — |
| Ասիութ | 91 | 121 | 83 | 111 |
| Դակահլիե | 67 | 89 | — | — |
| Ֆայում | 49 | 65 | 42 | 69 |
| Կենա | 37 | 49 | 16 | 21 |
| Բեհերա | 35 | 47 | 23 | 44 |
| Մինիա | 27 | 36 | 63 | 84 |
| Գիզե | 22 | 29 | 107 | 143 |
| Պորտ Սաիդ | 22 | 29 | — | — |
| Գիրգա | 20 | 27 | 12 | 16 |
| Ղալիուբիե | 11 | 15 | 23 | 31 |
| Ասուան | 14 | 18 | 9 | 12 |
| Բենի սուեֆ | 9 | 12 | 70 | 93 |
| Իսմայիլիե | 9 | 12 | — | — |
| Մենուֆիե | 6 | 8 | 9 | 12 |
| Սուեզ | 3 | 4 | 13 | 17 |
| Մանսուրա | — | — | 78 | 104 |
| Սինա | — | — | 3 | 4 |
| Ընդհ. գումարը | 7747 | 10331 | 12852 | 17220 |

Ինչպես նախկինում՝ եգիպտահայության հիմնական զանգվածը հաստատված էր Կահիրեում և Ալեքսանդրիայում։ Հին Կահիրեն գնալով կորցնում էր իր կարևորությունը, և հայերը շարժվում էին դեպի նորակառույց թաղերը։ 1886 թ. նորակառույց Շուբրայում այնքան էր աճել

88 «Լուսաբեր», 19 մայիսի 1906։

89 Տե՛ս „Annuaire statistique de l'Egypte", 1912, p. 40.



հայերի թվաքանակը, որ անհրաժեշտ է դարձել եկեղեցի ունենալ[90]։ Բավական հոծ հայաբնակ վայր էր դարձել նաև Կահիրեի շքեղագույն արվարձաններից Հելիոպոլիսը։ Ալեքսանդրիայում հայերի աճի ցուցանիշ էր եկեղեցիների կառուցումը։ 1884 թ. կառուցվեց Նոր ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, 1889—1595 թթ.՝ հայ կաթոլիկների ս. Աստվածածին եկեղեցին՝ մեծատուն Խալիլ Խայյաթի դրամական միջոցներով։ XIX դարի վերջերից հայերը սկսեցին դուրս գալ Արու Դարդարի սահմաններից և ցրվել Ալեքսանդրիայի բազմազգ բնակչության ծովում։

Ներքին քաղաքներից Զագազիգի գաղութը բաղկացած էր հիմնականում Մելքոնյան և Կամսարական ծխախոտագործական ձեռնարկությունների մի քանի հարյուր աշխատավորներից։ 1898 թ. Քաֆր ալ-Նահալ վայրում հաստատվել է գերեզմանատուն «արդեամբք և ծախիւք բարեպաշտ ժողովուրդեան Զագազիգի»[91]։ 1906 թ. վարձված շենքում բացվել է Օշական դպրոցը։ 1911 թ. կազմվել է եկեղեցու և դպրոցի շինության հանձնաժողովը, որը դրամական զգալի միջոցներ է հանգանակել[92], սակայն նրա շինարարական ծրագիրն իրականացվեց բավական ուշ (1929—1930 թթ.), վերահաս համաշխարհային պատերազմի հետևանքով։

Գիզեի, Թանթայի և Ասիութի հայերը հիմնականում «Մաթոսյան անանուն ընկերության» ծխախոտագործական ձեռնարկությունների աշխատավորներն էին։ Մինչև 1920-ական թվականները Թանթայում ապրում էին շուրջ 300[93], Գիզեում 240[94], Ասիութում 250—300 հայեր։ Այդ «բարգավաճ գաղութները» քայքայվեցին կամ նոսրացան Մաթոսյան ձեռնարկությունների վերացման պատճառով[95]։

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը փոքրաթիվ հայեր կային նաև Եգիպտոսի տարբեր նահանգներում հաստատված հայ կալվածատերերի պատկանող ավելի քան քառասուն հայանուն գյուղերում[96]. Բեհերայի նահանգում՝ 20 գյուղ, Ղարբիեում՝ 6, Շարկիեում՝ 5, Մինիայում՝ 3, Դակահլիեում՝ 3, Մենուֆիեում՝ 3, Ղալիուբիեում՝ 2,

90 Տե՛ս Ա. Դավիդյան, Պատմություն Եգիպտոսի հայ կաթոլիկե եկեղեցվո, էջ 47։

91 Տե՛ս Ա. Հ. Դարաաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 110։

92 Տե՛ս նույն տեղում, էջ 105։

93 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԴՀՍէ, ԵԹ. Տեղեկագիր, 1924, էջ 5։

94 «Հուսաբեր», 19 մարտի 1931։

95 «Արև», 8 սեպտեմբերի 1931։

96 «Արև», 17 օգոստոսի 1931։

Քենի Սուեֆում՝ 1, Ֆայումում՝ 1, և այլն։ Որոշ կալվածատերերի մենատներին կից գործում էին դպրոց ու եկեղեցի։

Այսպիսով, 1882—1917 թթ. Եգիպտոսում կապիտալիզմի զարգացումը և բրիտանական գաղութարարների՝ «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչներին հովանավորելու քաղաքականությունը նպաստում էին եգիպտահայերի թվաքանակի ավելացմանը և հատկապես տնտեսական դերի բարձրացմանը։ Այդ պայմաններում աշխուժացավ եգիպտահայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը։ Կահիրեի «Լուսաբեր» գրում էր. «Տնտեսական սրարշավ զարգացման շնորհիվ նպաստավոր ասպարեզ մը բացված է հայերու առջև։ Հայ ազգը շրջապատող քաղաքական պայմաններուն մեջ Եգիպտոսը միակ երկիրն է, ուր կրնայինք ազգային կյանք մը ստեղծել, կյանք մը իր դպրոցով, իր մամուլով, իր թատրոնով և ուրիշ հաստատություններովը»[97]։ Եգիպտահայությունը կարևոր տեղ էր գրավում ոչ-մուսուլմանական համայնքների խայտաբղետ ընտանիքում։

[97] «Լուսաբեր», 29 դեկտեմբերի 1904։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԵԼՔԸ: ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Եգիպտոսում գործում էին ոչ-մուսուլմանական 14 կրոնադավանական համայնքներ։ Քրիստոնյաները տրոհված էին ուղղափառների, կաթոլիկների, ավետարանականների, դրանք էլ՝ ավելի փոքր խմբերի, որոնք հաճախ ազգային երանգ ընդունելով հանդես էին գալիս որպես ինքնուրույն համայնք։ Այդպես բաժանված էին ղպտիները, հայերը, հույները, արաբները և ուրիշներ։ Օրինակ, հույն ուղղափառները, հույն կաթոլիկները, հույն ավետարանականները կազմում էին ուրույն համայնքներ։ Պատահում էր նաև հակառակը, երբ տարբեր ազգության պատկանող դավանակիցները, ասենք ավետարանականները, համախմբվում էին միևնույն համայնքի մեջ։ Այդ համայնքները գտնվում էին Բարձրագույն դռան վերահսկողության տակ։

Բրիտանական գաղութարարները փորձեցին ոչ-մուսուլմանական համայնքներին դուրս բերել Բարձրագույն դռան վերահսկողությունից, նրանց պարտադրելով եգիպտական իշխանությունների կողմից հաստատված կանոնադրություն։ Սակայն ղպտի ուղղափառներից (1883), ավետարանականներից (1902) և հայ կաթոլիկներից (1905) բացի, մյուսները, այդ թվում հայ լուսավորչականները, շարունակեցին կառչած մնալ սուլթանական ֆերմաններով ձեռք բերված արտոնություններին՝ դրանք, իհարկե, հարմարեցնելով տեղական պայմաններին։

1907 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը, հաշվի առնելով եգիպտահայ գաղութի նոր պայմանները, «Սահմանադրական հրահանգը» փոխարինեց 28 հոդվածներից բաղկացած մի ուրիշ կանոնադրությամբ՝ «Վարչական հրահանգ վիճակին Եգիպտոսի»[1], որը հիմնված էր Ազգա-

[1] Մատենադարան, Իզմիրլյանի ֆոնդ, թղթ. 13, վ. 395։

յին սահմանադրության «ընդհանուր սկզբանց վրա, և պատշաճեցված տեղական հանգամանքներուն»[2]։

Վարչական հրահանգով Կահիրեն և Ալեքսանդրիան դարձան միևնույն առաջնորդական թեմի երկու իրավահավասար վիճակներ[3]։ Նրանցից յուրաքանչյուրն օժտվեց ազգային գավառական կամ երեսփոխանական, քաղաքական, կրոնական ժողովներով, ինչպես և եկեղեցու, վարժարանի, աղքատաց, գերեզմանատան հոգաբարձություններով։ Վերացված ուսումնական, տնտեսական, դատաստանական և թաղական խորհուրդների պարտականությունները հիմնականում դրվեցին քաղաքական և կրոնական ժողովների, մասամբ էլ՝ հոգաբարձությունների վրա։

Եգիպտոսի գավառական ժողովը բաղկացած էր 35 երեսփոխաններից, որոնցից 30-ը աշխարհական, 5-ը եկեղեցական էին։ Աշխարհականների կեսը և եկեղեցականներից 2-ը ներկայացնում էին Ալեքսանդրիայի հայությանը։ Ընտրությունը կատարվում էր ժողովրդական քվեարկությամբ՝ համաձայն Ազգային սահմանադրության։ Ընտրելու իրավունք ունեին 25, ընտրվելու 30 տարին լրացած ուղղափառ համայնքի այն անդամները, որոնք դատված կամ բանտարկված չէին եղել։ Գավառական ընդհանուր ժողովի պարտականությունների մեջ էին մտնում թեմակալ առաջնորդ և էջմիածնի կաթողիկոսի ընտրության պատվիրակ ընտրելը, ընդհանուր եգիպտահայության վերաբերյալ հարցերի քննարկումը, ազգապատկան կալվածների վաճառքն ու գնումը, համայնքային կանոնադրության վերանայելը և այլն։

Կահիրեի և Ալեքսանդրիայի վիճակներին վերաբերող տեղական բնույթի հարցերը քննարկվում էին համապատասխան վիճակի գավառական ժողովում։ Ժողովը կազմում էր իր ենթակայության դպրոցների, եկեղեցիների, առաջնորդարանի, գերեզմանատան և այլ համայնքային հաստատությունների բյուջեն, ընտրում քաղաքական, կրոնական ժողովները և վերահսկում դրանց գործունեությունը։

Քաղաքական ժողովը տվյալ վիճակի գործադիր իշխանությունն էր։ Վարչական հրահանգի 16-րդ հոդվածում ասված է. «Քաղ. ժողովները

[2] «Օրենք և կանոնք ազգային առաջնորդարանի հայոց յԵգիպտոս», էջ 195։

[3] Նախկինում Ալեքսանդրիայում գործում էր միայն թաղական խորհուրդը, որը հաշվետու էր Կահիրեի ազգային վարչության քաղաքական ժողովին։ Բացի այդ, Ալեքսանդրիայի հայերը զբաղեցնում էին ազգային գավառական ժողովի 21 աթոռներից 5-ը։ Ի նշան բողոքի, 1890-ական թվականներից նրանք հրաժարվում էին մասնակցել գավառական ժողովի ընտրություններին («Արևելք», Կ. Պոլիս, 8 հունվարի 1900)։



կմիացնեն իրենց վրա թեմին (վիճակի—Հ. Փ.) նկատմամբ թաղ. խորհրդոց գործառությունները, և կկատարեն միանգամայն թեմին (վիճակի—Հ. Փ.) վարչությունը և քաղաքին հաստատությանց և կալվածոց մատակարարությունը»։ Միաժամանակ կատարելով թաղական խորհրդի պարտականությունները, քաղաքական ժողովը պարտավոր էր կազմել համայնքային տարբեր հաստատությունների գործերով զբաղվող հոգաբարձություններ և վերահսկել նրանց աշխատանքը, ինչպես և կրոնական ժողովի հետ միասին վճռել ամուսնական, ժառանգության դատեր և այլն։ Հոգաբարձությունները հաշվետու էին քաղաքական ժողովին, վերջինս և կրոնական ժողովը՝ գավառական ժողովին, իսկ ամենքն ի միասին՝ Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչությանը։

Այդ բոլոր ժողովները նախագահում էր թեմակալ առաջնորդը, նրա բացակայության դեպքում՝ առաջնորդական տեղապահը կամ առաջնորդական փոխանորդը։ Թեմակալ առաջնորդի ընտրությունը կատարվում էր թեմական ընդհանուր գավառական ժողովում, իսկ տեղապահինը՝ Կահիրեի և Ալեքսանդրիայի քաղաքական ժողովների համատեղ նիստում։ Առաջնորդի ընտրությունն ուժի մեջ էր մտնում, երբ այն արժանանում էր Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչության և Բարձր. դռան հավանությանը։ Սուլթանական բերաթը ստանալուց հետո եգիպտական կառավարությունն առաջնորդին պաշտոնապես ճանաչում էր որպես եգիպտահայ լուսավորչական համայնքի կրոնապետ։

Բացի ազգապատկան կալվածների և տարբեր հաստատությունների խնամատարությունից, ազգային առաջնորդարանը զբաղվում էր նաև անձնական իրավունքի գործերով։ Արդարև, խաթթը հումայունի 18-րդ հոդվածով եկեղեցական իշխանություններն իրավունք ստացան վճռահատելու ժառանգության դատեր, իսկ 1891 թ. ֆերմանով Բարձր. դուռը պաշտոնապես ճանաչեց Կ. Պոլսի հունաց և հայոց պատրիարքների իրավասությունն ամուսնական, ամուսնալուծման և կտակի վերաբերյալ դատերում։ Նույն թվականին, մի ուրիշ ֆերմանով, Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյաներին իրավունք տրվեց համապատասխան եկեղեցու կրոնական դատարանում վճռահատել անձնական իրավունքի վերաբերյալ գործերը։ Առաջնորդարանի իրավունքների մեջ էր մտնում՝ «Արտոնագրություն նշանախոսության, ամուսնության և նշանախզության. վճռում առժամանակյա բաժանման ամուսնոց. վճռաբեկություն ամուսնալուծության. սահմանում ոգեպահիկ անդրագրամի ամուսնալուծելոց և իրենց զավակաց. տվչություն ժառանգական վկա-



9—724

յագրի. բաշխում ժառանգության. պաշտպանություն և ի հարկին վաճառում բացակա կամ անչափահաս ժառանգորդներ ունեցող վախճանյալների թողոնների. տվչություն ինքնության վկայագրի, տվչություն բարի վարուց վկայագրի, տվչություն անցագրի վկայագրի» և այլն[4]: Սակայն ոչ Ազգային սահմանադրությունում, ոչ էլ Վարչական հրահանգում համապատասխան հոդվածներ չկային, ուստի անձնական իրավունքի հարցերում թեմական իշխանությունները ղեկավարվում էին եկեղեցական կանոններով, կանոնական կոնդակների հրահանգներով և եգիպտական օրենքներով[5]:

Արական սեռին ամուսնանալու իրավունք տրվում էր 14, իսկ իգականին 12 տարին լրանալուց հետո: Ամուսնությանը կարող էին խանգարել ազգակցության, խնամիության և կնքահայրության կամ հոգևոր ազգակցության որոշ աստիճանի կապերը[6]: Ամուսնությունը չեղյալ էր համարվում, եթե այն կատարվել էր բռնությամբ, կողմերից մեկն անկարող էր սերնդագործելու կամ վարակված էր վեներական ախտով և այլն: Ամուսնալուծությունը թույլատրվում էր նաև անբարոյականության, ամուսիններից մեկի ոճրագործության կամ այլ քրեական հանցագործության հետևանքով դատապարտվելու, ամուսնու կողմից կնոջն անբարոյականության մղելու, ամուսնական հարկը լքելու, ամուսնական կյանքն անհնարին դարձնող հիվանդության, կրոնափոխության, ամլության և այլ դեպքերում[7]: Խառն ժողովի պսակալուծության վճիռները հաստատվում էին Կ. Պոլսի ազգային կենտրոնական վարչության կամ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից[8]:

[4] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. [illegible], ծր. Տեղեկագիր, 1924, էջ 21—22:

[5] 1893 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից պատրաստված «Հրահանգ դատավարության» չէր կարող լրացնել այդ բացը: Այն սահմանում էր միայն ամուսնալուծության վերաբերյալ դատավարության անցկացման ձևերը:

[6] 1905 թ. Խրիմյան կաթողիկոսն ազգակցության և խնամիության արգելքը յոթներորդից իջեցրեց վեցերորդ, իսկ հոգևոր ազգակցությանը՝ չորրորդ աստիճանի: 1922 թ. Գևորգ Ե կաթողիկոսը թույլատրեց ազգակցական հինգերորդ և խնամիական չորրորդ աստիճանի ամուսնությունները, իսկ հոգևոր ազգակցության արգելքը վերացրեց:

[7] Տե՛ս E. de Szazy, „Le Statut Personnel des non-musulmans en Egypte“, տե՛ս L'Egypte Contemporaine“, № 184, p. 335—336.

[8] Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1399 և 1403: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Եգիպտոսը և Թուրքիան խզեցին հարաբերությունները, եգիպտահայ թեմը փորձեց վարչականորեն կապվել Էջմիածնի հետ: 1914 թ. դեկտեմբերի 21 թվակիր գրությամբ եգիպտահայոց առաջնորդն Ամենայն Հայոց կաթողիկոսին



Խառն ժողովը ժառանգության և կտակի վերաբերյալ գործեր վճռում էր միայն այն դեպքում, երբ կողմերը չէին առարկում նրա իրավասության դեմ: Նրա վճիռների համար հիմք էին ծառայում եգիպտական համապատասխան օրենքները: Ինչ վերաբերում է բարեգործական հաստատությունների օգտին եղած կտակներին, ապա դրանք, Խառն ժողովի և թեմական առաջնորդի կողմից հաստատվելուց և ի գիտություն Եգիպտոսի արդարադատության մինիստրության հղվելուց հետո միայն մտնում էին ուժի մեջ: Խառն ժողովում անձնական իրավունքի վերաբերյալ կայացված վճիռները համարվում էին վերջնական և, ի հարկին, գործադրվում էին պետական իշխանության միջոցով:

**Կազմական կանոնագիր Եգիպտոսի հայ կաթոլիկ համայնքի[9]:** Եգիպտահայ կաթոլիկները XVIII դարի կեսերից ստեղծել էին ուրույն համայնք, որը, սակայն, պաշտոնապես ճանաչվեց միայն 1831 թ., երբ Բարձրագույն դուռը հատուկ ֆերմանով հաստատեց Կ. Պոլսի հայոց պատրիարքությունից անկախ հայ «կաթոլիկ միլլեթի» գոյության իրավունքը: Մինչև առաջին համաշխարհային պատերազմի վախճանը եգիպտահայ կաթոլիկ թեմը վարչականորեն կապված էր Կ. Պոլսի, իսկ հետագայում Զմմառի վանքին կամ Լիբանանի հայ կաթոլիկ պատրիարքությանը: Թեմական առաջնորդները, հաշվետու լինելով միայն պատրիարքի առաջ, համայնքային գործերը վարում էին որպես բացարձակ իշխանավորներ:

Ըստ կազմական կանոնագրի Եգիպտոսի հայ կաթոլիկ թեմը կազմում էին Կահիրեի և Ալեքսանդրիայի վիճակները, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր վարչական ժողովը և հարակից ուրիշ օրգաններ՝ վիճակավոր առաջնորդի նախագահության ներքո: Վարչական ժողովը ընտրվում էր համապատասխան վիճակի ընդհանուր ժողովում, որին մասնակցելու իրավունք ուներ 21 տարին լրացրած համայնքի յուրաքանչյուր եգիպտահպատակ անդամ, եթե վճարել էր համայնքային տարեկան տուրքը և դատապարտության չէր ենթարկված որևէ հանցագործության կամ սնանկության համար: Վարչական ժողովին անդամակ-

գրել է. «Առ այժմ ընդհանուր տրամադրությունն ու փափագն այն է, որ Եգիպտոս, որ ի հոգևորս արդեն ենթարկյալ է համազգային գերագահ Աթոռոյդ, վարչականապես ևս կապվի ուղղակի ս. Էջմիածնի հետ» (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 719, թ. 14):

[9] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 132: Այս բաժինը շարադրելիս օգտագործել ենք կազմական կանոնագրի հայերեն թարգմանությունը: (Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 315—321):

ցում էին մեկ կղերական և հինգ աշխարհականներ, որոնք, որպես կանոն, պետք է լինեին վիճակի «երևելի» մարդկանցից: Վարչական ժողովը կազմում էր անձնական իրավունքի հանձնաժողովը, որը բաղկացած էր մեկ կղերականից և չորս աշխարհականից: Կահիրեի և Ալեքսանդրիայի վարչական ժողովների համատեղ նիստում նշանակվում էր վերստուգիչ հանձնաժողովը, որն ընդգրկում էր երկու վիճակների թվով ութ «երևելի» անձինք: Այդ ընտրությունները և նշանակումները պետք է հաստատվեին ներքին գործերի մինիստրության կողմից:

Վարչական ժողովը օժտված էր բավական լայն իրավունքներով: Նա էր վերահսկում «համայնքային շարժուն և անշարժ բոլոր ինչքերուն..., ինչպես նաև ամեն տեսակ անվանական և իրավական սեփականություններուն»: Նրա միջոցով էին կատարվում համայնքապատկան կալվածների «գնումները, վաճառումները, փոխանակությունները, վարձակալությունները, շինությունները, նորոգումները և այլն»: Նրա իրավասությունների մեջ էին մտնում «ներքին գործածության» համար սահմանված, ինչպես նաև անձնական իրավունքի դատերի, դատական ծախսերի վերաբերյալ կանոնագրերի մշակումը: Այդ կանոնագրերը և նրանցում կատարվող փոփոխությունները ենթակա էին ներքին գործոց մինիստրության հաստատմանը:

Անձնական իրավունքի հանձնաժողովը զբաղվում էր ամուսնական, ժառանգության և այլ հարակից հարցերի կարգավորմամբ: Կաթոլիկ հայերի անձնական իրավունքի հետ առնչվող դատերը նախ լսվում էին այդ հանձնաժողովի կողմից և ապա միայն հղվում խառն կամ միջազգային դատարանի քննությանը: Ամուսնական հարցերում հանձնաժողովը ղեկավարվում էր կաթոլիկ եկեղեցու կանոններով: Ամուսնալուծությունը բացառված էր, անհամաձայն ամուսիններին արտոնվում էր բաժան ապրել՝ առանց վերաամուսնության իրավունքի և այլն: Ժառանգության դատերում հանձնաժողովը կարող էր վճիռ արձակել, եթե կողմերը ընդունում էին նրա հեղինակությունը: Բոլոր վճիռները կարող էին գործադրվել «վարչական ուղիով՝ շահագրգռվողներու պահանջին վրա և անոնց պատասխանատվության տակ»:

Եգիպտահայ ավետարանականները կազմում էին եգիպտական ազգային-ավետարանական համայնքի հայկական հատվածը: 1906 թ. նրանք փորձեցին ինքնուրույն համայնք դառնալ, մինչև անգամ պատրաստեցին կազմական և անձնական իրավունքի վերաբերյալ հատուկ կանոնագրություն, որը, սակայն, չհաստատվեց եգիպտական իշխանու-



թյունների կողմից և չմտավ ուժի մեջ[10]: Արխիվային մի վավերագրում ասված է. «(Հայ ավետարանականները) առաջի կառավարության չեն ներկայացներ առանձին հասարակություն մը, զի ըստ օրենի Եգիպտոսի բոլոր բողոքականներն, ինչ ազգի ալ լինեն, կկազմեն միակ հասարակություն մը՝ Բրոթեսթան միլլեթի անվան տակ... դպտի բողոքականներու օրինական հովանիին ներքև»[11]: Հայ ավետարանականները հազիվ մի քանի հարյուր ընտանիք էին, բայց բաժանված էին բազմաթիվ հակամարտ հերձվածների՝ միացյալներ կամ արիոսականներ, գալստականներ կամ շաբաթապահներ, մկրտականներ կամ եկեղեցի աստծո, պարզակրոններ կամ առաքելոց եկեղեցի, հոգևոր եղբայրություն և այլն[12]:

Եգիպտահայ համայնքների վարչակառավարման օրգաններում կատարված տեղաշարժերը չէին կարող փակել կղերափաշայական վերնախավի կամայականությունների սողանցքը:

Մյութեսլլի-փաշաները (Կահիրեում Տիգրան փաշա դ'Աբրո Բաղրատունին, Ալեքսանդրիայում Պողոս փաշա Նուբարը) համայնքային գործերը վարում էին Ազգային սահմանադրության սկզբունքների հետ ոչ մի կապ չունեցող ձևով: 1892 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Տիգրան փաշան սահմանադրական օրենքները բնավ չի հարգեր, բոլորովին միապետական... ազատին պես գործել կուզե...»[13]:

10 «Ազատ բեմ», 19 սեպտեմբերի 1906: Այդ համարում տեղեկություն կա «Կանոնագիր Եգիպտոսի հայ բողոքական հասարակության» հայատառ թուրքերեն գրքույկի լույս տեսնելու մասին:

11 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. ԴՆՀէ, նթ. Տեղեկագիր, 1924, էջ 39:

12 Տե՛ս Խ. Ս. Գուրյան. Հայ բողոքականությունը, էջ 1—2: Այդ պատճառով ձուլման պրոցեսն անհամեմատ ավելի արագ էր ավետարանականների, քան լուսավորչական հայերի մոտ: Մինչ վերջիններս եկեղեցու միջոցով հաղորդվում էին հայոց լեզվի հետ, ավետարանականները մեծ մասամբ զրկված էին այդ հնարավորությունից: Նրանք հաճախում էին դպտիների ժողովարանը, որտեղ արարողությունները կատարվում էին արաբերեն լեզվով: Ավետարանական կարգավոր Խոսրովյանը նշել է. «Անոնք այնքան կորսուեցան, որ իրենցմե սարկավագ իսկ կըլլան դպտի եկեղեցիին մէջ» («Եգիպտահայ տարեցույց», 1916, էջ 114): Ձուլման պրոցեսը բավական արագ էր նաև հայ կաթոլիկների մոտ: Նրանց ձուլումը գլխավորապես կատարվում էր դավանակից եվրոպացիների և արաբների հետ կնքված «խառն» ամուսնություններով:

13 ԴԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 7, վ. 5746: Տիգրան փաշան հայերեն չիմանալով՝ ժողովներն ու նիստերն անց էր կացնում ֆրանսերեն կամ թուրքերեն լեզվով: Պողոս փաշան հայերեն խոսում էր բավական սահուն:

Ամենազավեշտականն այն էր, որ Տիգրան փաշան Կահիրեի թեմական իշխանությունը համարում էր իր, իսկ Ալեքսանդրիայինը՝ Պողոս փաշայի... տիրույթը և, չնայած Ալեքսանդրիայի թաղական խորհուրդը հաշվետու էր Կահիրեի գավառական ժողովին, ոչ մի հաշիվ չէր պահանջում։ Երվ. Օտյանի պատմելով, նա մի անգամ ասել է. «Ալեքսանդրիայի առաջնորդարանի նախագահը Պողոս փաշան է, երկուքնուս ալ փաշայական աստիճանը հավասար են իրարու, ուրեմն ինչու կուզեք որ Պողոս փաշան համարատու ըլլա ինծի և ես անկե հաշիվ պահանջեմ... ասկե զատ իրարու հետ ալ ազգական ենք»[14]։

Առավել նողկալի էր եկեղեցուց և գերեզմանատնից օգտվելու հատուկ կարգը, որով մեծատունները ընդգծում էին իրենց «ազնվազարմությունը»։ Որպեսզի մեծատունները և «հասարակ մարդիկ» միևնույն շարքում չնստեն, եկեղեցում աթոռներ էին դասավորված «չորս կարգի վրա, մեն մի աթոռ 500—150 դահեկանի վաճառելի մի անգամի համար ի սարվազ»[15]։ Սահմանազատումն առավել ընդգծված էր գերեզմանատանը։ Այնտեղ երկու նկուղ հատկացված էր «աղքատ դասակարգին արանց և կանանց զատ-զատ»։ Այսպես կոչված այդ եղբայրական գերեզմանում թաղում էին ընչազուրկ աղքատներին և պանդուխտներին։ Բուն գերեզմանատունը ուներ «վերի և վարի թաղեր»։ Վերի կամ «ստակավոր» թաղը հատկացված էր մեծատուններին, վարի թաղը՝ աշխատավոր մարդկանց, ընդ որում համարյա անհնարին էր վարի թաղից վերի թաղ «ննջեցյալ» տեղափոխելը[16]։

Գործելով հեղինակավոր տիրոջ՝ մյութևելլիի անունից, երեսփոխանները թույլ էին տալիս զեղծումներ ու չարաշահումներ։ Ալեքսանդրիայում դայթակղություն էր ազգապատկան մի ագարակի և երկու

[14] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 282։ Տիգրան փաշան Պողոս փաշայի քեռայրն էր։

[15] ԳԱԹ, արխիվ, Ղ. Աղայանի ֆոնդ, թ. 12, վ. 9416։

[16] 1896 թվականի արխիվային մի վավերագրում ասված է. «Կահիրեի վախճանյալք մեծամեծ փորձությանց կ՚ենթարկին հանգուցյալն։ Մեն եգիպտահայ հարստանալուց հետո «հրաման կպահանջե առաջնորդարանեն, որ իրեն թույլատրվի յուր երկամյա զավակը զաղաղը (տարիներ առաջ թաղված վարի թաղում—Հ. Թ.) ստակավոր թաղն փոխադրել և դնելու «փառավոր մարմարյա շիրիմի մը» տակ։ Բայց առաջնորդարանը այն համարձակիր հրաման տալ։ Ճահագրգռված կողմը դիմում է Կ. Պոլսի պատրիարքին, որը բանավոր կարգադրում է՝ ընթացք տալ...։ Տեղապահը սակայն տարակուսում է՝ «մինչև որ պատրիարքարանի ստորագրությունն իմ ձեռքին չունենամ հրաման չեմ կարող տալ...» և այլն։ Այսպես էլ հարցը չի լուծվում (ԳԱԹ արխիվ, Ղ. Աղայանի ֆոնդ, թ. 12, վ. 9439 և 9444)։



կալվածների վաճառքից գոյացած պատկառելի փոխարժեքով երկու ազգային խանութի կառուցումը[17]։ Կասկածելի գործարք էր Կահիրեի Գալուստյան դպրոցի հողամասի գնումը, որը կատարվել էր «ապօրինի ձևով, առանց խորհրդակցության»։ Պակաս կասկածելի չէր նաև ազգապատկան խոշորագույն կալվածներից Աղֆահի ագարակի վարձակալման պայմանագիրը, որը ստորագրվել էր «առանց այն ձևականությանց, որոնք ընդունված են հանրային սեփականությունները վարձումներուն մեջ»[18]։

Եգիպտահայ մեծատունները, համառորեն կառչելով մյութևելլիությունը, ձգտում էին «ամբողջական լիազորություն մը տալ իրենց անձին և միահեծան վարել տեղական գործերը, զրկելով ժողովուրդը ընտրելու, ընտրվելու, ազգային գործերու ղեկավարության նկատմամբ իրենց ձայնն ու կամքը ունենալու ամենատարրական իրավունքեն»[19]։ Այդ առումով բնորոշ է մշակված ընտրական կարգը, որով աշխատավորների ճնշող մեծամասնությունը զրկվում էր ընտրելու և ընտրվելու իրավունքից։ Ընտանիքավոր դաղթականներին ընտրելու իրավունք էր տրվում, եթե նրանք հաստատագիր ներկայացնեին այն մասին, որ անխափան երեք տարուց ի վեր անընդմեջ բնակվում են Եգիպտոսում։ Ամուրիների համար այդ պայմանաժամը հինգ տարի էր[20]։ Բացի այդ, նրանք պարտավոր էին նաև ապացուցել, որ մարել են ազգային տուրքի իրենց պարտքը և այլն։ Այդ արհեստական դժվարությունների հետևանքով 1899 թ. ապրիլի 4-ին Ալեքսանդրիայում տեղի ունեցած թաղական խորհրդի ընտրություններին ավելի քան հազար ընտրողներից կարողացան մասնակցել միայն 165-ը[21]։ Ավելի զավեշտական էր վիճակը նույն թվականի դեկտեմբերի 10-ին Կահիրեում։ Գավառական ժողովի ընտրություններին քվեարկելու իրավունք ունեցող հազարավոր ընտրողներից մասնակցել են 48-ը, ընդ որում նրանցից 18-ը առաջնորդարանի և գերեզմանատան ծառայողներ էին[22]։

Իշխանության գլուխ մնալու համար մեծատունները երբեմն դիմում էին ոստիկանության միջամտությանը։ 1886 թ. հունիսին, երբ Սահ-

[17] Տե՛ս «Ազատ խոսք», 1902, էջ 75—76։

[18] «Լուսաբեր», 6 հուլիսի 1905։

[19] «Օրենք», 1905, № 2, էջ 1։

[20] Տե՛ս «Բյուզանդիոն», 17 ապրիլի 1899։

[21] Տե՛ս նույն տեղում։

[22] Տե՛ս «Արշալույս», 9 և 16 դեկտեմբերի 1899։

մանադրության կողմնակիցները հրապարակային ելույթներով բողոքեցին «ավորինի բռնության դեմ», մեծատունները դիմեցին սադրականության։ «Արմենիա» լրագիրը հաղորդում է. «Սադրկանությունը խուլարկություններ կընէ ժողովրդին մէջ. երկու ազգայինք ներքին գործոց պաշտոնատուն տարվեցան, ուր պաշտոնյա մը եղեռնագործներու հետ խոսելու հատուկ եղանակով» նրանց հարցաքննել և ստիպել է գրավոր խոստում տալ, որ այլևս ազգային գործերով չպիտի զբաղվեն, հակառակ դեպքում «պիտի բանտարկվին, շղթայակապ պիտի ըլլան, յաքսոր պիտի երթան»[23]։ Սահմանադրության կողմնակիցներն այդ կարգի ճնշման ենթարկվել են նաև հետագա տարիներին։

Ազգային իշխանավորներն առավել եռանդով հալածում էին սահմանադրական պայքարը գլխավորող մտավորականներին։ Բնութագրական է ականավոր հրապարակախոս Սմբատ Բյուրատի դեմ ծավալված հալածանքը։ Որպեսզի խափանեն «Փյունիկի» հրատարակությունը, նրանք նախ Բյուրատին հեռացրին Գալուստյան դպրոցի դասատուի պաշտոնից, ապա կեղծ փաստեր ստեղծեցին նրան որպես զեղծարարի դատական հետապնդման ենթարկելու համար։ Բյուրատը ճարահատյալ հեռացավ Կահիրեից։ 1900 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Զեղծում, զեղծում ըսելով պոռալ, մինչդեռ մարդը (Սմբատ Բյուրատը—Հ. Փ.) 2—3 ամիս հաշիվ մը ժամանակին չէր տված և կամ իր շարաշար աշխատությանց և խեղճության պատճառով վար էր դրած. հազիվ ողորմելի վիճակի մեջ յուր կույր կնոջ և երկու տղաքներուն հետ Բորթ-Սայիդ փախավ...»[24]։ Բյուրատը ծրագրել էր ապաստանել Կիպրոսում, բայց գնացել է Ալեքսանդրիա, որն այն ժամանակ համարվում էր Սահմանադրության կողմնակիցների միջնաբերդը։

* * *

Հանուն Ազգային սահմանադրության պայքարն արևմտահայերի ազգային-դեմոկրատական շարժման ցայտուն արտահայտություններից մեկն էր։ Նրա ոլորտն էին ներգրավված կղերապահպանողական վերնախավից դժգոհ տարբեր սոցիալական խմբեր, տարբեր հասարակական-քաղաքական հայացքներ ունեցող մարդիկ։ Սահմանադրության կողմնակից էին դեմոկրատական, առաջադիմական ուժերը։ Սահմանադրության թշնամի էին և նրա սկզբունքների իրագործմանը խանգարում էին հետադիմական, ռեակցիոն տարրերը։ Անդրադառնալով եգիպտահայերի սահմանադրական պայքարին, «Արմենիա» լրագիրն իրավացիորեն նշել է. «Ազգային կուսակցությունները երկու որոշ գույներու ներքև երևան կուգան, որոնց կրնանք համարեցնել այս անուններն՝ Հասարակ ժողովուրդ և Ազնվականություն. սորա մերթ լռին և մերթ աղմկահույզ անդուլ պայքար կմղեն իրարու դեմ. պայքար Սահմանադրության և ամիրայության, խղճի ազատության և բռնակալության»[25]։ Սահմանադրականները և հակասահմանադրականները հակամարտ երկու ճակատի բաժանված կատաղի պայքար էին մղում միմյանց դեմ։

Սահմանադրական պայքարի վերելքին առանձնապես նպաստում էին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի տարբեր շրջաններում պարբերաբար կրկնվող զանգվածային կոտորածներից խուսափելով Եգիպտոս ապաստանած հազարավոր գաղթականները։ Երվ. Օտյանը գրում է. «Ասոնք Սահմանադրությամբ սնած ու մեծցած՝ կուզեին նույն կարգ ու կանոնը գործադրված տեսնել Եգիպտոսի մեջ ալ...»[26]։ Դեմոկրատական հայացքներ ունեցող մտավորականները (Երվ. Օտյան, Վահան Թեքեյան, Միհրան Տամատյան, Սմբատ Բյուրատ, Հովհ. Ճնորքյան, Երվ. Թուրշուճյան և ուրիշներ) բացեիբաց հանդես էին գալիս հակասահմանադրական վերնախավի դեմ։ Սմբատ Բյուրատն ազգային գործերի անմխիթար վիճակի «առաջին և գլխավոր» պատճառը համարում էր «այն սխալ համոզումն, որով կկարծվի թե մեր տիտղոսավոր, բարձր դիրքի տեր և հարուստ ազգայինները... կրնան օգտակարապես և հաջողությամբ վարել վարչական գործոց վերին հսկողությունը այն ազգին, որուն արյունը կկրեն թեև, ոչ լեզուն կխոսին, ոչ պատմությունը գիտեն և ոչ անոր օրենքներուն և ավանդության հմտությունը ունին։ Եվ ցավալի է, որ վարչական ժողովը անդամակցության կոչվող անձինք... փոխանակ գծված օրենքներու համեմատ շարժելու, կարգախոսի մը կապանեն, այս կամ այն տիտղոսավորին բարձրագույն հրամանին կամ կամքին կդիմեն...»[27]։ Բյուրատը դատապարտում էր նաև բարձրաստիճան կղերին, որը չէր հետևում «ազգային օրենքներուն ճշտիվ և անաչառ կիրառությանը»։ Նա պահանջում էր վերջ դնել «ազգային օրենքներու բռնաբարումին և տիտղոսավորներու տիրապետությանը»[28]։

[23] «Արմենիա», 28 հուլիսի 1886։

[24] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 2483։

[25] «Արմենիա», 24 հունիսի 1886։

[26] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 284։

[27] «Փյունիկ», 1899, էջ 65։

[28] Նույն տեղում, էջ 66։

Սահմանադրության կողմնակիցներն առավել աշխուժություն էին ցուցաբերում Ալեքսանդրիայում։ Նրանց ճնշման ներքո, վերջապես, թաղական խորհուրդը լուծվեց, և 1902 թ. մարտի 23-ին տեղի ունեցան նոր ընտրություններ, որոնք ավարտվեցին Սահմանադրության կողմնակիցների հաղթանակով։ Ուշագրավ է, որ 1899 թվականի 165-ի փոխարեն ընտրելու իրավունք էին ձեռք բերել 717 մարդ, որոնց շուրջ 600-ը մասնակցել էր քվեարկությանը[29]։ Ընտրվեցին Հովհաննես Մութաֆյանցը, Հայկ Էքիզլերը, Միհրան Գալֆայանը, Աբրահամ Բարթողը, Ալեքսան Ջևահիրճյանը, Ա. Ուշտունին և Պողոս փաշան։ Վերջինիս քվեարկել էին, ինչպես նշում է Երվ. Օտյանը, ցույց տալու համար, որ Սահմանադրության կողմնակիցների «խնդիրը զուտ սկզբունքային էր, ու անձի հետ գործ չունեին»[30]։ Նրանք պատրանքներ էին սնուցում նաև այն մասին, որ ժողովրդի քվեով թաղական ընտրված անձը, ով էլ լինի նա, չի կարող դավաճանել Ազգային սահմանադրությանը։ Բայց այդպես չեղավ։

Առաջին նիստում Պողոս փաշան պահանջեց թաղական խորհրդի կազմից հանել Հովհ. Մութաֆյանցին և Հայկ Էքիզլերին։ Երբ վերջինները մերժեցին այդ «կամայական պահանջին առջև խոնարհիլ, փաշան ձևականապես հրաժարվեցավ, ընտրյալներեն չորսին հրաժարականն ապահովելէն վերջ»[31]։ Եվ թաղական խորհուրդը լուծված հայտարարվեց։ Միաժամանակ հետո Պողոս փաշան «հրաժարողները կանչելով և անոնց հետ դրսեն ուզած անձերն ալ միացնելով առժամյա խորհուրդ մը կազմեց, դուրս թողնելով անոնք, որք խորհուրդին լուծման հետեվանքով միայն դադրած էին պաշտոնավարելէ»[32]։ Հովհ. Մութաֆյանցը և Էքիզլերը սակայն համառորեն մնացին թաղական, կառչելով Ազգային սահմանադրության հոդվածներից։ Կ. Պոլսի պատրիարքին հղված նրանց բողոքագրում ասված է. «Մենք օրինավորապես ընտրված ենք թաղական խորհրդո անդամ, չենք հրաժարած և չպիտի հրաժարինք, չպիտի զոհենք օրենքին մեզ տված իրավունքները որևիցե կամայական կարգադրության»[33]։ Պատրիարքարանը սակայն, ոտնահարելով Ազգային

[29] Տե՛ս նույն տեղում, 1902, էջ 459։

[30] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 284—285։

[31] «Բյուզանդիոն», 17 հունիսի 1902։

[32] Նույն տեղում։

[33] «Փյունիկ», 1902, էջ 507։



սահմանադրությունը, բեկանեց մարտի 23-ի ընտրությունները և հրահանգեց «առժամանակյա» թաղականություն նշանակել Պողոս փաշայի նախագահության ներքո։ Կազմվեց յոթ անձից բաղկացած մի մարմին՝ խնամակալությունը, որը, սակայն, չարժանացավ ժողովրդի հավանությանը։

1902 թ. հունիսի 23-ին Պիրամիդ թատրոնում կայացավ Սահմանադրության կողմնակիցների բողոքի միտինգը։ Ըստ մամուլի տվյալների միտինգին մասնակցել են «600-ի մոտ երկսեռ բազմություն մը» և տարբեր թերթերի ներկայացուցիչներ։ Բեմի ճակատը զարդարված է եղել «Կեցցե Սահմանադրությունը», «Կեցցե ժողովուրդը» լոզունգներով։ Ճառերով հանդես են եկել Երվանդ Օտյանը, Միհրան Տամատյանը և Սմբատ Բյուրատը։ Վերջում ներկաների անունից ընդունվել է բանաձև, որով պահանջվում էր. «ա) Ժողովրդին՝ օրենքով նվիրագործված իրավունքներուն հարգվիլը կամայականության դադարմամբ. բ) Ազգային սահմանադրության և անոր հարակից հրահանգներուն ամբողջական գործադրությունը՝ համարատվության և համարատության տարամերժորեն ազգօգուտ սկզբունքները կիրառության դնելով առանց վերապահության. գ) Օրենքով արգո խնամակալության անմիջական բարձումը, և մարտ 23-ին ընտրված թաղական խորհրդին ամբողջացումը ըստ Սահմանադրության՝ հրաժարելոց տեղ նորոց ընտրություններով»[34]։

Մթնոլորտն ավելի շիկացավ, երբ, անտեսելով միտինգի բանաձևը, Պողոս փաշան նիստի հրավիրեց խնամակալության անդամներին։ Սակայն նիստը չգումարվեց։ Սահմանադրության կողմնակիցները «ժողովվեցան եկեղեցիին ընդարձակ պարտեզը և բուռն բողոքներով, ցույցերով և նույնիսկ նախատինքներով ընդունեցին փաշան և իր խնամակալները։ Պողոս փաշա ... ոստիկանության դիմում բրավ։ Հետևակ ու հեծյալ ոստիկաններ մտան պարտեզ և ցուցարարները ցրեցին՝ գրեթե ձեռնընդխառն կռվելով»[35]։ Դրանից հետո Պողոս փաշան հրաժարվեց, նրան փոխարինեց մի ուրիշ փաշա՝ Աբրահամ Բարթողը, և խնամակալությունը գործի անցավ, պատճառ դառնալով նոր կրքերի բորբոքման։

1904 թ. Սահմանադրության կողմնակիցները ստեղծեցին «Միացյալ ճակատը», որի կազմում էին նաև սահմանադրական պայքարից մինչև

[34] «Փյունիկ», № 2 (նոր շրջան), էջ 12—13։

[35] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 287։

այդ ձեռնպահ մնացած Հնչակյան և դաշնակցական կազմակերպությունները։ Միացյալ ճակատը հիմնեց իր պայքարի օրգանը՝ «Օրենք» անունով և հանդես եկավ ծրագրային հայտարարությամբ, որտեղ ասված էր. «Օրենքին տիրապետությունը, ժողովրդի կամքին գերակշռությունը՝ օրենքի ուժով և օրենքով գծված սահմանին մեջ, ամիրայական հավակնություններու վերջնական չախչախումը, Աղեքսանդրիո մեջ Սահմանադրության իրական գործադրությունը, տեղական ազգային շահերու և հաստատություններու պաշտպանությունը և անոնց բարգավաճ ու կանոնավոր վիճակը ապահովելու իբրև միակ երաշխավորություն՝ համարատվության և համարատության դրության մը վերջնական հաստատությունը՝ պաշտպանողաց տերպետական դրության մը տեղ,— ահա մեր նպատակը, ահա միակ կռվանը, որուն վրա կհենվի մեր պայքարը»[36]։

Իշխանությունը միջոցներ ձեռք առավ Միացյալ ճակատի պայքարը ջլատելու համար։ Երվանդ Օտյանը գրել է. «Օրենքին» երևումը և սահմանադրական պայքարին վերսկսումը իրար անցուց իշխանությունը և իր մեկ քանի պաշտպանները, որոնք ուրիշ բան չէին, այլ Բարթող փաշայի հացկատակները կամ պաշտպանյալները։ Անոնք ջանացին ամեն միջոցներով պայքարը վիժեցնել...»[37]։ Նրանց հաջողվեց Հնչակյաններին և դաշնակցականներին հեռացնել Միացյալ ճակատից[38]։ Դաշնակցության Ալեքսանդրիայի կոմիտեն հրապարակավ հայտարարել է. «Աղեքսանդրիո մեջ սկսված ու շարունակվելիք պայքարին մեջ Հ. Հ. Դաշնակցությունը ուղղակի և պաշտոնապես մասնակցություն մը չունի և չի կրնար ունենալ, քանի որ իր նպատակը միմիայն Հայաստանի փրկության գործն է և տեղական կողմնակի գործերով զբաղվելու հնարավորություն չունի։ Տեղական ազգային և այլ գործերուն մեջ դաշնակցական անհատները իրենց ցանկացած կերպով անհատապես մասնակցելու ազատ են...»[39]։ Նույնիմաստ հայտարարությամբ հանդես եկավ նաև Հնչակյան կուսակցությունը։

[36] «Օրենք», 1905, № 2, էջ 3։

[37] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 368։

[38] Երվանդ Օտյանի պատմելով, իշխանության ջոջերը դաշնակցական պարագլուխ «Տոքթոր (բժիշկ—Հ. Թ.) Փաշայանը Բարթող փաշային մտերմացուցին, փաշան տոքթորին 40—50 ոսկի դրամ տվավ իբրև անոր բժշկական մեկ երկամսիության տարագրության ծախք, ու այս կերպով զայն հեռացուցին մեզմե» (Երկերի ժողովածու, հ. 4, էջ 368)։

[39] «Օրենք», 1905, № 3, էջ 4։



Այդ հաջողությունից հետո իշխանությունն անցավ բիրտ միջոցների։ 1905 թ. մարտի 9-ին կատարվեց ահաբեկման առաջին փորձը։ Իշխանության զինած ահաբեկիչը «հանկարծ ներս կխուժե «Օրենքի» տպարանեն և քասաներուն մեջ դասված տառերը գետին թափելե ու հոն եղողները զարնելու փորձելե ետքը, կփախչի ու կապաստանի առաջնորդարան...»[40]։ Մարտի 11-ին Աբու Դաղար փողոցում իշխանության ստահակները հարձակվում են Երվանդ Օտյանի վրա և խոշտանգում նրան[41]։ Այդ արարքներն առավել ևս բորբոքեցին կրքերը իշխանության դեմ։

1906 թ. ապրիլի 29-ին Սահմանադրության կողմնակիցները հանդես եկան բողոքի ցույցով։ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում, պատարագի ավարտին, առաջնորդի անվան հիշատակության ժամանակ ցուցարարները աղմկում էին. «Ջնջվի, չենք ուզեր, Սահմանադրության գործադրությունը կպահանջենք»։ Մյուս կողմից «անընդհատ զանգակը կհնչեցնեին տիրող աղմուկը ալ ավելի սաստկացնելու համար»[42]։ Միհրան Տամատյանը բեմ բարձրանալով «հանուն ժողովրդին, առաջնորդեն պահանջեց, որ Սահմանադրության օրինաց համեմատ թաղական խորհրդո ընտրության ձեռնարկե»[43]։ Երբ Աղավնունին մերժեց, ցուցարարները պահանջեցին նրա հրաժարականը։ Վերջում նրանք առաջնորդարանի դռները փակեցին, և «նվագածուներու առաջնորդությամբ, կանոնավոր թափորով... ուղղվեցան կառավարչատուն» ու քաղաքապետին հանձնեցին «առաջնորդարանի բանալիները»[44]։

Այդ ցույցից մի շաբաթ հետո՝ մայիսի 6-ին Ալհամբրա թատրոնի դահլիճում տեղի ունեցավ Սահմանադրության կողմնակիցների բողոքի միտինգը, որտեղ ճառախոսները պահանջեցին ժողովրդական քվեարկությամբ թաղական խորհրդի ստեղծումը։ Տակավին միտինգը չավարտված, Աղավնունուց ստացվեց մի նամակ, որով նա հավաքվածներին խոստանում էր «թաղական խորհրդո ընտրության ձեռնարկել ըստ Սահմանադրության օրինաց»[45]։ Եվ, իրոք, Աղավնունին լուծեց իշխանությունը, ժողովրդի ներկայացուցիչներից կազմվեց ընտրողական հանձնաժողով, որը և ընտրության օր նշանակեց 1906 թ. մայիսի 27-ը։

[40] «Ազատ բեմ», 11 մարտի 1905։

[41] Տե՛ս Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 369։

[42] Նույն տեղում, էջ 370։

[43] «Լուսաբեր», 3 մայիսի 1906։

[44] Նույն տեղում։

[45] «Ազատ բեմ», 9 մայիսի 1906։

Սակայն Կ. Պոլսի պատրիարքարանը կարգադրեց, որ ընտրությունը հետաձգվի», քանի որ «վսեմ. Բարձր դռան հավանություն չունի...»[46]։ Աղավնունին այդ կարգադրությունը հանձնեց ընտրողական ժողովի ընդլայնված նիստի քննարկմանը։ Նիստում որոշվեց՝ հարգել պատրիարքարանի կամքը, Թաղական խորհրդի ընտրություն չկատարել, բայց, միաժամանակ, «նկատի ունենալով Աղեքսանդրիո՝ ժամանակեն ի վեր ունեցած բացառիկ դիրքը, Կահիրեի (առաջ) հաշվետվություն չունենալու պարագան, կալվածական և հողային գործերու մասին կոնտրոլի մը պետքը մանավանդ սա ժամանակիս մեջ խիստ զգալի լինելը»[47], կատարել գավառական ընդհանուր ժողովի ընտրություն։ Իրոք, մայիսի 17-ին Թաղական խորհրդի փոխարեն ընտրվեց գավառական ժողով։

Ալեքսանդրիայի հայկական գաղութի գավառական ժողովի անդամ ընտրվեցին սահմանադրական պայքարի ակտիվ մասնակիցներ Գառնիկ Զպուրջյանը, Միհրան Տամատյանը, Հովհ. Մութաֆյանը, Հայկ Էքիզլերը, Հակոբ Փեքյարյանը, Տիգրան Կամսարականը և ուրիշներ։ Օրմանյան պատրիարքը բեկանեց ընտրությունը և վերահաստատեց Բարձր դռան գլխավորած խնամակալությունը։ Կրկին կրքերը բորբոքվեցին, մինչև անգամ Ալեքսանդրիայի Թեմն Էջմիածնին ենթարկելու փորձ արվեց։

Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո զգալի չափով թուլացան եգիպտահայ կղերապահպանողականների դիրքերը։ Կ. Պոլսի ազգային ժողովում մեծամասնություն կազմող հակաօրմանյանականների ճնշման ներքո հակասահմանադրական վերնախավը կորցնում էր մեկ հենարանը մյուսի ետևից։ 1908 թ. Ալեքսանդրիայում անցկացված ընտրությունները պսակվեցին Սահմանադրության կողմնակիցների հաղթանակով։

Հետագա տարիներին սահմանադրական պայքարն աստիճանաբար վերածվեց կուսակցական պայքարի՝ դաշնակցության և նրա հակառակորդների միջև։ 1912—1914 թթ. բուռն պայքար էր գնում Աղավնունու հրաժարվելուց հետո թափուր մնացած առաջնորդական աթոռի շուրջը։ Դաշնակցությունը պաշտպանում էր Թորգոմ եպ. Գուշակյանի, իսկ նրա հակառակորդները՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Օրմանյանի թեկնածությունը։ 1914 թ. հունիսի 28-ին, երբ եգիպտահայ համագումարը

[46] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 5721։

[47] Նույն տեղում։



նիստ էր գումարում Ալեքսանդրիայում, դաշնակցականները բողոքի ցույց կազմակերպեցին ս. Պողոս-Պետրոս եկեղեցու բակում։ Ոստիկանները ցրեցին նրանց։ Համագումարը, վախենալով նոր բարդություններից, առաջնորդ ընտրեց Գուշակյանին[48]։

Դաշնակցականների հաջորդ թիրախն Ալեքսանդրիայի ազգային իշխանությունն էր։ Այն վարկաբեկելու և կազմալուծելու բազմաթիվ անհաջող փորձերից հետո՝ 1916 թ. հոկտեմբերին նրանք Գուշակյանից պահանջեցին «ապօրինի» հռչակել Ալեքսանդրիայի նորընտիր քաղաքական ժողովը, սակայն թեմակալը գործիք չդարձավ դաշնակցության մենատիրական ծրագրի իրականացմանը։ Դաշնակցականները դիմեցին բիրտ ուժի օգտագործման...։ Ցուցարարները ներխուժեցին եկեղեցի, և ճառեր արտասանվեցին ժողովրդի անունից։ Նրանց սպառնալիքի ներքո առաջնորդարանի պաշտոնյաները դուրս եկան, բոլոր սրահներում դռները բանալիով կողպվեցան և կնքվեցան»[49]։ Դիմադրողները խոշտանգվեցին, ծանր վիրավորվեց անվանի հրապարակախոս Մարտիրոս Ռուկյանը[50]։

Այդ ապարդյուն աղմկարարությունից հետո դաշնակցական գործիչները փորձեցին Ալեքսանդրիայի ազգային իշխանությունը գրավել միակողմանի ընտրություններ անցկացնելու միջոցով։ Դա նրանց չհաջողվեց։ Այնուհետև թեմական ժողովների շուրջը բարձրացող աղմուկը դադարեց մինչև 1921 թվականը։

## 2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԵԳԻՊՏԱՀԱՅԵՐԸ

XIX դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագիրը, դուրս գալով Օսմանյան կայսրության ներքին քաղաքականության շրջանակներից, ներքաշվեց միջազգային դիվանագիտության ոլորտ։ Արևելքում նվաճողական նպատակներ հետապնդող իմպերիալիստական պետություններն ընդունելի էին համարում ոչ թե հայկական անկախ պետության ստեղծումը, այլ արևմտահայերի իրավական վիճակի ինչ-որ չափով բարելավումը։ Այդ քաղաքականությունն արտահայտություն գտավ 1878 թ. Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածում, որը և այնուհետև, ընդհուպ մինչև առաջին համաշխարհային

[48] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1915, էջ 60—61։

[49] «Հուսաբեր», 17 հոկտեմբերի 1916։

[50] Տե՛ս «Արև», 1 սեպտեմբերի 1927։

պատերազմը, կազմեց Հայկական հարցի պաշտոնական բովանդակությունը։

Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածով Բարձրագույն դուռը պարտավորվում էր առանց հապաղման ռեֆորմներ իրականացնել հայաբնակ մարզերում։ Այդ պարտավորությունների կատարման վերահսկողությունը սահմանված պետությունները, բաժանելով ռուսական զենքի շնորհիվ ձեռք բերված ավարը, մի կողմ քաշվեցին, իսկ թուրքական կառավարությունը ոչ մի ռեֆորմ էլ չկատարեց, ընդհակառակն, քայլ առ քայլ իրականացնում էր ցեղասպանության իր հրեշավոր քաղաքականությունը։

Այդպիսին էր արևմտահայության դրությունը, երբ հայկական տարբեր գաղթավայրերում լայն շարժում ծավալվեց Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման օգտին։ Եվրոպայի «խիղճը» շարժելու ձեռնարկումներին արձագանքեցին նաև եգիպտահայերը։

Եգիպտահայ կղերափաշայական վերնախավը, որի միջուկը պետական բարձր պաշտոնյաներն էին, հետևում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի քաղաքականությանը։ Ճնշող մեծամասնությամբ թուրքահայ էֆենդիներից կազմված ազգային վարչությունը և պատրիարքական աթոռին Ներսես Վարժապետյանից հետո բազմած նախ Վեհապետյանը, ապա Աշըգյանը թուրքական կառավարությունից էին սպասում արևմտահայության վիճակի բարելավումը։ Կույր ձևանալով հայ ժողովրդի տառապանքների նկատմամբ, նրանք գովերգում էին «Հայոց ... դարավոր հավատարմությունն առ օսմանյան մեծազոր գահին», ներբողում և արևշատություն մաղթում սուլթան Աբդուլ Համիդ II-ին։

Հայկական հարցը, բեկվելով եգիպտահայ կղերափաշայական վերնախավի կենսական շահերի ոսպնյակում, ներկայանում էր արտառոց կերպարանքով։ Այդ տեսակետից հետաքրքրական է Մկրտիչ Փորթուգալյանի հարցազրույցն եգիպտահայ բարձրաստիճան գործիչներից մեկի հետ[51]։

[51] Ոմանց կարծիքով Փորթուգալյանի զրուցակիցն եղել է Նուբար փաշան, սակայն այդ կարծիքը հաստատող տվյալներ չկան։ Նշենք, որ Նուբար փաշային զբաղեցնում էին հայ ժողովրդի քաղաքական ճակատագրի, ազգային-հասարակական կյանքի, մշակույթի և լուսավորության հրատապ հարցերը։ Նրա կենսագրության ուշագրավ մոմենտներից է այն շահագրգռվածությունը, որ նա ցուցաբերել է Հայկական հարցի նկատմամբ՝ Բեռլինի վեհաժողովի նախօրեին։ Այդ առումով արժեքավոր փաստաթուղթ է 1895 թ. Խրիմյանի կողմից Նուբար փաշային ուղղված նամակը։ Ակնարկելով 1878 թ. Փարիզում Նուբարի հետ տեսակցությունը, Խրիմյանը գրում է. «Դուք ամենայն սիրով ընդունեցիք և գրկեցիք այս խնդիրը և հանձնեցաք զայն ուշադրության առնել։ Ուստի վերծանելով և քննելով այդ (Պոլսի Ազգային ժողովի—Հ. Փ.) հիշատակագիրը, դուք զայն անհամեմատ և չափազանց գտաք։ Ուստի մի այլ հիշատակագիր կազմեցիք, ձեր իմաստուն հեռատեսությամբ չափավորելով և հնարավոր դարձնելով խնդիրը։ Ես այդ նոր չափավորյալ հիշատակագիրը հղեցի ի Պոլիս՝ Ներսես պատրիարքին։ Այլ ավաղ, ... Պոլսո ինքնահավան խելացիները չկրցան կամ չուզեցին ըմբռնել ձեր կազմած հիշատակագրին իմաստուն չափավորությունը։ ...Եթե՛ ձեր հորինած հիշատակագիրը մատուցվեր վեհաժողովին, ես այնպես կհավատամ, որ 61-րդ հոդվածն այնպես թույլ, անորոշ կերպով չէր արձանագրվեր...» (տե՛ս Գ. Լազյան, Հայաստանը և հայ դատը, էջ 117—118)։



«Հարցում.—Ի՞նչ կխորհի նորին վսեմությունը Հայկական խնդրի լուծման մասին։

«Պատասխան.—Այդ խնդիրը ինձ շատ ծանոթ չէ. թե ինչ կուզեն հայերը, այդ ալ չգիտեմ. միայն աստ-անդ կլսեմ երբեմն, որ ոմանք թագավորություն կուզեն, ոմանք հանրապետություն, մին Կիլիկիան կուզե ազատել, մյուսը՝ Հայաստանը։

«Հ.—Հայկական խնդիրը ոչ կառավարության ձևի խնդիր է և ոչ ալ այս կամ այն մասն ազատելու. դա բարենորոգումների խնդիր մ'է միջազգային դաշնագրով մը պարզված և նվիրագործված. միայն թե հայերն այժմ հուսահատվելով Եվրոպայի խաղաղ կամ բռնի միջամտություններեն, ապստամբությամբ կուզեն ձեռք բերել երկրին բարենորոգման ազատությունը։

«Պ.—Ինչ որ է, մեր գիրքը և զբաղումները չեն թողած մեզ այդ խնդրին ավելի մոտ ծանոթանալու։

«Հ.—Ինչո՞ւ հայ ժողովուրդը բախտ չունենա իր տաղանդավոր զավակներեն օգուտ քաղելու, մինչդեռ ատոնք այնքան նշանավոր ծառայություններ կմատուցանեն օտար ժողովուրդներու։

«Պ.—Մարդ որ երկրի մեջ ապրի, այն երկրին կծառայե. ես վաղուց հարաբերություններ չեմ ունեցած հայ ազգին հետ և Հայաստանն ալ տեսած չեմ։ Բացի այդ, եթե ես հայ ազգի խնդրովն սկսիմ զբաղվիլ, հայ հեղափոխական ռումբերն կրնա՞ պաշտպանել իմ գիրքը, իմ շահերը, որոնք այժմ այստեղ ունիմ և որոնք կրնան վտանգվիլ, եթե ռամիթիների հետ հարաբերությունս հայտնվի։

«Հ.—Հայ հեղափոխական շարժումը դեռ նոր սկսած մանուկ վիճակի մեջ է և ինք օգնության ու պաշտպանության կարոտ է. ո՞րն կրնա պաշտպանել գիրքն ու շահը։

«Պ.—Ուրեմն, եթե դեռ փոքր է հեղափոխական գործը, մեր միջա-

մրցությունն ալ անօգուտ կլինի. Թող մեծնա, այն ատեն մեր զավակները կմասնակցին։

«Հ.—Ավելի անկեղծ խոսելով պետք է ուրեմն ոչինչ հուսալ հայ պաշտոնյաներե, գիրք ունեցող անձերե։

«Պ.—Ինչո՞ւ, անոնք ալ հայ են, միայն առայժմ բան մը չեն կրնար ընել. ես հայությունը կսիրեմ, ձեռքես եկած օգնությունն ըրած եմ ինձ դիմող անհատներուն, որոնք պաշտպանություն կխնդրեն երկրին պաշտոններուն մեջ մտնելու, բայց քաղաքական խնդրին չեմ կրնար զոհել ներկա դիրքս»[52]։

Վերջում, Փորթուգալյանն ավելացնում է. «Կարծեմ թե այս պատասխանը պիտի ստացվի, եթե դիմում լինի նաև ուրիշ հայ պետական անձերու»[53]։ Ինչպես Կ. Պոլսում, այնպես էլ Եգիպտոսում տիրապետավոր մեծատունները, վարելով Թուրքիան «չանհանգստացնելու» քաղաքականություն, ոչ միայն «անտարբերություն ու չեզոքություն» էին ցուցաբերում Հայկական հարցի նկատմամբ[54], այլև ջարդերի պատասխանատու էին համարում «քոմիթաճիներին»՝ բուրժուազիայի ծոցից ծնված «հեղափոխական» կազմակերպություններին։ Այդ վարքագծի ցայտուն արտահայտությունն էր Օրմանյանի «անէծքի» կոնդակը, որով 1897 թ. Կ. Պոլսի հայկական եկեղեցիների բեմերից նզովվեցին հայ հեղափոխականները[55]։

Հայկական հարցում տարբեր դիրք էին գրավում եգիպտահայ լիբերալները, որոնք արտահայտում էին գաղութահայ առևտրական բուրժուազիայի շահերը։

Արևմտահայ լիբերալ-բուրժուական հոսանքի գաղափարախոսներն եգիպտահայությանը կարևոր դեր էին վերապահում Հայկական հարցում։ Մկրտիչ Փորթուգալյանը հավատում էր, որ Եգիպտոսի «թե քաղաքագիտությամբ, թե հարստությամբ և վերջապես խելքով ու սրտով բարձր հայերը ... պատվաբեր մի դիրք պիտի բռնեն մեր ազգային վերանորոգության պատմության մեջ»[56]։ Նրա գաղափարակից եգիպտահայ հրապարակախոս Լազյանը տարբեր գաղթավայրերում գործող հայրենասիրական ուժերին կոչ էր անում միավորվելու՝ «ծնունդ տալու համար մի կենտրոնական վարչության կամ գերագույն ժողովի», որի

52 «Արմենիա», 17 նոյեմբերի 1894։

53 Նույն տեղում։

54 Տե՛ս «Փյունիկ», 1899, էջ 72։

55 Տե՛ս Մ. Ներոբյան, Մեր պայքարը, էջ 195։

56 «Արմենիա», 13 փետրվարի 1886։



նստավայրը պետք է լիներ Եգիպտոսը[57]։ Նա ասում էր. «Կրնա՞նք միթե գտնել Եգիպտոսեն ավելի հարմար և ավելի մտադրության արժանի մի տեղ։ Մի երկիր, որ յուր աշխարհագրական դիրքի պատճառով չեզոք լինելու սահմանված է, պաշտպանվելով բոլոր մեծ պետություններեն։ Եվ արդարև մեկ կողմը կգտնվի այն սքանչելի ճանապարհը, որ մի քանի օրի մեջ կտանի Պարսկային ծոցը և անկե Հայաստան, մյուս կողմը ճշմարիտ պատվարն է Կիլիկիայի, ուր կարելի է անցնիլ մեկ ոստումով, առանց ժամանակ կորսնցնելու։ Թուրքիայեն և Ռուսիայեն դուրս ո՞ր երկրի մեջ կարելի է գտնել այնպիսի բազմաթիվ և այնպիսի զորավոր մի հայ գաղթականություն, ինչպես Եգիպտոսի մեջ։ Եվրոպական ո՞ր հայ գաղթականությունը կհամարձակի ի կշիռ գալ եգիպտական հայ գաղթականության հետ թե դրամական միջոցներով և թե յուր ներքին դրությամբ և վայելած այլևայլ առանձնաշնորհումներով»[58]։

1885 թ. նոյեմբերի 23-ին Կահիրեում հայ հասարակայնության ներկայացուցիչները, խորհրդակցության հավաքվելով, կարծիքներ փոխանակեցին, թե «ի՞նչ միջոցներով կրնան թեթևցունել» Հայաստանի ժողովրդի վիճակը։ Ընտրվեց հանձնաժողով, որը պետք է դիմումներ կատարեր այդ նպատակի համար[59]։ Առաջին դիմումը ստորագրել են հայ ժողովրդի «թշվառության մեղմացումը» Անգլիայից սպասող կահիրաբնակ 250 հայ առևտրականներ։ Լորդ Սոլսբերիին ուղղված նրանց «խնդրագրում» ասված է. «Կհամարձակինք ամենայն խոնարհությամբ բարձրացունել մեր ձայնը մինչև առ Ձեր մեծություն, այն չարիքներու համար, որոնցմով մեր մայր-հայրենիքը կտառապի և որոնց վկա է Եվրոպան։ Թեպետ հեռի մեր ընտանիքներեն և եղբայրներեն, բայց չենք կարող անտարբեր մնալ իրենց կրած տառապանքներուն... Մեր սրտերը կթելադրեն մեզ՝ մեկ հզոր թագավորության մը կառավարութենեն խնդրելու անոնց թշվառության մեղմացումը։ ...Այն շնորհը, որ մենք կխնդրենք Ն. Վ. Թագուհու կառավարութենեն Բեռլինի 61-րդ հոդվածի գործադրվիլն է օսմանյան կառավարութենեն...»[60]։

Պատասխանելով այդ դիմումին, Անգլիայի արտաքին գործերի նախարարության ծառայողներից ոմն Բոնֆորդ գրում է. «Նորին վեհափառությունը յուր ընտրողության պիտի թողու որոշելու համար, թե երբ հարմար առիթ կլինի Դռան դիմումներ անելու այս խնդրի նկատ-

57 Տե՛ս «Արմենիա», 28 մայիսի 1887։

58 Նույն տեղում։

59 Տե՛ս «Արմենիա», 5 դեկտեմբերի 1885։

60 «Արմենիա», 16 հունվարի 1886։

մամբ»[61]։ Բեռլինի վեհաժողովում ձևականորեն պաշտպանելով «Մեծ Հայաստանի» լոզունգը, Անգլիան գործնականում Հայկական հարցը օգտագործել էր Ռուսաստանի դեմ պայքարելու և Թուրքիայում իր գրաված դիրքերը պաշտպանելու համար։ Հայ ժողովրդի իրավական կացության հետ կապված հարցերն Անգլիային հետաքրքրում էին այն չափով, ինչ չափով դրանք կարող էին նպաստել սեփական գաղութատիրական շահերին։ Կիպրոսում հաստատվելուց հետո Անգլիային այլևս չէր հետաքրքրում հայ ժողովրդի վիճակը։ Բավարարվելով Բոնաֆորդի պատասխանով, եգիպտահայ լիբերալները նոր դիմումներ չկատարեցին։

Ի հակադրություն կղերափաշայականների և լիբերալ-բուրժուաների, ասպարեզ իջավ հայրենասիրական մի կազմակերպություն՝ «Հառաջդիմասերը», որի դրոշի ներքո համախմբված երիտասարդները, ոգեշնչվելով Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի և ազգային-դեմոկրատական հոսանքի մյուս մտավորականների գաղափարներով, պայքարում էին սուլթանական բռնակալության դեմ և Ռուսաստանից էին ակնկալում հայ ժողովրդի ազատությունն ու անկախությունը։

Հառաջդիմասեր ընկերության հիմնադիր ժողովը գումարվել է Կահիրեում 1886 թ. ապրիլի 4-ին, «ի ներկայության գաղթական հայոց երկու սեռէ խուռն բազմության»։ Ճառախոսները պարզել են գավառների հայության անմխիթար վիճակը և հայցել «ժողովրդյան աջակցությունն» ընկերության «սուրբ նպատակի» կենսագործման համար։ Նրա ղեկավար օրգանի՝ եռանդամ վարչության կամ անօրեն ժողովի անդամ են ընտրվել Կարապետ Միհանոֆը (ատենապետ), Կարապետ Խոսրաշնցը (ատենադպիր), Ս. Բյուրըյուլյանը (գանձապահ)։ Ժողովն ավարտվել է Ռ. Պատկանյանի «Հիմի՞ էլ լռենք» և Մ. Նալբանդյանի «Ազատն աստված» երգերի հոտնկայս կատարումով[62]։ Նույն տարվա վերջերին Ալեքսանդրիայում կազմակերպվեց «Փրկառնեչ» ընկերությունը, որը հետագայում «Արմենիա» վերանվանվելով, դարձավ Հառաջդիմասերի մասնաճյուղը։ 1886—1887 թթ. Կահիրեում Հառաջդիմասերը ուներ 83[63], Ալեքսանդրիայում շուրջ 100 անդամներ[64]։ Թվական տվյալներ չկան Մինիայում, Սուակինում և այլ վայրերում գործող մասնաճյուղերի անդամների վերաբերյալ։ Կազմակերպության անդամների ընդհանուր թվաքանակը երբեք չէր անցնում 250—300-ից։ Եգիպտահայերը ջերմեռանդորեն արձագանքում էին Հառաջդիմասերի կոչերին և դրամական զգալի միջոցներ տրամադրում նրան։ 1887 թ. Մասսուայի փոքրաթիվ հայերի շրջանում Հառաջդիմասերը հանգանակել է 815 ֆրանկ[65], իսկ 1888 թ.՝ 150 ոսկի՝ «ի նպաստ Զեյթունի մերաղնյա հրկիզելոց»[66]։

Հառաջդիմասերի աճող ժողովրդականությունը լրջորեն անհանգստացրեց մեծատուններին, և նրանց ներշնչած կասկածների հետևանքով ընկերության մի շարք «անդամները տեղական կառավարության սպառնալյաց մատնվեցան»[67]։ Հալածանքն ավելի սուր բնույթ ստացավ, երբ Հառաջդիմասերը սկսեց դիմումներ կատարել Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման օգտին։ 1888 թ. վերջերին, օգտվելով մի շարք բարձրաստիճան ռուս գործիչների Կահիրեում գտնվելու պատեհությունից, Հառաջդիմասերը հանդես եկավ Ռուսաստանի նկատմամբ համակրանքի ելույթով։ Եգիպտահայ «գաղթականության կողմէ» հրապարակային ուղերձով ռուս հյուրերին դիմելով, Հառաջդիմասերի ղեկավարներն արտահայտեցին հայ ժողովրդի ակնկալությունները Ռուսաստանից[68]։ Ավելի ուշ, երբ Եգիպտոս այցելեց մեծ իշխան Նիկոլայը, ընկերության ջանքերով «Հայ գաղթականությունը հարյուրավոր ստորագրություններով ծածկված մի հանրագիր» մատուցեց նրան, խնդրելով միջնորդել «իր հոր մոտ, որպեսզի նա հաճի իր հզոր ձայնը բարձրացնել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրությունը պահանջելու համար»[69]։

Հառաջդիմասեր ընկերության գործունեությունն իր բարձրակետին հասավ 1889 թ., երբ Ալեքսանդրիայում սկսեց լույս տեսնել «Նեղոս» շաբաթաթերթը։ Նպատակների համարյա նույնությունը նպաստեց, որ «Նեղոսի» հրատարակիչները՝ Անտոն Ռշտունին, Վահան Մամասյանը և Ղևոնդ ք. Փափազյանը սերտ համագործակցություն ստեղծեն Հառաջդիմասերի հետ։ «Նեղոսը», փաստորեն դառնալով ընկերության բանբերը, խարազանում էր եգիպտահայ մեծատուններին և Կ. Պոլսի ազգային ժողովի թուրքասիրական քաղաքականությունը։ «Նեղոսի» մերկացումներից զայրացած մեծատուններն անցան բացահայտ թշնամական

[61] «Արմենիա», 13 փետրվարի 1886։
[62] Տե՛ս «Արմենիա», 14 ապրիլի 1886։
[63] Տե՛ս «Արմենիա», 16 ապրիլի 1887։
[64] Տե՛ս «Արմենիա», 5 փետրվարի 1887։

[65] Տե՛ս «Արմենիա», 16 ապրիլի 1887։
[66] Տե՛ս «Արմենիա», 22 փետրվարի 1888։
[67] «Արմենիա», 22 հոկտեմբերի 1887։
[68] Տե՛ս «Արմենիա», 3 նոյեմբերի 1888։
[69] «Արմենիա», 17 դեկտեմբերի 1890։

գործողություններից։ Նրանց առաջին թիրախը դարձավ Ղևոնդ ք. Փափազյանը, որը սեփական տառերով անձամբ շարում էր շաբաթաթերթը։ Նա թեմական առաջնորդ Իզմիրլյանից ստացավ «պաշտոնագիր մը, որով կպարտավորվեր անմիջապես ի Պոլիս ուղևորվիլ»։ «Նեղոսի» համակիրների դիմումները, հանրագրերն ու բողոքներն անհետևանք մնացին և Ղևոնդը ոստիկանների ուղեկցությամբ առաջնորդվեց «նույնժամայն ի Պոլիս ուղևորվող արաբական շոգենավն...»[70]։ Ղևոնդի դեմ գործադրված վայրագության մի ականատես գրում է. «Ոստիկանք մինչև ի շոգենավ շատ անարգեցին, շատ անպատվեցին և մինչև անգամ հարվածներով չափազանց չարչարեցին (Ղևոնդին)...։ Չարագործին, ոճրագործին ալ հետ այդպես չէին վարվիր գուցե։ Արտոնություն չունենալով յուր գույքերն անձամբ շոգենավ փոխադրելու, ոստիկանք յուր սենյակի դուռն խորտակելով ղանոնը (նավ) փոխադրեցին խառնիխուռն վիճակի մեջ»[71]։

Ղևոնդ ք. Փափազյանի Եգիպտոսից արտաքսվելը չսանձված աղմուկ բարձրացրեց։ Կահիրեի եկեղեցում «Նեղոսի» համակիրների կազմակերպած հակաիզմիրլյանական ցույցը վերածվել է կռվի, որին միջամտել է ոստիկանությունը։ Մեծատունների ցուցմունքներով ձերբակալվել են Անտոն Ռշտունին, Ղուկաս Փափազյանը, Գրիգոր Մինթանջյանը, Հակոբ Փեհրիզյանը, Հակոբ Թերզյանը, Գրիգոր Գասպարյանը, Մկրտիչ Պուտախյանը՝ բոլորն էլ Հառաջդիմասերի պատասխանատու աշխատողներ։ Հրաման է եղել նաև Կարապետ Մրհանոֆի և Կարապետ Խուրանցի ձերբակալման մասին, սակայն նրանք ռուսահպատակ լինելով, ռուսական դեսպանի միջնորդությամբ զերծ են մնացել հետապնդումից[72]։

Ազգային իշխանավորների հայցով կազմակերպվեց հրապարակային դատավարություն։ Ձերբակալվածների դրությունը ծանրացնելու նպատակով նրանք փորձեցին «քաղաքական գույն» տալ դատավարությանը, սակայն այդ նրանց չհաջողվեց։ Դատվելով եկեղեցում անկարգություն հարուցելու մեղադրանքով, նրանցից 3-ը դատապարտվեցին 2-ական, իսկ 4-ը՝ 1-ական ամիս արգելափակման[73]։ Այդ իրադարձու-

70 «Արմենիա», 20 ապրիլի 1889։

71 Նույն տեղում։ Պիրեի (Հունաստան) նավահանգստում Ղևոնդին հաջողվել է նավից դուրս գալ և անցնել Կալաց, որտեղ և նա նորից տպարան է հիմնել և կատարել հրատարակություններ (Թեոդիկ. Տիպ և տառ, էջ 143—144)։

72 Տե՛ս «Արմենիա», 27 ապրիլի 1889։

73 Տե՛ս «Արմենիա», 4 մայիսի 1889։



թյուններից հետո Հառաջդիմասեր ընկերությունը, ոստիկանական հրնչման ներքո, գնալով թուլացավ, պառակտվեց և ի վերջո կազմալուծվեց։

Այսպիսով, եգիպտահայ հասարակության տարբեր խավերը պահանջում էին Բեռլինի 61-րդ հոդվածի համաձայն բարեկարգումներ կատարել Արևմտյան Հայաստանում, սակայն տարբեր ձևով էին պատկերացնում նրա կենսագործումը։ Կղերապահպանողական վերնախավը, հետևելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի քաղաքականությանը, թուրքական կառավարությունից էր սպասում արևմտահայության վիճակի բարելավումը։ Բուրժուալիբերալները, արտահայտելով եվրոպական կապիտալի հետ կապված գաղութահայ առևտրական բուրժուազիայի շահերը, Արևմտյան Հայաստանի ժողովրդի «թշվառության մեղմացումը» սպասում էին Եվրոպայից, հատկապես Անգլիայից։ Ազգային-դեմոկրատական գաղափարներով տոգորված խավերը, որոնց առավել համարձակ ներկայացուցիչները համախմբված էին Հառաջդիմասեր ընկերության մեջ, հայ ժողովրդի ազատությունն ակնկալում էին Ռուսաստանից։

* * *

Հայ «հեղափոխական» կազմակերպություններն Եգիպտոսում վայելում էին գործելու հարաբերական ազատություն։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ին հաջողվում էր անգամ Փարիզում երիտասարդ թուրքեր հալածել, բայց թուրքական ոստիկանությունը, ինչպես նշել է անվանի հրապարակախոս Բյուզանդ Քեչյանը, «անկարող եղած էր երիտասարդ թուրք մը կամ հայ փախստական մը ձերբակալել» Եգիպտոսում[74]։ 1890-ական թվականների սկզբներին Կահիրեում հանդես եկան հնչակյան առաջին խմբակները և, օգտվելով այդ պայմաններից, կարճ ժամանակաշրջանում վերածվեցին բավական բազմամարդ կազմակերպության։

1896 թ. Լոնդոնում գումարված առաջին պատգամավորական ժողովում հնչակյան կուսակցությունն երկփեղկվեց։ Պատգամավորների մեծամասնությունը պահանջեց գործող ծրագրից հանել սոցիալիզմի հարցը, և մշակել «անխառն» ազգային ծրագիր, իսկ պատգամավորների փոքրամասնությունը պաշտպանեց հնչակյան կուսակցության «սոցիալիստական» կողմնորոշումը։ Պատգամավորների մեծամասնությունը, որին գլխավորում էին Ա. Արփիարյանը, Մ. Տամատյանը, Հ. Ճանգյուլյանը, հավաքվելով մի ուրիշ սրահում, ընտրեցին նոր վարչություն,

74 «Բյուզանդիոն», 28 հունիսի 1918։

և պահանջեցին իրենց հանձնել կուսակցության գույքն ու կնիքը: Պահանջը մերժվեց: Անգլիական դատարանը կուսակցության իրավատեր ճանաչեց փոքրամասնության ներկայացուցիչ, «Հնչակ» պաշտոնաթերթի արտոնատեր Ավետիս Նազարբեկյանին: 1897 թ. մեծամասնականները, վերանվանվելով «Վերակազմյալ Հնչակյան կուսակցություն», իրենց կենտրոնը հաստատեցին Եգիպտոսում:

«Սոցիալիզմի քաղցրահնչյուն, բայց երազական գաղափարներից» հրաժարված և «անայլամերժ ու բարեշրջական» վարքագիծ որդեգրած վերակազմյալները[75] քննադատության կրակ էին տեղում փոքրամասնականների՝ Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության «սոցիալիստական» կողմնորոշման պաշտպանների գլխին: Նրանք մինչև անգամ չէին խնայում Կովկասում ռուս սոցիալիստների հետ համագործակցող «ընկերվարական հայերուն»: Եգիպտոսի նրանց օրգանը գրում էր. «Հայերը տասնկ տարրի մը հետ հարաբերության մեջ գտնվելով պարզապես ռուս կառավարության և ժողովուրդի ատելությունը և թշնամությունը գրգռած կըլլան իրենց դեմ: Հայ հեղափոխականները ուխտած են իրենց ժողովուրդին վիճակը բարվոքելու աշխատիլ: Արդ, շատ տարօրինակ ծառայություն մը մատուցած կըլլան մեզի, երբ ռուս ընկերվարականներու հետ ձախորդ գործակցությամբ մը ամբողջ հայության քաղաքական ապագան վտանգեն: Հայերուն փրկությունը ազգայնական ըլլալուն մեջ է և ոչ երբեք ընկերվարականն»[76]: Այդ ուղին պետք է վերակազմյալ Հնչակյաններին հանգեցներ հայ բուրժուազիայի հետ լեզու գտնելուն:

Վերակազմյալ Հնչակյանների և Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության գաղափարական պայքարին ուղեկցում էին փոխադարձ մերկացումները: Նրանց հակամարտությունը սրվելով ուղի բացեց մահափորձների: Կ. Պոլսի ոստիկանապետ Նազիմը, օգտագործելով Արփիարյանի կողմից մամուլում կատարված մերկացումները, ձերբակալեց մի քանի Հնչակյանների: «Հնչակը» արևմտահայ ականավոր գրողին մեղադրեց մատնչության մեջ, և նրա համախոհներին անվանեց «նազիմականներ», այսինքն թուրքական ոստիկանության վարձկաններ[77]: Եվ ծայր առան ահաբեկումներն ու սպանությունները: Վերակազմյալները, որպես պատասխան իրենց ընկերներ Շահենի և Զինճյանի սպանության, 1903 թ. Լոնդոնում տեռորի ենթարկեցին Հնչակյան կուսակցության երրորդ պատգամավորական ժողովում սոցիալիզմի պահանջ առաջադրած պատգամավորներ Սագունուն, Գրիգորյանին և Սրմիկյանին: Հնչակյան կենտրոնը անպատասխան չթողեց. 1908 թ. փետրվարի 12-ին Կահիրեի ալ-Մանախ փողոցում նրա զինված տեռորիստը կտրեց Արփիարյանի կյանքի թելը[78]: Արփիարյանի կուսակիցներն ահաբեկման անհաջող փորձ կատարեցին Նազարբեկյանի և Սապահգուլյանի դեմ:

Վերակազմյալ Հնչակյանները Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածը համարում էին նախադրյալ արևմտահայերի ազատագրության համար: Ա. Արփիարյանը գրում էր. «Մեր էն ամուր հենարաններեն մեկը 61-րդ հոդվածն է, հայկական խնդիրը անոր միջոցով եվրոպականացած է, փոխանակ Թուրքիո մեկ պարզ գավառական դժվարություն մնալու...»[79]: Նրանք օգտագործում էին ամեն առիթ, հաճախ աղմկոտ ցույցեր և միտինգներ կազմակերպում՝ «խնամակալ» պետություններին հիշեցնելով հայ ժողովրդի տառապանքները, պահանջելով Բեռլինի 61-րդ հոդվածի կենսագործումը և այլն: 1899 թ. մայիսի 21-ին վերակազմյալները միտինգներ կազմակերպեցին Կահիրեում և Ալեքսանդրիայում, Լահեի «զենքընկեցության վեհաժողովի» հետ միամտորեն քաղաքական ակնկալություններ կապելով: Կահիրեի միտինգում ճառերով հանդես եկան Սմբատ Բյուրատ, մի ֆրանսիացի՝ Ժյուլ Մյունիեն և ուրիշներ, ընտրվեց «Հայկական դատի» մնայուն հանձնաժողով, ընդունվեց վեհաժողովի նախագահին ուղղված բանաձև-հեռագիր, որով պահանջվում էր. «Հայաստանի մեջ իրական բարենորոգումներ ապահովել եվրոպական տերությանց հսկողության տակ»[80]: Ալեքսանդրիայի միտինգի մասնակիցներն այդ բովանդակությամբ հեռագրեր ուղարկեցին նաև վեց մեծ պետությունների արտաքին գործերի մինիստրներին, ԱՄՆ-ի նա-

---

75 «Ծրագիր վերակազմյալ Հնչակյան (ազգայնական-ազատական) կուսակցության», Բոստոն, 1919, էջ 4—5:

76 «Ազատ բեմ», 9 սեպտեմբերի 1905:

77 Տե՛ս «Հնչակ», 1897, № 11 և 12:

78 Ահաբեկիչը՝ Հյուսեյինյանը, որը կախաղանով քավեց իր ոճիրը, Մամրեն Գ. Վարդանյանին տալ է. «Արփիարյանը, զոր սպանեցի, չէի ճանչնար և երբեք չէի տեսած. ինձի ըսին որ հայ հեղափոխական կոմիտեներուն գործերը կը մատներ և թե բռնակալին (Համիդին—Հ. Փ.) ծախված էր: Զինքը սպանեցի հայ ազգը ազատելու համար թշնամիէ մը, բայց չէի գիտեր, որ ընդհակառակը, պատվելի մարդ մըն էր» («Արևը», 21 օգոստոսի 1908):

79 «Նոր կյանք», 1898, № 5, էջ 116:

80 «Փյունիկ», 1899, էջ 74:

խաղաղին, և, որ նշանակալից էր, մերժեցին վստահություն հայտնել Կահիրեի միտինգում Լահեի վեհաժողովի պատգամավոր առաջադրված Մինաս Չերազին՝ հայկական դատի համար «վտանգավոր» համարելով նրա «ռուսասիրությունը»[81]։

Վերակազմյալ հնչակյանները քաղաքական ակնկալություններ չունեին Ռուսաստանից, և հաճախ սուր սլաքներ էին ուղղում նրա դեմ։ Դա ցույց է տալիս, որ նրանց կողմնակերպությունն ավելի ու ավելի էր ենթարկվում անգլիական և ֆրանսիական կապիտալի հետ կապված եգիպտահայ բուրժուաների ազդեցությանը, թեև չպետք է անտեսել նաև այն դերը, որ կատարում էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը։ «Փյունիկը» գրում էր. «Ո՞րմէ սպասենք մեր հույսերու իրականացումը, Ռուսիայէ՞ն, որ այսօր Ֆինլանդիո ունեցածն ալ առավ ձեռքեն»[82]։ Նրանց հակառուսական տրամադրություններն ավելի ցայտուն արտահայտվեցին ազգային-եկեղեցական կալվածների գրավման առթիվ։ Կահիրեում և Ալեքսանդրիայում տեղի ունեցան բողոքի ցույցեր և միտինգներ։ Երվանդ Օտյանը գրել է. «Այնքան աղմուկ հարուցին, որ Ռուսիո Եգիպտոսի ընդհանուր ներկայացուցիչ Մաքսիմով ... Կահիրեեն հատկապես Ալեքսանդրիա եկավ մեզի հորդորներ կարդալու և այդ ցույցերուն առաջքը առնելու համար»[83]։ Սակայն Մաքսիմովի աղաբիչ փորձերն անցան ապարդյուն, և հայերը հրեաների և իտալացիների հետ միասին ցույցեր կատարեցին ռուսական հյուպատոսարանի առաջ։ Ըստ Օտյանի «ռուսական թևով հայերը» ձերբակալվել և դատապարտվել են «երկու ամսեն մինչև հինգ ամիս բանտարկության»[84]։

Վերակազմյալներն արևմտաեվրոպական կողմնորոշմանը մնացին նաև հետագա տարիներին։ 1904 թ., երբ սուլթան Աբդուլ Համիդը ուժեղացրեց հարստահարությունները, Խրիմյան կաթողիկոսը հանձնարարեց Սարաջյան և Այվազյան եպիսկոպոսներին՝ դիմումներ կատարել եվրոպական պետություններին, պահանջելով Բեռլինի 61-րդ հոդվածի

[81] Տե՛ս «Փյունիկ», 1899, էջ 111։

[82] «Փյունիկ», 1899, էջ 84։

[83] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 310։ Պատմելով Ալեքսանդրիայում Մաքսիմովի և գաղութի «ծանոթ դեմքերու» հանդիպման մասին, Օտյանը նշել է. «Մաքսիմովը տեսավ, որ իր խոսքերը բոլորովին հակառակ արդյունք մը հառաջ բերած էին, բարկությամբ ոտքի ելավ ու հեռացավ, գնաց մեկ քանի ոստիկանական խոսքեր մռլտալով բիթին տակեն» (Նույն տեղում, էջ 311)։

[84] Նույն տեղում, էջ 416։



կենսագործումը։ Կաթողիկոսական պատվիրակության դիմումներին ուժ տալու նպատակով, հայկական տարբեր գաղթավայրերում կազմակերպվեցին ժողովրդական միտինգներ։ Մայիսի 2-ին Կահիրեի Վարիետե թատրոնում հնչակյանների նախաձեռնությամբ տեղի ունեցավ «միջազգային մեծ միթինկ Հայաստանի նոր կոտորածների դեմ բողոքելու համար»[85]։ Միտինգում ճառերով հանդես եկան հայ, արաբ և եվրոպացի քաղաքական գործիչներ։ Վերջում միաձայն ընդունվել է հետևյալ բանաձևը. «Կահիրեի ամեն ազգությանց պատկանող երկու հազար հոգի, ի միթինգ գումարված... կաղաչեն՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Միացյալ Նահանգներուն հասցնել Հայաստանի տառապյալներուն արձագանքը, և խնդրել իրենցմե, որ հանուն մարդասիրության իրենց բոլոր ուժովը միջամտեն, որպեսզի վերջ մը տրվի անոնց»[86]։ Ուշագրավ է, որ Ռուսաստանն անտեսված էր։ Անգլիայի թագավորը մերժել է ընդունել հայկական պատվիրակության խնդրագիրը, իսկ նախագահ Ռուզվելտը հայտնել է, որ ի վիճակի չէ զբաղվելու Հայկական հարցով, քանի որ ԱՄՆ-ը չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը[87]։

Վերակազմյալ հնչակյանների արևմտաեվրոպական կողմնորոշումը չհանգեցրեց, չէր էլ կարող հանգեցնել դրական արդյունքի։ Անգլիան և Ֆրանսիան, որոնք բոլոր միջոցներով աշխատում էին սիրաշահել գերմանական իմպերիալիզմով հրապուրված սուլթան Աբդուլ Համիդին, լսել անգամ չէին ուզում հայ ժողովրդի դեմ գործվող ոճիրների մասին, թեև, այդ երկրներում բազմաթիվ հումանիստ գործիչներ բողոքի ձայն էին բարձրացնում Հայկական հարցի օգտին։

Այսպիսով, Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը, հրաժարվելով «սոցիալիզմի քաղցրահնչյուն, բայց երազական գաղափարներից», և տուրք տալով եգիպտահայ լիբերալ-բուրժուաների արևմտաեվրոպական կողմնորոշմանը, կանգնեց փակուղու առաջ։ Վերակազմյալ գործիչները մինչև վերջն էլ չհասկացան, որ եվրոպական մեծ պետությունները Բեռլինում հավաքվել էին ոչ թե փոքր ժողովուրդների ճակատագրով զբաղվելու, այլ սովորական միջազգային գործարքներ կնքելու, առանց հաշվի նստելու ժողովուրդների կամքի հետ, և հաճախ նրանց կենսական շահերի դեմ։ Գաղափարական և քաղաքական անան-

[85] «Ազատ բեմ», 7 մայիսի 1904։

[86] Նույն տեղում։

[87] Նույն տեղում։

կությունը Վերակազմյալ Հնչակյան կուսակցությանը պետք է տաներ դեպի պառակտում և կազմալուծում։

Երիտթուրքական հեղափոխության նախօրեին և հատկապես նրան հաջորդող տարիներին նոր տեղաշարժեր կատարվեցին եգիպտահայ հասարակական-քաղաքական կյանքում։

XX դարի սկզբներից եգիպտահայ բուրժուազիան, ձգտելով առաջնորդող դեր կատարել Հայկական հարցում, երազում էր իրարից անջատ գործող «հեղափոխական» կազմակերպությունները միավորել իր մականի ներքո։ Բուրժուական գործիչ Ա. Դարբինյանը գրել է. «Տաճկահայ ժողովուրդին ճգնաժամային դրության հանդեպ հայ հեղափոխական գործը կկարենար ավելի քան երբեք մեծ ճիգերու և միահամուռ գործակցության։ Անհրաժեշտ էր, ուրեմն, որ տաճկահայ դատին համար կազմված անջատ կուսակցությունները ի մի համախմբվեին և միացնեին իրենց ջանքերը։ Ուստի պետք էր անպայման առաջ բերել այդ ցանկալի միությունը»[88]։ 1905—1906 թթ. մի շարք եգիպտահայ բուրժուական գործիչներ հանդես եկան «Հայկական ընդհանուր միություն» կազմակերպելու առաջարկով, միություն, որն ընդգրկելով «ազգին ամենեն կարող և բանիմաց տարրերը, ջանա թե՛ իր ձեռքն առնել ազգային դատի ղեկավարությունը, և թե՛ վերջ մը դնել անսանձ և վարկաբեկող գործունեություններու»[89]։ 1906 թ. Պողոս Նուբարի, Յակուբ Արթինի, Ազաթոնի, Անդրանիկյանի գլխավորությամբ, և վերակազմյալ հնչակյան գործիչներ Վահան Թեքեյանի, Միհրան Տամատյանի, Էժեն Բարայանի, Լևոն Մկրտչյանի և ուրիշների մասնակցությամբ ստեղծվեց գաղութահայ խոշորագույն բարեգործական կազմակերպությունը՝ «Հայ բարեգործական ընդհանուր միությունը»[90]։

Սակայն դրանով չէր սահմանափակվում համահայկական դերի ձգտող եգիպտահայ բուրժուաների ախորժակը։ 1907 թ. նրանց առատաձեռնությունից օգտվող մի շարք նախկին արմենական, վերակազմյալ հնչակյան և այլ գործիչներ Բուլղարիայում բանակցություններ սկսեցին «հեղափոխական» կազմակերպությունների «ընդհանուր միություն» ստեղծելու նպատակով։ 1908 թ. բանակցությունները շարունակվեցին Եգիպտոսում։ Նույն թվականի սեպտեմբերի 15-ին «Գաղա-

88 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 187։

89 «Եգիպտահայ տարեցույց», 1924, էջ 162—163։

90 Նույն տեղում։



փարակցական միություն» և Վերակազմյալ Հնչակյան կուսակցության միաձուլումով կյանքի կոչվեց «Միացյալ Հայ հեղափոխական կազմակերպությունը», որի նպատակն էր «ազատել Տաճկահայաստանը օսմանյան բռնակալութենեն և հիմնել այնտեղ անկախ կառավարություն մը, հաստատված սահմանադրական լայն հիմերու վրա, որ ապահովեր միանգամայն այնտեղ ապրող մյուս ցեղերուն բարօրությունը և ազատ ու խաղաղ մշակութային զարգացում մը՝ համաձայն իրենց առանձնահատուկ ընդունակությանց»[91]։ Ուշագրավ է, որ նպատակ էր դրվում Հայկական հարցը լուծել ոչ թե Բեռլինի վեհաժողովի 61-րդ հոդվածի կենսագործման, այլ Հայաստանի անկախության հասնելու միջոցով։ Այս կազմակերպության ղեկավարները Հայաստան անվան ներքո հասկանում էին Էրզրումի, Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի վիլայեթները և Կիլիկիան, այսինքն Ադանայի և Հալեպի վիլայեթների հայաբնակ գավառները։ Նրանք առաջարկում էին լայնորեն գործակցել Մակեդոնիայի, Ալբանիայի, Սիրիայի և «օսմանյան լուծը թոթափել ձգտող» մյուս ժողովուրդների հետ[92]։

Միացյալ Հայ հեղափոխական կազմակերպությունը, սակայն, համարյա կյանք չունեցավ։ 1908 թ. հոկտեմբերի 31-ին վերստին հավաքվելով Ալեքսանդրիայում, Գաղափարակցական միության և Վերակազմյալ Հնչակյան կուսակցության ղեկավարները՝ Գ. Պետիկյանը, Միք. Նաթանյանը, Միհր. Տամատյանը, Ծ. Հովիվյանը, Կ. Գրիգորյանը հայտարարեցին, որ Միացյալ կազմակերպությունը «դադրած ըլլալով այլևս հեղափոխական կազմակերպություն մը ըլլալե, իր ամբողջ կազմով կմիախառնվի «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն» անունով քաղաքական կուսակցության մեջ, որ հիմնված է միացյալ կուսակցությանց լիազորներուն կողմէ հրավիրված լուրջ և գիտակից անձնավորություններե»[93]։ ՀՍՌԿ կուսակցությունը, լինելով «ժողովուրդի գիտակից մասին (եգիպտահայ բուրժուազիայի—Հ. Փ.) հարազատ բաղձանքներուն» արտահայտիչը, հրաժարվում էր «ծայրահեղ աշխարհահայացքներն և վիճելի ընկերային վարդապետություններն»[94]։ Փայլուն հեռանկարներ տեսնելով երիտթուրքական հեղափոխության մեջ, նրա

91 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 188։

92 Նույն տեղում, էջ 190։

93 Նույն տեղում, էջ 192—193։

94 Մատենադարան, Իգմիրլյանի ֆոնդ, թ. 11, վ. 177։

հիմնադիրները հայտարարում էին. «Օսմանյան բռնապետական ռեժիմին տապալմամբ և սահմանադրական օրենքին հաստատությամբ թե ընդհանրապես, և թե մասնավորապես բաղկացուցիչ բոլոր ազգություններու համար բարօրության և հառաջդիմության նոր թվական մը բացվեցավ»[95]։ Նրա ծրագրում Հայաստանի անկախության խոսք չկար, հայ ժողովուրդը բնութագրվում էր սոսկ որպես օսմանյան պետության բաղկացուցիչ ազգային փոքրամասնություններից մեկը, որը պաշտպանում է «օսմանյան հայրենիքի միությունը և ամբողջությունը»[96]։ Նրա քաղաքական նպատակներն էին «ա) Ձեռք բերել օսմանյան սահմանադրության լայն իմաստով վերաքննությունը, և վերածել այն ռամկավարական սահմանադրության մը. բ) Ապահովել, իբրև երաշխավորություն օսմանյան պետության քաղաքական անկախության և հողային ամբողջությանը, զուտ վարչական ապակենտրոնացումի դրությունը, ատրենանաբար ընդարձակելով համայնքներու և նահանգներու (հետևաբար նաև հայաբնակ նահանգներու) տեղական իրավասությունները»[97]։ Նրա ազգային նպատակներն էին «ա) Հսկել հայոց՝ օրենքով հաստատված ազգային իրավունքներուն անվթար պահպանումին, իբրև երաշխիք կրոնական ազատության և կրթական զարգացման. բ) Համաձայնեցնել Ազգային սահմանադրությունը վերաքննությամբ ժամանակակից պահանջներու. գ) Աշխատել հայ դավանական հասարակությանց զուտ եկեղեցական գործերը անջատելու անոնց ազգային վարչական կազմեն և առաջ բերելու ազգային և կրթական միացյալ վարչություն մը. դ) Պահպանել և ժողովրդականացնել հայ լեզուն, պատմությունը և գրականությունը, և ապահովել ազգային հիշատակարաններու անեղծ պահպանումը»[98]։ Ռամկավար կուսակցությունը մերժում էր «օսմանյան ազգություններուն թե՛ միաձուլումի և թե անջատողության ոգին, ինչպես նաև ազգայնամոլ և այլամերժ որևէ ձգտում» և այլն[99]։

Վերակազմյալ հնչակյանների զգալի մասը չմիաձուլվեց ո՛չ Դաշնակցական միության, ոչ էլ Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության մեջ, և շարունակեց դեռ միառժամանակ գործել որպես

[95] Նույն տեղում։

[96] Նույն տեղում։

[97] Նույն տեղում։

[98] Նույն տեղում։

[99] Նույն տեղում։



ինքնուրույն կազմակերպություն, որը, սակայն, կառչած մնաց ազգային և քաղաքական այն վարքագծին, որ մշակել էին ազգային կուսակցությունների միաձուլման ջատագով ղեկավարները՝ Միացյալ հայ հեղափոխական կազմակերպության ստեղծման նախօրեին։ 1908 թ. սեպտեմբերի 12-ին հրապարակված նրա պաշտոնական հայտարարությունում ասված է. «Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը կդադրեցնե իր զինյալ ապստամբության ծրագիրը։ ...Վեր. Հնչ. կուսակցությունը Օսմանյան կայսրության ամբողջական պահպանումին կողմնակից, որևէ անջատողական ձգտում և նպատակ չունի։ Եվ ատելության, հակառակության, վրեժխնդրության որևէ խրամատ չի ընդունիր Թուրքերուն, հայերուն և օսմանյան մյուս բոլոր ցեղերուն ընդմեջ։ Այսպես թրքահայ ժողովուրդը Օսման միության անբաժան տարրը նկատելով հանդերձ պիտի ուզե ան որպեսզի այլևայլ հոսանքներու մեջ չլուծվի հայ ցեղը, որպեսզի ապրի հայությունը, որպեսզի կարող ըլլա ան իր պատմական դերը կատարել Թուրքիո ընդհանուր քաղաքականության ոլորտ և կենսական գործին մեջ, որպեսզի հարգվին և պահպանվին անոր կրոնական և կրթական առանձնաշնորհումները»[100]։

Հայաստանի անկախության հարց չէր դնում և օսմանյան պետության հայաբնակ նահանգներում բարենորոգումներ էր պահանջում նաև Դաշնակցությունը։ Դաշնակցական գործիչներն էլ համոզված էին, որ երիտթուրքերը բերելու են արդարություն, հավասարություն և ազատություն օսմանյան պետության կազմում գտնվող բոլոր ժողովուրդներին, բարեկարգելու են դատական գործը և հարկային դրությունը, հաստատելու են սեփականության և անձի ապահովություն և այլն։ Երիտթուրքերի դեմագոգիայով հրապուրված հայ բուրժուազիային և նրա քաղաքական կազմակերպություններին չսթափեցրեց մինչև անգամ Ադանայի ջարդը (1909) և մանավանդ այդ ջարդին իթթիհատ վե Թերաքքի կուսակցության մասնակցությունը, որն ապացուցվեց թուրքական պառլամենտի երեսփոխան Հակոբ Պապիկյանի հանրահայտնի տեղեկագրով[101]։

Մինչև 1908 թ. դաշնակցությունը նկատելի ուժ չէր ներկայացնում Եգիպտոսում։ Նրա ենթակոմիտեներն այնքան թույլ էին, և համակիրների շրջանակն այնքան նեղ էր, որ մինչև անգամ հնարավոր չի

[100] Մատենադարան, Իզմիրլյանի ֆոնդ, թ. 14, վ. 432։

[101] Այդ տեղեկագրի հրապարակումից քիչ ժամանակ հետո Պապիկյանը «վախճանվեց» խորհրդավոր պայմաններում։

եղել կուսակցական օրգան ստեղծել։ Իր հուշերում նախկին վերակազմյալ հնչակյան Է. Բարայանը պատմում է. «Դաշնակցությունը թերթ չուներ, ու մեզի առաջարկ բերած էր «Ազատ Բեմի» մէջ սյունակ մը վարձելու, հոն դաշնակցության տեսակետները պաշտպանելու համար»[102]։ Այդ վիճակի հիմնական պատճառը ներքին պառակտումներն էին, որ առաջացել էին դաշնակցության ծրագրի շուրջը բորբոքված բավականին սուր վեճերի հետևանքով։

1907 թ. Վիեննայի ընդհանուր պատգամավորական ժողովից հետո դաշնակցությունն իրեն անվանեց «սոցիալիստական», առանց որևէ կապ ունենալու մարքսիզմի ուսմունքի հետ, և ընդունվեց Երկրորդ ինտերնացիոնալի մեջ։ Դա ջնարակ էր։ Դաշնակցությունը, ըստ Միք. Վարանդյանի, «զուտ ընկերվարական կուսակցություն մը չէր, և նա չդարձավ այդպիսին անգամ 1907 թվականին, երբ համառուսական շարժումների հետևանքով, ընդունեցավ ընկերվարական ծրագիրը Վիեննայի ընդհանուր ժողովին մէջ»[103]։ Այնուամենայնիվ, այդ նոր «ուղղության» դեմ բողոքի ձայներ բարձրացան դաշնակցության շարքերում։ Եգիպտոսում Սարհատը, Աղասերը, Առանձարը և այլ դաշնակցական մտավորականներ, պահանջելով վերադարձ դեպի նախկին «ազգայնական ծրագիրը», պայքար սկսեցին դաշնակցության բյուրոյի դեմ։ Սակայն նրանց՝ «բոլոր երկիրներու դժգոհ դաշնակցականներուն» ուղղված կոչն անցավ ապարդյուն[104] և, ինչպես նշել է Երվանդ Օտյանը, դաշնակցությունը «վտարեց... այն ընկերները», որոնք համարձակել էին բողոքի ձայն բարձրացնել[105]։ Եգիպտոսի դաշնակցական կազմակերպությունն այդ վիճակից դուրս եկավ միայն երիտթուրքական բուրժուական հեղափոխությունից հետո՝ քաղաքական պատրանքների ժամանակաշրջանում։

Այսպիսով, XX դարի սկզբներից եգիպտահայ գաղութի ծոցում գործող ազգային կուսակցությունների քաղաքական կողմնորոշումը արևմտահայ բուրժուազիայի շահերի համապատասխան՝ արևմտաեվրոպական էր։ Վերակազմյալ հնչակյան, Հայ սահմանադրական ռամկա-

---

[102] Է. Բարայան, Ինքնակենսագրություն և հուշեր, էջ 15։ 1904 թ. Ալեքսանդրիայում մի դաշնակցական բժիշկ անհատական միջոցներով լույս է ընծայել «Հորիզոն» շաբաթաթերթը, որը, սակայն, ընթերցողներ չունենալով փակվել է։

[103] Միք. Վարանդյան, Դաշնակցության պատմություն, հ. 1, էջ 170։

[104] «Լուսաբեր», 29 հոկտեմբերի 1909։

[105] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 415։



վար և դաշնակցություն կուսակցությունները, պատրանքներ սնուցելով թուրքական բուրժուազիայի հռչակած ազատության և արդարության սկզբունքների նկատմամբ, Հայաստանի անկախության հարց չէին դնում, այլ բավարարվում էին ներքին ինքնավարությամբ։ Սակայն այդ հույսը չիրականացավ, չէր էլ կարող իրականանալ, քանի որ երիտթուրքերը շարունակում էին սուլթան Աբդուլ Համիդի ջարդարար քաղաքականությունը։ Նրանց սպասում էին ավելի ծանր փորձություններ։

* * *

1912—1914 թթ. Հայկական հարցի պատմության մեջ սկսվեց նոր փուլ՝ կապված միջազգային իրադրության փոփոխությունների հետ։

Հայտնի է, որ Բաղդադի երկաթուղու կառուցման մենաշնորհը նպաստեց գերմանական իմպերիալիզմի ազդեցության ուժեղացմանը Թուրքիայում։ Անգլո-ֆրանսիական գաղութարարները, փորձելով խանգարել գերմանա-թուրքական համագործակցությունը, մի կողմից Բաղդադի երկաթուղու կոնցեսիոներների առաջ փակեցին Լոնդոնի և Փարիզի բորսաները, մյուս կողմից սկսեցին ապստամբության մղել Թուրքիայի կազմում գտնվող ժողովուրդներին։ Անգլիական գործակալները զինում էին արաբներին, ֆրանսիացիները պաշտպանում էին առաջին արաբական կոնգրեսի պահանջները՝ Սիրիայի ինքնավարության մասին։ 1912 թ. հոկտեմբերի Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան և Հունաստանը հարձակվեցին Թուրքիայի վրա, սկսվեց առաջին Բալկանյան պատերազմը։

Միջազգային նոր իրադրության պայմաններում անգլիական և ֆրանսիական կապիտալի հետ շաղկապված եգիպտահայ բուրժուաները ձեռք բերեցին Թուրքիայի դեմ բացահայտ թշնամական գործողություններ կատարելու ազատություն։ 1912 թ. նոյեմբերի 3 թվակիր նամակով «Եգիպտահայ գաղութի ներկայացուցիչները» (Է. Աղաթոն, Տիգրան Քելեկյան, Վահան Մալեզյան, Առաքել Փափազյան, Լևոն Մկրտիչյան, Վահան Զարդարյան և ուրիշներ) Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին գրում էին. «(Կ. Պոլսի) Ազգ. պատրիարքարանի պաշտոնական դիմումները դատապարտված են հավետ ամուլ և ապարդյուն մնալու։ Եվ որովհետև Ազգ. պատրիարքարանը իր ներկա դիրքով կարող չէ օտար պետությանց պաշտպանությունը հայցելու, ինչ որ հայս սահմ(անադրական) ռեժիմին պիտի նշանակեր դավաճանություն՝ օտար միջամտություն ձեռք բերելու քաղաքական միտումով, անտարակույս, արտասահմանի ազատ հայության կրնա թրքահայոց խղճալի կացության

վրա մեծ պետությանց (և այսօր՝ նույնիսկ Պալքանյան կառավարությանց) ուշադրությունը հրավիրել, և ամեն կերպով ջանալ, որ առաջիկա վեհաժողովին մեջ որոշում կայանա հայկական գավառներու մեջ ևս գործադրելու այն բարենորոգությունները, որ այժմեն պարտադրված են Թուրքիո՝ ի նպաստ եվրոպական գավառներուն»[106]։ Անտանտի կազմում Ռուսաստանի ներկայությունը նրանց համարձակություն էր տալիս խոսելու նաև այն օգնության մասին, որ հայ ժողովուրդը սպասում էր իր մեծ հարևանից։ Նրանք ասում էին. «Համոզված ենք, թե ազգային բաղձանքին հաջողությունը մեծ մասամբ կախում ունի Ն. Վ. ցարին վեհանձն մարդասիրութենեն»[107]։ Կաթողիկոսից խնդրում էին ռուսական կառավարության փրկարար պաշտպանությունը ապահովելու մշտահալած ու բազմաչարչար ազգիս»[108]։

Այդ դիմումը տակավին տեղ չհասած, Գևորգ Ե կաթողիկոսից ստացվում է 1912 նոյեմբերի 8 թվակիր «Մաձկարար պաշտոնագիրը», որով եգիպտահայոց առաջնորդարանին հրավունք էր տրվում «տաճկահայ եղբայրց տառապագին վիճակին ի դարման» դիմումներ կատարելու եվրոպական մեծ պետություններին և Ամերիկայի Միացյալ Նահանգներին[109]։ Կաթողիկոսի պաշտոնագիրը հանդիսավոր կերպով ընթերցվում է Կահիրեի և Ալեքսանդրիայի գավառական ժողովների արտահերթ համագումարում։ Երեսփոխանները «շնորհապարտ զգացումներով և պատարուն հույսերով» միաձայն որոշում են՝ կատարել Ամենայն Հայոց կաթողիկոսի կամքը[110]։ 1912 թ. դեկտեմբերի 13-ին եգիպտահայերի անունից հեռագիր-դիմումներ են ուղարկվում մեծ պետություններին։ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի կառավարություններին առանձին-առանձին ուղարկված դիմումներում ասված է. «Եգիպտոսի հայերը, միավորված Փոքր Ասիայի իրենց եղբայրների հանդեպ համերաշխության զգացումով, սրտերը ճմլված այն չրման համար, որ թվում է բաժին է ընկած մի դժբախտ ազգի, անհանգստացած այն կործանիչ հարվածից, որ վերջին (Բալկանյան) պատերազմը հասցրեց հայկական զինաթափված նահանգներին, համարձակվում ենք Ձեր բարձրապատվության

106 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 680, թ. 2։

107 Նույն տեղում։

108 Նույն տեղում։

109 Տե՛ս նույն տեղում, թ. 6։

110 Տե՛ս նույն տեղում։



բարյացակամ ուշադրությունը հրավիրել մի ժողովրդի վրա, որն իր անցյալով, արևելքում մշտապես քաղաքակրթության տարր ներկայացնելով, իր հավատարիմ և մարտիրոսական անթիվ պայքարներով, Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով սահմանված պարտավորություններով, կոչված է (արժանանալու) հատկապես Ձեր կառավարության բարյացակամությանը։ Խնդրում ենք պաշտպանություն ճնշման և սիստեմատիկաբար կրկնվող ջարդերի դեմ, որոնց զոհ են դառնում Ասիայի մեր եղբայրները։ Թախանձում ենք Ձեր ներկայացրած կառավարության վեհանձն միջամտությունը մի ռեժիմի (հաստատման) օգտին, որով երաշխավորվի Հայաստանի նահանգների և Կիլիկիայի հայերի կյանքի, ինչքի և պատվի ապահովությունը»[111]։

Դիմում-հեռագրեր ուղարկվել են նաև Ռուսաստանի ցարին, Անգլիայի և Իտալիայի թագավորներին, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հանրապետության նախագահներին։ Ռուսական ցարին ուղարկվել է հետևյալ հեռագիրը. «Ն. Վ. Նիկոլայ Բ Համայն Ռուսաստանի կայսեր, Արևելքի քրիստոնյաների պաշտպան, Ս. Պետերբուրգ. Վստահելով Ձեր վսեմության մեծահոգությանը և Ձեր կայսրության փառավոր ավանդություններին, խոնարհաբար խնդրում ենք շնորհը (Ձեր) վեհանձն նախաձեռնության՝ ասիական Թուրքիայում ճնշված մեր քրիստոնյա եղբայրների օգտին։ Թախանձում ենք հայերի կյանքի, ինչքի, պատվի պաշտպանություն։ Աղաչում ենք ամենակարող (աստծուն) որպեսզի պահպանի Ձեր վսեմության թանկագին օրերը»[112]։ Այդ բոլոր դիմում-հեռագրերը ստորագրել են եգիպտահայոց առաջնորդական փոխանորդ Ավետիս ք. Տաղոյանը և թեմական համագումարի փոխնախագահ Մեղրակ Դավիթյանը.

1913 թ. հունվարին Կահիրե է հասնում Ամենայն Հայոց կաթողիկոսի 1912 նոյեմբերի 10 թվակիր կոնդակը, որով Պողոս Նուբարը նշանակվում է կաթողիկոսական պատվիրակ։ Ավելի ուշ նրան գործակցելու հրավեր ստացան Գևորգ եպ. Ութուճյանը, Մինաս Չերազը, Յակոբ Արթինը և Հարություն Մոսդիչյանը. ստեղծվեց Ազգային պատվիրակություն, որին հանձնարարված էր. «Մատուցանել ներկայացուցչաց, դեսպանաց և նախարարաց եվրոպական պետությանց զաղերս և զտեղեկագիր..., բացատրել նոցա գիրավագույն կացություն տաճկահայոց։

111 Նույն տեղում, թ. 14։ (Թարգմանված է ֆրանսերենից)։

112 Նույն տեղում, թ. 8։ (Թարգմանված է ֆրանսերենից)։

հիշեցուցանել զ16-րդ հոդված Ս. Ստեֆանոյի, զ61-րդ հոդված վեհաժողովոյն Բերլինի, և զայլ բազմաթիվ պահանջս և զծրագիրս բարեկարգության հայաբնակ նահանգաց, զորս ընդ միշտ արհամարհյալ է կառավարությունն տաճկաց»[113]: Ազգային պատվիրակությունը, նստավայր ընտրելով Փարիզը, գործեց մինչև համաշխարհային պատերազմին հաջորդող տարիները։

Առաջին Բալկանյան պատերազմը մոտենում էր ավարտին, երբ Եգիպտոսում սկսվեց ազգային կուսակցությունների համերաշխության շարժումը, որի նպատակն էր՝ հաշտության կոնֆերանսի ժամանակ հանդես գալ միասնական ճակատով։

1913 թ. մայիսին Եգիպտոսի դաշնակցական ենթակոմիտեները, հնչակյան մասնաճյուղերը և սահմանադրական ռամկավար ակումբները համախմբվելով կազմեցին «Միջկուսակցային խառն մարմինը», որն առաջադրում էր՝ «գործնականապես և նյութապես նպաստել երկրի ժողովուրդին սահմանադրական իրավունքներուն պաշտպանությանը, անոր քաղաքացիական ու ազգային ապահովությանը, ինչպես նաև գալիք վտանգներուն դիմագրավելու ուժին»[114]: Համերաշխության և համագործակցության շարժումը չէր սահմանափակվում «կուսակցական շրջանակով»։ Միջկուսակցական մարմինը ձգտում էր «Եգիպտոսի հայ գաղթականության բոլոր խավերը» ներգրավել շարժման մեջ[115]: Նրա «հայտարարությունում» ասված էր. «Այս շարժումն ու իր նպատակը կուսակցական չեն, այլ համաժողովրդական, նույնքան թանկագին չեզոք հասարակության համար, որքան հեղափոխականին, նույնքան հրամայական անկուսակցային ժողովրդին համար, որքան կուսակցական շարքերուն։ ... Թող ուրեմն, համագործակցության այս ձեռնարկը Եգիպտոսի հայության մեջ ըլլա շրջանը նոր եռանդի և նոր հույսերու, գերեզմանը՝ հին ավերիչ կրքերուն»[116]:

Արձագանքելով միջկուսակցական մարմնի կոչին, 1913 թ. հունիսի 4-ին եգիպտահայ «շուրջ 60 երևելիներ» գումարվելով Կահիրեի Ազգային սրահում, միաձայն հայտարարեցին. «1) ...քաղաքական ներկա պայմաններուն մեջ, հայ ժողովուրդին բոլոր խավերը պետք է համե-

[113] Նույն տեղում, թ. 15։
[114] «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 47։
[115] Տե՛ս նույն տեղում, էջ 48։
[116] Նույն տեղում։



րաշխին Հայկական դատին պաշտպանության համար։ 2) ...ինքնապաշտպանության կազմակերպումը, ազգին ներկա պայմաններուն մեջ, անհետաձգելի պետք մըն է»[117]: Վերջում, գումարման մասնակիցներից ընտրվել է մի հանձնաժողով, որը պետք է բանակցեր Միջկուսակցական մարմնի հետ, ճշտելու համար «ոչ-կուսակցական հասարակության մասնակցության պայմանները» հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործին։ 1913 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «(Միջկուսակցականը) ներկայիս Կիլիկիո վիճակին վրա պիտի կեդրոնացնե ամբողջ ուշադրությունը. այս մարմինը նոր ուժերով երևան կուգա և ան պիտի ստանձնե ղեկը գործին, երբ ժամը հնչե...»[118]:

Հունիսի 8-ին Կահիրեի Գրենտանիա թատրոնում տեղի է ունեցել Միջկուսակցական մարմնի միտինգը՝ անվանի գրող Տիգրան Կամսարականի նախագահությամբ։ Միտինգում ճառերով հանդես են եկել հայ, արաբ, եվրոպացի քաղաքական գործիչներ։ Իր ելույթում Սիրիայի ազգային-ազատագրական կոմիտեի ներկայացուցիչ Շեյխ Ռաշիդ Ռիզան, անդրադառնալով այն «հուսախաբությանը», որ օսմանյան սահմանադրությունը պատճառեց հայերին և սիրիացի արաբներին, ընդգծել է հայ-սիրիական համագործակցության անհրաժեշտությունը[119]: Միտինգը ընդունել է հատուկ բանաձև, որտեղ ասված է.

«1) Ողջունել բոլոր հայ քաղաքական կուսակցություններու, ինչպես նաև Եգիպտոսի հայ գաղութին բոլոր դասակարգերուն և հիմնարկություններուն ջերմ համերաշխությունը ... հանուն հայ ժողովուրդին սահմանադրական, քաղաքական և ազգային իրավունքներու պաշտպանության։

«2) Բողոքել ուժգնորեն Սահմանադրության գաղափարին նախատինք բերող այն անապահով կացության դեմ, որ կտիրե հայկական նահանգներուն մեջ և, որ աստիճանաբար կվատթարանա՝ շնորհիվ Պոլսո կեդրոնական կառավարության անուղղա անհոգությանն ու աղետաբեր քաղաքականությանը։

«3) Հայտարարել ի գիտություն միջազգային հանրային կարծիքին, որ Եգիպտոսի հայությունը, լավ տեղյակ թրքահայ ժողովուրդին դժնդակ կացությանը, ինչպես և օսմանյան կառավարության երեսուն տարվան

[117] Նույն տեղում, էջ 49—50։
[118] ԴԱԹ արխիվ, Ա. Չոպանյանի ֆոնդ, բ. 1, վ. 2239։
[119] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 53։

խոստումներին անսայնություն, եվրոպական երաշխավորությունը կհամարի գլխավոր և միակ պայմանը բարենորոգումներու իրականացման և, հետևաբար, երկրին խաղաղեցմանն ու հայկական դատին լուծումին»[120]։

Բանաձևում նշված է նաև, որ եգիպտահայությունը «պատրաստ է իր բարոյական և նյութական ամբողջ աջակցությունը բերելու երկրի հայության «կյանքի, գույքի և պատվի» պաշտպանության գործին։ Վերջում միտինգի մասնակիցները «ջերմ համակրանք» են հայտնել այն պայքարին, որ «Սուրիական ժողովուրդը մղել հանուն քաղաքական և քաղաքացիական ազատության» և այլն[121]։ Միտինգի բանաձևը ուղարկվել է մեծ պետությունների արտաքին գործերի մինիստրներին, Կ. Պոլսի եվրոպական դեսպաններին, Բարձրագույն դռան, Ամենայն հայոց կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Փարիզի Ազգային պատվիրակությանը և եգիպտական թերթերին։ Միջկուսակցական մարմինը երկար կյանք չունեցավ։ Նրա ողջ գործունեությունը մի քանի միտինգից և հայտարարությունից այն կողմ չանցավ։

Բալկանյան դաշնակիցներն արագ թափով ջախջախեցին թուրքական զորքերին։ Մակեդոնիան, Թրակիան, Ադրիանապոլսի շրջանը և Էգեյան ծովի կղզիներն ազատագրվեցին թուրքական տիրապետությունից։ Պատերազմը նպաստեց նաև ալբանական պետության ստեղծմանը։ Չիրականացան սակայն այն հույսերը, որ արևմտահայ բուրժուազիան կապել էր Թուրքիայի պարտության հետ։

1913 թ. հունիսին ծագեց Բալկանյան երկրորդ պատերազմը, վերստին թևավորելով հայությանը։ Եվ վերսկսվեցին Հայկական հարցի պաշտպանությանը նվիրված միտինգները։ Հուլիսի 6-ին Ալեքսանդրիայի հայ քաղաքական կազմակերպությունների նախաձեռնությամբ Լիֆանտի սրահում կայացած միտինգի մասնակիցները, լսելով հայ, արաբացի, ֆրանսիացի, իտալացի և հույն գործիչների ճառերը, միաձայն ընդունեցին բանաձև, որտեղ ասված է. «(Միտինգի մասնակիցները)

«Բուռն բողոքում են հայկական նահանգներում տիրող անտանելի դրության դեմ. օսմանյան կառավարության հոռի քաղաքականության հետևանքով այնտեղ իշխում է անապահովությունը, կողոպուտը և նոր ջարդերի սպառնալիքը։

120 Նույն տեղում, էջ 57—58։

121 Նույն տեղում, էջ 58—59։



«Հայտարարում են, որ այս դրությունը բարվոքելու և բոլոր բարդությունների առջևն առնելու միակ միջոցը հայկական նահանգներում բարենորոգումներ կատարելն է՝ մեծ պետությունների ազդու վերահսկողության ներքո, առանց որի օսմանյան կառավարության մշակած ծրագրերը և տված խոստումները կմնան, ինչպես անցյալում, անիրագործելի և անհետևանք։

«Կոչ են անում Եվրոպայի հասարակական կարծիքին և, հաստատ հույս ունեն, որ մեծ պետությունները, հարգելով Բեռլինի դաշնագրում (դրած) իրենց ստորագրությունը և հաշվի առնելով այն անվերջ տառապանքները և շարունակ կրկնվող վիրավորանքները, որոնց երեսուն տարուց ի վեր ենթարկված են Թուրքիայի հայերը, օսմանյան կառավարությանը պիտի պարտադրեն վերահսկողության սկզբունքը, որպես էական պայման Հայկական հարցի լուծման և Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման համար։

«Ուրախությամբ հաստատում են արտասահմանի և երկրի բոլոր հայերի անխախտ միասնությունը, և հիշեցնում են Կոստանդնուպոլսի հայոց ազգային երեսփոխանական ժողովին, որ անգամ ճնշման և սպառնալիքի ներքո պարտավոր է ոչ մի չափով չնահանջել իր պահանջները հետապնդելու գործում։

«Եղբայրական ողջույն են ուղարկում այն թուրք հայրենասերներին, որոնք համաձայն չեն Կոստանդնուպոլսի կառավարության ղեկավարների շովինիստական և հալածանքի քաղաքականությանը, ազդու կերպով պահանջում են հաստատել ապակենտրոնացման և ազգությունների միջև հավասարության ռեժիմ, որով միայն կարելի է կանխել անկարգությունները և հեղափոխությունը։

«Վերստին արտահայտում են (...) անկեղծ համակրանք սիրիական քաջարի ժողովրդի հանդեպ, որը պատրաստ ամեն զոհողության արիությամբ հետապնդում է բարենորոգումների վերաբերյալ իր արդար պահանջների իրականացումը»[122]։

Ալեքսանդրիայի միտինգի բանաձևն ուղարկվել է Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերին, Անգլիայի և Իտալիայի թագավորներին, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի հանրապետությունների նախագահներին, Բարձրագույն դռանը, Ամենայն հայոց կաթողիկոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարքին, Փարիզի Հայ ազգային պատվիրակությանը և եգիպտական մամուլին։

122 ՀՍՍՀ, ԴԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 703, թ. 6։ (Թարգմանված է ֆրանսերենից)։

Բալկանյան պատերազմի ավարտին Բեռլինի պայմանագիրը ստորագրած պետությունները բանակցություններ սկսեցին 61-րդ հոդվածի կենսագործման հարցի շուրջը։ 1914 թ. հունվարի 26-ին համաձայնություն կայացավ Թուրքիայի հայկական նահանգներում վարչական և կուլտուր-լուսավորական լայն բարենորոգումներ անցկացնելու մասին։ Այդ բոլորը չտեսնված չափով բարձրացրեց եգիպտահայ բուրժուաների «հայրենասիրության» ջերմաստիճանը, որովհետև նրանց կապիտալների առաջ բացվում էր Արևմտյան Հայաստանի ճանապարհը... Եվ մեկը մյուսի ետևից լույս աշխարհ եկան Հայաստանի տնտեսության վերականգնման վերաբերյալ խայտաբղետ ծրագրեր, որոնցից առավել ուշագրավն եգիպտահայ ջոջերի՝ Հայաստանում ազգային երկրագործական բանկ ստեղծելու ծրագիրն էր։ Որպես այդ բանկի նախաձեռնողներ հանդես էին գալիս Պողոս Նուբարը և ալեքսանդրիական խոշոր առևտրական Մ. Խերյանը։ 1914 թ. փետրվարի 24-ին նրանք բանկի ծրագիրը, գունազարդելով ազգասիրության վրձինով, ներկայացրին Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին, և խնդրեցին նրա բարոյական աջակցությունը։ Վկայակոչելով ռուս տնտեսագետ Օգլենինի հոդվածներն այն մասին, որ օսմանյան երկրագործական բանկը տարբեր պատրվակներով բռնագրավել է «հայոց պատկանյալ հողերու կարեւոր մասը», իսկ մնացյալն էլ գրավի տակ գտնվելով կորսվելու վտանգի ենթակա» է, նրանք «փրկության միակ միջոցը համարում էին «հայկական երկրագործական պանքի մը հաստատումը»[123]։ Որոշվում էր Հայաստանի վեց վիլայեթներից յուրաքանչյուրում և Կիլիկիայում հիմնել 7 երկրագործական բանկեր, որոնք պետք է կառավարվեին «Կովկասեան կամ Եվրոպայեն հրավիրվելիք պանքի տնօրեններու միջոցավ»[124]։ Նախաձեռնողները կաթողիկոսից խնդրում էին շահագրգռել նաև կովկասահայ կապիտալիստ ժամհարյանցին։ Բանկը «թուրքական ոտնձգություններէ ազատ պահելու» և «ռուս կառավարության պաշտպանությունը վայելել կարենալու» նպատակով, նրանք որոշել են «ռուս հիմնարկություն մը ընել զայն»[125]։ Այդ և այդ կարգի բոլոր մյուս ծրագրերը մեկընդմիշտ թաղվեցին վերահաս համաշխարհային պատերազմի թոհուբոհում։

[123] ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 717, թ. 2։

[124] Նույն տեղում, թ. 4—5։

[125] Նույն տեղում, թ. 2։



* * *

Բալկանյան պատերազմների ժամանակ եգիպտահայ կյանքում առաջացած խանդավառության մթնոլորտում կազմակերպվեց Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն, որը համախմբում էր Վերակազմյալ Հնչակյան և Սահմանադրական ռամկավար կուսակցությունների լիբերալ ուղղությունից դժգոհ տարրերին։ Նրա նախաձեռնողն էր նախկին հնչակյան գործիչ Միհրան Տամատյանը։

Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն պաշտպանում էր Կիլիկիայում զինված ապստամբություն բարձրացնելու ծրագիրը։ Այդ հանդուգն գաղափարը ծագեց Բալկանյան պատերազմի նախօրեին, երբ «Զեյթունի աղաներեն մին» Եգիպտոս ժամանեց զեյթունցիների ծրագրած ապստամբության օգտին դրամական միջոցներ հավաքելու։ Տեղի հարուստները, ինչպես ասված է 1913 թվակիր արխիվային մի փաստաթղթում, «չքաջալերեցին զինքը, որով ձեռնունայն մեկնեցավ, բայց... կարգ մը երիտասարդներ գլխե հանեց.... Մինչ այս, մինչ այն պատերազմը վրա հասավ... երիտասարդության երևակայությունն ալ բորբոքելով...»[126]։ Հույները փորձեցին օգտագործել այդ տրամադրությունները թիկունքից հարվածելու համար իրենց թշնամուն։

Հունական կառավարության արտաքին գործերի մինիստր Կարամիլիսից օգնության հավաստիք ստանալով, Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն ձեռնամուխ եղավ ապստամբության նախապատրաստմանը։ Կահիրեում և Ալեքսանդրիայում հավաքագրվեցին որոշ թվով հայ երիտասարդներ, որոնք պետք է ծովով Կիլիկիա տեղափոխեին հույներից ստացված զենքերը։ Տամատյանն անձամբ գաղտնի մուտք է գործել Չորք-Մարզպան (Տեորթ-յոլ) «կազմակերպելու համար գալիք արշավախումբին ընդունելությունը»[127]։ Նախատեսվում էր ապստամբության հրդեհ բորբոքել միաժամանակ Զեյթունում, Հաճընում և Չորք-Մարզպանում։ Այդ վայրերի հայերը գործի նկատմամբ ունեին «խանդավառ հավատք», որովհետև նրանք համոզված էին, որ «պալքանյան պզտիկ պետությանց կռնակը ահարկու Ռուսիան կեցած է»[128]։

Ավարտելով նախապատրաստական աշխատանքները, Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն Մուշեղ Սերոբյանին ուղարկեց

[126] Տե՛ս նույն տեղում, գ. 680, թ. 23։

[127] Է. Թարագյան, Ինքնակենսագրություն և հուշեր, էջ 35։

[128] ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 680, թ. 25—26։

Աթենք՝ հույներից ստանալու խոստացված օգնությունը։ Սակայն Կարամիլիսը հրաժարվել է իր խոստումից, առարկելով, թե ուշ է և արդեն պատերազմը պիտի վերջանա քիչ ատենեն։ Կարամիլիսի լավատեսությունը հիմնավորված չէր, պատերազմը ոչ միայն չավարտվեց, այլև մտավ բալկանյան պետությունների համար բավական աննպաստ փուլի մեջ։ Եվ «Հելլեն կառավարությունը իր ընթացքը փոխեց։ ...Արտաքին գործերու նախարարը հեռագրով Աթենք հրավիրեց հայ երիտասարդներեն մին (Ազգային ինքնապաշտպանության կոմիտեից—Հ. Փ.) և անոր տրամադրության տակ դրավ երեք հազար կրա հրացան, պայմանով, որ հայերը անմիջապես ապստամբություն մը սարքեն Կիլիկիո մեջ...»[129]։

Թե Տամատյանի ձեռնարկումն ինչպիսի խուճապ է առաջացրել եգիպտահայ բուրժուաների շրջանում, բավական է մի հատված բերել այն նամակից, որով հրապարակախոս Լևոն Մկրտիչյանը, պարզելով ծրագրված ապստամբության հավանական հետևանքները, Գևորգ Ե կաթողիկոսին գրում էր. «Թախանձագին կխնդրեմ, որ նամակիս պարունակությունը Ձեր ս. օծությունը հաղորդել բարեհաճի ով որ անկ է, ն(որին) կ(այսերական) վեհափառ զորավոր միջամտությունը հայցի ի նպաստ Կիլիկիո խեղճ հայ ժողովուրդին։ Եթե հայ ազգը այս մեծ ճգնաժամեն ազատի շնորհիվ ամենազոր կայսեր՝ ամեն մեկ հայ անհատ պարտավոր կըլլա մինչև իր վերջին շունչը երախտապարտ մնալ ռուս միահեծան և հզոր կայսրությանը»[130]։

Ազգային ինքնապաշտպանության կոմիտեն զենքերն առագաստանավով ուղարկել է Զորբ-Մարզվան, սակայն հնարավոր չի եղել դրանք ցամաք հանել, որովհետև «շաբաթներ շարունակ գերմանական հածանավ մը իբր պահակ կհետախուզեր կիլիկյան ծովափը՝ արգելելու համար հայկական հավանական ցամաքահանում մը...»[131]։ Տամատյանի խումբը ստիպված վերադառնում է Ալեքսանդրիա։

Այդ կապակցությամբ հետաքրքրական է Կիլիկիայի կաթողիկոսի ներկայացուցիչ Գ. վ. Գ.-ի և գերմանական «Ստրասբուրգ» զրահանավի հրամանատարի գաղտնի հարցազրույցը, որը տեղի է ունեցել 1913 թ. ապրիլի 24-ին, Մերսինի առաջ խարսխած հիշյալ զրահանավում.

---

129 Նույն տեղում, թ. 24—25։

130 Նույն տեղում, էջ 28։

131 Է. Բաբայան, Ինքնակենսագրություն և հուշեր, էջ 35։



«Հրամանատար.—Ըսեք խնդրեմ ստո՞ւյգ են, որ Եգիպտոսեն մեկ քանի հեղափոխական հայեր եկեր են Կիլիկիո հայերը ապստամբեցնելու և զենքերով լեցուն շոգենավ մը ևս Աղեքսանդրիա եկեր է, բայց չի համարձակեր ցամաք հանել զենքերը... Կաթողիկոսը համամի՞տ է այդպիսի վտանգավոր շարժումի մը...

«Գ. վ. Գ.—Ստույգ է, որ այս կարգի փորձ մը եղավ մեկ քանի տաք հայրենասերներու կողմե, բայց հայ հեղափոխական ծանոթ քաղաքական կուսակցությունք ոչ միայն չքաջալերեցին, այլև հակառակեցան վտանգավոր այդպիսի շարժումի մը...։ Իսկ ս. կաթողիկոսն ալ բոլորովին հակառակ լինելով, կարելի ամեն զգուշական միջոց ձեռք առավ և վտանգը հեռացուց, ժողովուրդը համոզելով, որ ծայրահեղ միտքերուն չդիմե. Պատրիարքարանը (Կ. Պոլսի) ևս նույնպես կարելի ամեն միջոց ձեռք առավ այդպիսի վտանգավոր շարժումի մը ուղին առնելու համար»։

Կիլիկիայում զինված ապստամբություն բարձրացնելու համարձակ ձեռնարկումն ավարտվեց անփառունակ վախճանով, որովհետև 1909 թ. ջարդերից ծանրորեն վնասված Կիլիկիայում պայմաններ չկային ժողովրդական ապստամբության համար։ Եգիպտոսի հայության ամենալայն խավերն առհասարակ չէին հավատում շարժման հաջողությանը, այն համարում էին արկածախնդրություն, որը կարող էր թուրքերին պատրվակ ծառայել նոր ջարդեր կազմակերպելու։

Համաշխարհային պատերազմի տարիներին եգիպտահայ գաղութը որոշակի նախաձեռնություն հանդես բերեց Պաղեստինում և Սիրիայում ֆրանսիական զորքի ներքո թուրքերի դեմ մարտնչող հայ կամավորական գնդերի ստեղծման գործում։ 1917 թ. Հայ ազգային պատվիրակությունը, ընդառաջելով ֆրանսիական կառավարության առաջարկությանը՝ կամավորներ տրամադրելու մասին, բանակցություններ սկսեց եգիպտահայ քաղաքական կազմակերպությունների հետ։ Վերջիններս պատրաստակամություն հայտնեցին աջակցել գործի հաջողությանը, որովհետև այդ ծառայության փոխարեն ֆրանսիացիները խոստանում էին պատերազմի ավարտից հետո հայկական անկախ կամ ինքնավար պետականություն հաստատել Կիլիկիայում։ Եվ 1917 թ. նոյեմբերի 11-ին Կահիրեում դաշնակցության, ռամկավարների, վերակազմյալ հնչակյանների, հարանվանությունների, Հայ բարեգործական ընդհանուր միության, Եգիպտահայ նպաստամատույցի, Զինվորական օգնության ֆոնդի և Հայ կարմիր խաչի պաշտոնական ներկայացուցիչների հանդիպ-

սավոր նիստում կազմվեց «Հայ ազգային միությունը», որը և ստանձնեց հայ կամավորական շարժման ղեկավարությունը։

Դրանից հետո Կահիրե ժամանեցին ֆրանսիական բանակի ներկայացուցիչները և, կապ հաստատելով Հայ ազգային միության հետ, սկսեցին կամավորների հավաքագրումը։ Ֆրանսիական պատմաբան Անդրեն նշել է. «Կիլիկիայի, Սիրիայի, Եգիպտոսի հայերը, ինչպես և նրանց Ամերիկայի և Եվրոպայի եղբայրները պատասխանեցին դաշնակիցների կոչին, կազմելով հայկական լեգեոնը...»[132]։ Հավաքագրվեցին շուրջ 4000 կամավորներ, որոնցում զգալի թիվ էին կազմում Մուսա լեռան հերոսամարտի մասնակիցները և ամերիկահայերը։ Հայ ազգային միության պատվիրակների (Մ. Տամատյան, Արտ. Հանըմյան և Սապահգյուլյան) ջանքերով, ամերիկահայ գաղութը տրամադրեց շուրջ 1000 կամավոր և 1 միլիոն դոլար[133]։ Հայ կամավորներին մարզեցին ֆրանսիական «Արևելյան լեգեոնի» սպաները՝ Կիպրոսում։ Առանձնապես դրվատվում է նրանց հաղթանակը թուրքական գերակշռող ուժերի դեմ Ռաֆադ-Արարայի ճակատամարտում։

Ֆրանսիացիների խոստումներից խրախուսվելով, բազմահազար տեղահանված, տարբեր երկրներում ցրված հայեր սկսեցին համախմբվել Կիլիկիայում։ Ադանայում հաստատվեց նաև Ազգային պատվիրակության լիազոր-ներկայացուցիչը՝ Միհրան Տամատյանը, ինարկե, ոչ առանց ֆրանսիական իշխանությունների համաձայնության։ Բայց շուտով Կիլիկիայում հայկական ինքնավարության ստեղծելու պատրանքները հօդս ցնդեցին։ 1921 թ. ֆրանսիացիները Կիլիկիան հանձնեցին քեմալականներին՝ անհուն չարիք և արհավիրք պատճառելով արյունաքամ հայությանը։

* * *

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանն ամբողջովին պատերազմական գործողությունների թատերաբեմ էր։ Ցեղասպանությունից ճողոպրած շուրջ 400.000 արևմտահայ գաղթականներ ռուսական զորքերի օգնությամբ ապաստան գտան Արևելյան Հայաստանում, Վրաստանում և այլ վայրերում։ Արձագանքելով Ամենայն հայոց կաթողիկոսի կոչին, տարբեր գաղթավայրերի հայությունն եղբայրական օգնության ձեռք մեկնեց գաղթականներին, և Հայաստանը

[132] *P. J. André*, L'Islam et les Races, t. I, p. 251.

[133] Տե՛ս Ա. Դարբինյան. Հայ ազատագրության օրերին, էջ 453 և 458։



թուրքական հարձակումներից պաշտպանող կամավորական գնդերին։ Այդ ժողովրդանվեր գործերին գնահատելի մասնակցություն բերեց նաև եգիպտահայ գաղութը։

1915 թ. հունվարին, երբ դեպի Կովկաս գաղթականների հոսանքը գնալով մեծանում էր, Ամենայն հայոց կաթողիկոսի հովանավորած «Պատերազմից վնասվածներին օգնող հայկական կենտրոնական կոմիտեն» հեռագրով դիմեց «ամենուրեք հայ համայնքներին և հարուստներին»։ Կահիրեի և Ալեքսանդրիայի հայերը շտապ կարգով Թիֆլիս ուղարկեցին 20.000 ռուբլի[134]։ Ապա Պողոս Նուբարի ջանքերով կյանքի կոչվեց «Ազգային շահերու պաշտպանության հիմնադրամը», որը Հայ բարեգործական ընդհ. միությունից անկախ համազգային ձեռնարկում էր։ Մինչև նույն թվականի մարտի 15-ը հավաքվել և էջմիածին է ուղարկվել 60.000 ռուբլի[135]։ «Ազգային շահերու պաշտպանության հիմնադրամի» մասնաճյուղեր են ստեղծվել նաև Ֆրանսիայում և այլ երկրներում։

Հայ գաղթականներին և կամավորներին օգնելու գործը կլանեց բոլորին։ Ամենայն հայոց կաթողիկոսին ուղղված մի նամակում կարդում ենք. «Եգիպտոսի... Միացյալ որբախնամը, որ պահ մը պարագաներու բերումով դադրած էր գործելե, այսօր հայրենիքի անլուր աղետներեն ցնցված հրապարակ կիջնե հազարավոր որբերու բյուրավոր կարիքներուն օգնության ձեռք կարկառելու համար»[136]։ 1915 թ. Ալեքսանդրիայում կազմակերպվել է «Հայուհյաց կարմիր խաչը», որի նպատակն էր՝ «Գուրգուրանքի առարկա ընել այն ազնիվ հայ կտրիճները, որոնք հայկական ռազմաճակատին վրա ռուսական քաջամարտիկ զինվորներուն հետ կողք-կողքի հանուն հայրենիքի ազատության կմաքառին մեր թշնամիին դեմ»[137]։ Որպես առաջին առաքում Որբախնամը ուղարկել է 600 ռուբլի, իսկ Կարմիր խաչը՝ երեք սնդուկ հանդերձանք, դեղորայք և այլն[138]։

Օգնության կանչեր լսվում էին ոչ միայն Կովկասից, այլև Իրաքից, Պաղեստինից, Սիրիայից և այլ վայրերից, որտեղ ապաստան էին գտել

[134] Տե՛ս ՀՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1267, թ. 6։

[135] Տե՛ս նույն տեղում, թ. 27։

[136] Նույն տեղում, գ. 1315, թ. 2։

[137] Նույն տեղում, գ. 1299, թ. 2—3։

[138] Տե՛ս նույն տեղում։

ցեղասպանությունից ճողոպրած բազմահազար գաղթականներ։ Ուստի, օգնության գործն ավելի արդյունավետ դարձնելու համար, 1915 թ. վերջերին «Ազգային շահերու պաշտպանության հիմնադրամի» կորիզի շուրջը ստեղծվեց «Եգիպտահայ նպաստամատույց մարմինը», որը մեկտեղում էր տարբեր քաղաքական հոսանքների և հարանվանությունների ներկայացուցիչներին։ Եգիպտահայ նպաստամատույցը, գործելով մինչև 1920 թվականը, հանգանակել է շուրջ 5 միլիոն եգիպտական դահեկան և ուղարկել հետևյալ հասցեներով[139]։

| Օգնություն տրվել է | 1915—1916 թթ. | 1917—1918 թթ. | 1919—1920 թթ. |
|---|---|---|---|
| 1. Կովկասի հայ գաղթականներին | 197,585 | 362,000 | — |
| 2. Էջմիածնի » | — | 200,000 | — |
| 3. Պորտ Սաիդի » | 293,231 | — | — |
| 4. Բաղդադի » | 27,500 | — | — |
| 5. Դերայի և Պորտ Սաիդի » | — | 202,961 | — |
| 6. Հայ ազգային միությանը | 160.000 | 1,013,835 | — |
| 7. Ադանայի որբանոցներին | — | — | 620.000 |

1920 թ. օգոստոսին, երբ սովը, համաճարակները և թշնամիները սպառնում էին Հայաստանի ժողովրդի գոյությանը, Եգիպտոսում կազմակերպվեց այսպես կոչված «Ոսկե ֆոնդի» հանգանակությունը։ Ժողովուրդը նվիրաբերել է ոչ միայն ոսկեդրամ, այլև ոսկեղեն զարդեր, մատանիներ և այլն[140]։ Եգիպտահայերը ջերմեռանդորեն արձագանքեցին նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի օգնության դիմումին։ Հանուն ազգային իշխանության հրապարակված հանգանակության կոչում ասված

[139] Տե՛ս «Արև», 12 և 13 մայիսի 1926։ Աղյուսակում չեն նշված տեղական կարիքներին հատկացված միջոցները, թեև դրանք բավական խոշոր գումար են կազմում։

[140] Սակայն ոչ բոլոր ոսկեղենն է ծառայել իր նպատակին։ Տարիներ անց չսպասված աղմուկ բարձրացավ, երբ հայտնի դարձավ, որ թեմակալ առաջնորդ Թ. Գուշակյանի նվիրաբերած մեծարժեք մատանին մնացել է Ալեքսանդրիայում...։ «Արևը» գրել է. «Ոսկի ֆոնդին մաս կազմող թանկարժեք մատանին կգտնվի Ալեքսանդրիո թեմական անդամ, քաղաքական ժողովի ատենապետ և ականավոր դաշնակցական գործիչ Տեր-մար բեյ Թյուլթյունճյանի մոտ, որ հակառակ բազմաթիվ դիմումներու ու հրապարակային պահանջներու կհամառի իրեն սեփականություն ընել այս «ոսկի ֆոնդի մատանին» վերադարձնել իր սեփական տիրոջ՝ Եգիպտոսի առաջնորդ Թորգոմ եպս. Գուշակյանի, որ Հայաստանին նվիրած ըլլալով՝ կուզե ժամ առաջ Հայաստան ղրկել զայն...» («Արև», 22 մայիսի 1924)։ Աղմուկը շարունակվում է մինչև 1927 թվականը, երբ Թյուլթյունճյանը, վերջապես, վերադարձնում է մատանին։



է. «...Թշնամին դարձյալ գրոհ տված է մեր սուրբ հայրենիքին վրա, զայն բնաջինջ կործանելու ոճրագործ առաջադրությամբ։ ... Հանգիստ կյանքը զոր կվայելես հոս, անդորրությունը զոր այս երջանիկ երկիրը կուտա քեզի, պետք չէ որ մոռցնեն քեզի քու պարտականությունդ քու նահատակ հայրենիքիդ հանդեպ։ Ո՛ն, ուրեմն, ճիգ մը ևս, անմասն չմնալու համար հայրենիքի փրկության վեհագույն գործեն»[141]։ Մինչ շարունակվում էր հանգանակությունը, սովետական իշխանություն հաստատվեց Հայաստանում։ Այդ պատճառով անգլիացիները չթույլատրեցին տեղ հասցնել օգնությունը[142]։

Այսպիսով, թուրք-գերմանական մերձեցմամբ փոխվեցին Հայկական հարցի պայմանները։ Անգլիան և Ֆրանսիան, որպես ճնշման միջոց, պաշտպանում էին Թուրքիայի կազմում գտնվող ժողովուրդների ինքնորոշման ձգտումները։ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի մեկուսացումից հետո եգիպտահայ բուրժուաները, որոնք հիմնականում շաղկապված էին անգլիական և ֆրանսիական կապիտալի հետ, գլխավորում էին Հայկական հարցի լուծման ձգտող ձեռնարկումները և, Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ, դիմումներ էին կատարում մեծ պետություններին՝ Բեռլինի 61-րդ հոդվածի կենսագործման օգտին։ Նրանց ջանքերով ստեղծվեցին Ազգային պատվիրակությունը, «Միջկուսակցային մարմինը», Հայ ազգային միությունը, Հայկական Լեգեոնը։ Սակայն այդ բոլորը ոչ մի դրական արդյունքի չհանգեցրին։ Համաշխարհային պատերազմի տարիներին դատարկվեց Արևմտյան Հայաստանը։ Գենոցիդից ճողոպրած բեկորները ցրվեցին աշխարհով մեկ։ Ստեղծվեց սփյուռքը։

### 3. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Ճնշելով Արաբիի ապստամբությունը, բրիտանական գաղութարարները Եգիպտոսը ձևականորեն հռչակեցին «ժամանակավոր զինվորա-

[141] «Արև», 1 նոյեմբերի 1920։

[142] Ուշագրավ իրողություն է քսան ինքնաթիռների Հայաստան առաքման խափանումը։ Ինքնաթիռները ձեռք էին բերվել 14 եգիպտահայերի և ռամկավար կուսակցության տրամադրած միջոցներով («Արև», 14 մայիսի 1924)։ 1923 թվականի արխիվային մի վավերագրում ասված է. «Այդ սավառնակները նվեր պիտի տրվեին Հայաստանի կառավարության, բայց քիչ հետո սովետական իշխանությունն հաստատվելով չէին կրցած զանոնք Հայաստան ղրկել և... անգլիացվոց մոտ պահված կմնային...։ Վերջերս ոչ մեծ եղավ մեր զարմանքը, երբ տեղվույն վրա երթալով ոչ սավառնակները գտանք, ոչ ալ անոնց մեքենաները» (ԳԱԹ արխիվ, Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, գ. 227, թ. 7—8)։

կան գրավման ներքո», իսկ իրականում վարում էին դասական գաղութային քաղաքականություն։ Այդ «նոր կարգի» հիմք ծառայեց լորդ Դաֆֆերինի զեկուցագիրը, որտեղ ասված է. «Մեր հիմնելիք նոր կարգադրության սկզբունքն էապես պետք չէ տարբերին անոնցմե, որ ուրիշ երկիրներու մեջ օգտակար գտնված են, այն է՝ ազգային անկախություն և սահմանադրական կառավարություն։ Արդարև Եգիպտոս այժմ ոչ մին կարող է պահանջել և ոչ զմյուսն վարել բառին կատարյալ նշանակությամբ, բայց կրնա վստահիլ Եվրոպիո վեհանձնության սույն բարյաց առաջինն շահելու, և ապավինել ժամանակին զերկրորդն զարգացնելու համար։ ...Եգիպտական ժողովուրդը մշտնջենապես դատապարտյալ է, իբրև անկարող յուր սեպհական գործոց տնօրինության...»[143]։

Պետական ապարատը խիստ զտվեց, կարևոր պաշտոններն եգիպտացիներից խլվեցին և հանձնվեցին օտարերկրացիների. բանակում և ոստիկանական ջոկատներում համարյա բոլոր աստիճանավորներն անգլիացիներ, բուլղարներ, ալբանացիներ, չերքեզներ էին։ Պետական գործերում վճռական խոսքը պատկանում էր ոչ թե խեդիվին և նրա մինիստրներին, այլ բրիտանական գլխավոր հյուպատոս Կրոմերին և տարբեր մինիստրություններում խցկված անգլիացի՝ այսպես կոչված խորհրդականներին։

Գաղութարարներն Եգիպտոս էին տանում տնտեսական և քաղաքական ստրկացման նոր եղանակներ (կոնցեսիաները, բանկերը և այլն), որոնք խանգարելով ձևավորվող ազգային բուրժուազիայի զարգացմանը, նրան պայքարի էին մղում բրիտանական իմպերիալիզմի դեմ։ Հակաիմպերիալիստական պայքարի ասպարեզ իջան մի շարք կուսակցություններ, միություններ, կոմիտեներ, որոնք խոշոր դեր կատարեցին եգիպտական ժողովրդի ազգային զարթոնքում։ Երվանդ Օտյանը գրել է. «Զարմանալի ու տարօրինակ է այն հոգեկան փոփոխությունը, զոր Եգիպտոսի արաբ ժողովուրդը կրեց...։ 96-ի դեպքերեն ետքը, երբ որ Եգիպտոս հասանք, արաբ ժողովուրդը, մանավանդ գյուղացի ֆելլահը, տակավին իր ստրկության մեջն էր բոլորովին։ Քրիստոնյան, ուզե ըլլա եվրոպացի, հույն կամ հայ, պատկառանք ու սարսափ կազդեր ամբոխին ու ֆելլահին։ Գլխարկի մը տեսքը բավական էր հարգանք ներշնչելու համար»[144]։ Սակայն այդ այդպես չմնաց, հիմնովին փոխվեց դրությունը։

[143] Տես «Մասիս», 22 ապրիլի 1883։

[144] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 422։



Այդ «հոգեկան փոփոխությունը» արդյունք էր արտադրության ոլորտում առաջացած տեղաշարժերի, որոնց հետևանքով ծանրացավ աշխատավորական զանգվածների շահագործման լուծը։ Հայտնի է, որ 1890-ական թվականներից Եգիպտոսում արտադրության հին ձևերը աստիճանաբար փոխարինվում էին նորով։ Մեքենայացման շնորհիվ արտադրության տարբեր պրոցեսների պարզեցումը հնարավորություն էր ստեղծում բանվորական կազմը համալրելու արտադրական ոչ մի փորձ չունեցող ֆելլահներով։ Օգտվելով այդ հանգամանքից, ձեռնարկատերերն ըստ կամս երկարաձգում էին աշխատանքային ժամերը, նվազեցնում աշխատավարձը, բարձր վարձատրվող բանվորներին փոխարինում ցածր վարձատրվող բանվորներով։ Մինչև անգամ «ազգասեր» հայ գործարանատերերը «այլև այլ պատճառներով միշտ հայ գործավորները իբր դժվարահաճ կճամբեին և անոնց տեղը կբանեցնեին ֆելլահները»[145]։ Սակայն շահագործումը կրում էր այնպիսի բնույթ, որ վերջիններս էլ չէին կարող «հանդուրժել պայմանյալ վիճակին» և իրենց դժգոհությունը հայտնում էին «ազդու և գործնական կերպով», այսինքն՝ գործադուլով[146]։

Աշխատավորների տնտեսական պայքարը վերածվում էր քաղաքական պայքարի, որին արձագանքում էին Եվրոպայում, Բալկաններում և

[145] «Արշալույս», 6 հունվարի 1900։

[146] 1899 թ. վերջերին Կահիրեում սկսվեց նոր Եգիպտոսի պատմության մեջ հայտնի առաջին խոշոր գործադուլը։ Մաթոսյան, Ջանակլիդես, Դիմիտրաքով և այլ ծխախոտագործական ձեռնարկությունների աշխատավորները դադարեցրին աշխատանքը, բողոքելով առանց այդ էլ ողորմելի աշխատավարձի 25 տոկոս իջեցման դեմ (El-Gritly, The Structure of Modern Industry, p. 546)։ Ավելի քան մեկ ամիս տևող այդ գործադուլի ընթացքում, գործարանատերերը ապարդյուն փորձեցին ընկճել աշխատավորներին։ Նրանք նախ հայտարարեցին, որ «որոշած են գոցել իրենց գործարանները, քան թե գործավորաց պահանջումին գոհացում տալ» («Արշալույս», 6 հունվարի 1900)։ Երբ այդ սպառնալիքը որևէ դեր չխաղաց, նրանք աշխատանքի ընդունեցին շրջաններից հավաքագրված ֆելլահներ։ Սակայն գործադուլավորները ծառացան դրա դեմ. «400—500 հոգիե բաղկացյալ գործավորներու խումբ մը Մաթոսյան ընկերության գործարանին շուրջը կպատեին և պահանջում են, որ դուրս բերվեն «դավաճան հոն աշխատող գործավորները»։ Ձեռնարկատերերին օգնության հասան ոստիկանական ջոկատները, որոնք, սակայն, տեսնելով աշխատավորների վճռականությունը, նպատակահարմար գտան դուրս բերել դավաճան աշխատողներին և փակել գործարանը։ Գործադուլավորները այնուհետև դիմեցին դեպի Կիրացիի գործարանը, որտեղ «նույնպես Փորթ-Սաիդեն բերված գործավորներ կաշխատեին»։ Ապա ձեռնարկատերերը փորձեցին աշխատավորներին ճնշել ապրուստի միջոցների սպառման միջոցով, և համառորեն փակ պահեցին գործարանները։ Բայց ապարդյուն։ Գործադուլավորները միջոցներ ստեղծեցին «կարոտ և ընտանիքի տեր» իրենց ընկերներին «նյութապես օգնելու համար» («Արշալույս», 27 հունվարի 1900)։

Եգիպտոսում լույս տեսնող հայկական թերթերը։ Այդ առումով բնութագրական է Փարիզի «Լ'Արմենի» պարբերականի ջերմ վերաբերմունքը վտարանդի արաբ ականավոր քաղաքական գործիչ Նաջիբ Ազուրիի «Արաբ ազգի զարթոնքը» աշխատությանը։ Ազուրին Մինաս Չերազին գրել է. «Ցանկանում եմ հրապարակով շնորհակալություն հայտնել Ձեզ և Ձեր աշխատակիցներին այն խանդավառության համար, որով դիմավորեցիք արաբների հայրենիքի զարթոնքը, և այն վեհանձն պրոպագանդայի համար, որ բարեհաճեցիք կատարել մեր ազգային շարժման օգտին։ Նույն շնորհակալությունը հղում եմ Ձեր բոլոր հայրենակիցներին, որոնք, հիմք ունեմ կարծելու, նույնպիսի զգացումներ ու համակրանք տածում են մեզ հանդեպ։ ...Հայերը մի անգամ ևս ապացուցեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր շահերը»[147]։

Նաջիբ Ազուրիի գաղափարներին արձագանքեց նաև եգիպտահայ մամուլը։ Կահիրեի «Լուսաբեր»-ը թարգմանաբար հրապարակել է Ազուրիի աշխատության այն հատվածները, որտեղ քննարկվում են արաբական և հայկական հարցերի աղերսները։ Ազուրիի քաղաքական համոզմունքն էր՝ «Արաբներով բնակված հողերը պետք է պատկանեն արաբներին, բացառապես թուրքերով բնակված նահանգները՝ թուրքերին, Հայաստանը՝ հայերին, Քուրդստանը՝ քրդերին» և այլն։ Խիստ ուշագրավ է նաև նրա կարծիքն այն դերի մասին, որ հայ ժողովրդի ազատագրական պայքարը խաղացել է արաբների ազգային զարթոնքում։ Նա գտնում էր, որ «ազատության շունչը» Հայաստանի լեռներից իջավ Եփրատի հովիտը և այնտեղից տարածվեց արաբական երկրների վրա[148]։ Եգիպտահայ մամուլն արձագանքել է նաև Մուստաֆա Կամիլի, Կավակիբիի և մյուս արաբ գաղափարախոսների քաղաքական հայացքներին։

Սակայն հայ աշխատավորները համարյա տեղ չունեցան եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում։ Դասակարգային շահերի բարձր գիտակցությամբ օժտված պրոլետարիատի բացակայության պայմաններում հայ աշխատավորների հակաիմպերիալիստական տրամադրությունները բեկվելով հայկական հարցի ոսպնյակում կամ շեղվում էին բուն նպատակից, կամ էլ դրսևորվում զարտուղի ձևերով[149]։ Հայ աշխատավորներին մեկուսացնելու գործում կարևոր դեր էին

[147] „L'Arménie", Paris, 1904, № 52.

[148] Տե՛ս «Լուսաբեր», 21 մարտի 1905։

[149] Բերենք թեկուզ մի օրինակ։ Հայտնի է, որ Արաբի փաշայի ապստամբությունը ճնշելուց հետո բրիտանական գաղութարարները աքսորված էին Ներքին Եգիպտոսում



կատարում նաև այն ապակողմնորոշող միջոցառումները, որ բրիտանական իմպերիալիստները գործադրում էին՝ բաժանելով տիրելու համար։ Նրանց հաջողվում էր արաբ ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարը ներկայացնել որպես հակաքրիստոնեական շարժում և հակաքրիստոնեական ցույցերը վերածել ազգամիջյան բախման։ Այդ ստահոդ պրոպագանդան բավական համոզիչ կերպարանք էր ընդունում, որովհետև «ալ-Հիզբ ալ-վաթանի» և մյուս եգիպտական կազմակերպությունները, ժողովրդական զանգվածները ոտքի հանելու նպատակով, գրգռում էին նրանց կրոնական զգացումները։ Այնպիսի պայծառատես մտավորական ինչպիսին էր Երվանդ Օտյանը, ընկնելով այդ պրոպագանդայի ազդեցության տակ, եգիպտական ժողովրդի անկախության պայքարը համարում էր հիմնականում քրիստոնյաների, այդ թվում և հայերի դեմ ուղղված մոլեռանդական շարժում[150]։

Եգիպտահայ աշխատավորներին ապակողմնորոշելու գործում զգալի դեր էին կատարում նաև անգլիական կապիտալի «բարիքներից» օգտվող բուրժուական շրջանների հայ գրիչները։ Եգիպտահայ բուրժուաները գտնում էին, որ ազգային-ազատագրական պայքարը «շատ վնասակար գործունեություն մըն» է, և լսել անգամ չէին ուզում բրիտանական զորքերի հեռացման մասին։ Նրանց շահերն արտահայտող «Լուսաբեր»-ը գրում էր. «Եգիպտոսի արտակարգ բարգավաճումը անգլիական վարչության իմաստուն քաղաքականությունը կհաստատե»[151]։ Պետք չէ զարմանալ, որ Նաջիբ Ազուրիի ազգային-ազատագրական գաղա-

տակավին շատ տարիներ բախվել պարտիզանական ջոկատների հետ։ Նրանք զանազան խաբեպատիր միջոցներով բնիկների դեմ կռվի էին հանում սլավոնացի, չերքեզ, բուլղար և այլ օտարազգի վարձկան զինվորներ։ Այդ խաբվածների թվում լինում էին նաև հայեր։ Դրանցից էին Կեսարիայից գաղթած Սիմոն Թորոսյանը և նրա ընկերները, որոնց շուրջը բավական աղմուկ բարձրացավ ժամանակի հայկական մամուլում։ Թորոսյանը «Արմենիա» լրագրի թղթակցին ասել է. «Երեք տարի առաջ Կահիրեի մեջ քանի մը ընկերներով զոմիսեր (ոստիկան—Հ. Թ.) գրվեցանք. սակայն մեզ վերջը խաբելով Վադի-Հալֆա ուղարկեցին և ... բանակի մեջ խառնելով իբր զինվոր պատերազմել տալ ուզեցին»։ Սակայն նրանք չեն ենթարկվել արաբ ապստամբների դեմ կռվելու հրամանին և կանգնել են պատերազմական ատյանի առաջ։ Նրա ընկերներից 4-ը գնդակահարվել են, իսկ մյուսները դատապարտվել տարբեր ժամկետներով ազատազրկման։ Թորոսյանը բանտից ազատվել է Նուբար փաշայի միջնորդությամբ։ («Արմենիա», 5 փետրվարի 1887)։

[150] Տե՛ս Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 405։

[151] «Լուսաբեր», 15 հունվարի 1907։

փարներին արձագանքող այդ լրագիրը այժմ անգլիական տիրապետության գովքն էր հյուսում։ Արդարև, մինչև 1905 թվականը դեռևս երկյուղ չներշնչող հակաիմպերիալիստական պայքարը 1907 թ. այնպիսի ծավալ էր ընդունել, որ լրջորեն սպառնում էր բրիտանական տիրապետությանը։ Եգիպտահայ բուրժուաները և նրանց մամուլը չէին կարող այլևս համառել լիբերալիզմի նախկին դիրքերում։

Գնալով ուժեղացող ազգային-ազատագրական պայքարը ցնցում էր բրիտանական իմպերիալիզմի տիրապետության հիմքերը։ Հակաբրիտանական բուռն կրքերի արտահայտություն էր 1906 թ. Դենշվայում անգլիական սպաների սպանությունը, որի հետևանքով յոթ ֆելլահներ մահվան դատապարտվեցին և բազմաթիվ ուրիշներ՝ տարբեր ժամկետներով ազատազրկման։ Այդ դատավճռի դեմ աշխատավորները հանդես եկան բողոքի վիթխարի ցույցերով։ Արաբ պատմաբան Ջամալ Ահմեդը գտնում է, որ Դենշվայի ողբերգությունը հասարակ եգիպտացուն ավելի մոտեցրեց Մուստաֆա Կամիլի և Ալի Յուսուֆի ազգային-ազատագրական գաղափարներին[152]։ 1904 թ. անգլո-ֆրանսիական կոնվենցիայից հետո այդ գործիչներն այլևս պատրանքներ չէին սնուցում Եգիպտոսի անկախությունն Անգլիայի և Ֆրանսիայի հակասությունների օգտագործման միջոցով ձեռք բերելու մասին։ Մուստաֆա Կամիլը պրոպագանդում էր. «Այսօր, ավելի քան երբեք, մենք գիտակցում ենք, որ ազգերը կարող են ազատագրվել իրենց պայքարով...։ Չենք կարող անկախություն ձեռք բերել դրսի օգնությամբ։ Մենք ինքներս պետք է պայքարենք...»[153]։

1910 թ. Եգիպտոսի անկախության պայքարը նոր վերելք ապրեց, կապված Սուեզի ջրանցքի համաձայնագրի հետ։ Անգլիացիները պահանջում էին այն 40 տարով երկարաձգել, իսկ դա նշանակում էր օրինական ձև տալ բրիտանական տիրապետությանը։ Երբ հայտնի դարձավ, որ եգիպտական կառավարությունը որոշել է ընդառաջել գաղութարարներին, «ալ-Վաթան» կուսակցության[154] ահաբեկիչը՝ Իսմայիլ ալ-Վերդանին սպանեց անգլիական դրածո պրեմիեր Պուտրոս Ղալի փաշային։ Պատասխանելով խղճի հարցերին, ալ-Վերդանին ասել է, որ Ղալին արժանի էր այդպիսի վախճանի, քանի որ նա կախաղան բարձրացրեց դենշվայցիներին, Սուդանը հանձնեց անգլիացիներին և

[152] Տե՛ս J. M. Ahmed, The Intellectual Origins of Egyptian Nationalism, p. 63.

[153] Նույն տեղում, էջ 77։

[154] «Ալ-վաթան» կուսակցությունը հիմնադրվել է 1907 թ. ականավոր հրապարակախոս Մուստաֆա Կամիլի կողմից։ Նրա նշանաբանն էր՝ «Եգիպտոսը եգիպտացինե-



պատրաստվում էր «մի զզվելի արարք գործել Սուեզի հարցում»[155]։ Ալ-Վերդանին որպես ոճրագործ մահվան դատապարտվեց, իսկ ժողովուրդը նրան հռչակեց «ազգային հերոս»։ Անգլիացիները հույսեր էին կապում ներկայացուցիչների պալատի հետ։ Սակայն հակաբրիտանական ցույցերի և գործադուլների ճնշման ներքո, ներկայացուցիչների պալատը միաձայն, բացի մի ղպտի երեսփոխանից, քվեարկեց համաձայնագրի երկարաձգման դեմ։ Դա բրիտանական իմպերիալիզմի առաջին լուրջ պարտությունն էր Եգիպտոսում։

Այդ իրադարձություններից հետո եգիպտահայ բուրժուաներն առավել եռանդով հանդես եկան բրիտանական իմպերիալիզմի պաշտպանության օգտին։ Նրանց սպասարկող մամուլն ու գրիչները փորձում էին հայ աշխատավորների աչքին վարկաբեկել եգիպտական ժողովրդի անկախության պայքարը, նրա գործիչները ներկայացնելով իրենց շահերի ծուռ հայելու մեջ։ Բուրժուական գաղափարախոս եգիպտահայ Է. Մկրտիչյանը գրել է. «Դժբախտաբար այս երկրին մեջ ևս մուտ գտավ քաղաքականության միքրոբը, որ կսպառնա անդամալուծել մեր խաղաղ զարգացման գործը...։ Եգիպտոսի ժողովուրդին համար, որ սկսած է սխալ հեղափոխության մը բազմավտանգ ճամբուն մեջ մոլորվիլ, Վերդանին առաջին օրեն նկատվեցավ «ազգային հերոս» և իր ոճիրը փառաբանվեցավ ... իբրև հայրենասիրական արարք մը...»[156]։ Նրա կարծիքով բրիտանական «հովանավորության» ներքո Եգիպտոսը ծաղկում և բարգավաճում էր, վայելելով «անհատական և քաղաքական ավելի լայն իրավունքներ, քան նույնիսկ երջանիկ Շվեյցարիան»։ «...Ժողովուրդը սկսած էր հետզհետե հարստանալ, ֆելլահը որ անցյալին մեջ իբրև ճորտ կծառայեր, ինքն ալ հիմա սկսած էր իր կարգին կալվածատեր դառնալ...»[157]։ Սակայն այդ բոլոր «բարիքները» ի չիք դառնալու վտանգին ենթարկվեցին իբր այն օրից, երբ «քաղաքական հասունությունից զուրկ», բայց «ճարտար ամբոխավար» Մուստաֆա Կամիլը

րին»։ Կուսակցության օրգանը՝ «Ալ-Լիվա» օրաթերթը լույս էր տեսնում նաև անգլերեն («Ըը իջիպշըն ստանդարտ») և ֆրանսերեն («Լ'Էտանդար էժիպսիեն»)։ «Ալ-վաթանի» լայն ժողովրդականության մասին է վկայում այն, որ Մուստաֆա Կամիլի «հուղարկավորության հանդեսն ազգային սուգի մը համեմատություններն առավ, 100.000 ժողովուրդ հետևեցավ իր դագաղին» («Բյուզանդիոն», 28 հունիսի 1910)։

[155] J. Berque, Histoire sociale d'un village égyptien, p. 13.

[156] «Բյուզանդիոն», 28 հունիսի 1910։

[157] «Բյուզանդիոն», 7 հուլիսի 1910։

սկսեց մուսուլմանական ամբոխը գրգռել անգլիացիների դեմ։ Եվ, վերջապես, Մկրտիչյանները գտնում էին, որ Եգիպտոսը տակավին շատ հեռու է ինքնիրեն կառավարելու վիճակին մեջ գտնվելէ»[108]։

Սուեզի հարցում կրած պարտությունից հետո բրիտանական գաղութարարները դիմեցին մի շարք միջոցների՝ բուրժուա-կալվածատիրական շրջաններին «ալ-Վաթան» կուսակցության ազդեցությունից դուրս կորզելու համար։ 1911—1912 թթ. նրանք 1883 թ. սահմանադրությունը փոփոխելով ուժի մեջ մտցրեցին։ Նրա երկու պալատների (օրենսդիր խորհուրդ և գերագույն ժողով) տեղ ստեղծվեց 66 ընտրովի և 17 նշանակովի անդամներից բաղկացած միապալատյան օրենսդիր ժողով, որը սակայն նույնքան սահմանափակ իրավունքներ ուներ, որքան նախկին պալատները։ Մյուս կողմից նրանք ռեպրեսիայի ենթարկեցին «ալ-Վաթան» կուսակցությունը, փակելով նրա թերթերը, ակումբները և աքսորելով կամ ազատազրկելով նրա ղեկավարներին։ «Հակաբրիտանական հանցագործությունները» քննող հատուկ դատարանները գերծանրաբեռնված էին։ Եգիպտական թերթերը զրկվեցին բրիտանական կառավարությունը քննադատելու իրավունքից։ Ոստիկանության իրավունք տրվեց վարչական միջոցներ ձեռնարկելու այն բոլոր անձանց դեմ, ովքեր կապված էին ազգային-ազատագրական շարժման հետ։ 1914 թ. դեկտեմբերի 18-ին, պատրվակ ծառայեցնելով համաշխարհային պատերազմը, բրիտանական գաղութարարներն Եգիպտոսը հռչակեցին պրոտեկտորատ, որը և մնաց մինչև 1922 թ.։

Այսպիսով, եգիպտահայ հասարակության տարբեր խավերը տարբեր վերաբերմունք ունեին եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ։ Եգիպտահայ բուրժուաները, որոնց բարեկեցությունը պայմանավորված էր իմպերիալիզմի տիրապետությամբ, լսել անգամ չէին կամենում ազգային-ազատագրական պայքարի մասին։ Ինչպես հույն, հրեա, այնպես էլ հայ աշխատավորները սնուցում էին հակաիմպերիալիստական տրամադրություններ։ Սակայն նրանք գործուն մասնակցություն համարյա չունեցան եգիպտական ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարին։ Դա հետևանքն էր այն ապակողմնորոշող միջոցառումների, որ գործադրում էին իմպերիալիստները, օգտվելով դասակարգային շահերի բարձր գիտակցությամբ օժտված պրոլետարիատի բացակայությունից։

[108] Նույն տեղում։



ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՄՇԱԿՈՒՅԹԸ

Քննարկվող ժամանակաշրջանում Եգիպտոսը դարձավ գաղութահայ մշակութային խոշոր օջախներից մեկը։ Ավելացավ համայնքային դպրոցների թիվը, հաստատվեցին նաև մասնավոր դպրոցներ, այդ թվում հայկական՝ Եգիպտոսում առաջին մանկապարտեզը։ Ստեղծվեցին մշակութային ընկերություններ, գրադարան-ընթերցարաններ, պարբերական մամուլի օրգաններ և տպարաններ, սկզբնավորվեց հրատարակչական գործը։ Աշխուժացավ թատերական և երաժշտական կյանքը։ Ելնելով եգիպտահայ մշակույթի զարգացման մակարդակից, Կրոմերը գրել է. «Հայերը սիրիացիների հետ միասին կազմում են Մերձավոր Արևելքի մտավորական սերուցքը»[1]։

Եգիպտահայ մշակույթի զարգացմանը հիմնականում նպաստում էին արևմտահայ մտավորականության այն ներկայացուցիչները, որ թուրքական հալածանքներից փախչելով ապաստանել էին Եգիպտոսում։ Չպետք է անտեսել նաև արևմտյան մշակույթի ազդեցությունը, որի ծավալման և խորացման գործոն էին Եգիպտոսում մշտական բնակություն հաստատած բազմահազար եվրոպացիները։ Նրանց դպրոցները, մամուլի օրգանները, հրատարակչությունները, թատրոնները, գրադարանները կարևոր դեր էին կատարում տեղական բնակչության մշակույթի մակարդակի բարձրացման գործում։

## 1. ԴՊՐՈՑՆԵՐԸ

Մինչև 1880-ական թվականները, ինչպես տեսանք, Եգիպտոսում գործում էին երկու հայկական դպրոցներ, որոնք ընդգրկում էին հազիվ 100—120 աշակերտ։ Հետագայում դպրոցների թիվը նախ բարձրացավ

[1] *Cromer*, Modern Egypt, vol. II, p. 219.

6-ի, ապա՝ 7-ի, իսկ հետո՝ 11-ի, որոնցում սովորում էին համապատասխանաբար՝ 737, 1060 և 1590 աշակերտ։ Աղյուսակում[2] բերված տվյալները մոտավոր պատկերացում են տալիս դպրոցների և սովորողների տեղաբաշխման մասին։

| Քաղաքներ | 1897—1902 թթ. | | 1905—1908 թթ. | | 1914—1917 թթ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը |
| Կահիրե | 4 | 515 | 3 | 650 | 4 | 870 |
| Ալեքսանդրիա | 1 | 210 | 1 | 350 | 2 | 550 |
| Հելիոպոլիս | — | — | — | — | 1 | 90 |
| Զագազիգ[3] | — | — | 1 | 18 | 1 | 18 |
| Այլ վայրեր | 1 | 12 | 2 | 42 | 3 | 62 |
| | 6 | 737 | 7 | 1060 | 11 | 1590 |

Կահիրեում գործում էին Խորենյան դպրոցը, 1897 թվականից՝ Անարատ Հղիության քույրերի միաբանության դպրոցը, 1897—1900 թթ.՝ Սմբատ Բյուրատի Կեդրոնական երկսեռ կրթարանը, 1899—1902 թթ.՝ Հայ ավետարանական դպրոցը, 1905 թվականից՝ Մանիսալյան քույրերի Աղջկանց համազգային վարժարանը, 1917 թվականից՝ Թաշճյան վարժարանը։ Ալեքսանդրիայում գործում էին Պողոսյան դպրոցը, 1914 թվականից՝ Անարատ Հղիության քույրերի միաբանության դպրոցը, Հելիոպոլսում՝ 1916 թվականից Շավարշյան դպրոցը, Զագազիգում՝ 1905 թվականից Օշական դպրոցը։ Տարբեր ժամանակներում հայկական դպրոցներ գործել են նաև Հեհիայում և այլ վայրերում։

Սովորողների թվաքանակի և ուսման մակարդակի տեսակետից առաջին տեղը գրավում էր Խորենյան դպրոցը, որը 1897 թ. վերանվանվեց Գալուստյան վարժարան՝ հիմնադրի մեծատան անունով։ Աշակերտների թվի արտակարգ աճը և ուսման նոր պահանջմունքները վարժարանի կյանքում առաջացրին մի շարք փոփոխություններ։ Նախ և առաջ, 1897 թ. բացվեց Գալուստյան դպրոցի մանկապարտեզը՝ առաջին

[2] Ըստ «Արմենիայի» (28 նոյեմբերի 1894), «Գեղունիի» (1902, № 3, էջ 24), «Ազատ բեմի» (26 հուլիսի 1906), «Արևի» (21 հունիսի 1908), «Եգիպտահայ տարեցույցի» (1914, էջ 25), Ն. Մ. Աղազարմի (Նոթեր..., էջ 84) տվյալների։

[3] 1914—1917 թթ. Զագազիգի դպրոցում սովորողների թվի վերաբերյալ տվյալներ չկան, ուստի կրկնել ենք նախորդ ժամանակում բերված տվյալը։



մանկապարտեզն ամբողջ Եգիպտոսում[4], ապա այն վեցամյակից վերածվեց ութամյա դպրոցի և, վերջապես, 1907 թ. օժտվեց արդիական հարմարավետ շենքով։ Նախկին վարժարանը «հարանուն հայ մանկավույն անբավական» էր և, երբեմնի բարեկարգ Դարբ ալ-Գինինե թաղամասի ծայրամասի վերածվելու հետևանքով, այն մնացել էր «աղտոտ ու դարչահոտ փողոցներու կեդրոնը, զուրկ մաքուր օդե և լուսե...»[5]։

Գալուստյան վարժարանի նոր շենքը կառուցվեց Կահիրեի Մառուֆ արդիական թաղում։ Դպրոցի շինության վրա ծախսվեց քսան հազար անգլիական ֆունտ, որից շուրջ 16,000-ը տրամադրել էր Պողոս Նուբարը, իսկ մնացածը գոյացել էր ժողովրդական նվերներից։ Նոր շենքը բաղկացած էր իրար կից երկու անջատ մասերից, որի շնորհիվ առանձնացվել են Գալուստյանի արական ու իգական չոկ բաժինները։ 1907 թ. հունիսի 18 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Վարժարանին բացումն կատարվեցավ շքեղ կերպով, շենքն օդավետ ու հոյակապ եղած է..., երկսեռ վարժարանը զատ-զատ շինված է իրենց բոլոր մասերովն, ... բոլոր կահկարասիները ... Եվրոպայեն բերել տված» են[6]։ Իսկ 1908 թ. Գալուստյանի շրջափակում կառուցվեց մանկապարտեզի նոր շենքը։ Այդպիսով, Գալուստյան դպրոցն ունեցավ մանկապարտեզ՝ եռամյա շրջանով, և երկու (արական և իգական) ութամյա նախակրթարան, որոնցում 1911 թ. սովորում էին 360[7], իսկ հետագայում՝ ավելի քան վեց հարյուր երեխաներ։

Գալուստյան վարժարանից հետո աչքի էր ընկնում Ալեքսանդրիայի Պողոսյան կամ նախկին Պողոս-բեյյան դպրոցը, որը հաստատված էր քաղաքային հնացած և հայաբնակ թաղերից հեռու գտնվող մի ազգապատկան շենքում։ 1888 թ. Պողոսյան դպրոցը տեղափոխվեց նորակառույց առաջնորդարանի առաջին հարկը, որն ավելի ընդարձակ և անհամեմատ ավելի հարմարավետ էր։ Ելնելով Ալեքսանդրիայի գաղթականության կարիքներից, Պողոսյան դպրոցի արական և իգական բաժինները 4-ամյակից նախ 6-ի, ապա 8-ի վերածվեցին, բացվեց նաև մանկապարտեզ՝ երկամյա շրջանով։ Մանկապարտեզը գտնվում էր մի լքված շենքում։ Սեղմված «խեղդուկ, վատառողջ» երկու սենյակներում

[4] «Գալուստյան միություն», Կահիրե, 1913, էջ 3։ Եգիպտական առաջին մանկապարտեզը բացվել է 1918 թ., ավելի քան քսան տարի ուշ, քան հայկականը։

[5] «Արևելյան մամուլ», 1891, էջ 183։

[6] ԳԱԹ արխիվ, Թ. Աղասյանի ֆոնդ, թ. 12, վ. 5722։

[7] Տե՛ս Ն. Մ. Աղազարմ, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութի վրա, էջ 84։

ցված էին շուրջ հարյուր երեխաներ[8]: 1887 թ. Պողոսյան դպրոցում սովորում էին ընդամենը 28[9], 1908 թ.՝ 350[10], իսկ 1914 թ.՝ 500[11] երեխաներ:

Շրջանային քաղաքների հայկական դպրոցները փոքր, մեկ կամ երկու, երբեմն էլ երեք դասարանով դպրոցներ էին, հաստատված վարձովի բնակարաններում: Դրանցից հնագույնը Հեհիայի դպրոցն էր, որն ուներ 10—12 աշակերտ և մի ուսուցչուհի: Այստեղ գալիս էր Զաղազիգի Օշական դպրոցը, որտեղ սովորում էին 18—20 երեխա՝ մի ուսուցչուհու խնամքի ներքո[12]: Այդ կարգի դպրոցներ կային նաև Թանթայում և Մաթարիայում: Համայնքային դպրոցներից նորագույնը Հելիոպոլսի Նավարշյան դպրոցն էր, որը գաղութի մեծանալու հետ գնալով աճեց և դարձավ միջնակարգ կրթության կարևորագույն օջախներից մեկը:

Գալուստյան և Պողոսյան դպրոցներին կից գործող մանկապարտեզներն աշակերտներ էին պատրաստում համապատասխան նախակրթարանի առաջին դասարանի համար: Մանկապարտեզում 4—7 տարեկան երեխաներն երկու կամ երեք տարվա ընթացքում ձեռք էին բերում հայերեն գրաճանաչություն, թվաբանական նախնական գիտելիքներ, սովորում էին հայերեն երգեր, արտասանություններ և այլն: Նախակրթարանում 8—12 տարեկան երեխաները սովորում էին հայոց լեզու, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, թվաբանություն, բնագիտություն և այլն, ինչպես և ֆրանսերեն, անգլերեն, մասամբ էլ արաբերեն լեզու: Լրացուցիչ 7 և 8 դասարաններում սովորողները ոչ միայն խորացնում էին նախորդ տարիներին ստացած ընդհանուր գիտելիքները, այլև անցնում էին տոմարակալություն, նամակագրություն, սղագրություն և այդ կարգի այլ առարկաներ, որոնք անհրաժեշտ էին կյանքում: Իգական բաժնում, բացի այդ առարկաներից, որպես կանոն անցնում էին նաև ասեղնագործություն, տնտեսություն և այլն: Ամեն տարվա վերջում ասեղնագործության լավագույն նմուշները ցուցադրվում էին «ի ներկայության հանդիսականաց»[13]:

Գալուստյան դպրոցում ձրի էր ոչ միայն ուսումը: Կարապետ Գալուստի կտակած անշարժ գույքի եկամուտներից վճարվում էին դասա-

---

[8] Տե՛ս «Արև», 21 հուլիսի 1908:

[9] Տե՛ս «Արմենիա», 30 մարտի 1887:

[10] Տե՛ս «Արև», 21 հուլիսի 1908:

[11] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 25:

[12] Տե՛ս «Ազատ բեմ», 26 հուլիսի 1906:

[13] «Փյունիկ», 1899, էջ 109—110:



տուների աշխատավարձը, երեխաների դասագրքերի, գրենական պիտույքի, համազգեստի, ինչպես և հեռավոր թաղերում բնակվողների երթևեկության, կեսօրվա ճաշի և այլ ծախսերը: Ուսումը համարյա ձրի էր նաև Պողոսյան դպրոցում: Նրա բյուջեի 75—80 տոկոսը գոյանում էր ազգապատկան կալվածների եկամուտներից, իսկ մնացյալը՝ նվիրաբերություններից[14]: 1912 թ. Գալուստյանի բյուջեն՝ 3.260, իսկ Պողոսյանինը՝ 1.705 եգիպտական ֆունտ (ստեռլինգ) էր, այսինքն յուրաքանչյուր աշակերտի համար միջին հաշվով ծախսվում էր համապատասխանաբար 5.4 և 3.5 եգ. ֆունտ[15]: Մյուս դպրոցները, բացի Նավարշյանից, եկամտի հաստատուն աղբյուր չունեին. նրանց բյուջեի գլխավոր մասը ծածկվում էր ուսման վճարով, մնացածն էլ՝ նվիրատվությամբ:

Համայնքային դպրոցները գտնվում էին ազգային իշխանության ուսումնական խորհրդի վերահսկողության տակ: Իր հերթին, ուսումնական խորհուրդը յուրաքանչյուր դպրոցի հոգատարությունը հանձնում էր համապատասխան հոգաբարձության, որը բաղկացած էր 5 կամ 7 անձերից: Հոգաբարձուներն էին կարգավորում դպրոցի ուսումնական և տնտեսական գործերը, նշանակում կամ հեռացնում դասատուներին: Սակայն նրանք դրական քիչ բան էին անում դպրոցների համար: Մ. Փորթուգալյանն եգիպտահայ դպրոցների «խղճալի վիճակի» պատճառը համարում էր «աղա-հոգաբարձական դրությունը»[16]:

Հոգաբարձուներն ազգային եկամուտների փշրանքներով էին կերակրում դպրոցները: Մինչև 1886 թ. Խորենյան դպրոցի տարեկան ծախսն միայն քսան ոսկի էր»: Իզմիրլյանի ջանքերով այդ գումարը «հասավ 40-ի», որը, սակայն, կարիքների համեմատությամբ մի չնչին գումար լինելով, «փափաքելի արդյունք չէր արտադրեր»[17]: Ավելի լավ վիճակում չէր Պողոսյան դպրոցը: Ձաղկելով հոգաբարձուներին, Փորթուգալյանը գրել է. «Փառք պիտի տալ հաստատուն եկամուտ չունեցող ազգային հաստատություններին. այստեղ (Եգիպտոսում—Հ. Թ.) հաստատուն եկամուտը ակամա կարծես թե մեծ թշնամին է եղած բարեգործության. բարերարների կտակած կալվածները, 10 հազար ոսկիի

---

[14] Տե՛ս Ն. Մ. Աղապարմ. Նաթեր Եգիպտոսի հայ գաղութին վրա, էջ 84:

[15] Հաշվումներն ըստ «Եգիպտահայ տարեցույցի» (1914, էջ 25) տվյալների:

[16] «Արմենիա», 20 նոյեմբերի 1894:

[17] «Արևելյան մամուլ», 1891, էջ 81—82:

Հանող դրամագլուխը ուրիշ տեղի հայ գաղթականությունների ավելի նախանձելի վիճակի մեջ չէ դրած Եգիպտոսի գաղթականությունը՝ կրթական տեսակետով»[18]։

Սովորական երևույթ էր մանկավարժական նորույթներ մուծելու ջանք գործադրող, առաջադեմ հայացքներ ունեցող կամ էլ որևէ պատճառով հոգաբարձուներին դուր չեկող կրթական մշակներին հալածելը[19]։ Բացի այդ, վարժապետի նշանակումը կատարվում էր մեծ մասամբ «ֆավորիներ վարձատրելու» նպատակով. «խանութի մեջ ծառայության ընթացք ավարտողն այլ հարմար վարժապետացու» էր։ Այդ պատճառով դասատուները «ժողովրդի աչքին առջև ժամանակավոր վարձկաններ» էին, չունեին «ուսուցչի հատուկ նշանակությունն ու դիրքը»[20]։ Սակայն միաժամանակ պետք է նշել, որ եգիպտահայ դպրոցներում ծառայել են իրենց կոչմանն արժանի ոչ քիչ թվով դասատուներ։

Բացի լուսավորչական համայնքից, դպրոցներ հիմնեցին նաև հայ կաթոլիկ, հայ ավետարանական համայնքները, ինչպես և մասնավոր անձինք։ Աղյուսակում[21] (էջ 189) բերված տվյալները ցույց են տալիս, որ մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործի հիմնական ծանրությունը կրում էին լուսավորչական համայնքի դպրոցները։

1897 թ. հունվարին Կահիրեում բացվեց եգիպտահայ առաջին մասնավոր դպրոցը՝ Կեդրոնական երկսեռ կրթարանը, որի հիմնադիր-տնօրենն էր Սմբատ Բյուրատը։ Կրթարանում դասավանդվում էին հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն լեզուներ՝ «նախակրթական և երկրորդական ուսմանց ու գիտությանց հետ, խնամյալ ազգային դաստիարակության մը հիման վրա»[22]։ Այդ դպրոցը, ինչպես նշել է

[18] «Արմենիա», 21 նոյեմբերի 1894։

[19] Այդ տեսակետից հետաքրքրական նյութեր են պահպանվել եգիպտահայ մամուլի էջերում։ Բերենք մի օրինակ։ Զագազիգի Պողոսյան դպրոցի հոգաբարձուներին, «Շիրակ» հանդեսը գիտակ հեգնանքով գրում էր. «1896—1897-ին Ալեքսանդրիո վարժարանին տեսուչն էր լուսահոգի Ասքանազը, խղճմիտ, փորձառու մանկավարժ մը. պաշտոնանկեցին։ Հետո եկավ Գ. Գեբբեարյան, Գևորգյան ճեմարանին աշակերտ, ձեռնահաս անձնավորություն մը, որ իր պաշտոնը շատ լրջորեն կկատարեր, ան ալ հեռացավ։ Հետո եկավ Է. Գ. Գերպերյան, որ լավ համբավ մը կը վայելեր, ան ալ գնաց։ Հաջորդ տարին՝ Հակոբ Աստվածատրյան, Ռաֆայելյան վարժարանի աշակերտ, դպրոցներու մեջ պաշտոնավարած, ու մանկավարժության սիրահար, շատ լուրջ տեսուչ մը, որ սակայն շատ չդիմացավ և այլն» («Շիրակ», 1906, № 1, էջ 63)։

[20] «Արմենիա», 28 նոյեմբերի 1894։

[21] Ըստ նախորդ աղյուսակում օգտագործված տվյալների։

[22] «Փյունիկ», 1899, № 1։



| Դպրոցներ | 1897—1902 թթ. | | 1905—1908 թթ. | | 1914—1917 թթ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը |
| Լուսավորչական | 3 | 582 | 5 | 875 | 7 | 1250 |
| Կաթոլիկ | 1 | 35 | 1 | 60 | 2 | 110 |
| Ավետարանական | 1 | 80 | — | — | — | — |
| Մասնավոր | 1 | 40 | 1 | 125 | 2 | 230 |
| | 6 | 737 | 7 | 1060 | 11 | 1590 |

«Արմենիա» լրագիրը, «ազգային պաշտոնական շրջանակներում մեծ տհաճություն» է առաջ բերել, համարվել է Գալուստյանը «փակելու» փորձ և, որպես այդպիսին այն դարձել է բավական սուր հարձակումների թիրախ[23]։ Չունենալով հաստատուն եկամուտ, կրթարանը հենվում էր միմիայն ուսման վարձի վրա, իսկ նրա սովորողների թիվը 40—50-ից այն կողմ դրեթե չի անցել։ Հեշտ չի եղել կրթարանի ուղին։ Դիմագրավելով ու հաղթահարելով շատ դժվարություններ, այն գործել է շուրջ երեք տարի և փակվել 1899 թ. վերջերին կամ 1900 թ. սկզբներին։

Եգիպտահայ երկրորդ մասնավոր դպրոցը՝ Ս. և Զ. Մանթաշյան քույրերի Աղջկանց համազգային վարժարանը բացվել է 1905 թ. Կահիրեում։ Այդ դպրոցը ուներ ցերեկային և գիշերօթիկ բաժիններ, իսկ ծրագիրը հարմարեցված էր իգական սեռի արդիական դաստիարակության պահանջներին։ Բացի հայերեն, ֆրանսերեն, անգլերեն և արաբերեն լեզուներից, հայոց և ընդհանուր պատմությունից, այնտեղ անցնում էին նաև տնտեսություն, կարուձև, դաշնամուր, նկարչություն, պարի և այդ կարգի այլ առարկաներ։ Սովորողները վճարում էին բավական բարձր ուսման վարձ։ Նրանց թիվը եղել է շուրջ 150, ընդ որում համարյա բոլորն էլ բարեկեցիկ ընտանիքի դուստրեր։

1917 թ. Կահիրեում սկսեց գործել եգիպտահայ երրորդ մասնավոր դպրոցը՝ Թաշճյան վարժարանը, որն ուներ մանկապարտեզի եռամյա և նախակրթարանի վեցամյա բաժիններ, ինչպես և վերին երկու դասարաններ, որտեղ սովորում էին միայն աղջիկներ։ Նրա ցերեկային և գիշերօթիկ բաժիններում ընդգրկված էին շուրջ 120 երկսեռ երեխաներ։

[23] Տե՛ս «Արմենիա», 14 ապրիլի 1897։

Ինչպես Կենտրոնական կրթարանի, այնպես էլ Համազգային և Թագնյան վարժարանների ուսուցչական կազմի, բյուջեի և այլ հարցերի վերաբերյալ տեղեկություններ չկան մեզ հայտնի աղբյուրներում։

Լուսավորչական համայնքի դպրոցների համեմատությամբ կաթոլիկ և ավետարանական դպրոցներն աննշան դեր էին կատարում նոր սերնդի ուսումնադաստիարակչական գործում։ Սկզբնական բնույթով, Անարատ Հղության քույրերի միաբանության դպրոցները կոչված էին զբաղվելու հայ որբուհիների դաստիարակությամբ, սակայն վերջիններիս շարքերը նոսրանալու հետ միաժամանակ, դրանց դռները բացվեցին նաև օտարազգի աղջիկների առաջ և, այդպիսով, հայերեն լեզուն զրկվեց պայմանական առարկաների կարգը։ Այդ դպրոցներում սովորում էին ինչպես կարիքավոր, այնպես էլ բարեկեցիկ ընտանիքի շուրջ 120—150 հայ աղջիկներ։ Հայ ավետարանական դպրոցը քիչ թե շատ հիշատակության արժանի հետք չի թողել։ Բացվել է 1899 թ. Կահիրեի Սապտիե թաղում՝ Մկրտիչ Գնաճյանի նախաձեռնությամբ, և սկզբնական շրջանում ունեցել է շուրջ 80 երկսեռ աշակերտ, սակայն 1903 թ. «նյութական դժվարությունները» նրան հարկադրել են փակել դռները[24]։

Այսպիսով, 1882—1917 թթ. մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործը բուռն զարգացում ապրեց։ Նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ դպրոցների թիվն ավելացավ 5, սովորողներինը՝ շուրջ 15 անգամ։ Դպրոցներում դասավանդում էին մեծ մասամբ մանկավարժական փորձ և գիտելիքներ ունեցող դասատուներ։ Կային տարբեր համայնքների և մասնավոր անձանց պատկանող դպրոցներ։

## 2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եգիպտահայ գաղութի կրթական և կուլտուր-կենցաղային կյանքի մակարդակը բարձրացնելու գործում զգալի դեր էին կատարում մշակութային ընկերությունները։

Մեզ հայտնի հնագույնն՝[25] Կահիրեի «Ուսումնասիրաց ընկերություն» հիմնադրվել է 1880 թ. հունվարի 1-ին։ Նրա նպատակն էր «նյութապես և բարոյապես» օգնել Խորենյան դպրոցին[26]։

1880 ապրիլի 19 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Ուսումնասիրաց ընկերությունը հառաջանալու վրա է, ահա Խորենյան վարժարանը կնորոգվի ընկերության կողմանե... պիտի դպրոցը բացվի»[27]։ Ուսումնասիրացը, «սաստիկ հակառակությանց և հալածանաց» թիրախ դառնալով «հազիվ մինչ երկու տարի կրցավ պաշտպանել յուր գոյությունը»[28]։

1881—1882 թթ. Կահիրեում համարյա միաժամանակ ասպարեզ իջան երկու նոր ընկերություններ, որոնք իրար կից, միջնորմով միայն իրարից բաժանված, հաստատեցին երկու ակումբ-ընթերցարան, առաջինը՝ «Սրճարան բարեգործական ընկերության հայոց» և երկրորդը՝ «Սրճարան Հայաստանի» անվան ներքո։ 1884 թ. հուլիսի 1-ին դրանք միանալով հիմնեցին «Կահիրեի հայոց բարեգործական ընկերությունը»։ Ակումբ-ընթերցարանների միացումով ստեղծվել է մի «ընդարձակ և փառավոր» հասարակական հավաքատեղի, որը «համազգային բազմության» տալիս էր «ամեն տեսակ պարկեշտ զբոսանաց միջոցներ և, որ մեծն է քան զամենայն, ազգային և օտարազգի բազմաթիվ լրագիրներ և հեռագիրներ»[29]։

Բարեգործական ընկերությունը կազմակերպված էր բաժնետիրական հիմունքներով։ Հրապարակ էին հանվել 1.800 բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 25 ֆրանկ արժեքով։ Ներքին կանոնադրության համաձայն, երեք ամիսը մի անգամ շահույթի 75 տոկոսը տրվում էր բաժնետերերին, իսկ 25 տոկոսը՝ բարեգործական և կրթական նպատակների։ Այսպես, 1891 թ. ընկերությունը ստացել էր 1.600 ոսկու շահույթ, որից Խորենյան դպրոցին բաժին էր ընկել 195, Կ. Պոլսի Ազգային հիվանդանոցին՝ 50, Զեյթունի աղետյալներին՝ 50, Կ. Պոլսի Միացյալ ընկերությանը՝ 50, տարբեր լրագրերի՝ 30 և Կահիրեի՝ Արաբկիրի հայոց կրթասիրաց ընկերությանը՝ 25 ոսկի[30]։ Բարեգործական ընկերությունն

---

[24] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1916, էջ 115։

[25] 1870-ական թվականներին Կահիրեում կային մի քանի հայրենակցական խմբակցություններ, որոնց մասին տեղեկություններ գրեթե չեն պահպանվել մեզ հայտնի աղբյուրներում։ Դրանցից էր վանեցի պանդուխտների «ընկերությունը»։ «Մասիս» լրագրում կարդում ենք. «Վանեցի այվազները համակամ սրճարան մը բացած են «Ընկերություն» անունով, կխմբվին ամեն օր ազգային լրագիրներ և նորատիպ գիրքեր կարդալու համար» («Մասիս», 9 ապրիլի 1878)։

[26] Տե՛ս «Արմենիա», 28 հոկտեմբերի 1885։

[27] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 5746։

[28] «Արմենիա», 28 հոկտեմբերի 1885։

[29] «Մասիս», 26 սեպտեմբերի 1884։

[30] Տե՛ս «Արմենիա», 22 հունիսի 1891։

անխափան գործել է մինչև 1906 թվականը, երբ «բաժնետեր ընկերաց միասնության որոշմամբ» լուծարքի ենթարկվեց[31]։

1887 թ. Կահիրեում հիմնադրվեց «Արաբկիրի հայոց կրթասիրաց ընկերությունը», որի նպատակն էր միջոցներ ձեռք բերել Արաբկիրում դպրոց կառուցելու համար։ Ընկերության ջանքերով Կահիրեում հաստատվեց հացի «գործարան մը» բաժնետիրական հիմունքներով։ Ստացված շահույթի 75 տոկոսը, որպես շահաբաժին, տրվում էր բաժնետերերին, իսկ 25 տոկոսն անձեռնմխելի պահվում էր դրամատանը՝ ընկերության գլխավոր առաջադրանքն ի կատար ածելու համար[32]։ 1908 թ. կազմակերպվեց ընկերության գրադարան-ընթերցարանը, որն ուներ շուրջ երկու հարյուր անուն հայերեն գրքեր և ստանում էր ավելի քան տաս անուն հայ պարբերականներ[33]։

Կահիրեում եռանդուն գործունեություն է ծավալել «Ընթերցասիրաց ընկերությունը»։ Նրա հիմնադիրը «պանդուխտ հայ երիտասարդությունն» էր, որը 1891 թ. այդ նպատակով «բաժնեգիններ կհավաքեր։ Արդ, այս գումարը 250 եգիպ. ոսկվո չափ բարձրացավ, և քաղաքին ամենեն հարգի փողոցներեն մեկուն վրա հաստատվեցավ ընթերցատունն և լավ կահավորված գրատարանը»[34]։ 1896 թ. հունվարի 19-ին կատարվել է ընթերցարանի կամ, ինչպես հետագայում վերանվանվեց, լսարան-ընթերցարանի բացումը։ 1906 թ. Ընթերցասիրաց ընկերությունը կառուցել է սեփական ակումբ, որն օժտված էր բավական լավ հարմարություններով[35]։

Ընթերցասիրաց ընկերության գլխավոր նպատակն էր Կահիրեի հայության շրջանում սեր ու հետաքրքրություն արթնացնել դեպի հայոց մշակույթը։ Նրա լսարան-ընթերցարանում աշխատավոր մարդիկ հագեցնում էին գիր ու գրականության իրենց ծարավը, կարդալով գրքեր ու թերթեր, մասնակցելով արտասանության, ընթերցանության, դասախոսական, վիճաբանական, թատերական երեկոների և այլն։ Այնտեղ հաճախ քննարկվում էին հայոց գրականության, պատմության, ինչպես և քաղաքական ու տնտեսական կյանքի հրատապ հարցեր։ Ընկերության հրապարակային դասախոսություններից մեկը, օրինակ, նվիրված է եղել

[31] Տե՛ս «Ազատ բեմ», 22 դեկտեմբերի 1906։
[32] «Արմենիա», 16 ապրիլի 1887։
[33] Տե՛ս «Արշալույս», 18 հուլիսի 1910։
[34] «Ջանգեա Ամսօրյա», 1896, էջ 95։
[35] Տե՛ս «Լուսաբեր», 18 հունվարի 1906։



Հայաստանի գյուղատնտեսության զարգացման հեռանկարներին[36]։ Նրա առավել կարևոր ձեռնարկումներից էր «Նոր օր» լրագրի (1899—1901 թթ.) հրատարակությունը։ Իրենց բարոյակրթիչ ազդեցությամբ, այդ միջոցառումները որոշ խավերի համար կատարում էին «ամոթաբեր թմրությենեն սթափեցնողի» դեր[37]։

Կահիրեում գնահատելի աշխատանք էր կատարում հայ ականավոր վիպասան Րաֆֆու անվան «Րաֆֆի հայ պատանյաց ընթերցասիրաց ընկերությունը»։ Ընկերության ակումբում գործում էին մանկապատանեկան համեստ գրադարան և «գիշերային դասընթացներ», որտեղ ոչ միայն պատանիներ, այլև չափահաս պանդուխտներ սովորում էին լեզուներ (հայերեն, ֆրանսերեն, անգլերեն) և գիտելիքներ էին ձեռք բերում հայ ժողովրդի պատմության ու Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ[38]։ 1895 թ. մայիսի 7-ին ընկերությունը հեռագրով իր համերաշխությունն է հայտնել Լոնդոնի հայասերների միտինգի բանաձևին, որով պահանջվում էր բարելավել Հայաստանի ժողովրդի «թշվառ վիճակը»[39]։

Հիշատակության արժանի գործունեություն էին ծավալում նաև «Մեսրոպյան ուսումնասիրաց ընկերությունը», «Ուսումնասեր արմենուհյաց Սանդուխտ ընկերությունը», «Արամազդ դպրոցասեր ընկերությունը», «Ակնա Նարեկյան կրթասիրաց ընկերությունը», «Հայ հառաջդիմասեր ընկերությունը», «Գրիգոր Լուսավորիչ բարեգործական ընկերությունը», «Հայ երիտ. քրիստոնյաների ընկերակցությունը» և ուրիշներ։ Մեսրոպյան ընկերության սրահ-ակումբում հաստատված էր փոքրիկ գրադարան, որը բաց էր օրվա բոլոր ժամերին և ընթերցողներին առաջարկում էր հայերեն գրքեր, տեղական ու արտասահմանյան թերթեր, հանդեսներ և այլն[40]։ Ընկերության եկամտի աղբյուրներն էին անդամավճարները, պարբերաբար կազմակերպվող դասախոսական, թատերական և երաժշտական երեկոները։ Սանդուխտ ընկերության գլխավոր առաջադրանքն էր սատարել հայ իգական սեռի ուսումնադաստիարակչական գործին։ Այդ նպատակով ձեռք բերված դրամական միջոցների կեսը հատկացվում էր Եգիպտոսում ապրող զեյթունցի և սա-

[36] Տե՛ս «Արշալույս», 29 նոյեմբերի 1899։
[37] «Իրավունք», 7 փետրվարի 1904։
[38] Տե՛ս «Ազատ բեմ», 26 դեկտեմբերի 1906։
[39] Տե՛ս «Արմենիա», 25 մայիսի 1895։
[40] Տե՛ս «Լուսաբեր», 14 օգոստոսի 1906։



13—724

ռանցի աղջիկների կրթությանը, իսկ մնացյալը պահ էր դրվում դրամատանը՝ «ապագային Հայաստանի որևէ հարմար մեկ վայրին մեջ աղջկանց վարժարան մը հիմնելու համար»[41]։

1898 թ. Կահիրեում ասպարեզ իջան մի շարք հայրենակցական ընկերություններ, որոնք նպատակ էին դրել օգնություն ձեռք մեկնել 1894—1896 թթ. ջարդերի ժամանակ որբացած համաերկրացի երեխաներին։ Դրանցից էին Վասպուրականի, Ակնա, Սեբաստիայի, Արաբկիրի որբախնամ կամ որբասիրաց ընկերությունները։ Վերջինիս կանոնագրում ասված է. «Հոդվ. 1.—Ընկերությունս հիմնված է Արաբկիր քաղաքեն ու շրջակայքեն՝ ասոնց գավառների խորությամբ երկսեռ որբեր պաշտպանել ու դաստիարակել տալու նպատակով, Արաբկիրի կամ ուրիշ հարմարագույն որբանոցի մը մեջ... Հոդվ. 2.—Երբ ընկերության պահեստի դրամին գոյանա գումար մը, որ առնվազն 10 որբերու տարեկան ծախսերը հոգալու հասույթ մը բերե, ընկերությունս կձեռնարկե հիմնելու «Կեդրոնական Արաբկյան որբանոց» անվան տակ որբանոց մը ի Կահիրե, որ է յուր մայր նպատակը, ուր պիտի խնամվին անխտիր Տաճկաստանի գավառներեն հայ որբեր»[42]։ Մոտավորապես նույնպիսի նպատակի էին ծառայում նաև մյուսները։

1906 թ. ապրիլի 15-ին Կահիրեում կյանքի կոչվեց Հայ բարեգործական ընդհանուր միությունը, որի հիմնադրման հանգամանքների մասին նշվեց համապատասխան տեղում։

Կահիրեում կային նաև այսպես կոչված շահասիրական կամ մանր բաժնետիրական ընկերություններ, որոնք դրամական օգնություն էին ընձեռում մշակութային և բարեսիրական ձեռնարկումներին։ Այդ ընկերություններում համախմբված էին հաճախ նույն, երբեմն էլ տարբեր զբաղմունքի տեր մարդիկ, որոնք յուրաքանչյուր ամիս մի որոշ գումար էին մուծում ընկերության գանձարկղը և կուտակված փողը դնում շրջանառության մեջ։ Ստացված շահույթի մի մասը, որպես շահաբաժին, բաշխվում էր ընկերության անդամներին, իսկ մնացյալն անվերադարձ օգնության կարգով տրվում էր դպրոցներին, կարիքավոր սովորողներին, մամուլի օրգաններին և այլն։ 1900-ական թվականներին գործում էին այդ կարգի մի քանի ընկերություններ, որոնցից միայն մեկն ավելի քան 1500 եգիպտական ֆունտ ուներ շրջանառության մեջ[43]։

[41] «Ազատ բեմ», 26 սեպտեմբերի 1906։

[42] «Արմենիա», 27 սեպտեմբերի 1901։

[43] Տե՛ս «Արշալույս», 18 ապրիլի 1900։



Ալեքսանդրիայում մշակութային ընկերությունները թվով այնքան շատ և բնույթով այնքան բազմազան չէին, որքան Կահիրեում։ Այնտեղ հիմնականում գործում էին մի քանի ընկերություններ՝ «Հայկական մատենադարանի» կամ, ինչպես հետագայում վերանվանվեց՝ «Ժողովրդական գրադարան-ընթերցարանի ընկերությունը», «Տիգրան Երկաթ ժողովրդային միությունը», «Զեյթունի բարեսիրաց ընկերությունը», «Հայ կաթողիկե բարեգործական ընկերությունը» և այլն։

Հայկական մատենադարանի ընկերության գրադարան-ընթերցարանը, որը կազմակերպվել է 1899 թ., ընթերցողներին սպասարկում էր ոչ միայն հայերեն, այլև օտար լեզուներով գրական-գեղարվեստական, գիտատեխնիկական գրքեր, ինչպես և 26 անուն լրագրեր ու հանդեսներ։ Ըստ ընդունված սովորության, պարբերականները դուրս չէին տրվում, իսկ գրքերը շաբաթական չնչին վարձով տրամադրվում էին տնային ընթերցանության համար։ Ընկերության մի հաշվետվությունից երևում է, որ Խաչատուր Աբովյանի, Րաֆֆու և Սերենցի ստեղծագործությունները ունեին ամենից «ավելի շատ» ընթերցող[44]։ 1907—1908 թթ., երբ հայ գաղթականների վերադարձի շարժում սկսվեց, գրադարան-ընթերցարանը գնալով դժգունեց և կազմալուծվեց։

Ալեքսանդրիայի հայ մշակութային կյանքում զգալի դեր էր կատարում անվանի հասարակական գործիչ և գրող Տիգրան Երկաթի անվան ժողովրդային միությունը։ 1902 թ. մի խումբ երիտասարդ մտավորականներ և արվեստագետներ վարձով ձեռք են բերում մի ընդարձակ սրահ՝ գրական, թատերական և երաժշտական հրապարակային միջոցառումներ անցկացնելու համար։ 1904 թ. սրահի գնալով աճող ժողովրդականությունը հիմնադիրներին ստիպում է ստեղծելու Տիգրան Երկաթի անվան ժողովրդային միությունը[45], որը գոյատևում է մինչև այսօր։ Անցած 70 տարիների ընթացքում միությունը ծավալել է արդյունավոր գործունեություն մշակույթի ամենատարբեր բնագավառներում, աջակցելով Պողոսյան դպրոցին, օգնելով Եվրոպայում սովորող հայ երիտասարդների, կազմակերպելով դասախոսություններ, ներկայացումներ, համերգներ, հրապարակելով ու տարածելով օգտակար գրքեր և այլն։

Ալեքսանդրիայում յուրօրինակ ակումբի և ընթերցարանի դեր էին կատարում հայկական «Կիլիկիա» և «Սասուն» սրճարանները։ Երվանդ

[44] Տե՛ս «Արշալույս», 17 փետրվարի 1900։

[45] Տե՛ս «Ազատ բեմ», 12 հունիսի 1904։

Օտյանը սիրով է հիշում «քաջին Սասունը», որը հաճախ «գլուխ գրական ակումբի մը կվերածվեր... Հոն, ներսը սեղանի մը շուրջ կամ դուրսը՝ մայթին վրա, կհավաքվեինք Արփիար, Միքայել Կյուրճյան, Վահան Թեքեյան և մեկ քանի համակիր գրասերներ ու հաճելի խոսակցության մը մեջ կմոռնայինք ժամերը։ Հոն կծրագրվեր նաև նոր գրական հանդեսի մը կամ պարբերականի մը հրատարակումը...»[46]։

1912—1915 թթ. Եգիպտոսի տարբեր քաղաքներում ասպարեզ իջան մի շարք երիտասարդական և պատանեկան միություններ, որոնք նպաստում էին նոր սերնդի ֆիզիկական դաստիարակությանը։ Դրանք էին Ալեքսանդրիայի «Կամք» (1912 թ.) և Կահիրեի «Արարատ» (1914 թ.) մարմնամարզական միությունները, ինչպես և երկու բոյ-սկաուտական խմբեր[47]։ Այդ շարժման ոգեշնչողն ու ղեկավարը պոլսահայ նշանավոր մարզիկ Շավարշ Քրիսյանն էր։ 1915 թ. Ալեքսանդրիայում հաշվվում էին շուրջ 200, Կահիրեում՝ 70—80 մարզիկ ու սկաուտ։ «Կամքը», «Արարատը» և սկաուտական խմբերը Կ. Պոլսի Հայ մարմնամարզական ընդհանուր միության մասնաճյուղերն էին։

### 3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ԵՎ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ

«Արմավենի» լրագրի դադարից հետո եգիպտահայ մամուլի կյանքն ընդհատվեց մինչև 1889 թվականը, երբ Ալեքսանդրիայում Անտոն Ռշտունին, Վահան Մամասյանը և Ղևոնդ ք. Փափազյանը լույս ընծայեցին «Նեղոս» շաբաթաթերթը։ Վերջինս ստանձնել էր շաբաթաթերթի շարելը և տպագրելը, Մամասյանը՝ վարչական և հաշվային գործերը, իսկ Ռշտունին՝ խմբագրական աշխատանքը[48]։ Լինելով ժամանակի մարտնչող հրապարակախոսներից, Ռշտունին մտրակում էր կղերափաշայական վերնախավի թուրքասիրական քաղաքականությանը։ Բուրժուական պատմաբանները «Նեղոսը» համարում էին «հեղափոխական քարոզչության նվիրված... անխորհուրդ ձեռնարկ»[49]։ Ղ. ք. Փափազյանի դեմ բերած միջոցառումը և դրան հետևող եղելությունները ու դատական գործը, որոնց մասին նշվեց, պատճառ դարձան «Նեղոսի» խափանմանը։ Եվ-

[46] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 537։

[47] Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», 1916, էջ 176—177, 181—182 և 184—185։

[48] Տե՛ս «Բազմավեպ», 1907, էջ 74։

[49] Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 275։ Աշխատության վերջում տե՛ս եգիպտահայ պարբերական մամուլի (1865—1952) ցուցակը։



րոպայի և Կովկասի հայկական թերթերն ու հանդեսները ցավով հաղորդեցին «Նեղոսի» ողբերգական վախճանը։

Եգիպտահայ պարբերական մամուլի կյանքը վերսկսվեց «Նեղոսից» շուրջ ութ տարի հետո՝ 1897 թ., երբ Կահիրեում լույս ընծայվեց «Փարոս» լրագիրը, և այնուհետև զարգացավ բավական ուժեղ թափով։ Մինչև 1917 թվականը լույս են տեսել մեզ հայտնի 58 անուն հայերեն, հայատառ թուրքերեն, թուրքերեն, ֆրանսերեն և անգլերեն խիստ այլազան պարբերականներ՝ օրաթերթ, երկօրյա, եռօրյա, շաբաթաթերթ, կիսամսյա, ամսագիր, տարեգիրք և այլն, որոնք ունեին բավական խայտաբղետ բովանդակություն։ Յուրաքանչյուր պարբերականում միաժամանակ տպագրվում էին ազգային, քաղաքական, տնտեսական, գրական, գեղարվեստական, մանկավարժական, երգիծական և այլ բնույթի նյութեր, սակայն ավելի լայն տեղ էր տրվում եգիպտահայ ներքին կյանքը հուզող հարցերին։ Լավագույն պարբերականները՝ «Փյունիկը» (Սմբատ Բյուրատ), «Ազատ խոսքը» (Երվանդ Օտյան), «Շիրակը» (Արփիար Արփիարյան, Վահան Թեքեյան) և ուրիշներ պայքարում էին հայկական կյանքում առաջադեմ, դեմոկրատական գաղափարների արմատավորման համար։

Լույս տեսնելով 100, 150, 200, երբեմն էլ քիչ ավելի տպաքանակով, եգիպտահայ պարբերականները հաճախ 2 կամ 3 համարից հետո անհետանում էին, իսկ գոյատևելու դեպքում գտնվում էին ամենադժնդակ պայմաններում։ Հարություն Ալփիարը գրում է, որ «Փարոսի» առաջին տարին եղել է «դժվարություններով, զոհողություններով և պանությամբ լեցուն տարի մը»[50]։ «Լուսաբեր» լրագրի «պայմաններն աննպաստ էին՝ գեշ տառեր, կոտրած, թափված, ողորմելի խմբագրատուն մը, ամեն կողմ խեղճություն...»[51]։ Պակաս ողորմելի վիճակում չէր այնպիսի բարձրորակ հանդես, ինչպիսին էր «Շիրակը»։ Նրա խմբագիր Արփիար Արփիարյանը գանգատվում էր. «Հանդեսիս բոլոր գործերը ես պիտի ընեմ, ձեռագիր, սրբագրություն, վարչություն, փոստայի առաքում և այլն»[52]։ Տնտեսական բարվոք պայմաններում չէր նաև «Արշալույսը»։ Արխիվային մի վավերագրում ասված է, որ նրա խմբագիր Եղիշե Թոփալյանը «չարաչար աշխատությամբ, իր կնոջ հետ, որ գրաշարություն կընե որպես և ինք, հազիվ հաց կապրին»[53]։

[50] «Բազմավեպ», 1907, էջ 74—75։

[51] «Ամենուն տարեցույցը» (Թեոդիկ), 1923, էջ 363։

[52] Նույն տեղում, էջ 364։

[53] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 9483։

Պարբերական մամուլի և առհասարակ հրատարակչական գործի պայմանները բարելավելու նպատակով, եգիպտահայերը ստեղծել են երկու հրատարակչական ընկերություն, որոնք, սակայն, երկար կյանք չեն ունեցել: Առաջինը՝ «Հրատարակչական ընկերություն Եգիպտոսի հայոց» ծրագրվեց և գլուխ բերվեց 1908 թ., Երվանդ Օտյանի ջանքերով: Հիմնադիր խմբի անդամներն էին՝ Գ. Զաքուբյանը, Ս. Ջեվահիրճյանը, Գ. Օհանյանը և ուրիշներ: Ընկերությունը բաժնետիրական-շահակցական էր՝ հինգ տարի ժամկետով: Կենտրոնը հաստատված էր Ալեքսանդրիայում: Նրա գլխավոր առաջադրանքն էր. «1. Ալեքսանդրիո մեջ հրատարակել «Արև» անունով օրաթերթ մը՝ ազգային, քաղաքական և գրական, բոլորովին անկախ և զերծ որևէ կուսակցական կապերե: 2. Հրատարակել ժողովրդական գրքեր և գրքույկներ, ըլլա թարգմանություն, ըլլա հեղինակություն»[54]: Երկրորդը՝ «Հայկական մամլո ընկերությունը» կազմակերպվել է 1911 թ. Կահիրեում: Նրա նպատակն էր՝ «խիստ արժան» գրքեր հրատարակել և տարածել Արևմտյան Հայաստանում, որովհետև, ըստ նրա հիմնադիրների, «Թուրքիո գավառներուն հայությունը ամեն բանե ավելի լույսի պետք» ուներ[55]: Այդ ընկերությունները արդյունավետ գործունեություն չեն ծավալել և պարտքերի տակ ընկնելով կազմալուծվել են:

Պարբերական մամուլի զարգացումը սերտորեն պայմանավորված էր համապատասխան տպագրական հիմք ստեղծելու հետ:

Աբր. Մուրատյանից հետո Եգիպտոսում հայկական տպարան հիմնել է Ղ. ք. Փափազյանը՝ «Նեղոս» լրագրի հրատարակության կապակցությամբ: Ինչպես Մուրատյանի, այնպես էլ Փափազյանի տպարանը ուներ սահմանափակ հնարավորություններ՝ ուներ միայն հայերեն տառեր, որոնցով շարվում էր «Նեղոսը» և տպագրվում դրսում՝ հրեա Միզրահիի տպարանում:

1890-ական թվականներից տպարանական գործն աշխուժացավ: Կահիրեում և Ալեքսանդրիայում հաստատվեցին բազմաթիվ տպարաններ, որոնցից մի քանիսը բավական լուրջ ձեռնարկություններ էին, ունեին արդիական մեքենաներ, մի քանի լեզվով տառեր, սպասարկում էին ոչ միայն հայ պարբերական մամուլին, այլև կատարում էին առևտրի վերաբերյալ տպագրական գործեր, գունավոր տպագրություն և այլն:

[54] «Արև», 1908, № 32—33:

[55] «Արշալույս», 16 հոկտեմբերի 1912:



Կահիրեում գործում էին հետևյալ տպարանները.

1. Տպարան «Արարատ»: Սեփականատեր՝ Սարգիս Դաբբինյան: Գործում էր 1897, գուցե և 1895—1896 թվականներից Կահիրեի հայաբնակ Թեյն ալ-Սուրեյնում, տպագրում էր «ամեն լեզվով» գրքեր, հարսանեկան հրավիրագրեր, տեղեկագրեր, նամակագլուխ, տոմսեր, մահազդ-ինչպես և լրագրեր: Այստեղ են տպագրվել «Մաժակ», «Փյունիկ», «Արշալույս», «Նոր օր», «Ժողովուրդ» լրագրերի որոշ համարներ:

2. Վիմատպարան «Մնոսիկյան»: Սեփականատեր՝ Մնոսիկյան եղբայրներ: Կահիրեի հայկական խոշորագույն և նախորդի չափ հին տպարաններից, որը կոմպլեկտավորված էր «երեսունե ավելի վերջին կատարելագործյալ տիպար մեքենաներով»[56], կատարում էր «ամեն տեսակ գունավոր» վիմատպագրություններ, պատրաստում խավաքարտե տուփեր, ինչպես և տպագրում «ամեն լեզվե» գրքեր, հանդեսներ, լրագրեր և այլն: 1899 թ. այս տպարանում տպագրվել են «Փյունիկ» կիսամսյա հանդեսի 3—14 համարները:

3. Տպարան «Փարոս»: Սեփականատեր՝ Հ. Ալֆիար: Հաստատվել է 1897 թ., համանուն լրագիրը տպագրելու նպատակով: 1898 թ. կեսերին, այն վաճառվել է «ալլում 20 ոսկու...»[57]: Այս փոքրիկ տպարանը գնալով մեծացել է, 1918—1920 թթ. այն համարվում էր բավական լուրջ ձեռնարկություն:

4. Տպարան «Արշալույս»: Սեփականատեր՝ Եղիշե Թորոսյան: Հիմնադրվել է 1900 թ. «ժողովրդական» միջոցներով[58] և կոչված էր սպասարկելու համանուն լրագրին: Երվանդ Օտյանը գրում է, որ այդ տպարանում «հազիվ երկու հոգի շարժելու տեղ կար»[59]: Հետագայում այդ տպարանը, դուրս գալով ողորմելի վիճակից, ստանձնում էր «գրքերու, թերթերու, հանդեսներու, բրոշյուրներու, նամակագլուխներու, վաճառականական տետրերու, այցաքարտերու, մահազդներու» տպագրությունը՝ հայերեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, արաբերեն լեզուներով:

5. Տպարան «Նոր օր»: Սեփականատեր՝ Թորգոմ Փափազյան: Հաստատվել է 1900 թ. և սպասարկում էր համանուն լրագրին: 1900 թվա-

[56] «Փյունիկ», 1899, էջ 48:

[57] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 9444:

[58] Նույն տեղում, վ. 9483:

[59] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 279:

կիր արխիվային մի վավերագրում ասված է, որ այն «շատ կաղն ի կաղ կքայլէ... գրաշարներն միշտ փախուստ կուտան դրամ չստանալնուն համար»[40]:

6. Տպարան «Արտեմիս»: Սեփականատեր՝ Մառի Պեյլերյան: Հաստատվել է 1902 թ., սպասարկում էր համանուն հանդեսին, և միաժամանակ տպագրում տարբեր թերթեր, հանդեսներ, գրքեր և առևտրական թղթեր:

7. Տպարան «Լուսաբեր»: Սեփականատեր՝ Վահան Քյուրքճյան: Հաստատվել է 1905 կամ 1906 թվականին, ծառայում էր համանուն լրագրի տպագրությանը:

8. Տպարան «Պերպերյան»: Սեփականատեր՝ Զարեհ Ն. Պերպերյան: Մեզ հայտնի չէ, թե երբ է հաստատվել: 1912 թ. այդ տպարանում լույս էր տեսնում «Հոսանքը»:

9. Տպարան «Հայկական»: Սեփականատեր՝ Օ. Հալեպլյան: Հայտնի չէ, թե երբ է հաստատվել, գործում էր 1906—1914 թթ.: Այս տպարանում են տպագրվել «Նոր ժամանակներ», «Ավել», «Մալեշ», «Հոսանք» և այլ պարբերականներ:

10. Տպարան «Թափալյան»: Սեփականատեր՝ Գ. Թափալյան: 1908 թ. տպարանը լույս է ընծայել «Նշտրակ» պարբերականը և ուրիշ հրատարակություններ:

11. Տպարան «Միություն»: Սեփականատեր՝ Հայ բարեգործական ընդհանուր միություն: Հիմնադրվել է հավանաբար 1906—1907 թթ. և հիմնականում սպասարկում էր «Միություն» պաշտոնաթերթին:

12. Տպարան «Ոսկետառ»: Սեփականատեր՝ նախ Բագրատունի, ապա՝ Երվանդ Մրքրյան: Մեզ հայտնի չէ, թե երբ է հաստատվել, գործում է 1914—1915 թվականներից մինչև այսօր:

13. Տպարան «Պաստան»: Սեփականատեր՝ Սոկրատ Սարրաֆյան և ընկ.: Հիմնադրության թվականն անհայտ է: 1916—1917 թթ. այստեղ լույս են տեսել «Նշույլներ» և «Մժղուկ» պարբերականները:

Ալեքսանդրիայում գործում էին հետևյալ տպարանները.

1. Տպարան-փորագրատուն «Նազարեթյան»: Սեփականատեր՝ Գ. Նազարեթյան: Հաստատվել է 1899 կամ 1900 թ.: Տպագրում էր հայերեն և օտար լեզուներով գրքեր, թերթեր, հանդեսներ, այցեքարտեր, մահազդներ, առևտրական թղթեր և այլն: Այստեղ են լույս տեսել

[40] ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 9483:



«Ազատ խոսք» և «Արև» պարբերականները: Իր հուշերում Երվանդ Օտյանը բազմիցս հիշատակում է այս տպարանը և գովաբանում նրա սեփականատիրոջ՝ հայ գրողի և գրքի նկատմամբ ցուցաբերած հոգատարությունը:

2. Տպարան «Արաքս»: Սեփականատեր՝ Արամ Ստեփանյան: Հաստատվել է հավանաբար 1900 թ., զբաղվում էր հիմնականում հայերեն թերթերի և գրքերի տպագրությամբ: Այստեղ լույս է ընծայվել «Թերթիկը», «Կրակը» և այլ պարբերականներ:

3. Տպարան «Փյունիկ»: Սեփականատեր՝ Սմբատ Բյուրատ: 1901—1902 թվականներից սպասարկում էր համանուն պարբերականին: 1903 թ. այն միաձուլվել է Գ. Նազարեթյանի տպարանի հետ:

4. Տպարան «Միսուան»: Սեփականատեր՝ Սմբատ Բյուրատ և Գ. Նազարեթյան: Ստեղծվել է Գ. Նազարեթյանի և Սմբատ Բյուրատի տպարանների միաձուլումով: Այդ համագործակցությունը երկար չի տևել, Բյուրատը հրաժարվել է, և տպարանը մնացել է Գ. Նազարեթյանին:

5. Տպարան «Կիլիկիա»: Սեփականատեր՝ բժիշկ Ա. Ա. Հակոբյան, տնօրեն՝ Բարսեղ Օհանյան: Հաստատվել է հավանաբար 1902 կամ 1903 թվականներին: 1906 թ. այս տպարանում լույս էր տեսնում «Ազատ բեմը»:

6. Տպարան «Փեթակ»: Սեփականատեր՝ Սեֆոն Թյուֆենկճյան: Հաստատվել է 1903 թ., սպասարկում էր համանուն շաբաթաթերթին:

7. Տպարան «Արքանազյան»: Սեփականատեր՝ Միհրան Արքանազ: Հաստատվել է 1903 թ., սկզբում սպասարկում էր միայն «Պարտեզ» շաբաթաթերթին, իսկ հետագայում ընդարձակվելով, տպագրում էր նաև տարբեր լեզուներով թերթեր, հանդեսներ, գրքեր, առևտրական թղթեր, այցաքարտեր և այլն:

8. Տպարան «Հայելի»: Սեփականատեր՝ Տիրան Փափազյան: Գործել է 1903—1904 թթ., լույս ընծայելով համանուն զավեշտական շաբաթաթերթը:

9. Տպարան «Թեքեյան և ընկ.»: Սեփականատեր՝ Վահան Թեքեյան և ընկ.: Մեզ հայտնի չէ, թե երբ է հաստատվել, գործում էր 1905 թ.: Այս տպարանում լույս են տեսել «Շիրակը», «Օրենքը» և այլ հրատարակություններ:

10. Տպարան «Գամբետտա»: Սեփականատեր՝ Միհրան Տամատյան: Մեզ հայտնի չէ, թե երբ է հաստատվել և որքան գոյատևել: Գործում էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

11. Տպարան «Գասապյան»։ Սեփականատեր՝ Ա. Գասապյան։ Հաստատման թվականն անհայտ է։ 1917—1919 թթ. այս տպարանում լույս են տեսել «Պրիսմակ» և «Որոտնի» պարբերականները։

Աստիճանաբար զարգանում էր նաև գրքերի հրատարակության գործը։ 1898 փետրվար թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Տեղս (Կահիրեում—Հ. Թ.) միմիայն երկու գիրք է տպվեր՝ խիստ փոքրածավալ հայ-արաբ բառարան և «Մաթիլտա» անվամբ վեպ մը... Տպված կան նաև կանոնագրքեր»[61]։ Դրանք եգիպտահայ տպարանների առաջնեկներն էին։ Հետագայում հրատարակչական գործը բուռն թափ առավ։

Գրավաճառությունը տպարանական գործի մի մասն էր համարվում։ Եգիպտահայ տպարաններից շատերը զբաղվում էին նաև Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Թիֆլիսում, Վենետիկում, Վիեննայում տպագրված հայերեն գրքերի և թերթերի վաճառքով։ Կային նաև մի քանի գրախանութներ, որոնք հայթայթում էին հայերեն, արաբերեն և եվրոպական լեզուներով գրականություն, թերթեր, դասագրքեր և այլն։ Դրանցից ամենակարևորներն էին՝ «Գոլըըն բեռչըը» (Մ. Փալթայան և ընկ.) և «Եգիպտական գրատունը» (Գևորգ Նազըրյան) Կահիրեում։

Եգիպտահայ գաղութի այս ժամանակաշրջանի պատմության հետ առնչվում են հայ գրականության մի շարք անվանի գործիչների՝ Երվանդ Օտյանի, Արփիար Արփիարյանի, Վահան Թեքեյանի, Տիգրան Կամսարականի, Տիգրան Երկաթի, Սմբատ Բյուրատի, Միքայել Կյուրճյանի, Երվանդ Սրմաքեշխանլյանի, Տիգրան Արփիարյանի, Սուրեն Պարթևյանի, Տիրան Քեչեկյանի, Հարություն Ալփիարի և ուրիշների գրական, գիտական-մանկավարժական և հրապարակախոսական գործունեության որոշ տարիները։ Այդ տարիներին նրանք տվել են բարձրարժեք ստեղծագործություններ, գործուն մասնակցություն բերել եգիպտահայ հասարակական-քաղաքական կյանքին։ Այդ գործիչներից շատերը վախճանվել և թաղվել են Եգիպտոսում։

Եգիպտահայերը մեծ ոգևորությամբ նշում էին Վարդանանց տարեդարձը։ Բացի հրապարակային ատենախոսություններից և եկեղեցական հանդիսավոր արարողություններից, Կահիրեի և Ալեքսանդրիայի լավագույն սրահներում բեմադրվում էր «Վարդանանց պատերազմը» ազգային ողբերգությունը։ Տոնվում էր նաև Ազգային սահմանադրության

[61] ՊԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 9432։



տարեդարձը։ Ամեն տարի հունիսի 3-ին Կահիրեի Բարեգործական ընկերության ակումբում և նրա պարտեզում հավաքվում էր հոծ բազմություն, արտասանվում էին ազգասիրական ճառեր, տեղի էին ունենում հրախաղեր, նվագախումբը կատարում էր Ազգային սահմանադրությանը նվիրված երգեր[62] և այլն։

1912 թ. եգիպտահայերը մեծ շուքով տոնեցին հայկական գրերի գյուտի 1500-ամյակը և տպագրության 400-ամյակը։ Այդ դարադարձներին նվիրված հանդիսավոր նիստ է տեղի ունեցել Կահիրեի կինո Վիրալեի սրահում։ Ճառերով հանդես են եկել Վահան Մալեզյանը, Սուրեն Պարթևյանը և ուրիշներ[63]։

## 1. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Եգիպտահայ թատերական կյանքը բնութագրվում է տեղական թատերախմբերի և հյուրեկ դերասանախմբերի բավական աշխույժ բեմադրություններով։

Մինչև 1900-ական թվականները տեղական մշտական գործող թատերախմբեր չեն եղել, նրանք կազմվել են ըստ առաջադրված ներկայացման կարիքների, գործել ու կազմալուծվել են, ապա հանդես են եկել նորերը։ Դրանք մինչև անգամ անուն չեն ունեցել, կոչվել են «թատերասիրաց խումբ» կամ «սիրողներու խումբ», կամ էլ նախաձեռնող ընկերության անունով։ Ներկայացումները տրվել են որևէ ազգային հաստատության՝ դպրոցի, հիվանդանոցի կամ աղքատների օգտին։ Եգիպտահայ համարյա բոլոր ընկերությունները կազմակերպում էին ներկայացումներ։

1900—1910 թթ. ասպարեզ իջան մի շարք ոչ-պրոֆեսիոնալ դերասաններ, որոնք զգալի չափով նպաստեցին թատերական կյանքի աշխուժացմանը։ Առանձնահատուկ հիշատակության են արժանի Ալեքսանդրիայի տրամվայի վարչության ծառայող Լևոն Շիշմանյանը, ոսկերիչներ Օ. Վոլթերը, Գ. Թերզիբաշյանը, Կ. Կարապետյանը, սիգարետ արդյունաբերողներ Գևորգ և Գասպար Իփեկյանները, ինչպես նաև տարբեր արհեստներով զբաղվող Լ. Նիզամյանը, Օ. Պողոսյանը, Տ. Նշանյանը, Գ. Բագրատունին, Հ. Ագայանը, Վ. Քյուչուքյանը, Տ. Ճա-

[62] Տե՛ս «Արմենիա», 9 մարտի 1887։

[63] Տե՛ս «Հուսաբեր», 1912, էջ 512։

վարչը և ուրիշներ, որոնց ջանքերի շնորհիվ կազմակերպվեցին «Փայլակ» և «Հայ բեմ» թատերախմբերը[64]։

Տեղական թատերախմբերի ամենախոցելի կողմն իգական ուժերի պակասն էր։ Իր հուշերում Խաչիկ Սանթալչյանը պատմում է, որ Եգիպտոսում «Մեծ ամոթ կհամարվեր իգական սեռի բեմ բարձրանալը, կանացի դերերը կկատարեին դեղադեմ պարմանայք...։ Առաջինը բեմ ելլող կանայք եղած են Վարվառիա և Արմենուհի Յարըքյանները, տիկին Էքսերճյանը, Մարի Պենլյանը և նրա դուստրը՝ Տիրուհի Պենլյանը»[65]։ Հետագայում արդեն բեմ էին բարձրանում մինչև անգամ մեծատուն կանայք, օրինակ, տիկիններ Տամատյանը, Իփեկյանը, Փափազյանը և ուրիշներ։

Տեղական թատերախմբերի խաղացանկն ընդգրկում էր հայ թատերական գրականության լավագույն նմուշները՝ Մ. Պեշիկթաշլյանի «Արշակ Բ», Թ. Թերզյանի «Սանդուխտ կույս», Սմբատ Բյուրատի «Վարդանանք», Րաֆֆու «Սամվել», Պ. Դուրյանի «Սև հողեր», Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուց», Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտ», Ա. Շիրվանզադեի «Պատվի համար», «Չար ոգի», «Կործանվածը», Երվանդ Օտյանի «Ջավալըն», Օտյան-Կյուրճյանի «Ֆրանկո-Թուրքական պատերազմը», Կամսարական-Կյուրճյանի «Փրկանքը», Սուրեն Պարթևյանի «Անմահ բոց», «Ձայն մը հնչեց» և այլ թատերգություններ։

Առավել լայն ժողովրդականություն էր վայելում «Վարդանանքը»։ Երկար տարիներ Եգիպտոսում ապրած Ժենյա Արիստակյանն իր հուշերում պատմում է. «Այդ ներկայացումին պետք չէր լինում ոչ մի հայտարարություն դիմելու, ոչ էլ տոմսակ ծախելու. միակ ներկայացումն էր, որ հայությունը խուռն բազմությամբ ինքնաբերաբար դիմում էր թատրոն, բերելով և՛ փոքրիկ երեխաներին, և՛ ծեր մամիկներին. այդ ներկայացումը իսկապես ազգային տոն էր, մեկ շաբաթվա ընթացքում եթե երկու անգամ խաղացվեր «Վարդանանքը», նորից թատրոնը լիքը կլիներ»[66]։

Եգիպտահայ թատրոնի զարգացման բավական բարձր աստիճանի մասին վկայում է թեկուզ այն, որ նրա առավել տաղանդավոր դերա-

[64] «Լուսաբեր», 14 օգոստոսի 1906։

[65] Տե՛ս ԳԱԹ արխիվ, թատերական բաժնի անտիպ նյութերից (Խ. Սանթալչյան, Եգիպտահայ թատրոնը 1900—1924 թթ.)։

[66] ԳԱԹ արխիվ, թատերական բաժնի անտիպ նյութերից (Ժենյա Արիստակյան-Պոլիսակինայի հուշերը հայ դերասանների մասին)։



կատարները հանդես էին գալիս ոչ միայն Եգիպտոսում։ Օրինակ, ուշագրավ է Լևոն Շիշմանյանի հյուրախաղերի հաջողությունը Սոֆիայում և Վառնայում։ «Իրավունք» լրագիրը նշել է, որ նրա ներկայացումներն արժանացել են բուլղարահայերի բարձր գնահատականին[67]։

Տեղական թատերախմբերի մի տարբերակն էին այսպես կոչված կես-պրոֆեսիոնալ խմբերը, որոնք կազմվում էին մեկ կամ երկու պրոֆեսիոնալ դերասանի մասնակցությամբ։ Ներկայացումներից գոյացած շահույթի մի մասը ստանում էին հյուրեկ դերասանները, իսկ մյուսը հատկացվում էր որևէ կրթական կամ բարեգործական նպատակի։

Եգիպտահայ թատրոնի պատմության ամենափայլուն էջերից է Սիրանույշի մասնակցությամբ «Վարդանանց պատերազմի» բեմադրությունը։ Ընդառաջելով Հառաջդիմասեր ընկերության հրավերին, հռչակավոր դերասանուհին համաձայնվում է անփորձ երիտասարդների հետ միասին բեմ բարձրանալ Վարդան Մամիկոնյանի կնոջ՝ Վարդանույշի դերում։ Ներկայացումը տեղի է ունեցել 1887 թ. փետրվարի 2-ին Կահիրեի Էզբեկիեի թատրոնում և պսակվել աննախընթաց հաջողությամբ[68]։

Թովմաս Ֆասուլյաճյանի, Հարություն Ալեքսանյանի, Ֆելեկյան քույրերի գլխավորած կես-պրոֆեսիոնալ թատերախմբերը բեմադրում էին թուրքերեն լեզվով մելոդրամներ՝ «Փարիզի աղքատները», «Փարիզի հնավաճառը», «Մոմե արձան շինողը» և այլն, որոնք սակայն հաջողություն չէին գտնում գեղարվեստական բարձր պահանջներ ունեցող եգիպտահայ հասարակության մոտ։ Թատրոնը լինում էր կիսով չափ, երբեմն էլ ավելի դատարկ։ Արևմտահայ թատրոնի այդ երբեմնի փայլուն աստղերը գնալով դժգունում էին, մոռացվում հայ հասարակությունից։ Իր հուշերում Գասպար Իփեկյանը պատմում է, որ Ալեքսանդրիայում անհաջողության մատնված Ֆասուլյաճյանը գանգատվել է. «Զիս ամոթի թողուցին, այդ փույթ չէ, բայց զիս մոռցան ալ...»[69]։

1906—1907 թթ. Արմեն Արմենյան ամոլի կազմած կես-պրոֆեսիոնալ թատերախմբերի բեմադրությունները պսակվեցին մեծ հաջողությամբ։ Նրանց խաղացանկն ընդգրկում էր Էմին Տեր-Գրիգորյանի «Դամոկլյան սուր», Ա. Շիրվանզադեի «Եվգինե», Իբսենի «Ուրվականները»,

[67] Տե՛ս «Իրավունք», 14 ապրիլի 1904։

[68] Տե՛ս «Արմենիա», 2 մարտի 1887։

[69] ԳԱԹ արխիվ, թատերական բաժնի անտիպ նյութերից (Գարեգին Լևոնյանի արխիվ)։

Ալ. դե Մյուսեի «Վաղաժամ վճիռը», Պոլ Էրվիեոյի «Ճիրանները», Էմիլ Օժեի «Բավարիեի փեսան», Ջ. Ջովետտիի «Անպատիվները» և այլ ստեղծագործություններ։ Արմենյան ամոլի բեմադրություններից մեկի առիթով Երվանդ Օտյանը գրել է. «Մենք որ վարժված էինք հայ բեմին վրա տեսնել թրքական, շատ անգամ անիմաստ և միշտ անարվեստ խաղերը, ունեցանք ներկայացում մը, որ կհամապատասխաներ թատրոնի իսկական դերին»[70]։ 1910 թ. բեմադրություններով հանդես է եկել նաև Վահրամ Փափազյանի գլխավորած կես-պրոֆեսիոնալ թատերախումբը։

Եգիպտահայ թատերական կյանքում խոշոր իրադարձություն էին պոլսահայ և կովկասահայ պրոֆեսիոնալ դերասանախմբերի հյուրեկային բեմադրությունները։

Իր բեմադրությունների ժողովրդականությամբ առաջին տեղը գրավում էր Սերովբե Բենկլյանի թատերաերաժշտական խումբը, որի կազմում ընդգրկված էին արևմտահայ թատրոնի լավագույն ներկայացուցիչներ Մնակյանը, Թրյանը, Զաքրասարը, Կյուրեղյանը, Կումուչյանը, Սիրանույշը, Գարագաշյան քույրերը, Աստղիկը, Աղվանի-Զարեհը և ուրիշներ, թվով 45 դերասան-դերասանուհի։ Խաղացանկում էին Չուխաճյանի «Լեբլեբիջին», «Քեոսե Քեհյան», ֆրանսերենից թարգմանված օպերետներ՝ «Ժիրոֆլե-Ժիրոֆլա», «Մադամ Անգո», «Օրֆե Օզ Անֆեր», «Լե Բրիգան», «Լա բել Էլեն», և զավեշտական ողբերգություններ՝ «Փեմբե կըզ», «Բարեկենդանի հարս», «Ջաղացպանի աղջիկը» և այլն[71]։ Դերասանախումբը Կահիրեում հանդես էր գալիս Էզբեկիեի, իսկ Ալեքսանդրիայում՝ Ալհամբրայի թատրոնում։

Բենկլյանի առաջին ներկայացումը՝ «Լեբլեբիջին» պսակվել է չտեսնված հաջողությամբ։ Ներկա են եղել խդիվը, Նուբար փաշան և ուրիշ պետական անձինք «հանդերձ ընտանյոք» և «հոյակապ անդամուհիք Կահիրեի հայ գաղութականության»[72]։ Ներկայացման հաջորդ օրը Կահիրեի թերթերը «համակրական ջերմ ոճով մը խմբագրյալ հոդվածներ հրատարակեցին..., առհասարակ գովաստեցին ընդհանուր դերասանաց և ի մասնավոր Բենկլյանի և Սիրանույշի ճարտարությունն, որ

[70] «Ազատ խոսք», 1906, էջ 417—418։

[71] ԳԱԹ արխիվ, Թատերական բաժնի անտիպ նյութերից (Սմբատ Քեսեչյանի հուշերը՝ Արևմտահայ թատրոնի պատմությունից)։

[72] «Արևելք», 1 փետրվարի 1885։



համախ բուռն ու երկարատև ծափահարություններ կորզեց հանդիսականներեն»[73]։ Մարտի 16-ին Էզբեկիեի թատրոնում տեղի է ունեցել Սիրանույշի բենեֆիսը։

1887 թ. Բենկլյանի դերասանախումբը վերստին գնում է Եգիպտոս։ Նուբար փաշայի միջնորդությամբ նրա առաջ բացվում են խդիվիալ՝ արքունական թատրոնի դռները և խդիվ Թեֆիկը հովանավորում է հայ դերասաններին, նրանց ողեւորում առատ նվերներով[74]։

Հետագա տարիներին Ս. Բենկլյանը մի քանի անգամ եղել է Եգիպտոսում, սակայն երբեք չի հասել առաջին հաջողություններին, թեև նրա ներկայացումները՝ «Լեբլեբիջի Հոր Հոր աղան», «Ռեյմոնդ կամ հավատարմության զոհը», «Սեն Ժեռի ոճիրը կամ Փարիզի լրագրավաճառը», «Անատոլի արյունոտ հարսանիքը» և այլն, գրավել են ոչ միայն հայ հանդիսատեսին[75]։

Կովկասահայ պրոֆեսիոնալ դերասանախումբը Եգիպտոս ժամանեց 1907 թ. դեկտեմբերի կեսերին և այնտեղ գործեց մինչև 1908 թ. հունվարի վերջերը։ Առաջին բեմադրությունը՝ «Պաշտպանը» արժանացավ խանդավառ ընդունելության։ Այդ բեմադրությանը նվիրված Վահան Թեքեյանի թատերախոսականում բարձր են գնահատվում Սիրանույշի տաղանդը և գովաստվում դերասանախմբի արժանիքները[76]։ Դեկտեմբերի 30-ին խդիվիալ թատրոնում բեմադրվեց երկրորդ ներկայացումը՝ Զուդերմանի «Մագդան կամ հայրենական տունը», որը նույնպես ջերմ ընդունելություն գտավ հանդիսատեսի կողմից[77]։ Կահիրեում և Ալեքսանդրիայում կովկասահայ դերասանախումբը բեմադրել է նաև «Մեդեա», «Պաղտասար աղբար», «Դավաճանություն», «Համլետ» և «Զավակը»։

Վերահաս համաշխարհային պատերազմի հետևանքով եգիպտահայ թատերական կյանքն ընդհատվեց։

[73] Տե՛ս նույն տեղում։

[74] Տե՛ս ԳԱԹ արխիվ, Թատերական բաժնի անտիպ նյութերից (Գարեգին Լևոնյանի արխիվ)։ Հաջողություններով շփացած Բենկլյանն ինչ-որ քաղաքացիական գործով ներգրավվել, դատվել և բանտարկվել է։ Նա բանտից դուրս գալուց հետո նոր թատերախումբ է կազմել և ներկայացումներ տվել, սակայն չի կարողացել վերականգնել նախկին ժողովրդականությունը։ Վախճանվել է Ալեքսանդրիայում թշվառության մեջ։

[75] «Ազատ խոսք», 1906, էջ 298։

[76] «Լուսաբեր», 28 դեկտեմբերի 1907։

[77] Տե՛ս «Լուսաբեր», 4 հունվարի 1908։

Եգիպտահայ երաժշտական կյանքում խոշորագույն իրադարձություն էին Կոմիտասի համերգները։

1911 թ. հունվարին Կոմիտասը հրավեր է ստանում համերգ ու դասախոսություններ տալու Ալեքսանդրիայում։ Նրան ուղղված հրավերի հեղինակն էր հասարակական գործիչ, Մանթաշով ընկերության Եգիպտոսի մասնաճյուղի տնօրեն Հովհաննես Մութաֆյանը։ Ընդունելով եգիպտահայերի հրավերը, Կոմիտասն իր հունվարի 29 թվակիր պատասխան նամակում գրում էր. «Ուրախությամբ հանձն կառնեմ գալ Ալեքսանդրիա և համերգ տալ՝ հայ եկեղեցական և գեղջուկ երաժշտութենե, և երկու դասախոսություն անել՝ ա) հայ գեղջուկ և բ) հայ եկեղեցական երաժշտության ծագման, զարգացման և արդի վիճակի մասին»[78]։ Կոմիտասի պատասխանից պարզվում է, որ Ալեքսանդրիայի հայերը նրան առաջարկել են ս. Պողոս-Պետրոսի համար մնայուն «եկեղեցական խումբ պատրաստելու և հոգևոր երգեցողությունը կանոնավորելու մասին», սակայն նա հանձն չի առել, առարկելով, որ «տրամադրելի ժամանակ» չունի[79]։

Բնութագրական է, որ Կոմիտասը պայմաններ առաջարկելիս ելնում էր հասարակության շահերից։ Նա գրում էր. «Համերգեն գոյացած արդյունքին 1/3-ը ի նպաստ իմ երկասիրությանց տպագրության կառնեմ, եթե ի վիճակի լինեի կես առ կես կընեինք։ Դասախոսությանց ամբողջ արդյունքն իմն է»[80]։ Իրոք, 1910—1911 թվականների համերգներից գոյացած եկամուտով է, որ Կոմիտասը կարողացավ Լայպցիգում տպագրել իր «Հայ գեղջուկ երգերի» երկու տետրակները։

Ըստ երևույթին, Ալեքսանդրիայում կազմակերպվելիք երգչախմբի կազմի համար առանձին հույսեր չունենալով, Կոմիտասը բավական համեստ պահանջ էր դնում։ Նա նշում էր. «Խումբ կազմելու համար 60—80 երկսեռ անձեր՝ մեծ ու պզտիկ. այս թիվեն որքան ավելի լինին մասնակիցները, այնքան գոհ կմնամ։ Ուրեմն, առնվազն պետք են 40—50 աղջիկներու կամ պզտիկ մանչերու ձայներ՝ ի հարկին և 20—30 մեծերու և այլն»[81]։ Իրականում, ընտրություն կատարելուց հետո, Ալեքսանդրիայում կազմակերպվում է 190 հոգուց բաղկացած երգչախումբ,

[78] ԳԱԹ արխիվ, Կոմիտասի ֆոնդ, վ. 157ն։

[79] Նույն տեղում։

[80] Նույն տեղում։

[81] Նույն տեղում։



որին Կոմիտասը համեմատաբար կարճ ժամանակում սովորեցնում է իր մշակումներից՝ հոգևոր երաժշտության 7 խոշոր հատվածներ և 15 գեղջուկ խմբերգեր, այդ թվում «Կալի երգը», «Սոնա յար», «Կուժն առա», «Քաղհան», «Եկեք տեսեք», «Սիփանա քաջեր» և այլն։

Առաջին համերգը կայացել է 1911 թ. հունվարի 5-ին Ալեքսանդրիայի Ալհամբրայի, երկրորդը՝ հունիսի 16-ին Կահիրեի Աբբասի թատրոնում։ Համերգներում Կոմիտասն ինքը կատարել է «Տիրամայր», «Հավիկ մի պայծառ», «Մոկաց Միրզա», «Սիրանի ծառ», «Կռունկ», «Լոռվա հորովել» մեներգերը, ինչպես և խմբերգերի մեներգային բաժինները։

Եգիպտական թերթերը («Լա Բուրս էժիպսիեն», «Լը Պրոգրե էժիպսիեն», «Լը Ժուռնալ դյու Կեր», «ալ-Ահրամ», «ալ-Վաթան», «ալ-Մոգատտամ» և ուրիշներ) բազմաթիվ գովասալից հոդվածներ են հրատարակել այդ համերգների մասին։ Ալեքսանդրիայի ֆրանսիական թերթերից մեկը գրել է. «Անցյալ երեկո Ալհամբրայի բեմին վրա հայ ժողովրդի հոգին էր, որ ամբողջովին թրթռաց. հոգի մը՝ համակ եռանդ, զոր ոչ մեկ ուժ պիտի կրնար բանտել կամ մարել։ Գիշերվան սարսուռին մեջ, ներդաշնակ խոսքեր և հնչյուններ, ցեղին զգացումներովն արյունված և շառագույն, կիջնեին խաղ առ խաղ. ցեղի մը, որ իր հպարտությանը կպահեր և իր փոքրիկ համայնքեն իսկ ճոխություններ կպարգևեր մարդկության»։ Այդ համերգների առիթով, թերթերը խոսել են Կոմիտասի և նրա գործի միջազգային նշանակության մասին։

Կոմիտասի մեկնելուց հետո 1912 թ. Եգիպտոս ժամանեց Արմենակ Շահմուրադյանը։ Անվանի երգիչն առաջին անգամ հանդես է եկել Կահիրեում Աբբասի թատրոնում՝ հայ և օտար հասարակության առաջ։ Այդ առիթով, «Հուսաբերը» նշել է. «Իր դմայլելի ձայնով թովեց, սքանչացուց, գինովցուց ներկաները»[82]։ Շահմուրադյանի երկրորդ երգահանդեսը կայացել է Ալեքսանդրիայի Ալհամբրայի թատրոնում, ընկերակցությամբ Էժեն Բարագյանի (դաշնամուր,) Ֆ. Լևիի (ջութակ) և Մ. Ա. Լանգոնիի (թավջութակ)[83]։ Շահմուրադյանի երգահանդեսների մասին գովասալից հոդվածներ են լույս տեսել եգիպտական թերթերում։

Հիշատակության արժանի են նաև Եգիպտոսում կազմակերպված հայկական նվագախմբերը։ 1899—1900 թթ. Ալեքսանդրիայում ստա-

[82] «Հուսաբեր», 1912, էջ 88։

[83] Տե՛ս նույն տեղում, էջ 143։

բեղ է իջել եգիպտահայ առաջին նվագախումբը, որը բաղկացած էր 20—25 նվագողներից և, իտալացի դիրիժոր Բուշիավելլիի ղեկավարությամբ, կատարում էր հայ և արևմտյան երաժշտության նմուշներ[84]։ «Իրավունք» լրագրի վկայությամբ, այդ նվագախումբը «հայերեն սիրվելեն զատ, օտար շրջանակներու մեջ մեծ անուն շահած» էր[85]։ 1901—1902 թթ. Կահիրեում ստեղծվել են «Արաքս» և «Քնար հայկական» նվագախմբերը, որոնք, ի վերջո, միավորվելով կազմել են «Արարատյան ազգային նվագախումբը»՝ մի ֆրանսիացի դիրիժորի ղեկավարության ներքո[86]։ Հայտնի չէ, թե որքան ժամանակ են գործել այդ նվագախմբերը։

Այս ժամանակաշրջանում աշխուժություն է նկատվում նաև եգիպտահայ կերպարվեստի բնագավառում։ Կահիրեի միջազգային ցուցահանդեսում իրենց գործերն են ցուցադրել մի շարք ոչ անհայտ նկարիչներ՝ Ճապանյանը, Սրաոչելին (Յակոբ Արթինի դուստրը), Առաքելյանը, Կարապետյանը, Սոփոն Պեզիրճյանը, Թադևոսյանը, Մանուկյանը, Պաղտասարյանը, Շիշմանյանը, Դեմիրճյանը, Գրիգորյանը և ուրիշներ։ Ուշադրության արժանի երևույթ էին ծովանկարիչ Վարդան Մախոխյանի հյուրեկային ցուցահանդեսները։ Դրանցից առաջինը տեղի է ունեցել 1902 թ. Կահիրեի Սիրկոլո Արտիստիկոյի սրահում[87], երկրորդը՝ 1905 թ. դեկտեմբերի 23-ին նորից Կահիրեում։ Ցուցադրվել են 113 բարձրարժեք նկարներ[88]։ Ժամանակակիցներից մեկը վկայում է, որ մեծ ծովանկարիչը «ողջունեցավ և գնահատվեցավ։ Օտար և հայ ջոջերը անոր նկարները ունենալու բուռն իղձեն բռնկված էին»[89]։

Մեզ հայտնի եգիպտահայ միակ քանդակագործը Հ. Պեզիրճյանն է, որը պատրաստել է Արփիար Արփիարյանի կիսանդրին։

Եգիպտոսում կային մի շարք անվանի հայ ճարտարապետներ, որոնք աշխատում էին «Հանրօգուտ շինությանց պաշտոնական» և մասնավոր անձանց պատվերներով։ Աչքի ընկած ճարտարապետներ էին Կարո Պալյանը, Լևոն Նաֆիլյանը, Ազնավուրյանը, Գալճյանը, Զրաքյանը, Նուրյանը, Էքսերճյանը և Տամասյանը։ Նաֆիլյանը հռչակված էր իբրև

[84] Տե՛ս «Փյունիկ», 1901, էջ 6—7։

[85] «Իրավունք», 27 հունվարի 1904։

[86] Տե՛ս «Իրավունք», 14 ապրիլի 1904։

[87] Տե՛ս «Դեղուհի», 1902, № 4—6, էջ 35։

[88] Տե՛ս «Լուսաբեր», 4 հունվարի 1906։

[89] «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 110։



բազմահարկ շենքեր կառուցող վարպետ, իսկ Կարո Պալյանի «հղացած ու իրագործած շենքերը» «պարզության և ներդաշնակության գլուխգործոցներ էին»[90]։ Պալյանը ուսումնասիրում էր նաև արաբական ճարտարապետության հարցերը, նրա հմտալից դիտողությունները ամփոփված են «Եգիպտոսը և արաբական ճարտարապետությունը» ծավալուն աշխատության մեջ։

[90] Նույն տեղում, էջ 113։

# ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

# ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 1917—1952 ԹԹ.

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ՀԱՅԵՐԻ ԴԵՐԻ ՆՎԱԶՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ։ ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով նոր դարաշրջան բացվեց համաշխարհային պատմության մեջ։ Բնութագրելով այն, Վ. Ի. Լենինը գրել է. «Կապիտալիզմի և նրա հետևանքի ոչնչացումը, կոմունիստական հասարակարգի հիմքերի հաստատումը կազմում է համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[1]։ Հոկտեմբերյան հեղափոխության վեհ գաղափարները լուսավորեցին Արևմուտքի պրոլետարիատի և Արևելքի աշխատավորական զանգվածների ազատագրության ուղին, հզոր թափ հաղորդեցին ազգային-ազատագրական շարժումներին։ Սկսվեց իմպերիալիզմի գաղութային համակարգի ճգնաժամն ու քայքայումը։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո եգիպտական բուրժուազիան, ձգտելով հեգեմոն դեր գրավել ներքին շուկայում, գլխավորում էր ժողովրդական զանգվածների ազգային անկախության պայքարը։ 1919—1923 թթ. Եգիպտոսում բռնկված համաժողովրդական ապստամբությունը ցնցեց բրիտանական իմպերիալիզմի տիրապետության հիմքերը։ «Անկախ և սուվերեն» թագավորության հռչակումը և քաղաքական ու տնտեսական մյուս միջոցները չկարողացան կոտրել եգիպտական ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ուժը։ Մոնոպոլիստական կապիտալների ներխուժումը, ուժեղացնելով աշխատավորական զանգվածների շահագործումը և դուրս մղելով մանր ու միջին բուրժուազիային, սրում էր բրիտանական իմպերիալիզմի և ազգային անկախության ուժերի հակասությունները։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 491։



Եգիպտական բուրժուազիայի պայքարի սուր ծայրը ուղղված էր
օտարերկրյա կապիտալի դեմ, որը, օգտվելով զանազան արտոնություն-
ներից, փակում էր ազգային կապիտալի զարգացման ուղիները։ 1919 թ.
Եգիպտոսի տնտեսության տարբեր բնագավառներում ներդրված կապի-
տալի 91 տոկոսը պատկանում էր օտարերկրացիներին, ներառյալ «ոչ-
ազգային» տարրերին։ Համառ պայքարի շնորհիվ եգիպտական բուր-
ժուազիային հաջողվեց աստիճանաբար փոխել օտարերկրյա և ազգա-
յին կապիտալների հարաբերակցությունը։ 1934—1939 թթ. ազգային
կապիտալը կազմում էր 47, օտարերկրյա կապիտալը՝ 53, 1940—
1945 թթ. համապատասխանաբար՝ 66 և 44, 1946—1948 թթ.՝ 84 և 16
տոկոս[2]։

Այդ պայմաններում դիրքերը մեծ մասամբ զիջեց նաև «ոչ-ազգա-
յին» կապիտալը, և նվազեց նրա ներկայացուցիչների՝ հայ, հույն, հրեա
առևտրականների և արդյունաբերողների դերը։ Խոսքը մասնավորելով
հայերի մասին, եգիպտական տնտեսագետ Իսավին գրել է. «Անցյալ
դարում հայերի ունեցած քաղաքական ուժն անվերադարձ անցել-գնա-
ցել է։ Այսօր (1947 թ.) նրանք կատարում են մի համեստ, բայց օգտա-
կար դեր արդյունաբերության, արհեստագործության և մանր առևտրի
ասպարեզում»[3]։

Դժվար է ճշտել «ոչ-ազգային» տարրեր խմբերին պատկանող կա-
պիտալների ծավալը, սակայն կարելի է ասել, որ եգիպտահայ կապի-
տալիստները ո՛չ հույներին, ո՛չ էլ հրեաներին չէին զիջում իրենց կա-
պիտալների ծավալով և ներքին շուկայում ունեցած կշռով։ Հավանաբար
դրանով է բացատրվում այն իրողությունը, որ եգիպտական բուրժուա-
զիան նվազ եռանդով չէր պայքարում հայ կապիտալիստների դեմ։

Եգիպտոսի «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների նա-
հանջը սկսվեց սիգարետի արդյունաբերությունից։ Հույն արդյունաբե-
րողները փորձեցին արտադրությունը համակենտրոնացնելու միջոցով
դիմագրավել կործանման վտանգը։ Միոն Արդտ, Փապադոպուլոս, Կա-
մալյան, Քեկարիս, Մանչարոս, Բարտոլո և Լիվանոս ձեռնարկություն-
ները միաձուլվելով կազմեցին Սալոնիկա ընկերությունը[4]։ Հաջողու-
թյամբ չպսակվեցին հայ արդյունաբերողների միավորելու ջանքերը։

2 *И. П. Беляев, Е. М. Примаков.* Египет: время президента Насера, стр. 8.

3 Տե՛ս *Ch. Issawi*, Egypt, p. 166.

4 *El-Gritly*, The structure of modern industry in Egypt, pp. 509—510.

«Հուսաբեր»-ը գրել է. «Պայքարը արժանավորապես դիմագրավելու մեկ ձև կար միայն։ Հայ արդյունաբերողները... մրցումեն հաղթականորեն դուրս ելնելու համար վերջ պետք է տային այն մրցումին, որ գոյություն ուներ իրենց միջև։ Նրանք համերաշխելով է միայն որ հնարավոր պիտի ըլլար դուրսեն եկող հարվածները անվտանգ դարձնելու»[5]։

Հայ արդյունաբերողները պատրանքներ էին սնուցում օտարերկրյա կապիտալի օգնությամբ գոյատևելու մասին։ Մաթոսյան անանուն ընկերության և անգլո-ամերիկյան տրեստի կոմպանիի միավորումով կազմվեց «Իսթըրն կոմպանին», որը և գործադրեց հնարավոր ամեն միջոց՝ ծխախոտագործությունը մոնոպոլիայի վերածելու համար։ Չդիմանալով Իսթերն կոմպանիի ճնշմանը, անձնատուր եղան Մասեհրո, Սուսա, Մելքոնյան, Կամսարական, Իփեկյան, Մավրիդես, Պապաթեոլոգու և այլ ձեռնարկությունները[6]։ Կապիտուլյացիան կատարվում էր սնանկանալու սպառնալիքից ահաբեկված արդյունաբերողների համար առերևույթապես ձեռնտու պայմաններով։ Իսթերն կոմպանին վճարում էր յուրաքանչյուր ձեռնարկության շարժուն և անշարժ գույքի փոխարժեքը, պահպանում ինչպես ձեռնարկության, այնպես էլ նրա արտադրած սիգարետների անունը, և ձեռնարկատիրոջը նշանակում էր «ցկյանս վարիչի» պաշտոնում[7]։ 1927 թ. արդեն կարելի էր «կորսված» համարել «եգիպտահայ գաղութի տնտեսական զորավոր հենարանը՝ ծխախոտի արդյունաբերությունը»[8]։

**1927—1930 թթ.** Իսթերն կոմպանիի դեմ ապարդյուն ելան մի շարք մանր գործարաններ, այդ թվում Բ. Սարգսյան և ընկ.-ը («Աթենա»), Հ. Պալյան և Ա. Չիլինգարյանը («Հորա»), Տ. Հաճընլյանը («Ալ-Շարկ»), Ն. Մ. Սերսենյանը, Թյությունճյան եղբ.-ը, Օ. Պոտուրյանը, Ն. Իգմիրլյանը և ուրիշներ։ Մինչև անգամ ձեռք բերվեցին որոշ հաջողություններ, պատրանք ստեղծելով թե «հայոց ձեռքեն ելած» ծխախոտագործությունը կը «կրկին անցնելու վրա է մեր ձեռքը»[9]։ Այդ տարիների եգիպտահայ մամուլի էջերում կարդում ենք. «Զարկ տվեք ծխախոտի հայ նորածիլ արդյունաբերության» և այդ կարգի այլ կոչեր։ Սակայն եգիպտական բուրժուազիայի ճնշման և վերահաս տնտեսական ճգնաժամի հետևանքով այդ գործարանները կարճատև կյանք ունեցան[10]։

[5] «Հուսաբեր», 7 փետրվարի 1927։

[6] 1921 հուլիսի 26 թվակիր ակտով Մելքոնյան եղբայրների ծխախոտագործական ձեռնարկությունները նվիրաբերված էին ՀԲԸ Միությանը, և համարվում էին ազգային սեփականություն։ Այդ պատճառով էլ եգիպտահայ մամուլի որոշ օրգաններ փորձեցին արգելել դրանց վաճառքը։

[7] Տե՛ս «Արև», 18 օգոստոսի 1924։

[8] «Հուսաբեր», 8 փետրվարի 1927։

[9] «Արարատ», 13 ապրիլի 1929։



Այժմ հայերը որոշ դիրքեր էին պահպանում արդյունաբերության մի քանի այլ ճյուղերում։

Իր արտադրության բնույթով և տեսակների բազմազանությամբ աչքի էր ընկնում Ա. Կոկանյան և ընկ. մետաղագործական ձեռնարկությունը, որն ընդգրկում էր հինգ տարբեր բաժանմունքներ. առաջինում պատրաստվում էին կամուրջների մետաղյա մասեր, կինոպահների ձեղնահարկեր, մզկիթների զմբեթներ, շինարարական հանգույցներ և այլն. երկրորդում՝ մետաղյա լուսամուտներ, դռներ, ցանկապատեր, պատշգամբներ, խանութների փեղկեր և այլն. երրորդում՝ մետաղյա կահույք. չորրորդում՝ շենքերի, բնակարանների և պարտեզների տարբեր զարդհարմարանքներ՝ զարդնված երկաթից (ֆեր ֆորժե). հինգերորդում՝ սանիտարական խողովակներ և այլն։ Կոկանյան ձեռնարկության մասնագետների ուշագրավ գործերից են Գիզեի համալսարանի և Կահիրեի միջնաբերդի մզկիթի զմբեթները, ինչպես և խոշորագույն կինոպահներ Ռոյալի, Դիանայի, Միամիի, Ռիվոլիի ձեղունները[11]։

Տարբեր գործածության մետաղյա իրեր էին պատրաստում նաև ուրիշներ։ Սագայանի մետաղագործարանը մասնագիտացած էր հղկիչ սարքերի, Հ. Պապիկյանինը՝ խանութների անձայն փակվող-բացվող փեղկերի, Կ. և Ե. Դեմիրճյաններինը՝ զսպանակների և մահճակալների, Մ. Սարաֆյանինը՝ սանիտարական հարմարանքների, Լ. Կեստիկյանինը՝ կրակարանների, Նասիպ-Թորզամինը՝ ալյումինե իրերի պատրաստության մեջ։ Վերջինիս արտադրած «Ֆլամպո» ջեռուցիչը և խոհանոցային այլ իրեր լայն սպառում ունեին տեղում[12]։ Էմրան Անանյանը («Ֆոնդերի Օրիենտալ»), շարունակելով ճանաչված վարպետ-ձուլիչ Գր. Ռաֆայելյանի գործը, պատրաստում էր հայերեն և արաբերեն տառատեսակներ, տպագրական զարդեր և այլն[13]։

Հայ արդյունաբերողները կարևոր տեղ էին գրավում փաթեթավորման տարաների արտադրության մեջ։ Ամիրայան և ընկ. քրոմի-

[10] Տե՛ս «Արև», 5 սեպտեմբերի 1931։

[11] Տե՛ս «Արև», 26 մարտի 1949։

[12] Տե՛ս «Արև», 8 սեպտեմբերի 1945։

[13] Տե՛ս «Հայահամար», էջ 69։

լիթոգրաֆիայի գործարանն արտադրում էր ստվարաթղթե տուփեր՝ սիգարետի, չոր պտուղների, քաղցրավենիքի փաթեթավորման համար, ինչպես և վիմատիպ բազմագույն շքեղ խաղաքարտեր՝ «Ամիր» մակնիշով, պիտակներ, պլակատներ, փոստային քարտեր և այլն[14]։ Կահիրեում այդպիսի ձեռնարկություններ էին հաստատել Ն. Ա. Զայլակյան և ընկ.-ը, Թ. Մաթոսյան և ընկ.-ը, Ալեքսանդրիայում՝ Հ. Թոփալյան և ընկ.-ը («Մոհարեմ պրես»), Գիզեում՝ Բ. Կ. Ալթունյանը։ Զայլակյանի գործարանը մասնագիտացած էր մետաղյա և թիթեղյա զանազան տուփերի, Մաթոսյանինը և Թոփալյանինը՝ խաղաքարտերի, փաթեթավորման թղթերի արտադրության մեջ[15]։

Գործարանային արդյունաբերության ասպարեզում հայտնի անուններ էին Աբդել Քերիմ Դամլակյանը, Վ. Հ. Սեֆերյանը, Վ. և Ա. Կրեզյանները, Մ. Էթմեքչյանը և ուրիշներ։ Առաջին երկուսն արտադրում էին բրդյա, բամբակյա և մետաքսյա բազմատեսակ գործվածքներ. երրորդը՝ գլխարկներ, իսկ վերջինը՝ մետաղյա լուսացանց՝ նավթով վառվող լամպերի և լապտերների համար[16]։ Կային նաև հայերի պատկանող մի շարք կաշեգործական, օճառագործական, կահույքագործական և այլ ձեռնարկություններ։

Ակնառու փոփոխություններ չկատարվեցին արհեստագործության մեջ։ Ինչպես նախկինում, բարձր էր գնահատվում հայ ոսկերիչների, գերձակների, կոշկակարների, լուսանկարիչների, ներկարարների, ցինկոգրաֆիստների, ինչպես նաև ցուցանակ պատրաստող, էլեկտրասարքեր, շարժիչներ և մեքենաներ վերանորոգող հայ վարպետների աշխատանքը։ Հռչակված վարպետ ցինկոգրաֆիստներ էին Ա. Պերպերյանը և Ա. Քյուրքչյանը։ Կահիրեի և Ալեքսանդրիայի Պերպերյան արհեստանոցները ունեին կլիշեներ և կնիքներ պատրաստող արդիական մեքենաներ[17]։ Ա. Քյուրքչյանը մասնագիտացած էր տրիխրոմ տպագրության համար կլիշեների պատրաստության և պողպատի վրա փորագրության մեջ[18]։ Փորագրության մի ինքնուրույն ճյուղ էր մետաղյա կաղապարների պատրաստումը։ Այդ արհեստում ճանաչված վարպետներ էին Ն. Մխիթարյանը և Ա. Հրանդը։

Եգիպտահայ կապիտալիստներն ավելի կարևոր դիրքեր գրեցին

14 Տե՛ս «Հուսաբեր», 6 հուլիսի 1935։

15 Տե՛ս «Արև», 26 մարտի 1949։

16 Տե՛ս «Հուսաբեր», 6 հուլիսի 1935։

17 Տե՛ս նույն տեղում։

18 Տե՛ս «Արարատ», 15 փետրվարի 1936։



առևտրի ասպարեզում։ Նրանց սպառնացող կործանման վտանգը կանխելու համար տնտեսագետներն առաջարկում էին զանազան դեղատոմսեր։ Մեկն առաջարկում էր «կազմել հայ առևտրականների միություն մը», որը «պիտի միացնե զիրար չեզոքացնող ուժերը և, զանոնք ներդաշնակելով, հայ խանութպան-առևտրականը մրցակցության ընդունակ պիտի դարձնե»[19]։ Մի ուրիշը, նշելով, որ «տեղացի տարրը բավական զարգացած է և ձեռք զարկած գրեթե առևտրի բոլոր ճյուղերուն», թելադրում էր՝ «տեղացի տարրին հետ առևտրական համագործակցություն հաստատել» և, հեռանալով մեծ քաղաքներից, «գյուղաքաղաքները և նույնիսկ գյուղերու մեջ տարածվիլ...»[20]։ Այդ և նմանօրինակ այլ դեղատոմսերը չօգնեցին հայ առևտրականներին, և նրանց դերը գնալով փոքրացավ եգիպտական շուկայում։

Եգիպտական բուրժուազիայի ճնշման ներքո ասպարեզից քաշվեցին կամ մանրացան այնպիսի խոշոր առևտրական հիմնարկներ, ինչպիսիք էին «Ս. Մանուկյան և որդիք», «Գ. Թոփալյան», «Պարթրեճյան եղբ.», «Ս. Իփլիկճյան», «Գ. Մուրադյան», «Ս. Ծատպաշյան և ընկ.», «Վ. Պարթանյան» և այլ, որոնք ուժգնորեն ցնցվել էին այն կորուստների հետևանքով, որ Կ. Պոլսի, Զմյուռնիայի և ներքին գավառների նրանց մասնաճյուղերը կրեցին համաշխարհային պատերազմի տարիներին։ Հայերի ձեռքից օտարերկրյա ԷՍՍՕ ընկերությանն անցավ «Ա. Ի. Մանթաշև և ընկ.» նավթարդյունաբերության և առևտրի ընկերությունը։ Օտարերկրյա կապիտալին անձնատուր եղավ նաև հանրածանոթ խոշորագույն հիմնարկներից «Կոմպանիա Բելժ Օրիենտալը» (Գարամանյան եղբ.)։ Սիգարետի արդյունաբերության ասպարեզում դիրքերը զիջելուց հետո հայերը համարյա դեր չունեին նաև ծխախոտի առևտրում։ 1924 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Մեծաքանակ վաճառականության մեծ գործի տեր հայ տուներ իսկապես սակավաթիվ են Եգիպտոսի մեջ. բավական աչքառու չափով կան երկրորդ կարգի վաճառականներ և փոքրաքանակով գործ կատարող առևտրականներ»[21]։ Զ. Քեշիշյանը («Պրենսես»), Թ. Թագվորյանը, Հ. Մարգարյանը, Հ. Գալփաքյանը և մի քանի ուրիշներ զբաղվում էին կտորեղենի մեծածախ և մանրածախ առևտրով։ Երկաթ, երկաթեղեն և մեքենա-

19 «Արև», 18 հոկտեմբերի 1924։

20 «Արև», 3 դեկտեմբերի 1929։

21 ՓԿՊԱ. ֆ. ԳԽՀԷ, ՆԹ. Տեղեկագիր, 1924, էջ 6։

ներ ներմուծող բազմաթիվ հայ առևտրականներից մնացել էին միայն երեքը՝ Զ. Խորասանճյանը, Գ. Հովակիմյանը և Հ. Հակոբյանը։ Թանկագին քարերի, ոսկու և գոհարեղենի առևտրում որոշ դեր էին կատարում Մ. Ղազարոսյանը, Յուսուֆյանը, Մանուկյան եղբ.-ը, Ն. Գույումջյանը, Գ. Ջեզայիրլյանը, Գ. Թոփուզյանը և ուրիշներ։ Բայց դրանք էլ, ինչպես նշել է Ս. Շալճյանը, գտնվում էին «տագնապալից» վիճակում. «Բոլորն ալ զիրար կհալածեն, զիրար կխուչածեն և պատահական դժվարությանց պարագային ոչ ոք կփափաքի օգնության անկեղծ ձեռք երկարել։ Այս բոլորին իբրև հետևանք օտարը հետզհետե նահանջի միջի ենթարկել հայ անպաշտպան ցրամատերը կամ խանութպաններ...»[22]։

Դիրքերը զիջեցին նաև եգիպտահայ կալվածատերերը։ Նրանց վստահություն չէր կարող ներշնչել բրիտանական տիրապետությունից ազատագրվել ձգտող Եգիպտոսը, և պլանտացիաները վաճառելու խուճապ սկսվեց։ 1924 թվականի արխիվային մի վավերագրում ասված է. «Պողոս փաշա Նուբար, Միքայել բեյ Ծերուլյան և Գրիգոր Թաքաճյան վերջերս վաճառեցին իրենց ընդարձակ նշանավոր ագարակները Եգիպտոսի վերջնականապես մեկնելու մտադրությամբ»[23]։ Նրանց օրինակին հետևեցին նաև ուրիշները, և հայ խոշոր կալվածատերեր համարյա չմնացին Եգիպտոսում։ Տարբեր ցուցակներում կալվածատեր հիշատակված հայերը պարզապես տնատերեր էին, որոնք «պատերազմի ատեն կրցեր էին փոքր ի շատե օգտվիլ... և ընդհական հասութաբեր տուներ կառուցանել» Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ վայրերում[24]։

Հայերի դերը փոքրացավ նաև պետական ծառայության ասպարեզում։ «Հուսաբերը» իրավացիորեն գրում էր. «Եգիպտահայը, անկասկած ու անաղմուկ, այլևս դուրս վտարված է այս երկրի պետական ասպարեզներն»[25]։ Մնացին համեստ, բայց օգտակար պաշտոններ զբաղեցնող սակավաթիվ հայեր պատերազմական մինիստրությունում (թարգմաններ Բ. Յազմաջյանը, Հ. Սարրին և Հ. Մանուկը), հանրօգուտ շինությանց մինիստրությունում (քարտեզագիր Մ. Փալյանը, ճարտարապետներ Վ. Աստվածատրյանը, Ա. Թեմիրյանը, ինժեներ Խ. Մինաս-

22 «Արև», 18 հոկտեմբերի 1924։

23 ՊԿՊԱ, ֆ. ԴԱՀԵ, ԵԹ. Տեղեկագիր, 1924, էջ 6։

24 Նույն տեղում, էջ 8։

25 «Հուսաբեր», 7 փետրվարի 1927։



յանը), առողջապահության վարչությունում (բժիշկ Եդվարդ Արշակունին, Արմ. Ազատյանը[26]) և այլն։

Բազմաթիվ հայեր ծառայում էին օտարերկրյա և մասնավոր հիմնարկներում՝ Կրեդի Լիոնե, Բանկ իմպերիալ Օտտոման, Բանկ ագրիկոլ, Դեոչ օրիանտբանկ, Կեն հիպոթեկեր, Եգիպտոսի գյուղատնտեսական և արդյունաբերական անանուն ընկերություն, Հանրային պարտքի դրամարկղ, Կահիրեի ջրի հայթայթման ընկերություն, Կահիրեի և Ալեքսանդրիայի տրամվայի ընկերությունները, Կահիրո էլեկտրիկ ռելվեյս կոմպանի, Կահիրեի հանրօգուտ շինությանց ընկերություն, Վագոն-լի միջազգային մարդատար տրանսպորտի ընկերություն[27] և այլն։

Ազատ ասպարեզի անձանց մեջ իրենց կարևոր տեղն ունեին բժիշկները, ատամնաբույժները, դեղագործները, իրավաբանները և այլն[28]։

Այսպիսով, ներքին շուկայում աստիճանաբար տիրապետող եգիպտական բուրժուազիայի ճնշման ներքո, «ոչ-ազգային» կապիտալը դուրս մղվեց ասպարեզից, և նրա երբեմնի կարկառուն ներկայացուցիչները՝ հայ, հույն, հրեա կապիտալիստները կորցրին իրենց տնտեսական առաջատար դերը։

### 1. ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԳՆԱԺԱՄԸ

«Ոչ ազգային» կապիտալի դեմ եգիպտական բուրժուազիայի պայքարը կրում էր առհասարակ խաղաղ բնույթ, սակայն նրա առավել ռեակցիոն շրջանները պահանջում էին ծայրահեղ միջոցներ։ Որոշ հետադիմական գործիչներ կողմնակից էին նույնիսկ թալանի ու վտար-

26 Դոկտ. Ա. Ազատյանը տարիներ շարունակ ուսումնասիրել է Եգիպտոսի ջրերը և 1920 թ. հրատարակել է «Les Eaux d'Egypte» խորագրով ֆրանսերեն եռահատոր աշխատությունը, որի առաջին հատորը նվիրված է Նեղոսի, երկրորդը՝ Եգիպտոսի ստորերկրյա և երրորդը՝ աղբյուրների ջրերի համակողմանի հետազոտությանը։ Եգիպտոսի առողջապահության վարչության լաբորատորիայի դիրեկտոր Հ. Մարիան Պերին այն համարում է «խոր ուսումնասիրություն», որը գերազանցում է մինչև այդ նույն թեմային նվիրված բոլոր աշխատությունները („Les Eaux d'Egypte", t. I, pp. 3—4)։

27 Տե՛ս «Արև», 31 դեկտեմբերի 1924։ Վագոն-լին մարդատար տրանսպորտի օտարերկրյա ընկերություն էր, որը մասնաճյուղեր ուներ Մերձավոր Արևելքի գլխավոր քաղաքներում։ Յանիկ Զադրըն այդ ընկերությունում ծառայել է 1901—1906 թթ. որպես ստորադաս պաշտոնյա, 1906—1924 թթ.՝ Եգիպտոսի մասնաճյուղի վարիչ, իսկ 1924—1951 թթ.՝ ընդհանուր դիրեկտոր Եգիպտոսի, Սիրիայի և Պաղեստինի մասնաճյուղերի։ Նա շնորհակալ գործ է կատարել նաև Եգիպտոսում տուրիզմի զարգացման գործում։

28 ՊԿՊԱ, ֆ. ԴԱՀԷ, ԵԹ. Տեղեկագիր, 1924, էջ 6։

ման միջոցով հաշվեհարդար տեսնել ինչպես օտարերկրյա, այնպես էլ «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների հետ։ Դրանց է ակնարկում Ա. Ալպոյաճյանը, երբ խոհեմաբար գրում է. «Դժբախտաբար ազգայնականության սխալ ըմբռնումով սնած եգիպտացիներու մեջ... կարգ մը սխալ գաղափարներ տարածված են ոչ-եգիպտացի ցեղերու դեմ ատելության սերմանելով։ Նույնպես կային տարրեր, որոնք կրոնական ատելություններ ալ կարծարծեին, որով բոլոր ոչ-իսլամ տարրերու դեմ կուզեին պայքար բանալ կամ զանոնք երկրեն հեռացնելու»[29]։ Այդ տրամադրությունների արդյունքն էին այն հակահայկական իրադարձությունները, որ «հայերի կոտորած» անունով մտան պատմության մեջ։

Հայտնի է, որ 1918 թ. նոյեմբերի 13-ին բուրժուական ականավոր գործիչներ Սաադ Զաղլուլը, Ալի Շարավին, Աբդել Ազիզ Ֆահմին և ուրիշներ եգիպտական ժողովրդի անունից պահանջեցին վերացնել պրոտեկտորատը, հռչակել Եգիպտոսի անկախությունը։ Նրանց պահանջը մերժվեց։ 1919 թ. մարտի 8-ին, երբ նրանք պատրաստվում էին մեկնել Փարիզ՝ հաշտության կոնֆերանսում Եգիպտոսի դատը պաշտպանելու, ձերբակալվեցին և աքսորվեցին Մալթա կղզին։ Դա կայծ դարձավ հակաբրիտանական համաժողովրդական ապստամբության բռնկման համար։ Մարտի 9—15-ի ցույցերն ու գործադուլները բրիտանական գաղութարարներին ստիպեցին Սաադ Զաղլուլի պատվիրակության առաջ բանալ Փարիզի կոնֆերանսի ճանապարհը, սակայն դաշնակիցների վերաբաժանումով զբաղված պետությունները լսել անգամ չկամեցան Եգիպտոսի անկախության մասին։ Ապրիլի 7-ին բարձրացավ ապստամբության երկրորդ ալիքը, որը վերածվեց մոլեռանդական շարժման՝ ուղղված եվրոպացիների և ոչ-մուսուլման ազգային փոքրամասնությունների դեմ։ Կահիրեում ցուցարարները դատարկեցին եվրոպական Մորմուսո, Դեյվիզ, Բրայն և Բալաքի, Հաիմ և ընկ. հանրախանութները, և, շարժվելով դեպի հայաբնակ թաղերը, թալանեցին հայերի կրպակներն ու վաճառատները, ներխուժեցին նրանց բնակարանները, կոտորեցին որոշ թվով հայերի։ Թեմական իշխանությունները դիմեցին Վաֆդ կուսակցությանը, որի միջնորդությամբ վերջ դրվեց արյունահեղությանը։

Այնուամենայնիվ բրիտանական զինված ուժերը ցուցադրաբար «պաշտպանեցին» հայերին, նրանց տեղափոխելով Գալուստյան դպրո-

[29] Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 9։



ցոց և Հելիոպոլսի ձիարշավարան։ Նույն ձևով վարվեցին նաև Ալեքսանդրիայի բրիտանական իշխանությունները։ Ազգային առաջնորդարան տեղափոխված հայերը շուրջ երկու ամիս մնացին անգլիական զորքերի «պաշտպանության» ներքո։ Այդ նույն ժամանակ Փարիզի Հաշտության կոնֆերանսում բրիտանական դիվանագետները, վկայակոչելով Կահիրեի արյունոտ իրադարձությունները, ճառում էին Եգիպտոսի անկախության պահանջի կանխահասության մասին։

Եգիպտական պատվիրակությունը, դժվար կացությունից ելք որոնելով, կոնֆերանսի մասնակիցներին հղեց մի հուշագիր, որտեղ «հայերի կոտորածի» մասին ասված էր. «Պատերազմի սկզբում եգիպտական ժողովուրդն ամբողջովին զինաթափվեց...։ Տարօրինակ և անբացատրելի էր այն, որ ցույցերի ժամանակ միայն հայերը զենք ունեին։ Եգիպտական ժողովուրդն երբեք թշնամություն չի սնուցել հայերի նկատմամբ, նրանք մյուս օտարերկրացիների նման մեր երկրում վայելում են առաջի կարգ անցած մեր ասպնջականությունը։ Ուրեմն հեշտ է պատկերացնել ցուցարարների ընդհանուր զարմանքը և գրգռվածությունը, երբ հայերը զենք էին օգտագործում իրենց դեմ. այդ անբացատրելի արարքը հաճախ համընկնում էր շարժումն ամեն գնով խեղդելու նպատակով ուղարկված անգլիական գնդացիրների տեղ հասնելու հետ։ Կատարված սպանությունները ցուցարարներին տալիս էին օրինական ինքնապաշտպանության իրավունք. Հնարավոր է, որ գրգռված ամբոխը հանցավորների հետ շփոթած լինի նաև մի քանի անմեղների։ Սակայն մի բան բացորոշ է, որ ամբոխի գործողությունները կրում էին փոխադարձության բնույթ»[30]։

Այդ փաստաթուղթը շարադրողները լավ գիտեին, որ եգիպտահայերը ոչ զենք են օգտագործել, ոչ էլ արաբներ սպանել, այլ եղել են քավության նոխազ։ Այդ մասին է վկայում թեկուզ այն դրական վերաբերմունքը, որ «հայերի կոտորածը» այս կամ այն ձևով արդարացնող գործիչները միաժամանակ հետո որդեգրեցին եգիպտահայերի նկատմամբ։ Եգիպտական կառավարությունը «վնասուց հատուցում» տալով, փորձեց գոնե մասամբ դարմանել հայերի կորուստները։ Բացի այդ, Սաադ Զաղլուլը և ուրիշ գործիչներ, այցելելով Կահիրեի հայոց առաջնորդարանը, ցավակցություն հայտնեցին զոհված հայերի համար։ Զաղլուլը հայոց առաջնորդարանում է եղել նաև 1922 թ. ապրիլի 9-ին և

[30] „Documents diplomatiques concernant l'Egypte", Paris,, 1920, p. 115.

1923 թ. սեպտեմբերի 29-ին, երբ հետադիմականներին հաջողվել էր հայերի նկատմամբ վերստին խախտել արաբ բնակչության վստահությունը[31]։ Արդարև «Հայերի կոտորածը» եգիպտական ռեակցիայի վերջին արարքը չէր։

1922 թ. փետրվարի 28-ին գաղութարարները միակողմանի կարգով վերացրին պրոտեկտորատը և Եգիպտոսը հռչակեցին սահմանադրական միապետություն։ Մարտի 15-ին Եգիպտոսի թագավոր հայտարարվեց Մոհամմեդ Ալիի դինաստիայի ժառանգներից Ֆուադը, 1923 թ. ապրիլի 19-ին հրապարակվեց Եգիպտոսի սահմանադրությունը։ 1924 թ. հունվարին Սաադ Զաղլուլը, ընդառաջելով գաղութարարների հրավերին, կազմեց «անկախ և սուվերեն» Եգիպտոսի առաջին կառավարությունը։ Այդ քայլը պատճառ դարձավ ազգային-ազատագրական ուժերի երկփեղկմանը։

Ազգային անկախության պայքարը մինչև վերջ տանելու կողմնակիցները Զաղլուլին համարեցին «հայրենիքի դավաճան»։ 1924 թ. հուլիսի 12-ին նրանց զինած տեռորիստ՝ Բեռլինի բժշկական համալսարանի ուսանող եգիպտացի 21-ամյա Աբդել Լաթիֆը մահափորձ կատարեց Զաղլուլի դեմ։ Զինված ահաբեկիչը ձերբակալվեց ոճրի վայրում, այնուամենայնիվ, ինչպես նշել է «Մարս» թերթը, «դավադիր լեզուներ տարաձայնություն հանեցին քաղաքին մեջ, թե ոճրագործը հայ է. և թե ոճիրը նպատակ ունի վնասելու Եգիպտոսի դատին։ Եվ այս տարաձայնության հետ միաժամանակ մայրաքաղաքի հայերուն դեմ կը պոռթկար ժողովրդային բարկություն մը, որը կսպառնար աղետալի հետևանքներ ունենալ, եթե ճշմարտությունը ատենին չգար հանդարտեցնելու խռովված միտքերը...»[32]։ Դավադիրների նպատակն էր նոր արյունահեղություններով խանգարել Սաադ Զաղլուլի կողմնակիցների և բրիտանական գաղութարարների համագործակցությունը։

Առաջին հերթին ինքը՝ Սաադ Զաղլուլը վճռական դեր կատարեց հուզված ամբոխը զսպելու գործում։ Հիվանդանոցում տեղեկանալով, որ «ոճիրը հայոց կվերագրվի, Սաադ փաշան հրահանգ կուտա Թեաֆի Նեսիմին (Ներքին գործերի մինիստր—Հ. Թ.), որպեսզի անմիջապես մամլո դիվանի հաղորդագրություն մը հանվի, և ոստիկանության ամեն շրջանակի հրաման տրվի անդորրության պահպանումին աչալուրջ հըսկելու համար»[33]։

31 Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 262։
32 Ըստ «Հուսաբերի», 19 հուլիսի 1924։



Կատարելով Զաղլուլի հրամանը, Նեսիմը հայտարարել է, որ «չարամիտ անձերու կողմե մասնավոր նպատակներով հերյուրված էր» ոճրագործի հայ լինելը և ավելացրել. «Այդ չարամիտները այլևս չպիտի կրնան իրենց գործը շարունակել։ Հայերը խաղաղասեր ժողովուրդ մըն են, որ այս երկրին ծառայություն մատուցած են միշտ իրենց աշխատասիրությամբ, գիտությամբ և ճարտարվեստով»[34]։ Իր հերթին, պատասխանելով եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ Գուշակյանի ցավակցական հեռագրին, Զաղլուլը նշել է. «Խորապես զգացվեցա զայրույթին և սոսկումին, ինչպես նաև ցավակցական այն արտահայտությանց համար, զորս հաճած էիք հայտնել ինձ եգիպտահայ գաղութին անունով, այն հարձակումին առթիվ, որուն ենթարկվեցա այս առավոտ. կխնդրեմ ընդունիլ և հաղորդել բովանդակ եգիպտահայության իմ երախտագիտությունը»[35]։ Կահիրեի և Ալեքսանդրիայի հայկական եկեղեցիներում այդ հեռագիրը կարդացվել է «ի ներկայության խուռն բազմության» և պատարագ մատուցվել Սաադ Զաղլուլի «շուտափույթ ապաքինման համար»[36]։

Պետք է նաև ընդգծել, որ արաբական մամուլի որոշ օրգաններ արեցին հնարավոր ամեն ինչ բորբոքված հակահայ կրքերը հանդարտեցնելու համար։ «Երկու ոճիրները» խորագրով առաջնորդողում «ալ-Ահրամը» նշել է, որ Սաադ Զաղլուլի դեմ մահափորձը և այն հայերին վերագրելու փորձը «երկու նույնքան ծանր ոճիրներ են»[37]։ Իսկ «Մարս» թերթը գրել է. «Եգիպտացի ժողովուրդը մոտեն տեղյակ չըլլալով հայոց ազգային ձգտումներուն և անոնց քաղաքական համոզումներուն, թերևս մեղադրելի չէ, երբ կհավատա այն հակահայ տարաձայնություններուն, զորս կարգ մը դավադիրներ հրապարակ կնետեն ատենե ատեն մը իվեր։ Եթե եգիպտացին ճանչնար հայ իրականությունը, եթե մոտեն ուսումնասիրեր հայուն բաղձանքը, եթե գոնե կարդար եգիպտական վերածնության առթիվ հայկական մամուլի արտահայտությունները, ապահովաբար պիտի համոզվեր, թե հայը անկարող է ձեռք վերցնել Եգիպտոսի այն մեծ զավակին վրա, որ հերոսական կեցվածք ունեցավ Եգիպտոսի նվիրական դատին մեջ...։ Մենք համոզված ենք, թե այս երկրին թշնամիները

33 «Արև», 18 հուլիսի 1924։
34 Ըստ «Հուսաբերի», 31 հուլիսի 1924։
35 «Արև», 15 հուլիսի 1924։
36 Նույն տեղում։
37 «Արև», 19 հուլիսի 1924։

ոչ թե հայերն են, այլ անոնք որ հայու նկատմամբ սուտ լուրեր կտարածեն: Որովհետև այս շինծու տեղեկություններով անոնք ծառայություն կընեն այն օտարականին (Անգլիային—Հ. Թ.), որ իր սեփական գիրքին մեջ պատեհ առիթ կորոնե մահացնելու համար Եգիպտոսի արդար պահանջներուն իրագործումը»[38]: Մահափորձից անմիջապես հետո «Եգիպտական ուսանողների միություն» հրապարակած հայտարարությունում ասված էր. «Ոճրագործը հայ չէ, այլ եգիպտացի»[39]:

Այդ և մյուս բազմաթիվ հայտարարությունների նպատակն էր հերքել 1919 թվականի տխուր իրադարձությունների առիթով հայերի հասցեին կատարված անհեթեթ վերագրումները: Այդ առումով առավել բնորոշ են Ալեքսանդրիայի «ալ-Միզպահ» թերթի հետևյալ տողերը. «Մենք հայերը մեր ազգին եղբայրակից համարելու պարտականության ներքև ենք, որովհետև անոնք այս երկիրը կնկատեն իրենց հայրենիքը, երբեք չեն ջանացած երկրի պարտավորություններեն խուսափիլ, օտար պաշտպանություններ ձեռք բերելով: ... Այս ազնիվ ժողովուրդին պատմությունը սերտիվ կապված է եգիպտական անկախության հետ... սկիզբեն մինչև այժմ»[40]:

Այնուամենայնիվ եգիպտական բուրժուազիան շարունակեց պայքարը «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների դեմ: Այդ պայքարի հետևանքով, նախ և առաջ, տապալվեց եգիպտահայերի քաղաքացիության հարցը:

1920-ական թվականներին, ինչպես հայտնի է, Թուրքական կառավարությունը հպատակության իրավունքից զրկեց արտասահմանում գտնվող օսմանյան հպատակ հայերին: Այդ պայմաններում եգիպտական քաղաքացիությունը կենսական նշանակություն ուներ գաղութի «ստվար մեծամասնության»՝ ավելի քան 10.000 նախկին օսմանյան հպատակ հայերի համար: Եգիպտական օրենքները սահմանափակում էին ինչպես օտարահպատակների, այնպես էլ «անքաղաքացի» նախկին օսմանահպատակների իրավունքները՝ մշտական բնակության, աշխատանքի և այլ հարցերում[41]:

[38] «Հուսաբեր», 19 հուլիսի 1924:

[39] «Արև», 19 հուլիսի 1924:

[40] Ըստ «Արևի», 12 օգոստոսի 1924:

[41] Մինչև բրիտանական տիրապետությունը «տեղական հպատակ» և օսմանահպատակ եգիպտացիները ունեին միևնույն պարտավորությունները և իրավունքները: Նրանց սահմանազատելու առաջին փորձը կատարվեց 1883 թ. մայիսի 1-ի օրենքով, որով ընտրելու իրավունք տրվեց միայն «տեղական հպատակ» եգիպտացիներին: Առավել ար-



1929 թ. փետրվարի 27-ին հրապարակվեց եգիպտական հպատակության կամ քաղաքացիության նոր օրենքը: Եգիպտական «լիիրավ» քաղաքացի էին համարվում, նախ, արքայական ընտանիքի անդամները, երկրորդ՝ ըստ 1900 թ. հունիսի 29-ի դեկրետի առաջին հոդվածի եգիպտացի համարվածները[42] և օսմանյան այն հպատակները, որոնք առ 1914 թ. նոյեմբերի 5-ը, այսինքն Թուրքիայի պատերազմի մեջ մտնելու օրը, Եգիպտոսում էին բնակվում և շարունակել էին այնտեղ բնակվել մինչև քաղաքացիության օրենքի հրապարակումը: Քաղաքացիության օրենքի երրորդ հոդվածը վերաբերում էր օսմանյան այն հպատակներին, որոնք 1914 թ. նոյեմբերի 5-ից հետո էին հաստատվել Եգիպտոսում և շարունակում էին այնտեղ բնակվել մինչև քաղաքացիության օրենքի հրապարակումը: Չորրորդ հոդվածը վերաբերում էր նրանց, ովքեր թեև 1914 թ. նոյեմբերի 5-ից առաջ մշտական բնակություն էին հաստատել Եգիպտոսում, բայց այնտեղ չէին մնացել մինչև այդ օրենքի հրապարակվելը: Այդ երկու հոդվածների ներքո ընկած օսմանյան հպատակները, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում հայերը, եգիպտական քաղաքացի չէին համարվում և պարտավոր էին օրենքի հրապարակումից հետո մեկ տարվա ընթացքում գրավոր դիմում ներկայացնել ներքին գործերի մինիստրությանը, որպեսզի «եգիպտական ազգությունը ընդունած նկատվեին», իսկ դիմում չներկայացնելու կամ մերժվելու դեպքում կարող էին

մատական միջոցառում էր պետական պաշտոնյաներ նշանակելու և ազատելու վերաբերյալ 1883 թ. ապրիլի 10-ի օրենքում մտցված փոփոխությունը, որով պետական պաշտոններում ծառայելու իրավունք էր տրվում միայն եգիպտացիներին: Այդ փոփոխությունը սակայն համարվեց չափազանց խիստ և կատարվեց հետևյալ լրացումը. «Եգիպտացի են համարվում Եգիպտոսում ծնված և այնտեղ մշտական բնակություն հաստատած օսմանյան հպատակները, ինչպես և այն օսմանյան հպատակները, որոնք անընդհատ տասնհինգ տարուց ի վեր բնակվում են Եգիպտոսում»: Եգիպտական իրավագետ Դահանը, ակնարկելով Նուբար փաշային, նշել է, որ այդ լրացումը կատարվեց, որովհետև կային ոչ եգիպտացի գործիչներ, որոնք, այնուամենայնիվ, «արժանի էին ուշադրության» (*Dahan, Const.* „Recherches sur la Nationalité des sujets ottomans établis en Egypte", տե՛ս „L'Egypte contemporaine", 1918, № 37, pp. 84—85, 88).

[42] Ըստ այդ օրենքի առաջին հոդվածի, եգիպտացի էին համարվում նրանք, ովքեր 1848 թվականի հունվարի 1-ից Եգիպտոսում մշտական բնակություն էին հաստատել և շարունակում էին այնտեղ բնակվել, երկրորդ՝ Եգիպտոսում մշտական բնակություն հաստատած օսմանյան հպատակների զավակները, երրորդ՝ Եգիպտոսում ծնված և այնտեղ բնակվող օսմանյան հպատակները, որոնք եգիպտական զինվորական օրենքի համաձայն ծառայել էին բանակում կամ փրկագին վճարել և, վերջապես, այն երեխաները, որոնց ծնողները անհայտ էին:

«Եգիպտոսեն հեռանալու ստիպման ենթարկվել»[43]։ Ստեփան Շահպազը գրել է. «Ասիկա բաց դուռ մըն է։ Հոն տեղ-տեղ կնշմարենք օրենսդիր մարմնի մասնավոր մտահոգությունը՝ համայնավար որևէ փրոփականտի դեմ»[44]։

Հայերին «եգիպտական ազգության շնորհվելուն» խոչընդոտում էին ռեակցիոն տարրերը։ Նրանք, ինչպես նշել է Ալեքսանդրիայի «Արաքս» թերթը, «մամուլի, թե այլ միջոցներով կջանային մեր մասին աննպաստ կարծիքներ տարածել և, մեզ իբր անպետ, նույնիսկ վնասակար ու ապերախտ տարր մը ներկայացնելով, մեր և մեզ ասպնջականություն ընծայող ազնիվ ժողովրդի միջև թշնամություն սերմանել»[45]։ Այդ ուղղությամբ ակտիվ գործում էին «ալ-Միսրա», «Ըը Իջիպշըն գազետ», «ալ-Բելադ» և մի շարք այլ թերթեր։ Նրանք գտնում էին, որ նախկին օսմանյան հպատակ արաբներին, պարսիկներին, թուրքերին պետք է քաղաքացիության իրավունք տալ, իսկ սպիտակ ռուսներին և հայերին՝ մերժել, որովհետև վերջիններս «պիտի գործածվին՝ անոնց կողմե, որոնք Եգիպտոսը տիրացնել կփափաքին՝ իբրև միջոց մաքառելու Եգիպտոսի ազգային հետապնդումներուն դեմ»[46]։ Այդ աղմուկը պատճառ դարձավ հայերի քաղաքացիության հարցի տապալմանը[47]։ Դա լրիվին համապատասխանում էր «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների դեմ պայքարող եգիպտական բուրժուազիայի շահերին։

Այսպիսով, 1920—1930-ական թվականներին հրատապ բնույթ էր ընդունել հայ-եգիպտական հարաբերությունների բարելավման հարցը։ Յուրաքանչյուր կազմակերպություն, շրջանակ կամ մամուլի օրգան առաջարկում էր իր դեղատոմսը։ Հոդվածներ էին հրապարակվում եգիպտական մամուլում, ուր նշվում էին անցյալում հայերի մատուցած ծառայությունները Եգիպտոսին, ոմանք էլ հույսեր էին կապում Ֆուադ թագավորի բարեհաճությանը։ Թեմական իշխանությունների թելադրանքով, Պողոս փաշան թագավորից ստացել է հայերին ողջունող մի հայտարարություն և այլն[48]։

Հայ-եգիպտական հարաբերությունները բարելավելու գործում զգալի ավանդ ունեն մի շարք արաբ գործիչներ։ Դրանցից առանձնապես պետք է հիշատակել Ահմեդ ալ-Սեիդ Աբդալ Սեուդին, որի «Եգիպտոսը և Հայաստանը» երկլեզվյան՝ արաբերեն և հայերեն գրքույկն արժանի է ուշադրության որպես եգիպտական առաջադիմական մտավորականության մտորումների դրսևորում։ Սեուդը իր գրքույկն անվանում է «կոթողն այն բարեկամության, անկեղծության և փոխադարձ զոհաբերության ոգիին, որ գոյություն ունի եգիպտացիների և հայերու միջև» և կոչ է անում ամրապնդելու այն եղբայրական ջերմ զգացումները, որ երկար դարերե ի վեր կան այդ երկու բարեկամ ազգերու մեջ»[49]։ Նա գրում է. «Հայերը գործունյա և աշխատասեր ազգ մըն են և հաճախ նրանց կրած հալածանքներուն պատճառը իրենց ճարպիկ ու ընդունակ ըլլալն է։ Անոնք հալածված են իրենց դրացիներեն, իրենց տիրող ազգերեն և նույնիսկ եգիպտացիներեն։ Ամեն անոնք, որոնք հայերու մասին աննպաստ արտահայտված են կամ այն է, որ հայերը երբեք չեն ճանչցած և կամ վճարված են՝ մասնավոր նպատակներով զանոնք վարկաբեկելու համար»[50]։

Սեուդը գտնում էր, որ անցյալում հայն ու արաբը հնարավորություն չեն ունեցել միմյանց լավ ճանաչելու, և առաջարկում էր կազմել «Հայ-եգիպտական ընկերակցություն մը, որուն պաշտոնը պիտի ըլլա հայերու և

---

[43] Ստեփան Շահպազ, Եգիպտական ազգության նոր օրենքը և իր մեկնաբանությունը, էջ 13։

[44] Նույն տեղում, էջ 15։

[45] «Արաքս», 18 ապրիլի 1931։

[46] Ըստ «Արևի», 16 ապրիլի 1932։

[47] Եգիպտահայերի քաղաքացիության հարցը վերստին արծարծվեց 1940-ական թվականների վերջերին, երբ հրապարակվեց № 160 դեկրետը, որով զգալիորեն դյուրացավ «եգիպտահպատակ դառնալը» («Արև», 25 հունվարի 1951)։ Սակայն ոչ բոլոր եգիպտահայերին հաջողվեց քաղաքացիության իրավունք ձեռք բերել... կուսակցական խտրականության հետևանքով։ Է. Բաբայանը գրել է. «Դաշնակցականները տարածեցին այն առասպելը, թե բոլշևիկությունը մեծ ավեր կգործե եգիպտահայության մեջ, ինչ որ վտանգ մը կկազմե Եգիպտոսի ապահովության համար. ուստի անոր առաջքը առնելու լավագույն միջոցն էր եգիպտահպատակություն տալ հայերուն մեջեն միմիայն անոնց, որոնք հակաբոլշևիկ իրենց կուսակցության վստահությունը կվայելեին և անոր բովեն կանցնեին»։ Բայց ամենից ավելի զարմանալին այն էր, որ եգիպտական իշխանությունները դաշնակցական գործիչներին հանձնարարեցին զբաղվել եգիպտահայերի քաղաքացիության գործով։ Կահիրեի «Նավասարդ» ակումբում հաստատվեց «մասնավոր դրասենյակ մը՝ հպատակության գրասենյակ» անունով։ Քաղաքացիության իրավունք տրվում էր միայն նրանց, ովքեր երաշխիք էին տալիս թեմական ընտրություններում դաշնակցության օգտին քվեարկելու (Է. Բաբայան, Ինքնակենսագրություն, էջ 131)։ Դա պատճառ դարձավ, որ եգիպտահայերի քաղաքացիության գործը մի անգամ ևս տապալվի։

[48] Տե՛ս «Արև», 7 նոյեմբերի 1927։

[49] «Արաքս», 21 դեկտեմբերի 1935։ Այդ և հաջորդ համարներում լույս է ընծայվել Սեուդի գրքույկի հայերեն բաժինը, որն արաբականի թարգմանությունն է։

[50] Նույն տեղում։

եգիպտացիներու միջև կապ ստեղծել ոչ միայն գրական կամ մտավորական, այլև առևտրական ու նյութական գետնի վրա»[51]: Ապա ընդգծելով տնտեսական կապերի նշանակությունը երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում, նա նշում է. «Հայերու առևտրական մարզին մեջ կատարածները գրել նշանակե գրել Եգիպտոսի ամենեն գլխավոր արհեստներու և արվեստներու պատմությունը, որոնցմե օգտված և իրենց օրապահիկը հայթայթած են միջակ դասակարգի պատկանող բազմահազար եգիպտացի արհեստավորներ ու գործավորներ»[52]: Վերջում, նշելով որ հայերը եգիպտացիների «ամենամոտիկ և անշահախնդիր բարեկամներն են», Սևուզը կոչ է անում արաբներին. «Մշակեցեք անոնց բարեկամությունը և ջանացեք ընդլայնել զայն անհատական կամ հավաքական, առևտրական կամ գրական և այլ գետնի վրա. որովհետև ով որ հայու հետ գործ ունի երբեք վնաս չի տեսներ, ըլլա նյութական, ըլլա բարոյական տեսակետով»[53]:

Եգիպտական առաջադեմ գործիչները, անկասկած, նպաստում էին հայկական գաղութի շուրջը կուտակված ծանր մթնոլորտի փարատմանը, սակայն ամբողջովին չվերացնելով այն բացասական դերը, որ բրիտանական իմպերիալիզմի և ռեակցիոն կառավարողների ներքին քաղաքականությունը կատարում էր հայ-եգիպտական հարաբերություններում:

Այսպիսով, «ոչ-ազգային» կապիտալի դեմ եգիպտական բուրժուազիայի պայքարը ցայտուն արտահայտություն էր գտնում նաև հասարակական-քաղաքական կյանքում: Մինչ առավել ռեակցիոն տարրերը փորձում էին թալանի և կոտորածների միջոցով ներքին շուկայից դուրս մղել «ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչներին, պետական իշխանությունները գործադրում էին խաղաղ միջոցներ: Տապալելով եգիպտահայերի քաղաքացիության հարցը, նրանք հայ կապիտալիստներին զրկում էին տնտեսական արդյունավետ մրցակցության հնարա-

[51] «Արարատ», 25 հունվարի 1936:

[52] Նույն տեղում:

[53] Նույն տեղում: Սևուզը գովաբանում է եգիպտահայերի բարեմասնությունները, նրանց համարում օրինապահ և արժանապատվության տեր քաղաքացիներ: «Չեք հանդիպիր,— գրել է նա,— այնքան հսկա գաղութին մեջ մեկ հատիկ հայ մուրացիկի և կամ գողի, ոճրագործի, խարդախի, զեղծարարի. եթե պատահաբար ասանկ բան մը պատահի անհասկնալի աստիճանի տարօրինակ անակնկալ մը կ՚ըլլա: Պատճառն այն է, որ հայը կապրի իր ճակատին արդար քրտինքով և պարկեշտ միջոցներով» (Նույն տեղում):



վորությունից: Արդարև, օտարահպատակները և «անքաղաքացի» դարձած օսմանյան նախկին հպատակ հայերը մշտապես գտնվում էին այս կամ այն պատճառով Եգիպտոսից արտաքսվելու վտանգի տակ: «Ոչ-ազգային» կապիտալի դեմ սանձազերծված պայքարը բացասաբար էր անդրադառնում հայ-եգիպտական հարաբերությունների վրա: Այդ պայքարից առավելագույն չափով օգտվում էին բրիտանական գաղութարարները:

«Ոչ-ազգային» կապիտալի ներկայացուցիչների դեմ եգիպտական բուրժուազիայի պայքարի հետևանքն էր նաև ոչ-մուսուլմանական համայնքների արտոնությունների սահմանափակումը:

## 2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

Ազգային սահմանադրությունը և նրանից ածանցված վարչական հրահանգը լուսավորչական համայնքի արտոնություններն ապահովում էին այնքան ժամանակ, որքան Եգիպտոսը գտնվում էր թուրքական գերիշխանության ներքո: 1914 թ. նոյեմբերի 5-ին, երբ Եգիպտոսը, հարելով Անտանտի տերություններին, խզեց կապերը Թուրքիայի հետ, «այդ նույն օրը եգիպտահայ գաղութը ինքնին զրկվեցավ արդեն իրավական իր այդ միակ կռվաններեն»[54]: Սակայն պետական իշխանությունները, հաշվի առնելով պատերազմից առաջացած առանձնահատուկ պայմանները, «ցնոր տնօրինություն» պահպանեցին «կարգ մը համայնքներու կարգին հայ համայնքին ալ օսմանյան օրենքներով ճանաչված առանձնաշնորհումները»[55]:

1922 թ. Եգիպտոսի թեկուզ և ձևական անկախության հռչակումով հրամայողական դարձավ լուսավորչական համայնքի նախկին, օսմանյան ֆերմաններով կյանքի կոչված իրավական ստատուսը վերանայելու, նրան նոր, եգիպտական օրենքների համապատասխան կանոնադրությամբ օժտելու անհրաժեշտությունը: Արխիվային մի վավերագրում ասված է. «Կառավարությունը,... առաջնորդի կամ տեղապահի պերաթը ընդունելով հանդերձ, շատ քաղցր աչքով չէ նայած Թուրքիո կողմեն վավերացված մեր Սահմանադրության օրենքին՝ «պետության մեջ պետություն» գաղափարին իրագործումը նկատելով զայն, և մինչ փափաք հայտնած, հանձնարարություն ըրած է, որ Եգիպտոսի հայ առաջնոր-

[54] «Հուսաբեր», 10 ապրիլի 1926:

[55] «Արև», 10 մարտի 1932:

դարանը իր նոր և ուրույն կանոնագրությունը կազմե, անկախ Պոլիսեն և իր վավերացումին ենթարկե զայն...»[56]։

Չնայած դրան, Թեմական իշխանությունները փութկոտություն չէին ցուցաբերում նոր կանոնագրություն ստեղծելու հարցում։ Եգիպտահայոց առաջնորդը գրում էր. «Առաջնորդարանը, թեև ձեռնարկներ բրած է նոր կանոնագրության կազմելու, բայց բնականաբար չէ ուզած գործնականացնել իր աշխատությունը. վասնզի, նախ չէ ուզած ինքզինք անկախ հրատարակել Պոլիսեն, հետո պատերազմի միջոցին զգուշացած է նոր կանոնագրություն խմբագրել և վավերացնել տալե, խորհելով որ գուցե այդ կերպ վնասած կըլլանք իրավասություններուն Հայաստանի հյուպատոսին, զոր այն ատեն կհուսայինք ընդհուպ ունենալ այստեղ։ Իսկ հիմակ նույնպես այդ մասին շատ փութկոտություն չենք ցուցներ, խոհեմություն համարելով սպասել...»[57]։ Նրանք սպասում էին անգլո-եգիպտական բանակցությունների ավարտին, հուսալով «ավելի նպաստավոր հանգամանքներ» ձեռք բերել, մանավանդ որ քննարկվող հիմնական «չորս կետերեն մին փոքրամասնությանց հարցն» էր[58]։

Կային առաջնորդարանը կաշկանդող նաև ուրիշ պատճառներ։ Դրանցից ամենակարևորն այն էր, որ հնարավոր չէր Թեմական համագումար կազմել կանոնագրության նախագիծը քննարկելու համար։ «Իբրև վերջին միջոց,—ասում է եգիպտահայոց առաջնորդը,—պահ մը խորհեցանք կազմել իսկույն կանոնագրությունը և ներկայացնել կառավարության, բայց ատոր համար պետք է երկու Թեմականներուն համագումարը, մինչ Ալեքսանդրիայինը ապօրինի է և անվավեր, և կարելի չէ որ Կահիրեինը գումարվի անոր հետ»[59]։

Մինչ այդպիսի նկատառումներով ձգձգվում էր նոր կանոնագրության պատրաստությունը, 1926 թ. ապրիլին եգիպտական կառավարությունը դեկրետով մեջլիս հասբիներին (պետական հանձնաժողովներին) փոխանցեց եգիպտահայ լուսավորչական համայնքի ժառանգության հարցերով զբաղվելու իրավունքը[60]։ Այդ կարգադրությունը թեև հիմնավորվում էր ժառանգության գանձերում տեղ գտնող ապօրինություններին վերջ դնելու, Եգիպտոսում ձեռք բերված հարստությունների՝ ժառանգա-

[56] ԳԱԹ արխիվ, Արշակ Չոպանյանի ֆոնդ, բ. 1, վ. 1593։

[57] Նույն տեղում։

[58] Նույն տեղում։

[59] Նույն տեղում։

[60] Տե՛ս «Հուսաբեր», 10 ապրիլի 1926։



կան իրավունքով արտասահման հոսքն արգելելու և նմանաբնույթ այլ նկատառումներով, սակայն իրականում հետևանքն էր այն պայքարի, որ եգիպտական բուրժուազիան մղում էր կապիտուլյացիաների ռեժիմի. և այս կամ այն չափով նրա հետ առնչվող ոչ-մուսուլմանական համայնքների ներքին ինքնավարական իրավունքների դեմ։

Սակայն ռեակցիոն մամուլը պահանջում էր ծայրահեղ միջոցառումներ։ Նշելով, որ կապիտուլյացիաների շնորհիվ տարբեր համայնքներ «պետության մեջ պետություն ստեղծած են իրենց սեփական օրենսդրությամբ», եգիպտական «ալ-Բելաղ» թերթը գրում էր. «Եթե պիտի հանդուրժենք օտար քափիթուլասիոններուն մինչև այն օրը, երբ պիտի հաջողինք պետություններեն անոնց վերջնական ջնջումը ձեռք բերել, ինչ բան կարգելե մեզ քանդելու այդ փոքր պետությունները»։ Ապա, ակնարկելով հայկական համայնքին, «ալ-Բելաղը» կոչ էր անում առաջին հերթին զբաղվել այն «պետություններով», որ «օտարի պաշտպանության չեն վայելեր», և նրանց «անձնական օրինավիճակի գործերը կցել քաղաքացիական դատարաններուն, առնել իրենց սեփական օրենսդրությունը և վագըֆներուն վարչությունը»[61]։

1931 թ. եգիպտական կառավարությունը նոր գործնական միջոցներ ձեռնարկեց ոչ-մուսուլմանական համայնքների իրավական ստատուսը վերանայելու ուղղությամբ։ Արդարադատության մինիստր Ալի Մահերի նախագահությամբ ստեղծվեց «ոչ-իսլամներու սահմանադրական օրենքները» ուսումնասիրող հատուկ հանձնաժողով[62], որի եզրակացությունները հիմք պետք է ծառայեին ոչ-մուսուլմանների անձնական իրավունքի վերաբերյալ նոր օրենքին։ Այդ հանձնաժողովը ոչ-մուսուլմանական համայնքներից պահանջեց գրավոր մանրամասն զեկուցել իրենց անձնական իրավունքի կանոնների, դատական մարմինների, դատավարության ձևերի, վճիռներ կայացնելու սկզբունքի, ամուսնալուծման պայմանների, ժառանգության գործեր վճռելու եղանակի, խառն ամուսնությունների դեպքում համայնքային դատարանի ունեցած իրավասությունների և այդ կարգի այլ հարցերի մասին[63]։ «Արևի» հաղորդմամբ, եգիպտական կառավարությունը կամենում էր ամուսնութենեն առաջ եկած վեճերը հանձնել մասնավոր դատարանի մը (տեղական դատարաններին կից), որուն պիտի անդամակցին ... նաև դատարան դիմող

[61] «Հուսաբեր», 6 սեպտեմբերի 1926։

[62] Տե՛ս «Արև», 5 հուլիսի 1931։

[63] Նույն տեղում։

անձին պատկանած համայնքին երկու աշխարհական անդամներ»[64]։ Եվ գործը տեղից շարժվեց։ Ազգային իշխանությունները արագ պատրաստեցին համայնքային կանոնադրության նախագիծը, բայց չներկայացրին, որովհետև անգլո-եգիպտական բանակցությունները խզվեցին և եգիպտական սահմանադրությունը վերացվեց։

1931—1936 թթ. եգիպտական բուրժուազիան գործնական քայլեր չկատարեց ոչ-մուսուլմանական համայնքների արտոնությունները սահմանափակելու ուղղությամբ։ Նրա ներկայացուցիչները նոր, ձգձգվող ապարդյուն բանակցություններ էին վարում բրիտանական գաղութարարների հետ։ 1936 թ. Վաֆդի գլխավորած կառավարությունը, վախենալով ժողովրդական ելույթների աճից, ստորագրեց անգլո-եգիպտական անիրավահավասար պայմանագիրը, իսկ 1937 թ.՝ Մոնտրյոյի կոնվենցիան, որով որոշվեց կապիտուլյացիաները վերացնել ոչ ուշ, քան մինչև 1949 թվականը։ Այդ փաստաթղթերով ապացուցվեց, որ բրիտանական գաղութարարները, սակարկության առարկա դարձնելով ոչ-մուսուլմանների իրավունքները, իրականում պաշտպանում էին Եգիպտոսում գործող անգլիական ընկերությունների շահերը։ Այդ լույսի ներքո վերագնահատելով իր դիրքերը, եգիպտահայոց առաջնորդարանը կարճ ժամկետում պատկան իշխանություններին հանձնեց թեմական կանոնադրության նախագիծը, որը, սակայն, չհամապատասխանելով եգիպտական օրենքներին, չարժանացավ ուշադրության, մնաց «առանց որևէ արդյունքի»[65]։

Համաշխարհային պատերազմի ավարտին Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական համագումարում ընտրվեց նոր հանձնաժողով, որը պատրաստեց «նոր, պատշաճ և ընդունելի (համաձայն անկախ և վեհապետական Եգիպտոսի օրենքներուն) կանոնագիր մը»[66], և 1945 թ. նոյեմբերի 20-ին ներկայացրեց համապատասխան՝ եգիպտական իշխանություններին։ Այդ կանոնադրությունը հավանության արժանացավ որոշ փոփոխություններով[67]։ Փոփոխվեցին այն հոդվածները, որ վերաբե-

[64] «Արև», 10 մարտի 1932։

[65] «Ջահակիր», 1 հունվարի 1949։

[66] «Ջահակիր», 15 հունվարի 1949։ Հանձնաժողովի կազմում էին Մ. Գույումճյանը, Ճ. Զաքրը և Խ. Սաղիկյանը։

[67] Մինչև օրս էլ վեճ կա կանոնադրության «վավերացված», թե հավանության արժանացած լինելու մասին։ Մեր կարծիքով, այդպիսի վեճը կարող է միայն նսեմացնել եգիպտահայերի ներքին ինքնավարության հիմք հանդիսացող այդ փաստաթղթի նշանակությունը, փաստաթուղթ, որը շուրջ երեսուն տարին իվեր գտնվում է ուժի մեջ։



րում էին քաղաքական ժողովի և անձնական իրավունքի հանձնաժողովի կազմին։ Եգիպտական իշխանությունների պահանջի համաձայն այդ մարմիններին մասնակցելու իրավունք տրվեց միայն թեմական ժողովի անդամներին։ Միաժամանակ որոշվեց 18-ից 24 դարձնել յուրաքանչյուր վիճակի գավառական ժողովի անդամների թիվը։ Պատկան իշխանությունների պահանջով վերաշարադրվեցին նաև ընտրելու և ընտրվելու իրավունքի վերաբերյալ հոդվածները։ Այդ իրավունքից կարող էին օգտվել ոչ թե եգիպտաբնակ, այլ միայն եգիպտահպատակ («մյութավաթանին») հայերը։

1946 թ. կանոնադրությունն[68] Ազգային սահմանադրության հիմնական դրույթների շարադրանքն է՝ զգալի հապավումներով և մասնակի լրացումներով։

Ըստ այդ կանոնադրության, եգիպտահայ թեմը կազմում են Կահիրեի և Ալեքսանդրիայի շրջանակները կամ վիճակները։ Առաջինի կենտրոնը Կահիրեն է, որին ենթակա են Վերին Եգիպտոսում՝ Ղալիուբիե, Մենուֆիե, Շարկիե նահանգներում և Սուեզի ջրանցքի շրջանում ապրող հայերը։ Երկրի մնացյալ վայրերի հայերն ենթարկվում են Ալեքսանդրիայի վիճակին։ Յուրաքանչյուր վիճակ ունի ուրույն ազգային վարչամեքենա, որը կազմում են թեմական կամ գավառական ժողովը, քաղաքական ժողովը, կրոնական, նվիրատվությանց կամ ազգային տուրքի և անձնական իրավունքի հանձնաժողովները։ Կահիրեի և Ալեքսանդրիայի գավառական ժողովների համատեղ գումարումով ստեղծվում է թեմական համագումարը, որը համարվում է թեմի գերագույն օրգանը։

Թեմակալ առաջնորդը հանդիսանում է եգիպտահայ լուսավորչական համայնքի կրոնապետը։ Նրա ընտրությունը կատարվում է երկու վիճակների քաղաքական ժողովների և կրոնական հանձնաժողովների համատեղ նիստում։ Ընտրվողն ունի առաջնորդական տեղապահի իրավունք, մինչև նրա ընտրության հաստատումը՝ եգիպտական կառավարության կողմից[69]։

Առաջնորդի հրավերով և նրա նախագահությամբ գումարվում են թեմական համագումարը, յուրաքանչյուր վիճակի թեմական և քաղա-

[68] Այդ կանոնադրությունը տե՛ս Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 302—313։

[69] Միապետության տարիներին, համաձայն եգիպտական սահմանադրության 158-րդ հոդվածի, թեմակալ առաջնորդների ընտրությունը հաստատվում էր թագավորի հրամանագրով։

քական ժողովները, նրա կողմից է նշանակվում յուրաքանչյուր վիճակի առաջնորդական փոխանորդը և այլն, սակայն նա մնում է այդ ժողովների որոշումները գործադրողի դերում։ Օրինակ, առաջնորդական փոխանորդ նշանակելիս, թեմակալը պարտավոր է նախօրոք ստանալ համապատասխան վիճակի քաղաքական ժողովի հավանությունը։

Թեմական ժողովը համապատասխան վիճակի գերագույն մարմինն է։ Այն կազմվում է ժողովրդական քվեարկությամբ ընտրված 24 աշխարհական և առաջնորդի կողմից նշանակված 2 կրոնական անդամներից։ Ընտրելու իրավունք ունի 21, ընտրվելու՝ 30 տարին լրացած հայ լուսավորչական համայնքի յուրաքանչյուր անդամ, որն եգիպտական քաղաքացի է, ազգային տուրքը վճարած է և դատարանական տույժի ենթարկված չէ։ Թեմական ժողովն ընտրվում է ութ տարվա համար։ Առաջին քառամյակի վերջում տեղի են ունենում մասնակի կամ լրացուցիչ ընտրություններ՝ համալրելու համար նրա վախճանված, հրաժարված կամ վիճակով[70] դուրս մնացած անդամներին։ Թեմական ժողովը գումարվում է տարին մեկ, անհրաժեշտության դեպքում երկու կամ ավելի անգամ։ Նրա իրավասությունների մեջ են մտնում՝ ընտրել քաղաքական ժողովը, քննարկել նրա հաշվետվությունը, ինչպես նաև կազմել անձնական իրավունքի, նվիրատվությանց և կրոնական հանձնաժողովները։ Ինչպես թեմակալ առաջնորդի և նրա փոխանորդի, այնպես էլ քաղաքական ժողովների և անձնական իրավունքի հանձնաժողովների անդամների ընտրությունն ուժի մեջ մտնելու համար պետք է ենթարկվի Եգիպտոսի ներքին գործերի մինիստրության հաստատմանը։

Թեմական համագումարը գումարվում է տարին մեկ անգամ՝ առաջնորդի հրավերով, կարող է գումարվել նաև արտահերթ երկու թեմական ժողովների անդամների մեծամասնության կամ քաղաքական ժողովներից մեկի պահանջով։ Նրան է պատկանում եկեղեցական ժողովների պատգամավորներ ընտրելու, թեմական կանոնադրությունը վերանայելու, ազգապետական կալվածների առ ու վաճառքը թույլատրելու և երկու վիճակների ընդհանուր շահերը շոշափող այլ խնդիրներ քննարկելու իրավունքը։

Քաղաքական ժողովը համապատասխան վիճակի գործադիր իշխանությունն է։ Այն, որպես կանոն, բաղկանում է գավառական ժողովի 7

[70] Ըստ կանոնադրության, չորս տարին մեկ անգամ թեմական ժողովի անդամների կեսը համալրվում է նոր անձանցով։ Նրա անդամները վիճակ են քաշում որոշելու, թե ով պետք է զիջի իր տեղը։ Այդ կարգը սահմանված էր Ազգային սահմանադրությամբ։



աշխարհական անդամներից, ընտրված փակ քվեարկությամբ՝ երկու տարվա համար, և հաշվետու է միայն գավառական ժողովին։ Այդ ժողովը ունի ամեն իշխանություն համայնքի ինչքերն ու նյութական և բարոյական շահերը, ինչպես նաև կրթական և մշակութային հաստատությունները վարելու։ Նրա իրավասությունների մեջ են մտնում համապատասխան վիճակի ազգային հաստատությունների տարեկան բյուջեի կազմելը, ազգապատկան կալվածներն արդյունավորելը, ազգային տուրքի գանձելը, տարբեր հոգաբարձությունների անդամներ նշանակելը, նրանց գործունեության վերահսկելը և այլն։ Հոգաբարձությունները քաղաքական ժողովի օժանդակ մարմիններ են, որոնք զբաղվում են դպրոցների, եկեղեցիների, գերեզմանատների, կալվածների և աղքատների հոգատարությամբ։

Կրոնական հանձնաժողովը, որին անդամակցում են համապատասխան վիճակի բոլոր կղերականները, քննարկում է եկեղեցական ու կրոնական խնդիրներ։ Նվիրատվությանց հանձնաժողովը, որը կազմված է գավառական ժողովի երեք անդամներից, զբաղվում է ազգային տուրքի գանձումով։ Անձնական իրավունքի հանձնաժողովը կարգավորում է համայնքի անդամների ընտանեկան տարաձայնությունները՝ Եգիպտոսում գործող օրենքների համաձայն։ Գործում են անձնական իրավունքի երեք՝ հաշտարար, նախագահ և վերաքննիչ հանձնաժողովներ կամ ատյաններ։ Առաջինը, որ բաղկանում է թեմակալ առաջնորդի կողմից նշանակված երեք քահանաներից, իրավունք ունի վեճերը կարգավորել կողմերի համաձայնությամբ։ Չկարգավորվելու դեպքում, գործը հղվում է նախագահ ատյանին, որը կազմվում է մեկ եկեղեցականից և երկու ամուսնացած աշխարհականներից։ Նրա արձակած վճիռը կարող է վերանայվել վերաքննիչ ատյանում, որին նախագահում է առաջնորդական փոխանորդը։ Վերաքննիչ ատյանի վճիռը համարվում է վերջնական և, շահագրգռված կողմի պահանջով, կարող է գործադրվել պետական-վարչական ճանապարհով։

Այսպիսով, եգիպտահայ նոր կանոնադրությունում Ազգային սահմանադրության բավական բարդ ժողովական համակարգը պարզեցված է, մի շարք խորհուրդներ վերացված են կամ փոխարինված նորերով և, որ ամենակարևորն է, ուժեղացված է եգիպտական իշխանությունների վերահսկողությունը՝ գաղութի ներքին գործերի վրա։ Նախկինի համեմատությամբ, նոր կանոնադրությունը զգալի չափով սահմանափակում է լուսավորչական համայնքի արտոնությունները։

* * *

Անգլո-եգիպտական հակասությունների սրումից ծագած բարդությունները, որոնց հետ հաճախ ակամա կապվում էր նաև հայերի անունը, պատճառ դարձան, որ 1919—1921 թթ. Եգիպտոսի դռները փակվեն Թուրքիայից փախչող հայերի առաջ։ Այդ տեսակետից բնորոշ է «Բոնոմ» շոգենավի՝ ապաստան խնդրող 217 թուրքահայ գաղթականների նկատմամբ բրիտանական իշխանությունների անմարդկային վերաբերմունքը։ Կահիրեի Թեմական իշխանության դիմումը գեներալ Ալլենբիի «մարդասիրական զգացմանցը» ոչ մի դրական արդյունք չավեց և... շոգենավը Ալեքսանդրիայում ապարդյուն սպասելուց հետո մեկնեց այլուր...[71]։ 1922 թվականի հունվարից արգելքը վերացվեց, սակայն «գաղթականաց Եգիպտոս մուտքը» արտոնվում էր որոշ կաշկանդիչ պայմաններով։ Նոր օրենքով, Եգիպտոսի մշտական բնակիչները կարող էին իրենց ազգականների համար մուտքի իրավունք ձեռք բերել, եթե «իրենց գիրքին համեմատ 50-են 1.000 ոսկվո երաշխավորության գումար մը ի պահ» դնեին բանկում[72]։

1923 թ. Կահիրեի «Հայկական սրահում» լսելով Վահան Թեքեյանի զեկուցումը՝ Հունաստանի և Սիրիայի որբանոցների վիճակի մասին, եգիպտահայ Թեմական իշխանությունները որոշում ընդունեցին որոշ թվով որբեր տեղափոխել Եգիպտոս, և որպես որդեգիր հանձնել մեծատունների խնամքին։ 1923 թ. սկսվեց և մինչև 1927 թ. վերջերը շարունակվեց որբերի շարժումը դեպի Եգիպտոս։ Կահիրե և Ալեքսանդրիա տեղափոխվեցին 806 աղջիկ և մոտավորապես 300 տղա որբեր[73]։ Որ-

[71] «Արև», 18 նոյեմբերի 1921։ Հայ գաղթականներ չընդունելու հրահանգ են ունեցել նաև Պաղեստինի իշխանությունները։ Ի պատասխան Բեյրութի Հայ ազգային միության հեռագրին, որով Երուսաղեմի հայոց պատրիարքարանից խնդրվում էր դիմումներ կատարել «Կիլիկիո կողմերեն եկող հայերու Պաղեստին մուտքը արտոնվելու համար», Եղիշե պատրը. Դուրյանը հաղորդել է. «Այս մասին մեր, ինչպես նաև տեղվույս հեյլեն հյուպատոսարանի կողմե կատարված դիմումները բազմացված արդյունքը չավին դժբախտաբար, կառավարական նոր օրենքի մը բացորոշ տրամադրության համաձայն նոր գաղթականներու Պաղեստին մուտքը թույլատրված չըլլալով» (ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, ֆ. 5, բ. 1, վ. 4)։

[72] «Արև», 18 դեկտեմբերի 1922։

[73] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 300—301 և «Արև», 1 հունիսի 1927։ Ըստ Եգիպտոս տեղափոխված որբերի ընդհանուր թիվը հասնում էր մինչև 2.500-ի, այն դեպքում, երբ ազգային առաջնորդարանի և որբախնամ կազմակերպությունների հաղորդումներում, որոնց հավաստիությունը կասկածելի չէ, խոսվում է ընդամենը 1000—1200 որբերի մասին։ Ի դեպ, եգիպտական կառավարությունը, ընդառաջելով ազգային առաջնորդարանի դիմումին, թույլատրած է եղել միայն 500 որբերի մուտքը Եգիպտոս։



բերին ուղեգրում էին ոչ միայն հայերը[74]։ Որդեգրումը կատարվում էր ազգային առաջնորդարանի և որդեգրող կողմի միջև գրավոր համաձայնությամբ։ Դա, իհարկե, իսկական որդեգրման ակտ չէր։ Որդեգիրները, անհրաժեշտ բացառությամբ, պետք է դառնային տնային ծառայողներ։ Եթե հայ ժողովրդի դժբախտացած զավակներից ոմանք բախտավոր եղան, ապա մյուսներն ենթարկվեցին անհոգի շահագործման։ Այդ պատճառով, 1925 թ. Շուբրայում հաստատվեց Բույն հայր կամ տղաների հանրակացարանը, որտեղ համախմբվում էին որդեգրումից հրաժարվողները՝ ազգային առաջնորդարանի, Հ.Բ.Ը. միության և բարեսիրական մարմինների վերահսկողության ներքո։ 1928—1929 թթ. Կահիրեում և Ալեքսանդրիայում հանրակացարաններ ստեղծվեցին նաև որբուհիների համար։

Այսպիսով, 1920-ական թվականներին ցեղասպանությունից ազատված զգալի թվով գաղթականներ և որբեր ապաստան գտան Եգիպտոսում։

1927 թվականի պետական մարդահամարի տվյալներով Եգիպտոսում կային 13.883 հայեր։ Այդ թիվը չի համապատասխանում իրականությանը, որովհետև մարդահամարի հիմք է ընդունվել ոչ թե ազգային պատկանելությունը, այլ հպատակությունը, և զգալի թվով հայեր հաշվառման են ենթարկվել օտարահպատակների, մասնավորապես թուրքական հպատակների հետ։ Այդ մասին է վկայում թեկուզ այն փաստը, որ ոչ մի հայ հաշվառված չէ թուրքահպատակների բաժնում, այն դեպքում, երբ Եգիպտոսում կային 5—6.000 թուրքահպատակ հայեր։ Իրավացիորեն նշվել է. «Գումարը չի համապատասխանում եգիպտահայերի իրական թվին, շնորհիվ «հայ» և «թրքահպատակ» զլուխներու շփոթության, ինչպես նաև այն փաստին, որ բազմաթիվ հայեր ընդհանրապես արձանագրված չեն։ Կենթադրենք, որ այս թիվը (թուրքահպատակների թիվը, ըստ մարդահամարի՝ 9.284—Հ. Թ.) կվերաբերվի գլխավորապես թրքահպատակ հայերու։ Հայեր կան անշուշտ նաև «զանազան»-ներու

[74] Տե՛ս, «Արև», 24 հունիսի 1925։ Թերթը հաղորդում է, որ 1924—1925 թթ. Եգիպտոս հասած որբերից 320-ը որդեգրվել են հայ, 20-ը ամերիկացի կամ անգլիացի, 1-ը արաբ, 1-ը հույն ընտանիքների կողմից։

(ըստ մարդահամարի՝ 29.089—Հ. Թ.) գլխի տակ։ Ինչպես նաև կան բազմաթիվ այլ հայեր, որոնք մարդահամարի թերի կազմակերպման հետևանքով բնավ ցուցակագրված չեն»[75]։ Իրականության մոտ են հայկական աղբյուրների տվյալները, թեև դրանք արդյունք են ոչ թե մարդահամարների, այլ ծխատեր քահանաների և ընտրական հանձնաժողովների հաշվառման։ Ըստ այդ աղբյուրների, 1919—1924 թթ. Եգիպտոսում բնակվում էին 20.000[76], 1926—1927 թթ.՝ 25.000[77], 1946—1947 թթ.՝ 35.000[78], 1952—1954 թթ.՝ 40.000[79] հայեր, որոնք հիմնականում տեղաբաշխված էին Կահիրեում և Ալեքսանդրիայում։

Կահիրեի հայության հիմնական զանգվածը հաստատված էր Բեյն ալ-Սուրեյնում, Շուբրայում և Հելիոպոլսում։ 1937 թվակիր արխիվային մի վավերագրում Բեյն ալ-Սուրեյնը բնութագրվում է որպես «հայաշատ կեդրոն»[80], որտեղ որոշվել է հայկական դպրոց հաստատել «200—250 աշակերտի» համար, սակայն հնարավոր չի եղել «հարմարագույն շենք մը» չգտնելու պատճառով[81]։ Շուբրայում հայերը զգալի չափով աճեցին առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ այնտեղ հաստատվեցին հայերին պատկանող արդյունաբերական և արհեստագործական ձեռնարկություններ։ Շուբրայում գործում էին հայ որբերի հանրակացարաններ, կուսակցական ակումբներ, գրադարաններ, ինչպես և Գալուստյան դպրոցի համանուն բաժանմունքը։ Բազմացավ նաև Հելիոպոլսի հայությունը։ 1924 թ. Շավարշյան դպրոցն ունեցավ սեփական շենք և վերանվանվեց Նուբարյան վարժարան՝ մեկենասի անունով։ 1931—1932 թթ. Հելիոպոլսում կառուցվեց հայ կաթոլիկների ս. Թերեզա եկեղեցին, իսկ 1953 թ.՝ հայ լուսավորչականների Ամենայն սրբոց մատուռը։ Ալեքսանդրիայում հայաշատ արվարձաններ էին Աբու Դարդարը, Ռամլեն և մի շարք այլ թաղեր, որտեղ գործում էին Հայկազնյան, Մխիթարյան և այլ դպրոցներ։ Փոքրաթիվ հայեր կային Զագազիգում, Գիզեում, Թանթայում և ներքին այլ քաղաքներում։

Պահպանվել են մի քանի տվյալներ եգիպտահայ հասարակության

[75] «Հուսաբեր», 19 մարտի 1931։

[76] Տե՛ս «Արև», 6 նոյեմբերի 1923։ ՊԿՊԱ, ֆ. ԳՀՀԷ, եթ. Տեղեկագիր, 1924, էջ 6։

[77] Տե՛ս «Հուսաբեր», 7 փետրվարի 1927։ «Արև», 5 ապրիլի 1927։

[78] Տե՛ս «Պայքար», 14 մայիսի 1947։ «Ժողովուրդի ձայն», 23 մայիսի 1947։

[79] „Images", Le Caire, 11 Juin 1954.

[80] Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԳՀՀԷ, եթ. Տեղեկագիր, 1937, էջ 38։

[81] Տե՛ս նույն տեղում։



դասակարգային կազմի վերաբերյալ։ 1926 թ. «Արևը» գրում էր. «Բառին իսկական իմաստով գործավոր դասակարգ չունինք, զի եղածը հազիվ ընդհանուր եգիպտահայության երեք առ հարյուրը կկազմե, իսկ մնացածը կբաղկանա պաշտոնյաներն, ազատ ասպարեզներու հետևողները, արհեստավորներն և մեծ ու փոքր առևտրականներն ու գործարանատերերն, մեկ խոսքով միջակորյա դասակարգն իր բոլոր շերտավորումներով»[82]։ 1924—1925 թթ. Ալեքսանդրիայի Պողոսյան դպրոցի հետ կապված 852 ընտանիքների 448 գրանցված անդամներից 204-ը (45.5%) արհեստավորներ էին, 69-ը (15.4%)՝ ծառայողներ, 52-ը (11.6%)՝ բանվորներ, 69-ը (15.4%)՝ մանր առևտրականներ, 40-ը (8.9%)՝ վաճառականներ, 14-ը (3.2%)՝ ազատ ասպարեզում աշխատողներ[83]։ 1940—1950-ական թվականներին, ըստ Ա. Ալպոյաճյանի տվյալների, ծառայողները կազմում էին Կահիրեի լուսավորչական համայնքի գրանցված անդամների 35.6%, արհեստավորները՝ 26.8%, բանվորները՝ 4%, մանր առևտրականները՝ 15%, վաճառականները, ներառյալ սառաֆները՝ 5.8%, կալվածատերերը՝ 1.8%, ազատ ասպարեզում աշխատողները՝ 11%[84]։ Այդ տվյալները պետք է վերապահությամբ ընդունել, մանավանդ բանվորներին վերաբերողները, որովհետև բանվոր են համարվել միայն սևագործ աշխատողները, և հավասարության նշան է դրվել վարպետների ու նրանց կողմից շահագործվող վարձու ենթավարպետների միջև, այնինչ վերջիններս բանվորներից չէին տարբերվում արտադրության մեջ իրենց գրաված դիրքով։

Դժվար է ճշտել տարբեր դասակարգերի պատկանողների տոկոսային հարաբերակցությունը, սակայն կասկածից դուրս է, որ գերակշռում էին աշխատավորական տարբեր խավերը։ 1924 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «Այստեղ (Եգիպտոսում—Հ. Թ.) մարդիկ գրեթե հարկադրված են իրենց ամբողջ վաստակը ծախսել իրենց ապրուստին համար. բացառություն կկազմեն միայն ագահները... և միջակեն վեր հարուստները, որոնք հազիվ թիվ մը կկազմեն հայոց մեջ։ Ընդհանուր բարեկեցության վիճակը, որ կերևի եգիպտահայոց վրա... պատրանք է հաճախ։ Մնացյալ ամենքը կապրին օրը-օրին.

[82] «Արև», 4 դեկտեմբերի 1926։

[83] Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1924—1925 տարվա գործունեության», էջ 74։

[84] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 219։

վաղվան հողը իրենց սրտին մեջ...»[85]: Վերջիններիս խոշորագույն թշնամին գործազրկությունն էր:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին (1929—1933) զգալիորեն աճեց եգիպտահայ գործազուրկների՝ «նյութատկարատ և աղքատ դասակարգի» թվաքանակը: «Արև» թերթը գրում էր. «Գրեթե ամեն օր տասնյակ հայ անգործներ կդիմեն ազգային առաջնորդարան... որպեսզի իրենց օրապահիկը հանելու չափ օրավարձով մը որևէ տեղ մը դրվին և կամ ժամանակյա օգնություն մը ըլլա իրենց»[86]: Սակայն առաջնորդարանը բավարար միջոցներ չուներ օգնություն հանելու «իրենց խրճիթներեն դուրս վտարված, օրվա հացի կարոտ» թշվառ ազգակիցներին, և նրանք «փողոցե-փողոց, խանութե-խանութ և տունե-տուն ինկած իրենց թշվառությունը կուլան ոչ միայն հայուն, այլև ամենազգի օտարներուն առջև»[87]:

Գործազուրկներին օգնության ձեռք էին մեկնում հիմնականում Հայ բարեգործական ընդհանուր միությունը, Աղքատասեր տիկնանց խնամակալությունը, Աղքատախնամը, որբապաշտպան մարմինները, հայրենակցական միությունները և այլն: Այդ կազմակերպությունները զգեստ ու փող էին բաժանում, աշխատանք հայթայթում: Դպրոցական կարիքավոր երեխաներին օրը մի անգամ տրվում էր տաք ճաշ, ձկան յուղ և այլն, իսկ ամռան ամիսներին տկարակազմները ուղարկվում էին կազդուրման: Այդ գործում առանձնապես աչքի էին ընկնում Հայ կարմիր խաչը և «Այծեմնիկ» միությունը: «Արևը» գրել է. «Այծեմնիկ միությունը լուրջ կաշխատի թշվառությունները ամոքելու. կարոտներուն սննդեղեն, հագուստ, դեղ և բժիշկ կհայթայթե: Գալուստյան վարժարանի աղքատիկ սաներուն տարին երկու անգամ հագուստ, գոգնոց, կոշիկ և ճերմակեղեն կուտա»[88]: Այդ օգնությունը սակայն գնալով նվազեց, որովհետև համաշխարհային տնտեսական ճգնաժամի հարվածի տակ ընկան նաև ազգային հաստատությունները: Առաջնորդարանը կքում էր պարտքերի տակ, դպրոցները մատնվել էին անելանելի դրության, դասատուները «հինգ ամսական առնելիք» ունեին[89]: Ավելի

[85] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԴԽՀԷ, նթ. Տեղեկագիր, 1924, էջ 7:

[86] «Արև», 5 սեպտեմբերի 1931:

[87] «Արև», 11 դեկտեմբերի 1931:

[88] «Արև», 13 մայիսի 1932:

[89] «Արև», 13 դեկտեմբերի 1931:



ծանր էր մասնավոր դպրոցների վիճակը, մեկը մյուսի ետևից փակվեցին Պերպերյան, Թաշճյան և ուրիշ դպրոցներ:

Թեմական իշխանությունները փորձեցին երկար ժամկետով պարտք վերցնել հարուստներից, բայց հաջողություն չունեցան, ուստի, որպես փրկության վերջին միջոց, կառչեցին ազգային ներքին փոխառությանը՝ «ահռելի տնտեսական տագնապին պատճառով առաջնորդարանի հասույթներուն արտակարգ նվազումեն գոյացած պարտքերու կարգադրության համար»[90]: 1932 թ. սկզբին հրապարակվեց ներքին փոխառության, յուրաքանչյուրը 5 եգիպտական ֆունտ արժեքով, ոչ-անվանական 1.000 պարտատոմս, որոնք երաշխավորված էին ազգապատկան ամբողջ գույքով և պետք է մարվեին մինչև 1942 թվականի վերջը[91]: 1937 թվակիր արխիվային մի վավերագրում նշված է, որ շնորհիվ ազգային եկամուտների ավելացման առաջնորդարանը կարողացել է «անթերի և կանոնավորապես» վճարել «պարտքերաշխված պարտաթուղթերու փոխարժեքները» և նրանց տոկոսները[92]: Բացի այդ, թեմական իշխանությունները կազմակերպել են «Հազար ոսկվո հանգանակություն», որով և հատուցվել են Գալուստյան դպրոցի «ուսուցչաց և պաշտոնեության հետնյալ պահանջները»[93]:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Եգիպտոսում աշխատավորական խավերի տնտեսական վիճակը համեմատաբար բարելավվեց: Գործազուրկների թիվը զգալի չափով կրճատվեց՝ դաշնակից զորքերի պարենավորումը, հանդերձանքը և այլ կարիքները տեղում բավարարելու անհրաժեշտության շնորհիվ: Սակայն պատերազմից հետո՝ 1947—1949 թթ. կային ավելի քան 250 հազար գործազուրկներ:

[90] «Արև», 5 մարտի 1932:

[91] Տե՛ս նույն տեղում:

[92] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԴՀԽԷ, նթ. Տեղեկագիր, 1937, էջ 6:

[93] Նույն տեղում, էջ 7:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1. «ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ՊԵՏՈՒԹՅԱՆ» ՑՆՈՐՔԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Առաջին համաշխարհային պատերազմից հետո սփյուռքահայ գաղթօջախների պատմությունը զարգացել է հասարակական-քաղաքական երկու հակադիր ճակատների բուռն պայքարի պայմաններում։ Եգիպտոսում հայության բևեռացումը հիմնականում կատարվեց մի կողմից Ռամկավար ազատական կուսակցության, մյուս կողմից Հ. Հ. դաշնակցության առանցքի շուրջը[1]։

Այդ ճակատների սահմանազատման հիմքերի հիմքը հանդիսանում էր նրանց դիրքը Սովետական Հայաստանի հանդեպ։

Հայ բուրժուազիան և նրա քաղաքական կազմակերպությունները չկարողացան լուծել Հայկական հարցը։ Ցեղասպանության զոհ կդառնար նաև հայության արևելյան հատվածը, եթե սովետական կարգեր չհաստատվեին Արևելյան Հայաստանում։ Այն համոզմունքով, որ հայ ժողովրդի ինքնուրույն և ազատ զարգացման ուղին այն ուղին է, որը բացվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով, ռամկավարները և հնչակյանները հարեցին «խորհրդային Հայաստանի հետ ուղղությանը»։ Դաշնակցության կարճամիտ ղեկավարները ուրացան Սովետական Հայաստանի՝ որպես հայկական պետության գոյությունը և սկսեցին նիզակ ճոճել Սովետական Միության դեմ։ Այդ ուղին նրանց պետք է տաներ և, իրոք, տարավ միջազգային իմպերիալիզմի հակասովետական լագերը։

Ռամկավարները Սովետական Հայաստանը համարում էին «ամենայն հայոց պետություն», իսկ սովետական հանրապետությունների ընտանիքում նրա գտնվելը՝ երաշխիք հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պահպանման և արևմտահայության դատի լուծման։ Ռամկավար մամուլը պրոպագանդում էր, որ հայ ժողովրդի գերագույն շահերի տեսակետից «ամենանպաստավորն ու տրամաբանականը ռուսական օրիենտացիան»՝ սովետական կողմնորոշումն է[2]։ Սովետական-սոցիալիստական հասարակարգը չէր համապատասխանում ռամկավարների դավանած բուրժուական սկզբունքներին, սակայն նրանք առաջին պլան չէին մղում այդ հարցը։ Անվանի ռամկավար գործիչ Հրաչ Երվանդը գրել է. «Մենք դեմ ենք համայնավար վարդապետության, բայց և կտեսնենք, թե հայ ժողովուրդը իր քաղաքական ապահովությունը և խաղաղ աշխատանքը կգտնի Հայաստանի վարչաձևին և մի-միայն անոր։ Այս պատճառով, Հայաստանի համայնավար վարչաձևին հանդեպ մեր ընդդիմությունը ունի խաղաղ հանգամանք, վասնզի ամեն բանե առաջ և ամեն բանե վեր են երկրին խաղաղությունն ու բարօրությունը»[3]։ Սովետական Հայաստանի զարգացումն ու ամրապնդումը նրանք համարում էին արևմտահայության դատի լուծման գրավականը՝ «միակ կռվանը», որը կարող էր «երբ պայմանները ներեն, առանց նոր արյունահեղությանց տեր դարձնել հայ ազգը իր պատմական անժխտելի իրավունքներուն»[4], և սփյուռքահայությանը կոչ էին անում «ոչ մի պայքար մղել խորհրդային իշխանության դեմ, կարելի ամեն միջոցներով ուժ տալ» Սովետական Հայաստանին[5]։

Դաշնակցության թշնամանքը՝ սովետական սոցիալիստական կարգերի դեմ բխում էր նրա դասակարգային էությունից։ Հայաստանի հեղափոխական բանվորների և գյուղացիների կողմից արտաքսված դաշնակցությունը, չըմբռնելով հասարակության զարգացման օրենքները, սովետական իշխանությունը գնահատում էր որպես «ռուսական աշխարհակալություն»։ Ըստ դաշնակցական գործիչների սուբյեկտիվ դատողության, Սովետական Ռուսաստանը, շարունակելով ցարական Ռուսաստանի գաղութային քաղաքականությունը, խորտակել է Հայաստանի անկախությունը և այնտեղ հաստատել ցարական լծից «գերազանցող բռնակալություն», որի ներքո դանդաղ մահվան է դատա-

[1] Հնչակյան կուսակցությունը, վաղուց պառակտված ու թուլացած լինելով, չկարողացավ ակնառու դեր կատարել եգիպտահայ կյանքում։ Այդ պատճառով, կանգ չենք առնում նրա քաղաքական վարքագծի վրա, թեև, շարադրանքի ընթացքում, ելնելով քննարկվող հարցերի պահանջից, այս կամ այն չափով շոշափել ենք նրա քաղաքականության հետ կապված հարցեր։

[2] «Արև», 30 հուլիսի 1925։

[3] «Արև», 12 օգոստոսի 1931։

[4] «Արև», 7 հուլիսի 1931։

[5] «Արև», 28 հոկտեմբերի 1931։

պարտված հայ ժողովուրդը[6]։ Չի եղել միջազգային իմպերիալիզմի կողմից նյութված վտարանդիական-հակասովետական մի դավադրություն, որի հետ դաշնակցությունը կապված չլիներ այս կամ այն չափով։ 1925 թ. դաշնակցությունը պատմության աղբանոցը նետված կովկասյան այլ թափթփուկների հետ միասին համաձայնագիր ստորագրեց «Կովկասը ռուսական տիրապետությունից ազատելու» մասին, 1927 թ. անգամ դարձավ ռուս, բելոռուս, ուկրաինացի էմիգրանտների կողմից Պրագայում ստեղծված հակասովետական «Նոր Արևելքի ընկերվարական լիգայի», 1929 թ. հարեց «Պրոմեթեի» ֆաշիստական ուխտին և այլն, և այլն։ Գերմանիայում Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց հետո դաշնակցությունը հավաքագրվեց նացիզմի լագերում, և Հայրենական պատերազմի տարիներին նրա զինված ջոկատները հասան մինչև Հյուսիսային Կովկաս։

Ծառայելով միջազգային իմպերիալիզմի շահերին և ստանձնելով հակասովետական կեղտոտ պարտավորություններ, դաշնակցությունը փորձում էր սփյուռքի հայությունը կտրել Սովետական Հայաստանից, և նրա հարվածի տակ ընկան այդ կապի դրսևորում հանդիսացող բոլոր քիչ թե շատ կարևոր ձեռնարկումները՝ ներգաղթը, հայրենիքի վերակառուցման օգտին միջոցների հանգանակությունը և այլն։ Նախ օգնության մասին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը փրկարար նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Կործանման անդունդի եզրին կանգնած հայությունը սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ձեռք բերեց ֆիզիկական ապահովության երաշխիք և, շնորհիվ իր ստեղծագործական մեծ ուժին, գրկանքների ու զոհաբերությունների դիմանալու իր չտեսնված տոկունության, վերականգնեց քայքայված տնտեսությունը, զարգացրեց մշակույթը, հաղթահարեց սովն ու համաճարակները։ Հայ ժողովրդին ամենից առաջ զորավիգ կանգնեց Սովետական Ռուսաստանը։ 1920 թ. դեկտեմբերի 13-ին Կրեմլում ընդունելով Հայաստանի Հեղկոմի պատվիրակությանը, Վ. Ի. Լենինը ասել է. «Մենք ինքներս դժվարին դրության մեջ ենք, բայց խորհրդային Հայաստանին ամեն կերպ կօգնենք»[7]։ Դեկտեմբերի 15-ին Հայաստանի կառավարությանը տրամադրվեց երկու միլիարդ ռուբլի (ոսկու հաշվով 600

[6] Տե՛ս «Հուսաբեր», 19 հունիսի 1926։

[7] «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1925։



հազար) բնակչության անմիջական սուր կարիքների համար։ 1921 թ. մայիսից մինչև նոյեմբեր Հայաստանը ստացել է 2.545.000 ռուբլի ոսկով, մեծ քանակությամբ նավթ, բենզին, զգեստեղեն, ալյուր, միս, ինքնաթիռներ, ավտոմեքենաներ և այլն։ Սովետական Ռուսաստանի օգնությունը շարունակվեց նաև հետագա տարիներին։

Հայաստանի ժողովրդին եղբայրական օգնության ձեռք մեկնեց նաև աշխարհով մեկ ցրված հայությունը։

Սփյուռքից ստացված օգնության նժարում բավական ծանր էր կշռում եգիպտահայերի բաժինը։ 1921 թ. «Հայաստանի սովելոց եղբայրական օգնության հանձնախումբը» հանգանակել է շուրջ 4.000 եգիպտ. ֆունտ։ 1924—1925 թթ. «Օգնենք հայրենիքի վերաշինության գործին» լոզունգի ներքո կատարված հանգանակություններից գոյացել է 2.400 եգ. ֆ., Մելքոնյան ձեռնարկությունն Երևանի պետական համալսարանին նվիրաբերել է 3.000 եգ. ֆ., Մանթաշյանի կտակից ավելի քան 3.000 եգ. ֆ. հատկացվել է որբերի Հայաստան տեղափոխման համար[8]։ 1926 թ. «Համազգային օգնության կեդրոնական հանձնախումբը» Լենինականի երկրաշարժից վնասվածների օգտին հանգանակել է մեծ քանակությամբ զգեստեղեն և ավելի քան 5.000 անգլիական ֆունտ, որից 3.000-ը Կահիրեում, 1150-ը Ալեքսանդրիայում, 1.000-ը Սուդանում, Իրաքում և Պաղեստինում[9]։ Տարբեր ժամանակներում դրամական զգալի միջոցներ են տրամադրվել նաև Նոր Արաբկիր և Նոր Եվդոկիա ավանների կառուցման գործին։

Դաշնակցությունը չմասնակցեց Հայաստանի օգնության ձեռնարկումներին, սակայն վախենալով ինքնամեկուսացումից, դիմեց դեմագոգիայի։ Հայաստանի վերակառուցման օգտին ձեռնարկված հանգանակության օրերին, դաշնակցությունը հրապարակով խոստանում էր «մնալով գաղափարական պայքարի և օրինական ընդդիմադիրի դիրքին մեջ տիրող վարչաձևի դեմ, ամենայն աջակցություն ցույց տալ երկրի հայության տնտեսական, ֆիզիկական և մշակութային բարգավաճումին և վերաշինական աշխատանքներուն»[10]։ Դժվար է պատկերացնել, թե ինչպես կարելի էր օգնել Հայաստանի ժողովրդին «հակառակորդ և թշնամի» լինելով հենց Հայաստանի ժողովրդի ստեղծած վարչաձևին…

[8] Տե՛ս «Արև», 8 մարտի 1924։

[9] Տե՛ս «Արև», 6 հունիսի 1927 և հաջորդ համարները։

[10] «Հուսաբեր», 23 սեպտեմբերի 1924։

Որպեսզի պատրանք ստեղծվի այն մասին, թե դաշնակցությունը «անկախ տիրող վարչաձևեն» օգնում է Հայաստանի ժողովրդին, դաշնակցական մամուլն օգտագործում էր ռեկլամի հնարավոր ամեն ձև։ «Հուսաբերը» անդադար թմբկահարում էր, որ դաշնակցական պարագլուխ բժ. Համո Օհանջանյանը ներգրավվել է «Համազգային օգնության կեդրոնական հանձնախմբի» կազմում՝ Վահան Թեքեյանի և ռամկավար այլ գործիչների հետ միասին[11]։ Այդ կարգի դեմագոգիան օդի ու ջրի նման անհրաժեշտ էր դաշնակցական գործիչներին՝ Հայաստանի օգնության գործի հետ ոչ մի կապ չունեցող նկատառումով, այն է՝ քողարկելով դաշնակցության իսկական դեմքը, իրականացնել համագաղութային համագումարը, որի մասին կխոսվի քիչ հետո։ Որ դաշնակցական գործիչների նպատակն էր հող նախապատրաստել համագաղութային համագումարի համար, պարզ երևում է դաշնակցության Կահիրեի կազմակերպության շրջանային ժողովի որոշումներից։ Քննարկելով Հայաստանի օգնության, գաղթականների ու որբերի հայրենիք տեղափոխության հետ կապված հարցեր, այդ ժողովը որոշել է. «Աշխատել հավաքել օժանդակության ցրված կամ անջատ ուժերը, և զանոնք համախմբել համազգային կազմակերպության մը մեջ։ Այս նպատակով հետապնդել համագաղութային համագումարի...գաղափարը»[12]։ Այդ հույսը սակայն չիրականացավ, և դաշնակցությունը, մի կողմ դնելով «անկախ տիրող վարչաձևեն» Հայաստանի ժողովրդին օգնողի դիմակը[13], սկսեց հալածանք ծավալել այն կազմակերպությունների դեմ, որոնք ցանկանում էին իսկապես մասնակցել Հայաստանի ժողովրդի վերքերի բուժման գործին։

Դաշնակցությունը երկդիմի քաղաքականություն էր վարում նաև ներգաղթի հարցում։ Դաշնակցական գործիչները մի կողմից պահանջում էին «հայրենիքի դռները բանալ» գաղթականների առաջ, մյուս կողմից խանգարում էին նրանց հայրենադարձությանը։

[11] Տե՛ս «Հուսաբեր», 12 նոյեմբերի 1926։ Պետք է նշել, որ դաշնակցության համակիրներից, նույնիսկ շարքայիններից ոմանք իրենց լուման մուծել են Հայաստանի օգնության գործում։ Դրանցից էր եգիպտահայ նկարիչ Ռուբեն Շիշմանյանը, որի կողմից «Հուսաբերի» խմբագրությանն ուղղված նամակում ասված է. «Սիրեցյալ Հայաստանին իմ բաժին օգնությունը բերած ըլլալու փափագով ձեր տրամադրության տակ կդնեմ երեք յուղանկար նկարներ։ Բարի եղեք ձեր նախընտրած ձևով դրամի վերածել և գոյացած գումարը ամբողջությամբ հատկացնել աղետյալներու օգնության գործին» («Հուսաբեր», 24 նոյեմբերի 1925)։ Դա բնական երևույթ էր։ Սակայն անբնական էր այն աղմուկը, որ դաշնակցական մամուլը բարձրացնում էր այդ կարգի նվիրաբերությունների առիթով։

[12] «Հուսաբեր», 23 սեպտեմբերի 1924։

[13] «Հուսաբեր», 4 հոկտեմբերի 1927։



1922 թ. Ջենովայի կոնֆերանսում սովետական կառավարության պատվիրակությունն ի լուր աշխարհի հայտարարեց, որ Սովետական Հայաստանն ընդունում է դժբախտության գիրկը նետված հայ աշխատավորության հայրենադարձությունը, իսկ 1924 թ. Հայաստանի կառավարությունը, հաշվի առնելով հանրապետության իրական կարողությունները ու հնարավորությունները, որոշեց 10.000 հայ գաղթականներ ընդունել, առաջին հերթին Հունաստանից, պայմանով, որ գաղութահայ բարեգործական կազմակերպությունները մասնակցեն նրանց տեղափոխության ծախսերին։ Այդ հանգամանքը չարամիտ պրոպագանդայի բավական շատ նյութ մատակարարեց դաշնակցական մամուլին։ «Հուսաբերը», օրինակ, գրում էր, որ Հայաստանի «դռները բացված հայտարարվեցան տարագրության առջև այն համոզումով անշուշտ, թե գաղութահայությունը տրամադիր պիտի ըլլա պահանջված գումարը հայթայթելու և, հետևաբար, հարկ պիտի չըլլա գաղթականներու ընդունման հարցերով լրջորեն մտահոգվիլ»[14]։ Մինչև 1925 թվականի վերջերը տարբեր երկրներից ներգաղթեցին շուրջ 17.000 հայեր, որոնք տեղավորվեցին Երևանում, Լենինականում և այլ քաղաքներում։

1927 թ. սեպտեմբերի 22-ի նիստում Ազգերի լիգայի խորհուրդը հրաժարվեց 50.000 հայ գաղթականներ Հայաստան տեղափոխելու իր խոստումից։ Հայ ժողովրդի տարաբախտ զավակների նկատմամբ այդպիսի վերաբերմունքը պայմանավորված էր Լիգայի անդամ պետությունների հակասովետական քաղաքականությամբ, հանգամանք, որի վրա չէր կարող ուշադրություն չդարձնել և համապատասխան միջոցներ չձեռնարկել Սովետական Հայաստանի կառավարությունը։ ՀՍԽՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1931 թվականի օգոստոսի 10-ի որոշումով ժողկոմխորհին առընթեր ստեղծվեց ներգաղթի կոմիտե՝ նոր, զանգվածային ներգաղթ կազմակերպելու համար։ Սփյուռքահայ աշխատավորները ցնծությամբ ողջունեցին այդ որոշումը, որով մեծ թափ էր ստանալու ազգահավաքի գործը։ Դժգոհ էին միայն նրանք, ինչպես նշել է «Արևը», ովքեր «կքննադատեին, կդատապարտեին Հայաստանի ներկա վարիչները, թե երկրին դուռները փակած են արտասահմանի հայության առջև...։ Անոնք, այդ միևնույն մարդիկը... դժգոհ են, երբ Հայաստանի

[14] «Հուսաբեր», 23 հոկտեմբերի 1924։

կառավարությունը կհայտարարե, թե քանի մը ամսվան մեջ որոշած է տասը հազար գաղթական ընդունիլ արտասահմանեն...»[15]։

Այժմ Հայաստանի «դուռներուն բացվիլը» պահանջող դաշնակցությունը միջոցներ էր գործադրում ներգաղթը ձախողելու համար։ Դաշնակցական մամուլը մի կողմից ներգաղթի ջատագով էր ձևանում, մյուս կողմից «մռայլ և հուսահատեցուցիչ» գույներով ներկայացնում Հայաստանի ներքին դրությունը։ Դիմելով դաշնակցական գործիչներին, մի եգիպտահայ իրավացիորեն գրել է. «Եթե անկեղծ են ձեր գրածները ներգաղթի մասին, և եթե կուզեք շատ հայ երթա Հայաստան, այն պարագային պետք է դադրիք Հայաստանը դժոխք ներկայացնելու ձեր փափաքեն»[16]։

Մի շարք երկրներում, այդ թվում Եգիպտոսում դաշնակցությանը հաջողվեց խանգարել զանգվածային ներգաղթի կազմակերպումը՝ պետական իշխանությունների միջոցով։ Խափանվեց մինչև անգամ Եգիպտոսի հայ որբերի ներգաղթը։ «Արևը» նշել է, որ դաշնակցական գործիչները և «Նիր Իստ ֆաունդեյշընի» ղեկավարներն ամեն ինչ արեցին որպեսզի «որբերը չերթան» Հայաստան[17]։

Չնայած դաշնակցության հարուցած խոչընդոտներին, մինչև 1938 թվականը ավելի քան 70.000 հայ գաղթականներ վերադարձան հայրենիք։ Հիմնադրվեցին նոր ավաններ ու գյուղեր, որոնք հայրենի բնաշխարհի լքված քաղաքների ու գյուղերի անունով կոչվեցին Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա, Նոր Թոմարզա, Նոր Սեբաստիա, Նոր Կեսարիա, Նոր Բութանիա, Նոր Խարբերդ, Նոր Կյուրին և այլն։ Այդ ավանների ու գյուղերի կառուցման գործում սովետական կառավարությունը ներդրեց հսկայական գումարներ, որոշ օգնություն ստանալով Հայաստանի օգնության կոմիտեներից և հայրենակցական միություններից։

Հայաստանի օգնության ձեռնարկումների, ներգաղթի և տակավին այլ հարցերում դաշնակցության հանդես բերած դեմագոգիայի հետին նպատակն էր, ինչպես նշվեց, հասնել համագաղութային համագումարի գումարմանը՝ ռամկավարների և հնչակյանների մասնակցությամբ։

Համագաղութային համագումարի ծրագիրն առաջ քաշվեց 1923 թ. վերջերին, երբ արդեն Լոզանի կոնֆերանսում թաղվել էին քաղաքական

[15] «Արև», 9 սեպտեմբերի 1931։

[16] «Արև», 7 դեկտեմբերի 1931։

[17] Նույն տեղում։



այն ակնկալությունները, որ հայ բուրժուազիան հուսացել էր իրագործել Անտանտի պետությունների հաղթանակով։ Արևմտյան Հայաստանը դատարկվել էր, արևմտահայության բեկորները ցրվել էին աշխարհով մեկ։ Ո՞նչ անել։ Ազգային կուսակցություններն այդ հարցի պատասխանը սպասում էին Համագաղութային համագումարից։ Ընդգծելով գաղութահայ «կեդրոնական հեղինակավոր մարմնի մը» անհրաժեշտությունը, ռամկավարները գրում էին. «Կա արտասահման ապաստանած բազմահազար տարագիրներու ու որբերու օգնության և պատսպարման հարցը, կա զանոնք ամբողջովին կամ մասամբ Հայաստան փոխադրության հարցը և, վերջապես, կա Հայաստանի ժողովուրդի բարգավաճման ու զորության պահպանման հարցը... Այս բոլոր խնդիրները անմիջական լուծում կպահանջեն... Համագումարի մը կազմության որոշումը մենք շատ նպատակահարմար կգտնենք»[18]։ Նրանք սակայն միաժամանակ պայման էին դնում, որ «այդ գումարումին օրակարգը ոչ միայն չկրե քաղաքական որևէ դրոշմ, այլև հեռվեն թե մոտեն չշոշափե որևէ քաղաքական հարց»[19]։ Համագաղութային համագումարին մոտավորապես միևնույն ձևով էին մոտենում նաև հնչակյանները։

Սակայն դաշնակցությունը, առաջ քաշելով համագաղութային համագումարի հարցը, երազում էր բոլորովին այլ նպատակի իրագործման մասին, այն է՝ գաղութահայությանը կազմակերպել որպես քաղաքական ուրույն միավոր և հակադրել Սովետական Հայաստանին։ 1924 թ. հունվարի 20-ին Կահիրեի «Հայկական սրահում» դաշնակցական պարագլուխ Նիկոլ Աղբալյանը հայտարարեց. «Անհրաժեշտ է, որ արտասահմանի հայությունը, բոլոր գաղութները ստեղծեն բարձրագույն կազմակերպություն մը համապատասխան ճյուղավորումներով։ Կազմվին գավառային, շրջանային մարմիններ, որոնք միավորված ըլլան կեդրոնական խորհրդի մը հատուկ և համապատասխան սահմանադրությամբ։ Տեսակ մը բարոյական պետություն, անհայրենիք պետություն, պետական ստորոգելիներով, ազգային և միջազգային իրավական կարգերով։ Այդ մարմինը գերագույն մարմինն է արտասահմանի հայության, իր շուրջը պիտի համախմբե բոլոր ցրված գաղութներու հայությունը, անոնց ազգային, մշակութային, տնտեսական գործունեությունները՝ պետության և քաղաքացիական փոխհարաբերություններով։ Մյուս կողմե ամեն գաղութ իր ապրած շրջանակին մեջ պիտի մեկուսա-

[18] «Արև», 27 նոյեմբերի 1923։

[19] «Արև», 5 հունվարի 1924։

նա, չպիտի ըլլա քաղաքացի իր ապրած երկրին, այս անջատումով միանալու համար իր ազգային, իր ազգայնության համապատասխան կազմակերպության, որ պետք է ճանաչվի նաև Ազգերի դաշնակցության կողմէն»[20]։

Իրավացիորեն, Աշ. Հովհաննիսյանը նշել է, որ ազգային տերիտորիայի մասին եղած տեսակետները, արտաքսված բոլոր տերիտորիաներից, խոհեմաբար հրաժարվում էին էքստերիտորիալ Հայաստանի ցնորքը[21]։

«Անհայրենիք պետության» ցնորքն արտահայտում էր դաշնակ ղեկավարների հավաքական կամքը։ Ելակետ ունենալով դաշնակցության 10-րդ ընդհանուր պատգամավորական ժողովի որոշումները, Վ. Նավասարդյանը կրկնում էր Ազբալյանին՝ գրելով. «Մեր գլխավոր մտահոգությունը պիտի լինի յուրաքանչյուր գաղութի հայության թե՛ համայնք, թե՛ մեկ ուրույն ազգային միավոր խմբել և համաձայն ժամանակակից պետական իրավունքի և ըմբռնումների օժտել նրան իր ներքին ազգային-կուլտուրական գործերը վարելու անհրաժեշտ իրավունքներով»[22]։ Նրա ասելով «հայրենիքը չէ բացառաբար, որ հիմք պիտի դառնա որևէ հավաքականության ամբողջացման, պահպանման և իրավական գոյության», հայրենիքի դերը կարող է փոխարինել «ազգությունը, որ իր շուրջն է համախմբում բոլոր նրանց, որոնք միևնույն ազգի պատկանելության զգացումը ունեն»[23]։ Յուրաքանչյուր գաղութահայ իր պարտականությունները պիտի կատարի հյուրընկալ երկրի նկատմամբ «առանց երբեք իր որևէ քայլին ազգային (հայկական) կերպարանք տալու և իր պայքարը կապելու մայր հայրենիքի (Հայաստանի) ճակատագրին»[24]։ Ինչպե՞ս կարող էր «ազգային պատկանելության զգացումը» զարգանալ, եթե ձուլման վտանգին ենթարկված գաղութահայերը «ազգային կերպարանք» չպետք է տային իրենց գործունեությանը, և, վերջին հաշվով, ինչի՞ էր պետք այդ զգացումը, եթե օտարության մեջ ապրող հայերը «մայր հայրենիքի ճակատագրին» չպետք է կապեին իրենց պայքարը։ «Անհայրենիք պետության» դեղատոմսից շահ չունեին հայ ժողովուրդը,

[20] «Հուսաբեր», 22 հունվարի 1924։

[21] Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Գաղութահայ խնդիրներ, էջ 4։

[22] Վ. Նավասարդյան, Դաշնակցության քաղաքական ուղին, էջ 83։

[23] Նույն տեղում, էջ 86—87։

[24] Նույն տեղում, էջ 82։



յուրաքանչյուր դեպքում այն կարող էր պայքարի գործիք դառնալ Սովետական Հայաստանի դեմ։

Այնուամենայնիվ Նավասարդյանները հույս ունեին ռամկավարներին և հնչակյաններին լծել դաշնակցության մարտակառքին։ Այդ լավատեսությունը բխում էր առհասարակ գաղութահայ իրականության և հատկապես նրա ծոցում գործող հասարակական-քաղաքական ուժերի սխալ գնահատումից։ Նրանց ասելով, ռամկավարները և հնչակյանները, լինելով «անորոշ ու անկերպարան, թույլ ու անկազմակերպ» ուժեր, «հածում են որոնումների աշխարհում, մերթ խարիսխ նետելով դաշնակցության նավակայքում, մերթ պոկվելով այնտեղից և գերի դառնալով բոլոր հողմերին»[25]։ Ուստի անհնարին չէր թվում այդ ուժերին համախմբել դաշնակցության մականի ներքո և ծառայեցնել նրա հակասովետական նպատակներին։ Բայց այդպես չեղավ։ Կռահելով, թե ինչ է պահված համազգութային համագումարի ստվերում, ռամկավարները «հրաժարեցան այն համաձայնագրեն, զոր նախապես կնքած էին դաշնակցության հետ»[26]։ Նրանց հետևեցին նաև հնչակյանները։ Ողբալով համազգութային համագումարի անփառունակ վախճանը, Վ. Նավասարդյանը գրում էր. «Մեր հակառակորդները պարզապես բոյկոտի տվին այս (համազգութային համագումարի — Հ. Թ.) ձեռնարկը, յուղ ածելով բոլշևիկյան կրակին...»[27]։

Սակայն դաշնակցությունը չհրաժարվեց գաղութահայությունը որպես քաղաքական ուրույն միավոր Սովետական Հայաստանին հակադրելու գաղափարից, և միաժամանակ հետո հրապարակ նետեց ազգային կուսակցությունների համագործակցության ծրագիրը։ Դա հին գինին էր նոր տիկի մեջ։ Միաժամանակ մի փորձ էր միջկուսակցական հակասությունները վերացնելու կամ մեղմացնելու միջոցով դիմագրավելու ներկուսակցական կյանքը բզկտող անջատողական շարժումները, որ ծագում էին դաշնակցության քաղաքական ուղեգծի սնանկության հետևանքով։ 1920-ական թվականների վերջերին դաշնակցության կրախն այնպիսի բացահայտ իրողություն էր, որ նույնիսկ «Հուսաբերը» խոստովանում էր. «Մեր պայքարը գրեթե ապարդյուն անցած է...։ Ծանր և հուսահատ վիճակը չի՞ գար մեզ հրահանգելու արդյոք, որ մենք կա՛մ

[25] Նույն տեղում, էջ 166։

[26] «Հուսաբեր», 11 հուլիսի 1925։

[27] Վ. Նավասարդյան, Դաշնակցության քաղաքական ուղին, էջ 96։

մեր գործակիցները պիտի փոխենք (նույնությամբ մեր առաջադրությունները պահելով) և կա՛մ մեր առաջադրություններու մեջ փոփոխություններ պիտի մտցնենք (մեր գործակիցները նույնը պահելով)»[28]։ Բայց դաշնակցությունն ի վիճակի չեղավ ոչ մեկն անելու, ոչ էլ մյուսը։

Ազգային կուսակցությունների համագործակցության ծրագիրն արժանացավ այն ռամկավար գործիչների սկզբունքային համաձայնությանը, որոնք սկսել էին աջ թեքվել միջազգային քաղաքական ասպարեզում առաջացած տեղաշարժերի ճնշման ներքո։ 1925 թ. Լոկառնոյի կոնֆերանսում Եվրոպայի իմպերիալիստական պետություններն երաշխավորեցին Գերմանիայի արևմտյան սահմանների անվտանգությունը, ազատ թողնելով նրա ձեռքերը՝ Արևելքում։ Հանուն աշխարհի վերաբաժանման ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները պատրաստվում էին պատերազմի Սովետական Միության դեմ։ Տարբեր երկրներում աշխուժացան ռեակցիոն տարրերը, Սովետական Միության թշնամիները, այդ թվում նաև դաշնակցությունը։ Օրվա օրակարգն էր՝ «կա՛մ մեզ հետ, կա՛մ մեզ դեմ»։ Իր անհնազանդ հակառակորդներին կարգի հրավիրելու համար դաշնակցությունը ձեռնամուխ եղավ տեռորիստական գործողությունների դեմոկրատական մտավորականության դեմ։ Նրա զինված ահաբեկիչների գնդակով Լիբանանում ընկան Տիրունին և Աղաղարյանը, Հունաստանում՝ Գյուրճյանը, ԱՄՆ-ում՝ Դուրյանը և ուրիշներ։ Այդ բոլորը նպաստում էին Ռամկավար ազատական կուսակցության աջ թևի ուժեղացմանը[29]։

Ազգային կուսակցությունների համագործակցության վերաբերյալ դաշնակցության դիմումը զգալի թվով կողմնակիցներ նվաճեց Ռամկավար կուսակցության 1931 թվականի ընդհանուր պատգամավորական ժողովում։ Ընդունվել է հատուկ «պատասխան-բանաձև», որով Կենտրոնական վարչությանն իրավունք էր տրվում «խոսակցության մտնելու Հ. Հ. դաշնակցության բյուրոյի հետ... որպեսզի ապահովելե ետք այդ

28 «Հուսաբեր», 15 օգոստոսի 1928։

29 Աջ թեքման ցուցանիշ էր նաև այն, որ ռամկավար գործիչները ժխտում էին սփյուռքահայության ծոցում կոմունիստների գործելու իրավունքը և պատրաստակամություն էին հայտնում պայքարելու «ընկերային ծայրահեղ վարդապետության»՝ կոմունիզմի դեմ («Արև», 26 հոկտեմբերի 1931)։ Նրանք ասում էին. «Մենք հյուրեր, հյուրընկալվածներ կամ «հանդուրժվածներ» ենք ուրիշներու տան մեջ, և պետք չէ որ այդ տան կարգուսարքը խանգարել ուզողներուն մեջ մեր ալ անունը հիշվի...» («Արև», 31 մարտի 1931)։



կուսակցության հարումը Հայաստանի պետության ճանաչումին ու Հայաստանի վերաշինության և ներգաղթի հանդեպ դրական քաղաքականության մը, և ձեռք բերելե ետք այդ կուսակցության հաստատ համաձայնությունը անշուշտ, արկածախնդրական և վտանգավոր քաղաքականություն չվարելու մասին՝ ստեղծվի երկու կուսակցություններու համաձայնությունը»[30]։

Կահիրեում և Փարիզում միաժամանակ բանակցություններ սկսելով, ռամկավարները համագործակցության իրականացումը պայմանավորում էին հետևյալ սկզբունքների ընդունման հետ. «Նկատելով որ խորհրդ. Հայաստանը իրապես և իրավապես գոյություն ունի, որ Խ. Ռուսիո հետ ունեցած իր դաշնակցային կապերը հնարավոր կընծայեն հայ հայրենիքի մեջ ապրող մեկ միլիոն հայության պաշտպանությունը և ապահովությունը ներքին ու արտաքին թշնամություններու դեմ, որ ներկա կարգերը, իրենց ընկերային, տնտեսական և գաղափարական մարզերուն մեջ քննադատելի կողմեր ունենալով հանդերձ, թույլ կուտան որ Հայաստանը իր ներքին վարչական անկախությունը պահպանե ու զարգացնե, որ բացի ներքին բնականոն բարեշրջումեն արտաքին որևէ բանի ազդակ կամ ճնշում կրնա արյան մեջ խեղդել հազիվ ազատագրված ժողովուրդ մը, անհրաժեշտ է որ գաղութահայությունը իր բոլոր հոսանքներովը անվերապահ և բացարձակ հավատարիմ ու անվերապահ կեցվածք մը ունենա Հայաստանի հանդեպ»[31]։ Նման բանաձևի ներքո, իհարկե, դաշնակցությունը չէր կարող ստորագրել։

Դաշնակցական գործիչները դատարկ խոստումներ էին շռայլում Սովետական Հայաստանի դեմ պայքարը դադարեցնելու, գաղութահայության կրթական-մշակութային գործերի ղեկավարությունը Հայ բարեգործական ընդհանուր միության հանձնելու, ազգային ու քաղաքական գործերն իրավահավասարության սկզբունքով միասնաբար վարելու մասին և այլն։ Իսկ գործնականում ոչ միայն ոչինչ չէին անում օրինական գոյության իրավունքից զրկված Հ. Հ. պատվիրակությունը, Գաղթականաց կենտրոնական հանձնախումբը և Կարմիր խաչը լուծարքելու ուղղությամբ, այլև փորձում էին համագաղութային մշակութային կազմակերպության գույն տալ Համազգային կրթական-հրատարակչական ընկերությանը և, որ ամենակարևորն է, շարունակում էին պայքարը

30 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 603։

31 «Արև», 31 հուլիսի 1931։

Սովետական Հայաստանի դեմ։ Առարկելով այդ և այդ կարգի այլ փաստերի դեմ, ռամկավար օրգանն իրավացիորեն խորհրդածում էր. «Անհա[illegible] թե ինչու սփյուռքի կյանքին մեջ բոլոր հրավերները «կլոր սեղանի մը» շուրջ հավաքվելու համար, և չենք ուզեր կամավոր գործիքները ըլլալ նոր արկածախնդրություններու»[32]։

1931 թ. վերջերին դաշնակ-ռամկավար համագործակցության բանակցությունները ընդհատվեցին։ Այդ առիթով, ռամկավարների հրապարակած հայտարարությունում ասված է. «Որքան ատեն որ Դաշնակցությունը հրաժարած չէ իր վարած թշնամական քաղաքականութենեն հանդեպ Հայաստանի ներկա կառավարության, իրեն հետ մեր գործակցությունը ոչ կարելի է և ոչ ալ արդյունավոր կրնա ըլլալ... Կարելի չէ վստահիլ և գործակցիլ մարդոց հետ, որոնք կհարվածեն մեր նորածիլ պետության դեռ խախուտ հիմերը՝ որոնք պետք է զորացվին անվերապահ զոհողությամբ և բոլորանվեր աջակցությամբ։ Եվ մեզի համար կարելի չէ նաև գործակցիլ այն տեսակ տարրերու հետ, որոնք համագաղութային պատվանդան ստեղծել կուզեն ավելի ևս զորացնելու համար իրենց մղած պայքարը Հայաստանի կառավարության դեմ»[33]։

1934 թ. Ռամկավար ազատական կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովից հետո բանակցությունները վերսկսվեցին Կահիրեում։ Դաշնակցության բանագնացներն էին՝ Ա. Ջամալյանը, բժիշկ Ե. Խաթանասյանը և Գ. Լազյանը, իսկ ռամկավար կուսակցությանը՝ Վ. Թեքեյանը, Տ. Սեհոնքյանը և Է. Բաբայանը։ Վերջինս գրել է. «Ընդհանուր համերաշխության կոչը եկավ Դաշնակցության կողմե... ու մենք՝ միշտ փափաքող որ չարը խափանվի, սիրով ընդառաջ գացինք»[34]։ Նրա պատմելով, բանակցող կողմերը, նախ և առաջ, ճշտել են համագործակցության նպատակը, որն էր՝ աշխատել հայ ժողովրդի «ֆիզիկական գոյության» պահպանման, նրա «քաղաքական իղձերուն» իրականացման և «պատմական իրավունքներուն» ձեռքբերման համար։ Որպես բանակցությունների հիմնական սկզբունք Սովետական «Հայաստանը անկախ իր վարչակարգեն կնկատվեր հայության ազգային գոյության խարիսխը և քաղաքական հիմնաքարը...»[35]։ Ելնելով այդ դրույ-

[32] «Արև», 24 հուլիսի 1931։

[33] «Արև», 31 հոկտեմբերի 1931։

[34] Է. Բաբայան, Ինքնակենսագրություն և հուշեր, էջ 56։

[35] Նույն տեղում։



թից, կողմերը համաձայն են առել՝ ա) «ուղղակի կամ անուղղակի որևէ փորձ չկատարել տապալելու երկրի ռեժիմը կամ կազմալուծելու ներքին խաղաղությունները»[36], բ) «չմասնակցել խորհրդային Միությունը բանի միջոցներով քայքայելու որևէ փորձի, գիտենալով որ խորհրդ. Հայաստանի ապահովությունը Խ. Միության հետ ունեցած կապին մեջն է։ Մյուս կողմից, սակայն, դաշնակցությունը «ազատ պիտի ըլլար հարաբերություն պահելու հակախորհրդային ուժերու հետ»[37]։ Նրան իրավունք էր վերապահվում նաև քննադատելու Սովետական Հայաստանի կառավարությանը, սակայն «քննադատության ազատությունը» պետք է կիրառվեր «միայն այն չափով», որ դեպի Հայաստանի «ուրացում չառաջնորդեր» գաղութահայությանը։ Ինչ վերաբերում է Սովետական Հայաստանը որպես հայկական պետություն ճանաչելու կամ չճանաչելու հարցի հետ առնչվող մայիսի 28-ի, նոյեմբերի 29-ի և եռագույն դրոշակի վեճերին, ապա կողմերը մնում էին իրենց նախկին տեսակետների վրա, միայն թե պետք է զգուշանային «նոր վեճեր հարուցանելե»[38]։

Կողմերը պայմանավորվել են նաև հայոց եկեղեցին և ազգային թեմական իշխանությունները «քաղաքական պայքարներու թատր» չդարձնել, հարգանք տածել դեպի էջմիածին, և զգուշանալ «ամեն հարձակումե անոր դեմ»։ Սակայն, ինչպես նշել է Է. Բաբայանը, «համաձայնության մելանը դեռ չչորցած Ա. Ջամալյանը շունչը Երուսաղեմ առավ... Թորգոմ պատրիարքը համոզելու, որ ընդունի Ամենայն հայոց պատրիարք-կաթողիկոս հռչակվիլ...» և Ամենայն հայոց կաթողիկոսությունը էջմիածնից «ժամանակավորապես» Երուսաղեմ տեղափոխել[39]։ 1936 թ. կեսերին «ժողովրդի բազկերակը քննելու» նպատակով, Թորգոմ պատրիարքը ուղևորվեց Եգիպտոս, որտեղ և համոզվեց, որ Ջամալյանի առաջարկը դաշնակցության հերթական արկածախնդրական քայլերից է, և մերժեց այն։

Ի դեպ, դաշնակցությունն Ամենայն հայոց կաթողիկոսությունն էջմիածնից արտասահման տեղափոխելու մասին երազում էր տակավին 1929 թվականից, այսինքն այն պահից, երբ հարեց «Պրոմեթեև» ֆաշիստական ուխտին։ Դեռ այն ժամանակ Կ. Պոլսի «Ազդարար» թերթը գրում էր, որ եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ եպ. Գուշակյանն Երուսաղեմ

[36] Նույն տեղում։

[37] Նույն տեղում, էջ 57։

[38] Նույն տեղում, էջ 57—58։

[39] Նույն տեղում, էջ 59։

է գնացել Դուրյան պատրիարքի հետ խորհրդակցելու՝ Մայր աթոռն արտասահման տեղափոխելու «անգամ էջմիածնի մեջ զգացված պետքի մը» շուրջը[40]։ Դուշակյանն անհապաղ հերքել էր այդ լուրը, այն համարելով «հերյուրածո առասպել մը»[41]։

1937 թ. Ռամկավար կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովը չեղյալ հռչակեց դաշնակ-ռամկավար համագործակցության համաձայնագիրը։ Նրա որոշումներում ասված է. «Ժողովս, նկատելով որ Հ. Հ. դաշնակցության ղեկավարությունը կշարունակե իր հակահայաստանյան արկածախնդրական ուղղությունը, և գաղութներու մեջ մեր կուսակցության հանդեպ անուղիղ և անպարկեշտ միջոցներով պայքարը, կգտնե թե այդ ղեկավարության հետ գործակցություն մը հնարավոր չէ»[42]։

Այսպիսով, սփյուռքահայ մյուս գաղթօջախների նման՝ Եգիպտոսում հայությունը բաժանված էր Սովետական Հայաստանի հանդեպ միմյանց հակադիր երկու ճակատի։ Այդ բևեռացումը հետևանք էր այն պատմական բախտորոշ իրադարձությունների, որ 1915—1920 թթ. տեղի ունեցան հայ ժողովրդի կյանքում։ Ռամկավար ազատական կուսակցության գլխավորած ճակատը վարում էր առաջադիմական, Սովետական Հայաստանի զարգացման ու ամրապնդման աջակցելու քաղաքականություն։ Դաշնակցությունը, ծառայելով միջազգային իմպերիալիզմի շահերին, թշնամի էր սովետական կարգերին, և ձգտում էր տարագիր հայությունը որպես քաղաքական ուրույն միավոր հակադրել Սովետական Հայաստանին։ Այդ նպատակով հրահրված «անհայրենիք պետության» ցնորական ծրագրի ձախողման գործում վճռորոշ դեր կատարեցին ռամկավարներն ու հնչակյանները։ Ռամկավար կուսակցության աջ թևի աշխուժացման շնորհիվ հնարավոր դարձան ազգային կուսակցությունների համագործակցության բանակցությունները, սակայն դրանցից ծնված համաձայնագիրը համարյա գործնական նշանակություն չունեցավ։ Հաջողության դեպքում, ինչպես համագաղութային համագումարը, այնպես էլ ազգային կուսակցությունների համագործակցությունը պետք է ծառայեր դաշնակցության հակասովետական նպատակներին։

[40] «Ազգարար», Փոլիս, 26 մայիսի 1929։
[41] «Սիոն», 1929, էջ 217։
[42] Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, էջ 607։



Այժմ համառոտակի կուսակցական պայքարի մասին։

Թագավորական Եգիպտոսում վերին ատյանի նպաստավոր պայմաններ կային դաշնակցության հակասովետական պայքարի համար։ Դաշնակցական գործիչները միջազգային հակասովետական ջերմաչափի սնդիկի սյան ելևէջների համապատասխան կարող էին ասպատակություններ կատարել իրենց հակառակորդների դեմ և անպատիժ մնալ։ 1927 թ., երբ պահպանողական կուսակցության գլխավորած կառավարությունը խզեց Անգլիայի դիվանագիտական հարաբերությունները Սովետական Միության հետ, դաշնակցական գործիչները նոր եռանդով սկսեցին հակասովետական ապարդյուն կրքեր բորբոքել «միացյալ և անկախ Հայաստանի» շուրջը։ Հիտլերի իշխանության գլուխ գալուց հետո նրանք որպես հակասովետական պայքարի գործիք ասպարեզ նետեցին ցեղի («ցեղակրոնություն») և եռագույն դրոշակի պաշտամունքը։ «Հուսաբեր» գրում էր. «Եռագույնը պետք է ծածանի ամեն տեղ իբրև հայության դրոշակը, իբրև հայ ազատագրության, ազատ հայրենիքի խորհրդանշանը... Հայ չէ ան, որ կուրանա մեր եռագույնը...»[43]։ Այդ վայրահաչությունները զուգակցվում էին փողոցային հարձակումները, որոնք բազմաթիվ զոհեր խլեցին Եգիպտոսում և սփյուռքի մյուս գաղթօջախներում։

Եգիպտահայ գաղթավայրում բուռն պայքար էր գնում համայնքային վարչակառավարման մարմինների շուրջը։ Անցյալում ներքին կառավարման ձևերի և սկզբունքների դեմոկրատացման համար մղվող պայքարն այժմ վերածվել էր կուսակցական ազդեցության պայքարի՝ ազգային կուսակցությունների միջև։ Դաշնակցության ծրագրում այդ պայքարն ուներ մի իմաստ, այն է՝ Ազգային սահմանադրության անունով գրավել էջմիածնի արտասահմանյան թեմերը և ստեղծել գաղութահայ մի «վերին մարմին»՝ Սովետական Հայաստանի դեմ[44]։

1922 թ. մարտի 5-ին Կահիրեում տեղի ունեցան թեմական ժողովի հետպատերազմյան ժամանակաշրջանի առաջին ընտրությունները։ Հաջողության հույս չունենալով, դաշնակցական մարտականները ներխուժել են ընտրական տեղամաս և, ընտրողների ցուցակներն ու քվեատուփը խլելով, անհայտացել են...[45]։ Հանցագործները ձերբակալվեցին, սակայն որևէ պատժի չենթարկվեցին[46]։ Ընտրությունները կրկին կայացան

[43] «Հուսաբեր», 3 հունիսի 1933։
[44] Մ. Աղազարյան, Սիսի վերջին աթոռակալը, էջ 21։
[45] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 348—349։
[46] Տե՛ս «Արև», 6 մարտի 1922։



17—724

1923 թ. ապրիլի 29-ին և պսակվեցին ռամկավարների հաջողությամբ: Հնչակյանները կոչ են արել իրենց «ընկերներուն, համակիրներուն և ազատ քաղաքացիներուն՝... քվեները կեդրոնացնել ռամկավար ազատական թեկնածուներու վրա»[47]:

1923 թ. մայիսի 27-ի ընտրություններով անցնելով Ալեքսանդրիայի ազգային իշխանության գլուխ, դաշնակցական գործիչներն առաջ քաշեցին վարչական հրահանգի վերանայման հարցը: Ռամկավարները դեմ չէին, բայց անընդունելի էին համարում այն միակողմանի վերանայելը: Կահիրեի թեմական ժողովի հաղորդագրությունում ասված է. «Եգիպտահայոց օրենքին վերաբերյալ որևէ փոփոխություն պետք է ծրագրվի և մշակվի երկու թեմականներու համագումար մարմնույն կողմե միայն...: Բայց մինչև նոր կամ վերաքննյալ օրենքի մը կազմությունը, (Կահիրեի թեմականը—Հ. Փ.) պարտականություն կնկատե ընտրությունները կատարել ի զորության եղած օրենքի և կանոնյալ սովորությանց համաձայն» և այլն[48]: Այդպես էլ եղավ: 1926 թ. փետրվարի 28-ին Կահիրեի թեմական ժողովի հերթական ընտրությունները տեղի ունեցան և, չնայած դաշնակցության բոյկոտին, ընտրելու իրավունք ունեցող 940 եգիպտահայերից 733-ը քվեարկեցին ռամկավարների առաջադրած թեկնածուների օգտին[49]: Հնչակյանների մի մասը մասնակցել է դաշնակցության բոյկոտին, մյուսը գնացել է ռամկավարների հետևից[50]:

Ալեքսանդրիայում դաշնակ-ռամկավար հակասություններն այնպես էին սրվել, որ եգիպտական իշխանությունները մի քանի անգամ հետաձգեցին ընտրությունները, իսկ վերջում անցկացվեց իրարից անկախ երկու ընտրություն: Ռամկավարների հովանավորած ժողովրդական բլոկը, բոյկոտի ենթարկելով թեմական իշխանության կազմակերպած (1926 թ. մարտի 28) ընտրությունները, նույն թվականի մայիսի 2-ին անցկացրեց նոր ընտրություններ, որոնք, սակայն, չարժանացան եգիպտական իշխանությունների հավանությանը և բեկանվեցին: Այդպիսով, դաշնակցության ձեռքում մնաց Ալեքսանդրիայի թեմական իշխանությունը, որը սակայն երկփեղկվեց ներկուսակցական հակամարտությունների սրման հետևանքով:

Դաշնակցական գործիչ Նիկոլ Աղբալյանին՝ Պողոսյան դպրոցի տնօրենի պաշտոնից հեռացնող քաղաքական ժողովի ատենապետ Տե-

[47] «Արև», 23 ապրիլի 1923:

[48] Ըստ Ա. Ալպոյաճյանի, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 363:

[49] «Արև», 1 մարտի 1926:

[50] Տե՛ս «Հուսաբեր», 25 դեկտեմբերի 1925: Ընտրությունների նախօրեին հրապարա-



յիմար Թյությունճյանը և նրա համախոհներ Հակոբ Նալբանդյանն ու Վահան Գասապյանը արտաքսվեցին դաշնակցության շարքերից[51]: Այդ քայլով, ինչպես ակնկալվում էր, քաղաքական ժողովը չապալուծվեց, այլ ամբողջովին դուրս եկավ դաշնակցության վերահսկողությունից: Մնում էր բանի ուժի դիմել: Հոկտեմբերի 21-ի գիշերը, երբ քաղաքական ժողովը ընդլայնված նիստ էր գումարում առաջնորդարանում, «30—35 դաշնակցականներ... հարձակում կգործեն ժողովասրահին վրա... Մեծ-կռտվուք, նորակառույց սրահին կարասիները ջարդ ու փշուր կըլլան և երկուստեք արյուն կհոսի...: Ոստիկանությունը առաջնորդարան կուգա և տեղվույն վրա հարցաքննություններ կատարելե վերջ կգոցե առաջնորդարանը և բանալիները ոստիկանատուն կտանի»[52]: Հաջորդ օրը (հոկտ. 22) թեմական ժողովի դաշնակցական անդամներին հաջողվում է ոստիկանությունից թույլտվություն ստանալ առաջնորդարանում նիստ գումարելու համար: Այդ նիստում ընտրվում է նոր քաղաքական ժողով, որը և Նիկոլ Աղբալյանին վերահաստատում է իր պաշտոնում: Սակայն դրանով հարցը չլուծվեց:

1927 թ. հոկտեմբերի 30-ին ս. Պողոս-Պետրոս եկեղեցու բակում կայացավ ժողովրդային բլոկի բողոքի միտինգը: Հանդես գալով ազգային առաջնորդարանի անկարգություններից հուզված 500—600 հոգու առաջ, ճառախոսները պարզեցին թեմական գործերի տխուր վիճակը և պահանջեցին պաշտոնանկ հռչակել «ապօրինի իշխանությունը»: Տեղում կազմվեց «առժամյա հանձնախումբ», որը պետք է ազգային գործերը վարեր մինչև նոր թեմական ժողովի ընտրությունը[53]: Նոյեմբերի 1-ին եգիպտահայոց առաջնորդը պաշտոնապես հայտարարեց, որ «դադարած են բոլոր նախորդ ժողովները, և ազգային գործոց տնօրինությունն ու տնտեսությունը հանձնված են» իր կողմից նշանակված ժա-

կած իր թռուցիկում նշելով, որ «անունով քանի մը հնչակյաններ... ռամկավար ազգային իշխանության կամակատարները եղած են», Կահիրեի հնչակյան մասնաճյուղը կոչ էր անում նպաստել դաշնակցության բոյկոտին:

[51] Տե՛ս «Հուսաբեր», 10 հոկտեմբերի 1927:

[52] «Արև», 22 հոկտեմբերի 1927: Այդ հարձակման կապակցությամբ դատական գործ է հարուցվել Նիկոլ Աղբալյանի, Վահան Նավասարդյանի և Տրանեկյան Խանջյանի դեմ: 1928 թ. հուլիսի 7-ին Լերենի ոստիկանական դատարանը նրանց դատապարտել է «200-ական դրուշ տուգանքի և դատական ծախքերու վճարման՝ հարձակման մասնակցած և մարդ ծեծած ու վիրավորած ըլլալնուն համար» (Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 304):

[53] Տե՛ս «Արև», 31 հոկտեմբերի 1927:

ժամանակավոր գործադիր խորհրդին, մինչև որ ամբողջական ընտրությամբ և ըստ օրինի կազմվին օրինական ժողովները»[54]:

Ծանր դրությունից դուրս գալու համար դաշնակցությունը հակահարվածի անցավ: Նոյեմբերի 6-ին, հավաքվելով Կահիրեի հայկական եկեղեցու շրջափակում, դաշնակցականները բողոքեցին Ալեքսանդրիայի թեմական ժողովի լուծարքի դեմ: Ճառախոսներ Վահրամ Արծրունին և Օննիկ Մաճառյանը հավաքվածներին մղեցին գրավել առաջնորդարանը, սակայն այդ նրանց չհաջողվեց[55]: Նոյեմբերի 27-ին դաշնակցականները դարձյալ ապարդյուն գրոհեցին Կահիրեի և Ալեքսանդրիայի առաջնորդարանների վրա: Եղան վիրավորներ և դատական գործ հարուցվեց մի շարք դաշնակցականների դեմ: Հետաքննության վրա ազդելու համար, արաբական ռեակցիոն մի շարք թերթեր գրում էին. «Ժողովրդային պլոքը ... արկածախնդիրներն, փառամոլներն, պոլշևիկ թափթփուկներն և շատ-շատ քանի մը միամիտ և խաբված չեզոքներն բաղկացած մարմին մըն է»[56], «ալ-Ահրամի» ասելով դաշնակցության հակառակորդները «պոլշևիկյան» ՀՕԿ կազմակերպության անդամներ էին[57]: Այդ կարգի անհիմն հայտարարություններ են արել նաև «ալ-Բելաղ», «ալ-Ախբար», «ալ-Սիասա» և «ալ-Իթթիհադ» թերթերը:

Դաշնակցական գործիչները վերստին ապավինեցին եգիպտական ռեակցիայի աջակցությանը, երբ Ալեքսանդրիայի ժամանակավոր գործադիր խորհուրդը հայտարարություն հրապարակեց դեկտեմբերի 16-ին թեմական ժողովի ընտրություններ անցկացնելու մասին: Կատարելով դաշնակցության պատվերը, դեպուտատ Մահգուբ Սաբիթը պառլամենտի բեմից դատապարտեց ոմանց «նյութած դավերը» հայ եկեղեցու դեմ, և պահանջեց հետաձգել Ալեքսանդրիայի ընտրությունները[58]: Նույնիմաստ պահանջով հանդես եկավ նաև ծերակուտական Ալֆրեդ Շամմասը[59]: Բացի այդ, Մահգուբ Սաբիթի գլխավորությամբ դաշնակցականների մի պատվիրակություն ներկայացավ պրեմիեր Սարուաթ փաշային և հաջողացրեց Ալեքսանդրիայի ընտրությունների հետաձգումը՝ անորոշ ժամանակով[60]: Պրեմիեր Սարուաթը օրենսգետ Բադավի փաշային հանձնարարեց ուսումնասիրել հայկական գաղութի ներքին կացությունը և միջոցներ առաջարկել վեճի կարգավորման համար:

1928 թ. հունիսի 11-ին նոր պրեմիեր Մուստաֆա ալ-Նահաս փաշան կողմերին կոչ արեց հաշտություն կայացնել և հավանություն տալ կառավարության հետևյալ որոշմանը. 1) Ալեքսանդրիայի թեմական ժողովի վիճակով դադարած և հրաժարված անդամների տեղ ընտրել նոր անդամներ. 2) ժամանակավոր գործադիր խորհուրդը կշարունակի գործել մինչև որ թեմական ժողովի կազմը համալրվի և կազմվի նոր քաղաքական ժողով. 3) թեմական ժողովի ընտրություն կատարելու համար կազմել ընտրական հանձնաժողով, որի մեջ կողմերը ներկայացված կլինեն հավասար թվով և կառավարությունը կունենա իր ներկայացուցիչը[61]: Վերջում պրեմիեր Նահասը նշել է, որ այս որոշումը մերժվելու դեպքում կառավարությունը միջոցներ ձեռք կառնի այն գործադրելու համար: Դրանից հետո ժողովրդային բլոկի և դաշնակցության ներկայացուցիչներից կազմվեց ընտրական հանձնաժողով, որի աշխատանքներին մասնակցում էր Ալեքսանդրիայի կառավարիչի տեղակալ Ահմեդ Աբդյուլ Դաբերը: Ընտրությունները տեղի ունեցան 1929 թ. օգոստոսի 25-ին: 1.550 ընտրողներից 906-ը քվեարկեցին ժողովրդային բլոկի, 640-ը՝ դաշնակցության օգտին[62]: Այդպիսով, երկար ընդմիջումից հետո, գործի գլուխ անցան ժողովրդական քվեարկությամբ ընտրված մարմիններ, սակայն անդորրությունը չվերահաստատվեց: Այս անգամ էլ ժողովրդային բլոկը բաժանվեց երկու հակամարտ թևերի և «քաոսային վիճակ» ստեղծվեց ազգային առաջնորդարանում: Ա. Ալպոյաճյանի պատմելով, թեմականի անդամներն «արյունլվա կռվային և պես-պես խայտառակություններ երևան կուգային»[63]:

Համայնքի կառավարման գործում ազգային կուսակցությունների ցուցաբերած անընդունակության հետևանքով ասպարեզ իջան անկուսակցականները, ձգտելով առաջնորդող դեր կատարել թեմական ժողովներում: Նրանք առաջին գործնական քայլը կատարեցին 1926 թ., կազմելով «Հայ ժողովրդային միությունը», որի կոչում ասված էր. «Մեր միությունը բառին ընկալյալ իմաստով կուսակցություն մը չէ, և սկըզբունքով կմերժե հետապնդել որևէ քաղաքական նպատակ»: Նրա նպատակն էր՝ ա) Օրինավոր միջոցներով օժանդակել Հայաստանի ժողո-

[54] Ըստ Ա. Ալպոյաճյանի, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 404:
[55] Տե՛ս «Արև», 7 նոյեմբերի 1927:
[56] Ըստ «Հուսաբերի», 14 նոյեմբերի 1927:
[57] Նույն տեղում:
[58] Տե՛ս «Հուսաբեր», 6 դեկտեմբերի 1927:
[59] Տե՛ս «Հուսաբեր», 9 դեկտեմբերի 1927:
[60] Տե՛ս «Հուսաբեր», 21 դեկտեմբերի 1927:
[61] Տե՛ս «Հուսաբեր», 16 հունիսի 1928:
[62] Տե՛ս «Հուսաբեր», 27 օգոստոսի 1929:
[63] Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 453:

վուրգին շինարարական և մշակութային ձեռնարկներուն և վառ պահել գաղութիս սերն ու շահագրգռությունը հանդեպ մայրենի երկրին. բ) Մեր տեղական ազգային գործերուն ապահովել բարվոք վարչություն մը, թեմական ժողովին ընտրությունը կատարելով համեմատական դրությամբ, որպեսզի ժողովուրդին բոլոր շերտավորումներուն հնարավորություն ընծայվի իրենց ներկայացուցիչներն ունենալու թեմական իշխանության մեջ[64]։ Սակայն Հայ ժողովրդային միությունը բացառական դեր կատարեց Կահիրեի թեմական ժողովի ընտրություններում (1930 թ. հունիսի 22)։ Լավ իմանալով, որ ընտրությունների բախտը վճռելու են անկուսակցականները, ռամկավար-հնչակ բլոկը և դաշնակցությունը մրցում էին Հայ ժողովրդային միությանը հրապուրելու համար։ Վերջինս նախ միացավ ռամկավար-հնչակ բլոկին, իսկ վերջին պահին անցավ դաշնակցության կողմը, նպաստելով նրա հաղթանակին[65]։ 2287 ընտրողներից 1250-ը քվեարկել են դաշնակցության, 860-ը՝ ռամկավար-հնչակ բլոկի թեկնածուների օգտին։

Անկուսակցականների շարժում ծավալվեց նաև Ալեքսանդրիայում։ Այնտեղ, բացի Հայ ժողովրդային միության մասնաճյուղից, գործում էր նաև «Հայ ոչ-կուսակցականներու միությունը», որը 1931 թ. վերանվանվեց «Հայկական միություն»։ Նրա ծրագիր-կանոնագրում ասված է. «Քաղաքական բնույթ ունեցող գործողությունները ազգային ներկա կացության հետ չեն հաշտվիր, անոր խաղաղ զարգացումին կվնասեն, բարոյական թե ազգային տեսակետով չեն արդարանար բնավ»[66]։ Հայ ժողովրդային միությունն առաջադրում էր անկուսակցական զանգվածների և կուսակցությունների միջև «համերաշխ գործակցություն մը առաջ բերել ոչ-քաղաքական գետնի վրա, միահամուռ ուժերով ծառայել մեր ցեղային գոյության պահպանումին..., ու համայնքիս մեջ վառ պահել սերն ու շահագրգռությունը հանդեպ Հայաստանի...»[67] և այլն։ Ինչպես

[64] «Արև», 10 հունիսի 1926։ Ի դեպ, 1920—1930-ական թվականներին անկուսակցականներն աշխուժություն էին հանդես բերում ոչ միայն Եգիպտոսում, այլև ԱՄՆ-ի, Սիրիայի և Բալկանների հայկական գաղթավայրերում։ Դա մանրբուրժուական շարժում էր և դրսևորվում էր ազգային կուսակցությունների աղմկոտ գործունեության դեմ ժողովրդական բողոքի ձևով։ Սկզբնական շրջանում այդ միությունների քաղաքականությունը, որպես կանոն, բնութագրվում է դեմոկրատական զանազան պահանջներով։ Հետագայում, սակայն, ընկնելով այս կամ այն ազգային կուսակցության ազդեցության ներքո, նրանք դադարեցին գոյություն ունենալուց։

[65] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 458—459։

[66] Ըստ «Արարատի», 29 օգոստոսի 1931։

[67] Ըստ «Արարատի», 9 հուլիսի 1932։



Կահիրեում, այնպես էլ Ալեքսանդրիայում անկուսակցականների համերաշխության քարոզներից օգտվեց դաշնակցությունը։

1935 թ. սեպտեմբերի 29-ի ընտրությունների նախօրեին՝ ազգային կուսակցություններին համերաշխեցնելու ուղղությամբ անկուսակցականների կատարած ապարդյուն փորձերից հետո Ալեքսանդրիայում ստեղծվեց ընտրական երկու բլոկ՝ «Մեկ կողմե Դաշնակցության, իր անդամներուն, համակիրներուն և հնչակյաններու մեկ մասին գործակցությամբ, և մյուս կողմե Ռամկավարության, իր անդամներուն, համակիրներուն, ՀՕԿ-ի և հնչակյաններու մյուս մասին գործակցությամբ»[68]։ Ի նշան բողոքի, Հայ ժողովրդային միությունը բոյկոտի ենթարկեց ընտրությունները, փաստորեն նպաստելով դաշնակցության հաղթանակին։ Ընտրելու իրավունք ունեցողներից 880-ը ձեռնպահ են մնացել, 867-ը քվեարկել են դաշնակցության, 822-ը՝ ռամկավարների թեկնածուների օգտին[69]։

1936 թ. Կահիրեում կողմերն ընդառաջեցին Հայ ժողովրդային միության՝ «համեմատական դրությամբ» ընտրություններ կայացնելու առաջարկին, և թեմական ժողովի մասնակի ընտրությունները կատարվեցին «միակ ցանկով մը», որի շուրջը նրանք կանխօրոք համաձայնություն էին գոյացրել։ Թափուր մնացած տեղերից 5-ը տրվեց անկուսակցականներին, 2-ը՝ ռամկավարներին, 2-ը՝ դաշնակցականներին, 1-ը՝ հնչակյաններին[70]։ Այդ ընտրական բնույթի համագործակցությունը շարունակվեց մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները։

Այսպիսով, կուսակցական մոլեգին պայքար էր ծավալվում եգիպտահայ գաղութի վարչատնտեսական օրգանների շուրջը։ Զգալով Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական իշխանություններին, դաշնակցական գործիչները երազում էին «անհայրենիք պետության» մասին։ Ռամկավար կուսակցության և մյուս հայրենասիրական կազմակերպությունների դիմադրության շնորհիվ հակասովետիզմի ապոստոլները հաջողություն չունեցան...։ «Սառը պատերազմի» տարիներին դաշնակցական գործիչները, հրաժարվելով ընտրությունները «համեմատական դրությամբ» անցկացնելու հանձնառությունից, վերստին պայքարում էին թեմական ժողովներում մենատիրություն հաստատելու համար։

[68] «Արարատ», 5 հոկտեմբերի 1935։

[69] Տե՛ս նույն տեղում։

[70] Տե՛ս «Ազատ միտք», 7 նոյեմբերի 1936։

Հայաստանի օգնության կոմիտեն, հիմնադրվելով 1921 թ. Երևանում, ճյուղավորվեց ինչպես ՍՍՀՄ հայաբնակ կենտրոններում, այնպես էլ սփյուռքահայ գաղթավայրերում, այդ թվում Եգիպտոսում։ Անկախ անդամների քաղաքական դավանանքից և կուսակցական հանգամանքից, ՀՕԿ-ը հասարակական կազմակերպություն էր և, որպես այդպիսին, չեզոք դիրք ուներ քաղաքական և կուսակցական պայքարի հարցերում։ Նրա հիմնական խնդիրն էր՝ ճիշտ տեղեկություններ հաղորդել Սովետական Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային վերելքի մասին, օժանդակել Հայաստանի կառավարությանը՝ երկրի վերաշինության և ներգաղթի կազմակերպման գործում։

Եգիպտոսի ՀՕԿ-ը կազմվեց 1926 թ. փետրվարի 28-ին Կահիրեում։ Նրա հիմնադիրները՝ թվով «տասը հայրենասեր երիտասարդներ», ազդված էին «իրենց վերածնվող փոքրիկ, խիստ փոքրիկ Նաիրյան երկրի շինարարությանը» եգիպտահայ աշխատավորներին մասնակից դարձնելու գաղափարով[71]։ Նրանց թիվը շուտով հասավ 50-ի, գումարվեց առաջին ընդհանուր անդամական ժողովը, ընտրվեց վարչություն, որը և կապի մեջ մտավ Երևանի գլխավոր վարչության հետ[72]։ ՀՕԿ-ի մասնաճյուղեր են ստեղծվել Ալեքսանդրիայում և Դամանհուրում։ Հաղորդելով Ալեքսանդրիայում ՀՕԿ-ի կազմակերպման մասին, «Արաքս» թերթը գրել է. «Առանց այլևայլի ամբողջ եգիպտահայությունը պիտի բոլորվի այս գործին շուրջ...։ Վասն զի այս գործը ոչ գաղափարական խտրություն, ոչ կուսակցական մենատիրություն կճանչնա...։ Վասն զի այս գործը միակ իրական աշխատանքն է զոր գաղութահայությունը պետք է տանի սիրով ու նվիրումով»[73]։

ՀՕԿ-ը սակայն զարգանալու հնարավորություն չունեցավ։ Նրա ասպարեզ իջած ժամանակ Եգիպտոսում մոլեգնում էր հակակոմունիստական խաչակրությունը, ընդ որում հաշվենկատորեն հարձակման թիրախ էին դարձնում ոչ-մուսուլման կոմունիստներին[74]։ Դրանով հակակոմունիզմի ասպետները ձգտում էին կոմունիստական շարժումը ներկայացնել որպես բուն եգիպտական ժողովրդի հետ ոչ մի կապ չունեցող, օտարների կողմից հրահրված դիվերսիա։ Այդ կարծիքը պետական մակարդակի բարձրացնելով, ներքին գործերի մինիստրությունը հատուկ կարգադրություն մշակեց «հայ գաղթականության շրջանում բոլշևիզմի տարածման դեմ» պայքարելու համար։ Ոստիկանությունը պարբերաբար կոչնագիր էր ուղարկում առաջավոր աշխատավորների և հարցաքննում նրանց, իսկ հետադիմական թերթերն աղմուկ էին բարձրացնում հայերի անցանկալիության մասին։ Բողոքելով այդ միջոցառման դեմ, «Արև» թերթը գրել է. «Ներքին գործոց վսեմ. նախարարեն կսպասենք, որ պաշտոնական հայտարարությամբ մը փարատե հայերու շուրջ ստեղծված թյուրիմացությունը և լռեցնե այն տարրերը, որոնք առիթեն օգտվելով ատելություն կուզեն սերմանել խաղաղասեր ժողովուրդներու միջև»[75]։

Եգիպտահայ աշխատավորության շրջանում «բոլշևիզմի տարածման դեմ» պայքարին առավել ռեկլամային բնույթ տրվեց հետագա տարիներին։ 1928—1932 թթ. ռեակցիոն մամուլում տպագրվել են բազմաթիվ հաղորդումներ կոմունիստական շարժման մասնակցելու մեղադրանքով ձերբակալված, բերդարգելության դատապարտված կամ երկրից արտաքսված հայերի մասին։ 1928 թ. Կահիրեի «Ալ-Լաթայեֆ-ալ-մուսավվարա» շաբաթաթերթն առաջին էջում հրատարակել է երկու հայ պատանիների՝ Մկրտիչ Քանթիլյանի (20 տարեկան) և Միքայել Եկանյանի (25 տարեկան) մեծադիր լուսանկարները, բավական մեծադղորդ խորագրի ներքո։ Առաջինի լուսանկարի տակ գրված է եղել. «Ռուս մեծամասնականներեն մեկը, որ ձերբակալված է և պիտի վտարվի», իսկ երկրորդի՝ «Մեծամասնականներեն մեկը, որ ռուսահպատակ է և պիտի վտարվի»[76]։ Այնինչ Քանթիլյանը և Եկանյանը Իզմիրից գաղթած սոսկ արհեստավորներ էին։ Ռեակցիոն թերթերն աղմուկ բարձրացրին նաև մի ուրիշ հայ պատանու՝ Մասիս Մասիսյանի Եգիպտոսից արտաքսվելու առթիվ։ Նշելով, որ Մասիսյանը, Էլիա Թիբերին և ուրիշներ արտաքսվել են Եգիպտոսից, «Լա Լիբերտե» թերթը գրել է. «Ոստիկանությունը կշա-

---

[71] «ՀՕԿ», Կահիրե, 1926, № 1, էջ 2։

[72] Տե՛ս նույն տեղում։

[73] «Արաքս», 24 ապրիլի 1926։

[74] 1918 թ. Կահիրեում, Ալեքսանդրիայում, Պորտ Սաիդում և այլ վայրերում կազմակերպվեցին հեղափոխական աշխատավորների առաջին խմբակները։ 1920 թ. դրանց միավորվելով ստեղծվեց Եգիպտոսի սոցիալիստական կուսակցությունը, որը և 1922 թ. կոմինտերնի անդամ դառնալուց հետո վերանվանվեց Եգիպտոսի կոմունիստական կուսակցություն։ Նրա շարքերում, բացի գերակշիռ թիվ կազմող արաբներից, կային նաև հույներ, հրեաներ, հայեր։ 1925 թ. հունիսի 5-ին Ահմեդ Զիվերի կառավարությունը լուծարքի ենթարկեց կոմունիստական կուսակցությունը և զանգվածային ձերբակալություններ կատարեց նրա շարքերում։ Այնուհետև Եգիպտոսի կոմկուսը մշտապես գործել է ընդհատակում։

[75] «Արև», 14 օգոստոսի 1924։

[76] Ըստ «Հուսաբերի», 25 դեկտեմբերի 1928։

րունակ մոտեն հսկել կարգ մը կասկածելիներու վրա, որոնք նույնպես պիտի արտաքսվին, երբ հաստատվի, որ կապ ունին կոմունիստներու հետ»[77]։ Ըստ «Լա Ռեֆորմ» թերթի, Կահիրեում ձերբակալվել են երկու հայեր, որոնք իբր «հարաբերություններու մեջ էին Մոսկվայի հետ»[78]։ Նույն թերթը բավական ազդարար խորագրի ներքո հաղորդել է նաև 11 հայ «համայնավար պրոպագանդիստներու», իրականում հասարակ արհեստավորների ձերբակալության մասին[79]։

Արաբական ռեակցիոն մամուլի կրակին յուղ էին լցնում դաշնակցական գործիչները։ Նրանց առանձնապես դուր չէր գալիս, որ ՀՕԿ-ը եգիպտահայությանը ճիշտ տեղեկություններ էր հաղորդում Սովետական Հայաստանի մասին, հերքելով դաշնակցական մամուլի հորինած «սովետական դժոխքի» և «Հայաստան-վայաստանի» առասպելը։ Դաշնակցական մամուլը ՀՕԿ-ը ներկայացնում էր որպես «կարմիր գործակալների» ցանց, և նրան կարևոր դեր էր հատկացնում... Եգիպտոսի անվտանգության դեմ իբր նախապատրաստվող ապագա դիվերսիոն գործողություններում։ Նրանք գրում էին. «Դժգոհ՝ վտանգավոր տարրերն ամեն քողի տակ և ամեն տեսակ դիմակ հագած կրնան ներս սպրդիլ պետական բոլոր հաստատություններեն ... և, դեպքերու բարեհաջող դասավորումին, անմիջապես պարզել ըմբոստացումի, դավադրության, քաղաքացիական կռիվներու արյունոտ դրոշը»[80]։

Դաշնակցության հակակոմունիստական խաչակրությունը լիովին համապատասխանում էր եգիպտահայ կապիտալիստների շահերին, քանի որ դրանով հայ աշխատավորները կմեկուսանային արաբ աշխատավորության պայքարից և նրանց ձեռնարկությունները մեծ մասամբ կապահովագրվեին գործադուլներից[81]։

Եգիպտոսի ՀՕԿ-ի դեմ սանձազերծված գրպարտչական պայքարը վերջապես... պսակվեց հաջողությամբ։ 1934 թվականի դեկտեմբերին

[77] Ըստ «Արևի», 11 հունվարի 1929։

[78] Ըստ «Արաքսի», 5 դեկտեմբերի 1931։

[79] Ըստ «Արաքսի», 27 փետրվարի 1932։

[80] «Հուսաբեր», 21 դեկտեմբերի 1926։

[81] Այդ առումով բնութագրական է Զագազիգի Կամսարական ծխախոտագործական ձեռնարկության տնօրեն Ս. Դերձակյանի գործելակերպը։ Նա ճնշում էր գործադրում հայ բանվորների և ծառայողների վրա, որպեսզի նրանք մտնեն դաշնակցության շարքերը («Արև», 8 սեպտեմբերի 1931)։ Միևնույն ձևով էր վարվում նաև Սիրիայի Մաթոսյան ձեռնարկությունների տնօրենը («Լիբանան», 15 օգոստոսի 1931)։



եգիպտական ոստիկանությունը խուզարկեց նրա անդամների՝ «պոլշևիզմի սերմնացանների» բնակարանները[82], և նրանցից 44-ին բանտ նետեց։ Ձերբակալվածներից առաջադիմական մտավորական Գ. Սվազլյանը գրել է. «Խնամքով պատրաստված ժուռնալներու և մատնության դոսիեներու[83] շնորհիվ, ամենազազրելի կասկածանքներու քողին տակ, մեզ խլեցին մեր գործերեն, մեր տուներեն ու մեր զավակներեն, ու մենք ամենախիստ հսկողության տակ, ձեռնակապերով կապկպված նետվեցանք Հատրայի բանտերը...»[84]։

Ձերբակալվածները մեղադրվում էին Եգիպտոսի գերագույն շահերին դավելու մեջ։ Սակայն հետաքննության ընթացքում այդ կարգի հանցագործության հետք չհայտնաբերվեց, չնայած ոստիկանության գործադրած դաժան միջոցներին։ «Հուսաբերը» գրում է. «Մեկ ամիսեն ավելի է, որ անոնք ձերբակալված են և չափազանց խիստ քննության ենթարկված։ ...Կկատարվին հարցաքննություններ, որոնք ամենեն համառներն անգամ հուսահատեցնելու բնույթ ունին և ամենեն անմեղներեն իսկ հանցապարտության խոստովանություններ կրնան խլել»[85]։ Այնքան բացահայտ էր ձերբակալվածների անմեղությունը, որ մինչև անգամ մի շարք բուրժուական գործիչներ եգիպտական մամուլում հանդես եկան նրանց պաշտպանությամբ։ Հրապարակախոսներ Աշիլ Սեկալին և Ժան Լյուգոլը նշում էին, որ ձերբակալվածները «զոհերն են... անխիղճ հայրենակիցներու» և նրանց ներկայացված մեղադրանքը «զըրպարտություն» է[86]։ Մեղադրանքները հիմնավորել չկարողանալով, անվտանգության օրգանները նրանց ազատ արձակեցին։

Հայկական ՍՍՀ ժողկոմսովետի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշ-

[82] «Լիբանան», Բեյրութ, 14 հունվարի 1935։

[83] Գործ, մեղադրական փաստաթղթի իմաստով։

[84] Գ. Սվազլյան, Հայրենիքիս համար, էջ 20։

[85] «Հուսաբեր», 15 հունվարի 1935։ Իր հուշերում ձերբակալվածներից Տիգրան Անֆերյանը պատմում է, թե առերեսման համար հրավիրված են եղել դաշնակցական վկաներ Վահան Նավասարդյանը և Օննիկ Մաճառյանը։ Առաջինը չի ներկայացել հիվանդության պատրվակով, իսկ «Մաճառյանը իմ և բանտի ընկերներուս առաջ նույն զրպարտությունները (ինչ շարադրված է եղել ոստիկանության մատուցված զեկուցագրերում—Հ. Փ.) կրկնեց դատախազին...» («Միություն», Հայֆա, 2 հունիսի 1946)։

[86] Սեկալիի և Լյուգոլի հոդվածները լույս են տեսել «Լա Ռեֆորմ» և «Լա Բուրս Էժիպսիեն» թերթերի 1935 թ. հունվարի 5-ի համարներում։ Դրանցից հատվածներ է հրատարակել «Հուսաբերը», որտեղից և օգտվել ենք։ «Հուսաբերը» 10 և 15 հունվարի խմբագրականներով ապարդյուն փորձեց հակահարված տալ այդ հայասերներին։

ժամբ 20Կ-երը լուծարքի ենթարկվեցին, քանի որ Հայաստանը վերածվել էր առաջավոր, զարգացած հանրապետության և կարիք չէր զգում դրսի օգնության:

* * *

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Սովետական Միության բանակների հաղթարշավը թևավորեց գաղութային և կախյալ երկրների, այդ թվում Եգիպտոսի ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները: Պայքարի առաջապահ ջոկատ էին Ազգային-ազատագրության դեմոկրատական շարժումը, Ազգային-ազատագրության աշխատավորական լիգան, Աշխատավորների և ուսանողների ազգային լիգան, Մարքսիստական ուսմունքի շրջանակները և այլ կազմակերպություններ: Նրանք պահանջում էին չեղյալ հայտարարել 1936 թվականի անգլո-եգիպտական պայմանագիրը, դուրս բերել բրիտանական զորքերը և հռչակել Եգիպտոսի անկախությունը: Հողը այրվում էր բրիտանական իմպերիալիստների ոտքի տակ:

Այդ պայմաններում աշխուժացան նաև եգիպտահայ դեմոկրատները, և նրանց ջանքերով եգիպտահայությունը մասնակցեց այն միջոցառումներին, որ սփյուռքի հայությունը կատարում էր Սովետական Հայաստանի օգտին: 1943 թ. եգիպտահայերը պատվավոր մասնակցություն բերեցին «Սասունցի Դավիթ» տանկային զորասյան օգտին կազմակերպված հանգանակությանը: Հասարակության բոլոր խավերը, անգամ օրավուր հացի համար պայքարող բնակիչները «հայրեր» ինքնաբուխ կերպով մուծել են իրենց լուման[87]: Հանգանակության հաջողությունը բացատրվում է նրանով, որ սփյուռքահայերը Սովետական Միության հաղթանակում տեսնում էին հայ պետականության գոյատևման և արևմտահայության հարցի լուծման երաշխիքը:

Դրանով է բացատրվում նաև հարգանքի ու երախտագիտության այն զգացումները, որ եգիպտահայությունն արտահայտում էր Եգիպտոսում գործող սովետական ներկայացուցիչների նկատմամբ: Կահիրեի թեմական ժողովի պատվիրակությունը պաշտոնական այցով եղել է սովետական դեսպանատանը և շնորհավորել դեսպան Նիկոլայ Նովիկովին՝ սովետա-եգիպտական դիվանագիտական հարաբերությունների վերահաստատման առթիվ[88]: Այնուհետև «Հայ դեղարվեստասիրաց միության»

[87] Գ. Սիմոնյան, Հայրենիքին հետ, էջ 36:

[88] Տե՛ս Է. Բարագյան, Ինքնակենսագրություն, էջ 94:



ակումբում Սովետական Միության դեսպանի պատվին կազմակերպվել է մեծ ընդունելություն, որին ներկա են եղել եգիպտահայ երեք հարանվանությունների կրոնապետերը, ազգային իշխանությունների ներկայացուցիչները և թվով ավելի քան 200 եգիպտահայեր[89]:

Եգիպտահայերի հայրենասիրության դրսևորման պսակը հանդիսացավ Սովետական Հայաստանի բարեկամ կազմակերպությունների միասնական ճակատը՝ Եգիպտահայ ազգային խորհուրդը:

Սովետական Հայաստանի բարեկամ կազմակերպությունների միասնության ճանապարհին առաջին գործնական քայլը կատարվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում: 1944 թ. մարտի 19-ին ամերիկահայ գաղութում «Համերաշխություն և համագործակցություն» ստեղծելու և «Հայ ժողովուրդի շահերուն ի նպաստ հավաքաբար» աշխատելու նպատակով, Ամերիկահայ առաջադիմական միությունը, ռամկավար և հնչակյան կուսակցությունները կազմեցին Ամերիկահայ ազգային խորհուրդը, որի նպատակն էր. «Կազմակերպել ձեռնարկներ և օգնել ձեռնարկներու ի նպաստ Սովետ Միության և Սովետ Հայաստանի: Պաշտպանել տարագիր հայերու իրավունքները հարկ եղած բոլոր միջոցներով և աշխատիլ ի խնդիր անոնց հայկական հողին վրա վերաբնակեցման»: Ամերիկահայ ազգային խորհուրդը «հայկական իրավունքներու տերը կճանչնա Սովետ Հայաստանի կառավարությունը»[90]:

Արձագանքելով ամերիկահայերի միասնության շարժմանը, սփյուռքահայ տարբեր գաղթավայրերում ստեղծվեցին Հայ ազգային խորհուրդներ, որոնք Հայկական ՍՍՀ կառավարությունը համարում էին արտասահմանի հայության ազգային բոլոր ցանկությունների լավագույն «թարգմանը և իրագործողը», պահանջում էին Թուրքիայի կողմից բռնաբարված հայկական հողերը կցել Սովետական Հայաստանին և կազմակերպել սփյուռքահայ աշխատավորական զանգվածների հայրենադարձությունը:

Եգիպտահայ ազգային խորհուրդը կյանքի կոչվեց Կահիրեում և Ալեքսանդրիայում իրարից անջատաբար գործող ազգային խորհուրդների միավորումով:

[89] Տե՛ս «Արև», 6 հուլիսի 1944:

[90] «Զարթօնք», 3 մարտի 1945: Ազգային խորհուրդների կազմում տեղ չուներ դաշնակցությունը: Վ. Նավասարդյանը գրել է. «Այդ խորհուրդներուն կանգնածներին «Սովետ. Հայաստանի ուղղությունը ընդգրկող հոսանքներու ներկայացուցիչները» միայն, այսինքն Համայնավարները, Հնչակյանները և ռամկավարները: Դաշնակցությունը այդ խորհուրդներուն մէջ չկար» (Վ. Նավասարդյան, Բոլշևիզմը և դաշնակցությունը, էջ 649):

Կահիրեում Հայ ազգային խորհուրդը կազմվեց 1945 թ. հոկտեմբերին Սովետական Հայաստանի բարեկամների նախաձեռնությամբ, և նրան հարեցին Ռամկավար ազատական և Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունները, ինչպես նաև բազմաթիվ մշակութային, հայրենակցական, երիտասարդական միություններ։ Այդ կապակցությամբ ռամկավար կուսակցության վարչության՝ Հայ ազգային խորհրդին ուղղված հրապարակային նամակում ասված է. «Անվերապահ կերպով կհարենք նորակազմ Եգիպտահայ ազգային խորհուրդին՝ բոլորանվեր կերպով զորավիգ կանգնելու համար անոր՝ իր գերագանց հայրենասիրական նպատակներուն մեջ»[91]։ Նույնիմաստ հայտարարությամբ հանդես է եկել նաև Հնչակյան կուսակցության վարիչ մարմինը[92]։ Կահիրեի Հայ ազգային խորհրդի նախագահն էր Ալ. Սարուխանը։

Ալեքսանդրիայում Հայ ազգային խորհուրդը կազմվեց 1945 թ. դեկտեմբերի 12-ին. նրա կազմում էին՝ Ս. Շահպազը (նախագահ), Հ. Գալըճյանը, Տ. Սեֆերյանը, Համբար Դավիթը, բժ. Մ. Դեմիրճյանը, Բ. Օհանյանը, Լ. Փափազյանը, Գ. Սվազլյանը, Ն. Գալըճյանը և Օ. Պապիկյանը։ Նրան հարել էին՝ ռամկավար և հնչակյան կուսակցությունների Ալեքսանդրիայի մասնաճյուղերը, Տիգրան Երկաթի անվան մշակութային միությունը, «Սևան» միությունը և այլն։

Ելնելով գործի շահերից, Կահիրեի և Ալեքսանդրիայի ազգային խորհուրդները միաձուլվեցին։ Այդ առթիվ նրա «Տեղեկատվությունում» ասված է. «Որպես մեկ չտո բնական անհրաժեշտություն, Կահիրեի և Ալեքսանդրիայի երկու քույր ազգ. խորհուրդները պետք է որ իրարու միացնեին իրենց գործունեությունը։ Այս նպատակով առանց հապաղումի կազմվեցավ՝ խանդավառ և համերաշխ մթնոլորտի մը մեջ՝ երկու խորհուրդներու ներկայացուցիչներեն կեդրոնական կոմիտե մը», որը և կոչվեց «Եգիպտահայ ազգային խորհուրդ»[93]։ Դրանով Կահիրեի և Ալեքսանդրիայի հայ ազգային խորհուրդները չվերացան, բայց զբաղվում էին միայն տեղական բնույթի հարցերով[94]։

Եգիպտահայ ազգային խորհրդի նպատակն էր. «1) Պահանջել կցումը Ն. Հայաստանի՝ Թուրքիո կողմէ բռնագրաւված հայկական նահանգներուն, որոնք ճշտված են Սեւրի դաշնագրով ալ։ Պահանջել

91 «Արև», 16 հոկտեմբերի 1945։

92 Տե՛ս նույն տեղում։

93 «Տեղեկատվություն», Ալեքսանդրիա, 1946, Բ պրակ, էջ 3։

94 Տե՛ս նույն տեղում։



նաև նյութական վնասուց հատուցում. պահանջքներ, որոնք ներկայացվեցան Սան-Ֆրանցիսկոյի խորհրդաժողովին Ամերիկահայ ազգ. խորհուրդին կողմե։ 2) Ըլլալ ջատագով ներգաղթին և անոր սատարել։ 3) Մեր դատին պաշտպանությունը հանձնել անվերապահորեն Ն. Հայաստանին, որ իր կարգին կվայելե խորհրդ. Միության... պաշտպանությունը։ 4) Մշակութային և հայրենասիրական կապեր հաստատել Մայր հայրենիքին հետ» և այլն[95]։

Այդ առաջադրանքները իրականացնելու ուղղությամբ Եգիպտահայ ազգային խորհուրդը կատարեց մի շարք գնահատելի գործեր։ Հատուկ հիշատակության է արժանի 1946 թ. Միացյալ ազգերի կազմակերպության նստաշրջանին ուղարկված հուշագիրը, որը «պատմական վավերաթուղթերու լույսին տակ» չորս լեզվով (հայերեն, արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն) ներկայացնում էր հայ ժողովրդի արդար պահանջները[96]։ Բացի այդ, նրա անվան հետ են կապված Սովետական Միության, Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններին ուղղված բազմաթիվ հուշագրեր, դիմումներ, բողոքագրեր և այլ բնույթի գրություններ։

Եգիպտահայ ազգային խորհուրդն առավել մեծ դեր խաղաց եգիպտահայերի ներգաղթը կազմակերպելու գործում։ Ստանձնելով այդ պարտականությունը, ազգային խորհրդի նախագահ Ստեփան Շահպազը հայտարարեց. «Եգիպտահայ ազգ. խորհուրդը հպարտ է, որ Ս. Հայաստանի կառավարությունը իրեն վստահեցավ այս հույժ հայրենասիրական գործը»[97]։ Ստեղծվեց Ներգաղթի կենտրոնական կոմիտե, որը մեծ օգնություն ցույց տվեց ներգաղթի պատվիրակներին՝ կարավանների նախապատրաստման և առաքման գործում։

1947 թ. սեպտեմբերի 4-ին բուռն խանդավառության մթնոլորտում ճանապարհվեց «Պոբեդա» ջերմանավը, որը հայրենիք էր բերում 1680 եգիպտահայերի առաջին կարավանը[98]։ Ալեքսանդրիայից հեռանալիս, նրանք Եգիպտոսի կառավարության պրեմիեր Նոկրաշի փաշային հեռագրել են. «Մեր երկրորդ հայրենիքը եղող սիրելի Եգիպտոսեն դեպի մեր հայրենիքը մեկնումի այս պահուն, մենք, առաջին կարավանի հայերս ձեզի կներկայացնենք մեր հավիտենական երախտագիտության

95 «Տեղեկատվություն», Ա պրակ, էջ 4—5։

96 Տե՛ս նույն տեղում, էջ 5։

97 «Տեղեկատվություն», Բ պրակ, էջ 4։

98 Տե՛ս «Արև», 4 սեպտեմբերի 1947։

ամենաջերմ զգացումները՝ բոլոր այն բարիքներուն համար, զորս երկար տարիներ վայելեցինք կատարյալ ազատության և ապահովության մեջ, և սրտագին կմաղթենք, որ լիակատար հաջողությամբ պսակվի եգիպտական արդար դատը»։ Իսկ երկրորդ և վերջին կարավանը, վերահաս խոլերայի համաճարակի պատճառով, մեկնել է շուրջ մի տարի հետո՝ 1948 թ. օգոստոսի 22-ին, հայրենիք բերելով 2018 եգիպտահայերի[99]։

Եգիպտահայ ազգային խորհուրդը գործեց մինչև 1948 թվականը, երբ բրիտանական իմպերիալիստները դաժան հալածանք սկսեցին ազգային-ազատագրական ուժերի դեմ։ Այդ քաղաքականությունը, որը համաշխարհային սոցիալիստական սիստեմի դեմ ծավալված «սառը պատերազմի» արտահայտությունն էր, ոգևորեց հետադիմական, ռեակցիոն տարրերին։ Աշխուժացավ նաև դաշնակցությունը։

1947 թ. Կահիրեում գումարվեց դաշնակցության ընդհանուր պատգամավորական ժողովը, որը Կանայան-Նավասարդյան առանցքի[100] ջանքերով «անվերապահորեն» կողմնորոշվեց դեպի «դեմոկրատիկ արևմուտքի» հակասովետական լագերը։ Մշակվեց հակասովետական նոր ծրագիր, որի հիմքում ընկած էր երրորդ համաշխարհային պատերազմի «անխուսափելիության» վարկածը։ Ըստ դաշնակցական գործիչների սուբյեկտիվ դատողության, այդ պատերազմից հաղթական դուրս պետք է գար «ազատ աշխարհը», այսինքն անգլո-ամերիկյան իմպերիալիզմը[101]։ Այնուհետև նրանց քաղաքական բոլոր դատողությունների առանցքը դարձավ «բոլշևիզմի խորտակումը»։ Նրանք գրում էին. «Եթե խորտակվի... երբ խորտակվի... խորտակվելէն վերջ...»[102]։

Ծառայության մտնելով ամերիկյան իմպերիալիզմի լագերում, դաշնակցությունը ստանձնեց մի շարք «անպատիվ պարտավորություններ»։ Նախկին դաշնակցական գործիչ Խ. Թյությունճյանը գրել է. «Դաշ-

[99] Տե՛ս «Ջահակիր», 1 սեպտեմբերի 1948։

[100] Ի դեպ, դաշնակցության վերոհիշյալ ընդհանուր ժողովում հաղթանակ տարան ֆաշիզմի հետ գործակցող Դրո Կանայանը և նրա զինակիցները։ «Ջահակիր» շաբաթաթերթը գրել է. «Բոլոր երկրներու մեջ նացիներուն գործակցողները պատժվեցան... Դրո և իրենները ոչ միայն չիրավազրկվեցան, այլև նոր ուղեգիծ բռնելու առաքելություն ստացան» («Ջահակիր», 1 սեպտեմբերի 1948)։

[101] Տե՛ս «Հայրենիք», Բոստոն, 9 հուլիսի 1947։

[102] «Հառաջ», Փարիզ, 12 մարտի 1954։



նակցությունը վճռականորեն կխզվեր արևմտյան կայսերապաշտությանց սայլին, հակահամայնավար ճամբարին տակ, ոչ միայն քաղաքական գործունեությամբ սփյուռքի հայության մեջ՝ խորհրդային վտանգի և համայնավարության դեմ պայքարով, այլ նաև կմասնակցեր համայնավար Ռուսաստանը ներքնապես պայթեցնելու նպատակով ամերիկյան նախաձեռնությամբ կազմված մյունխյան համագումարին ու անոնց բխած մարմիններուն...»[103]։ Բացի այդ, դաշնակցությունը Լիբանանից, Սիրիայից և Պարսկաստանից «բազմաթիվ հայ երիտասարդներ Ամերիկա ուղարկեց «ստանալու համար հարկ եղած պատրաստությունը, լավագես ծառայելու նպատակով ոչ միայն Միջին և Մերձավոր Արևելքի անգլո-ամերիկյան պաշտպանության գործին, այլև հետախուզական առաքելությանց կովկասյան ճակատի վրա»[104] և այլն։ Այդ գործելակերպը չէր կարող բացասական անդրադարձ չունենալ սփյուռքահայ գաղթավայրերում։

Դաշնակցության հակառակորդները զարդարվում էին «կարմիր գործակալ» մակդիրով։ Ռ. Դարբինյանը գրում էր. «Բացի Հ. Հ. Դաշնակցութենեն, հայկական մյուս կազմակերպությունները՝ Ռամկավար-ազատականները, Հնչակյանները և նույնիսկ Բարեգործականը և Հոգևորականներու մեկ կարևոր մասը երկար տարիներ սերտորեն գործակցած են ու դեռ մինչև այժմ ալ կգործակցին «Հառաջդիմական» կոչեցյալ համայնավարներուն հետ»[105]։ Դաշնակցական մամուլն ազդում էր, որ ռամկավարները «ստրուկներն են բոլշևիզմի և բոլշևիկներուն»[106], որ Ռամկավար կուսակցությունը կատարում է «հավատարիմ ուղեկցի իր դերը՝ ի սպաս բոլշևիզմին։ Բանիվ և գործով»[107] և այլն։ Դաշնակցական գործիչները վճռել էին «մարքսիզմը արմատախիլ» անել սփյուռքահայ կյանքից։

Օգտագործելով դաշնակցության հրապարակային և խորհրդապահական... դրպարտությունները, եգիպտական ոստիկանությունը հալածանք ծավալեց դեմոկրատական կազմակերպությունների և գործիչների դեմ։ Կահիրեի «Երևան» և Ալեքսանդրիայի «Սևան» մշակութային միու-

[103] Խ. Թյությունճյան, Բյուրոյական սնանկությունը և իրավ Դաշնակցության ուղին, էջ 76։

[104] Նույն տեղում, էջ 76—77։ Տե՛ս նաև Հ. Թափուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, էջ 155—159։

[105] Ըստ «Ջահակիրի», 20 օգոստոսի 1926։

[106] «Հուսաբեր», 30 դեկտեմբերի 1948։

[107] «Արևելք», Հալեպ, 18 փետրվարի 1949։

թյունները լուծարքի ենթարկվեցին, և նրանց ղեկավարներն արգելափակվեցին «Համայնավար քարոզչության» մեղադրանքով[108]։ 1949 թ. մարտի վերջերին Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդ Դանիել վարդապետ Թումայանը, որը գործից չէր դադարել դաշնակցությանը, արտաքսվեց Եգիպտոսից «պետական շահերուն դեմ արարքներու մեջ գտնըված ըլլալու հանցանքով»։ Վերսկսվեց նոյեմբերի 29-ին դպրոցները փա՞կ, թե բաց պահելու հետ կապված արյունալի համամարտությունը։ Աշխատավոր երիտասարդներ Ա. Նշանյանը, Մ. Չիլինկիրյանը և ուրիշներ ձերբակալվեցին «Իբրև համայնավար»[109], անվանի գրող Արշամ Տատրյանը և հրապարակախոս Հայկ Ժամկոչյանը հրապարակով խոշտանգվեցին և այլն, և այլն։ Միապետական Եգիպտոսում կարելի էր խոշտանգվել ոչ միայն դաշնակցության դեմ լինելու, այլև դաշնակցության հետ չլինելու համար։ Նրա զոհերը չէին կարող ապավինել օրենքի պաշտպանությանը[110]։

Այսպիսով, Եգիպտոսում մոլեգնում էր հակակոմունիստական խաչակրությունը, ոստիկանությունը հալածում էր դեմոկրատ գործիչներին, գլխատում կամ սաղմի մեջ խեղդում դեմոկրատական կազմակերպությունները, կապում բարի կամքի տեր մարդկանց խղճի ազատությունը։ Օգտվելով կառավարող շրջանների հակակոմունիստական մոլուցքից, դաշնակցությունը հաշիվ էր տեսնում իր քաղաքական հակառակորդների հետ՝ ոստիկանության ձեռքով։ Նրա հարվածի տակ ընկան և զարգանալու հնարավորություն չունեցան Հայաստանի օգնության կոմիտեն, «Սևան» և «Երևան» միությունները։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին հայրենասիրական կազմակերպությունների միավորումով ստեղծվեց Եգիպտահայ ազգային խորհուրդը, որը կարևոր դեր կատարեց հատկապես ներգաղթի կազմակերպման գործում։ Նրա գործունեությունն ընդհատվեց վերահաս «սառը պատերազմի» հետևանքով։

[108] «Հուսաբեր», 17 սեպտեմբերի 1949։

[109] «Ջահակիր», 15 դեկտեմբերի 1948։

[110] Դրա վառ արտահայտությունն է Տատրյանի և Ժամկոչյանի գործի դավեշտական վախճանը։ Չնայած բազմաթիվ ականատես վկաների ցուցմունքներին, եգիպտական դատարանն ապացուցված չի համարել հանցագործությունը և վճռել է 50-ական ղրուշ տուգանքի ենթարկել թե՛ հանցագործներին, և թե նրանց զոհերին («Հուսաբեր», 19 հունիսի 1949)։



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՄՇԱԿՈՒՅԹԸ

Քննարկվող ժամանակաշրջանում զգալի չափով բարձրացավ եգիպտահայ մշակույթի մակարդակը։ Խոշոր առաջընթաց կատարվեց աճող սերնդի ուսման և դաստիարակության գործում, ասպարեզ իջան նոր, համագաղութային նպատակներ հետապնդող մշակութային ընկերություններ, ավելի լավ կազմակերպվեց և ծանրակշիռ դարձավ պարբերական մամուլը, հրատարակչական գործը, տպարանները։ Զարգացան նաև եգիպտահայ արվեստի տարբեր ճյուղերը։ Կազմվեցին թատերախմբեր, հաճախակի դարձան հյուրեկային ներկայացումները։ Առավել ուշագրավ հաջողություններ ձեռք բերվեցին երաժշտության և կերպարվեստի բնագավառում։

Եգիպտահայ մշակութային կյանքի բնորոշ գծերից էր քաղաքական բևեռացումը։ Դպրոցները, մշակութային ընկերությունները, պարբերական մամուլը, մինչև անգամ արվեստի տարբեր ճյուղերը բաժանված էին կուսակցական ազդեցության գոտիների, և բուռն պայքար էր գնում նրանց վերահսկողության համար։

## 1. ԴՊՐՈՑՆԵՐԸ

1917—1952 թթ. եգիպտահայ դպրոցների թիվը 11-ից նախ հասավ 13-ի, ապա՝ 20-ի, իսկ վերջում նվազեց մինչև 12-ի[1]։ Սակայն սովորողների թիվը, եգիպտահայերի թվաքանակի համեմատությամբ, այնուամենայնիվ ցածր էր։ Գործում էին թեմական կամ լուսավորչական,

[1] Ա. Ալպոյաճյանն առանց փաստի և աղբյուրի նշել է, որ 1949 թ. Եգիպտոսում գործում էին հայկական «31 ազգային և անհատական վարժարաններ» («ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը», էջ 130—131)։ Դա ակներև թյուրիմացություն է։

հայ կաթոլիկ և մասնավոր դպրոցներ։ Աղյուսակում[2] բերված տվյալները կարող են մոտավոր պատկերացում տալ այն դերի մասին, որ համայնքներից յուրաքանչյուրի վերահսկած դպրոցները կատարում էին մատաղ սերնդի ուսումնադաստիարակչական գործում։

| Դպրոցներ | 1923—1924 թթ. | | 1935—1936 թթ. | | 1949—1952 թթ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը |
| Թեմական | 4 | 1607 | 7 | 1711 | 5 | 1677 |
| Հայ կաթոլիկ | 2 | 110 | 4 | 275 | 5 | 585 |
| Մասնավոր | 7 | 685 | 9 | 970 | 2 | 285 |
| Ընդամենը | 13 | 2402 | 20 | 2956 | 12 | 2547 |

Ինչպես տեսնում ենք, մասնավոր դպրոցների թիվը տվել է զգալի տատանումներ, աստիճանաբար նվազել է նրանց նշանակությունը։ Ընդհանրապես, հայ կաթոլիկ դպրոցներն ավելացել են և նրանց սովորողների թիվն աստիճանաբար մեծացել է, սակայն զիջել է թեմական դպրոցներին, որոնք կրում էին մատաղ սերնդի ուսման և դաստիարակության գործի հիմնական ծանրությունը։ Վերջին տարիներում սովորողների թվի անկումը հետևանքն էր եգիպտահայ աշխատավորների զանգվածային հայրենադարձության։

Հայկական դպրոցներ գործում էին Կահիրեում, Ալեքսանդրիայում, Հելիոպոլսում և այլ վայրերում։ Աղյուսակում (էջ 277) տրվում է եգիպտահայ դպրոցների և սովորողների տեղաբաշխումը[3]։

Սովորողների և համապատասխան քաղաքի հայ ազգաբնակչության ընդհանուր թվաքանակի բաղդատությունից երևում է, որ զգալի թվով երեխաներ կամ օտար դպրոց էին հաճախում[4], կամ էլ բնավ դպրոցի

[2] Աղյուսակը կազմված է ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԴԽՀէ, ԾԹ. Տեղեկագիր (1924, էջ 13—17, 1934—1937, էջ 40, 45 և 51—52, 1944, էջ 9), «Արևի» (13 հունիսի և 21 հուլիսի 1924), «Հուսաբերի» (2 սեպտեմբերի 1935, 14 և 19 հուլիսի, 7 և 15 սեպտեմբերի 1949), «Հայ դպրոցի» (1938 № 1, էջ 38), «Արարատի» (5 սեպտեմբերի 1936), «Հայահամար» տարեգրքի (1939), «Զարթոնքի» (5 սեպտեմբերի 1952) տվյալների հիման վրա։

[3] Նույն աղբյուրների տվյալների հիման վրա։

[4] Մինչև 1924 թ. օտար դպրոցներում սովորող հայ երեխաների թվաքանակը հաշվ-



երես չէին տեսնում։ 1924—1925 թթ. ուսումնական տարում Ալեքսանդրիայի Պողոսյան դպրոցը ունեցել է 725 աշակերտ, ընդամենը 410 ընտանիքից, որոնք կարող էին ամենաշատը 2460 անձ լինել[5]։ Մինչդեռ այդ տարիներին Ալեքսանդրիայում ապրում էին ավելի քան 8.000 հայեր, այսինքն շուրջ 1.600 ընտանիք։ 1923—1924 թթ. եգիպտահայ գաղութում ապրում էին ավելի քան 20.000 հայեր կամ 4.000 ընտանիք, որտեղ կարող էին լինել 6.000 դպրոցահասակներ, մինչդեռ միայն 2402 երեխաներ էին սովորում հայկական դպրոցներում։ Թվերը ցույց են տալիս, որ հայկական դպրոցները, որոնց հիմնական խնդիրն էր թումբ կանգնել ապազգայնացման դեմ, ազդում էին գաղութի սոսկ մեկ չորրորդի կամ, լավագույն դեպքում, մեկ երրորդի վրա։

| Քաղաքները | 1923—1924 թթ. | | 1935—1936 թթ. | | 1949—1951 թթ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը | դպրոցների թիվը | աշակերտների թիվը |
| Կահիրե | 5 | 1125 | 9 | 1504 | 6 | 1102 |
| Ալեքսանդրիա | 3 | 872 | 5 | 1024 | 4 | 1039 |
| Հելիոպոլիս | 4 | 355 | 3 | 342 | 1 | 396 |
| Զագազիգ | 1 | 50 | 1 | 21 | — | — |
| Գիզե | — | — | 1 | 35 | 1 | 10 |
| Մաթարիա | — | — | 1 | 30 | — | — |
| Ընդամենը | 13 | 2402 | 20 | 2956 | 12 | 2547 |

Հայկական դպրոցներում բարձր խավի երեխաները կազմում էին չնչին տոկոս։ 1923—1924 թթ. Պողոսյան դպրոցի հետ կապված 462 ընտանիքները, ըստ զբաղմունքի, ունեին հետևյալ կազմը. արհեստավորներ՝ 234 (50,3%), մանր ու միջակ առևտրականներ՝ 88 (18,1%), ծառայողներ՝ 42 (9,2%), բանվորներ՝ 52 (10,1%), վաճառականներ՝ 40 (9,0%), պատահական զբաղմունքի տեր՝ 14 (3,2%)[6]։ Այդ թվերը ցույց են տալիս, որ Պողոսյան դպրոցի աշակերտների 80 տոկոսը համեստ կարողության ընտանիքի երեխաներ էին։ Պատկերը մոտավորապես նույնն էր նաև մյուս դպրոցներում։

վում էր շուրջ 300 (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԴԽՀէ, ԾԹ. Տեղեկագիր, 1924, էջ 18), իսկ 1944 թ.՝ 600 (ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. ԴԽՀէ, ԾԹ. Տեղեկագիր, 1944, էջ 9)։

[5] Տե՛ս «Զեկուցում Պողոսյան ազգ. երկսեռ վարժարանի Ալեքսանդրիո 1924—1925 տարվա գործունեության», էջ 24։

[6] Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1923—1924 տարվա...», էջ 55։

Այդ հանգամանքը կանխորոշում էր դպրոցների բնույթը, նրանց նպատակն ու ծրագիրը։ Եգիպտահայ դպրոցները գերազանցապես ժողովրդական դպրոցներ էին, նրանց նպատակն էր ոչ միայն պայքարել ձուլման վտանգի դեմ, այլև պատրաստել կիրթ մարդիկ, որոնք ընդունակ լինեին իրենց օրապահիկը շահելու և հասարակության մեջ ապահովելու իրենց համեստ տեղը։ Դպրոցական ծրագիրը պետք է հարմարվեր այդ նպատակին։

Եգիպտահայ դպրոցները միօրինակ կրթական ծրագիր չունեին։ Տարբեր ծրագրերով էին ղեկավարվում ոչ միայն թեմական, կաթոլիկ և մասնավոր դպրոցները, այլև այդ խմբերից յուրաքանչյուրի մեջ մտնող դպրոցները։ «Արև» թերթը գրում էր. «Ազգային վարժարանները զգալի կերպով կտարբերին իրարմե ծրագրի տեսանկյունեն, մինչ անհատականները գրեթե բոլորովին տարբեր են մեկզմեկե»[7]։ Յուրաքանչյուր դպրոց յուրովի էր պատասխանում կյանքի պահանջներին, որոնք բավական բարդ ու խայտաբղետ էին։ Անհրաժեշտ էր համարվում երեխաներին զինել հայոց լեզվի, գրականության և պատմության «բավական լայն հմտությամբ, երբ օտար լեզուներու (արաբերեն, ֆրանսերեն և անգլերեն) ընտանությամբ, և առևտրական կամ ատոնին տնտեսության ճյուղերու հատուկ այնքան մը ծանոթություններով, որ շրջանավարտները կարենան կյանքի մեջ իսկույն կիրարկել զանոնք և իրենք իրենց օգտակար ըլլալ»[8]։ Բացի այդ, դպրոցները պետք է այնպես կազմակերպեին ուսուցման գործը, որ շրջանավարտները կարողանային ուսումը շարունակել օտար դպրոցներում[9]։

Եգիպտահայ դպրոցները, բացի անգլիական թեքում ունեցող Արաբատյան կոլեջից, ձգտում էին հարմարվել ֆրանսիական դպրոցների ուսումնական ծրագրին։ Թեմական, կաթոլիկ, ինչպես նաև մի շարք մասնավոր դպրոցներում օգտագործվում էր ֆրանսիական բարձրագույն նախակրթարանի ծրագիրը, իհարկե, «մասամբ հարմարված, մասամբ ալ ճոխացված՝ գոհացում տալու համար տեղական պահանջներու»[10]։ Գերպերյան միջնակարգ դպրոցը ուսանողներ էր պատրաստում ֆրանսիական բակալավրիայի քննությունների համար։ Ֆրանսերեն լեզուն

7 «Արև», 19 նոյեմբերի 1929։

8 «Արև», 4 հուլիսի 1927։

9 Տե՛ս նույն տեղում։

10 Նույն տեղում։



ընդունված էր ոչ միայն հայկական, այլև եգիպտական դպրոցներում[11]։ Դա բացատրվում է այն նշանակությամբ, որ ֆրանսիական մշակույթն ու լեզուն տակավին ներկայացնում էին պրակտիկ կյանքում։

Կրթական միօրինակ ծրագրի բացակայության պայմաններում յուրաքանչյուր դպրոցի տնօրեն, ըստ իր հայեցողության, կամ ընդառաջելով ծնողների ցանկությանը, կարող էր կրճատել կամ ավելացնել տարբեր առարկաների ուսուցմանը հատկացվող ժամերը, ծրագրից հանել կամ մտցնել առարկաներ և այլն։ Բայց համարյա բոլոր հայկական դպրոցներում, ըստ դասաժամերի քանակի և կարևորության, առաջին տեղը գրավում էին հայագիտական առարկաները։ Ամենից ավելի ուշադրություն էր դարձվում հայոց լեզվի ուսուցմանը։ Բոլոր կարգերում օրական մի դասաժամ դասավանդվում էր հայոց լեզու, իսկ մի շարք դպրոցների բարձր կարգերում՝ նաև գրաբար։ Երեխաների մայրենի լեզվի իմացությանն օգնում էր նաև այն, որ բոլոր առարկաների դասավանդումը կատարվում էր հայերեն։

Եգիպտոսը հայեր հյուրընկալող այն բացառիկ երկրներից էր, որտեղ հայոց լեզուն պաշտոնական կամ անպաշտոն ձևով երբեք չի հալածվել, չի կաշկանդվել նրա ուսուցման ազատությունը, որը զգալի չափով նպաստել է եգիպտահայ գաղութում անգրագիտության հաղթահարմանը։ 1920-ական թվականներին անգրագետ էր եգիպտահայերի մեծ մասը[12], իսկ 1953 թ. գաղութի ավելի քան 90 տոկոսը գրագետ էր, այն դեպքում, երբ անգրագետները կազմում էին Եգիպտոսի բնակչության 50 տոկոսը։

Եգիպտահայ դպրոցներում թերի էր արաբերենի ուսուցումը։ Աղջիկներն ազատված էին արաբերեն լեզվի դասերից, իսկ տղաներին

11 Տե՛ս Ah. Chafik, L'Egypte moderne, p. 211. Այս հեղինակը գրում է. «Ֆրանսիան արդյոք կորցրե՞լ է ամեն ազդեցություն Եգիպտոսում։ Քաղաքական տեսակետից, իհարկե, այո, բայց ֆրանսիական մշակույթը տակավին կենդանի է մնում այստեղ հակառակ անգլիական իշխանությունների կատաղի պայքարին՝ պետական բոլոր դպրոցներում ֆրանսերեն լեզուն անգլերենով փոխարինելու համար»։ Ահմետ Շաֆիկը բերում է տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ ֆրանսերեն լեզուն անգլերենից ավելի լայն ժողովրդականություն էր վայելում պետական միջնակարգ դպրոցներում։ 1928 թ. այդ դպրոցներում ֆրանսերեն էին սովորում 66.407, անգլերեն՝ 55.495 եգիպտացի երեխաներ (Նույն տեղում)։

12 Այդ կապակցությամբ նշենք, որ 1924—1925 թթ. Պողոսյան դպրոցի հետ կապված 1913 անձերից 429-ը անգրագետ էին, իսկ 203-ը՝ թուրքախոս («Զեկուցում», էջ 75)։

արաբերեն դասավանդում էին սովորաբար նախակրթարանի երրորդ կարգից, այն էլ շաբաթական միայն երեք դասաժամ[13]։ Պողոսյան դպրոցում արաբերեն լեզվի ուսուցմանը հատկացված էր ընդհանուր դասաժամերի 4,6 տոկոսը, այն դեպքում, երբ ձեռագործի նման երկրորդական առարկան զբաղեցնում էր շուրջ 6 տոկոսը[14]։ Այդ իսկ պատճառով, նշել է «Արև» թերթը. «...Մեջերնիս չենք-չնորհք արաբերենի ծանոթ դեմք մը չենք կրնար ցույց տալ. մեր ներկայացուցիչները պետական անձնավորությանց հետ տեղական լեզվի փոխարեն օտար լեզու կգործածեն...»[15]։ Արաբերեն լեզվի անբավարար իմացության հետևանքով հայերի առաջ փակ էին մնում եգիպտական համալսարանի, ուսումնարանների և պետական պաշտոնատների դռները։

Արաբերենի ուսուցումը բարելավելու ուղղությամբ զգալի քայլեր կատարվեցին 1936 թ., երբ այն հռչակվեց պետական պարտադիր լեզու[16]։ 1940-ական թթ. նրա դասավանդումն արդեն դրվում էր բավական բարձր մակարդակի վրա։ Այսպես, Գալուստյան դպրոցում արաբերեն լեզվի ուսուցումը սկսվում էր նախապատրաստական դասարանից, իսկ նախակրթարանում արաբերեն լեզվով էին անցնում թվաբանությունը, Եգիպտոսի աշխարհագրությունն ու պատմությունը[17]։ Արաբերեն լեզվի ուսուցումը ուժեղ թափ ստացավ նաև հայ կաթոլիկ և մասնավոր դպրոցներում։ «Արաբերեն խոսելու վարժության դասեր» էին անցնում մինչև անգամ որոշ մանկապարտեզներում[18]։ Սակայն արաբերենի ուսուցումն արժանավայել բարձրության հասավ միայն միապետության տապալումից հետո։

Բացի արաբերենից, եգիպտահայ դպրոցներում որպես օտար լեզու դասավանդվում էին ֆրանսերեն և անգլերեն։ Տարբեր դպրոցներում տարբեր ձևով էր դրված այդ լեզուների ուսուցումը։ Մինչև 1924 թվականը Գալուստյան դպրոցում անգլերենը համարվում էր գլխավոր օտար լեզու, իսկ ֆրանսերենը մնում էր «երկրորդական գծի վրա»։ Այդ թվականից դպրոցը բավական ջանքեր է գործադրել ֆրանսերենը հասցնելու համար անգլերենի բարձրությանը և մինչև անգամ փորձել բարձր դա-

13 Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1923—1924 տարվա», էջ 27։

14 «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1924—1925 տարվա», էջ 69։

15 «Արև», 7 փետրվարի 1927։

16 «Արաքս», 14 նոյեմբերի 1936։

17 Տե՛ս «Հուսաբեր», 16 հուլիսի 1949։

18 Տե՛ս «Հուսաբեր», 7 սեպտեմբերի 1949։



սարաններում այդ լեզվով տանել մի շարք առարկաների դասավանդումը[19]։ Ընդհակառակը, Պողոսյան դպրոցում անգլերենը մղված էր երկրորդ պլան, և գլխավոր օտար լեզու համարվում էր ֆրանսերենը, նկատի ունենալով նրա «գործնական կարևորությունը»[20]։ Ֆրանսերենի ուսուցմանը հատկացված էր ընդհանուր դասաժամերի 8,8 տոկոսը, իսկ անգլերենի՝ 3,1 տոկոսը[21]։ Ֆրանսերենը, որպես գլխավոր օտար լեզու, դասավանդվում էր նաև Պերպերյան, Մխիթարյան, Թաշճյան և այլ դպրոցներում։ Սակայն հետագա տարիներին անգլերեն լեզուն բավական ամուր կռվաններ ստեղծեց հայկական դպրոցներում։

Դպրոցական ծրագրի հաջող իրականացումն առաջին հերթին պայմանավորված էր համապատասխան բարձրորակ դասագրքերի առկայությամբ, իսկ եգիպտահայ դպրոցները դասագրքեր չունեին, եղածներն էլ անարժեք էին։ Մայրենի լեզվի ուսուցումը կատարվում էր համաշխարհային պատերազմից առաջ Պոլսում կազմված «Մեղրագետ» (Ռ. Զարդարյան), «Գանձարան» (Ա. Անտոնյան) և այդ կարգի այլ ժամանակավրեպ դասագրքերով։ Պողոսյան դպրոցի տնօրենն իրավացիորեն նշել է. «Դասագրքի սովին կտառապինք. Նոր ոգիով դասագիրք չկա և այսօր (1926) հարկադրված ենք օսմանյան ռեժիմի գրքերով գոհանալ։ Մեր մանուկները, մեր պատանիները և մինչև իսկ այն ծնողները, որոնք կուզեն ազգային շունչ մտցնել տունեն ներս, չունին իրենց համար գրքեր»[22]։ «Նպատակահարմար դասագրքերու պակասը» շարունակեց կրթական գործին խանգարել նաև 1930-ական թվականներին[23], ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները, երբ Եգիպտոսում լույս տեսան մի շարք հայոց լեզվի, հայոց պատմության և աշխարհագրության նոր դասագրքեր։ Դրանք, թեև լիարժեք մանկավարժական ձեռնարկներ չէին, բայց մասամբ դարմանում էին պակասը։ Դրանցից առանձնապես պետք է հիշատակել «Հայկարան» (Բ. Թաշյան) մայրենի լեզվի դասագրքերի շարքը։

Ուսուցման գործի արդյունավետությանը խանգարում էր նաև դասատուների որակը։ Եգիպտահայ կրթական գործի արատներից գուցե գլխավորն այն էր, որ դասատուները, աննշան բացառությամբ, չունեին

19 Տե՛ս «Արև», 13 օգոստոսի 1924։

20 Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1923—1924 տարվա», էջ 27։

21 «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1924—1925 տարվա», էջ 69։

22 «Հուսաբեր», 12 հունվարի 1926։

23 Տե՛ս Վ. Արշարունի, Մեր դպրոցները գաղութներուն մեջ, էջ 44։

մասնագիտական կրթություն։ Եգիպտահայ դպրոցների ներքին կյանքին լավատեղյակ Արշարունին գրել է. «Մեր մեջ (Եգիպտոսում—Հ. Թ.) չկան կամ շատ քիչ կգտնվին ասպարեզին համար պատրաստված դաստիարակներ»[24]։

Դպրոցական գործի զարգացմանը խոչընդոտող լուրջ պատճառ էր ֆինանսական անհրաժեշտ միջոցների բացակայությունը։ Պետությունը, եգիպտահայ դպրոցները պաշտոնապես եգիպտական դպրոցների շարքում դասելով հանդերձ, նույնիսկ նվազագույն չափով չէր օգնում նրանց[25]։ Մինչ թեմական դպրոցների ծախսերը ծածկվում էին հիմնականում կալվածական եկամուտներից, կտակներից, հանգանակություններից և այլ աղբյուրներից ստացված միջոցներով, կաթոլիկ և մասնավոր դպրոցների գոյատևման գլխավոր միջոցը ուսման վարձն էր։ Այդ պատճառով համաշխարհային տնտեսական ճգնաժամի տարիներին՝ 1929—1933 թթ., երբ ժողովրդի տնտեսական դրությունը վատթարացավ, մասնավոր դպրոցներից շատերը փակվեցին։

Ուսման վարձն երկրորդական նշանակություն ուներ թեմական դպրոցների համար։ 1923—1924 թթ. Պողոսյան դպրոցի 738 սովորողներից միայն 345-ն էին ուսման վարձ վճարում, իսկ 393-ը կամ 56,2%-ը սովորում էր ձրի։ Ուսման վարձից գոյացած 542 եգիպտական ֆունտը դպրոցի տարեկան ծախսերի (3.500 եգ. ֆունտ) համեմատությամբ մի չնչին գումար էր[26]։ Գալուստյան դպրոցում ձրիավարժները կազմում էին սովորողների ընդհանուր թվաքանակի 58,3 տոկոսը։ Մնացյալ 41,7 տոկոսից ուսման վարձ էր ստացվում ընդամենը 929 եգ. ֆունտ, այն դեպքում, երբ դպրոցի տարեկան բյուջեն 5729 եգ. ֆունտ էր[27]։ 1926 թ. Նուբարյան դպրոցի 138 աշակերտներից ձրիավարժ էին միայն 27-ը[28]։ 1927 թ. թեմական դպրոցներում վերացվեց «բոլորովին ձրի աշակերտ ընդունելու դրությունը»։ Բացառությամբ Աղքատախնամից նպաստ ստացող ընտանիքների երեխաներից, բոլոր սովորողները պարտավոր

24 Նույն տեղում։

25 Ըստ Ա. Ալպոյաճյանի, 1938 թ. եգիպտահայ դպրոցները կառավարությունից դրամական համեստ օգնություն են ստացել, իսկ այնուհետև «բնավ բաժին» չեն ունեցել պետական բյուջեում («ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը», էջ 131)։

26 Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1923—1924 տարվա...», էջ 43։

27 Տե՛ս «Արև», 15 հուլիսի 1926։

28 Տե՛ս «Արև», 8 հուլիսի 1926։



էին ուսման վարձ մուծել «գեթ նվազագույն սակը», այն է՝ 5 եգ. դահեկան[29], որը մի չնչին գումար էր։

Թեմական դպրոցները, ինչպես նախկինում, գտնվում էին ազգային իշխանության կողմից նշանակված հոգաբարձուների վերահսկողության տակ։ Հոգաբարձությանն էր պատկանում համապատասխան դպրոցի ուսուցչական կազմը համալրելու, բյուջեն կազմելու և այլ իրավունքներ։ Հոգաբարձություններին աջակցում էր Տիկնանց խնամակալությունը, որը նշանակվում էր մեծատուն կանանցից։ Խնամակալությունը կարիքավոր երեխաներին տալիս էր՝ օրական մի անգամ տաք ճաշ, կաթ, ձկան յուղ, հոգում նրանց բժշկական օգնության, դեղորայքի, գրենական պիտույքների և այդ կարգի այլ ծախսերը։ Նրա դրամական միջոցները գոյանում էին պատահական աղբյուրներից՝ նվիրահավաքությունից և այլն։ 1949—1950 թթ. Գալուստյան դպրոցի խնամակալությունը կարիքավոր երեխաներին հատկացրել էր շուրջ 1500 եգ. ֆունտ[30]։

Ներքին քաղաքներում դպրոցների վերահսկողությունը ստանձնել էին մշակութային միությունները։ Այսպես, Զագազիգի Օշական դպրոցը հանձնված էր «Կամսարական սան հայ պաշտոնեից միության», իսկ Գիզեի Հայկազյան դպրոցը՝ «Հայ կրթասիրաց միության» հոգատարությանը։

Թեմական դպրոցներից խոշորագույնը Կահիրեի Գալուստյան երկսեռ դպրոցն էր։ Մինչև 1934 թվականը Գալուստյանը, չհաշված մանկապարտեզի բաժինը, ունեցել է 5, երբեմն էլ 6 կարգ և համարվել է «տարրական նախակրթարան»։ Մանկապարտեզ կարող էին ընդունվել 4—7, իսկ նախակրթարան՝ 8—10 տարեկան երեխաները։ Մանկապարտեզը ուներ չորս բաժին՝ բողբոջ, կոկոն, ծաղիկ և նախապատրաստական, որոնք երկսեռ էին, իսկ նախակրթարանը՝ իգական և արական ջոկ բաժիններ։ Մանկապարտեզում անցնում էին երգեցողություն, արտասանություն, գծագրություն, ձեռքի աշխատանք, միաժամանակ ծանոթանում էին մայրենի լեզվի գրերին։ Նախակրթարանում ծրագիրը բավական ծանրաբեռնված էր՝ անցնում էին կրոն, հայոց լեզու, արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, թվաբանություն, երկրաչափություն, հանրահաշիվ, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր և հայոց պատմություն, աշխարհա-

29 Տե՛ս «Արև», 17 օգոստոսի 1927։

30 Տե՛ս «Արև», 4 մարտի 1952։

գրություն, գեղագրություն, նկարչություն, երգեցողություն, մարմնամարզություն և այլն։ Բացի այդ, արական բաժնում անցնում էին քաղաքատնտեսություն, տնտեսական և առևտրական աշխարհագրություն, առևտրական թղթակցություն, տոմարակալություն, մեքենագրություն և այլն, իսկ իգական բաժնում՝ կարուձևի, ձեռագործի, տնային տնտեսության, դաշնամուրի և այլ դասեր[31]։ Դպրոցը հաջողությամբ ավարտող աշակերտները ստանում էին «նախնական ուսման վկայական»։

1935 թ. Գալուստյան դպրոցի կյանքում տեղի ունեցան մի շարք փոփոխություններ։ Նախ, Շուբրա հայաշատ թաղում հաստատվեց նրա համանուն ճյուղը՝ Շուբրայի Գալուստյան դպրոցը, որը ուներ քառամյա մանկապարտեզի և հնգամյա տարրական նախակրթարանի բաժիններ։ Երկրորդ, Բուլաքի Գալուստյան դպրոցում ավելացվեցին 3 նոր կարգեր (6—8), և այն վերածվեց «բարձրագույն նախակրթարանի» կամ թերի միջնակարգ դպրոցի։ Բարձրագույն նախակրթարանի նպատակն էր՝ «Հայկական և եվրոպական բարձրագույն (նախակրթական—Հ. Թ.) ուսում ստացած սերունդ մը պատրաստել, որուն շնորհիվ միջազգային մրցակցության դաշտ եղող այս երկրին մեջ (Եգիպտոսում—Հ. Թ.), հայը՝ հայ պահվելով հանդերձ կարենա կյանքի պայքարի զենքով զինված ըլլալ»[32]։ Փոփոխվեց նաև կրթական ծրագիրը։ Նախ զգալի չափով բեռնաթափվեցին 1—5 կարգերը, մի շարք առարկաներ հանվեցին կամ պայմանական դարձան, իսկ բարձր կարգի դասարաններում մտցվեցին նոր առարկաներ՝ հայերեն աշխարհաբար ու գրաբար, հին ու նոր գրականության պատմություն (մատենագրություն), հայոց քննական պատմություն, արաբերեն և անգլերեն։ Մյուս առարկաների համար ընդունվեց ֆրանսիական «բարձրագույն նախակրթարաններու» (Ecoles primaires supérieurs) «լրիվ ծրագիրը», իսկ ուսուցման լեզուն, հայերենին զուգահեռ, ֆրանսերենն էր[33]։ Այդ փոփոխությունները հնարավոր դարձրին Գալուստյան դպրոցն ավարտողների մասնակցությունը ֆրանսիական brévet-ի քննություններին։

1945—1946 թթ. Գալուստյան դպրոցը վերածվեց լրիվ միջնակարգ՝ տասնամյա դպրոցի, բայց որպես այդպիսին գործեց միայն երկու ուսումնական տարեշրջան (1947—1948 և 1948—1949 թթ.) և նորից վերադարձավ նախկին, բարձրագույն նախակրթարանի դրությանը։ Դրա-

[31] Տե՛ս «Արև», 13 օգոստոսի 1924։

[32] «Հուսաբեր», 17 օգոստոսի 1935։

[33] Տե՛ս նույն տեղում։



նում վճռող դեր կատարեց զանգվածային հայրենադարձությունը։ Հաջորդական երկու կարավաններով հայրենիք տեղափոխվեց նաև Գալուստյանի աշակերտության համարյա 1/3-ը, շուրջ 300 աշակերտ[34]։ Այդ պատճառով փակվեց Գալուստյան դպրոցի Շուբրայի նախակրթական բաժինը։

Եգիպտահայ գաղութը միջոց չի խնայել Գալուստյան դպրոցի դերն ու հեղինակությունը բարձրացնելու համար, սակայն թվերը ցույց են տալիս, որ նրա 6—8 և մանավանդ 9—10 կարգերը համարյա չեն արդարացրել նյութական ու բարոյական զոհողությունները։ Այդ մասին են վկայում աղյուսակում բերված տվյալները[35]։

| Ուս. տարի | Աշակերտների ընդհ. թիվը | | | | | Ուսուցիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| | մանկապարտեզ | տարր. նախակր. | 6—8 դասարան | 9—10 դասարան | գումար | |
| 1925—1926 թթ. | 295 | 403 | — | — | 698 | 39 |
| 1937—1938 թթ. | 361 | 410 | 38 | — | 809 | 41 |
| 1948—1949 թթ. | 240 | 387 | 49 | 14 | 690 | 46 |

Ինչպես տեսնում ենք, տարրական նախակրթարանի աշակերտների ընդհանուր թվի նկատմամբ 6—8 և 9—10 դասարանների աշակերտների թիվը չնչին էր։ Դա նշանակում է, որ ինչպես նախկինում, շարունակվում էր հայ երեխաների հոսքը դեպի օտար դպրոցներ և, հետևաբար, Գալուստյան բարձրագույն նախակրթարանը չի ունեցել համապատասխան օտար դպրոցների կրթական մակարդակը։

Այնուամենայնիվ Գալուստյան դպրոցը խոշոր դեր էր կատարում եգիպտահայ աճող սերնդի ուսման և դաստիարակության գործում։

Իր կարևորությամբ, Գալուստյանից հետո Ալեքսանդրիայի Պողոսյան դպրոցն էր։

1923 թվականից Պողոսյանի կյանքում սկսվեց մի նոր, բեղմնավոր ժամանակաշրջան։ Սովորողների թվաքանակը հասավ 738-ի[36], հընգամյա տարրական նախակրթարանից վերածվեց նախ վեցամյա, ապա

[34] Տե՛ս «Հուսաբեր», 14 հուլիսի 1949։

[35] Աղյուսակը կազմված է «Արև» (15 հունիսի 1926), «Հայ դպրոցի» (1938, № 1, էջ 38), «Հուսաբերի» (14 հուլիսի 1949) տվյալների հիման վրա։

[36] Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1923—1924 տարվա», էջ 39։

յոթնամյա նախակրթարանի, պաշտոնի կոչվեցին բարձրորակ մանկավարժներ։ Բարեկարգվեց նաև նրա քառամյա մանկապարտեզի բաժինը[37], և ջանքեր էին գործադրվում Պողոսյան դպրոցն արդիական շենքով ապահովելու ուղղությամբ[38]։

Ինչպես թեմական բոլոր դպրոցներում, Պողոսյան դպրոցի ծրագրում ևս լայն տեղ էին գրավում հայագիտական առարկաները։ Ընդհանուր դասաժամերի 26,8 տոկոսը հատկացված էր հայոց լեզվի, գրականության և պատմության ուսուցմանը, այն դեպքում, երբ թվաբանության, հանրահաշվի, ֆիզիկայի և քիմիայի դասերը զբաղեցնում էին 24,5, արաբերենը, ֆրանսերենը և անգլերենը՝ 16,3, ընդհանուր պատմությունը, աշխարհագրությունը, տնտեսագիտությունը, երաժշտությունը, կրոնը, գեղագրությունը, ձեռագործը, մարմնամարզությունը, հաշվապահությունը, մեքենագրությունը և այլն՝ 32,4 տոկոսը[39]։

1927 թ. Պողոսյան դպրոցի վերելքն ընդհատվեց դաշնակցության ներկուսակցական հակասությունների բորբոքման հետևանքով։ Ալեքսանդրիայի դաշնակցական ենթակոմիտեն, որից այն ժամանակ կախման մեջ էին ազգային իշխանության ղեկավար օրգանները, բաժանվելով երկու հակամարտ կողմերի, կռվախնձոր դարձրեց Պողոսյան դպրոցը։ Դաշնակցական Տելեմաք Թյությունճյանի գլխավորած կողմը Նիկոլ Աղբալյանին հեռացրեց դպրոցի տնօրենի պաշտոնից «որպես հեղինակ Ալեքսանդրիո մեջ կրթական գործին ... անկերպարան և ապարդյուն վիճակին»[40]։ Պողոսյանի մանկավարժական կազմը քայքայվեց,

---

[37] 1928—1929 թթ. Մելքոնյան մեծատան նվիրաբերությամբ կառուցվեց մանկապարտեզի նոր շենքը, որն օգտագործվում էր նաև որպես հանդիսասրահ՝ հասարակական միջոցառումների համար (տե՛ս Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 283)։

[38] Պողոսյանի դպրոցական շենքը (Արոս Դարգար) գտնվում էր բավական անմխիթար վիճակում։ Ըստ դիրեկտորի հաղորդման, չուներ դասարանի համար ոչ մի սենյակ («Զեկուցում... 1923—1924 տարվա», էջ 7—8)։

[39] Տե՛ս «Զեկուցում Պողոսյան վարժարանի 1924—1925 տարվա», էջ 69։

[40] «Հուսաբեր», 19 հոկտեմբերի 1927։ Փաստը գլխիվայր շրջելով, Գ. Գյուզալյանը գրել է. «1927-ին դպրոցի (Պողոսյանի) շուրջը մղվող պայքարը կհասնի իր գագաթնակետին... հակառակորդը երբեմն շատ անպարկեշտ միջոցներով կջանար վարկաբեկել մեր ականավոր մտավորականները, մեկուսացնել զանոնք դպրոցական և հասարակական հաստատություններեն» («Համազգայինի և Նշան Փալանճյան ճեմարանի քառասնհինգամյակը», էջ 32)։ Նիկոլ Աղբալյանը և Լևոն Շանթը հեռացվեցին ոչ թե դաշնակցության հակառակորդների, այլ դաշնակցականների կողմից։



սովորողների թվաքանակը գնալով պակասեց (1931—1932 թթ.՝ 647[41], 1933—1934 թթ.՝ 532[42]) և ուսման ժամանակաշրջանը սահմանափակվեց 7-ի փոխարեն 5 տարով։ Հետագայում եղել են տարիներ, երբ ուսման տևողությունը 5-ից նորից 6-ի կամ 7-ի է բարձրացել, սակայն կրթական մակարդակը երբեք չի հասել 1923—1927 թթ. բարձրությանը։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Պողոսյան դպրոցի պայմանները բարելավվեցին, Սիուֆ թաղում բացվեց նրա ամանդակ բաժանմունքը, որը գործեց մինչև 1948 թվականը։

Եգիպտահայ թեմական դպրոցների ընտանիքում կարևոր տեղ էր գրավում Հելիոպոլսի Նուբարյան դպրոցը։ Սա նախկին Շավարշյան դպրոցն էր, որը 1924 թ. վերանվանվեց Նուբարյան իր մեկենասի՝ Պողոս Նուբարի անունով։ 1923 թ. Պողոս Նուբարի տրամադրած միջոցներով կառուցվեց դպրոցի հարմարավետ շենքը[43], իսկ 1929 թ. նրա մի նոր հատկացումով ամրապնդվեց դպրոցի տնտեսական դրությունը[44]։ Հետագայում մի ուրիշ մեծատան՝ Մերջանյանի ծախսով կառուցվեց նրա մանկապարտեզի շենքը՝ «Մերջանյան մանկապարտեզը»։ 1926 թ. նախակրթարանում և մանկապարտեզում սովորում էին 138[45], 1937 թ.՝ 247[46], 1949 թ.՝ 313[47] երկսեռ երեխաներ։ Մանկապարտեզն ուներ չորս բաժին՝ բողբոջ, կոկոն, ծաղիկ և նախապատրաստական, որտեղ կարող էին ընդունվել 4—7 տարեկան երեխաներ, իսկ նախակրթարանը հիմնականում ուներ 5 դասարան։ 1944 թ. դրանց թիվը բարձրացավ 7-ի։ 1949 թ. սակայն Նուբարյանի 6 և 7 դասարանները միացվեցին Գալուստյան դպրոցի համապատասխան դասարաններին[48]։

Զագազիգում, Գիզեում և ուրիշ վայրերում գործող դպրոցները համեստ կրթական օջախներ էին։ Զագազիգի Օշական դպրոցի մանկապարտեզի և քառամյա նախակրթարանի բաժիններում սովորում էին

---

[41] Տե՛ս «Մարկավագին եգիպտահայ տարեցույցը», 1932, էջ 175։

[42] Տե՛ս «Հայ դպրոց», 1935, պրակ Թ—Ժ, էջ 270։

[43] Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Թորգոմ պատրիարք Գուշակյան, էջ 275։

[44] Տե՛ս նույն տեղում, էջ 282։ Պողոս Նուբարը 250.000 ֆրանկի արժեթղթեր է տվել ՀԲԸ Միությանը այն պայմանով, որ դրանց եկամուտը յուրաքանչյուր տարվա վերջում հատկացվի դպրոցին։

[45] Տե՛ս «Արև», 8 հուլիսի 1926։

[46] Տե՛ս «Հայ դպրոց», 1938, էջ 39։

[47] Տե՛ս «Հուսաբեր», 19 հուլիսի 1949։

[48] Տե՛ս «Հուսաբեր», 14 հուլիսի 1949։

հիմնականում այդ քաղաքի Կամսարական ծխախոտագործական ձեռնարկության ծառայողների երեխաները, որոնց թիվը 40—50-ից այն կողմ գրեթե չի անցել[49]։ Դպրոցը գործում էր Գալուստյան վարժարանի ծրագրով։ 1931 թ. Կամսարական տան հայ պաշտոնյաների միության ջանքերով Օչակյան դպրոցը տեղափոխվեց Զագազիգի «լավագույն շենքերից մեկը», օժտվեց արդիական դրասեղաններով և այլ հարակից պիտույքներով[50]։ 1935—1936 թթ. սակայն, Կամսարական ձեռնարկության փակվելու հետևանքով, Զագազիգի հայկական գաղութը քայքայվեց, փակվեց նաև դպրոցը։ Գիզեում գործող Հայկազյան դպրոցը բացվել էր 1930 թ.։ Նրա մանկապարտեզում և երկամյա նախակրթարանում սովորում էին 35—40 աշակերտներ[51], համարյա բոլորն էլ Մաթոսյան ծխախոտագործական ձեռնարկության ծառայողների երեխաները։ Մաթարիայում գործում էր մի մանկապարտեզ՝ 18—20 երեխաներով։

Եգիպտահայ կրթական կյանքում որոշ դեր էին կատարում հայ կաթոլիկ դպրոցները։ 1935—1936 թթ. դրանց թիվը 2-ից բարձրացավ 4-ի, իսկ հետագայում՝ 5-ի, որոնցից 3-ը պատկանում էին Անարատ հղության հայ քույրերի, մեկը՝ Վիեննայի, մյուսն էլ՝ Վենետիկի Մխիթարյան միաբանությանը։ Այդ դպրոցների ուսուցչական կազմը համալրվում էր, անշուշտ բացառությամբ, կաթոլիկ կղերականներով։ Մխիթարյան դպրոցներից առաջինը հաստատված էր Կահիրեում, երկրորդը՝ Ալեքսանդրիայում։ Դրանք ունեին մանկապարտեզի եռամյա, տարրական նախակրթարանի քառամյա և բարձրագույն նախակրթարանի երբեմն եռամյա, երբեմն էլ երկամյա բաժիններ։ Այդ դպրոցներն ընդունում էին նաև գիշերօթիկ աշակերտներ, որոնց թիվը սակայն մեծ չի եղել[52]։ Սկզբում նրանց կրթական ծրագիրը կազմված էր եվրոպական տարրական և բարձրագույն նախակրթարանների, իսկ հետագայում՝ Եգիպտոսի պետական դպրոցների ծրագրի հետևությամբ[53]։

Անարատ հղության քույրերի դպրոցները (մեկը Կահիրեում, երկուսը Ալեքսանդրիայում) ունեին մանկապարտեզի, տարրական և բարձ-

[49] Տե՛ս «Հուսաբեր», 16 հուլիսի 1931։

[50] Տե՛ս «Արև», 8 սեպտեմբերի 1931։

[51] Տե՛ս «Հայահամար», 1939, էջ 30։

[52] Տե՛ս «Հուսաբեր», 7 սեպտեմբերի 1949։ Այդ թվականին Ալեքսանդրիայի Մխիթարյան դպրոցի 115 աշակերտներից 20-ը գիշերօթիկ էին։

[53] Տե՛ս «Հուսաբեր», 7 սեպտեմբերի 1949։



րագույն նախակրթարանի բաժիններ։ Բացի հայերից նաև տարբեր ազգության երեխաներ ընդունելով, այդ դպրոցները ստիպված էին զգալի չափով սահմանափակել հայագիտական առարկաների ուսուցումը։ Դասավանդման հիմնական լեզուն սկզբում ֆրանսերենն էր, հետագայում արաբերենը։ Հայերենը համարվում էր պայմանական առարկա[54]։

Եգիպտահայ մասնավոր դպրոցները բազմատեսակ էին, կային մանկապարտեզից, տարրական և բարձրագույն նախակրթարանից մինչև միջնակարգ դպրոց։ Գործում էին նաև զանազան դասընթացներ՝ դաշնամուրային, պարային։ Դրանք տեղավորված էին վարձովի մասնավոր շենքերում, եկամտի հաստատուն աղբյուր չունեին՝ բացի ուսման վարձից։ Ծայրահեղ կարիքի դեպքում նրանց օգնության ձեռք էին մեկնում ազգային իշխանությունները և եգիպտահայ հասարակայնությունը։

1. **Աղջկանց համազգային վարժարան**։ *Հիմնադիրներ՝ Ս. և Զ. Մանիսալյան քույրեր, 1905—1946, Կահիրե։* Համարվում էր կոլեջ, ուներ երեք բաժին՝ մանկապարտեզ, նախակրթարան և ուսումնարան։ Առաջին երկու բաժիններում ընդունվում էին 5—12 տարեկան երկսեռ երեխաներ, իսկ երրորդում՝ միայն աղջիկներ։ Աշակերտների ընդհանուր թիվը տատանվել է 150—170-ի միջև։ Ծրագիրը բավական ծանրաբեռնված էր, ընդգրկում էր հայոց լեզու (գրաբար և աշխարհաբար), մատենագրություն, գեղագրություն, արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, ինչպես և տնային տնտեսություն, ձեռագործ, կար, դաշնամուր, նկարչություն և այլ առարկաներ[55]։ Իր գոյության 41 տարիների ընթացքում Մանիսալյան դպրոցը ծավալել է բավական արդյունավետ գործունեություն։ Փակվել է 1946 թ. հիմնադիր-տնօրենուհու՝ Սոֆի Մանիսալյանի մահից հետո։

2. **Թաշճյան վարժարան**։ *Հիմնադիրներ՝ Թաշճյան քույրեր, 1917—1937, Կահիրե։* Ուներ եռամյա մանկապարտեզի և վեցամյա նախակրթարանի երկսեռ բաժիններ, ինչպես և վերին երկու դասարաններ, որտեղ սովորում էին միայն աղջիկներ։ Ընդունվում էին գիշերօթիկ և ցերեկային բաժիններում սովորող աշակերտներ, որոնց թիվը սկզբում եղել է 120, հետագայում հասել է մինչև 160[56], ապա իջել է 85-ի[57]։ Մի քանի

[54] Տե՛ս նույն տեղում։

[55] Տե՛ս «Հուսաբեր», 2 սեպտեմբերի 1935։

[56] Տե՛ս «Հայ դպրոց», 1938, № 1, էջ 41։

[57] Տե՛ս «Հայահամար», 1939, էջ 31։

անգամ միջոցներ է հանգանակվել այն փակվելու վտանգից փրկելու համար։ Փակվել է 1937 թ. դեկտեմբերին։

3. **Պերպերյան վարժարան։** *Հիմնադիրներ՝ Օ. և Շ. Պերպերյաններ, 1924—1933, Հելիոպոլիս։ Կ. Պոլսի համանուն միջնակարգ վարժարանի շարունակությունն էր, ուներ 9-ամյա գիշերօթիկ և ցերեկային բաժիններ, ընդունվում էին 8—20 տարեկան պատանիներ, որոնց ընդհանուր թիվը 120-ից գրեթե չի անցել[58]։ Շրջանավարտները կարող էին «առանց քննության» ընդունվել եվրոպական համալսարանները։ Եկամտի հաստատուն աղբյուր չունենալով, Պերպերյան դպրոցը մշտապես գտնվել է փակվելու վտանգի տակ։ 1928 թ. կազմվել է հատուկ խնամակալություն, որն աշխատել է բարելավել դպրոցի նյութական դրությունը։ 1931 թ. ազգային իշխանությունները նրա օգտին կազմակերպել են ժողովրդական հանգանակություն[59], բայց հնարավոր չի եղել ապահովել դպրոցի գոյությունը։*

4. **Հայկազյան կրթարան։** *Հիմնադիր՝ Հայկազուն ք. Ոսկերիչյան, Ալեքսանդրիա։ Բացվել է 1924 թ. սեպտեմբերի 1-ին Ալեքսանդրիայի հայաշատ արվարձաններից Քամ ըլ Սեղարում։ Կրթարանն ուներ եռամյա մանկապարտեզի և յոթնամյա նախակրթարանի արական ու իգական բաժիններ, ինչպես նաև լրացուցիչ երկու դասարան աղջիկների համար։ Աշակերտների ընդհանուր թիվը սկզբնական տարիներին եղել է 100—150[60], 1931 թ.՝ 220[61], 1949 թ.՝ 205[62]։ Կրթարանի նպատակն էր՝ «թումբ կանգնիլ դեպի օտար վարժարան հայ մատաղատի մանուկներու և պատանիներու հարաճուն հոսանքին»[63]։ Կրթարանը անխափան շարունակվել է մինչև վերջին տարիները։*

5. **Նոր ճեմարան։** *Հիմնադիրներ՝ Կ. Պիոնյան, Ն. Գույրյան և Զ. Պալունի, 1934—1935, Հելիոպոլիս։ Փակվել է «նյութական անձկության պատճառով»[64]։*

6. **Պալյան վարժարան։** *Հիմնադիր՝ Մ. Պալյան, 1927, Ալեքսանդրիա, Ռամլե։ Ուներ եռամյա մանկապարտեզի և վեցամյա նախակրթարանի երկսեռ բաժիններ։ Եգիպտահայ մամուլում հիշատակվում է 1938—1939 թթ. գործող դպրոցների շարքում։ Մեզ հայտնի չէ, թե մինչև երբ է գործել։*

7. **Արարատյան դպրոց։** *Հիմնադիր՝ Բ. Կեոզյուպեյուկյան, 1938, Կահիրե։ Մանկապարտեզի, նախակրթարանի և կոլեջի գիշերօթիկ ու ցերեկային բաժիններում սովորող երկսեռ աշակերտների թիվը 130—150 չի անցել։ Արարատյան դպրոցն ուներ անգլո-սաքսոն թեքում, անցնում էին հայերեն՝ աշխարհաբար ու գրաբար, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն, գերմաներեն, բարձրագույն մաթեմատիկա, առևտրական գիտելիքներ, սղագրություն և այլն[65]։*

8. **Թարգմանչաց վարժարան։** *Հիմնադիր՝ Վահրամ Արծրունի, 1936, Ալեքսանդրիա։ Ուներ մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններ, որտեղ սովորում էին 80—100 երկսեռ երեխաներ։ Մեզ հայտնի չէ, թե մինչև երբ է պահպանել իր գոյությունը։*

9. **Եփրատ կոլեջ։** *Հիմնադիր՝ պրոֆ. Ս. Խաչատուրյան, Կահիրե։ Գործել է 1930-ական թվականներին[66]։*

*Ուշագրավ երևույթ էր արդիական մասնավոր մանկապարտեզների ստեղծումը։ Այդ գործում զգալի ավանդ է ներդրել մանկավարժ Զաբել Զաքարյանը։ Նա 1923 թ. Ալեքսանդրիայում կազմակերպել է «Նոր մանկապարտեզը», որը, սակայն, երկար կյանք չի ունեցել։ 1925 թ. մանկապարտեզը վերաբացվել է Կահիրեում և գործել ավելի երկար, քան առաջինը[67]։ Զաքարյանը 1934 թ. Հելիոպոլսում հիմնել է «Տիպար մանկապարտեզը»՝ «ըստ եվրոպական ամենավերջին մանկապարտեզային դրության» և նախատեսված էր 3—4 տարեկան 30 երկսեռ երեխաների համար[68]։*

*Բացի վերոհիշյալներից, կարճ ժամանակով գործել են Վարժապետյան, Ջենեյան (1920—1924) և մի շարք երեկոյան դպրոցներ, որոնցից հիշարժան է Հ. Ե. Ը. ընկերակցության 1927 թ. Կահիրեում հիմնած «Գիշերային բարձրագույն վարժարանը», ուր դասախոսել են Վ. Արծրունին և ուրիշներ։ Ուսանողներ ընդունվում էին հայոց լեզվի, գրականության ու մատենագրության, ֆրանսերեն լեզվի ու գրակա-*

58 *Տե՛ս «Արաքս», 18 մարտի 1933։*

59 *Տե՛ս «Հուսաբեր», 11 հուլիսի 1931։*

60 *Տե՛ս «Արև», 7 օգոստոսի 1925։*

61 *Տե՛ս «Արև», 24 հուլիսի 1931։*

62 *Տե՛ս «Հուսաբեր», 15 սեպտեմբերի 1949։*

63 *«Արև», 21 հուլիսի 1924։*

64 *«Հուսաբեր», 2 սեպտեմբերի 1935։*

65 *Տե՛ս նույն տեղում,*

66 *Տե՛ս «Ազատ միտք», 7 նոյեմբերի 1936։*

67 *Տե՛ս «Արև», 30 օգոստոսի 1931։*

68 *Տե՛ս «Հայահամար», 1939, էջ 31։*

նության, անգլերեն լեզվի ու գրականության, տոմարակալության, առևտրական թղթակցության, սղագրության ու մեքենագրության մասնագիտությունների գծով[69]։ Մեզ հայտնի չէ, թե մինչև երբ է գոյություն ունեցել։

Պարբերաբար գործում էին նաև կիրակնօրյա դպրոցներ, որոնք ծառայում էին դպրոցական երեխաների շրջանում քրիստոնեական գաղափարների պրոպագանդմանը։ Դրանք բավական լայն տարածում ունեին 1930-ական թվականներին, բայց հետագայում գնալով սահմանափակվեց նրանց ազդեցության ոլորտը և համարյա վերացան։

## 2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մշակութային ընկերությունները խստորեն սահմանազատված էին կուսակցական պատվարով։ Կահիրեում դաշնակցության համակիր ընկերություններից խոշորագույնը «Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերությունն» էր, որը ստեղծվեց 1929 թ.։ Նրա նպատակն էր՝ «Հայ ժողովրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզվով և հայ հոգիով», գործելով «երեք ուղղությամբ, որ է՝ նոր սերունդի կրթությունը, չափահասներուն ինքնազարգացումը և հայագիտության մշակումը»[70]։ Իրավական առումով Համազգայինը «մասնավոր խմբանուն ընկերություն» էր (Société en nom collectif), բաղկացած տասնհինգ իրավատեր անդամներից։ Ըստ կանոնագրի, այդ թիվը մշտապես անփոփոխ պետք է մնար։ Նրանք ընտրվում էին ցկյանս, պակասած անդամի տեղ նորի ընտրությունը կատարվում էր ձայների 3/4-ի մեծամասնությամբ՝ «նորեն ցկյանս»[71]։

Զգտելով բովանդակ սփյուռքահայության մշակութային կյանքի ղեկավարությունը, Համազգայինը կոչ արեց տարբեր գաղթավայրերում գործող մշակութային ընկերություններին, որպեսզի «ձուլվին Համազգայինի մեջ, կազմելով անոր ինքնուրույն ճյուղերը»[72]։ Բայց այդ «կո-

[69] Տե՛ս «Հուսաբեր», 13 սեպտեմբերի 1927։

[70] «Ընդհանուր կանոնագիր հայ կրթական և հրատարակչական Համազգային ընկերության», էջ 1։

[71] Նույն տեղում, էջ 4։

[72] Գ. Գյուզալյան, «Պատմություն հայ կրթական և հրատարակչական Համազգային ընկերության», տե՛ս «Համազգայինի և Նշան Փալանճյան ճեմարանի քսանհինգամյակը, 1929—1954», էջ 34։



չը ոչ ոք լսեց», ինչպես նշել է Գ. Գյուզալյանը[73]։ Այնուամենայնիվ 1930—1933 թթ. Համազգայինը փորձեց «ամբողջ գաղութահայության մեջ տարածել իր մասնաճյուղերը և անոնց միջոցով ղեկավարել հայության կրթական-մշակութային գործը»[74]։ Նրան հաջողվեց Եգիպտոսի, Սուդանի, Սիրիայի, Լիբանանի և Ֆրանսիայի մի շարք քաղաքներում ստեղծել մասնաճյուղեր, որոնք, սակայն, կարճատև կյանք ունեցան։ Դրանում վճռող դեր կատարեցին նրա ղեկավարների քաղաքական ուղղությունը և դաշնակցության ներկուսակցական հակամարտությունները։ Համազգային ընկերությանը չհաջողվեց քիչ թե շատ ակնառու դեր խաղալ եգիպտահայ մշակութային կյանքում։ Նրա գործունեությունը սահմանափակվեց Բեյրութի Հայ ճեմարանով, որը գործում է 1929 թվականից։

Համազգային ընկերության անհաջողությունից հետո, 1945 թ. Կահիրեի դաշնակցական գործիչները և նրանց համախոհ մի շարք հարուստներ հիմնեցին «Հայ մշակույթի «Հուսաբեր» ընկերակցությունը», որի հիմնական առաջադրանքն էր, նախ և առաջ, ապահովել «Հուսաբեր» օրաթերթի հրատարակությունը և, երկրորդ, կառուցել «Հայ մշակույթի տուն մը Կահիրեի մեջ»[75]։ Ընկերակցությունը բաղկացած էր 18 հիմնադիր անդամներից, որոնք համարվում էին նրա իրավական տերերը։ Խառն դատարանի նոտարական գրասենյակում այն գրանցելուց հետո, նրանք ընտրեցին վարչական խորհուրդ, որի կազմում էին Ավետիս Զաքրջյանը՝ նախագահ, Զարեհ Սագայանը՝ գանձապահ, Լևոն Հովհաննիսյանը՝ գործավար-ատենադպիր[76]։ Մինչև 1950—1951 թթ. ընկերակցության դրամական միջոցներով կառուցվեց «Հուսաբերի» բազմահարկ շենքը և «Հուսաբեր» օրաթերթն օժտվեց արդիական տպարանով։ Այդ շենքում տեղադրված են, բացի «Հուսաբերից», համանուն հրատարակչությունը, դաշնակցության Կահիրեի կոմիտեն և նրան ենթակա մշակութային, բարեգործական, մարզական կազմակերպությունները։ Շենքում կա 800—1.000 տեղանոց բավական արդիական հանդիսասրահ, ինչպես նաև սրճարան և այլն։

Եգիպտահայ մշակութային կյանքում կարևոր դեր են խաղացել Ռամկավար ազատական կուսակցության համակիր ընկերությունները։

[73] Նույն տեղում։

[74] Նույն տեղում, էջ 34—35։

[75] «Հուսաբեր», 21 ապրիլի 1945։

[76] Տե՛ս նույն տեղում։

Մինչև 1940-ական թվականները դրանցից ամենաակնառուն «Հայ գեղարվեստասիրաց միությունն» էր, որի համանուն ակումբը, ունենալով բավական լայն հարմարություններ, հավաքատեղի էր ծառայում երիտասարդական, ուսանողական և այլ կազմակերպությունների համար։ 1942 թ. այդ հարկի տակ սկզբնավորվեց «Հայ ազգային հիմնադրամը», որի հիմնադիրները (Վ. Թեքեյան, Է. Բարաղյան, Տ. Ալեքսանյան, Լ. Կոկանյան և ուրիշներ) Ռամկավար ազատական կուսակցության անդամներ կամ համակիրներ էին։

Հայ ազգային հիմնադրամը հետապնդում էր համահայկական մշակութային նպատակներ. «ա) Ազգին ծառայող ընտրանի մը պատրաստել եկեղեցական, ուսուցչական և հրապարակագրական ասպարեզներուն մեջ։ բ) Մշակութային օջախներու հաստատումը հայահոծ կեդրոններուն մեջ։ գ) Քաջալերել հայ մամուլը։ Հրատարակել մեր ծանոթ մտավորականներուն կրոնապատմական, հայագիտական և մանկավարժական արժեք ներկայացնող ուսումնասիրություններն ու դասագրքերը»[77]։ Ալեքսանդրիայում, Երուսաղեմում, Բեյրութում, Փարիզում և այլ վայրերում ստեղծվեցին Հայ ազգային հիմնադրամի մասնաճյուղեր կամ հանձնաժողովներ։ Հիմնադրամի կազմակերպության զարգացման մասին պատկերացում կազմելու համար նշենք, որ նրա սկզբնական 1.200 եգ. ֆունտ դրամագլուխը 1951 թ. հասել էր 30.000-ի, իսկ հետագայում՝ ավելի քան 100.000-ի[78]։

1946—1951 թթ. Հիմնադրամը լույս է ընծայել 21 անուն հայագիտական աշխատություններ, հոգացել շուրջ 30 հայ ուսանողների բարձրագույն և մասնագիտական ուսման ծախսերը, հաստատել է մշակութային օջախներ Կահիրեում (Հայ տունը), Հելիոպոլսում (Կոկանյան սրահը), Ալեքսանդրիայում (Տիգրան Երկաթի անվան երիտասարդական միության ակումբը), Բեյրութում (Վ. Թեքեյանի անվան ակումբը), Փարիզում («Այսօր» տպարանը) և այլն[79]։ Կահիրեի Հայ տունն արդիական բազմահարկ շենք է, որտեղ տեղավորված են «Արև» օրաթերթի խմբագրությունը, Ռամկավար ազատական կուսակցության Կահիրեի մարմինները, Հայ գեղարվեստասիրացը և այլ համակիր կազմակերպություններ։

[77] Է. Բարաղյան, Ինքնակենսագրություն, էջ 72։

[78] Տե՛ս նույն տեղում։

[79] Տե՛ս «Արև», 1 մայիսի 1951։



Կահիրեում գործում էր Հնչակյան կուսակցության համակիր կանանց «Շաքե» միությունը, որը կազմակերպվել էր 1931 թ. և պարբերաբար միջոցառումներ էր անցկացնում Շուբրայի «Հայկական ընթերցարանում»։

Կահիրեի դեմոկրատական երիտասարդները «Հայաստանի օգնության կոմիտեի» լուծարքից հետո ստեղծեցին «Երևան» մշակութային միությունը կամ ակումբը, որը սակայն գտնվելով ոստիկանության ուշադրության կենտրոնում, բնականոն զարգացման հնարավորություն չունեցավ։

Բացի վերոհիշյալներից Կահիրեում գործում էին՝

1. «Սերկլ արմենիեն»։ Հիմնադրվել է պատերազմի տարիներին։ Նրա «Հայկական սրահը» ծառայում էր որպես հավաքատեղի առևտրականների, պետական պաշտոնյաների, կալվածատերերի և ուրիշ «դիրքով և անվամբ նշանակալի» հայերի համար[80]։

2. «Կահիրեի հայ բժիշկների միությունը»։ Առաջացել է իբրև 1923 թ. վերջերին, նրա նպատակն էր «գիտա-բարոյական կապեր» հաստատել հայ բժիշկների, ատամնաբույժների և դեղագործների միջև, հանրամատչելի հրատարակություններով և հրապարակային դասախոսություններով առողջապահական գիտելիքներ ծավալել եգիպտահայության շրջանում և այլն։ Ոչինչ հայտնի չէ նրա գործունեության մասին։ Հավանաբար կարճատև կյանք է ունեցել։

3. «Կահիրեի հայ ուսուցչական միությունը» հիմնվել է 1931 թ., թեմական դպրոցների ուսուցիչների կողմից, նպատակն էր՝ բարձրացնել ուսուցչական ասպարեզի մակարդակը, պաշտպանել ուսուցիչների շահերը[81]։

4. «Կահիրեի հայ ոսկերչաց կրթասիրական միությունը» կազմվել է 1932 թ.՝ Խան ալ-Խալիլ շուկայի հայ ոսկերիչների կողմից, սկզբում ուներ 30 անդամ, իսկ 1938—1939 թթ.՝ 170։ Գալուստյան դպրոցում պահում էր 28, Նուբարյանում՝ 7, Գիզեի Հայկազյանում՝ 5 սաներ։

5. «Հայ մշակույթի բարեկամների ընկերությունը» ասպարեզ իջնելով 1941 թ., աշխատում էր ցուցահանդեսներով և հրատարակություններով օտար հասարակությանը ծանոթացնել «հայ ժողովրդի մշակութային նվաճումները»։ Ընկերությունը 1943 թ. Կահիրեում կազ-

[80] ՀՍՍՀ ԳԿՊԱ, ֆ. ԴԽՀԷ, եթ. Տեղեկագիր, 1924, էջ 36։

[81] Տե՛ս «Հուսաբեր», 31 հունվարի 1933։

մակերպել է հայ արվեստի՝ ճարտարապետության, նկարչության և մանրանկարչության, 1945 թ.՝ Եգիպտոսի հայ նկարիչների, 1951 թ.՝ միջնադարյան հայ ճարտարապետության նվիրված ցուցահանդեսներ, ինչպես նաև 1954 թ.՝ հայ երաժշտության փառատոնը և այլն[82]։ Նրա միջոցներով լույս են տեսել մի շարք շքեղ հրատարակություններ. «Հայ ճարտարապետություն և մանրանկարչություն» (կատալոգ չորս լեզվով՝ հայերեն, արաբերեն, ֆրանսերեն և անգլերեն), «Հայաստանը դարերի միջից» (ալբոմ չորս լեզվով), «Միջնադարյան հայ ճարտարապետությունը» (հեղինակ՝ Ա. Օրագյան, չորս լեզվով), «Եգիպտոսի հայ նկարիչները» (հեղինակ՝ Էմե Ազար, ֆրանսերեն), «Հայ նկարիչներ և քանդակագործներ» (հեղինակ՝ Օ. Ավետիսյան, ֆրանսերեն) և այլն[83]։

Կահիրեում կային նաև Գալուստյան դպրոցի շրջանավարտների, Պերպերյան դպրոցի սաների, Չափահաս որբերի, ինչպես և Արաբկիրի, Կեսարիայի, Մարաշի, Տիգրանակերտի հայրենակցական միությունները, որոնք զգալի միջոցներ էին հատկացնում կրթական և մշակութային նպատակների համար։

Ալեքսանդրիայում մշակութային ընկերությունները համախմբված էին տարբեր կուսակցությունների ակումբներում։ Ռամկավար ազատական կուսակցության «Հայ ակումբում» էր հաստատված Տիգրան Երկաթի անվան ընկերությունը։ 1922—1923 թթ. նրա ջանքերով կազմակերպվեցին «Հայ ուսանողաց» և «Գեղարվեստասեր հայուհյաց» միությունները։ Առաջինի նպատակն էր՝ վառ պահել «ազգային ոգին» օտար դպրոցներում սովորող հայ պատանիների շրջանում, իսկ երկրորդինը՝ զարգացնել հայ կանանց գրականության և արվեստի ճաշակը[84]։ Այդ նպատակների իրականացմանը նպաստում էր Հայ ակումբի գրադարանը, որտեղ կային ավելի քան 1.500 հայերեն և շուրջ 150 ֆրանսերեն լեզվով գրքեր. ստացվում էին նաև 25 անուն հայ և օտար պարբերականներ։ Մյուս կողմից, Տիգրան Երկաթի անվան ընկերությունը դրամական օգնություն էր տալիս բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ կարիքավոր երիտասարդներին[85]։ Այդ ազգօգուտ գործը շարունակվում է մինչև այսօր։

82 Տե՛ս O. Avédissian, Peintres et Sculpteurs Arméniens, pp. 11—12.
83 Տե՛ս նույն տեղում։
84 Տե՛ս «Արև», 11 հունիսի և 13 հուլիսի 1923։
85 Տե՛ս «Արև», 23 հոկտեմբերի 1924։



Ալեքսանդրիայում դաշնակցության մշակութային օջախը «Հառաջդիմասեր» միության ակումբն էր։ Այնտեղ գործում էին մշակույթի տարբեր բնագավառների «հանձնախմբեր», որոնք կազմակերպում էին դասախոսություններ, գրական և երաժշտական երեկոներ, բեմադրում պիեսներ։ 1930-ական թվականներին այդ ակումբում միաժամանակ գործել են Համազգային ընկերության տարբեր մասնախմբերը և խնամակալ հանձնաժողովը։

Ալեքսանդրիայում բավական ակտիվ էր գործում դեմոկրատական երիտասարդության «Սևան» մշակութային միությունը, որը Կահիրեի «Երևան» միության նման ստեղծվել էր ՀՕԿ-ի լուծարքից հետո։ Սևանը ուներ ակումբ, գրադարան, ընթերցասրահ և կուլտուրական հանգստի տարբեր միջոցներ։

Ալեքսանդրիայում գործում էին նաև մի շարք նվազ կարևոր միություններ. «Հայ կաթողիկե «Ղևոնդ Ալիշան» երիտասարդաց միությունը» (հիմնդր. 1930 թ.), Փարամազի անվան հնչակյան ուսանողական միությունը (1931 թ.), «Հայ գյուղատնտես ուսանողներու օգնության հանձնախումբը», ինչպես և չափահաս որբերի «Ազբիկյան սերունդ» և «Վերածնունդ» միությունները, «Տորք», «Կամք» և «Հայ մարմնակրթական ընդհանուր միություն» ակումբները, որոնք ունեին ֆուտբոլի, բասկետբոլի, դաշտային և սեղանի թենիսի, հեծանիվի, սուսերամարտի, ըմբշամարտի բաժիններ։

Սկզբում Հելիոպոլսի հայ հասարակության մշակութային կյանքի միակ օջախը «Մասիս» սրահն էր։ Հետագայում, հայ բնակիչների թվաքանակի ավելացմանը զուգընթաց, ստեղծվեցին նոր օջախներ, որոնցից կարևորագույնը «Հայ ազգային հիմնադրամի» միջոցներով կառուցված «Կոկանյան սրահն» էր։ Կազմակերպվեցին նաև մշակութային ընկերություններ. «Հայ երիտասարդաց «Ջանք» միությունը», որն ուներ ակումբ, գրադարան, երգչախումբ, թատերախումբ և սաներ էր պահում Նուբարյան դպրոցում. «Նուբարյան կրթասիրաց միությունը», որը նպատակ էր դրել Նուբարյան «վարժարանը հասցնել Հելիոպոլսի հայության բարոյական և նյութական դիրքին վայել աստիճանի մը»[86]։

Զագազիգի հայկական գաղութի մշակութային կյանքում գնահատելի դեր էին կատարում «Հայ երիտասարդաց միությունը» (1917—1929 թթ.) և «Կամսարական տան հայ պաշտոնեից միությունը» (1929—

86 «Հուսաբեր», 9 սեպտեմբերի 1927։

1944 թթ.)։ Գիզեում գործում էր «Հայ կրթասիրաց միությունը», Թանթայում՝ «Լսարանական միությունը»։ Այդ միությունները հոգում էին նաև աշխատավորների կուլտուրական հանգստի կազմակերպման մասին[87]։

## 3. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ։ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ

Այս ժամանակաշրջանում Եգիպտոսում հրատարակվել են մեզ հայտնի 62 անուն հայ պարբերականներ, որոնցից միայն մեկն էր օտար լեզվով[88]։ Ըստ հիմնական բովանդակության, դրանից ութն եղել են հասարակական-քաղաքական, տասնվեցը՝ գրական-գեղարվեստական, յոթը՝ երգիծական, չորսը՝ կրոնադավանական, երեքը՝ մարզական, երկուսը՝ մանկավարժական, մեկը՝ մանկական, մեկը՝ բժշկական-առողջապահական և այլն։ Այս պարբերականները տասնամյակներ շարունակ նպաստել են գաղութի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի աշխուժացմանը։

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, պարբերական մամուլի հրատարակումը ոչ թե մասնավոր անձանց, այլ գերազանցապես քաղաքական կազմակերպությունների գործն էր։ Պարբերականները մեծ մասամբ համարվում էին այս կամ այն կուսակցության պաշտոնական կամ անպաշտոն օրգանը, և գտնվում էին տվյալ կուսակցության վերահսկողության տակ։ Անկախ մամուլ ստեղծելու փորձեր եղել են, բայց հաջողությամբ չեն պսակվել։ Այդ առումով բնորոշ է Ա. Ալպոյաճյանի «Ազատ միտք» շաբաթաթերթի վախճանը։ Ա. Սաֆրաստյանին գրած մի նամակում նա նշել է. «Շատ լավ կազմակերպված էր գործը...։ Սակայն կուսակցությունները ամեն բան ըրին ձախողելու համար այս գործը։ ...Շատ ալ խնայողական պայմաններու մեջ կհրատարակվեր։ Զրի աշխատության համաձայն էի, սակայն բացը դիմագրավելու վիճակին մեջ չէի...»[89]։

Չկար մի այնպիսի հասարակական կազմակերպություն, որը կարողանար դաշնակցական «Հուսաբեր» և ռամկավար «Արև» օրգաններին հակադրել մի նոր, ամենօրյա, երկօրյա կամ եռօրյա հրատա-

[87] Տե՛ս «Արև», 8 նոյեմբերի 1931։

[88] Աշխատության վերջում տրված է եգիպտահայ պարբերական մամուլի (1865—1952) ցուցակը։

[89] ԳԱԹ արխիվ, Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, գ. 30, թ. 11։



րակություն։ Գոյատևեց միայն «Ջահակիր» շաբաթաթերթը, թեև լույս էր տեսնում մեծ դժվարություններ հաղթահարելով, հաճախ հրատարակչական բնույթը, ուղղությունը, խմբագիրը կամ սեփականատերը փոխելով։

Պարբերական մամուլի էջերում իրենց գրական առաջին քայլերն են կատարել նոր սերնդի այն ներկայացուցիչները, որոնք 1930-ական թվականներից աստիճանաբար դարձան եգիպտահայ գրական շարժման առանցքը։ Դրանցից էին բանաստեղծներ Արսեն Երկաթը, Ս. Սահակյանը, Ժագ Ս. Հակոբյանը, Շ. Կալվարենցը, Գ. Ջեբեջյանը, Դ. Շահյամյանը, արձակագիրներ՝ Արշամ Տատրյանը, Հ. Շեմսը, Ս. Պալըգյանը, Գ. Թագվորյանը, Պ. Մասիկյանը, Խ. Տեոեյանը, Բ. Թաշյանը, Ս. Շահպազը, Հ. Ժամկոչյանը և ուրիշներ։

Քննարկվող ժամանակաշրջանում եգիպտահայ տպարանները, թեև թվով սահմանափակ էին, բայց լավ էին կազմակերպված և ունեին լայն հնարավորություններ։ Խոշորագույն տպարաններն էին «Հուսաբերը» և «Արևը»։ Սկզբում «Արև» տպարանը սպասարկում էր միայն համանուն լրագրին, սակայն, աստիճանաբար ընդլայնվելով, տպագրում էր նաև գրքեր, առևտրական թղթեր և այլ բնույթի գործեր։ 1950-ական թվականներին «Արև» տպարանը «Հայ ազգային հիմնադրամի» ջանքերով օժտվեց արդիական շենքով, առաջաշար ու տպագրող մեքենաներով։ Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի վախճանը «Հուսաբեր» տպարանը ևս մի համեստ ձեռնարկ էր, որը հիմնականում տպագրում էր միայն համանուն պարբերականը։ «Հայ մշակութային «Հուսաբեր» ընկերության» ստեղծումով զարգացման նոր հեռանկար բացվեց տպարանի համար։ 1949—1950 թթ. այն տեղափոխվեց ընկերության նորակառույց շենքը, սարքավորվեց արդիական առաջաշար և տպագրող մեքենաներով։

Կային նաև փոքր տպարաններ. Կահիրեում գործում էին «Արգոս», «Հարեթ-Պապատար», «Ներսես», «Ոսկետառ», «Զ. Բերբերյան», «Սահակ-Մեսրոպ», «Սինեվեկ», «Սփինքս», «Հ. Փափազյան», «Նոր աստղ», «Սևան», «Նուպար», իսկ Ալեքսանդրիայում՝ «Արաքս», «Ժ. Սարգսյան» և «Վ. Գասապյան» տպարանները։ Դրանք հիմնականում տպագրում էին տարբեր լեզուներով առևտրական թղթեր, հայերեն գրքեր և պարբերականներ։

Զգալի վերելք ապրեց հրատարակչական գործը։ Տպարաններից մի քանիսը, ստեղծելով իրենց սեփական մատենաշարը, հրատարակում էին ինքնուրույն և թարգմանական վեպեր։ Դրանցից առանձնապես հի-

շատակության արժանի են «Արևը», «Հուսաբերը» և «Արդար»։ Վերջինս «ընթերցասիրության տարածման» նպատակով, պրակ առ պրակ լույս է ընծայել մի քանի տասնյակ անուն թարգմանություններ՝ եվրոպական գրականությունից[90]։ Այդ տպարանների հիմքի վրա սեփական մատենաշար էին ստեղծել նաև տարբեր միություններ[91] և մասնավոր անձինք[92]։

Սկզբում գրքերն ընթերցողներին հասցնելու գործով զբաղվում էին տպարանները։ Դրանց գրախանութային բաժնում կարելի էր գնել Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Թիֆլիսում, Վենետիկում, Վիեննայում և այլ վայրերում լույս տեսած հայերեն գրքեր ու թերթեր։ Հետագայում բացվեցին հատուկ գրախանութներ, որոնք հայթայթում էին հայերեն, արաբերեն և եվրոպական լեզուներով գրականություն։ Կահիրեում գործում էին, բացի Պալթայան և ընկ.-ի «Գուլըն քեոշք»-ից և Գ. Նազըրյանի «Եգիպտական գրատուն»-ից, Վ. Զարդարյանի, Աշճյանի, Մ. Զուրիկյանի, Ա. Տեր-Գևորգյանի, իսկ Ալեքսանդրիայում՝ Ն. Ղազիկյանի գրախանութները։

Եգիպտահայերն արձագանքում էին համահայկական մշակութային տոներին, տարեդարձերին, հոբելյաններին։ Սփյուռքի մյուս հայահոծ գաղթավայրերի նման՝ Եգիպտոսում էլ 1935 թվականը հայտարարվեց հոբելյանական տարի Աստվածաշնչի հայերեն թարգմանության 1500-ամյակի կապակցությամբ և տեղի ունեցան համազգային հանդիսություններ[93], 1951 թ. արժանավայել շուքով տոնվեց նաև Վարդանանց 1500-ամյակը[94]։ Նշվել են Սայաթ-Նովայի, Պետրոս Դուրյանի, Հակոբ Պարոնյանի, Միսաք Մեծարենցի մահվան տարելիցները, ինչպես և Սիպիլի, Ա. Ահարոնյանի, Վ. Թեքեյանի և ուրիշների հոբելյանները։ 1932 թ. տոնվել է Կոմիտասի ծննդյան 60-ամյակը[95]։ Որոշված է եղել

[90] Տե՛ս «Մարկավագին եգիպտահայ տարեցույցը», 1932, էջ 189։ 1924—1932 թթ. «Արդար» հրատարակել է 30 անուն թարգմանություն, ունեցել է ավելի քան 1000 բաժանորդ։

[91] «Մատենաշար» ունեցել են Գալուստյան շրջանավարտների միությունը, Կահիրեի Հայ ուսանողական միությունը։ Վերջինիս մի գրքույկը կոչվում էր «Մաղկաքաղ Հայաստանի նորագույն բանաստեղծությանց»։

[92] Պարբերաբար գրքեր լույս են ընծայել Հայկ Ս. Բյուրատ, Հարություն Մանավյանը, Հ. Ամիրյանը և ուրիշներ։

[93] Տե՛ս «Հուշարձան աստվածաշնչի հայերեն թարգմանության հազարհինգհարյուրամյակի», էջ 39—49, 160—162 և 179։

[94] Տե՛ս «Արև», 5 փետրվարի 1951։

[95] Տե՛ս «Հուսաբեր», 10 մայիսի 1932։



համազգային շուքով տոնել նաև Սիրանույշի բեմական հիսնամյա գործունեության հոբելյանը, բայց տեղի չի ունեցել հոբելյարի վերահաս մահվան պատճառով[96]։

## 4. ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ: ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին եգիպտահայ թատերական կյանքի առանցքը կազմում էին մի շարք ինքնագործ և կիսապրոֆեսիոնալ թատերախմբեր։ Ժամանակագրական կարգով առաջինը «Ադամյան» թատերախումբն է, որն առաջարեզ էր եկել Խ. Սանթալչյանի[97] և Ղ. Փափազյանի ջանքերով։ Նրա նպատակն էր՝ մնալով «չեզոք հողի վրա», սատարել եգիպտահայ բեմի զարգացմանը, օգնել հյուրեկ դերասաններին ներկայացումներ կազմակերպելու գործում և այլն[98]։ Սակայն նրան չհաջողվեց հեռու մնալ եգիպտահայ հասարակական կյանքը ցնցող կուսակցական պայքարներից և շուրջ երեք տարի (1921—1923) գործելուց հետո կազմալուծվեց։ «Ադամյան» թատերախումբը՝ պրոֆեսիոնալ դերասաններ Բ. Արովյանի, Մ. Սանամյանի և Շահան Սարյանի մասնակցությամբ բեմադրել է «Անհայտ կինը», «Ղարաբաղի աստղագետը», «Նամուս», «Պատվի համար», «Վարժապետին աղջիկը» և ուրիշ թատերգություններ[99]։ Գործում էին նաև «Արտասր-ժպիտ», «Արծիվ» և այլ թատերախմբեր։

[96] Սիրանույշը վախճանվել է 1932 թ. հունիսի 10-ին Կահիրեի գերմանական հիվանդանոցում, որտեղ բուժվում էր ապրիլի 16-ից։ Հուղարկավորությունը տեղի է ունեցել հունիսի 12-ին։ Թաղվել է Կահիրեի հայկական գերեզմանատանը, Երվանդ Օտյանի շիրմի մոտ։

[97] Խ. Սանթալչյանը եղել է եգիպտահայ բեմի նաանդուն աշխատողներից, տարիներ շարունակ վարել է Ալեքսանդրիայի Տիգրան Երկաթի անվան միության թատերական և երաժշտական բաժինը։ Նրա ջանքերով Եգիպտոսում առաջին անգամ հայերեն լեզվով ներկայացվել են ֆրանսիական Դրան Գինյոլի խաղացանկից «Մովերին մեջ», «Գիշերի ընթրիքը», ինչպես նաև Տրիստան Բեռնարի «Անգլերենը ինչպես կխոսին» թատերգությունները։ Սանթալչյանը հեղինակ է նաև մի շարք պիեսների՝ «Դերասան փեսացուն» (պոլսահայ կյանքից), «Մարո կամ Մշո ծաղիկը» և այլն։ Առաջինը բեմադրվել է 1929 թ. Ալեքսանդրիայում, երկրորդը՝ 1945 թ. Կահիրեում։ 1948 թ. հայրենադարձվելով, նա միառժամանակ աշխատել է Երևանի Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում։ Մահացել է 1965 թ. Երևանում։

[98] ԳԱԹ արխիվ, Թատերական բաժնի անտիպ նյութերից (Խ. Սանթալչյան, Եգիպտահայ թատրոնը 1900—1948 թթ.)։

[99] Տե՛ս նույն տեղում։

1922 թ. Կահիրեում դերասան Մ. Սանամյանի գլխավորությամբ հիմնվեց «Եգիպտահայ դրամատիկ ընկերությունը», որի նպատակն էր Թիֆլիսի Դրամատիկի օրինակով ստեղծել մի թատերական կազմակերպություն, որը ստանձներ եգիպտահայ բեմի ղեկավարությունը։ Սակայն նրանց ջանքերը չպսակվեցին հաջողությամբ։ (Ընկերության հիմնադրվելու առթիվ բեմադրվել է «Վերադարձը», այնուհետև «Մարվող հրագները» և այլն)։ Դրամատիկը սովորական թատերախմբից գրեթե այն կողմ չանցավ, իսկ Սանամյանի Եգիպտոսից մեկնելուց հետո երկփեղկվեց։ Կազմակերպվեցին երկու՝ «Եգիպտահայ դրամատիկ» և «Եգիպտահայ կոմեդի» թատերախմբերը, որոնք որոշակի դեր խաղացին եգիպտահայ թատերական կյանքում։

Եգիպտահայ դրամատիկը գործել է մինչև 1930-ական թվականները՝ Օ. Վոլթերի[100] ղեկավարությամբ։ Թատերախմբին մասնակցում էին եգիպտահայ լավագույն ուժերից Կ. Կարապետյանը, Լ. Հովհաննիսյանը, Վ. Գալֆաճյանը, ինչպես նաև դերասանուհի Բեատրիս Եկենյանը[101]։ Նրա խաղացանկն ընդգրկում էր հայ և օտար հեղինակների գործերը՝ «Մեծապատիվ մուրացկաններ», «Պատվի համար», «Դամոկլյան սուր» (Է. Տեր-Գրիգորյան), «Անմահ բույր» (Սուրեն Պարթևյան), «Օթելլո» «Թշվառները», «Անհայտ կինը», «Քամելիազարդ կինը», «Դալիլա», «Անչափահասները» և այլն։ Եգիպտահայ դրամատիկը ներկայացումներ էր կազմակերպում նաև հյուրեկ դերասանների հետ, երբեմն էլ հյուրեկային բեմադրություններով հանդես գալիս Կիպրոսում։ Եգիպտահայ մամուլը բարձր է գնահատել Օ. Վոլթերի ներկայացումները։

Կոմեդի թատերախումբը գործում էր պոլսահայ պրոֆեսիոնալ դերասան կատակերգակ Արփիար Վարդյանի ղեկավարությամբ։ Թատերախմբի գլխավոր դեմքերն էին՝ Աստղիկ և Ստեփան Եկենյանները,

[100] Օ. Վոլթերը (Օննիկ Գալֆայան) եգիպտահայ բեմի երախտավորներից էր։ Նա ասպարեզ է իջել 1910—1911 թթ. և արժանացել եգիպտահայ թատերասեր հասարակայնության ջերմ գնահատանքին։ Իր հուշերում Ժենյա Արիստակյան-Գալիպկյան նրա մասին գրում է. «Նա տեղական ուժերի մեջ ամենաուժեղն էր, խաղում էր գլխավորապես հերոսների դերերը, ...մինչև անգամ Օթելլոյի դերը» (ԳԱԹ արխիվ, Թատերական բաժնի անտիպ նյութերից)։ Վոլթերը մահացել է 1951 թ., երբ ծրագրված է եղել տոնել նրա բեմական 40-ամյա գործունեության հոբելյանը։ Այնուամենայնիվ, նույն թվականի ապրիլի 21-ին Կահիրեում տեղի է ունեցել նրա հիշատակին նվիրված երեկո և այդ առթիվ բեմադրվել է «Մարվող հրագներ» պիեսը։

[101] Դերասան Օ. Վոլթերի կինը։ 1922 թ. Պոլսից Եգիպտոս տեղափոխվելով ամբողջովին նվիրվել է եգիպտահայ բեմին։



Ռոզա Հովհաննիսյանը, ինչպես նաև Հ. Զարդարյանը, Ա. Ստեփանյանը, Խ. Սանթուրջյանը և ուրիշներ։ Խաղացանկում ընդգրկված էին «Լեբլեբիջի Հոր Հոր աղա», «Արշին մալ ալան», «Զարզըլը Արթին աղա», «Մադամ Մոնկոդե», «Դյուրյան Դյուրյան», «Ժան Թրուա», «Պեպերս» և այլ կատակերգություններ։ Լինելով Մնակյանի հետևորդը, Ա. Վարդյանի բեմադրությունները կրում էին պոլսահայ հին թատրոնի կնիքը՝ բեմադրական և լեզվական առումով[102]։

Ներկայացումներով հանդես էին գալիս նաև Լևոն Շիշմանյանը[103] և Խաչիկ Նորեկյանը։ Շիշմանյանի խաղացանկում էին «Զարզըլը Արթին աղան», «Փարիզի աղքատները», ինչպես և սեփական ստեղծագործություններից՝ «Կուգա օր մը, որ...», «Եգիպտահայ թատրոնը» և ուրիշ կատակերգություններ։ Պրոֆեսիոնալ կատակերգակ դերասան Նորեկյանը բեմադրում էր հայերեն և թուրքերեն լեզվով պիեսներ։ Նրա խաղացանկը հիմնականում կազմում էին իրենց ժամանակն ապրած վոդևիլներ և մելոդրամաներ՝ «Արծիվների կամուրջի տերը», «Երկու հարյուրապետները» և այլն[104]։

Ուժերի այդպիսի ցրվածությունը բացասաբար էր անդրադառնում եգիպտահայ թատրոնի զարգացման վրա։ Կյանքը առաջ էր գնում, նոր հարցեր էին հուզում հասարակայնությանը, իսկ եգիպտահայ թատրոնը ետ էր մնում, հնացած էր նրա ոճը, ժամանակավրեպ էր խաղացանկը։ «Արև» գրում էր, որ եգիպտահայ թատրոնը «կյանքին զուգընթաց» չի գնում, «տասնյակ տարիներով ետ և հեռու է մեր կյանքեն»[105]։ Եգիպտահայ թատրոնի վիճակն ավելի մռայլ գույներով էր ներկայացնում «Արաքս» թերթը. «Եգիպտահայ բեմի մակարդակը իջավ հետզհետե...։ Եգիպտոսի մեջ հայ թատրոն գոյություն չունի...։ Ասիկա անշուշտ չի նշանակեր թե այլևս հայկական ներկայացում չպիտի տրվի...։ Ընդ-

[102] Տե՛ս «Արաքս», 28 ապրիլի 1928։

[103] 1924 թ. Կահիրեում տոնվել է Լ. Շիշմանյանի 25-ամյա բեմական գործունեության հոբելյանը։ Մահացել է 1936 թ. Կիպրոսում։

[104] Տե՛ս ԳԱԹ արխիվ, Թատերական բաժնի անտիպ նյութերից (Խ. Սանթուրջյան)։

[105] «Արև», 23 մարտի 1927։ Եգիպտահայ բեմի հեղինակազրկվածության ցուցանիշ էր այն, որ ներկայացման տոմսերը վաճառվում էին ոչ թե թատրոնի դրամարկղում, այլ շուկաներում՝ շրջուն հանձնախմբերի միջոցով։ Տոմս գնելը համարվում էր բարեգործության համարժեք։ Հանդիսականները թատրոն էին գալիս ուշացումով «խղճի և հոգու կատարյալ հանգստությամբ և ամեն մեկը վստահ, որ իր գալեն առաջ կարելի չէ բանալ վարագույրը» («Արաքս», 15 մայիսի 1926)։

հակառակը, Թերևս պետքեն ալ ավելի բեմադրությանց պիտի հանդիպինք կրկին...»[106]։

Եգիպտահայ թատրոնի վիճակը լրջորեն մտահոգում էր մանավանդ բեմի աշխատողներին։ 1928 թ. հուլիսին Կահիրեում գործող հայ դերասանների և թատերասերների խորհրդակցությունը, քննարկելով եգիպտահայ թատերական կյանքում «գոյություն ունեցող հակամարտությանց ու պայքարներուն» պատճառները, միաձայնությամբ որոշում ընդունեց հիմնել «Եգիպտահայ «Գաղթան» միացյալ թատերախումբը»։ Ընտրվեց ժամանակավոր վարչություն, որի կազմում էին Լ. Ճիշմանյանը, Օ. Վոլթերը, Խ. Նորեկյանը, Մ. Թաշճյանը և Գ. Բաղրատունին։ Այդ նախաձեռնությունը սակայն հաջողությամբ չպսակվեց. կարճատև մերձեցումից հետո նորից խրամատ բացվեց թատրոնի աշխատողների միջև և «Գաղթանը» ցրվեց[107]։ Դա հիմնականում հայ հասարակական-քաղաքական կյանքում կուսակցական կրքերի բորբոքման հետևանքն էր։

1930-ական թվականներից դերասանների փոքրաթիվ զույգը՝ կուսակցական պատկանելությունը որոշում էր այս կամ այն ներկայացման, այս կամ այն թատերախմբի բախտը։ Այդ պայմաններում քայքայվեցին Եգիպտահայ դրամատիկը, Եգիպտահայ կոմեդին և մյուս թատերախմբերը։ Դերասանների շուրջ գեղերում և աղմկում էին թատրոնի համար պատահական մարդիկ։ Իրոք, եգիպտահայ «թատրոնը դարձավ միջակությանց ասպարեզ, կարգ մը նորահաս ու անփորձ տղոց մարզավայր, չարաշահությանց առարկա և շահագործման ենթակա»[108]։ Ոմանք տոնում էին իրենց «բեմական... գործունեության հոբելյանը», այն դեպքում, երբ դրական ոչինչ չէին արել հայ թատրոնի զարգացման համար (Վ. Երամյան), ուրիշները տոմս վաճառելու ակընկալությամբ մամուլի էջերից խոստանում էին «ներկայացումները հասույթով Եվրոպա երթալ կատարելագործվելու համար» և այլն։ Իսկ նրանց խաղացանկը կազմված էր անորակ և անարվեստ պիեսներից՝ «Վեցունեւ պարտի ժառանգ մնացած սնտուկը», «Գեղացի վաճառականը», «Թիվ 5 խելագարը»[109], «Աշճը բաշը Թոսուն աղա» և այլն։ Այդպիսի թատրոնը ժողովրդականություն չէր կարող ունենալ։

Եգիպտահայ թատրոնը վերակենդանացնելու փորձ կատարեցին մշակութային միությունները։ 1930-ական թվականների վերջերից այդ առաքելությամբ ասպարեզ իջան «Համազգայինը», «Հայ գեղարվեստասիրացը», «Տիգրան Երկաթը» և ուրիշներ, ստեղծելով համանուն թատերախմբեր։ Գնալով կուսակցական պիտակն անհրաժեշտություն էր դառնում ներկայացման հաջողության համար։ Մինչև անգամ Օ. Վոլթերը, Ա. Վարդյանը և ուրիշ ճանաչված արվեստագետներ գերադասում էին հանդես գալ այս կամ այն միության պիտակի ներքո։ Տարբեր պիտակներից կառչելը, վերջին հաշվով, չօգնեց եգիպտահայ թատրոնի վերակենդանացմանը։

1940—1950-ական թվականներին եգիպտահայ բեմը դարձավ մշակութային տարբեր միությունների մենաշնորհը։ Համարյա չկար միություն կամ ակումբ, որ սեփական թատերախումբ չունենար։ Ամեն միություն, ամեն ակումբ, որ կարող էր 100 կամ 150 տոմս վաճառել, բեմադրում էր մինչև անգամ Շեքսպիր։ Ուժերի այդպիսի ցրումը ավելի ևս մանրացրեց թատերական գործը, իջեցրեց ներկայացումների մակարդակը։ Բայց պիտակը լռեցնում էր ստեղծագործ քննադատությունը, իսկ կողմնակալ գրիչները ծափահարում էին, երբ, օրինակ, դպրոցական երեխաները Կահիրեի խոշորագույն թատրոններում բեմադրում էին «Վենետիկի վաճառականը», երբ անտաղանդ երիտասարդները հանդես էին գալիս աշխարհահռչակ դերերով։ Այդ օրերին եգիպտահայ բեմի երկնակամարում հուսատու լույսի նշույլներ էին Բեադրիս Եկենյանը, Օ. Վոլթերը, Օհանյան ամոլը և մի քանի այլ դերասաններ։

Եգիպտահայ թատերական կյանքում նշանակալից երևույթ էին Հովհ. Աբելյանի, Հովհ. Զարիֆյանի և մյուս վարպետների հյուրախաղային ներկայացումները։

1921—1922 թթ. Հովհ. Աբելյանը երկու անգամ եղել է Եգիպտոսում։ Առաջին այցելության ժամանակ նա Ալեքսանդրիայում բեմադրել է «Օթելլոն» և «Քորատոն»՝ տեղական ուժերի մասնակցությամբ։ «Օթելլոն» կրկնվել է նաև Կահիրեում։ Կարճատև բացակայությունից հետո Աբելյանը վերադարձել է դերասաններ Մ. Սանամյանի, Անդրանիկի, Ադոնիսի և նրա դստեր՝ Գերճուհու հետ։ Խումբը, համալրվելով տեղական ուժերով, Ալեքսանդրիայում և Կահիրեում բեմադրել է «Չար ոգի», «Օթելլո», «Ավազակները», «17 տարեկանները» և ուրիշ թատերգություններ։ Սակայն Աբելյանի և Անդրանիկի միջև ծագած ինչ-որ տարաձայնության հետևանքով թատերախումբը ցրվել է[110]։

---

106 «Արաքս», 31 հոկտեմբերի 1931։

107 Տե՛ս «Արաքս», 14 հուլիսի 1928։

108 «Արաքս», 31 հոկտեմբերի 1931։

109 Նույն տեղում։

110 ԳԱԹ արխիվ, թատերական բաժնի անտիպ նյութերից (Խ. Սանթալյան)։

Ավելի հարուստ խաղացանկով հանդես է եկել Հով. Զարիֆյանը։ Նրա առաջին ներկայացումը՝ «Օթելլոն» տեղի է ունեցել 1927 թ. դեկտեմբերի 23-ին Կահիրեի Ռամզես թատրոնում։ Այնուհետև Զարիֆյանը Կահիրեում և Ալեքսանդրիայում բեմադրել է «Համլետը», «Ընկած բերդի իշխանուհին», «Դերասան Քինը», «Ուրիել Ակոստան» և «Թայֆունը»։ Այդ ներկայացումներին մասնակցել են Վ. Ամիրայանը, Օ. Վոլթերը, Գեորգ և Գասպար Իփեկյանները, Խ. Նորեկյանը, Կ. Կարապետյանը, Խ. Սանթալչյանը, Գ. Թերզիբաշյանը, Վ. Պարթևյանը և ուրիշներ։ Մամուլի հաղորդումներում Զարիֆյանի խաղը որակվել է «սքանչելի», «գերազանց»[111]։

1929 թ. Եգիպտոս է ժամանել Կոստանյանի դերասանախումբը[112] և, համալրվելով տեղական ուժերով, մի շարք ներկայացումներ է բեմադրել Կահիրեում և Ալեքսանդրիայում։ Մամուլի հաղորդումներից երևում է, որ «Դավաճանություն», «Խորտակված ընտանիք», «Անհայտ կինը» և «Անմեղ մեղավորներ» պիեսների բեմադրությունը չի բավարարել թատերասեր հասարակայնությանը[113]։

Տարբեր ժամանակներում Կահիրեում և Ալեքսանդրիայում տեղական ուժերի մասնակցությամբ հյուրեկային ներկայացումներ են կազմակերպել նաև դերասան Բարսեղ Արուշյանը, Մանվել Մարությանը, Հայկ Արծիվը, Վարդ Պատրիկը և ուրիշներ։

Մի շարք եգիպտահայ արվեստագետներ հանդես են եկել եգիպտական կինոյում։ Հիշարժան են Փերուզ Գալֆայանը և Նոնիա Քյուփելյանը։ Առաջինի մասնակցությամբ նկարահանված «Ֆայրուզ հանըմ», և երկրորդի՝ «Երջանիկ տունը» կինոժապավենները մեծ ժողովրդականություն էին վայելում ամբողջ արաբական աշխարհում[114]։

---

[111] Բայց ներկայացումները զգալի դրամական օգուտ չեն տվել Զարիֆյանին, որովհետև անհանգիստ վիճակ էր տիրում եգիպտահայ ներքին կյանքում։ Մամուլի հաղորդումներում ակնարկվում է նրա ներկայացումների նկատմամբ հասարակության որոշ խավերի ցույց տված միտումնավոր անտարբերությանը։ «Ուրիել Ակոստայի» բեմադրության կապակցությամբ կարդում ենք. «Սրահը կիսով չափ պարապ էր այս անգամ ալ, ժամանակավորապես օթյակները պարապությունը աչքի կզարնեին, մեր ունևոր դասակարգը կրկին կփայլեր իր բացակայությամբ» («Արաքս», 18 մարտի 1928)։ «Համլետի» բեմադրության ժամանակ էլ թատրոնը «հազիվ թե կիսով լեցուն էր և նյութական արդյունքը եղավ ճղճիմ...» («Արաքս», 19 մայիսի 1928)։

[112] Բաղկացած էր Կոստանյան ընտանիքի չորս անդամներից։

[113] Տե՛ս «Արև», 24 ապրիլի 1929։

[114] Տե՛ս «Արև», 27 մարտի 1951։



Եգիպտական կինոարվեստի զարգացման գործում գնահատելի ծառայություն են մատուցել նաև մի շարք հայ կինոօպերատորներ, ինչպես նաև Հ. Նասիբյանի կինոստուդիան։

* * *

Եգիպտահայ երաժշտական կյանքում նոր երևույթ էր անվանի դիրիժոր Գ. Արիստակեսյանի՝ «Թմկաբերդի առումը» և «Անուշ» օպերաների բեմադրությունը։ Իր հուշերում Խ. Սանթալչյանը գրել է. «Հայկական օպերան նորություն մըն էր եգիպտահայության համար։ Արիստակեսյանը հաջողեցավ երկրորդական ուժերով գլուխ բերել այդ վիթխարի գործը»[115]։ 1923—1925 թթ. այդ օպերաները բազմիցս կրկնվել են Կահիրեում և Ալեքսանդրիայում։ Արիստակեսյանի վաղաժամ մահվան հետևանքով ընդհատվել է նրա «Եգիպտահայ դրամա-օպերետային խմբի» գործունեությունը։ Այնուհետև, երկար ժամանակ, ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդող տարիները, որևէ լուրջ փորձ չի կատարվել հայկական օպերա բեմադրելու ուղղությամբ[116]։ 1949 թ. Կահիրեում երաժիշտներ Կ. Ափրիկյանը և Ս. Սարգսյանը ստեղծել և բեմադրել են «Հերիաթ» օպերան, որը մամուլի վկայությամբ եղել է բավական հաջող[117]։

Տարբեր ժամանակներում գործել են մի շարք վոկալ և գործիքային խմբեր։ Դրանցից աչքի են ընկել Կահիրեում Գալուստյան դպրոցի Ցանֆառը (1924 թ. վերակազմված, ղեկավար՝ Ք. Գալֆայան), Վահան Բարսեղյանի «Հնչակ» նվագախումբը (1931 թ.), «Գողթան» երգչախումբը (1934 թ.), Լ. Նազարյանցի և Ս. Ճալճյանի «Համազգայինի երգչախումբը» (1934 թ.), «Կոմիտաս» երգչախումբը (1940-ական թվականներին), Ալեքսանդրիայում՝ Խ. Սանթալչյանի «Քնար» մանդոլինի խումբը (1923 թ. վերակազմված), Վ. Սրվանձտյանցի «Կոմիտաս» երգչախումբը (1920—ական թվականներին), Երվ. Ալեքսանյանի «Քնար» նվագախումբը 1930-ական թվականներին)[118] և այլն։ Այդ

---

[115] ԳԱԹ արխիվ, թատերական բաժնի անտիպ նյութերից։ Գ. Արիստակեսյանը 1922 թ. Կովկասից էր մեկնել Եգիպտոս։ Նրա դուստրը Մենյա Արիստակեսյան-Պոլյակինան աշխույժ մասնակցություն է ունեցել եգիպտահայ թատերական-երաժշտական կյանքում։ Նա հայտնի էր որպես կովկասյան պարերի կատարող, ստեղծել է նաև մի շարք թատերգություններ։ Հայրենիք է վերադարձել 1948 թ.։

[116] «Արծիվ» թատերախմբի բեմադրած «Անուշը» եղել է «վատ» և խստորեն քննադատվել է («Արաքս», 31 հոկտեմբերի 1931)։

[117] Տե՛ս «Հուսաբեր», 17 սեպտեմբերի 1949։

[118] Տե՛ս «Հուսաբեր», 3 հունվարի 1946։

խմբերի ելույթները գրավում էին նաև օտար երաժշտասերների ուշադրությունը։ Վ. Սրվանձտյանցի կոմիտասյան համերգի առթիվ, արվեստի քննադատ Հանրի Բերգաար գրել է. «Երկու զմայլելի ժամեր անցուցինք լսելով... Հայաստանի այն ժողովրդական երգերը, որոնք սրտի կրքերն և կարտահայտեն մարդկային ամենամեծ բերկրանքները՝ սերը, պարը և աշխատանքը»[119]։

Կահիրեում և Ալեքսանդրիայում ելույթներով հանդես էին գալիս մենակատարներ՝ երգչուհի Քրիստինե Գալֆայան-Կանալյանը, դաշնակահար Էռնեն Բարագյանը և ուրիշներ։ 1940-ական թվականներին ասպարեզ իջան երգիչներ Գոհար Խաչատուրյան-Գասպարյանը և Միհրան Երկաթը, որոնց տաղանդը պետք է ծաղկեր մայր-հայրենիքում։

Եգիպտահայ երաժշտական կյանքում զգալի աշխուժություն են ստեղծել երգչուհի Լյուսի Սեռոմյանի (1923 և 1924 թթ.)[120], երգիչ Արմենակ Շահմուրադյանի (1925 և 1928 թթ)[121], քամանչահար Ռուբեն Կարախանյանի[122], դաշնակահար Գ. Նազարյանի, ջութակահար Բաբիրյանի և ուրիշների հյուրախաղային համերգները։

* * *

Եգիպտահայ գաղութն առավել նշանակալից հաջողություններ է ձեռք բերել կերպարվեստի բնագավառում։ Եգիպտական բուրժուաները, հետևելով եվրոպական բուրժուաների կենցաղին, իրենց պալատները զարդարում էին նկարչական, քանդակագործական, զարդանկարչական մեծածախս ստեղծագործություններով։ Հուսալի պատվիրատուի առկայության պայմաններում կերպարվեստի տարբեր բնագավառները վեր էին ածվել շահութաբեր պրոֆեսիայի, հնարավոր դարձնելով նկարչական դպրոցների, ցուցասրահների, մշտական և սեզոնային ցուցահանդեսների առկայությունը։ Կահիրեում և Ալեքսանդրիայում գործում էր Լեոնարդո դա Վինչիի անվան նկարչության երեկոյան դպրոցը, ինչպես և ցուցասրահներ՝ «Գալըրի Ադամը», «Գալըրի Գրեգուարը» (սեփականատեր՝ Գրեգուար Մկրտչյան), «Բրեվալը», «Լ'Ատելյեն», որոնք զբաղվում էին նկարների առևտրով։ Այդ միջավայրում աճեցին և ստեղծագործեցին մի շարք հայ նկարիչներ ու քանդակագործներ, որոնք պատվավոր տեղ են գրավում եգիպտական կերպարվեստի պատմության մեջ։

Եգիպտահայ ավագ սերնդի հայտնի նկարիչներ են Երվանդ Դեմիրճյանը (1870—1938), Վահրամ Մանավյանը (1880—1951), Տիրան Կարապետյանը (1882—1963), Պարույր Պարտիզպանյանը (1887—1932), Օննիկ Ավետիսյանը, Ալեքս. Սարուխանը և ուրիշներ։

**Երվանդ Դեմիրճյանը** նկարչական կրթությունն ստացել է նախ Կ. Պոլսի Գեղարվեստից դպրոցում, ապա Փարիզում։ 1896 թ. համիդյան ջարդերից փախչելով, նա ապաստան է գտել Եգիպտոսում, որտեղ և ապրել ու ստեղծագործել է մինչև կյանքի վերջը։ Լինելով համեստ և խստապահանջ արվեստագետ, Դեմիրճյանը առհասարակ խուսափել է ցուցահանդեսների և մամուլի աղմուկից[123]։ Նա «բարձր արվեստով» ստեղծել է եգիպտական պեյզաժներ և ժողովրդական տիպարներ, որոնք առանձնահատուկ տեղ են գրավում եգիպտական նկարչության մեջ[124]։

**Վահրամ Մանավյանը**, ավարտելով Կ. Պոլսի Գեղարվեստից դպրոցը, 1911 թ. անցել է Եգիպտոս, որտեղ ստեղծագործական աշխատանքին զուգահեռ նկարչության դասեր է ավանդել տարբեր դպրոցներում։ Դեմիրճյանի հետ կազմակերպած (1933 թ.) ցուցահանդեսից

[119] Տես «Հուսաբեր», 10 հուլիսի 1926։

[120] Լ. Սեռոմյանը Եգիպտոսում հանդես է եկել երկու անգամ, առաջինը որպես մենակատար, երկրորդը՝ որպես եվրոպական օպերային մի խմբի պրիմադոննա և երգել է «Անդրե Շենիե» (Մադլեն), «Պիկոլո Մարաթ» (Մարիելլա) և այլ օպերաներում։ Եգիպտական մամուլը բարձր է գնահատել հայ երգչուհու տաղանդը («Հուսաբեր», 17 մարտի 1924)։

[121] 1925 թ. Ա. Շահմուրադյանի երգահանդեսների հայտագրում եղել են Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի, Մ. Եկմալյանի, Վ. Սրվանձտյանցի, Չայկովսկու, ինչպես նաև ֆրանսիական հեղինակների ստեղծագործություններից։ Ջութակով, թավջութակով և դաշնամուրով նրան ընկերակցել են հայտնի արվեստագետներ Լանցոնին, Պասկուարելլան, Բրունետին, Քրիստինե Գալֆայանը և Անտոլինին։ Երգահանդեսների մասին գովասանական հոդվածներ են հրապարակվել Եգիպտոսի հայ և օտար մամուլում («Հուսաբեր», 9 ապրիլի 1925)։ Նույնպիսի ջերմ ընդունելության են արժանացել նաև նրա 1928 թվականի երգահանդեսները («Արաքս», 21 ապրիլի 1928)։

[122] Քամանչահար Ռուբենը բազմիցս ելույթներ է ունեցել Եգիպտոսում։ Հայ և օտար մամուլը միշտ էլ բարձր է գնահատել նրա արվեստը։ Կահիրեի «Լա Պատրի» թերթը նշել է, որ Ռուբենը «անմրցելի վիրտուոզ» է (տես «Հուսաբեր», 18 փետրվարի 1930)։

[123] Ե. Դեմիրճյանը մասնակցել է Կահիրեի «Արվեստի բարեկամների ընկերության» ցուցահանդեսներին ուշագրավ գործերով («Հուսաբեր», 23 հունվարի 1928, 16 հունվարի 1930, «Արև», 6 ապրիլի 1932)։ 1933 թ. տեղի է ունեցել Դեմիրճյան-Մանավյան ցուցահանդեսը, որտեղ ցուցադրված են եղել երկու նկարիչների շուրջ 70 գործեր («Հուսաբեր», 18 մարտի 1933)։

[124] Տե՛ս *O. Avédissian*, Peintres et Sculpteurs Arméniens, p. 313.

հետո 1950 թ. Կահիրեի նոր արվեստի թանգարանում տեղի է ունեցել նրա գործերի երկրորդ և վերջին ցուցադրությունը։

**Տիրան Կարապետյանն** աշակերտել է Ե. Դեմիրճյանին, իսկ 1900—1905 թթ. սովորել է Փարիզի Ժյուլիանի անվան նկարչական ակադեմիայում։ Նրա առաջին ցուցահանդեսը տեղի է ունեցել Կահիրեի Բրեվալի ցուցասրահում, երկրորդը՝ 1941 թ. Կոնտինենտալ հյուրանոցում։ Եգիպտական մամուլը բարձր է գնահատել նրա ստեղծագործությունները։ Կյանքի վերջին տարիներին Կարապետյանը խճճվել է աբստրակտ արվեստի մեջ և այլևս աչքի ընկնող գործեր չի ստեղծել[125]։

**Պարույր Պառտիզպանյանն** ավարտել է Կ. Պոլսի Գեղարվեստից դպրոցը, 1910 թ. եղել է Գերմանիայում, իսկ 1923 թ. մշտական բնակություն է հաստատել Եգիպտոսում։ Մասնակցելով Սալոն դյու Կերի ցուցահանդեսներին, նա աչքի ընկնող տեղ է գրավել եգիպտական նկարիչների բնանկարում։ Մահացել է թոքախտից ուժերի ծաղկման շրջանում։ 1936 թ. Կահիրեում կազմակերպվել է նրա ստեղծագործությունների հետմահու ցուցադրությունը[126]։

**Օննիկ Ավետիսյանը** 1921—1925 թթ. սովորել է Վիեննայի Գրաֆիկական արվեստի դպրոցում, 1925—1927 թթ.՝ Հռոմի Գեղարվեստից ակադեմիայում։ Նա ասպարեզ է իջել որպես ակուաֆորտիստ, բայց հետագայում հաջողությամբ զբաղվել է նաև յուղանկարով և քանդակագործությամբ։ Նրա առաջին ցուցահանդեսը տեղի է ունեցել 1929 թ., երկրորդը՝ 1932 թ. Կահիրեում, երրորդը՝ 1934 թ. Ալեքսանդրիայում։ Ավետիսյանի ուշագրավ գործերից են Սիրանույշի, Կարապետ Գալուստի, Պողոս Նուբարի, Տիգրան դ'Աբրոյի, Գրիգոր Եղիայանի կիսանդրիները։ Նա հրատարակել է մի շարք հայերեն և ֆրանսերեն արվեստագիտական ուշագրավ աշխատություններ[127], ինչպես և գնահատելի աշխատանք է կատարել տպագրական տառերի բարեփոխման ուղղությամբ։ Հավատարիմ մնալով մեսրոպյան տառաձևերին և հենվելով մեր ձեռագիր մատյանների վրա, նա ստեղծել է նոր, համեմատաբար ավելի մատչելի տառաձևեր։

**Ալ. Սարուխանը**, ավարտելով Վիեննայի Գրաֆիկական արվեստի դպրոցը, 1924 թ. հաստատվել է Կահիրեում, որտեղ և ապրեց ու ստեղծագործեց մինչև կյանքի վերջը։ 1925—1926 թթ. նա հրատարակել է «Հայկական սինեմա», իսկ 1938—1940 թթ.՝ «Լա կարավան» ֆրանսերեն երգիծական շաբաթաթերթերը։ Նա ծաղրանկարներով աշխատակցել է «Ալ-Գադիդ» (1927—1928 թթ.), «Ռոզ ալ-Յուսեֆ» (1928—1934 թթ.), «Ալ-Կաշքուլ» (1928—1933 թթ.), «Ալ-Մուստակբալ» (1929—1931 թթ.), «Ախըր Սաա» (1934—1946 թթ.), «Անա Մալի» (1935—1937 թթ.), «Լա Բուրս Էժիպսիեն» (1938—1940 թթ.), «Իմաժ» (1941—1943 թթ.), «Ալ-Ախբար» և «Ալ-Ախբար էլ-Յոմ» (1946 թվականից), «Արև» (1925 թվականից) թերթերին։ 1938 թ. Ալ. Սարուխանը նկարազարդել է Ե. Օտյանի «Ընկեր Փանջունի» և Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» երգիծական վիպակները, 1945 թ. հրատարակել է քաղաքական ծաղրանկարների մի ալբոմ՝ «Սետ Գեր» (Այս պատերազմը) խորագրով։ Սարուխանը ցուցահանդեսներ է ունեցել Կահիրեում, Ալեքսանդրիայում, Բեյրութում և Հալեպում[128]։ Նա համարվում էր Մերձավոր Արևելքի խոշորագույն ծաղրանկարիչներից մեկը։

Եգիպտահայ աչքի ընկնող նկարիչներ էին Աշոտ Զորյանը, Բյուզանդ Գոճամանյանը, Համբար Համբարձումյանը, Հակոբ Հակոբյանը (այժմ Երևանում) և ուրիշներ[129]։

Տարբեր ժամանակներում Եգիպտոսում հյուրախաղային ցուցահանդեսներ են տվել մի շարք անվանի նկարիչներ՝ Մուրադյանը (1922 թ.), Աղամյանը, Վ. Շապանյանը (1930 թ.), Գ. Պետիկյանը (1949 թ.), Վավա Սարգիս Խաչատուրյանը (1951 թ.)։

Աշխուժություն ցուցաբերվել է նաև արվեստի այլ բնագավառներում։ Հայ և օտար հասարակայնության կողմից բարձր են գնահատված եղել Թեոդորա Դեմիրճյանի (1930 թ.) և Մադլեն Մկրտչյանի (1950 թ.) կիրառական արվեստի ցուցահանդեսները[130]։

---

125 Տե՛ս նույն տեղում, էջ 316։

126 Տե՛ս նույն տեղում, էջ 315։

127 Տե՛ս նույն տեղում, էջ 321—322 և 324։

128 Տե՛ս նույն տեղում, էջ 413—414։

129 Կահիրեի միջազգային ցուցահանդեսում գործեր ցուցադրելու առիթով հիշատակվում են մի շարք նկարիչներ՝ Սրապեյին (Յակոբ Աբթինի զավակը), Առաքելյանը, Սոփոն Պեկիրճյանը, Թադևոսյանը, Մանուկյանը, Պողոսատրյանը, Ա. Շիմշիրյանը, Հ. և Տ. Անդրանիկյանները, Սարգիս Կամսարականը, Սիմոն Սամանդյանը, Արա Թոփալյանը, Արտեմիր, Տերենց-Մարգարյանը, Ժիրայր Փալամուտյանը, Հարմիկ Պոլարյանը, Ս. Զաքրը, Ս. Շամլյանը, Ա. Պարոնիկը (այժմ Երևանում) և ուրիշներ։

130 Այդ ցուցահանդեսներում տեղ գտած բազմատեսակ ցուցանմուշների նկարագրությունը տե՛ս «Հուսաբեր», 5 փետրվար 1930 և «Արև», 3 հունվարի 1951։

## ՎԵՐՋԱԲԱՆ

Եգիպտահայ գաղութը հայկական հնագույն գաղութներից է, կազմավորվել է Հայաստանում տիրող սոցիալական, տնտեսական և քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով, և գոյատևել է այն սերտ կապերի շնորհիվ, որ պահպանել է մայր ժողովրդի հետ։ Նրա զարգացման գործում որոշիչ դեր է կատարել ազգային շուկայից զրկված հայ վաճառականական կապիտալը։

XIX դարի առաջին կեսին եգիպտահայ գաղութի հիմնական կրողներից էր հայ առևտրավարկային կապիտալը։ Նրա հետքերով էին մեծ մասամբ Եգիպտոս գնում հայրենի բնաշխարհից հեռու հաց ու հանգիստ որոնող գաղթականներն ու պանդուխտները, նրա հարթած ուղիներով էին մեծատուն-վաճառականները հասնում պետական-քաղաքական ամենաբարձր պաշտոնների և երբեմն ազդում էին Եգիպտոսի ներքին ու արտաքին քաղաքականության վրա։ Առևտրավարկային կապիտալի ներկայացուցիչների նկատմամբ ցուցաբերված հանդուրժողությունը նպաստում էր եգիպտահայ գաղութի հասարակական, քաղաքական և մշակութային կյանքի աշխուժացմանը։ 1840—1870-ական թվականներին եգիպտահայ գաղութի ամբողջական թուլացումը հետևանքն էր այն հարվածի, որով ներխուժող օտարերկրյա կապիտալն ասպարեզից դուրս մղեց հայ առևտրականներին և վարկատուներին։

XIX դարի վերջերից եգիպտահայ գաղութի զարգացումը հիմնականում պայմանավորված էր եգիպտական ներքին շուկայում հայ առևտրական և արդյունաբերական կապիտալի դիրքերի ամրապնդումով։ Օսմանյան կառավարության տնտեսական նոր քաղաքականության («Օսմանյան պետական պարտքի վարչություն») և պարբերաբար կրկնվող զանգվածային կոտորածների հետևանքով, Եվրոպայի և Արևելքի միջև վաղուց միջնորդ դարձած թուրքահայ առևտրականներն իրենց կապիտալների զգալի մասը տեղափոխում էին համեմատաբար ապահով և հուսալի երկրներ, այդ թվում Եգիպտոս։ Զգալով թույլ զարգացած եգիպտական բուրժուազիայի անզորությունից, նրանք ակնառու դեր էին կատարում ոչ միայն առևտրի ասպարեզում, այլև կապիտալներ էին ներդնում արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ։ Դրամական խոշոր միջոցներ կուտակած եգիպտահայ առևտրականներն ու արդյունաբերողները, ճյուղավորվելով հարևան Սուդանում և Եթովպիայում, նպաստում էին նաև այդ երկրների հայկական գաղութների զարգացմանը։

Առաջին համաշխարհային պատերազմից հետո «ոչ-ազգային» կապիտալն ընկավ ներքին շուկայում տիրության ձգտող եգիպտական բուրժուազիայի կրակի տակ, և գնալով նվազեց նրա ներկայացուցիչների դերը Եգիպտոսի տնտեսական կյանքում։ Եգիպտահայ կապիտալիստների դիրքերի թուլացմանը մասնավորապես նպաստում էին նաև այն հայկական կորուստները, որ նրանք կրեցին Թուրքիայում գործող իրենց մասնաճյուղերի ոչնչացումով։ «Ոչ-ազգային» կապիտալի դերի մանրացմանը զուգընթաց եգիպտահայերը զրկվեցին տնտեսական և քաղաքական երբեմնի առաջատար դիրքերից և, չնայած նախկին համեմատությամբ թվաքանակի զգալի հավելմանը, սահմանափակվեց նրանց համայնքային ինքնավարությունը։

1952 թվականի հուլիսի 23-ի հեղափոխությունից հետո նոր իրավիճակ ստեղծվեց եգիպտահայ բուրժուազիայի համար։ Մերժելով արնտեսության մասնավոր սեկտորի («շահագործող կապիտալի») գոյության իրավունքը, հեղափոխական կառավարությունը խրախուսում էր պետական սեկտորի («չշահագործող կապիտալի») զարգացումը։ 1956 թ. հուլիսի 26-ին ազգայնացվեց Սուեզի ջրանցքի ընկերությունը, 1957 թ. հունվարից սկսվեց բանկերի, առևտրական և ապահովագրական գործակալությունների ազգայնացումը։ Ազգայնացված հիմնարկները վերահսկելու համար ստեղծվեց պետական հատուկ գերատեսչություն՝ «Տնտեսական զարգացման միություն», որն օժտված էր բավական լայն իրավասություններով։ 1965 թ. պետական սեկտորի վերահսկողության տակ էին անցել արտադրության միջոցների 90 տոկոսը։

1952 և 1961 թթ. ագրարային օրենքները, խիստ սահմանափակելով հողային մասնավոր սեփականատիրությունը, ծանր հարված հասցրին խոշոր կալվածատիրությանը։ Այժմ մեկ կալվածատիրոջ հողի առավելագույն տարածությունը չէր կարող գերազանցել 100, մեկ ընտանիքինը՝ 200 ֆեդդանից։ Բացի այդ, ագրարային ռեֆորմի մինիստրության տրամադրության տակ անցան նաև վակֆային հողերը։ Դրանով

եգիպտահայ համայնքները համարյա զրկվեցին ազգապատկան անշարժ գույքի եկամուտներից։

Հեղափոխության առաջին տարիներից օտարերկրյա և «ոչ-ազգային» կապիտալների արտահոսք սկսվեց և, չնայած եգիպտական կառավարության արգելող միջոցառումներին, այն շարունակվեց գաղտնի ճանապարհներով։ Մասնավոր կապիտալների արտահոսքին հետևեց կապիտալիստների արտագաղթը, անհիմն խուճապ առաջացնելով նաև եգիպտահայ աշխատավորների շրջանում։ Հայ աշխատավորները նախ մասնակի, իսկ 1960-ական թվականներից խոշոր խմբերով արտագաղթում էին դեպի ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլ երկրներ։ Եգիպտոսից ոչ քիչ թվով հայեր ներգաղթեցին Սովետական Հայաստան։

Այսօր Կահիրեում և Ալեքսանդրիայում բնակվում են տասը հազարից քիչ ավելի հայեր՝ ճնշող մեծամասնությամբ բանվորներ, արհեստավորներ, ծառայողներ և մանր առևտրականներ, որոնք համեստ, բայց գնահատելի մասնակցություն են բերում եգիպտական ժողովրդի սոցիալական, տնտեսական և քաղաքական վերափոխման ճիգերին։

# ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՑՈՒՑԱԿ

*(1865—1952)*

Եգիպտահայ գաղութը ունեցել է բավական աչքառու պարբերականներ, որոնց պատմության ուսումնասիրության բնագավառում սակայն մինչև օրս կատարված աշխատանքը պարզ ցուցակագրումից այն կողմ գրեթե չի անցել։ Առաջինը ձեռնամուխ լինելով այդ աշխատանքին, Մ. Փափազյանը կազմել է 1865—1905 թվականներին Եգիպտոսում լույս տեսած հայկական լրագրերի և հանդեսների ցուցակը՝ «Եգիպտահայ լրագրության յոթանասնամյա պատմությունը»[1], որն ընդգրկում է 14 անուն։ 1914 թ. Ավետիս Պալյանը կազմել է երկրորդ ավելի ընդարձակ ցուցակը՝ «Եգիպտահայ լրագրությունը»[2] (31 անուն)։ Երրորդ ցուցակը՝ «Հայ լրագրությունը Եգիպտոսի մեջ 1865—1932»[3], կազմել է Վահան Զարդարյանը, ընդգրկելով 64 անուն պարբերականներ։ Այդ ցուցակները թերի են և պարունակում են բազմաթիվ սխալներ։ Անքննադատաբար օգտագործելով այդ ցուցակները, Հովհ. Պետրոսյանն իր «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիայում» համարյա նույնությամբ կրկնել է դրանցում տեղ գտած սխալները։

Կան նաև այլ երկու՝ Հ. Մանավյանի (1933) և Գ. Ճաղլասյանի (1966) ցուցակները, որոնք, սակայն, չեն կարող ուշադրության արժանանալ, որովհետև առաջինն[4] արտագրված է Վահան Զարդարյանի ցուցակից, իսկ երկրորդը՝ «Եգիպտահայ մամուլը 100 տարում»[5], կազմված է Հովհ. Պետրոսյանի տվյալներով. նրա 96 անուններից 73-ը բերված են վերջինիս «Բիբլիոգրաֆիայից», հաճախ նույնությամբ, երբեմն էլ անհարկի կրճատումներով և անճիշտ լրացումներով։

Սույն ներկայացվող ցուցակում ընդգրկված են 122 պարբերականներ։ Աստղանիշ կրող պարբերականների հրատարակչական ցուցանիշները՝ վերնագիր, ենթավերնագիր, տարեթիվ, խմբագիր, արտոնատեր, տպարան, ծավալ և այլն, ուղղակի վերցրել ենք համապատասխան պարբերականում կատարված նշումներից։ Այդ աշխատանքը մեզ հնարավորություն տվեց վերացնել շուրջ 70 պարբերականի քաղաքացիության իրավունք ձեռք բերած սխալներն ու անճշտությունները։

* «Արմավենի»։ Կիսամսյա լրագիր ազգային, քաղաքական և բանասիրական, Կահիրե, 1865 թ.։ Այս լրագրի վերաբերյալ կան տարբեր, հաճախ տարամետ, երբեմն էլ սխալ կարծիքներ։ Մ. Փափազյանը, նկարագրելով «Արմավենի» լրագիրը, գրել է

[1] «Բազմավէպ», 1907, էջ 73—77։

[2] «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 148—155։

[3] «Արև», Կահիրե, 26 մարտի 1932։

[4] «Մարկավագի եգիպտահայ տարեցույցը», 1933, էջ 36—38։

[5] «Պատմա-բանասիրական հանդես», 1966, N 1, էջ 296—300։

«Ինքը (Աբրահամ Մուրատյանը.—Հ. Թ.) կըլլա Եգիպտոսի առաջին թերթին հիմնադիրը և խմբագիրը։ ...Գահիրեի առաջնորդական փոխանորդը՝ գեր. Մկրտիչ արքեպիսկոպոս և ազգ[ային] վարժարանին հոգաբարձությունը ձեռնտու կըլլան խմբագրին, և եգիպտահայ անդրանիկ թերթը հրապարակ կելնե...»։ Գաստուրյանը, որ տեսել է «Արմավենիի» առաջին «երկու թիվերը», նշել է. «Այլևս չերևցավ նա»[6]։

Ա. Փայլյանի ասելով «Արմավենի» «երկշաբաթյայի տեր-տնօրեն-խմբագիրը Ա. Մուրատյանն» էր։ «Ըստ ոմանց,—շարունակում է նա,—«Արմավենին» հիմնվեցավ թելադրությամբ և թերևս նախնական ծախսուք առաջնորդական տեղապահ Մկրտիչ եպիսկոպոս Քեֆսիզյանի...։ «Արմավենի» սակայն... հազիվ քանի մը ամիս կրցավ ապրիլ անփառունակ, թերևս հակառակ մեկենասներուն իր խմբագրին, որ իր հյուծախտը դարմանելու եկած էր Եգիպտոս, որուն կլիման... խիստ անպաստ է թոքախտավորներու համար»[7]։

Վ. Զարդարյանը «Արմավենի» լրագրին անդրադարձել է երկու անգամ, առաջինը 1925 թ. եգիպտահայ պարբերական մամուլի սկզբնավորման 60-ամյակի առթիվ[8], երկրորդը՝ եգիպտահայ պարբերական մամուլի ցուցակ կազմելիս[9]։ Նրա կարծիքով, Աբրահամ Մուրատյանը նախ «եկուոր Ալեքսանդրիա, ուր առողջանալով կհաստատվի Գահիրե, ու թաղական խորհրդո ատենապետ և Խորենյան վարժարանի տեսուչ կանվանվի։ Իր գործունեությունը զինքը համակրելի կդարձնե Նուպար փաշային, որ կհիմնադրե իրեն որ թերթ մը հրատարակե։ Այս մասին օրվան առաջնորդը Մկրտիչ եպ. Քեֆսիզյան ամեն աջակցություն կըներ իրեն...։ Դժբախտաբար Եգիպտոսի մեջ բույերան հարակիլ սկսելով Աբր. Մուրատյան կդադրեցնե «Արմավենիի» հրատարակությունը և կմեկնի...»[10]։

Ա. Ալպոյաճյանը, հիմնականում կրկնելով Ա. Փայլյանին, գրել է. «Աբրահամ Մուրատյան, ...առողջական պատճառներով Եգիպտոս եկած ըլլալով, հոս ալ սկսած է հրատարակել «Արմավենի» անուն լրագիր մը թելադրությամբ և թերևս նյութական ձեռնտվությամբ Մկրտիչ եպս. Քեֆսիզյանի...։ Մուրատյանը «Արմավենին» հրատարակեց, վասնզի Քեֆսիզյան զայն օգտագործել կուզեր։ ...«Արմավենին» քանի մը ամիս միայն կյանք ունեցավ, նախ անոր համար որ Աբրահամ Մուրատյան Եգիպտոսի կլիմային չօգտվեցավ և մեկնեցավ, և հետո Եգիպտոսի... հայերը չէին կրնար թերթ մը ապրեցնել»[11]։

Այդ շարքը կարելի է տակավին շարունակել, սակայն այսքանն էլ բավական է ցույց տալու, թե ինչպիսի շփոթ վիճակ է տիրում եգիպտահայ անդրանիկ պարբերականի շուրջ առկայված թեկուզ աղքատիկ գրականության մեջ։

«Արմավենի» լրագրի ստեղծման գործում Նուպար փաշայի կատարած դերի մասին ոչ մի հիշատակություն չկա մեզ հայտնի աղբյուրներում։ Չի բացառվում, որ Նուպար փաշան է կատարել լրագիր հրատարակելու առաջարկությունը, սակայն ամենայն

[6] «Բազմավեպ», 1907, էջ 73—74։

[7] «Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 148—149։

[8] «Եգիպտահայ տարեցույց», 1925, էջ 75—76։

[9] «Արև», 26 մարտի 1932։ Այդ ցուցակում ներկայացված են եգիպտահայ 70 պարբերականների հրատարակչական ցուցանիշները։

[10] «Արև», 26 մարտի 1932։

[11] Ա. Ալպոյաճյան, Արաբական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 294—295։



հավանականությամբ նա գործել է ոչ թե անձնական նախաձեռնությամբ, այլ Քեֆսիզյանի և նրա շուրջը համախմբված այն մեծատունների խորհրդով, որոնք հույսեր էին փայփայում «Փարիզի» խմբագրի հրապարակախոսական տաղանդի հետ։ Եգիպտոսի պետական ականավոր հայ գործիչը միաժամանակ հայկական գաղութի մշտնջենական կամ ազգապետն էր, և բավական աշխույժ մասնակցություն էր բերում մեծատունների հակաժողովրդական պայքարին։ Նա հավանաբար միջնորդել է, որպեսզի եգիպտական իշխանությունները արտոնեն «Արմավենի» լրագրի հրատարակությունը։

Միշտ չէ բնութագրված նաև Խորենյան դպրոցի հոգաբարձության դերը։ «Արմավենին» հրատարակվում էր ոչ միայն հոգաբարձության «ձեռնտվությամբ», այլև նրա «տնօրինությամբ» ներքո։ Լրագրի առաջին համարում այդ մասին ասված է. «Դպրոցին հոգաբարձությունն իր վրա առավ լրագրույս տնօրինությունը» և այլն[12]։ «Արտոնագիրը» ստացվել է Խորենյան դպրոցի հոգաբարձության ատենապետ Հովսեփ Մանուկյանի անունով, և նրան էլ վերապահված էր լրագրի համարները ստորագրելու իրավունքը։

Աբրահամ Մուրատյանը լրագրի ոչ թե «տեր-տնօրենը», այլ խմբագիրն էր։ Այդ իրողությունը հաստատող բազմաթիվ փաստեր կան հենց «Արմավենիի» էջերում։ Նրա առաջին համարում նշված է. «Հոգաբարձությունն... լրագրույս... խմբագրությունը հանձնեց պ. Ա. Մուրատյանին, որո ուղիղ և ազատական սկզբունքը, ճշմարիտ ազգային ոգին և հառաջդիմության ունեցած սերը հայտնի ստուգություններ են»[13]։ Այնուհետև լրագրի յուրաքանչյուր համարի չորրորդ էջում կարդում ենք՝ «Խմբագիր Ա. Մուրատյան»։

Անկասկած, Քեֆսիզյանը կարևոր դեր է կատարել «Արմավենի» լրագրի ստեղծման գործում, սակայն ակներև չափազանցություն է, երբ Ա. Փայլյանը և Ա. Ալպոյաճյանը փորձում են նրա ճակատը զարդարել մեկենասի դափնեպսակով։ Քեֆսիզյանի «նյութական ձեռնտվության» մասին թեկուզ տարրական ակնարկություն անգամ չկա ժամանակակիցների հուշագրություններում։ Այդ մասին չի ակնարկում նաև նրա մոլեգին գաղափարակիցը՝ Փալթազարյանը, որը փայլում էր Քեֆսիզյանին շռայլորեն մեծարելու մարմաջով։ Ողջունելով «Արմավենի» լրագրի լույս ընծայումը, նա գրել է. «Այս լրագրույս հիմնադրությունը Եգիպտոսի առաջնորդական փոխանորդ գեր. տեր Մկրտիչ արքեպիսկոպոսին ազգասիրական ջանից ու հորդորանաց արդյունքն է»[14]։

Այսպիսով, «Արմավենի» լրագիրը հիմնադրվել է եգիպտահայ մեծատունների և Քեֆսիզյանի ջանքերով, նրա «տնօրենությունը» վարում էր Խորենյան դպրոցի հոգաբարձությունը, արտոնատերը Հովսեփ Մանուկյանն էր, խմբագիրը՝ Աբրահամ Մուրատյանը։

Եգիպտահայ անդրանիկ պարբերականի առաջին համարը լույս է տեսել 1865 թ. մարտի 16-ին, երկրորդը՝ ապրիլի 1-ին, երրորդը՝ ապրիլի 16-ին, չորրորդը և հավանաբար վերջին համարը՝ մայիսի 1-ին[15]։ «Փարիզ» լրագրի համեմատությամբ, «Արմա-

[12] «Արմավենի», 16 մարտի 1865։

[13] Նույն տեղում։

[14] «Արշալույս Արարատյան», 17 ապրիլի 1865։

[15] Այդ հետևությունը կարելի է անել Աբրահամ Մուրատյանի կողմից «Արմավենի» լրագրի չորրորդ համարում զետեղված մի ծանուցումից, որտեղ ասված է. «Մեր գրքերուն մեկ մասը վաճառելու հարկիր ըլլալով կիմացնեմք մայրաքաղաքիս ընթերցասեր ազգայնոց, որ եթե անոնցմե գնել ուզեն, կրնան մինչև ամսույս 20-ը ամեն օր երեկոյան ժամ տասնից ժամը 10-են հետո մեր գրասենյակը հրամայել և նայիլ ու իրենց

վեներն» նման տարածված էր, և շատ նեղ էր նրա «գործակալների» կամ տարածման ժամանակագրների շրջանակը։ Այն դեպքում, երբ «Փարիզը» տարածված էր շուրջ տասը երկրների ավելի քան քառասուն քաղաքներում, «Արմավենին» տարածման կենտրոններ կամ բաժանորդագրություն ընդունող գործակալներ ուներ միայն Եգիպտոսի և Թուրքիայի հինգ քաղաքներում՝ Կահիրեում («Հայոց առաջնորդարանը»), Ալեքսանդրիայում («Հայոց եկեղեցին»), Կ. Պոլսում («Կիլիկիա լրագրույն գրասենյակը»), Զմյուռնիայում («Մեսրոպյան վարժարանը») և Ադիրնե-Կարահիսարում։

Որպես լրագրի դադարելու պատճառ առաջ քաշված փաստարկները (խոլերայի համաճարակը, խմբագրի հիվանդությունը և այլն) հազիվ թե համապատասխանեն իրականությանը։ Ի դեպ, նշենք, որ խոլերան Եգիպտոսում «համաճարակվել» սկսեց լրագրի դադարելուց ամիսներ հետո միայն։ Գալով հիվանդությանը, ապա «Արմավենի» լրագրում ասված է, որ Աբրահամ Մուրատյանը «ծանր հիվանդության մը պատճառավ» դադարեցրել է «Փարիզ» լրագրի հրատարակությունը և, ապաքինվելուց հետո, տեղափոխվել է Եգիպտոս[16]։ Եթե, իրոք, Եգիպտոսի կլիման բացասաբար անդրադառնար Մուրատյանի առողջական վիճակի վրա, ապա նա Տրիեստ և Կ. Պոլիս կատարած կարճատև ուղևորություններից հետո վերստին չէր գնա Եգիպտոս։ Հայտնի է, որ Մուրատյանը մինչև 1869 թ. որպես դասատու աշխատել է Կահիրեի հայկական դպրոցում։

«Արմավենի» լրագրի հրատարակության դադարելու պատճառը պետք է փնտրել հակաքեֆսիզյան այն եղելությունների մեջ, որ 1865 թ. մարտ-ապրիլ-մայիս ամիսներին, այսինքն «Արմավենի» լրագրի լույս ընծայվելու ժամանակաշրջանում տեղի ունեցան Կահիրեում։ Քեֆսիզյանը, ինչպես նշվեց, ստիպված հեռացավ Եգիպտոսից։ Իհարկե, այդ պայմաններում նրա շահերի պաշտպանությունը ստանձնած լրագիրը չէր կարող այլևս շարունակել իր գոյությունը։

* «Նեղոս»: Շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 1889 թ.։ Խմբագիր՝ Անտոն Ռշտունի։ Ա. Պալյանի ասելով «Նեղոսը» լույս է տեսել 1887 թ.։ Սխալվում են նաև Վ. Զարդարյանը և Ա. Ալպոյաճյանը, երբ գրում են, որ այդ շաբաթաթերթը լույս է տեսել միայն հինգ թիվ[17]։ Նրանք չեն նկատել, որ իրենցից առաջ ուրիշ հեղինակներ անդրադարձել են այդ հարցերին և տվել ճիշտ պատասխան։ Ընդգծելով, որ ինքը տեսել է «Նեղոսի» առաջին վեց համարները, Մ. Պոտուրյանը հավաստում է, որ նրա առաջին համարը լույս է ընծայվել 1889 թվականի հունվարի 2-ին, նոր տոմարով։ Նույնն է գրում նաև Գ. Լևոնյանը, և ավելացնում, որ «Նեղոսը» ունեցել է «չորս ամիս կյանք»[18]։ Լևոնյանի օգտին է խոսում 1898 թվակիր արխիվային մի վավերագիր, որտեղ ասված է, որ «Նեղոսը» լույս է տեսել «ընդամենը 18» համար[19]։ Գ. Լևոնյանը, սակայն, չգիտես ինչից ելնելով Անտոն Ռշտունուն և Ղևոնդ ք. Փափազյանին համարում է միևնույն անձը («Անտոն Ռշտունին, որ նույնն է Ղևոնդ քհնյ. Փափազյանն կամ «Եգիպտոսից Կալաց փոխադրվելով «Նեղոսի» խմբագիր Անտոն Ռշտունին կամ Ղևոնդ քհնյ. Փափազյանը»[20])։ Դա, իհարկե, ճիշտ չէ։ Երբ Ղ. ք. Փափազյանը Եգիպտոսից արտաքսվեց, Ա. Ռշտունին մնաց այնտեղ, բանտից դուրս գալով շարունակեց պայքարել ազգային շոշերի դեմ։ Նրա մասին բազմաթիվ հաղորդումներ կան եգիպտահայ մամուլի էջերում։ Նրան հանդիպում ենք Երվանդ Օտյանի և Վահան Թեքեյանի գլխավորած սահմանադրական պայքարի աշխույժ մասնակիցների շարքերում[21]։ «Նեղոսը» շարվում էր Ղ. ք. Փափազյանի տառերով և տպագրվում Միքրաճի «Ունիվերսել» տպարանում։

«Փարոս»: Լրագիր ազգային, գրական և քաղաքական, Կահիրե։ «Փարոսը» ունեցել է երկու շրջան, առաջինը՝ 1897—1898 թթ., երկրորդը՝ 1901—1902 թթ.։ Տնօրեն-խմբագիր՝ Հարություն Ալիֆիար, ծավալը՝ 4 էջ (50×33 սմ)։ Ակնեռնեցին, Հովհ. Պետրոսյանը, օգտվելով Պալյանի ցուցակից, նշում է, որ «Փարոսի» առաջին շրջանը սկսվել է 1896 թ. և վերջացել 1898 թ.։ Դա սխալ է։ «Փարոսի» առաջին շրջանի առաջին համարը լույս է տեսել 1897 թ. մայիսի 21-ին, իսկ վերջինը՝ 1898 թ. մայիսի 25-ին։ Կահիրեից Պոլիս գրված 1898 մայիսի 26 թվակիր մի նամակում ասված է. «Երեկ լրագրի («Փարոսի»—Հ. Թ.) վերջին թիվն լույս տեսավ, որով Ա. տարին կվերջանա. մտադիր չեն Բ շրջանն հրատարակել զի վնասով կելնեն եղեր, ընդամենը 178 բաժանորդ ունենալուն համար»[22]։ Մի ուրիշ նամակում (1898 հունիսի 18 թվակիր) կարդում ենք «...լրագիրն հավետ խափանված է, վերջին թիվն էր 101 կիսաթերթը, և տպարանն այլևս 20 ոսկու ծախված...»[23]։ «Փարոսի» երկրորդ շրջանը սկսվում է 1901 թ. սեպտեմբերի 19-ին և շարունակվում մինչև 1902 թ. կեսերը։ Կահիրեի «Արշալույս» լրագրի № 291-ում (1902, հունիս) «Փարոսը» հիշատակված է լույս տեսնող պարբերականների շարքում։ Նրա տնօրեն-խմբագիրը նորից Հ. Ալիֆիարն էր, որն ավելի քան երկամյա բացակայությունից հետո վերադարձել էր Եգիպտոս։ Ա. Պալյանը «Փարոսը» համարում է երկօրյա, իսկ Մ. Պոտուրյանը, Հովհ. Պետրոսյանը և ուրիշները՝ եռօրյա լրագիր։ Իրականում «Փարոսը» առաջին շրջանում եղել է երկօրյա, լույս է տեսել չորեքշաբթի և շաբաթ օրերը, իսկ երկրորդ շրջանում՝ եռօրյա, լույս է տեսել երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը։ Առաջին շրջանում «Փարոսը» շարվում էր սեփական տառերով և տպագրվում ուրիշի տպարանում։ Ոչինչ հայտնի չէ նրա երկրորդ շրջանի տպարանական պայմանների մասին։

«Լրաբեր»: Ամենօրյա լրագիր (խմբագրական)։ Ալեքսանդրիա, 1897—1908 թթ.։ Խմբագիր՝ Գրիգոր Սարաֆյան։ Այս լրագրի տարեթվերի մասին կան իրարամերժ տեղեկություններ։ Մ. Պոտուրյանի ասելով «Լրաբերը» «կարճատև կյանք մը» ունեցել է.

---

պետք եղածը գնել։ Նաև «Փարիզ» լրագրեն ալ սակավաթիվ օրինակներ կգտնվին քովերնիս, որոնք կես գնով կվաճառենք։ Պատկերներ ու գրասեղան մըն ալ ունինք ծախու» («Արմավենի», 1 մայիսի 1865)։ Դա նշանակում է, որ Մուրատյանը պատրաստվում էր հեռանալ Եգիպտոսից։ Անհրաժեշտ ենք համարում նաև հայտնել, որ մենք, հենվելով արխիվային մի վավերագրի վրա, գրել ենք. «Այդ լրագիրը հրատարակվել է ընդամենը երեք համար» («Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 285)։ Վիեննայից մեզ ուղարկված միկրոֆիլմերից պարզվեց, որ լույս է տեսած եղել նաև «Արմավենի» լրագրի 4-րդ համարը։

16 «Արմավենի», 15 մարտի 1865։ 1870 թ. Մուրատյանը մեկնել է Կ. Պոլիս, այնտեղ էլ 1903 թ. սեպտեմբերին վախճանվել է։

17 Ա. Ալպոյաճյան, ԱՄՀ-ի Եգիպտոսի նահանգը և հայերը, էջ 274։

18 Գ. Լևոնյան, Հայ պարբերական մամուլը, էջ 524։

19 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 9432։

20 Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, էջ 242։

21 Տե՛ս «Ազատ խոսք», 1906, տետր 6, էջ 87։

22 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, թ. 12, վ. 9441։

23 Նույն տեղում, վ. 9444։

քայց նա ուրիշ չի հաղորդում նրա հիմնադրման և դադարման թվականների մասին։ Հովհ. Պետրոսյանը չգիտես ինչ հիման վրա նշել է, որ այդ լրագիրը «1901 թ. լույս է տեսել մի քանի համար»։ Մեր կարծիքով ընդունելի պետք է համարել «Հանդես ամսօրյայի» հաղորդումը, որտեղ խոսվում է «Հրաբուխի» 1897 թ. հիմնադրվելու մասին[24]։ Նույն թվականն է առաջարկում նաև Ա. Գալստյանը։ Որքա՞ն կյանք է ունեցել այդ լրագիրը։ Այս հարցին Ա. Գալստյանը պատասխանում է. «բավական երկար ժամանակ»։ Համենայն դեպս կան անժխտելի փաստեր, որոնք ցույց են տալիս, որ «Հրաբուխը» շարունակում էր լույս տեսնել 1903 թ.[25], ինչպես նաև 1906 թ.[26], դադարել է հավանաբար 1908 թ.։

* «Փյունիկ»։ Ազգային, գրական և քաղաքական հանդես։ Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ (Տեր-Ղազարենց), արտոնատեր՝ Ժյուլ Մյունիե[27]։ «Փյունիկն» ունեցել է երկու շրջան. առաջինը՝ 1899 թ. Կահիրեում, երկրորդը՝ 1901—1903 թթ. Ալեքսանդրիայում։ Համարյա բոլոր ցուցակներում նշված է, որ «Փյունիկի» առաջին շրջանը տևել է 1899—1900 թթ.։ Դա, իհարկե, ճիշտ չէ։ Բացի այդ, ոմանք այն համարում են կիսամսյա, ոմանք էլ՝ շաբաթաթերթ։ Առաջին շրջանում՝ 1899 թվականի ապրիլի 4-ից մինչև նույն թվականի հոկտեմբերը ներառյալ «Փյունիկը» եղել է կիսամսյա հանդես, լույս է տեսել ընդամենը 14 համար, 16 էջ ծավալով (25×20 սմ), չհաշված գունավոր շապիկը։ Համարակալված է 1—224 էջ։ Առաջին երկու համարները տպագրվել են Սարգիս Դարբինյանի, իսկ մնացյալ 12-ը՝ Մետիկյանի տպարանում։ Առաջին շրջանը փակվում է 1899 թ. նոյեմբերի սկզբին, խմբագրի և տպարանատիրոջ միջև ինչ-որ թյուրիմացության պատճառով, որն ի վերջո վերածվել է դատական գործի[28]։ Երկրորդ շրջանում «Փյունիկը» հրատարակ-

---

[24] Տե՛ս «Հանդես Ամսօրյա», 1903, էջ 224։

[25] Եգիպտահայ «Փեթակ» շաբաթաթերթի 1903 թ. 2-րդ համարում Պառուրյանը տպել է հայտարարություն այդ ժամանակ «Հրաբուխի» լույս տեսնելու մասին։

[26] Տե՛ս Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 372։ «Հրաբուխի» մասին Օտյանը գրում է. «...խմորատիպ այլանդակ հրատարակություն մըն էր այդ օրաթերթը, որուն խմբագիրն էր Գրիգոր Սարաֆյանը։ ...Խմբագիրը համառորեն ու կանոնավորաբար կշարունակեր իր օրաթերթը, չարաչար աշխատելով։ Ամբողջ էջերը ինք կթարգմաներ ֆրանսերեն թերթերն, հետո վերջին ժամուն եկած հեռագիրները կարդալու համար կերթեր Մենշիի հրապարակին սրճարանները, ուր ընդհանրապես ցուցադրված կըլլան գործակալության հեռագիրները, բայց որովհետև արգիլված էր պատեն կախված այդ հեռագիրները ընդօրինակել, պ. Գրիգոր Սարաֆյան զանոնք մի առ մի կսերտեր, զոր կըներ ու հետո դուրս ելլելով սրճարանեն կթարգմաներ ու «Հրաբուխ»-ին մեջ կհրատարակեր։ Ինք կպատրաստեր նաև թերթին բազմատիպ խմորը։ Կարծեմ 140-ի չափ բաժանորդ ուներ, որոնք լիուլի կբավեին իր ծախքերուն և ապրուստին։ Նույնիսկ... 100—120 ոսկի խնայած էր...» (Նույն տեղում)։

[27] Եգիպտոսում ապրող ֆրանսիացի հայասեր մտավորական, որը տարիներ շարունակ գործակցել է Սմբատ Բյուրատի հետ։

[28] Տե՛ս «Արշալույս», 30 դեկտեմբերի 1899։ Այդ կապակցությամբ Սմբատ Բյուրատը հայտարարում է. «Ծանոթ է, որ «Փյունիկը» դադրած է անցյալ նոյեմբերի սկիզբին խմբագրությանս հետ բնավ առնչություն չունեցող ու մեր կամքեն անկախ պատճառով մը, այսինքն Մետիկյան տպարանին հանկարծակի փակումովը... Հիշյալ տպարանն իր բոլոր մեքենաներով ու գույքերով օրինական արգելքի տակ դրված է այս օրեն ի վեր՝



վել է Ալեքսանդրիայում, 1901 թ. հունիսի 8-ից մինչև 1903 թ. հունիս կամ հուլիս ամիսը, նախ շաբաթաթերթ, հետո՝ եռօրյա և վերջում՝ օրաթերթ։ «Փյունիկը» որպես շաբաթաթերթ հրատարակվել է 1901—1902 (№ 1—51 կամ 52) և 1902—1903 թթ. (№ 1—32), իսկ որպես եռօրյա՝ 1903 թ. (№ 33—39)։ 1903 թ. հուլիսից «Փյունիկը» արդեն օրաթերթ էր, բայց հայտնի չէ, թե քանի համար է լույս տեսել։ Մ. Պառուրյանը նշում է, որ «Փյունիկ» օրաթերթը «շատ քիչ թիվերով իր վախճանին հասավ»[29]։ Մինչև 1903 թ. 31-րդ համարը «Փյունիկը» տպագրվել է Սամփանյանի «Արաքս», իսկ 32 համարից սկսած «Փյունիկ» տպարանում։ 1901—1902 թթ. տարեշրջանում «Փյունիկը» լույս է տեսել 520, իսկ 1902—1903 թթ.՝ 312 էջ չհաշված օրաթերթը։ «Փյունիկը» պայքարի օրգան էր, մտրակում էր ազգային ջոջերին, պաշտպանում հայ աշխատավոր ժողովրդի շահերը։ Առաջին համարի առաջնորդող հոդվածում ասված է. «...Հոռետեսության համաճարակին բռնված չենք և, ընդհակառակն, տանելով լավատես ըլլալու մեծ հավատք ունինք մեր ժողովրդին վրա, որուն համար պիտի գրենք և որով միայն պիտի գրագինք։ Ներմուծել առողջ գաղափարներ ընկերության փտած բջիջներուն մեջ, ...վառ պահել միշտ մեծ զգացումը՝ մայր-հայրենիքի վերակենդանացման օրինավոր հույսը՝ հայ գաղթականության սրտին մեջ։ ...Այդ ցրված, վհատ ու ջախջախ բեկորները հայության բերել մոտեցնել իրարու, նոր ուժ մը կազմել, գաղափարներու հոսանք մը խաղացնել անոր մեջ և ազատասիրության ձգտումները բանականության հետ հաշտեցնել..., հանրության իրական շահերը պաշտպանել, անհատները վարժեցնել կամքի, կորովի և ձեռներեցության»[30]։

* «Արշալույս»։ Ազգային, գրական և քաղաքական անկախ հայաթերթ, Կահիրե։ Ըստ Ա. Գալստյանի «Արշալույսը» շաբաթաթերթ էր, իսկ Հովհ. Պետրոսյանի և ուրիշների կարծիքով՝ պարզապես լրագիր։ Առաջին շրջանում՝ 1899 թ. սեպտեմբերից մինչև 1905 թ. ապրիլը «Արշալույսը» եղել է եռօրյա լրագիր, երկրորդ շրջանում՝ 1908 թ. հունվարի 1-ից մինչև 1914 թ. սկիզբը՝ շաբաթաթերթ, իսկ 1905—1907 թթ. լույս չի տեսել, ինչպես նշում է լրագրի խմբագրությունը[31]։ Ա. Գալստյանն Եղիշե Թոփալյանին համարում է «Արշալույս» լրագրի «հիմնադիր-տնօրեն-խմբագիրը», իսկ Հովհ. Պետրոսյանի ասելով՝ «Արշալույսը» ունեցել է երկու խմբագիր՝ Եղ. Թոփալյան և Գևորգ Փափազյան։ Սկզբնական շրջանում Թոփալյանը լրագրի տերը և տնօրենն էր, իսկ հետագայում՝ երբ այն դարձավ Ազգային անկախ միության օրգան, նա հանդես եկավ որպես «խմբագրության ներկայացուցիչ»[32]։ Գևորգ Փափազյանը եղել է ոչ թե խմբագիր, այլ վարչական գործերի պատասխանատու[33]։ 1911 թվականից նրան այդ պաշտոնում փոխարինել է Ճաճեն

---

խմբագրությանս պահանջումին զոհացում տալու համար, և որ ի մոտո պիտի վերսկսի «Փյունիկը» ապահովելով մեր դատին նյութին, զոր ստանձնած է պաշտպանել քաղաքիս հայ փաստաբան մեծ. տեար Սմբատ Փափազյանը»։ Պետք է հիշեցնել, որ դատական գործը վերջացել է համենայն դեպս ոչ Բյուրատի օգտին, քանի որ «Փյունիկը» այլևս լույս չտեսավ Կահիրեում։

[29] «Բազմավեպ», 1907, էջ 75։

[30] «Փյունիկ», 1899, № 1, էջ 1։

[31] Տե՛ս «Արշալույս», 4 հունվարի 1910։

[32] Տե՛ս նույն տեղում։

[33] Տե՛ս նույն տեղում։



21—724

Համեմյանը։ «Արշալույսը» սկզբում տպագրվում էր Մ. Դարբինյանի, հետագայում՝ սեփական համանուն տպարանում։ 1900 ապրիլի 16 թվակիր արխիվային մի վավերագրում ասված է. «(Թորոսյանը) վերջապես հաջողեցավ ժողովրդական (հանգանակությամբ—Հ. Փ.) տպարան մը հիմնել»[34]։ Ծավալը 4 էջ էր, բայց էջերի չափսերը հաճախ փոխվել են։ Չնայած իր երկարատև գոյությանը, այս լրագիրը համարյա հետք չի թողել... Մինչև Թորոսյանի մահը, «Արշալույսի» ուղղությունն եղել է ռամկական և ազատ, դեպի կուսակցական միջամտություններ»[35]։ Իսկ իրականում այն հաստատ ուղղություն չի ունեցել։ Երվանդ Օտյանը գրել է. «Մինչև Թորոսյանը իր թերթը առաջնորդարանի օրգանը բրած էր և առով բավական դրամ կքաշեր..., սակայն այսօր կատարյալ հակառակորդը եղած է»[36]։

«Նոր օր»։ Լրագիր ազգային, բանասիրական և քաղաքական. Կահիրե։ Խմբագիր՝ Սմբատ Բյուրատ, ապա՝ Սմբատ Փափազյան, արտոնատեր՝ Ժիրայր Մյունիսի։ Ա. Գալյանը և Վ. Զարդարյանն այն համարում են երկօրյա, իսկ Հովհ. Պետրոսյանը և ուրիշներ այն ուղղակի լրագիր են անվանում։ Իրականում «Նոր օրը» եղել է եռօրյա լրագիր, լույս էր տեսնում «շաբաթն երկու անգամ»[37]։ Մ. Պոտուրյանն էլ, որը տեսել է «Նոր օրի» առանձին համարներ, այն անվանում է «կիսաշաբաթաթերթ»։ Ե՞րբ է հիմնադրվել «Նոր օրը». այդ հարցին Պոտուրյանը պատասխանում է՝ «1900-ի հունիսին»։ Այդ անհիմն տեղեկությունն էլ ցուցակից ցուցակ անցնելով հասել է մինչև մեզ...։ Եթե ընդունենք Պոտուրյանի տեղեկությունը, ապա Սմբատ Բյուրատը չէր կարող «Նոր օրի» առաջին շրջանի խմբագիրը լինել (այն ինչ հաստատ է), քանի որ նա 1900 թվականի սկզբներից այլևս Կահիրեում չէր։ «Ցուր կույր կնոջ և երկու աղջիկներուն հետ Բորթ-Սաիդ փախավ, ուրկե Կիպրոս պիտի անցներ, բայց Ալեքսանդրիա եկեր է»[38]։ Երկրորդ, հիշյալ վավերագրում «Նոր օրի» մասին ասված է. «Ցարդ (մինչև 1900 թ. ապրիլի 16-ը—Հ. Փ.) 60 թիվ լույս տեսած է»[39]։ Եթե «Նոր օր» եռօրյա լրագիրն առանց հապաղումների լույս ընծայվեր, ապա պետք է հիմնադրված լիներ 1899 թ. սեպտեմբերին, բայց այդպես չի եղել, նրա առաջին տարեշրջանը փակվել է 104-ի փոխարեն 95 համարով։ Ուստի կարող ենք հետևցնել, որ այն հիմնադրվել է այդ թվականի նոյեմբերին, այսինքն «Փյունիկի» դադարումից անմիջապես հետո։ Այդպիսով հասկանալի է դառնում, թե ինչու Ս. Բյուրատը և Ժ. Մյունիսին (դադարած «Փյունիկի» խմբագիրն ու արտոնատերը) ձեռնամուխ են լինում «Նոր օրի» հրատարակությանը։ «Նոր օրը» սկզբում տպագրվում էր Մ. Դարբինյանի, ապա՝ Թորգոմ Փափազյանի տպարանում։ Այն Կահիրեի լաքրան-ընթերցարանի իրավական սեփականությունն էր։ 1901 թ. կեսերին զոհ գնաց այդ հաստատության ներքին տարաձայնություններին։

*«Ազատ խոսք»։ Պարբերաթերթ։ Խմբագիր՝ Երվանդ Օտյան։ Այս պարբերականը համարյա բոլոր ցուցակներում ներկայացված է ոչինչ չասող տվյալներով, չնայած որ նշանակալից տեղ է գրավում եգիպտահայ պարբերական մամուլի պատմության մեջ։

34 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 8483։

35 «Արշալույս», 4 հունվարի 1910։

36 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 279—280։

37 ԳԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 9483։

38 Նույն տեղում։

39 Նույն տեղում։



Հովհ. Պետրոսյանը և նրան հետևելով ուրիշներ «Ազատ խոսքը» համարում են ամսագիր», մինչդեռ այն հրատարակվել է «մերթ ընդ մերթ... դիպվածային մեկնաներու ժամանակությամբ», ինչպես վկայում է Երվանդ Օտյանը[40]։ «Ազատ խոսքը» հիմնադրվել է 1901 թ. օգոստոսին Փարիզում, որտեղ և լույս են տեսել նրա առաջին երեք «տետրերը», յուրաքանչյուրը 16 էջ (12×19 սմ)։ Տպարան՝ «Հայկական»։ 1902 թ. սեպտեմբերին «Ազատ խոսքը» տեղափոխվել է Ալեքսանդրիա, տպագրվել է սկզբում «Արաքս» (Արամ Ստեփանյան), ապա՝ «Դամբեռոտա» տպարաններում։ 1902 թ. լույս են տեսել 5—9 տետրերը (65—142 էջ), 1903 թ.՝ 10-րդը (143—162 էջ), 1906 թ.՝ 1—13-րդը (143—208 էջ), որով և փակվել է նրա հին շրջանը։ Նոր շրջանում «Ազատ խոսքը» վերածվել է երգիծական շաբաթաթերթի՝ նախկին ծավալով։ 1906 թ. լույս են տեսել նրա առաջին և երկրորդ հատորները, առաջինում ընդգրկված են 1—20, երկրորդում՝ 21—32 տետրերը (1—512 էջ)։ 1907 թ. լույս է տեսել նրա երրորդ հատորը (33—39 տետրերը, 513—616 էջ)։ Այնուհետև «Ազատ խոսքի» հրատարակությունը կաղում էր դժվարությամբ լույս է ընծայվում չորրորդ հատորը։ 1908 թ. հրատարակվում են վերջին երեք տետրերը, ընդամենը 48 էջ։ Նոր շրջանի բոլոր տետրերը տպագրված են Գ. Նազարեթյանի տպարանում։ Խոսելով «Ազատ խոսքի» մասին Երվ. Օտյանը գրում է. «Առաջին օրեն մեր նպատակը եղած է քաղաքականապես անկախ թերթ մը ունենալ, ուր կարող ըլլանք իրերն ու մարդիկը անկաշկանդորեն դատել և, եթե հարկ տեսնենք, դատափետել։ «Ազատ խոսքը» ոչ հին կամ նոր հնչակյաններու օրգանն է, ոչ դաշնակցականներու, ոչ սահմանադրականներու, ոչ միութենականներու և ոչ ալ ինամակալյաններու... բացարձակապես ինքզինքին կպատկանի»[41]։ «Ազատ խոսքի» էջերում Երվանդ Օտյանը մերկացրել է կղերապաշտական վերնախավի ցույցերը, խարազանել նրանց քաղաքական դիմազրկությունը, դատապարտել է այն ամենը, ինչ հակասում էր հայ ժողովրդի և դեմոկրատիայի շահերին։

** «Արմենիա»։ Ամսահանդես ընտանեկան և գրական, օրգան քսաներորդ դարու հայ կանանց, Կահիրե, 1902—1903 թթ.։ Ծավալը՝ 32, երբեմն էլ 48 էջ, (26×17 սմ)։ Տպագրվում էր սեփական համանուն տպարանում։ Հիմնադիր, տեր և տնօրեն-խմբագիր Մառի Պեյլերյան։ Առաջին համարի առաջնորդողում ասված է. «Արմենիա» պիտի հանդիսանա խորհող և լուրջ մայրը, բնատուն և պարտաճանաչ դաստիարակը, որ խանդաղին պաշտելով հանդերձ մին իր զավակը, մյուսն իր աշակերտը, խառնել կը հանդերձանե և, շատ անգամ զույգ չարաչար կծծեն պայն՝ ուղղելու համար որևէ թերություն կամ մոլորություն...։ «Արմենիա» պիտի գրավվի գավառացի կնոջ ներկա տխուր կյանքով, նա պիտի ջանա արթնցնել՝ անոր նախապաշարումներով թմրած հոգվույն ու տգիտությամբ քնած մտքին մեջ՝ գիտակցությունը իր թշվառ վիճակին»[42]։

40 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 371։

41 «Ազատ խոսք», 1906, էջ 1։ «Ազատ խոսքի» կապակցությամբ խոսելով Երվ. Օտյանի մասին, Հովհ. Պետրոսյանը նրան է վերագրել Երվանդ Սրմաքեշխանլյանի մի շարք պատմվածքները («Բարիտեղերին», «Ձուկին փոխարեն», «Դինովին վարձքը» և այլն) և Միքայել Կյուրճյանի «Մարտին աղա» վիպակը։ Նա Օտյանին է վերագրել նաև Մ. Կյուրճյանի «Պարույր» ծածկանունը։

42 «Արմենիա», 1902, էջ 1։ Հովհ. Պետրոսյանը Մառի Պեյլերյանին շփոթել է ֆրանսահայ գրող Մարի Սվաճյանի հետ, նրան է վերագրել վերջինիս ստեղծագործությունները և Փարիզ տեղափոխել «Արմենիան»...

*«Ժողովուրդ»: Ամսաթերթ քննադատական, Կահիրե: Հիմնադրվել է 1903 թ. հունվարին, լույս է տեսել 1—12 համար, ծավալը՝ 16, երբեմն էլ 20 էջ (26×17 սմ)։ 1904 թ. հունվարից «Ժողովուրդը» վերածվել է շաբաթաթերթի, տպագրվել է 1—22 համար, նախկին ծավալով և չափով։ Առաջին տարեշրջանի խմբագիրն էր Վ. Գալյանը, երկրորդինը՝ Ավետիս Գալյանը։ Առաջին չորս համարները տպագրվել են Ալեքսանդրիայի «Արաքս», իսկ մնացյալները՝ Կահիրեի «Արարատ» տպարանում։ «Ժողովուրդը» առաջադրում էր «...ֆիզներուն թարգմանն ըլլալ եգիպտաբնակ ազգայնոց այն ինքնագիտակ, ծանրախոհ, համեստ և հետևաբար հարգելի մեծամասնության որ բարեկարգ պայքարեն խույս չի տար, որ կասկածելի փողահարություններն չի վրդովվիր, որ իր հայրենակիցը կռիվն հայության բարձրացնելու համար և հայությունը կռիվն հայրենակիցը ազնվացնելու համար»[43]։ «Ժողովուրդը» եղել է անկողմնակալ մի հրատարակություն, որակավոր աշխատակիցներ չի ունեցել և խմբագիրը տարբեր ծածկանուններով մեծ մասամբ լցրել է նրա էջերը։

*«Ազատ բեմ»: Դրական, ազգային և քաղաքական շաբաթաթերթ, հիմնադրվել է 1903 թ. ապրիլի 15-ին Ալեքսանդրիայում։ Խմբագիր-տնօրեն՝ Երվանդ Օտյան, խմբագրությանը մասնակցել են Վահան Տեքեյանը (Թեքեյան), Մ. Կյուրճյանը, Լևոն Արամյանը և ուրիշներ։ Տպարան՝ «Արաքս», ծավալը 4 էջ (47×32 սմ), իսկ երրորդ տարվա 34-րդ համարից (1905 թ. դեկտեմբերի 9)՝ մեծացրած ծավալով։ 1906 թ. ապրիլի 21-ին, «Ազատ բեմը» հրատարակում են վերակազմյալ հնչակյանները (Բարսեղ Օհանյան, Օննիկ Թաշճյան և Լևոն Լարենց), որոնք այն տեղափոխում են Կահիրե և վերածում եռօրյա լրագրի։ Տպարան՝ «Կիլիկիա»։ «Ազատ բեմի» նոր շրջանի ուղղության մասին ասված է, որ թերթը հնչակյան կուսակցության օրգանը չէ, բայց «հրատարակիչները Հնչակյան հեղափոխական կուսակցության նվիրվածներ և անոր քաղաքական սկզբունքներուն ու դավանանքներուն պինդ փարած անհատներ են և իրենց թերթին ազգային-քաղաքական ուղղությունը հիմ ունի բնականաբար Հնչակյան հեղ. կուսակցության վարդապետությունները»[44]։ Դադարել է 1907 թ.։

«Փեթակ»: Ազգային, գրական, քաղաքական և գավեշտական շաբաթաթերթ, Ալեքսանդրիա։ Խմբագիր՝ Սեթոն Թյուֆենկճյան, տպագրվել է սկզբում «Արտեմիս», ապա սեփական տպարանում, ծավալը՝ 8 էջ (45×17 սմ)։ «Փեթակը» լույս է տեսել 1903 թ. ապրիլի 4-ից մինչև հուլիսի վերջերը, ըստ Երվանդ Օտյանի՝ 15—16 համար[45]։ Դադարել է «անբնորոշելիության պատճառով»[46]։

*«Պառանգ»: Շաբաթական հանդես գրական, գիտական և մանկավարժական, Ալեքսանդրիա։ Լույս է տեսել 1903 թ. նոյեմբերից մինչև 1904 թ. հոկտեմբերը, ընդամենը 50 համար, ծավալը՝ 32, երբեմն էլ 16 էջ (27×20 սմ)։ Խմբագիր՝ Միհրան Ասքանազ, տպարան՝ «Ասքանազյան»։

«Հայնիկ»: Զավեշտական շաբաթաթերթ, հիմնադրվել է 1897 թ. Վառնայում։ 1903 թ. տեղափոխվել է Ալեքսանդրիա և շարունակվել մինչև 1904 թվականը։ Տպագրվել է սեփական տպարանում։ Խմբագիր՝ Տիրան Փափազյան։

43 «Ժողովուրդ», 1903, էջ 1։

44 «Ազատ բեմ», Կահիրե, 19 սեպտեմբերի 1906։

45 Տե՛ս Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 300։

46 «Բազմավէպ», 1907, էջ 76։



*«Լուսաբեր»: Ազգային, քաղաքական, տնտեսական և գրական եռօրյա լրագիր, Կահիրե, 1907—1908 թթ.։ Առաջին համարը լույս է տեսել 1904 թ. դեկտեմբերի 1-ին։ Տպագրվում էր սեփական տպարանում, ծավալը՝ 4 էջ (50×30 սմ)։ Խմբագիր՝ Վահան Թյուրքճյան, շուրջ մի տարի էլ՝ Արփիար Արփիարյանը։ Իր նամակներից մեկում, Արփիարյանը գրում է. «Երբ Եգիպտոս եկա շաբաթաթերթ մը հիմնելու դիտավորությամբ, բայց «Լուսաբերին» տուգած առաջարկության վրա լավագույն համարեցի հետամտիլ այդին գոյություն ունեցող թերթի մը զարգացումին»[47]։ «Լուսաբերի» առաջին համարում ասված է. «...անոր գլխավոր պաշտոնը պիտի ըլլի ազգային շահերու պաշտպանությունը և պաշտպանությունը։ ...Իբրև ամեն հայու սեփականությունը արձագանք պիտի տա ամեն լուրջ կարծիքներու, ամեն օգտավետ առաջարկներու և ամեն օրինավոր պահանջներու»[48]։ 1908 թ. «Լուսաբերը» միացվեց «Արև» օրաթերթին, ծնունդ տալով մի նոր՝ «Լուսաբեր-Արև» պարբերականին։

«Հորիզոն»: Շաբաթաթերթ, Կահիրե-Ալեքսանդրիա, 1904—1905 թթ.։ Խմբագիր-տնօրեն Կ. Փաշայան, ապա՝ Արտ. Հանըմյան և Հակոբ Աստուրյան, «Հորիզոնը» համարվում էր Եգիպտոսի դաշնակցականների օրգանը։

«Գոսանս»: Կրոնական հանդես (ամսաթերթ), Ալեքսանդրիա, հրատարակություն Գրասիրաց միության, լույս է տեսել 1904 թ. ապրիլի 1-ից, 12 համար անհրաժեշտ ձեռագիր տպագրությամբ, մի համար էլ տպագիր՝ որպես «Կրոնական գրական հանդես» և դադարել է[49]։ Խմբագիրն անհայտ է։

*«Շիրակ»: Գրական և ընկերական ամսաթերթ, հիմնադրվել է 1905 թ. հունվարին Ալեքսանդրիայում, 1906 թ. տեղափոխվել է Կահիրե, իսկ 1909 թ.՝ Պոլիս։ Խմբագիրներ՝ Վահան Թեքեյան, Միքայել Կյուրճյան (1905 թ.) Արփիար Արփիարյան (1906—1907 թթ.)։ 1905—1907 թթ. լույս է տեսել ընդամենը 20 համար, ըստ որում 1905 թ.՝ 11, 1906 թ.՝ 6 և 1907 թ.՝ 3 համար, ծավալը 64 կամ 80 էջ (22×15 սմ)։ «Շիրակին» աշխատակցում էին գաղափարի արևմտահայ գրականության խոշորագույն դեմքերը՝ Ատոմ Յարճանյանը (Սիամանթո), Դանիել Վարուժանը, Երվանդ Օտյանը և ուրիշներ։ Առաջին համարի առաջաբանում «Շիրակի» ուղղության և նպատակների մասին ասված է. «...Հիմնադիրները հավակնությունը չունին հայ գրականության մեջ նոր դարագլուխ մը բանալու, այլ համեստ գիտակցությունը և հաստատ կամքը խորված ամբողջության մը շարունակելու։ «Շիրակին» ուղղությունը պիտի ըլլա, ուրեմն, գրագետներու ընտրելախումբի մը օգնությամբ աշխատիլ հայ գրքությանց վերականգնումին՝ արտասահմանի մեջ։ Անկարելի ըլլալով, որ ներկա ժամուն հայ գիրքը չանդրադառնա հայրենիքին մրրկահեծ ցավերուն, անոնցմե իր հզորմին արյունը և մուսմունքը հյութը չքաղե՝ «Շիրակը» պիտի ըլլա ազգային գրականություն մը, առանց մտնելու կուսակցական նկատառումներու և մասնավորությանց մեջ, լայն պիտի բանա իր էջերը բոլոր նշմարիտ ու վավերական գրագետներուն առջև, ընծայելով այսպես անոնց գեղարվեստի միջոցը հաստատելու իրենց վրա ծանրացող պարտքն հանդեպ հայ գրքությանց և անով՝ հանդեպ ազգային վերածնումի գործին»[50]։

47 Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1923, էջ 363։

48 «Լուսաբեր», 1 դեկտեմբերի 1904։

49 «Բազմավէպ», 1904, էջ 382։

50 «Շիրակ», 1905, էջ 2։

*«Միտումն»: Ազգային, գրական, բանասիրական ամսաթերթ, Ալեքսանդրիա, լույս է տեսել 1905 թ. հունվարից, ընդամենը երկու համար, ծավալը՝ 32 էջ (27×19 սմ), բացի շապիկից։ «Միտումը» տպագրվել է սեփական համանուն տպարանում։ Խմբագիրներ Մ. Բյուրատ, Ե. Սրմաքեշխանլյան։

* «Օրենք»: Շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, 1905 թ.։ Խմբագրական մարմին՝ Երվ. Օտյան, Վահան Տիրանյան (Թեքեյան) և Միհրան Տամատյան։ «Օրենքը» լույս է տեսել ընդամենը 13 համար, 4 էջ ծավալով (29×23 սմ)։ Տպագրվել է «Վահան Թեքեյան և ընկ.» տպարանում։ Բաժանվում էր ձրի։ Վահան Զարդարյանը «Օրենքը» համարում է «օրենսդիրական թերթ մը», մինչդեռ այն այդպիսի թեքում չի ունեցել, եղել է Ազգ. սահմանադրության կողմնակիցների պայքարի օրգանը։

«Թերթիկ»: Օրաթերթ, Ալեքսանդրիա, խմբագիր՝ Երվանդ Օտյան, հրատարակիչ՝ Գ. Նազարեթյան, տպարան՝ «Արարատ» (Արամ Սանջանյան)։ «Թերթիկի» առաջին համարը լույս է տեսել 1906 թ. հուլիսի 11-ին, իսկ վերջինը՝ օգոստոսի 17-ին, ընդամենը 28 համար։ Առաջին մի քանի համարներն եղել են երկու, այնուհետև չորս «փոքրագիր» էջով[51]։ «Թերթիկը» «տեղեկության աղբյուր մըն» էր, հաղորդում էր «քաղաքական, ազգային, տեղական լուրեր, օրվան հեռագիրներ, ապրանքի և առևտրական տեղեկություններ, կարևոր արժեթղթերու փոխանակության շահոց թիվերը, երկաթուղիաց և շոգենավերու ժամանակացույցները» և այլն[52]։

«Կրակ»: Շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, խմբագիրներ՝ Երվանդ Օտյան և Բարսեղ Շահպազ, տպարան՝ «Արարատ»։ «Կրակը» լույս է տեսել 1906 թ. սեպտեմբերին, ընդամենը երեք համար, «կարմիր թղթի» վրա և ուներ «ծայրահեղ հեղափոխական» բովանդակություն։ «Կրակի» ուղղության մասին Երվանդ Օտյանը գիտակ կերպով գրել է. «Կրակի» ծրագիրը ծայրահեղ հեղափոխականություն էր, մինչև անիշխանություն, ոչնչականության հասնող... «Կրակի» առաջին թիվով ցարականությունը կործանեցինք, երկրորդ թիվով սուլթանությունը տապալեցինք, թերթը բավական աղմուկ հանեց... Մեր գրածները անմիջապես հիմարություն կնկատվեին ողջախոհներու կողմեն»[53]։

*«Նոր ժամանակներ»: Քաղաքական և գրական շաբաթաթերթ, լույս է տեսել 1906 թ. դեկտեմբերին Կահիրեում, ընդամենը երկու համար, ծավալը՝ բացի շապիկից 16 էջ, (21×13 սմ)։ Խմբագիր՝ Վահան Թեքեյան, տպարան՝ «Հայկական» (Օ. Հայկազյան)։ Առաջնորդողում («Հայտագիր»-ում) ասված է. «Այս նոր թերթը պիտի ըլլա քաղաքական և գրական, բայց պիտի ջանանք որ ըլլա նաև—այսպես ըսելու համար—առողջապա-

[51] Տե՛ս «Հանդես Ամսօրյա», 1907, էջ 127։

[52] «Ազատ խոսք», 1906, էջ 174—175։ «Թերթիկի» մասին Երվ. Օտյանը գրում է. «Թերթիկը», բնականաբար, դրամագլուխ չուներ, հրատարակության հոգը վրան առած էր փորագրիչ տպարանատեր պ. Գր. Նազարեթյան, խմբագրապետը ես էի, իսկ թերթին վարիչը՝ պ. Երվանդ Անդրեասյան... Չմոռնամ ըսելու որ մեկ քանի անձեր նյութական օժանդակության մը անորոշ խոստումը ըրին մեզի, այս հրատարակության առաջին քայլերը դյուրացնելու համար։ «Թերթիկը»... անընդհատաբար շարունակվեցավ չորս շաբաթ, բայց տեսանք որ կարելի չէր շարունակել անպատիվ կերպով այս հրատարակությունը, որ մեզ չարաչար հոգնեցնելե զատ կսպառնար նաև ի վերջո պարտքի տակ խեղդել» (Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 372—373)։

[53] Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 537։



հական։ Մեր այսօրվան մշակել առաջադրած ազգային քաղաքականությունն է՝ ա) Արտասահմանի հայությունը կորուստե և այլասերումե պահել ձգտող ջանքերը քաջալերել և մեր պայմաններուն ներածին չափ մասնակցիլ անոնց. բ) Աշխատիլ՝ զորացնելու և կազմակերպելու արտասահմանի հայոց օգնությունը առ հայրենիքի հայությունը. գ) Ջանալ՝ հաստատելու միություն մը արտասահմանի մտավորական տարրերու միջև, որոնք տարածեն ազատ մարդու և քաղաքացիի առաքինությունները հայ ժողովուրդին մեջ և ըսեն, միևնույն ժամանակ, ինչ որ պետք է հիշեցնելու ու պաշտպանելու համար հայոց դատը ժողովուրդներու և կառավարությանց դատաստանին առջև»[54]։

«Պիծակ»: Զավեշտական շաբաթաթերթ, Կահիրե։ Ըստ Վ. Զարդարյանի լույս է տեսել 1906 թ., միայն մեկ համար, խմբագիր՝ Միսաք Մուրադյան։

*«Ոսկեմատյան» Հ. Բ. Ը. միության։ Պատկերազարդ վեցամյա, Կահիրե։ Առաջին հատորը (1906—1912 թթ.) լույս է տեսել 1914 թ., երկրորդ հատորը (1913—1919 թթ.)՝ 1919 թ.։ Երկրորդ հատորի ծավալը՝ 71 էջ (16×21 սմ)։ Տպարան՝ Հ. Բ. Ը. միության, Կահիրե։

«Մուրակ»: Քաղաքական և գրական կիսամսյա հանդես, Ալեքսանդրիա։ Լույս է տեսել 1908 թ. մայիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը, ընդամենը հինգ համար, ծավալը՝ 4 էջ։ Խմբագիր-տնօրեն՝ Բարսեղ Շահպազ, տպարան՝ Գ. Նազարեթյանի։

*«Արև»: Օրաթերթ, Ալեքսանդրիա, 1908 թ.։ Խմբագիր՝ Երվանդ Օտյան, հրատարակիչ՝ Գ. Նազարեթյան։ Ծավալը՝ 4 էջ (30×22 սմ)։ Հովհ. Պետրոսյանի և ուրիշների ասելով «Արևը» հիմնադրվել է 1907 թ., մինչդեռ նրա առաջին համարը լույս է տեսել 1908 թվականի մայիսի 11-ին և շարունակվել մինչև նույն թվականի հուլիսի վերջը կամ օգոստոսի սկիզբը։ «Արևը» իր 22-րդ համարից փոխանցվել է «Եգիպտոսի Հայոց Հրատարակչական ընկերության», իսկ 91-րդ համարից հետո, ինչպես նշվեց, միացվել է «Լուսաբերին», ստեղծելով մի նոր օրգան՝ «Լուսաբեր-Արև»։

* «Լուսաբեր-Արև»: Ազգային և քաղաքական երկօրյա լրագիր, Կահիրե, 1908—1913 թթ.։ Առաջին շրջանում՝ 1908 թ. մինչև 1912 թ. հիմնադիր խմբագիր-արտոնատեր՝ Վահան Քյուրքճյան, գործակցությամբ Լևոն Մկրտիչյանի։ Երկրորդ շրջանում՝ մինչև 1913 թ. սկզբները խմբագիր՝ Սուրեն Պարթևյան, տեր և տնօրեն՝ Արմենակ Մնաթևյան։ Ծավալը՝ 4 էջ (50×34 սմ)։ «Լուսաբեր-Արևը» տպագրվում էր սեփական տպարանում։ 1913 թ. մարտին լույս է տեսել այդ լրագրի վերջին համարը։ «Լուսաբերը» և «Արևը» բաժանվել են։ Առաջինը, «Լուսաբեր» վերանվանվելով, շարունակել է հրատարակվել, երկրորդը՝ ժամանակավորապես դադարել է։ Համարյա բոլոր ցուցակներում այդ լրագրերի միացման և բաժանման տարեթվերի վերաբերյալ տեղ են գտել անճշտություններ։ Հովհ. Պետրոսյանը և ուրիշներ նրանց բաժանումը, ինչպես նաև «Լուսաբերի» սկզբնավորումը դնում են 1912 թ. վերջերին։ Բացի այդ, Հովհ. Պետրոսյանը սխալվում է, երբ «Լուսաբեր-Արևը» համարում է «Դաշնակցության թերթը»։ Հանրահայտ իրողություն է, որ Վ. Քյուրքճյանը և Լ. Մկրտիչյանը եղել են հակադաշնակցական մտավորականներ։

*«Ավել»: Կիսամսյա զավեշտաթերթ, Կահիրե։ Երկրորդ համարից վերածվել է շաբաթաթերթի, լույս է տեսել ընդամենը 27 համար։ «Ավելը» հիմնադրվել է 1908 թ. օգոստոսի 1-ին, դադարել է 1909 թ. փետրվարի առաջին շաբաթը։ Խմբագիր՝ Վ. Քյուրքճյան, տպարան՝ «Հայկական», ծավալը՝ 16 էջ (27×18 սմ)։ Առաջին համարի խմբա-

[54] «Նոր ժամանակներ», 1906, № 1, էջ 1։

գրական հոդվածում ասված է. «Պետք զգացինք հանրային «Արեւի» մը, որ մաքրեր մեր աղտոտ բարքերը, ճաքեցներ ցեխոտությունները և ոչնչացներ այն բաները, որոնք հանրության մտքին հետադիմության պատճառ կդառնան։ Քաջ գիտենալով ժողովրդի այժմու կյանքը որ անհատական տոհմներով և տգիտություններով պաշարված է, մտադրեցինք մեր այս «Արեւով» ուրախություն և խինդ պատճառել հասարակության»[55]։

«Աշտարակ»։ Գաղափարական հրատարակություն, Կահիրե, 1908 թ.։ Խմբագիր՝ Հրանտ Այտաքին, տեր և տնօրեն՝ Երվանդ Քերեստեջյան, տպարան՝ Թոփալյանի։

«Ամենուն տարեցույցը. Հայ զավեշտական տարվա», Ալեքսանդրիա, 1909 թ., ծավալը՝ 16 էջ, կազմող՝ Երոս (Երվանդ Օտյան)։

«Լուսին»։ Հանդես (ամսաթերթ), Կահիրե, 1909—1910 թթ.։ Հրատարակություն Գալուստյան պատանեկան միության, խմբագիրներ՝ Մարտիրոս Գալայան, Հ. Թյուրաքյան, Արմ. Համլյան, Ն. Գևորգյան։

«Մալեշ»։ Զավեշտական շաբաթաթերթ, Կահիրե, 1911—1912 թթ., ծավալը՝ 16 էջ (22×16 սմ)։ Խմբագիր՝ Գրիգոր Համբիկյան, տպարան՝ Զարեհ Ն. Բերբերյանի։

«Անցած-դարձածներ»։ Գաղափարաթերթ, Կահիրե, 1911—1912 թթ., հրատարակիչ՝ Երվանդ Քերեստեջյան։

* «Միություն»։ Ամսօրյա պաշտոնաթերթ Հայկական բարեգործական ընդհանուր միության, Կահիրե, 1912—1919 թթ.։ Ծավալը 16 էջ (26×18 սմ), խմբագիր՝ Վահան Մալեզյան, տպարան՝ Հ.Բ.Ը. Միության։

*«Հուսաբեր»։ Շաբաթաթերթ, Կահիրե։ Առաջին համարը լույս է տեսել 1912 թ. հունվարի 14-ին, ընդամենը 32 համար, ծավալը՝ 16 էջ (26×19 սմ)։ Տեր և խմբագիր՝ Սուրեն Պարթևյան և Ս. Հայկազյան, տպարան՝ Զարեհ Ն. Բերբերյանի։ Առաջին համարի առաջնորդող հոդվածում ասված է. «Հուսաբերը» պիտի ձգտի միության կապ մը դառնալ, մտավոր ու հոգեկան հաղորդակցության հոսանք մը հաստատել հայերենի մեծ կեդրոններուն ու եգիպտահայ գաղութին միջև, ազգային ույժմեական իրագործություններուն ապավինելով միշտ յանկի ընծայելով գերակշիռ ձայնը եգիպտահայ այն ականավոր հրապարակագիրներուն, որոնք պարծանքը կկազմեն թրքահայ գրականության...։ Կյանքի փշալից ու դառնալի ճամփուն վրա մեր պատանեկները մեկիկ-մեկիկ կորսնցնելու ենք՝ տանելով խանդավառ հուզումով մը կանդրադառնանք այսօր թե գրական կայք ամենեն զինած կուն ու համաստեղծը կյանք ընկերական մեր բոլոր կայծերուն»[56]։ «Հուսաբերին» աշխատակցում էին Տիգրան Կամսարականը, Վահան Թեքեյանը, Վահան Մալեզյանը, Միքայել Կյուրճյանը, Հ. Ասթյանը և ուրիշներ։

«Եգիպտահայ տարեցույցը»։ Ալեքսանդրիա, 1912 թ., տպարան՝ Արամ Ստեփանյանի («Արաքս»)։

*«Հուսաբեր»։ Կահիրե, 1913—1915 թթ. եռօրյա լրագիր։ 1915 թ. մարտի 3-ից դաշնակցության «պաշտոնաթերթ», իսկ 1923 թ. «կուսակցական օրգան»։ 1926 թ. ապրիլի 1-ից «քաղաքական, գրական և հասարակական օրաթերթ»։ Խմբագիր՝ Ստեփան Եսայան և Արտ. Հանըճյան (1917—1922 թթ.), ապա՝ Վահան Նավասարդյան գործակցությամբ Լ. Նազարյանցի, Գ. Մխիթարյանի, Բ. Թաշյանի, Գ. Լազյանի և ուրիշների։ Արտոնատեր՝ Հ. Աճըրյան, 1928 թվականից՝ Օ. Մաճառյան։ Ծավալը՝ 4 էջ (57×41 սմ), (62×45 սմ)։ Տպագրվում է սեփական համանուն տպարանում։

[55] «Արեւ», 1908, № 1, էջ 1։
[56] «Հուսաբեր», 1912, № 1, էջ 3։



*«Նուպարյան միություն»։ Կիսամյա հրատարակություն Գալուստյան ընթացավարտից միության, Կահիրե։ Առաջին համարը լույս է տեսել 1913 թ. մայիսին, ծավալը՝ առանց շապկի 32 էջ (26×17 սմ), տպարան՝ Զարեհ Ն. Բերբերյանի։

*«Ծաղկանոց», ամենուն շաբաթաթերթը (երգիծաթերթ), Կահիրե, հիմնադրվել է 1914 թ.։ Ծավալը՝ 8 էջ (26×20 սմ)։ Արտոնատեր՝ Երվ. Մարգլյան, տպարան՝ «Սանի-տաս»։

*«Եգիպտահայ տարեցույց»։ Կահիրե, 1914—1918 թթ., խմբագիր՝ Սուրեն Պարթևյան, ծավալը՝ 240—280 էջ (24×16 սմ)։ 1919 թ. տեղափոխվում է Ալեքսանդրիա և սկսվում է նոր շրջան։ Կազմող՝ Մարտիրոս Ոսկյան, հրատարակիչ՝ Ա. Ստեփանյան, տպարան՝ «Արաքս», ծավալը՝ 132 էջ (13×19 սմ)։ Ոսկյանի տարեցույցը Սուրեն Պարթևյանի «Եգիպտահայ տարեցույցի» շարունակությունն էր։ Ոսկյանը գրել է. «Դիմեցինք «Եգիպտահայ տարեցույցի» հարգելի հեղինակին անոր թույլտվությունն ստանալու մեր հրատարակելիք համանուն գործին համար, որը պիտի ըլլա իրենին մեկ ուղղակի շարունակությունը»[57]։ Ս. Պարթևյանն ընդառաջել է նրան։ Տարեցույցի առաջին համարը լույս ընծայելուց հետո Ոսկյանը զոհվել է Ադանայում։ 1924—1925 թթ. շարունակելով Պարթևյանի և Ոսկյանի գործը, Հ. Անճեմյանը վերականգնել է «Եգիպտահայ տարեցույցը», ծավալը՝ 280 էջ (24×16 սմ)։

«Խարազան»։ Սազրաթերթ, Ալեքսանդրիա, 1915 թ.։

*«Արև»։ Եռօրյա լրագիր («Ազգային շահերու պաշտպան օրգան»), Ալեքսանդրիա։ Առաջին համարը (վերահրատարակություն) լույս է տեսել 1915 թվականի մայիսի 11-ին։ 1922 թ. դեկտեմբերի 11-ից ազգային, գրական և քաղաքական օրաթերթ, «Պաշտոնաթերթ Ռամկավար ազատական կուսակցության Եգիպտոսի շրջանակին»։ 1924 թ. օգոստոսի 9-ից տեղափոխվել է Կահիրե, որտեղ և հրատարակվում է մինչև այսօր։ Խմբագիր՝ Վահան Թեքեյան, ապա՝ Միքայել Կյուրճյան, հետագայում՝ Հովհ. Գազազյան և ուրիշներ։ Արտոնատեր՝ Լևոն Մկրտչյան, 1923 թ.՝ Հակոբ Փափազյան, 1924 թվականից՝ Տիգրան Հաճընլյան և ուրիշներ։ Ծավալը՝ 4 էջ (58×40 սմ), (60×45 սմ)։ Տպագրվում է սեփական համանուն տպարանում։

«Անիվ»։ Ալեքսանդրիա, 1915 թ.։

«Հայկիկ»։ Երգիծաթերթ, Կահիրե, 1915 թ.։ Հրատարակիչ-խմբագիրներ՝ Միհրան Տամատյան և Դ. Բաղդատունի (Ա. Ամատունի)։

«Անապատի Հուշարձան»։ Գրական պարբերաթերթ, Կահիրե, 1916—1917 թթ.։ Խմբագիր՝ Կարո Գալյան։

*«Նշույլներ»։ Գրական հավաքածու։ Հրատարակություն Հայ երիտասարդաց միու-

[57] «Եգիպտահայ տարեցույց», 1919, էջ 3։ Ոսկյանի գրածին Ս. Պարթևյանը պատասխանել է հետևյալ երկտողով. «Թույլտվություն կխնդրեք ինձմե «Եգիպտահայ տարեցույցը» այս տարի շարունակելու, քանի որ ուրիշ զբաղումներ զիս կարգիլեն անով զբաղվելե։ Դիտեմ արդեն թե «Տարեցույցը» որքան քիչ մտերիմ հոգեպայման մը եղած է ինծի, իր ազդեցիկ խորքը հայրը, որուն համար նշանակոր եղած, հոգին քերանը եկած է, խեղճը։ Այս անգամ դուն տերությունը ընել կփորձես անոր։ Չարի հաջողություն։ Կմաղթեմ արդարև որ ավելի երախտամոռ չըլլաս գրական պատճառներ ձեռք բերես իրմե, առանց զիս բոլորովին մոռցնելու, խաղիկ դարձնելու իրեն» (նույն տեղում)։

թյան, Կահիրե։ Առաջին համարը լույս է տեսել 1916 թ.։ Ծավալը՝ 32 էջ (14×20 սմ), տպարան՝ «Ոսոսան» (Սոկրատ Սարրաֆյան)։

**«Հառաջդիմասեր»**։ Տեղեկատու Հառաջդիմասեր ընկերության։ Ալեքսանդրիա, 1917 թ.։

**«Մեղուկ»**։ Երգիծական թերթ, Կահիրե, 1917 թ.։ Խմբագիր՝ Ս. Սարրաֆյան։

*«**Պոլիսակ**»։ Ջավեշտաթերթ, Ալեքսանդրիա, 1917 թ.։ Խմբագիր՝ Գ. Բաղրատունի (Ա. Ամատունի)։ Ծավալը՝ 22 էջ (19×13 սմ), տպարան՝ Ա. Գասապյանի։

*«**Որբունի**»։ Տեղեկատու Հայ որբախնամ ընկերության, Ալեքսանդրիա, 1919—1921 թթ., ծավալը՝ 16 էջ (22×15 սմ)։ Առաջին պրակը լույս է տեսել 1919 թ.։ Տպագրվում էր նախ Ա. Ստեփանյանի, ապա՝ Ա. Գասապյանի տպարանում։

*«**Ջահակիր**»։ Գրական հավաքածու, Կահիրե, 1919 թ., խմբագիր՝ Վարդան Գևորգյան, ծավալը՝ 134 էջ (24×15 սմ)։ Տպարան՝ Գրիգոր Ճըհանյանի։

**«Հայ վերածնունդին տարեգիրքը»**, Ալեքսանդրիա, 1920 թ.։

**«Մարտիկ աղա»**։ Ազգային երգիծաթերթ, Կահիրե, 1921 թ.։ Երգիծաբան Վ. Զագարյանին գրավաճառ Վ. Զարդարյանի հետ շփոթելով, ոմանք վերջինիս համարել են «Մարտիկ աղայի» խմբագիրը և հրատարակիչը։ Իր կազմած ցուցակում Վ. Զարդարյանը երգիծաթերթի խմբագիր է նշել Վ. Զագարյանին։

*«**Անեղ**»։ Երգիծաթերթ, Ալեքսանդրիա, 1923 թ.։ Հրատարակիչ-խմբագիր՝ Վ. Գասապյան։ Տպարան՝ Ա. Գասապյանի։

*«**Զեկուցում**» Գալուստյան ազգային երկսեռ վարժարանի Ալեքսանդրիո։ Լույս են տեսել 1923—1924, 1924—1925 և 1925—1926 թվականների երեք պրակներ։ Ծավալը՝ 85 էջ (16×24 սմ)։ Տպարան՝ «Հուսաբեր»։ Հավանաբար շարունակվել է նաև հետագա տարիներին։

*«**Նոր շարժում**»։ Գրական, գեղարվեստական և գիտական, Կահիրե, 1923—1924 թթ.։ Հրատարակվում էր պրակ առ պրակ։ Առաջինը լույս է տեսել 1923 թ. հունվարին, խմբագիր՝ Յուրգեն Մխիթարյան, ծավալը՝ 16 էջ (25×13 սմ)։ Տպարան՝ «Հուսաբեր»։

**«Արարատ»**։ Կիսամսյա հանդես, Կահիրե, 1923 թ.։

*«**Կայծ**»։ Ամսագիր «Զարթոնք» միության, Ալեքսանդրիա, 1924—1925 թթ.։ Առաջին համարը լույս է տեսել 1924 թ. հոկտեմբերի 1-ին։ Դադարել է 1925 թ. ապրիլ կամ մայիս ամսին։ Ծավալը՝ 16, երբեմն էլ 32 էջ (22×13 սմ)։ Խմբագիրն ու տպարանն անհայտ են։

*«**Հայ բուժակ**»։ Բժշկական և առողջապահական ամսաթերթ։ Հիմնադրվել է 1920 թ. Պոլսում, 1924 թ. տեղափոխվել է Ալեքսանդրիա, որտեղ և շարունակվել է շուրջ մի տարի։ Հիմնադիր՝ բժիշկ Ալթունյան, տնօրեն-խմբագիր՝ բժիշկ Հ. Թաշճյան, ծավալը՝ 16 էջ (19×26 սմ)։ Տպարան՝ Ա. Ստեփանյանի։

**«Մասիս»**։ Օրգան հայ ուսանողական միության (Ռամկավար ազատական կուսակցության)։ Լույս է տեսել 1924—1925 թթ. Ալեքսանդրիայում, ապա՝ տեղափոխվել է Կահիրե։ Տպարան՝ Ա. Ստեփանյանի, ապա, հավանաբար, «Արև»։

*«**Փունջ**»։ Հայ և օտար գրականություններից մանկական երկշաբաթաթերթ։ Հիմնադրվել է 1925 թ. Ալեքսանդրիայում, ապա՝ տեղափոխվել է Կահիրե, որտեղ և շարունակվել է մինչև 1946 թվականը։ Հրատարակիչ՝ Մ. Փարամյան, խմբագիր՝ Լ. Անեմյան։ Ծավալը՝ 16 էջ (23×15 սմ)։ Տպարան՝ Ա. Գասապյանի, ապա «Սահակ-Մեսրոպ»։ Այդ պարբերականի նպատակն էր «հայ մանուկին ընթերցանության համար նյութեր մատակարարել»։ «Փունջը» ինքնուրույն գրվածքներ շատ քիչ է տպագրել, նյութերի մեծ մասը



թարգմանված են ֆրանսերենից և այլ լեզուներից։ Արևմտահայերենով ներկայացված են արևելահայ գրողների մի շարք գործերը[58]։

*«**Արմէն**»։ Գրական պարբերաթերթ, Ալեքսանդրիա, 1925 թ.։ Հրատարակություն «Զարթոնք» միության։ Արտոնատեր՝ Արամ Ստեփանյան։ Տպարան՝ «Արաքս»։ Ըստ Վ. Զարդարյանի լույս է տեսել «մի քանի թիվ»։ Այս պարբերաթերթը հիմք է ծառայել համանուն «անկախ հայաթերթ» շաբաթաթերթի հրատարակության։ Հիմնադիր՝ Արամ Ստեփանյան, արտոնատեր-խմբագիր՝ Շավարշ Ստեփանյան։ Ծավալը՝ 4 էջ (56×40 սմ)։ Տպարան՝ «Արաքս»։

*«**Հայկական սինեմա**»։ Պատկերազարդ երգիծաթերթ շաբաթական, Կահիրե, 1925—1926 թթ.։ Արտոնատեր՝ Ալ. Սարուխան, խմբագիր՝ Վարդան Զագարյան։ Առաջին տարեշրջանը սկսվել է 1925 թվականի հունվարի 24-ին և վերջացել դեկտեմբերի 26-ին (№ 1—39)։ Երկրորդ և վերջին տարեշրջանում լույս է տեսել 11 համար (№ 40—50)։ Ծավալը՝ 8 էջ (32×24 սմ)։ Տպագրվել է նախ «Փարոս», ապա՝ «Հուսաբեր» և վերջում՝ «Արև» տպարաններում։

**«Սֆինքս»**։ Քաղաքական անկախ շաբաթաթերթ, Ալեքսանդրիա, հավանաբար 1925—1927 թթ.։ Արտոնատեր-խմբագիր՝ Հարություն Ասլանյան։ Տպարան՝ Ա. Ստեփանյանի։ Ըստ Վ. Զարդարյանի երկու տարի հրատարակվելուց հետո դադարել է, իսկ 1928 թ. տեղափոխվել է Կահիրե, որտեղ լույս է տեսել միայն 6 կամ 7 համար։

**«Միտք ու կյանք»**։ Հրատարակություն Գերպերյան վարժարանի երեք կարգերու, Կահիրե, հավանաբար 1926—1929 թթ., խմորատիպ։

*«**ՀՕԿ**»։ Պարբերական պրակ, Կահիրե, 1926 թ.։ Առաջին համարը լույս է տեսել 1926 թ. հուլիսի 1-ին։ Խմբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (27×19 սմ)։ Տպարան՝ «Փարոս»։ Առաջնորդող հոդվածում ասված է. «ՀՕԿ-ը չունի քաղաքական որևէ հանգամանք և որևէ կապ «գործող» քաղաքական հոսանքներու հետ, որոնք իրենց գոյության իրավունքը շատոնց սպառած են»[59]։

**«Հայտագիր»**։ Ազգային պարբերագիրք, Կահիրե, հավանաբար 1926—1928 թթ.։ Հրատարակիչ-խմբագիր՝ Պաղտասար Նաթանյան։ Ըստ Վ. Զարդարյանի «Հայտագիրը» լույս է տեսել «5 թիվ»։

*«**Հայ վարժարան**»։ Մանկավարժական ամսագիր, Կահիրե, 1926 թ.։ Խմբագրական կազմ՝ Թ. Թագվորյան, Հ. Շենո, Բ. Թաշյան։ Ծավալը՝ 32, երբեմն էլ 48 էջ (23×16 սմ)։ Տպարան՝ «Հուսաբեր»։

**«Արաքս»**։ Անկախ հայաթերթ, Ալեքսանդրիա, 1926—1930 թթ.։ Արտոնատեր-խմբագիր՝ Արամ Ստեփանյան։

**«Լուսարձակ»**։ Օրգան (շաբաթաթերթ) Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության, Կահիրե, 1927—1928 թթ.։ Արտոնատեր՝ Սարգիս Միքայելյան։

**«Նոր արվեստ և մշակույթ»**։ Հանդես, Կահիրե, 1927 թ.։ Հրատարակիչ-խմբագիրներ՝ Սարգիս Պալյան, Պողոս Սիմոնյան։ Տասը տարվա դադարից հետո 1946 թ. վերստին[60] լույս է տեսել նորացված բովանդակությամբ։ Տպարան՝ «Նուպար»։

---

[58] Տե՛ս «Փունջ», 1925, № 1, էջ 1։

[59] «ՀՕԿ», № 1, էջ 1։

[60] Հովհ. Պետրոսյանը դրանք համարել է տարբեր պարբերականներ և զետեղել զույգ ցուցակների ներքո, մինչդեռ այդպես վարվելու բավարար հիմք չկա, պարբերականի

«**Հրեղեն սյուն**»։ Հոգևոր պարբերաթերթ, Կահիրե։ Լույս էր տեսնում 1927 թվականից։ Արտոնատեր-խմբագիր՝ Բյուզանդ Կեոսյապենտեկյան։ Ծավալը՝ 16 էջ (26×13 սմ)։ Տպարան՝ «Հարբեթ-Փաղտասար»։

*«**Սարկավագին եգիպտահայ տարեցույցը**»։ Հիմնադրվել է 1921 թ. Պոլսում, 1928—1929 թթ. տեղափոխվել է Ալեքսանդրիա։ Խմբագիր-հրատարակիչ՝ Հարություն Մանավյան։ Ծավալը՝ 224, 181, երբեմն էլ ավելի պակաս էջ (23×17 սմ)։ Տպարան՝ Արամ Սանփանյանի։ Դադարել է հավանաբար 1951 թ.։

«**Վահագն**»։ Ձեռագիր թերթ, լույս է տեսել 1928 թ., հավանաբար Ալեքսանդրիայում։

*«**Կայծակ**»։ Մարմնակրթական ամսաթերթ, օրգան «Կայծակ» Հայ մարմնամարզական միության, Կահիրե, 1929 թ.։ Արտոնատեր՝ Թադեոս Դայֆայան։ Խմբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (20×26 սմ)։ Տպարան՝ «Հարբեթ-Փաղտասար»։ «Կայծակը» պաշտպանում էր եգիպտահայ մարմնամարզական միությունների միավորման ծրագիրը։

«**Ովասիս**»։ Կրոնա-բարոյական ամսաթերթ, Կահիրե, 1929 թ.։ Խմբագիր՝ Հ. Գաչմերյան։

«**Խարույկ**»։ Հրատարակություն Գերգերյան դպրոցի սաների, Կահիրե, հավանաբար 1930—1931 թթ., խմորատիպ։ Լույս է տեսել 23 համար։

*«**Համասպրամ**»։ Եգիպտահայ ամսագիր, հրատարակություն Հայկազնյան միության, Կահիրե, 1930 թ.։ Խմբագրի և արտոնատիրոջ անունները չեն նշված, հավանաբար՝ Հ. Թելֆյան և Հ. Քեսեկյուլյան։ Ծավալը՝ 16, երբեմն էլ՝ 24 գեղատիպ էջ (26×19 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

«**Լույս**»։ Երգիծաթերթ։ Կահիրե, 1930 թ.։ Արտոնատեր-խմբագիր՝ Վարդան Զաքարյան, ըստ Վ. Զարդարյանի՝ նաև Ալ. Սարուխան։

*«**Ալբոմ**»։ Պատկերազարդ տարեգիրք, Կահիրե, 1932 թ.։ Ծավալը՝ 22 գեղատիպ էջ (48×33 սմ)։ Հրատարակիչ՝ Գրիգոր Դալֆա։

«**Աշխատանքի կոչ**»։ Հայ ժողովրդական միության ձայնը, Կահիրե, 1932 թ.։ Ծավալը՝ 16 էջ, Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

*«**Ջերլին**»։ Ազգային և քաղաքական, երգիծական շաբաթաթերթ։ Կահիրե, 1931—1933 թթ.։ Խմբագիր-հրատարակիչ՝ Երվ. Մարգյան։ «Ծաղանակ» երգիծաթերթի տարբերակն է։ Ծավալը՝ 8 էջ (30×22 սմ)։ Տպարան՝ «Ոսկետառ»։

*«**Հայ դպրոց**»։ Հրատարակություն Հայ ուսուցչական միության, Կահիրե։ Հիմնադրվել է 1933 թ.։ Մինչև 1935 թ. լույս են տեսել առաջին հատորի 10 պրակները։ Խմբագրի անունը չի նշված, խմբագրվել է հավանաբար Հայ ուսուցչական միության վարչության կողմից։ Ծավալը՝ 48 էջ (22×13 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։ Մի քանի տարի դադարելուց հետո 1938 թ. վերստին սկսում է լույս տեսնել մեծացրած ծավալով՝ 80 էջ (24×16 սմ)։ Տպարան՝ Հ. Փափազյանի։ Հովհ. Պետրոսյանը վերահրատարակվող «Հայ դպրոցը» թյուրիմացաբար համարել է նոր պարբերական և ներկայացրել առանձին գլխի տակ, մինչդեռ այն հանդիսանում է առաջինի շարունակությունը։

«**Զարթոնք**»։ Գրական, գիտական, գեղարվեստական հավաքածու, օրգան Հնչակյան երիտասարդական միության, Կահիրե, 1935—1937 թթ., խմորատիպ։ Խմբագիրներ՝ Մ. Փալայան, Մ. Գելլերյան և Զարուհի Ծաղկունի։

---

անունը չի փոխվել և հրատարակիչները մնացել են նույնը («Բիբլիոգրաֆիա», էջ 426, 529)։



*«**Լույս**»։ Պարբերագիրք հոգեշահ հոդվածների, Կահիրե, 1936 թ.։ Կազմողներ՝ Թեոդոր Ե. Տաղլյան և Կիրակոս Հ. Թումայան։ Նյութերի կեսը տպագրվում էր հայատառ թուրքերեն։ Ծավալը՝ 20 էջ (20×14 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

*«**Համազգային տարեգիրք**»։ Հրատարակություն Համազգային ընկերության։ Կազմող՝ Գ. Մխիթարյան, Կահիրե, 1936—1938 թթ.։ Ծավալը՝ 351 էջ (24×17 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։

*«**Ազատ միտք**»։ Շաբաթաթերթ քաղաքական, գիտական, տնտեսական, Կահիրե, 1936—1937 թթ.։ Խմբագրապետ՝ Ա. Ալպոյաճյան, արտոնատեր՝ Ս. Հերյան։ 11-րդ համարից արտոնատեր-խմբագրապետ՝ Ա. Ալպոյաճյան, իսկ 23-րդ համարից խմբագրապետներ՝ Գ. Սարըյան և Ա. Ալպոյաճյան։ Լույս է տեսել ընդամենը 52 համար, առաջինը՝ 1936 թ. օգոստոսի 15-ին, վերջինը՝ 1937 թ. օգոստոսի 7-ին։ Ծավալը՝ 8 էջ (40×27 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։ Վերջին համարի առաջնորդողում ասված է, որ «Ազատ միտքը» չի եղել «ոչ մեկ կուսակցության և ոչ մեկ միության բերանը»[61]։

*«**Ամենուն գիրքը**»։ Կրոնաբարոյական ժողովածու, Ալեքսանդրիա, 1937 թ.։ Խմբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (22×16 սմ)։ Տպարան՝ Ա. Սանփանյանի։ Լույս էր տեսնում պրակ առ պրակ։ Առաջին պրակի առաջնորդողում ասված է, որ հրատարակության նպատակն է՝ հայ երիտասարդությունը դաստիարակել ազգային-քրիստոնեական ոգով։

*«**Արմավենի տարեգիրք**»։ Հրատարակություն Գալուստյան ազգային վարժարանի շրջանավարտից միության, Կահիրե, 1938 թ.։ Լույս է տեսել միայն մեկ համար։ Ծավալը՝ 240 էջ (24×19 սմ)։ Տպարանն ու խմբագիրն անհայտ են։

*«**Գրասերի առաջնորդ**»։ Հրատարակություն մատենագրական ստորագրությանց գրասենյակի, Կահիրե։ Հրատարակվում էր տետր առ տետր։ Ըստ հայտարարության պետք է լույս տեսներ ամիսը մեկ անգամ, սակայն առաջին տետրը լույս է տեսել 1938 թ. դեկտեմբերին, իսկ երկրորդը՝ 1939 թ. մարտին։ Ծավալը՝ 16 էջ (22×15 սմ)։ Տպարան՝ «Սևան»։ Բաժանվում էր ձրի։ «Գրասերի առաջնորդի» նպատակն էր. «Ընթերցասիրության նպաստել տալով հնատիպական ծանոթություններ, տեղեկություններ և նույնիսկ գնահատ հատվածներ մեր գրականութենեն, ինչպես նաև ծանոթացնել նոր հրատարակվող հայերեն գրքերու, պարբերականներու և լրագրներու բովանդակությունները, և հայ մտավոր արտադրության մասին գաղափար տալ»[62]։

*«**Բանաստեղծին ձայնը**»։ Պարբերական մատենաշար, բանաստեղծության և գրականության, Կահիրե, 1938 թ.։ Խմբագիր՝ Արշամ Տատրյան։ Ծավալը՝ 32 էջ (24×17 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։ Լույս է տեսել միայն մեկ համար։

«**Գիր և արվեստ**»։ Կիսամյա պարբերաթերթ, պատկերազարդ, Կահիրե, 1938 թ.։ Խմբագիր՝ Ք. Կոստանդյան, հրատարակիչ՝ Գ. Դալֆա։

«**Հազար ու մեկ գիտելիքներ**»։ Պարբերական ժողովածու, Կահիրե, 1938—1939 թթ.։ Հրատարակիչ՝ Հ. Կանոսյան։

«**Պայարին**»։ Տեղեկատու Ալեքսանդրիո ազգային վարժարանաց, պատկերազարդ ամսագիր, Ալեքսանդրիա, 1939 թ.։ Տպարան՝ Ա. Պասալյանի։

---

[61] «Ազատ միտք», 7 օգոստոսի 1937։

[62] «Գրասերի առաջնորդ», 1938, № 1, էջ 16։

«Ավետաբերի ձայն»: Ալեքսանդրիա, 1939—1949 թթ.։

*«Հայանիստ Եգիպտոսի և Սուդանի»: Տարեգիրք, Կահիրե, 1939 թ.։ Հավաքեց և դասավորեց Մ. Փաշայան։ Ծավալը՝ 195 էջ (15×20 սմ)։ Տպարան՝ «Սահակ Մեսրոպ»։ Լույս է տեսել միայն մեկ համար։

*«Զարթոնք»: Գիրք-հիշատակարան նախկին որբերու, Կահիրե, 1939—1940 թթ.։ Հրատարակիչ՝ Դավիթ Շահլամյան։ Հրատարակվում էր պրակ առ պրակ։ 1939 թ. լույս են տեսել 1—4, իսկ 1940 թ.՝ 5—10 պրակները։ Ծավալը՝ 16 էջ (17×25 սմ)։ Տպարան՝ «Հարեթ»։

*«Շողակաթ»: Հրատարակություն Կահիրեի Հայ ուսանողական միության։ Հրատարակվում էր պրակ առ պրակ, հիմնականում հայերեն և մասամբ ֆրանսերեն լեզվով։ Խմբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (22×15 սմ)։ Տպարան՝ «Սահակ-Մեսրոպ»։ Պրակները թվական չեն կրում։ Ամենայն հավանականությամբ լույս է տեսել 1939—1940 թթ.։

«Շարժում»: Հրատարակություն Հայ ուսանողական միության, Կահիրե, 1941 թ.։ Խմբագիրն անհայտ է։

*«Էջեր հայ գրականութենեն»: Հրատարակություն Հայ գրքի բարեկամներու ընկերակցության, Կահիրե, 1942—1943 թթ.։ Խմբագիրն անհայտ է։ Հրատարակվում էր պրակ առ պրակ։ Ծավալը՝ 32 էջ (13×20 սմ)։ Տպարան՝ «Նեգոս»։

*«Կյանք և գիր»: Գիրք-հիշատակարան հայ երիտասարդության, Կահիրե, 1944—1947 թթ.։ Հրատարակիչ՝ Դավիթ Շահլամյան։ Հրատարակվում էր պրակ առ պրակ։ Ծավալը՝ 24 էջ (25×18 սմ)։ Տպագրվում էր սկզբում «Նուպար», ապա՝ «Նոր աստղ» տպարանում։ 1944—1945 թթ. լույս են տեսել 1—12, 1946—1947 թթ.՝ 1—8 պրակները։ 1948 թ. «Կյանք և գիրը» վերածվել է տարեգրքի։ Հրատարակիչներ՝ Ա. Ալպոյաճյան և Դ. Շահլամյան, կազմող՝ Հ. Ժամկոչյան։ Ծավալը՝ 162 էջ (24×17 սմ)։ Տպարան՝ «Նոր աստղ»։

«Աշխատանք»: Գրական հանդես, խմբագիրներ՝ Խ. Հովհաննիսյան և Մ. Փելլերյան։ Հրատարակություն՝ Հայկական ընթերցասրահի, Կահիրե, 1944—1946 թթ.։ Տպարան՝ «Նուպար»։

*«Տեղեկատու պրակ Գալուստյան շրջանավարտից միության»: Կահիրե, 1945 թ. և հաջորդ տարիներ։ Խմբագիրն անհայտ է։ Ծավալը՝ 16 էջ (21×14 սմ)։ Տպարան՝ «Նուպար»։

*«Տեղեկատվություն հայ ազգային խորհրդի Ալեքսանդրիո»: Հրատարակություն Եգիպտոսի հայ ազգային խորհրդի, Ալեքսանդրիա, 1946 թ.։ Ստորագրում էին Ս. Շահպազը և Ալ. Սարուխանը։ Ծավալը՝ 24 էջ (20×27 սմ)։ Տպարան՝ Ա. Սանփանյանի։

*«Հուսաբեր»: Գրական, գեղարվեստական և գիտական բաժին «Հուսաբեր» օրաթերթի, Կահիրե, 1944—1954 թթ.։ Արտոնատեր՝ Օ. Մաճառյան։ Ծավալը՝ 24 էջ (27×18 սմ)։ Տպարան՝ «Հուսաբեր»։

«Տեղեկատու պրակ Եգիպտահայ ներգաղթողներու միության»: Կահիրե, 1947 թ.։

*«Ջահակիր»: «Շաբաթաթերթ ավանդապահ, համագրական և բնաշրջական հառաջդիմության քաղաքական, գրական և ընկերային», Կահիրե։ Արտոնատեր-խմբագիր՝ Հայկ Ժամկոչյան, գրական խմբագիր՝ Արշամ Տատրյան։ Առաջին համարը լույս է տեսել 1948 թ. մայիսի 5-ին։ Առաջին տարեշրջանը փակվել է 1949 թվականի հուլիսի 18-ին, 52-ի փոխարեն 24 համարով, երկրորդ տարեշրջանը՝ 1950 թվականի նոյեմբերի 20-ին՝ 14 համարով։ Մինչև 1954 թ. հունվարի 15-ը լույս են տեսել ևս 17 համարներ։ Ծավալը՝ 8 էջ (45×30 սմ)։ Այնուհետև, «Ջահակիրը» վերածվել է ամսաթերթի։ Արտոնատերը նույնն է։ Պատասխանատու տնօրեն և խմբագիր՝ Հրանտ Տատրյան։ Ծավալը՝ 8 էջ (29×22 սմ)։ Հրատարակվում էր զգալի հապաղումներով։ Տպագրվում էր սկզբում «Նուպար», ապա՝ «Արգելատահման» և վերջում՝ «Սահակ-Մեսրոպ» տպարանում։ Մի քանի տարի դադարելուց հետո «Ջահակիրը» նորից սկսեց լույս տեսնել որպես շաբաթաթերթ և շարունակվում է մինչև այսօր։ Խմբագիր՝ Սարգիս Պալայան, արտոնատեր՝ Արզա Սերոբյան։

«Բարի լույս»: Գիրք հոգեշահ հոդվածներու, Ալեքսանդրիա, 1948—1950 թթ.։

«Անդաստան հայ մտքի»: Պարբերաթերթ, Կահիրե, 1943 թ.։

«Նոր Խիկար»: Երգիծաթերթ, Կահիրե, 1949 թ.։ Խմբագիր՝ Գ. Կարինյան (Հայկ Ժամկոչյան)։

*«Նուպարյան աղավնի»: Պարբերագիրք, Հայ-մարդն ու իր մշակույթը, Կահիրե, 1950—1951 թթ.։ Հրատարակիչ՝ Արշամ Տատրյան։ Լույս են տեսել 1—3 համարները։ Ծավալը՝ 80 էջ (24×17 սմ)։ Տպարան՝ «Թատան»։

«Բանն Աստուծոյ»: Պարբերաթերթ, Կահիրե, 1950 թ.։ Խմբագիր՝ Արա Սեհոնյան։

Եգիպտահայերը ունեցել են նաև մի շարք հայատառ թուրքերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն պարբերականներ։

«Մածակ»: Հայատառ թուրքերեն լրագիր, Կահիրե, 1898 թ.։ Խմբագիր՝ Հովհ. Հ. Փալըքճյան[63]։ Ն. Գասպարյանն այն համարում է հայերեն լեզվով հրատարակություն[64], մինչդեռ «Մածակը» եղել է «տաճկաբարբառ», ինչպես նշված է 1898 թվակիր արխիվային մի վավերագրում[65]։ Ե՞րբ է հիմնադրվել «Մածակը»: Այդ հարցին բավական պարզ պատասխան է տալիս արխիվային մի այլ վավերագիր (1898 մարտի 22 թվակիր), որտեղ ասված է. «...լրագիրն ...չորս 2 թիվ ելած է»[66]։ Մինչև նույն թվականի մայիսի 26-ը «Մածակից» լույս էր տեսել 25 համար[67]։ Կարելի է հետևցնել, որ «Մածակը» հիմնադրվել է 1898 թվականի մարտի կեսերին և եղել է հավանաբար եռօրյա լրագիր։

«Politique Morale»: Հանդես, Կահիրե, 1867—1868 թթ.։ Խմբագիր՝ Շառլ Անգալյան։

«The Egyptian Grafic»: Կահիրե, 1902 թ.։ Խմբագիր՝ Տիրան Քելեկյան, հրատարակիչ՝ Գ. Գալֆայան։

«Յենի Ֆիքր»: Թուրքերեն լեզվով ամսագիր, Կահիրե, 1903 կամ 1904 թթ.։ Խմբագիր՝ Տիրան Քելեկյան։ Բաժանվում էր ձրի։

«La Justice»: Կահիրե, 1908 թ.։ Խմբագիր-հրատարակիչ՝ Լևոն Ցեհմի։

«The Cairo Weekly»: Կահիրե, 1905 թ.։ Խմբագիր՝ Տիրան Քելեկյան, հրատարակիչ՝ Գ. Գալֆայան։

«The Sphinx»: Կահիրե, 1913 թ.։ Խմբագիր՝ Ալեքսանդր Պեզիրճյան։

* «La Caravane»: Երգիծական շաբաթաթերթ ֆրանսերեն լեզվով, Կահիրե, 1938 թ.։ Արտոնատեր-խմբագիր՝ Ալ. Սարուխան։

---

[63] Տե՛ս Ա. Հ. Դառաշյան, Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության, էջ 57։

[64] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1961 թ., № 3—4, էջ 327։

[65] Տե՛ս ՊԱԹ արխիվ, Թ. Ազատյանի ֆոնդ., թ. 12, վ. 9435։

[66] Նույն տեղում, վ. 9434։

[67] Տե՛ս նույն տեղում, վ. 9441։

# ՑԱՆԿԵՐ

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### 1. Մարքսիզմի կլասիկներ


Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, Երևան, 1949։

К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, изд. 2, т. 9.

Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, Երևան, 1951։

Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, Երևան, 1952։


### 2. Արխիվային ֆոնդեր


ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Նուբարյանի ֆոնդ, թղթապանակ № 10 (վավերագիր 19, 23, 129, 132, 133), 11 (վ. 177), 12 (վ. 315, 316, 323, 325, 334), 13 (վ. 385, 395), 14 (վ. 429, 432, 450, 566)։ Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. № 6 (վ. 13$^5$), 11 (վ. 27$^3$, «Հայ գաղութի պատմություն» ձեռագիր աշխատությունը), 14 (վ. 31$^4$), 15 (վ. 31$^1$), «Ջանասեր հեղինակների» ֆոնդ, թղթ. № 68բ (վ. 149)։

ՀՍՍՀ Պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ № 56, ցուցակ 4, գործ 219, ֆոնդ № 57, ցուցակ 2, գործ 68, 680, 683, 703, 713, 1267, 1299, 1315, 1399, 1403։ Ֆոնդ Գերագույն հոգևոր խորհուրդ Էջմիածնի, Եգիպտահայ թեմ. «Տեղեկագիր ի մասին եգիպտահայոց հաստատությանց» (1924 թ.), «Տեղեկագիր քաղաքական ժողովի համայն շրջանին» (1934—1937 թթ.), «Տեղեկագիր Գահիրեի ազգային առաջնորդարանին» (1944 թ.), Ն. Հովհաննիսյանի նամակ-տեղեկագիրը (1948 թ.)։

ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվային բաժին։ Թորոս Ազատյանի ֆոնդ, բաժին № 8 (վ. 2832, 3684, 3686, 4976, 4977, 4989, 4990, 4991, 5007, 5721, 5732), 11 (վ. 89, 90), 12 (վ. 1139, 1140, 1151, 1165, 1176, 1164, 1166, 5486, 5496, 5547, 5578, 5556, 5746, 5747, 5751, 5756, 5772, 6082, 6090, 9407, 9408, 9412, 9413, 9419, 9420, 9432, 9434, 9439, 9441, 9443, 9444, 9445, 9451, 9463, 9468, 9477, 9483, 9486։ Ա. Չոպանյանի ֆոնդ, բաժին № 1 (վ. 1593, 2239), 2 (վ. 2806), 3 (վ. 56, 82)։ Ա. Սաֆրաստյանի ֆոնդ, գործ 227։ Ա. Ալպոյաճյանի ֆոնդ, «Տպագրության արվեստը և հայերը» ձեռագիր աշխատությունը։ Թատերական բաժին, Գ. Հենդյանի անտիպ նյութերը, Ն. Սանթալյանի, Ա. Քեսեյանի, Ղ. Սարգսյանի և Ժ. Արիստակյան-Գույումջյանի ձեռագիր հուշերը եգիպտահայ թատրոնի մասին։

ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Հ. Անասյանի «Հայ գաղթականության պատմություն» ձեռագիր աշխատությունը։




### 3. Հրատարակված աղբյուրներ և գրականություն

#### ա) Հայերեն


Աբու Սալիհ, Պատմութիւն եկեղեցեաց և վանօրէից Եգիպտոսի, թարգմ. Ղ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1895։

Աբրահամյան Աշ. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա և Բ, Երևան, 1964, 1967։

Ագոնց Ս. Գ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ափրիկէ, մասն երրորդ, Վենետիկ, 1802։

«Ազգային սահմանադրութիւն հայոց», Կ. Պոլիս, 1863։

Ալպօյաճեան Ա., «Եգիպտահայ գաղութի ծագումը» («Ամէնուն տարեցոյցը», Փարիզ, 1923)։

Ալպօյաճեան Ա., «Ի՞նչ կըսեն հին թուղթերը» («Եգիպտահայ տարեցոյց», Աղեքսանդրիա, 1925)։

Ալպօյաճեան Ա., «Հայ-կաթոլիկ եկեղեցական կազմակերպութիւնը ի Կահիրէ» («Եգիպտահայ տարեցոյց», Աղեքսանդրիա, 1926)։

Ալպօյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ. 2, Կահիրէ, 1937։

Ալպօյաճեան Ա., Թորգոմ պատրիարք Գուշակեան, Կահիրէ, 1940։

Ալպօյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. 1 և 2, Կահիրէ, 1941, 1955։

Ալպօյաճեան Ա., Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Կահիրէ, 1952։

Ալպօյաճեան Ա., Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը, Կահիրէ, 1960։

Ալպօյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, 1961։

Աղազարմ Ն. Մ., Եկեղեցապատկան կալվածները և Կահիրէի միթինկը, Կահիրէ, 1903։

Աղազարմ Ն. Մ., Նօթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Կահիրէ, 1911։

Աղազարմ Ն. Մ., «Կարապետ Գալուստի կտակը» («Եգիպտահայ տարեցոյց», Աղեքսանդրիա, 1926)։

Աղազարյան Մ., Միսի վերջին աթոռակալը և իր մեծապատիւ գաւառակիցը, Պէյրութ, 1926։

«Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին» (Թարգմ. Հ. Թ. Նալբանդյան), Երևան, 1965։

Աւշարունի Վ., Մեր դպրոցները գաղութներուն մէջ, Աղեքսանդրիա, 1929։

Ա. Ր. Ն., «Հայ հատուածները», նամակ Եգիպտոսից («Մուրճ», Թիֆլիս, 1905, № 5)։

Բաբայեան Է., Ինքնակենսագրութիւն և հուշեր (ազգային գործերու կապակցութեամբ), Կահիրէ, 1960։

«Բյուզանդական աղբյուրներ. Պրոկոպիոս Կեսարացի» (թարգմանություն Հրաչ Բարթիկյանի), Երևան, 1967։

Գարամանեան Ա., «Հայ տարրը Եգիպտոսի պետական, տնտեսական և առևտրական ասպարէզներուն մէջ», («Եգիպտահայ տարեցոյց», Կահիրէ, 1914)։

Գարբինյան Հ., Ժամանակակից սփյուռքահայ բուրժուական ռեակցիոն փիլիսոփայությունը, Երևան, 1960։

Գալֆայեան Ամբ., Համառօտութիւն ժամանակակից պատմութեան, Վենետիկ, 1851։

Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962։

Գարեգին (Յովսէփեանց) կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, «Թէոդորոս գրիչ և նկարիչ» («Կեանք և գիր» տարեգիրք, Կահիրէ, 1945)։
Գարեգին (Յովսէփեանց) կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, Յիշատակարան ձեռագրաց, Անթիլիաս, 1951։
Գասպարյան Ա. Հ., Նյութեր Եգիպտոսի հայոց պատմության համար. Պատմություն եգիպտահայ եկեղեցիներու և գերեզմանատուներու, Կահիրէ, 1943։
Գասունի, «Եգիպտահայ գաղութը» («Մարտակոչ», Երևան, 1928, № 133)։
Գյուզալյան Գ., «Պատմություն հայ կրթական և հրատարակչական Համազգային ընկերության» («Համազգայինի և Նշան Փալանճյան ճեմարանի քսանհինգամեակը 1929—1954», Պէյրութ, 1954)։
Գուշակյան Թ., Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները և պատմություն շինության ս. Գրիգոր Լուսավորիչ նորաշեն եկեղեցվո, Կահիրէ, 1927։
Դուրյան Խ. Ա., Հայ բողոքականությունը Եգիպտոսի, որպես հասարակություն և եկեղեցի, Կահիրէ, 1936։
Դավիթյան Ս., Պատմական տեսություն Եգիպտոսի հայ կաթողիկե եկեղեցվոյ, Կահիրէ, 1913։
Դարբինյան Արտակ, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947։
Դաղըլի Յովհ., Ժամանակագրութիւն հայոց, ս. Պետերբուրգ, 1891։
Դիմաքսյան Հ. Մ., Շիթք մանունք ի Միջերկրականէ, Կ. Պոլիս, 1877։
Եսայան Հ., «Հայերը Եգիպտոսի մեջ» («Եգիպտահայ տարեցույց», Կահիրէ, 1916)։
Երվանդ Հ., Պարզ խոսքեր հայ ժողովուրդին, Կահիրէ, 1933։
Երվանդ Հ., Ռամկավար ազատական կուսակցությունը, իր այսօրը և վաղը, Բոստոն, 1947։
Զարդարյան Վ., Հիշատակարան տարեգիրք, Կահիրէ, 1941, 1942։
Զարդարյան Վ., «Հայ լրագրությունը Եգիպտոսի մեջ 1865—1932 թթ». («Արև», 26 մարտի 1932)։
«Զեկուցում Պողոսյան ազգ. երկսեռ վարժարանի Աղեքսանդրիոյ, 1923—1924 տարվա գործունեության», Կահիրէ, 1924։
«Զեկուցում Պողոսյան ազգ. երկսեռ վարժարանի Աղեքսանդրիոյ, 1924—1925 տարվա գործունեության», Կահիրէ, 1925։
«Զեկուցում Պողոսյան ազգ. երկսեռ վարժարանի Աղեքսանդրիոյ, 1925—1926 տարվա գործունեության», Կահիրէ, 1926։
Էփրիկեան Ս. Վ., «Աղեքսանդրիոյ հայերը» («Գեղունի», 1902, № 3)։
«Ընդհանուր կանոնագիր Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերության», Կահիրէ, 1928։
Թերզիպաշյան Ա., Նուպար, Կահիրէ, 1939։
Թոռոսյան Ա., Հիշատակարան (Նուպար փաշայի արձանի բացման առթիվ), Կահիրէ, 1904։
Թոփուզյան Հ. Խ., «Հայ-եգիպտական կապեր» («Սովետական Հայաստան», 1959, № 11)։
Թոփուզյան Հ. Խ., «Եգիպտահայ պարբերական մամուլի մասին», («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1966, № 4)։
Թոփուզյան Հ. Խ., Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին 1925—1958 թթ., Երևան, 1968։



Թոփուզյան Հ. Խ., «Եգիպտահայ գաղթօջախները XIV—XVIII դդ.» («Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Երևան, 1972)։
«Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ», Երուսաղէմ, 1915։
Լազյան Գ., Հայաստանը և հայ դատը, Կահիրէ, 1946։
Խարաճայան Ե., Հայոց թիվը, Բոստոն, 1965։
Խանզադյան Ս., «Եգիպտահայ ավետարանական հասարակությունը», («Եգիպտահայ տարեցույց», Կահիրէ, 1916)։
Խաչիկյան Լ. Ս., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955։
Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930։
Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, 1964։
«Ծրագիր Հնչակյան կուսակցության», Լոնդոն, 1897։
«Ծրագիր վերակազմյալ Հնչակյան (ազգայնական-ազատական) կուսակցության», Բոստոն, 1919։
«Ծրագիր Հ. Հ. դաշնակցության», Թիֆլիս, 1917։
«Ծրագիր ազգային ռամկավար կուսակցության», Բոստոն, 1919։
Ծիտունի Ա., Հայ ազատագրության ճանապարհին, Պէյրութ, 1949։
Ծիտունի Ա., Հուշեր և փուշեր, Պէյրութ, 1956։
Կիրակոսյան Ջ., Հակոբյան Հ., Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում, Երևան, 1960։
Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967։
Հակոբյան Հ., Դաշնակցությունը կվտանգէ գաղութը, Կահիրէ, 1945։
«Հայ ազգային խորհուրդ Աղեքսանդրիոյ», Աղեքսանդրիա, 1946։
«Հայ դատը», Հալեպ, 1947։
«ՀԲԸ Միության ոսկեմատյան, 1906—1933», Կահիրէ, 1933։
«ՀԲԸ. միություն, 1933—1958», Եգիպտոսի շրջան, Աղեքսանդրիոյ մասնաճյուղի արծաթյա հոբելյան, 1958։
«Հայ հեղափոխական դաշնակցությունը», գծեր Հ. Հ. դաշնակցության կեանքեն, Պուքրէշ, 1930։
«Հայ պարբերական մամուլի պատմությունից», Երևան, 1963։
«Հայ սահմանադիր ռամկավար կուսակցությունը», Թիֆլիս, 1912։
Հանգույց Ն., Մտածումներ Հ. Հ. դաշնակցության մասին, Փարիզ, 1930։
Հովհաննիսյան Աշոտ, Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1924։
Հովհաննիսյան Աշոտ, Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925։
Հովհաննեսյան Ա. Տ., Ժամանակագրական պատմություն Ս. Երուսաղեմի, հատոր 2, Երուսաղէմ, 1890։
«Հուշարձան Աստվածաշնչի հայերեն թարգմանության հազար հինգհարյուրամյակի», Երուսաղէմ, 1938։
Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, մասն Ա. Երևան, 1957։

Մասրաֆ Բ., «Հայ կաթողիկէ հասարակութիւնը Եգիպտոսի մէջ» («Եգիպտահայ տարեցոյց», Կահիրէ, 1914)։
Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898։
Մարտունի Ալ. (Մյասնիկյան Ա.), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924։
Միր-Եւս, «Հայ գաղթականութիւնը (Եգիպտոսում)» («Անահիտ», Փարիզ, 1899, № 7)։
Միրզոյան Մ., Հայ ժողովրդական պանդխտության երգեր, Երևան, 1961։
Մ (ռմբոսն) Հ. Գ., Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք, Կ. Պոլիս, 1908։
Մուրադյան Գ., Անուանաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Կահիրէ, 1947։
Նաջարեան Մ., «Ռամկավար կուսակցութեան կազմութեան պարագաները» («Եգիպտահայ տարեցոյց», Աղեքսանդրիա, 1924)։
Նուպարեան Հ., Հայ քաղաքական մտքի ուղղութիւնը երեկ և այսօր, Կահիրէ, 1923։
Նուպարեան Հ., «Պատր ալ-Ջամալի» («Արև», 27 և 28 մայիսի 1931)։
Նուպարեան Հ., «Հայեր, որոնք կառավարած են Եգիպտոսը», («Արև» 2 սեպտեմբերի 1931 և հաջորդ համարներ)։
Նուպարեան Հ., «Մուրատ պէյի մասին» («Արև», 2 հոկտեմբերի 1931)։
Նուպարեան Հ., «Ճիովաննի Բողարի, հայազգի անձնական բժիշկ Մուհամմեդ Ալի փաշայի» («Արև», 1 հոկտեմբերի 1932)։
Նուպարեան Հ., «Աղա Կարապետ Պալուեան» («Արմաւենի» տարեգիրք, 1937—1938)։
Նուպարեան Հ., «Աղեքսանդրիոյ Պօղոսեան ազգային վարժարանը», («Արմաւենի» տարեգիրք, 1937—1938)։
Նավասարդյան Վ., Դաշնակցության անելիքը, Կահիրէ, 1924։
Նավասարդյան Վ., Դաշնակցության քաղաքական ուղին, Կահիրէ, 1925։
Նավասարդյան Վ., Նկատումներ, Կահիրէ, 1947։
Նավասարդյան Վ., Բոլշևիզմը և դաշնակցությունը, Կահիրէ, 1949։
Նուպարյան Մ., Նուպարյան և Նահապետյան գիշերօթիկ վարժարանք, Կ. Պոլիս, 1872։
Շահպազ Ս., Եգիպտական ազգության նոր օրենքը, Աղեքսանդրիա, 1929։
Շաղոյան Ա., «Եգիպտահայեր» («Մուրճ», Թիֆլիս, 1904, № 9)։
«Ոսկեմատյան-Հիշատակարան (1902—1952) Տիգրան Երկաթ հայ մշակութային միութեան», Աղեքսանդրիա, 1952։
«Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», հատոր Ա և Բ, Պեյրութ, 1962, 1963։
Պալյան Կ., Եգիպտոս և արաբական ճարտարապետութիւնը, Կահիրէ, 1914։
Պոլյան Ա., «Եգիպտահայ լրագրութիւնը» («Եգիպտահայ տարեցոյց», Կահիրէ, 1914)։
Պետրոսյան Մ., «Հարյուրամյակ մը ազգային կրթության Կահիրէի մէջ» («Արմաւենի» տարեգիրք, 1937—1938)։
Պերբրան Է., Նուպար փաշա 1825—1899, թարգմ. Մ. Նուպարյան, Կ. Պոլիս, 1919։
«Պերճապայծառ Յակոբ Արթին փաշա Չրաքեան» («Բազմավէպ», 1919, № 2)։
Պէրպէրյան Ա., Պատմութիւն հայոց, Կոստանդնուպոլիս, 1871։
Պոտուրյան Մ., «Եգիպտահայ լրագրության քառասնամյայ պատմությունը, 1865—1905» («Բազմավէպ», 1907, № 2)։
«Պողոս պէյ Յուսուֆյան» («Բազմավէպ», 1844, № 6)։
Պողոսյան Ս., Թրքահայ սպայի մը օրագիրը (պատերազմի և դինադադարի հուշեր Լիբանանի, Պաղեստինի և Եգիպտոսի 1916—1919), Փարիզ, 1947։



Սավալանեանց Հ. Թ. Տ., Պատմութիւն Երուսաղէմի, հատոր 2, Երուսաղէմ, 1931։
Սաֆրիչյան Տ., Երկամյա պանդխտություն ի Հնդկաստան, Երուսաղէմ, 1871։
Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ պատմագրության ուղիով, Կահիրէ, 1948։
Սերոբյան Մ., Հայաստանի անկախության առթիվ, Կահիրէ, 1950։
«Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատակարանք», Վիեննա, 1936։
Սիմոնյան Հ., Սփյուռքահայությունը ազգային-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968։
Սուֆյան Հ., Եգիպտոսի հայ մեծամեծները ու իշխանները Ֆաթիմյան շրջանին, Կահիրէ, 1928։
Սվազլյան Վ., Հայրենիքիս հետ, Երևան, 1964։
Ստեփանյան Գ., Արփիար Արփիարյան, Երևան, 1955։
Ստեփանյան Գ., Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հատոր 1 և 2, Երևան, 1962, 1969։
«Վասն վանօրէից, որ ի ս. քաղաքն Երուսաղէմ», Վենետիկ, 1895։
Վարանդյան Մ., Հ. Հ. Դաշնակցության պատմություն, հատոր 1 և 2, Փարիզ, 1932, Կահիրէ, 1950։
Վարդապետյան Ա., Հայաստանի օգնության կոմիտե, Երևան, 1966։
Վրացյան Ս., Կյանքի ուղիներով (դեպքեր, դեմքեր, ապրումներ), Կահիրէ, 1955։
Տաշյան Հ., Ակնարկ մը հայ հնագրության վրայ, Վիեննա, 1896։
Տամատյան Մ., Ռամկավարություն, Աղեքսանդրիա, 1910։
Տեմիրճյան Ե., «Հայ գեղարուեստ և արուեստագէտները Եգիպտոսի մէջ» («Եգիպտահայ տարեցոյց», Կահիրէ, 1914)։
Տոնիկեան Տ., Թէ հայը ինչո՞ւ չի հաջողիր քաղաքական գետնի վրայ, Կահիրէ, 1935։
Րաֆֆի, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 9, Երևան, 1959։
Օճանյան Բ., «Սրբոց եգիպտահայոց մէջ» («Եգիպտահայ տարեցոյց», Կահիրէ, 1916)։
Օտազյան Ա., «Հայ ճարտարապետներ Եգիպտոսի մէջ, Ֆաթիմյան շրջան» («Կեանք և գիր» տարեգիրք, Կահիրէ, 1948)։
Օրմանյան Մ., Ազգապատում, հատոր Բ և Գ, Կ. Պոլիս, 1914, Պէյրութ, 1961։
Օտյան Ե., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1962։
«Օրենք և կանոնք ազգային առաջնորդարանի հայոց յԵգիպտոս», Կահիրէ, 1930։
*Ал-Джабарти Абд Ар-Рахман*, Египет в период экспедиции Бонапарта (1798—1801), М., 1962.
*Ал-Джабарти Абд Ар-Рахман*, Египет под властью Мухаммада Али (1806—1821), М., 1963.
*Беляев И. П., Примаков Е. М.* Египет: время президента Насера, М., 1974.
*Ватолина Л. Н.* Современный Египет, М., 1949.
*Кильберг Х.* Восстание Араби-паши в Египте (Антибританское национально-освободительное движение в Египте 1879—1882), М., 1937.
*Кильберг Х.* Египет в борьбе за независимость. Антиимпериалистическое национально-освободительное движение 1918—1924, Л., 1950.
*Курагелашвили Ш.* Революция 1952 г. и крах британского господства в Египте, М., 1966.
*Левин З. И.* Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972.

*Луцкий В. Б.* Англия и Египет, М., 1947.
*Луцкий В. Б.* Новая история арабских стран, М., 1966.
«Новейшая история арабских стран (1917—1966)», М., 1968.
*Ротштейн Ф. А.* Захват и закабаление Египта, М., 1959.
*Сейранян Б. Г.* Египет в борьбе за независимость 1945—1952, М., 1970.
*Топузян О. Х.* «Армянский торгово-ссудный капитал Египта в первой половине XIX в.» («Арабские страны», М., 1974).
*Фридман Л. А.* Капиталистическое развитие Египта (1882—1939), М., 1963.
*Фридман Л. А.* Египет (1882—1952). Социально-экономическая структура деревни, М., 1972.

### գ) Օտար լեզուներով

*Azadian A.* Les Eaux d'Egypte, Le Caire, 1930, vol. I.
*Ahmed I. M.* The Intellectual Origins of Egyptian Nationalism, London, 1960.
*André P. J.* L'Islame et les Races, Paris, 1922, t. I, II.
„Annuaire statistique de l'Egypte", Le Caire, 1912.
*Artine Y.* La Propriété Foncière en Egypte, Le Caire, 1883.
*Artine Y.* L'Instruction Publique en Egypte, Paris, 1890.
*Artine Y.* „Essai sur les causes du renchérissement de la vie matérielle au Caire („Bulletin de l'Institut d'Egypte, Le Caire, 1907, t. V, fasc. II).
*Avédissian O.* Peintres et Sculpteurs Arémniens, Le Caire, 1959.
*Berque I.* Histoire Sociale d'un village égyptien au 20e Siècle, 1957.
*Bowring J.* Report on Egypt and Candia, London, 1840.
*Bréhier L.* L'Egypte de 1798 à 1900, Paris, 1900.
*Browne W. G.* Travels in Africa, Egypt and Syria, from the year 1792 to 1798, London, 1799.
*Burton R. F.* Of a Pilgrimage to Al-Medinah and Meccah, London, 1924, t. I.
*Canard M.* „Un Vézir chrétien à l'Epoque Fatémide. L'Arménien Bahram" („Annales de l'Institut d'Etudes Orientales de la Faculté des Lettres d'Alger, 1954, №12).
*Canard M.* Notes sur les arméniens en Egypte à l'Epoque Fatémide („Annales de l'Institut d'Etudes Orientales de la Faculté des Lettres d'Alger, 1955, №15).
*Cattaui R.* Le Règne de Mohamed Aly d'après les Archives Russes en Egypte, Roma, 1936, t. III.
*Clot-Bey A. B.* Aperçu général sur l'Egypte, Bruxelles, 1840, t. I, II.
*Chafik Ah.* L'Egypte Moderne et les influences etrangéres, Le Caire, 1931.
*Chahbaz S.* „Les Arméniens en Egypte" („Cahiers d'Aléxandrie", Aléxandrie, 1966).
*Cressaty*, L'Egypte d'Aujourdhui, Paris, 1912.
*Cromer*, Modern Egypt, London, 1908, vol. I, II.
*Crouchley A. E.* The Economic Development of Modern Egypt, London, 1938.



*Crouchley A. E.* „A Century of Economic Development" („L'Egypte Contemporaine", Le Caire, 1939, 30e Année).
*Crouchley A. E.* „The Charter of the Bank of Egypt" („Bulletin de l'Institut d'Egypte, Le Caire, 1939, t. 21).
*Dahan, C. M.* „Recherche sur la nationalité des sujets ottomans établis en Egypte". („L'Egypte Contemporaine", Le Caire, 1918, No. 37).
*Deny I.* Sommaire des Archives Turques au Caire, Le Caire, 1930.
„Documents extraits des Archives Historiques du Ministère de la Guerre de France". Note sur l'Insurection du Caire. („Revue d'Egypte", Le Caire, 1895, t. II).
„Documents diplomatiques concernant l'Egypte, de Méhémet-Ali jusqu'en 1920", reunis par l'Association Egyptienne de Paris, Paris, 1920.
*Dodwell H.* The Founder of Modern Egypt. A Study of Mohammed Ali, London, 1931.
*Douin G.* L'Egypte de 1829 à 1830. Correspondance de Consuls de France en Egypte, Rome, 1935.
*Dulaurier M. F.* „Les Arméniens en Autriche, en Russie et en Turquie" („Revue des deux Mondes", Paris, 1854).
*El-Gritly*, „The Structure of Modern Industry in Egypt". („L'Egypte Contemporaine", Le Caire, 1948, t. 38).
„L'Egypte Indépendante. Par le Groupe d'Etudes de l'Islame", Le Caire 1938, t. F.
*Fahmy M.* La Révolution de l'Industrie en Egypte et ses conséquences sociales au XIXe siècle, Leiden, 1954.
*Farag* M. Les Négociations Anglo-Egyptiennes de 1950—1951 sur Suez et le Sudan, Genève, 1955.
„Fédération Egyptienne de l'Industrie". Annuaire 1949—1958, Caire-Aléxandrie, en 6 tomes.
*Forbin M.* le Cte. Voyage dans le Levant en 1817 et en 1818, Paris, 1819.
*Gavillot I. G. A.* Essai sur les droits des européens en Turquie et en Egypte, Paris, 1875.
*Girard M. P. S.* Mémoire sur l'Agriculture, et le Commerce de l'Egypte (Description de l'Egypte... t. 17e), Paris, 1824.
*Hamont T. H.* L'Egypte sous Méhémet-Ali, Paris, 1843, t. I, II.
*Hanotaux G.* Histoire de la Nation Egyptienne, Paris *(անթվական)*, t. VI.
*Heyworth-Dunne I.* An Introduction to the History of Education in Modern Egypt, London *(անթվական)*.
*Hitti Ph. K.* History of the Arabs, London, 1951.
*Holinski B.* Nubar Pasha devant l'histoire, Paris, 1886.
*Hugonnet L.* En Egypte, Paris, 1883.
*Issawi Ch.* Egypt. An Economic and Social Analysis, London, 1946.
*Issawi Ch.* Egypt at Mid-Century, London, 1954.
*Jomard M.* Mémoire sur la population comparée de l'Egypte ancienne et moderne (Description de l'Egypte... t. 19e), Paris, 1829.

*Jomard M.* Description de la Ville et de la Citadelle du Caire. (Description de l'Egypte... t. 18e), Paris, 1829.
*Landes D. S.* Bankers and Pashas, Cambridge, Mass. 1958.
*Laorty-Hadji*, G. R. P., L'Egypte, Paris, 1856.
*Levi I. G.* „Les débuts de la Législation Sociale en Egypte" („L'Egypte Contemporaine", Le Caire, 1934).
„Livre d'or de la Fédération Egyptienne de l'Industrie", Le Caire, 1948.
*Madden R. R.* The Turkish Empire, London, 1862.
*Makrizi*, Histoire des Sultans Mamelouks, traduit par M. Quatremère, Paris, 1832, t. 1.
*Makrizi*, Description Topographique et Historique de l'Egypte, traduit par U. Bouriant, Paris, 1895.
„Memoire Militaire et Politique sur l'Egypte". Note remise en 179° à M. Abancourt. („Revue d'Egypte", Le Caire, 1896, t. II).
*Mengin M. F.* Histoire de l'Egypte sous le Gouvernement de Mohamed-Ali, Paris, 1823, t. II.
*Mengin M. F.* Histoire sommaire de l'Egypte sous le Gouvernement de Mohammed-Aly, Paris, 1839.
*Merruau P.* L'Egypte Contemporaine (1840—1857), Paris, 1858.
*Muskau P.* Egypt under Mohammed Ali, translated from german by Evans Lloys, London, 1847.
*Ninet I.* Le Commerce européen d'importation en Egypte et le Bazar égyptien, Berne, 1866.
*Paton A. A.* History of the Egyptian Revolution, London, 1863, Vol. I, II.
*Perron B.* „Lettre sur les Ecoles et l'Imprimerie du Pacha d'Egypte". („Journal Asiatique", Paris, 1843, t. II).
*P.* et *H.*, L'Egypte sous la domination de Méhémet-Ali, Paris, 1848.
*Raymond A.* „Une Liste des Corporations de métiers au Caire en 1801". („Arabica", Paris, 1957, t. IV, fasc. 2).
*Regny E. de.* Statistique de l'Egypte 1870, 1871, 1872, 1873, Aléxandrie.
*Reinaud* „De la Gazette Arabe et Turque imprimée en Egypte" („Journal Asiatique", Paris, 1831, t. 8).
„Relations du Royaume d'Egypte, écrites par le P. S. François Paumier", „qui demeurait dans le dit Royaume des années 1710, 1711 et 1712 („Revue d'Egypte", Le Caire, 1896, t. III).
*Rivlin H. A.* The Agricultural Policy of Mohamed-Aly, Oxford University, 1953.
*Sabry M.* La Génèse de l'Esprit National Egyptien, Paris, 1924.
*Sabry M.* L'Empire égyptien sous Mohamed-Aly et la Question d'Orient (1811—1849), Paris, 1930.
*Sabry M.* L'Empire égyptien sous Ismail et l'Ingerence Anglo-Française (1863—1879), Paris, 1933.
*Senior N. W.* Conversation and Journals in Egypt and Malta, London, 1882, Vol. I.



*Szazy Et. de.* „Le Statut Personnel des non-musulmans en Egypte et la Réforme", („L'Egypte Contemporaine", Le Caire, 1939, No 184).
*Tagher I.* Portrait Psychologique de Nubar Pacha („Cahier d'Histoire Egyptienne", Le Caire, 1949, No. 5—6).
*Thédenat-Duvaut.* L'Egypte sous Mohammed Aly, Paris, 1821, Vol. I.
„Twentieth Century Impression of Egypt", London, 1909.
*Volney C. F.* Voyage en Syrie et en Egypte pendant les années 1783, 1784 et 1785, Paris, 1807, t. I.
*Zohrab Kh.* „Etude sur les privilèges des Patriarcats" („L'Egypte Contemporaine", Le Caire, 1929).

### դ) Պարբերական մամուլ

«Ազատ բեմ», Ալեքսանդրիա, 1903, Կահիրե, 1905—1907։
«Ազատ խոսք», Ալեքսանդրիա, 1902—1908։
«Ազատ միտք», Կահիրե, 1936—1937։
«Արաքս», Ալեքսանդրիա, 1927—1948։
«Արձագանք», Թիֆլիս, 1882—1893։
«Ամենուն տարեցույցը», կազմող Թէոդիկ, Կ. Պոլիս, 1910, 1913, 1921, Փարիզ, 1923, 1924, 1928, 1929։
«Ամենուն տարեցույցը», կազմող Կ. Գևորգյան, Բեյրութ, 1963։
«Արմավենի», Կահիրե, 1865, № 1—4։
«Արմավենի տարեգիրք», Կահիրե, 1938։
«Արմենիա», Մարսել, 1885—1914։
«Արշալույս», Կահիրե, 1899—1905, 1905—1914։
«Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1845, 1851—1853, 1866—1869։
«Արև», Ալեքսանդրիա, 1908, Կահիրե, 1922—1955։
«Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1871—1908։
«Արևելք», Կ. Պոլիս, 1884—1890, 1899—1904։
«[illegible]», Կահիրե, 1902—1903։
«Բազմավեպ», Վենետիկ, 1844—1952։
«Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1896—1918։
«Գեղունի», Վենետիկ, 1901—1909։
«Եգիպտահայ տարեցույց», կազմող Սուրեն Պարթևյան, Կահիրե, 1914, 1915, 1916, 1917, կազմող Մարտիրոս Ոսկյան, Ալեքսանդրիա, 1919, կազմող Է. Աճեմյան, Ալեքսանդրիա, 1925, 1926։
«Եվրոպա», Վիեննա, 1847—1863։
«Ընդարձակ օրացույց, Փրկչյան ազգային հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1900, 1901, 1902, 1905, 1907, 1908, 1909, 1910, 1921։
«Իրավունք», Վառնա, 1898—1904։
«Լուսաբեր», Կահիրե, 1904—1908։
«Լուսաբեր-Արև», Կահիրե, 1908—1912։
«Կյանք և գիրք տարեգիրք», կազմող Հայկ Ժամկոչյան, Կահիրե, 1948։

«Համազգային տարեգիրք», կազմող Գ. Մխիթարյան, Կահիրե, 1936 և 1937։
«Հայահամար Եգիպտոսի և Սուդանի», կազմող Մ. Փաշճյան, Կահիրե, 1939։
«Հայ դպրոց», Կահիրե, 1933—1935, 1938։
«Հայ վարժարան», Կահիրե, 1926։
«Հանդես Ամսօրյա», Վիեննա, 1886—1952։
«Հառանք», Կահիրե, 1912։
«ՀՕԿ», Կահիրե, 1926։
«Հուսաբեր», Կահիրե, 1922—1955։
«Մասիս», Կ. Պոլիս, 1852, 1865—1869, 1875—1883։
«Մեղու», Կ. Պոլիս, 1865—1874։
«Միություն», Կահիրե, 1912—1919։
«Մուրճ», Թիֆլիս, 1889—1907։
«Նեղոս», Ալեքսանդրիա, 1889, № 1—6։
«Ճրագ», Ալեքսանդրիա, 1905—1907։
«Ջահակիր», Կահիրե, 1948—1954։
«Սարկավագին եգիպտահայ տարեցույցը», կազմող Հ. Մանավյան, Կահիրե, 1931, 1934, 1936, 1939, 1940, 1945, 1946, 1948, 1951։
«Սիոն», Երուսաղեմ, 1866—1875, 1927—1952։
«Տեղեկատվություն», Ալեքսանդրիա, 1946։
«Փյունիկ», Կահիրե, 1899, Ալեքսանդրիա 1901—1903։
«Փորձ», Թիֆլիս, 1879։
«Օրենք», Ալեքսանդրիա, 1905։
„Arabica", Paris, 1956—1958.
„Bulletin de l'Institut d'Egypte", Le Caire, 1909—1913, 1933—1934, 1938—1951.
„Cahiers d'histoire égyptienne", Le Caire, 1949—1952.
„Egyptian and Oriental Society", Cairo, 1947.
„Le Journal Asiatique", Paris, 1828—1845.
„Le Journal Officiel du gouvernement égyptien", Le Caire, 1934, 1953—1954.
„L'Egypte Contemporaine", Le Caire, 1915—1918, 1928—1934, 1936, 1939—1952.
„La Revue du Caire", Le Caire, 1946—1948.
„La Revue d'Egypte", Le Caire, 1895—1896.
„La Revue des deux Mondes", Paris, 1853—1860.



## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ*

Աբբաս փաշա 36, 68, 84
Աբդել Լաթիֆ 222
Աբդուլ Համիդ II 120, 121, 144, 151 153—155, 161
Աբեղյան Հովհաննես 305
Աբովյան Բաբկեն 301, 306
Աբովյան Խաչատուր 195
Աբրահամյան Աշոտ 6
Աբրահամ քհն. 21
Աբու Սահլ 16
Ագայան Հ. 203
Ագոնց Գյուլբեր Ս. 39, 44
Ադամյան, նկարիչ 311
Ադիլ իբն Ռուզզիկ 18
Ազատյան Արմենակ 219
Ազար էմե 296
Ազարիա 71
Ազնավուրյան Հովսեփ 210
Ազնիվ, դերասանուհի 305
Ազուրե Նաջիբ 178, 179
Ալաարին Հրանդ 328
Ալ-Աֆդալ 18
Ալլենբի 236
Ալեքսան, երաժիշտ 97
Ալեքսանյան Երվանդ 307
Ալեքսանյան Հարություն 205
Ալեքսանյան Տիգրան 294
Ալեքսանյան Փարիս 77, 78
Ալթունյան, բժիշկ 330
Ալթունյան Բ. Կ. 216
Ալի ալ-Արմանի 23
Ալի բեյ 23
Ալի Մահեր 231
Ալ-Մուսթանսիր խալիֆա 18
Ալպան, լուսանկարիչ 107
Ալպոյաճյան Արշակ 5, 6, 8, 13, 29, 39, 46, 50, 70, 73, 84, 101, 123, 220, 239, 275, 282, 298, 316—318, 333, 334
Ալ-Ջաբարթի 11, 30, 31, 55—57, 65
Ալ-Ջույուշ, հայազգի վեզիր 18,
Ալփիեար Հարություն 197, 199, 202, 313
Ահարոնյան Ավետիս 204, 300
Ահմեդ Աբդյուլ Գաֆեր 261
Ահմեդ ալ-Սեիդ Աբդուլ Սեուդ 227, 228
Ահմեդ Զիվեր 265
Ահմեդ Շաֆիկ 11
Աղազարմ Նազարեթ 5, 38, 72, 82, 184
Աղազարյան Միհրան 252
Աղաթոն Երվանդ 116, 156, 161
Աղասեր, դաշնակցական գործիչ 160
Աղավնի-Զարեհ 206
Աղավնունի Մկրտիչ 141, 142
Աղբալյան Նիկոլ 249, 250, 258, 259 286
Աճեմյան Լևոն 329, 330
Ամատունի Ա. 329, 330
Ամիրյան Հ. 300, 328
Ամիրայան Վ. 306
Այվազ, սառաֆ 22, 27
Այվազյան Եղ. 154
Անանյան Է. 215

* Կազմել է Ժ. Մ. Ագոնցը։

Անատոլինի, երաժիշտ 308
Անդրանիկ, դերասան 305
Անդրանիկյան Հրանտ 311, տե՛ս նաև Հրանտ Ա.
Անդրանիկյան Մկրտիչ 116, 156
Անդրանիկյան Տ. 311
Անդրեասյան Երվանդ 326
Անդրե Պ. Ժ. 172
Անթալյան Ճարլ 335
Անտոնյան Արամ 281
Աշըգյան, Կ. Փոքր Հայոց պատերազմը 144
Աշըրյան Գ. 116
Աշրաֆ սուլթան 19
Ապրոյան Առաքել 53, 86, տե՛ս նաև Առաքել
Ապրոյաններ, առևտրականներ Զմյուռնիայում 56, 81
Առանձար 160
Առաքել (Ապրոյան) 36
Առաքելյան, նկարիչ 210, 311
Առաքելյան Կարապետ 106
Ասատուրյան Հակոբ 158, 325
Ասլանյան Հարություն 331
Ասլանյան Ստեփան 80
Ասողիկ, դերասանուհի 206
Աստվածատրյան Վ. 218
Աստվածատուր վրդ. 78 տե՛ս նաև Հովհաննիսյան Ա. Տ.
Ասլանաղ Մհրան 158, 201, 324
Ավետիսյան Օննիկ 296, 309, 310
Ավետիք, ոսկերիչ 67
Արաբի փաշա 37, 38, 86, 175
Արամյան Լևոն 324
Արթին բեյ տե՛ս Չրաքյան Արթին
Արիստակյան Գ. 307
Արիստակյան-Գուլյանքենա Ժ. 204 302, 307
Արիֆյան Կարապետ 106
Արծիվ Հայկ 306
Արծրունի Վահրամ 260, 291
Արմեն Արմենյան ամոլ 205, 206
Արշակունի Արտավան 14, 15
Արշակունի Եդուարդ 219
Արշակունի Հովհաննես 14, 15
Արշակունի Հովհաննես 14
Արշարունի Վիկտորիա 282
Արսեն Երկաթ 299
Արտեմիս, նկարիչ 311
Արփիարյան Արփիար 151—153, 196, 197, 202, 204, 210, 325
Արփիարյան Տիգրան 202
Աֆրիկյան Կ. 307

Բաբայան Էժեն 10, 156, 160, 209, 226, 254, 255, 294, 308
Բաբել, դերձակ 67
Բագրատունի Գ. 203, 304, 329, 330
Բագրատունի Տիգրան դ' Արրո 51, 56, 57, 116, 117, 133, 134, 310
Բաղավի փաշա 260
Բաքր ալ-Դամայի 18
Բաղդասար դպիր 70
Բաղրյան, ձուլագործ 104
Բարթող Աբրահամ 138—140, 142
Բարթող Հակոբ 116
Բարթող փաշա տե՛ս Բարթող Աբրահամ
Բարիքյան, երաժիշտ 308
Բարսեղյան Վ. 207
Բաուրինգ Ջոն 28, 29, 39, 42
Բեկարյան Պապա Գրիգոր 97
Բեհրամ ալ-Արմանի, տե՛ս Պահլավունի Վահրամ
Բեյրամ սուլթան 19
Բեռնար Տրիստան 301
Բերգսոն Հանրի 308
Բիգան Հարություն 83
Բյուրլյուլյան Ս. 148
Բյուրատ Սմբատ (Տեր-Ղազարենց) 136, 137, 139, 153, 184, 188, 197, 201, 202, 204, 300, 320—322, 326
Բոնապարտ Նապոլեոն 10, 23, 26
Բոնոֆորդ, անգլիացի պաշտոնատար 147, 148
Բրաուն Է., ճանապարհորդ 40
Բրեհիկ Լ. 56
Բրունեար, երաժիշտ 308
Բուլիավիլյի, երաժիշտ 210

Գարամանյան Ա. 100, 104, 110, 111, 112
Գաբրիել Մարաշցի 36, 68, 72, 73, 90
Գալեմքերյան Հ. 332
Գալլեյան Հ. 270
Գալլեյան Ն. 270
Գալճյան Հրանդ 210
Գալփակճյան Վ. 302
Գալփարյան Հակոբ 217
Գալֆա (Գալֆայան) Գրիգոր 332, 333, 335
Գալֆայան Ամբրոսիոս 80
Գալֆայան Թադեոս 332
Գալֆայան (Կանաչյան) Ք. 307, 308
Գալֆայան Մ. 138
Գալֆայան Սրբուհի 46
Գալֆայան Փերուզ 306
Գայանըլյան Ն. 218
Գասագյան Ա. 202, 330, 333
Գասագյան Վ. 259, 330
Գասպարյան Գ. 150
Գասպարյան Ղ. 90
Գասպարյան Ն. 335
Գասպարյան Սարգիս 7
Գատրճյան Հովհաննես 102
Գարագաշյան քույրեր 206
Գարաբաշյան Ե. 106
Գարատաշյան Արիստես 10, 40, 61
Գեորգ Դ կաթողիկոս 77
Գեորգ Ե կաթողիկոս 130, 161, 162, 168, 170
Գեորգ, սառաֆ 53
Գեորգոֆ Մ. 103
Գըլըճյան Սարգիս 252
Գյուզալյան Դանիել 293
Գյուլեչ Յուսուֆ 79
Գնայյան Մկրտիչ 190
Գոճամանյան Բյուզանդ 311
Գրանդյան 94
Գրիգոր Դարանաղցի 22
Գրիգոր Իշխան 15
Գրիգոր Խլաթեցի 19
Գրիգոր Մագիստրոս 18
Գրիգոր Վկայասեր, կաթողիկոս 15, 17
Գրիգոր Տաթևացի 97
Գրիգորյան, նկարիչ 210
Գրիգորյան, Ճիշակյան գործիչ 153
Գրիգորյան Կ. 157
Գրիգորյան Հ. 53
Գուշակյան Թորգոմ եպ. 10, 142, 143, 223, 255, 256;
Գուրյան Ն. 290
Գևորգյան Ն. 328
Գևորգյան Փ. 106
Գևորգյան Վարդան 330

Դահան Կոնստան 225
Դամլաքյան Աբդել Քերիմ 216
Դավիթյան Սերովբե 163
Դարբինյան Արտակ 156
Դարբինյան Ռուբեն 273
Դարբինյան Սարգիս 199, 320, 322
Դաֆֆերին լորդ 116, 176
Դեմիրճյան Երվանդ 210, 309, 310
Դեմիրճյան Ե. 215
Դեմիրճյան Կ. 215
Դեմիրճյան Մ. 270
Դեմիրճյան Ստեփան 35, 84, 92, 93
Դեմիրճյան Ձ. 311
Դերձակյան Ս. 266
Դյուլորիե Էդ. 39—40
Դյուրի Ալթուն 94
Դոզլեյ Հ. 33
Դուրյան Եղիշե, Երուսաղեմի Հայոց պատրիարքը 236, 256
Դուրյան Ղևոնդ արքեպ. 252
Դուրյան Պետրոս 204, 300

Եկանյան Ժ. 265
Եկենյան Աստղիկ 202
Եկենյան Բեադրիս 302, 305
Եկենյան Ստեփան 302
Եկմալյան Մակար 308

Եղիազար ամիրա 88 տե՛ս նաև Պետրոսյան Եղիազար ամիրա
Եղիազարյան Ալեքսան 96, տե՛ս նաև Միքարյան Ալեքսան
Եղիայան Գրիգոր 310
Եսայան Ստեփան 328
Երամյան Վ. 304
Երկանյան Գ. 106
Երոս տե՛ս Օտյան Երվանդ

Զագարյան Վարդան 330—332
Զագըր Ճանիկ 219
Զաղլուլ Սաադ 220—223
Զամարյան Անտոն 102
Զարդարյան Հ. 303
Զարդարյան Ռուբեն 281
Զարդարյան Վահան 161, 315, 316, 318, 322, 326, 327, 330—332
Զարիֆյան Հովհաննես 305, 306
Զաքարիա, Երուսաղեմի Հայոց վանքի միաբան 96
Զաքարյան Զ. 291
Զորյան Աշոտ 311
Զուգերման 207

Էթեմեզյան Մ. 216
Էլ-Գրիալի 110
Էնկյուլյան Հ. 332
Էրվինո Գոյ 206
Էրթզեր Հայկ 110, 138, 142
Էքսերճյան Վ. 210
Էքսերճյան տիկին 204

Թագվոր, ոսկերիչ 67
Թագվորյան Գ. 299
Թագվորյան Թագվոր 217, 331
Թագվորյան, նկարիչ 210, 311
Թադեոս սարկավագ 21
Թալաի բին Ռուզզիկ 18
Թահեր փաշա 57
Թաղիկյան Գևորգ 89
Թաղիադյան Մեսրոպ 34, 81, 83
Թաշճյան Հ. 330
Թաշճյան Մ. 304, 334
Թաշճյան քույրեր 289
Թաշճյան Օ. 324
Թաշյան Բենիամին 281, 299, 328, 331
Թելֆյան Լ. 332
Թեմիրյան Ա. 218
Թեֆիք Նեսիմ 222, 223
Թերզիբաշյան Գ. 203, 306
Թերզյան Թ. 204
Թերզյան Հ. 150
Թեքեյան Վահան (Տիրանյան) 137, 156, 196, 197, 201, 202, 207, 236, 246, 254, 294, 300, 319, 324—326, 328, 329
Թեքիրդաղցի Քերովբե 56
Թիրաքի Էլիա 265
Թյությունճյան Խոսրով 272
Թյությունճյան Տելեմաք 259, 286
Թյուրապյան Հ. 328
Թյուֆենկճյան Սեթոն 201, 324
Թորոսյան Եղիշե 124, 197, 199, 321, 322
Թորոսյան Սիմոն 179
Թոփալյան Արա 311
Թոփալյան Գ. 200
Թոփալյան Գևորգ 108, 217
Թոփալյան Հ. 216, 328
Թոփուզյան Գ. 218
Թրյան Դավիթ 206
Թումայան Կ. 333
Թումայան Պոան վրդ. 274
Թուրշյան Հ. 7
Թուրշունճյան Ե. 137
Թևֆիկ փաշա, խդիվ 207

Ժամկոչյան Հայկ 274, 299, 334, 335 տե՛ս նաև Կարինյան Գ.
Ժոմառ Մ. 39

Իբսեն 205
Իզմիրլյան Մատթեոս կթ. 8, 150, 157
Իլիաս, սառաֆ 27
Իշխանյան Գ. 105
Իսավի Շարլ 213
Իսմայիլ ալ-Վերդանի 180, 181
Իսմայիլ փաշա, խդիվ 33
Իփեկյան Գասպար 203, 205, 306
Իփեկյան Գևորգ 103, 203, 306
Իփեկյան Նուբիզյան 103
Իփեկյան տիկին 204
Իփլիկճյան Ստեփան 108

Լազյան, ազգային գործիչ 146
Լազյան Գաբրիել 254, 328
Լանգլուա Վիկտոր 96
Լանցոնի Մ. 209, 308
Լարենց Լևոն 324
Լեմոնճյան Փայլա Համբարձում 97
Լերբեջյան Կ. 107, 113
Լյուբրերա 93
Լյուգոլ Ժան 267
Լուցկի Վ. Բ. 7
Լևի Ջ. 209
Լևոն V Հայոց թագավոր 19—21
Լևոնյան Գարեգին 205, 318, 319

Խաթանասյան Երվանդ 254
Խայյաթ Խալիլ 27, 112, 125
Խանդամուր Հայկազուն 133
Խանեյան Ֆրանգյուլ 259
Խաչատուրյան Արթին 93
Խաչատուրյան-Գասպարյան Գոհար 308
Խաչատուրյան Մ. 56
Խաչատուրյան Ս. 291
Խաչատուրյան Ստեփան 93,
Խաչատուրյան Վաղա Սարգիս 311
Խերյան Մ. 168
Խնդամյան, ոսկերիչ 106
Խոջա Իբրահիմշահ 22
Խոսրով Ա Հայոց թագավոր 14
Խոսրանց Կարապետ 148, 150
Խորասանջյան Զ. 218
Խորասանջյան Վ. 109
Խրիմյան Հայրիկ 85, 130, 144, 154

Ծաղկունի Զ. 332
Ծերենց 195

Կամիլ Մուստաֆա 178, 180, 181
Կամսարական Արմենակ 102, 103
Կամսարական Խաչատուր 102
Կամսարական Հովհաննես 14
Կամսարական Ներսես 14
Կամսարական Տարիա 311
Կամսարական Տիգրան 99,102,103,125, 142, 165, 202, 204, 328
Կանայան Դրո 272
Կանվարենց Շահան 299
Կավակիբի 178
Կարախանյան Ռուբեն 308
Կարապետ, գերձակ 67
Կարապետ Գալուստ 62, 76, 89, 186, 310
Կարապետ կաթողիկոս Կիլիկիայի 20
Կարապետ, սառաֆ 57
Կարապետ, սառաֆբաշի 53
Կարապետ սարկավագ 70
Կարապետյան Կ. 203, 302, 306
Կարապետյան Փ. 116
Կարապետյան Տ. 210, 309, 310
Կարինյան Գ. (Հայկ Ժամկոչյան) 335
Կարնեցի Դավիթ վրդ. 73
Կարոմիլիս, Հույն պետական գործիչ 169, 170
Կեոզյուգելյուկյան Բ. 291, 332
Կեստեկյան Լ. 215
Կիրակոս Երուսաղեմցի 71, 72
Կլիֆորդ լորդ 85
Կլոտ Ա.—Բ. 11, 26, 43—48, 50, 66, 67
Կյուրեղյան Օ. 206
Կյուրճյան Միքայել 196, 202, 204, 323—325, 328, 329
Կոկանյան Ա. 104
Կոկանյան Լ. 294
Կոմիտաս վրդ. 208, 209, 300, 305
Կոնսոլյան Հ. 333
Կոստանդին կաթողիկոս Դրազարկեցի 20
Կոստանդյան Ք. 333
Կոստանդյան, դերասան 306
Կրեզյան Ա. 216

Կրեպյան Վ. 216
Կրոմեր լորդ 11, 51, 63, 81, 85, 176, 183
Կումուշյան Դամիր 206

Հայաձյան Ս. 328
Հայկազյան Օ. 200, 326
Հակոբ, սառաֆբաշի 53
Հակոբ վրդ. 71
Հակոբյան Ա. 261
Հակոբյան Թագվոր 69
Հակոբյան Ժագ, 299
Հակոբյան Հակոբ 311
Հակոբյան Հակոբ 104
Հակոբյան Հակոբ, առևտրական 218
Հակոբյան Գոլ 102
Հակոբյան, կոշկակար 67
Հաճեթյան Շահե 321—322
Հաճընյան Տիգրան 329
Հաճյան Երվանդ 113
Հաճյան Սամիկ 113
Համամճյան Ասարիկ 97
Համբար Դավիթ 270
Համբարձումյան Համբար 311
Համբիկյան Գրիգոր 328
Համոն Փ. Հ. 11, 28, 29, 54, 57, 58, 64
Հանըմյան Արտավազդ 172, 325, 328
Հեթում Նղրեցի 20
Հեկեկյան Հովսեփ 92—94
Հեյվորթ-Դոնն Ժ. 94
Հերյան Ս. 333
Հինդի, սառաֆ 27
Հիտլեր 257
Հյուսեյինյան (Ա. Արփիարյանի աշակե-կիր) 153
Հովակիմ, ոսկերիչ 67
Հովակիմյան Գ. 218
Հովիվյան Ծ. 157
Հովհաննես գրիչ 19
Հովհաննես Դարգելի 20, 21
Հովհաննես, երկաթագործ 67
Հովհաննեսյան Ա. Տ. 9
Հովհաննեսյան Խ. 334
Հովհաննիսյան Աշոտ 250
Հովհաննիսյան Լևոն 293, 302
Հովհաննիսյան Ռոզա 303
Հովսեփյան Գարեգին, Տանն Կիլիկիո կաթողիկոս 17
Հրանդ Ա. 216
Հրաչ Երվանդ 243
Ձուստինիանոս առաջին 14

Ղազարյան Մ. 218

Ճանգյուլյան Հ. 151
Ճիհանյան Գր. 330

Մաթոսյան Կարապետ 101, 102
Մաթոսյան Հովհաննես 101, 102
Մաթոսյան Ո. 216
Մաթոսյաններ 99, 102, 125
Մալեզյան Վահան 161, 203, 328
Մախոխյան Վարդան 210
Մահգուր Սաբիթ 260
Մահմուդ սուլթան 29
Մաճառյան Ենիկ 260, 267, 328, 334
Մաճարյան Մ. 104
Մամասյան Վահան 149, 156
Մամուրյան Ղուկաս 90
Մայիս, գնմիրջիբաշի 67
Մանանդյան Հակոբ 14
Մանավյան Հարություն 300, 332
Մանավյան Վահրամ 309, 311
Մանթաշով Ա. 112
Մանժեն Մ. Ֆ. 49, 50, 94
Մանիսալյան Ջ. 289
Մանիսալյան Սաֆի 289
Մանսուրյան եղբայրներ 218
Մանուել գրիչ 21
Մանուկ Հ. 218
Մանուկյան, նկարիչ 210
Մանուկյան Հովսեփ 94, 315
Մանուկյան Սարգիս 108
Մարիկյան Փ. 299
Մարիսյան Մ. 265
Մասկո Գ. 25
Մասրաֆ Բյուզանդ 102
Մատթեոս Ուռհայեցի 15, 16, 18
Մարգարյան Հ. 217
Մարկոսյան եղբայրներ 93
Մարության Մանվել 306
Մաքիավել 94
Մաքսիմոֆ (Կահիրեի ռուսական հյուպատոսարանի աշխատակից) 154
Մելիք, լուսանկարիչ 107
Մելիքյան Ռոմանոս 308
Մելքոնյան (ծխախոտագործական ձեռնարկություն) 99
Մելքոնյան Գ. 102
Մելքոնյան Կ. 102
Մեծարենց Միսաք 300
Մեհմեդ Հայրաթի 79
Մեսթեմնեայան Արմենակ 116, 245, 327
Մեսրոպ տե՛ս Սուքիասյան Մեսրոպ եպ.
Մերջանյան, մանկապարտեզ 287
Միհրան, սառաֆբաշի 53
Միհանոֆ Կարապետ 148, 150
Միհրան Երկաթ 308
Մինասյան Բյուզանդ 106
Մինասյան Խոսրով 218
Մինթանջյան Գրիգոր 150
Միսաքյան Ալեքսան 52, 87
Միսաքյան Միսաք 113
Միքայել Այվազ 32
Միքայելյան Նուպար 7
Միքայելյան Սարգիս 331
Մխիթարյան Գուրգեն 328, 330, 333
Մխիթարյան Ն. 216
Մկրյան Հովհաննես ա. քհն. 79
Մկրտիչյան Լևոն 156, 161, 170, 181, 327, 329
Մկրտչյան Գրեգուար 309
Մկրտչյան Մադլեն 311
Մյունիխ Ժյուլ 153, 320, 322
Մյուսե Ալ. դը 206
Մնակյան Մարտիրոս 206, 303
Մնտիկյան եղբայրներ 199, 320
Մոզյան Ալեքսանդր 56
Մոհամմեդ Ալի 13, 14, 24, 25, 27—30, 32, 33, 35, 45, 47, 50, 52—54, 57, 58, 63, 68, 80—84, 87, 94, 97, 222
Մոհամմեդ Սաբրի 11, 35
Մոմջյան Վահան 106
Մոստիչյան Հարություն 163
Մովսես Խորենացի 89
Մորիլյան Գևորգ 6
Մորիլյան Երվանդ 200, 329, 332
Մութաֆյան Հովհաննես 112, 138, 142, 208
Մուխթար բեյ 93
Մուստաֆա ալ-Նահհաս փաշա 261
Մուստաֆա Քեբերցի 23
Մուրադյան Ն., նկարիչ 311
Մուրադյան Սիսակ 327
Մուրատյան Աբրահամ 94—96, 198, 316—318
Մուրատյան Գևորգ 108

Յարըջյան Արմենուհի 204
Յարըջյան Վարվառա 204
Յաղմաչյան Բարթամ 218
Յակուբ (Յաղուբ) Արթին 116—118, 156, 163, 210
Յակուբյան Ն. 113
Յաղուբ (կամ Հակոբ) 23
Յանիս 18
Յարճանյան Ատոմ (Սիամանթո) 325
Յոհաննես Թագավոր Եթովպիայի 62
Յուսուֆ ալ-Արմանի 92, 94
Յուսուֆ, սառաֆ 27
Յուսուֆ Քյաշեֆ 94
Յուսուֆյան Պետրոս 53, 96, 218
Յուսուֆյան Պողոս 28, 40, 63, 72, 73, 81, 82, 87, 90

Նազարբեկյան Ավ. 152, 153
Նազարեթյան Գր. 200, 201, 323, 326, 327
Նազարյան Գ. 308
Նազարյանց Լիպարիտ 307, 328

Նազիմ, Կ. Պոլսի ոստիկանապետ 152
Նաթանյան Միքայել 157
Նաթանյան Պաղտասար 331
Նալբանդյան Հակոբ 6, 38, 259
Նալբանդյան Միքայել 148
Նապոլեոն Բոնապարտ տե՛ս Բոնապարտ Նապոլեոն
Նասիբյան Հրանտ 307
Նասիր-Թորգոմ 215
Նավասարդյան Վահան 250, 251, 259, 267, 269, 328
Նաֆիլյան Լևոն 210
Նեյզան Ջենոր 97
Ներսես Ներքինի 14
Ներսես Շնորհալի 15, 18
Ներսես պատրիարք 145, տես նաև Վարժապետյան Ներսես
Նիզամյան Լ. 203
Նիկոլայ (Նիկոլայոս) 22
Նիկոլայ Բ կայսր 163
Նիկոլայ մեծ իշխան 149
Նշանյան Ա. 274
Նշանյան Տրդատ 203
Նոկրաշի փաշա 271
Նովիկով Նիկոլայ 268
Նորեկյան Խաչիկ 303, 304, 306
Նուբարյան Առաքել 29
Նուբարյան Մկրտիչ 53
Նուբար փաշա Նուբարյան 36, 51, 61, 76, 77, 84—87, 92, 96, 115, 116, 144, 179, 206, 207, 225, 316
Նուրյան, ճարտարապետ 210

Շայնյան Սեպուհ 218, 307
Շահբազյան Եղիա 113
Շահեն, հնչակյան գործիչ 153
Շահյամյան Դավիթ 299, 315, 334
Շահմուրադյան Արմենակ 209, 304
Շահպազ Բարսեղ 326, 327
Շահպազ Ստեփան 226, 270, 271, 299, 334
Շաղոյան Ավետիս քհն. 163
Շամլյան Ա. 311, 328
Շամման Ալֆրեդ 260
Շապանյան Վ. 210, 311
Շավարշ Տ. 203—204
Շարավի Ալի 220
Շաֆիկ Ահմեդ 279
Շեմս Համայակ 299, 331
Շեյխ Ռաշիդ Ռիդա 165
Շերիֆ փաշա 116
Շիմշիրյան Ռուբեն 210, 246, 311
Շիշմանյան Լևոն 203, 205, 303, 304
Շիրվանզադե Ալ. 204, 205
Շնորհքյան Հովհաննես 137

Ոսկերչյան Հայկազուն քհն. 290
Ոսկյան Մարտիրոս 143, 329

Չաղրյան Ավետիս 293
Չաղրչյան Գ. 110
Չաղըր Ս. 311
Չալըկյան Ս. 106
Չալլակյան Ն. Ա. 216
Չայկովսկի 308
Չափրաստ, գիրասան 206
Չեյիրի Օսման 23
Չերազ Մինաս 154, 163, 178
Չերիչյան Գ. 299
Չիլինկիրյան Մ. 274
Չինճյան, հնչակյան գործիչ 153
Չոպանյան Արշակ 9
Չոպուրչյան Գ. 142, 198
Չրաքյան Արթին 28, 35, 36, 82—84, 86, 87, 92—94
Չրաքյան Խոսրով 92
Չուխաճյան Տիգրան 206

Պալայան Մարտիրոս 218, 328, 332
Պալայան Սարգիս 331, 335
Պալարյան Համբիկ 311
Պալըգճյան Հովհաննես 335
Պալըգճյան Սահակ 299
Պալթազարյան Ղուկաս 317
Պալյան Ավետիս 315—322, 324
Պալյան Կարո 18, 210, 211
Պալյան Մ. 290
Պալյան Վահան 324
Պալյոնի Զավեն 290
Պահլավունի Վահրամ 18, 87
Պահլավունի Վասակ 18
Պաղտասարյան Թագեոս 210, 211
Պապիկյան Հ. 215
Պապիկյան Հակոբ 159
Պապիկյան Օննիկ 270
Պասկանյան Թ. 148
Պասոն Ա. Ա. 82, 83
Պատրիկ Առաքել 211
Պասկուարեկլը, բռսայցի երաժիշտ 306
Պարթևյան Սուրեն 202—204, 302, 327—329,
Պարթևյան Վ. 306
Պարոնյան Հակոբ 300, 311
Պարտիզպանյան Պարույր 309, 310
Պաքրքճյան եղբայրներ 108
Պեզիրճյան Սոփոն 210, 311
Պեզիրճյան Ալեքսանդր 335
Պեյլերյան Մառի 200, 323, 332, 334
Պենլյան Մառի 204
Պենկլյան Սերովբե 206, 207
Պենլյան Տիրուհի 204
Պենսուսյան Մ. 106
Պեշիկթաշլյան Մկրտիչ 204
Պետիկյան Գ. 157
Պետրիկյան Գ. 311
Պետրոսյան Եղիազար ամիրա 52, տե՛ս նաև Եղիազար ամիրա
Պետրոսյան Հովհաննես 315, 319—323, 327, 331, 332
Պետրոսոֆ Հակոբ 97
Պերի Մարիան Հ. 219
Պերճուհի, դերասանուհի 305
Պերպերյան Ա. 216
Պերպերյան Զարեհ 200, 328, 329
Պերպերյան Հ. Փ. 188
Պերպերյան Շահան 290
Պերպերյան Օննիկ 290
Պեքերյան Հակոբ 142
Պեքքերյան Փ. 188
Պինոյան Կ. 290
Պողոս Արենցի 71
Պողոս եպ. 71
Պողոս Նուբար տե՛ս Պողոս փաշա
Պողոս Բ Երուսաղեմի հայոց պատրիարք 70
Պողոս փաշա Նուբարյան 115, 116, 133, 134 135, 139, 156, 163, 166, 173, 185, 227, 287 310
Պողոսյան Հովհաննես 329
Պողոսյան Օ. 203
Պոտուրյան Մ. 315, 316—322
Պռոկոպիոս Կեսարացի 14
Պուլոս, սատաֆ 27
Պուտուխյան Մկրտիչ 150
Պուտրոս Ղալի փաշա 180

Ջախջախյան Մանվել 96
Ջամալ Ահմեդ 180
Ջամալյան Արշակ 254, 255
Ջեզայիրլյան Գ. 218
Ջեվահիրճյան Ալեքսան 138
Ջեվահիրճյան Սանփան 198
Ջհանշահ 19

Ռայմոնդ Ա. 42
Ռափայելյան Գևորգ 56
Ռաֆայելյան Գրիգոր 215
Ռեյիսյան Պողոս 57
Ռեյիսյան Գրիգոր 57
Ռեյիսյան Մ. 57
Ռիզա բեյ 116
Ռշտունի Անտոն 138, 149, 150, 196, 318, 319
Ռուշդիյա 27
Ռուզվելտ Ֆ. ԱՄՆ-ի հանրապետության նախագահ 155

Սաբրի Հ. 218
Սաբրի Մուհամմեդ 85
Սագայան Զարեհ 215, 293
Սագունի, հնչակյան գործիչ 153
Սաիդ փաշա, խդիվ 68, 84

Սահակյան Սարգիս 299
Սահակ վրդ. 71
Սամի փաշա 35
Սամսոնյան Սիմոն 311
Սայաթ-Նովա 300
Սանասարյան Մանվել 301, 302, 305
Սանդրիս Գևորգ 22
Սանթուրյան Խաչիկ 204, 301, 303, 306, 307
Սապահ-Գյուլյան, հնչակյան գործիչ 153, 172
Սապպաղ, սառաֆ 27
Սավալանյանց Տիգրան 76
Սարաջյան Եղ. 154
Սարաֆյան Գրիգոր 319, 320
Սարգսյան, առաջնորդական տեղապահ 38
Սարգսյան Գևորգ 102
Սարգսյան Ս. 307
Սարրյան Ղ. 333
Սարհատ, դաշնակցական գործիչ 160
Սարյան Շահան 301
Սարոյան, առևտրական 112
Սարրաֆյան Սեդրակ 200, 215, 330
Սարուաթ փաշա 260
Սարուխան Ալեքսանդր 270, 309—311, 331, 332, 334, 335
Սափրիչյան Տիմոթեոս 37
Սաքսյան Գրիգոր 70
Սաքսյան Հակոբ 70
Սաֆրաստյան Արշակ 9, 298
Սեթյան Հ. 328
Սելվաչյան-Գալանչյան 113
Սեկալի Աշիլ 267
Սեղբոսյան Ստեփան 56
Սեռեֆյան, լուսանկարիչ 107
Սերոբյան Արփա 335
Սերոբյան Մուշեղ 169
Սեֆերյան Վահրամ 216
Սեֆերյան Տիգրան 267, 270
Սիմիկյան, հնչակյան գործիչ 153
Սիմոն Լեհացի 22
Սիմոնյան Պողոս 331
Սիպիլ 300



Սիրանույշ 205—207, 301, 310
Սկոտ Մոնգրիս 85
Սոլսբերի, Անգլիայի արտաքին գործերի մինիստր 147
Սպենդիարյան Ալ. 308
Սվազյան Գառնիկ 267, 270
Սվաճյան Հարություն 75, 148
Սվաճյան Մարի 323
Ստեփան, գերձակ 67
Ստեփանյան Արամ 201, 303, 321, 323, 326, 328—334
Ստեփանյան Լ. 113
Ստեփանյան Շավարշ 331
Սրմաքեշխանլյան Երվանդ 202, 323, 326
Սրվանձտյանց Վ. 307, 308
Սուլեյման Բարեմ Ջելյու 23
Սուքիասյան Մեսրոպ եպ. 77, 78
Սուֆյան Հ. 6
Սքառչելի, երաժիշտ 210, 311
Սևհոնյան Արա 335
Սևհոնյան Շավարշ 254
Սևումյան Լյուսի 308

Վահան, սառաֆ 22
Վաղարշ Բ հայոց Խոսրով Ա թագավորի որդին 14
Վարանդյան Միքայել 160
Վարդան ալ-Ռումի 15
Վարդան, գերձակ 67
Վարդան Մամիկոնյան 205
Վարդանյան Մամբրե քահանա 153
Վարդան պատմիչ 17
Վարդ Պատրիկ 306
Վարդյան Արփիար 302, 303, 305
Վարժապետյան Ներսես, Կ. Պոլսի հայոց պատրիարք 76, 144
Վարուժան Դանիել 325
Վեհապետյան, Կ. Պոլսի հայոց պատրիարք 144
Վինսենտ Էդգար, 85
Վոլթեր (Դալֆայան) Օննիկ 203, 302, 304—306
Վոլնեյ Ս.—Ֆ., ճանապարհորդ 28

Տահիր սուլթան 20
Տաղլյան Թեոդոր 333
Տամատյան Միհրան 137, 139, 141, 151, 156, 157, 169, 170, 172, 201, 210, 326, 328
Տամատյան, որդին 204
Տատրյան Արշամ 299, 333—335
Տատրյան Հրանդ 335
Տարագճյան Գ. 116
Տետեյան Խ. 299
Տեր-Գրիգորյան Էմին 205, 302
Տերենց-Մարգարյան 311
Տեր-Ստեփանյան եղբայրներ 113
Տիգրան Երկաթ 202
Տիգրան, կապալառու 105
Տիգրան փաշա տե՛ս Բաղրատունի Տիգրան դ'Աբրո
Տիրատուր Օ. 113
Տիրունի Սարգիս 252

Րաֆֆի 37, 193, 195, 204

Ութուճյան Գևորգ եպ. 163
Ութուճյան, լուսանկարիչ 107
Ութուճյան Կարապետ 74

Փալամուտյան Ժիրայր 311
Փաշայան Կ. 140, 325
Փափազյան Ա. 113, 161
Փափազյան Գևորգ 321
Փափազյան Թորգոմ 199, 322
Փափազյան Լ. 270
Փափազյան Հակոբ 329, 332
Փափազյան Ղուկաս 150
Փափազյան Ղևոնդ քհն. 149, 150, 196, 198, 301, 319
Փափազյան Սմբատ 321, 322
Փափազյան Վահրամ 206
Փափազյան, որդին 204
Փափազյան Տիրան 201, 324
Փափազյան Յ. 113
Փեհրիքյան Հակոբ 150
Փիլիպոսյան Տիրան 102
Փորթուգալյան Մկրտիչ 92, 122, 144, 146, 187

Քարամյան Մ. 330
Քելեկյան Տիրան 161, 202, 335
Քեշիշյան Զարմայր 217
Քեչյան Բյուզանդ 115, 151
Քեչյան Կ. 108
Քեսեյան Ս. 206
Քերեզյան Զ. 106
Քերեստեջյան Երվանդ 328
Քեֆսիզյան Մկրտիչ եպ. 76, 77, 94, 316—318
Քյուչուկյան Վ. 203, 327
Քյուրքճյան Վահան 200, 325, 327
Քյուրքչյան Ս. 216
Քյափելյան Նուբիս 306
Քոնթիլյան Մ. 265
Քրուշի Ա. 58

Օժե Էմիլ 206
Օլգեներն 168
Օհանյան ամոլ 305
Օհանյան Բարսեղ 201, 270, 324
Օհանյան Գ. 198
Օհանջանյան Համո 246
Օտյան Երվանդ 10, 104, 105, 107, 119, 121, 134, 137—141, 154, 160, 176, 179, 195—199, 201, 202, 204, 205, 311, 319, 320, 322—327
Օրագյան Արտաշես 296
Օրյոլ, իշխան 23
Օրմանյան Մաղաքիա, Կ. Պոլսի հայոց պատրիարք 142, 146

Ֆաթալլա, սառաֆ, 27
Ֆահմի Արդել Ալիք 220
Ֆասուլաճյան Թովմաս 205
Ֆասուլյաճյան Թովմաս 205
Ֆենեոյան Ա. 106, 109
Ֆերհատյան Ա. 100
Ֆիգիկա Պողոս Մելիքշահյան 89
Ֆորբեն 65
Ֆրեսկոբալդի, ճանապարհորդ 21
Ֆրիդման Լեոնիդ 7, 107
Ֆուադ թագավոր 222, 227

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Ներածություն . . . . . . . . . . . . 5

### ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
### ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 1805—1882 ԹԹ.

Գլուխ առաջին. Եգիպտահայ գաղութի զարգացումը . . . . . . . 13
1. Եգիպտահայ գաղութի զարգացման պատմությունից
2. Եգիպտահայ գաղութի զարգացման պայմանները։ Հայերի հոսքը Եգիպտոս

Գլուխ երկրորդ. Հասարակական-տնտեսական և քաղաքական հարաբերություններ 42
1. Արհեստագործությունը
2. Առևտուրը։ Հայ սարաֆականները և առևտրավարկատունները
3. Եգիպտահայ աշխատավորների վիճակը։ Սահմանադրական պայքարը
4. Եգիպտոսի ինքնուրույնության պայքարը և հայերը

Գլուխ երրորդ. Մշակույթը . . . . . . . . . . . . 88

### ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
### ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 1882—1917 ԹԹ

Գլուխ առաջին. Եգիպտահայերի տնտեսական կյանքը։ Գաղութի ստվարացումը 98
1. Արդյունաբերությունը
2. Առևտուրը
3. Գաղթականների հոսքը Եգիպտոս

Գլուխ երկրորդ. Հասարակական-քաղաքական հարաբերություններ . . . 127
1. Սահմանադրական պայքարի վերելքը։ Համայնքային վարչակառավարման օրգանները
2. Հայկական հարցը և եգիպտահայերը
3. Ազգային-ազատագրական պայքարը և հայերը

Գլուխ երրորդ. Մշակույթը . . . . . . . . . . . . 183
1. Դպրոցները
2. Մշակութային ընկերությունները
3. Պարբերական մամուլը և տպարանները
4. Թատերական և երաժշտական կյանքը





### ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
### ԵԳԻՊՏԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 1917—1952 ԹԹ.

Գլուխ առաջին. Հայերի դերի նվազումը Եգիպտոսի տնտեսական կյանքում։ Հայ-եգիպտական հարաբերություններ . . . . . . . . 212
1. Հայ-եգիպտական հարաբերությունների ընթացքը
2. Համայնքային արտոնությունների սահմանափակումը

Գլուխ երկրորդ. Հասարակական-քաղաքական հարաբերություններ . . . 242
1. «Անհայրենիք պետության» ցնորքը և կուսակցական պայքարը
2. Դեմոկրատական կազմակերպությունները։ Եգիպտահայ ազգային խորհուրդը

Գլուխ երրորդ. Մշակույթը . . . . . . . . . . . . 275
1. Դպրոցները
2. Մշակութային ընկերությունները
3. Պարբերական մամուլը։ Տպարանները
4. Թատերական և երաժշտական կյանքը։ Կերպարվեստ

Վերջաբան . . . . . . . . . . . . 312
Եգիպտահայ պարբերական մամուլի ցուցակ (1865—1952) . . . . . . 315
Աղբյուրների և գրականության ցանկ . . . . . . . . . 336
Անվանացանկ . . . . . . . . . . . . 347

ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՕՆՆԻԿ) ԽԱՉԻԿԻ ԹՈՓՈՒԶՅԱՆ

ОГАНЕС (ОННИК) ХАЧИКОВИЧ ТОПУЗЯН

# ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (1805—1952)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ժ. Մ. ԱՎՈՆՑ
Նկարիչ
Գ. Բ. ՆԱԶԱՐՅԱՆ
Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ԶԱՔԱՐՅԱՆ
Սրբագրիչ
Զ. Ն. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 02139 Պատվեր 724 Հրատ. 4734 Տպաքանակ 2000

Հանձնված է շարվածքի 5.10.1977 թ.։ Ստորագրված է տպագրության 13.09.1978 թ.։ Տպագրական 22,5 մամուլ, պայման. 20,9 մամուլ, հրատ. 21,62 մամուլ։ Թուղթ № 1, $60 \times 84^1/_{16}$, գինը՝ 3 ռ. 50 կ.։

Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН Армянской ССР, 375019, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչության էջմիածնի տպարան
Эчмиадзинская типография Издательства АН Армянской ССР